ՀԻՇԳԻՉ
ԱՅԹՄԱՏՈՎ

Կոմպոզիտորներ

ՉԻՆԳԻԶ ԱՅԹՄԱՏՈՎ

Կատարսիսը

ՎԵՊ

Թարգմանությունը՝
ՓՈՐԱ ԵՍԱՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» 1989

ԳՄԴ 84 Կիրգ 7-4
Ա 560

ԱՅԹՄԱՏՈՎ, Չ.

Ա 560 Կատափնարան: Վեպ/Չինգիզ Այթմատով/ռուս. բարգմ. Դ. Եսայանը; [Առաջաբանը գրեց Լ. Մկրտչյանը].— Եր.: Սովետ. գրող, 1989.— 400 էջ.

Խորհրդային նշանավոր գրողի գիրքը վեպ-նախազգուշացում է, որ շոշափում է այսօրվա հրատապ բարոյական խնդիրները: Հեղինակը խոսում է ժամանակակից մարդու հոգեկան ձևաքերումների և կորուստների մասին, գնահատում մարդու բարոյական հատկանիշները իրենց զարգացման, իրական կյանքի փորձությունների մեջ:

4702300100 (97)
Ա ——— 134—89
705 (01) 89

ԳՄԴ 84 Կիրգ 7-4

ISBN 5—550—00325—2

© «Խորհրդային գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1989
© Издательство «Лиесма», 1986 г.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՋԻՆԳԻՋ ԱՑԹՄԱՑՈՎԻՆ

Վաղուց մտմտում էի գրել քեզ, խորհրդածում էի... Ուզում էի գրել «Կառափնարանի» մասին, իսկ դա, համաձայնվիր, դյուրին գործ չէ։ Ինդրում եմ չմտածես, թե այնքան սպասեցի՝ մինչև կրքերը հանդարտվեն և համընդհանուր կարծիք ձևավորվի։ Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ այդ ընդհանուր կարծիքը գրական այս կամ այն նշանավոր երևույթի մասին (իսկ «Կառափնարանը» հիրավի երևույթ է մեր գրական և հասարակական կյանքում) եղել է հապճեպ ու սխալ, հետագայում սրբագրվել, երբեմն էլ հերքվել է։ «Կառափնարանի» մասին դեռ շատ կգրեն. դա վեպ է մեր կեցության ու մեր տառապանքի մասին։

... «Պատերազմ և խաղաղություն»-ում հանճարեղ մի դիտողություն կա։ Երբ Բորոդինոյի ճակատամարտից առաջ Վոլցոգենն ու Կլաուզևիցը խորհրդածում են, թե «պատերազմը պետք է տարածություն դուրս բերել», իշխան Անդրեյը վրդովվում է, որ տարածության մեջ «մնացել են հայրը, որդին և քույրը»։

Ի՞նչ կա այնտեղ՝ «տարածության» մեջ. ահա այս է հարցը։ Բայց այդ հարցը, ինչպես և բուն տարածությունը, որը տանջում է ինձ ու քեզ, չեն կարող կամ չեն ուզում տեսնել որոշ ինտելեկտուալներ։ Այնինչ և՛ «Կառափնարանը», և՛ քո ողջ ստեղծագործությունը, Ջինգիզ, ծնվել է այդ «տարածությունից», խորքից։ Դու մեծ սիրտ, արիություն և իմաստնություն ունեցար չսահմանափակվել Կիրգիզիայի «տարածությամբ», իսլամի երկրներով։ «Տարածությունը» քեզ համար բավանդակ տիեզերքն է, որտեղ դու, ինչպես բոլորս, և՛ մայր ունես, և՛ հայր, և՛ երեխաներ, և՛ քույր ու եղբայր...

Մի անգամ Մարտիրոս Սարյանին հարցրին, արդյոք բանբեկամական կապ չունե՞ն երկու ջեղանկարիչ Գեթսեմանիները՝ Ալեքսանդր Միխայլովիչն ու Սևուհյ Վասիլևիչը։ Եվ քանի որ Սարյանը համարում էր, որ նրանք շատ տարբեր են որպես նկարիչ ու որպես մարդ, պատասխանեց.

— Ի՞նչ եք ասում, նրանք նույնիսկ ազգանվանակից չեն։ Արդի աշխարհում (թերևս միշտ էլ այդպես է եղել) ազգանունից շատ ավելի կարևոր է, թե ի՛նչ ես քարոզում, ի՛նչ ասելիք ունես։ Այդ իմաստով կարող են ազգանվանակից, արյունակից լինել, ասենք, Այթմատովն ու Եղիշե Չարենցը։

Ես չեմ կարողանում հասկանալ այն գրողներին (նրանց մեջ իսկապես տաղանդավորներն էլ կան), ում թվում է, թե համայն աշխարհի «տարածությունը» պարփակվում է իրենց երկրամասում, իրենց մարզում։ Ոմանք նույնիսկ փորձում են մաքրել «տարածությունը»... Նրանք ուզում են ծառայել հայրենիքին, ժողովրդին։ Բայց չէ՞ որ ժողովուրդները մեծ են համամարդկայնության ձգտումով։ Ես հասկանում եմ սեփական հողի, ժողովրդի նկատմամբ սածած ցավը, գնահատում եմ և հարգում։ Բայց մենք ևս ժողովուրդ ենք։ Աստվածաշնչյան Հոբը, որին բաժին ընկան երկրային բոլոր փորձությունները, ասում է. «Ես իմ սիրտս իբրև զձերդ է»։

«Երկիրը,— ասված է «Կառափնարանում»,— պտտվում է ինչպես արյունահեղ դրամանների կարուսել... Մի՞թե այդ կարուսելը պետք է պտտվի ընդհուպ մինչև աշխարհի վերջը, քանի դեռ երկիրը պտույտ է գալիս Լուսաստուի շուրջը»։ Այ, դրա մասին էլ պետք է մտածել։ Ոչ թե վարժվել, այլ մտածել, տառապել, խավարի մեջ լույս փնտրել։ Մարդը (և դա ամենից սարսափելին է) վարժվում է ամեն ինչի, նույնիսկ խորտակվող նավում ապրելուն։

Այժմ մոդային են երկրի կործանման մասին խոսակցությունները։ Խոսել և շարունակել ընթանալ նույն ուղիով, որը հանգեցնում է երկպառակության, անհամերաշխության,— մի՞թե վայել է մարդուն, որը մտածող էակ է, բնության պսակը։ Էլ ի՛նչ պսակ, եթե կործանվում է բնությունն էլ, նրա պսակն էլ։ Մի՞թե բնությունը սխալվել է և այժմ հատուցում է իր սխալի համար։

Ո՞ւր ենք մենք ընթանում։ Չէ՞ որ, ինչպես ասվում է «Կառափնարանում», բնության մեջ «անարդարություն գոյություն չունի, այն լինում է մարդկանց միջև և սերում է մարդկանցից»։

Կարդում ես «Կառափնարանը» և կարծես ինքդ ես հայտնվում կառափնարանի առջև. փայտե կոճղ, որի վրա վաղնջական ժամանակներում թշվառների գլուխներ էին կտրում։

Ես հասկանում եմ Աբդիային, նաև քեզ, Չինգիզ, երբ մտածում եք, թե «որքան է նեղվում մարդը մոլորակի վրա, ինչպես է նա վախենում, որ չի տեղավորվի, անունդ չի հայթայթի, յոլա չի գնա իր նմանների հետ։ Եվ արդյոք այդ չէ՞ պատճառը, որ նախապաշարմունքները, սարսափը, ատելությունը մոլորակը փոքրացնում, դարձնում են մարզադաշտի

չափ, որտեղ բոլոր հանդիսատեսները պատանդ են, քանի որ երկու թիմերն էլ հաղթելու նպատակով իրենց հետ միջուկային ռումբեր են բերել, իսկ մարզասերները, ոչ մի բան հաշվի չառնելով, ոռնում են՝ գո՛լ, գո՛լ, գո՛լ»։

Ուզում եմ նաև ասել, որ «մոտենում է նոր, հզոր կրոն՝ գերազանցող ռազմական ուժի կրոնը» բառերի տակ թրթռում է քո ցավը երկրի համար, որտեղ բոլորս ապրել ու ապրում ենք։ Իսկ այն խոսակցությունները, թե իբր, քրիստոնեական թեման խորթ է քեզ՝ «Կառափնարանի» հեղինակիդ, իսկ «գայլային թեման» օրգանական է, որտեղ էլ դու ուժեղ ես, ոչ միայն ճիշտ չեն, այլև վիրավորական են։

Քրիստոնեությունը «Կառափնարանում» փոխաբերություն է, առասպել մարդասերի մասին, որին մարդիկ էլ խաչեցին։ «Չէ՞ որ մի բան է բարեսրտորեն երազել և անուրջների մեջ փրկագործվել արատներից, այլ բան՝ բարիք գործել իրական մարդկանց շրջանում, որոնք բնավ չեն տենչում, որ իրենց բարեգործության ճանապարհ ցույց տա ինչ-որ Արդիա...»։ Նույն կերպ կարելի է ասել՝ ինչ-որ Քրիստոս կամ ինչ-որ Ֆանդի...

Ասում են, թե «Կառափնարանի» Պոնտացի Պիղատոսին և Քրիստոսին նվիրված էջերը հիշեցնում են Բուլգակովին։ Բուլգակովը գրել է, ահա նույն բանի մասին է գրել Այթմատովը, նրանից հետո։ Ի՞նչ անենք, որ հետո է գրել։ Նախ գրել է Ավետարանիչներից հետո, և երկրորդ՝ հո չի՞ կրկնել Բուլգակովի գրածը, որը վաղուց ի վեր դասական արժեք է։

«Վարպետը և Մարգարիտան» վեպում և «Կառափնարան» նում» Քրիստոսն ու Պոնտացի Պիղատոսը տարբեր են, ևս կասեի՝ խիստ տարբեր։ Բուլգակովը ելնում է իր ժամանակից, նա իր օրվա հրատապ գործն ունի։ Բուլգակովյան Հիսուսին և բուլգակովյան Պիղատոսին հասկանալու համար, որը ներքուստ համակրում է Հիսուսին, բայց չափազանց նենգամիտ է, իմ կարծիքով, վճռական է մահապատժից առաջ Ցեշուայի արտահայտած միտքը. «Միակ բանը, որ նա ասաց, այն էր, թե մարդկային արատների մեջ ամենագլխավորներից մեկը վախկոտությունն է համարում ինքը»։ Նույն միտքը հետագայում կրկնվում է. «... Վախկոտությունն, աներկբայորեն, ամենասարսափելի արատներից մեկն է։ Այդպես էր ասում Ցեշուա Հա-Նոցրին։ Ոչ, փիլիսոփա, ես առարկում եմ, դա ամենասարսափելի արատն է»։ «Պիղատոսն այստեղ ցնցվեց։ Մագաղաթի վերջին տողերում նա զանազանեց՝ «առավելագույն արատը... վախկոտությունն է»։

Պոնտացի Պիղատոսը տեսնում է, որ Ցեշուան մեղավոր չէ, նա բարություն է քարոզում և բոլորին, անգամ չարագործներին, բարի մարդ է համարում։ Բայց Պիղատոսը, հակառակ Ցեշուային ազատ արձակելու մտադրությանը, դա-

տապարտում է նրան, ապա համաձայնվում, որ ազատ արձակեն ոչ թե Յեշուային, այլ Բարաբբային, թեպետ վերջինս մարդասպան է ու ավազակ։ Եվ որպեսզի իրենից սրբի Հիսուսին կախելու մեղքը, Պոնտացի Պիղատոսը «ջուր վերցնելով՝ լվաց ձեռքերը ժողովրդի առաջ»։ Բուլգակովի վեպը գրվել է 1929—1940 թթ.-ի դժվար ժամանակներում, երբ շատերն էին ստիպված «ձեռքերը լվանալ»։

Բուլգակովյան Պոնտացի Պիղատոսը հընթացս նաև դատական կուսակալ է, որը ծառայում է մեծն Կեսարին. «Աշխարհում առավել մեծ և մարդկանց համար առավել հիանալի իշխանություն չի եղել, չկա և երբեք չի լինելու, քան Տիբերիոս կայսեր իշխանությունն է»։ Նա հենց ինքն է Կեսարը։ Համենայն դեպս՝ 25-րդ գլխում, որն արտահայտիչ կերպով վերնագրված է՝ «Թե ինչպես էր կուսակալը ջանում փրկել Հուդա Իսկարիովտացուն», ճանաչվում է մեծն Կեսարը, նրա ոճն ու նկարագիրը... Չէ՞ որ այդ գլխում պատմվում է այն մասին, թե ինչպես է կուսակալը հրամայում սպանել Հուդային, հանձնարարելով գաղտնի ծառայության պետին, «զբաղվել այդ գործով, այսինքն բոլոր միջոցները ձեռնարկել Հուդա Իսկարիովտացուն պահպանելու համար»։ Մեծը, ինչպես գիտենք, Բուլգակովի ժամանակակիցն էր, հայտնի նրանով, որ կարող էր «բոլոր միջոցները ձեռնարկել պահպանելու համար» անմեղ մարդկանց[1]։

Երբ ծանոթացա Բարաբբայի և Հիսուսի մասին ավետարանային սյուժեին, ինձ զարմացրեց այդ հոյակապ փոխարերության կենսական հավաստիությունը։ Իշխանության համար մարդասպանը պակաս վտանգավոր է, քան բարի մարդը, որ

---

[1] Նայնպիսի մտավոր զուգորդությամբ կարելի է վկայակոչել Ի. Ջեռնոուցանի հուշերը մարշալ Գ. Ժուկովի մասին, որոնք էլ տեխստի և ենթատեխստի նման մերկացումը գեղագիտորեն սխալ է ու կոպիտ։ Ահա թե ինչ է ասել Ժուկովը 1965 թ. մայիսի 9-ին հասարակական գիտություններների ակադեմիայում, որտեղ հուշագիրն ամբիոնի վարիչ էր. «Որոնք հասկանում եմ, ինձ մեղադրում եք, որ ես բավականաչափ հաստատակամ ու համառ չեմ եղել Ստալինին տված իմ ինֆորմացիայի մեջ։ Հնարավոր է... Բայց ի տարբերություն ձեզ, բանկագին ընկերներ, ես շատ մոտիկից էի տեսնում, թե ինչ է պատահում այն մարդկանց, ովքեր հաստատակամություն ու համառություն էին դրսևորում Ստալինին տված իրենց զեկույցներում։ Տեսնում էի և չէի կարող համապատասխան եզրակացություններ չանել։ Դե, ինչ, եթե կարծում եք, որ ես մեղավոր եմ, դատապարտեք։ Ես չեմ պատրաստվում արդարանալ»։

բարութիւն է քարոզում, բայց իշխանավորների գաղափարական ընդդիմախոսն է։

Մարդասպանին կարող են ներել, ազատ արձակել, նա կսպանի ևս մեկ, երկու... տասը մարդու, իսկ գաղափարական հակառակորդը կարող է խլել իշխանութիւնը։ Իսկ այդպիսիներին, ինչպես պատմում է Ավետարանը, ոչնչացնում են։ Պատմում է, բայց չի սովորեցնում։ Կարելի է զարմանալ, որ այդպես հնարավոր է։ Շատերն են զարմացել։ Չեմս Ջոյսը «Ջակոմա Ջոյսի» վերջում ընդգծված առանձնացրել է մի տող.

Non hunc sed Barabbam!

Ջոյսը լատիներեն մեջբերում է Հովհաննեսի Ավետարանից. «Ո՛չ դրան, այլ Բարաբբային»։ Այս դարձվածի մասին կարելի է մտածել ողջ կյանքի ընթացքում...

«Կառափնարանն» էլ ունի իր հրատապութիւնը, այստեղ յուրովի է ընթերցված հայտնի այուժեն։

«Կառափնարանում», ինչպես և Դոստոևսկու «Մեծ հավատաքննիչում», հերքվում է (իհարկե, ոչ քո կողմից) աշխարհի և մարդկանց նկատմամբ Հիսուս Քրիստոսի բարի, մարդասիրական հայացքը։ «Կառափնարանի» Պոնտացի Պիղատոսը, Դոստոևսկու Հավատաքննիչի նման համարում է, որ Քրիստոսը «չափազանց բարձր» է դատում մարդկանց մասին, որ «մարդկանց ոչինչ չեն սովորեցնի ոչ տաճարներում կարդացվող քարոզները, ոչ երկնքից եկող ձայները»։ Թերևս այսքանով էլ նմանութիւնն ավարտվում է։ Ի՞նչ ևս կարծում, արդյոք չինծու չէ՞ Աբդիա ու Ալյոշա Կարամազով, Արդիա և Դմիտրի Կարամազով զուգադրութիւնը։ Ասենք, Ալյոշային կարող էի թվարկել Աբդիայի հետ, բայց սուկի որպես գաղափարի հերոսի տիպար (գաղափարը գերիշխում է կերպարի վրա)։

Դոստոևսկու Հավատաքննիչը հավաստում է, թե ազատութիւնը լուծ է մարդկանց համար, որ «ոչ մի գիտութիւն նրանց հաց չի տա, քանի դեռ նրանք ազատ կլինեն։ Կավարտվի նրանով, որ մեր ոտքի տակ կդնեն իրենց ազատութիւնը և կասեն. «Ավելի լավ է ստրկացրեք մեզ, բայց կերակրեք»։ Ինչպես նա, այնպես էլ Դոստոևսկու Քրիստոսը «Մարդը պետք է ազատ լինի, ոչ թե պարզապես ապրի, այլ իմանա, թե հանուն ինչի է ապրում» իր գաղափարով արծարծում են աշխարհայացքային խոշոր պրոբլեմներ, երկրի վրա մարդու փիլիսոփայական և հասարակական կեցութեան, պետական կարգի պրոբլեմները։

Քրիստոսի ուսմունքի սնանկությունը Դոստոևսկու Հավատաքննիչը հիմնավորում է տասնհինգ դարերի պատմությամբ և փորձառությամբ։ Աբդիան անցած «հազար ինն հարյուր հիսուն տարիների»[1] իր փորձով որոշ ժամանակ դառնում է Պոնտացի Պիղատոսի ժամանակակիցը և ուզում է Ուսուցչին ասել, որ ասպարեզում նոր Աստված է հայտնվել, որ «գերազանցող ռազմական ուժի իր կրոնով ժանտախտի նման վարակել է մոլորակի բոլոր մարդկանց գիտակցությունը»։ Աբդիան կարծես թե Քրիստոսի համար կանխագուշակում է գալիքը, ուզում է նախազգուշացնել, փրկել նրան։ «Կանգ առ, Փրկիչ, չէ՞ որ նրանք, ում համար դու խաչելության, կտտանքի ես գնում, հետո քեզ վրա կծիծաղեն»,— մորմոքում է Աբդիան։ Նա ինքը շատ բան է կրել, ըմպել գավաթը մինչև վերջ։ Նրան ծեծել են, ապրանքատար վագոնից դուրս են նետել այն մարդիկ, ում նա կամենում էր փրկել։ Ի վերջո, նրան էլ խաչեցին։

Աբդիան անձնավորում է նաև 20-րդ հարյուրամյակի հիսունին, մարմնավորում է նրա մարդասիրությունը, որ այդպես էլ չի ընկալվում և չի ընդունվում մարդկանց կողմից։ «Օ՜, իմ թշվառ, իմ միամիտ Ուսուցիչ, արի միասին փախչենք Վոլգա, Օկա, այն ամայի կղզին»,— կոչ է անում Աբդիան։

Բայց նա ոչ ինքը փրկվեց, ոչ ուրիշներին փրկեց։ Ինձ թվում է, թե Քրիստոսի մասին դատողություններ անող Աբդիան շատ ավելի հասուն է, քան այն Աբդիան, որ այնքան անհաջող փորձում է փրկել ժամանակակիցներին։

Ինչպես «Կառափնարանի» Պոնտացի Պիղատոսին, այնպես էլ հին Երուսաղեմում հայտնված Աբդիային ծանոթ են արդի աշխարհի պրոբլեմները. «Եվ ժողովրդի անունից,— հաստատում է Պիղատոսը,— կազդարարվի ռազմական գործողությունների անհրաժեշտությունը, ատելություն կսերմանվի հայրենիքի թշնամիների նկատմամբ։ Թող սեփական քաղավորը բարեկեցիկ ապրի, ուրիշինը պետք է խեղդամահ անել, ծնկի բերել, իր ժողովրդի հետ միասին ստրկացնել, հողը խլել»։ «Կառափնարանում» նույնիսկ Քրիստոսն է մեր հարյուրամյակից. «Ուրեմն իմացիր, Հռոմի տիրակալ, աշ-

---

[1] «Կառափնարանի» մի այլ էջում ևս ասվում է, որ Քրիստոսի խաչելությունից անցել է արդեն «հազար ինը հարյուր հիսուն տարի»։ Ոչ թե ծնվել, այլ խաչվել է (իսկ այդ ժամանակ Քրիստոսը 33 տարեկան էր)։ Հետևաբար, վեպի գործողությունը կատարվում է 80-ական թթ. առաջին կեսին։ Ուրեմն և նոր թվագրությունը սկսվում է, ըստ Այթմատովի, ոչ թե Քրիստոսի ծննդով, այլ նրա խաչելությամբ։

խարհի վերջը կգա ոչ թե ինձնից, ոչ թե տարերային աղետներից, այլ մարդկանց միմյանցից։ Այ միմյանցից և այն հաղթանակներից, որոնք դու այնպես փառաբանում ես ինքնագմայլանքի մեջ...»։

Քրիստոսը կարծես խոսում է մեզ հետ այսօր, հիմա, երբ անցել է հազար ինն հարյուր հիսուն տարի և երբ նա ասում է՝ «Ատածո համար կարևոր է, թե մարդ ինչ է մտածում մահվանից առաջ... քանի որ վերջին մտքերից ամենավերջինները միշտ էլ մաքուր են ու անկեղծ, դրանք զուտ ճշմարտություն են և դրանցում խորամանկություն չկա»,— նա մեզ էլ է կոչում ճշմարտությունն ասել առանց խորամանկելու, ասել ոչ թե սեփական կամ թե ուրիշի մահվանից առաջ, այլ՝ աշխարհի ողբերգությունից առաջ։

«Կառափնարանում» ասված է նաև մարդասիրական կրոնի (գրավում է քրիստոնեության հենց այդ առանձնահատկությունը) աշխարհը բարեփոխելու անկարողության մասին։ Աբդիան անուժ է ինչ-որ բան անել, և այդ անուժությունը նրա կրոնական փնտրտուքների ունայնության, անկենսունակության վկայությունն է։ Նրա մեջ ուժեղ է «ինչ-որ բան անելու» գաղափարը։ «Կառափնարանը» ճիշ է այն մասին, որ պետք է ինչ-որ բան անել։

Մարդը մարդուն գայլ է։ Պարզվում է, սակայն, որ մարդը ոչխարին ևս գայլ է։ Ծառին էլ, գետին էլ, նույնիսկ աստղազարդ երկնքին է գայլ։

«Կարամազով եղբայրներում» պատկերվում է սարսափելի կործանարար մի գաղափար. եթե աստված չկա, ամեն ինչ թույլատրելի է։ Ավաղ, դեռևս ապրող այս գաղափարը բխում է ոչ թե Դոստոևսկուց, այլ կյանքից։ Ահա «Կառափնարանում» ասված է այն մասին, թե ինչպես կարելի է կասեցնել մարդուն մշտապես «սողալուց դեպի անթույլատրելին»։ Մեր ժամանակակիցներից ոմանք կարծում են, թե աթեիզմը ուսմունք է, որն ամեն ինչ թույլատրելի է դարձնում։ Մեզ մոտ՝ Երևանի պետհամալսարանում, մի պրոֆեսոր կար, որ աթեիզմ էր դասավանդում և դեկավարում աթեիզմի ամբիոնը։ Նա երկու անգամ մերկացվեց կրագողության մեջ։ Երբ քննում էին նրա հարցը, մեկը խայթեց. «Եթե հավատացյալ լիներ՝ իր գործընկերներին չէր կողոպտի»։

Հնականալի է, խոսքը ոչ թե բուն հավատի, այլ բարոյական կատեգորիայի մասին է։ Եվ հենց այդ բարոյական իմաստով էլ՝ ինչ հուզում է Աբդիային, հուզում է նաև ինձ։ Աբդիան երազում է գրել այնպես, որ «շատ շատերն արձագանքեն... ինչպես իրենց կյանքի գործին, սեփական տանը լուսկված հրդեհին, սեփական երեկպների հետ պատահած դժբախտությանը»։

Բմբաղիղերը կործանման եզրին էին հասցրել իմ զարմիկին։ Սոսկալի է վերհիշել, թե ինչեր քաշեցինք։ «Պատահում էր, նստում էինք առանց հացի, քաղցած էինք մնում։ Բայց տեսնվա՞ծ բան է, որ հաց լինի ու չկարողանանք ուտել»,— ողբում էր ծերունազարդ մայրս ու չերմեռանդորեն աղոթում։ Բարեբախտաբար, նրա թոռնիկը ապաքինվեց։

Դեռևս «Կառափնարանը» չընձեղցած, ես ասես ճանաչում էի Աբդիային, հասկանում նրա ջանքերը (ավաղ, ողբերգական)՝ ինչ-որ կերպ կասեցնել հարյուրգլխանի հրեշավոր բիզնեսը, որ գաղտնի ծաղկում է բմբաղեղերի առևտրի մեջ, որը ըստ էության մարդկանց առևտուր է։ Մեր պարբերական մամուլը կարծես սպասում էր «Կառափնարանի» լույս տեսնելուն, որ խոսք բացի այդ սարսափելի արատի մասին։ Բայց մինչ այդ էլ արատները (չեմ տեսել, չեմ լսել, չգիտեմ) ծաղկում էին։

Եվ որքան էլ այժմ հրատապ է այդքերը բմբամոլության դեմ, կարծում եմ, «Կառափնարանում» բմբամոլները և բմբաղեղերի առևտրականները (մասնավորապես Գրիշանը) միաժամանակ մարմնավորում են մարդկային ողջ ստոլությունը, մարդկային անկման սահմանը (կամ անսահմանությունը)։ Գրիշանը դեռ փիլիսոփայում էլ է որպես մի նեռ։ Եվ երբ նա ասում է՝ «ես առ Աստված իմ ճանապարհն ունեմ, ես այլ կերպ եմ մտել նրա մոտ, հեռանամուտքից։ Քո Աստվածն այնքան խստակյաց ու անհասանելի չէ, ինչպես քեզ է թվում...», ապա խոսքն այստեղ սոսկ բմբամոլների և բմբաղեղերի առևտրականների մասին չէ։

Գրիշանի նմանները կարողանում են տեսնել իրենց սև գործը (պարտադիր չէ, որ բմբաղեղերի առևտուր լինի)՝ վկայակոչելով կյանքն ու նույնիսկ բարի մտադրությունները. «Արարման օրից ի վեր մարդուն այնքան շատ խոստում է տրվել, ի՜նչ հրաշքներ ասես, որ չեն խոստացել թշվառներին ու անարգվածներին. ահա Աստծո թագավորությունը կծագի, ահա դեմոկրատիա, ահա հավասարություն, ահա եղբայրություն, ահա կոլեկտիվի երջանկությունը. ուզում ես՝ ապրիր կոմունաներում,— չանասիրության համար էլ՝ ի լրումն այս ամենի դրախտ են խոստացել։ Իրականում՝ զուտ խոսքեր։ Իսկ ես, եթե կուզեք, չեղում եմ անհագներին, անտերունչներին...»։

Հիսուսի հակոտնյա ուժերը, որոնք ունակ են նրան խաչելու, բարոյական առումով ոչնչություն են։ Ըստ էության այդ ուժերը հզոր են և կարող են անողոք դատաստան տեսնել արդար մարդու հետ, քանի որ իրենք են անբարո։ Ուժն ու իշխանությունը որքան անբարո են, այնքան ավելի ուժեղ են։ Բայց նույնքան անկասելի է և դրանց անկումը։ Վաղ թե ուշ (ավաղ, որպես կանոն, ուշ) չար ուժերը մերկացվում են,

բարոյապես պահպանվում։ Այդ ուժերը ապառնի ժամանակ չունեն, դրա փոխարեն ներկա ժամանակում նրանք քիչ հաղաղակորդ ունեն, բայց հազվագյուտ խեղճեր, ինչպես Քրիստոսը, Աբդիան, փորձում են դիմակայել նրանց։

Ու թեպետ ես Աբդիային դառեցի հազվագյուտ խեղճերի շարքը, բայց մենք տեսնում ենք և այդ խեղճի ուժի բաղադրիչները։ Եվ դա ոչ միայն Քրիստոսի կերպարն է՝ քոթափած կրոնական դոգմանների կապանքները։ Դա նաև բուլղարական եկեղեցական հնամենի հրգերն են, դա և իր հոգեբանական ու ազգային հմայնավորությամբ հիանալի «Վեցը և յոթերորդը» պատմությունն է և իհարկե, Ինգան է, Ինգա Ֆյոդորովնան... Եվ որքան էլ տարօրինակ հնչի՝ դա Աքբարա գայլուհին է, ինչպես նաև Բոստոն Ուրկունչիևը։

Բոստոն կիրգիզերեն նշանակում է գորշ մուշտակ։ Նա չէ՞ որ հենց չար մարդկանց կողմից հետապնդվող գորշ գայլն է։ Ջարերը, ինչպես հնուց է ավանդված, գտնում են միմյանց, միավորվում։ Սովիտոզի ղեկավարներից մեկը՝ Կոչկորբաևը, հետապնդում է Բոստոնին և անմիջապես էլ դաշնակից գրտնում Բազարբային։ Այս Բազարբայն ընդհանրապես որևէ բարոյականություն չունի, այդ պատճառով էլ նա հարկավոր է Կոչկորբաևին... Այժմ մարդն այնքան է ընկել, որ «կառափնարանում» ոռանդը մասին խոսվում է ինչպես գայլերի, իսկ գայլերի մասին՝ որպես մարդկանց կողմից հետապնդվող մարդկանց։

(Գիտական մի հոդվածում կարդացել եմ, որ եթե պղպջներում գայլը բնությունից մեր սարսափի խորհրդանիշն էր, ապա այժմ գարձել է բնության բախտի համար մեր սարսափի խորհրդանիշը)։

Կաչլուտայա գայլուհին խնայեց Աբդիային, իսկ մարդիկ խաչեցին։ «Փրկիր ինձ, գայլուհի»,— արտասանում է հանկարծ գանահարված, մեռնող Աբդիան։ «Լսիր ինձ, գեղեցկուհի մայր-գայլուհի,— մտածում է նա։ Եվ մահից առաջ էլ տեսնում է գայլուհուն. «Դու եկար...» և նրա գլուխն ակամա ցած կախվեց»։

Փրկել, թույլ չտալ, որ կործանվեն երկիրը, մարդիկ ու գայլերը երկրի վրա,— այսպիսին է ժամանակի պարադոքսը։ Եվ այսպիսին է ժամանակի կանչը։

Գայլուհին ունակ է հասկանալ, որ այս «ձագուկը նույնպիսին է, ինչպես իր ձագերից ցանկացածը, միայն թե մարդկային ծագում ունի»։ Բայց ահա Բազարբայը (և ոչ միայն նա) չէր կարող այդ հասկանալ։ Նա գողանում է Աքբարայի ձագուկներին, ծախում է ու խմում... «Եվ նորից դիմեց Աքբարան գայլերի աստվածուհի Բյուրի-Անեին, և երկար արտասվում էր, վնգստալով և ոռնալով, երկար բողոքում էր

իր թշվառ բախտից և խնդրում աստվածուհուն իրեն մուռը տանել, լուսնի վրա, որտեղ մարդիկ չկան...»։

Որտեղի՞ց իմանար գայլուհին, որ լուսնի վրա էլ կարող են մարդիկ լինել։ Խնդիրն այն չէ, որ մարդիկ չլինեն, այլ՝ որ լավ մարդիկ լիննեն։ Այդպիսին է, օրինակ, Բոստոնը, երկրի հովիվն ու տերը, հողի պես տառապած։ Ու թեև բազարբաային սպանելով, նա մեկուսացրեց իրեն մարդկանցից, նա դեռ կգա մարդկանց մոտ և կապրի համերաշխ։ Եվ կյանքը կգտնի նրան՝ Բոստոն Ուրկունչևին։ Կգտնի նաև Աբդիային իր նոր մտածողությամբ, ոչ թե կրոնական, այլ՝ աշխարհիկ, հողեղեն ու տեսանելի, ունակ ըմբռնելու դժվարություններն ու հակասությունները, տարբերելու չարն ու բարին, նաև պատրաստ ինչ-որ բան անելու մարդկանց համար։ Բոլոր մարդկանց համար՝ այժմ և ընդմիշտ կապված նույն երկրային ճակատագրով։

Մեզնից ոչ ոք ապահովագրված չէ ոչ ճիշտ քայլից, սխալներից։ Բայց որպեսզի մի սխալ քայլը իր հետևից չբերի մյուսը, մարդիկ պետք է կարողանան ափսոսալ կատարվածի համար, կարողանան զղջալ։ Ինձ չափազանց տեղին է թվում այն դիտողությունը, թե զղջումը «լիովին դուրս է մնացել ժամանակակից մարդու բարոյական աշխարհից»։ Բայց ինչպե՞ս կարող է մարդը լինել առանց զղջման, առանց այն ցնցումի և մտքի պայծառացման, որոնց նա հասնում է մեղքի գիտակցման միջոցով։ Եվ կրկին այդ կարևորագույն թեմայի վերաբերյալ. «Մարդուց բացի ուրիշ ոչ ոքի տրված չէ զղջումը։ Զղջումը մարդկային ոգու հավերժական ու անանցողիկ մտահոգությունն է իր հոգ մասին»։

Վաղուց եմ զբաղվում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությամբ», որի հիմնական թեման զղջումն է։ Այժմ «Կառափնարանում» ես դեռ եմ այն բառը, որը լավ է բացատրում Նարեկացու դրքի ժողովրդայնությունը, նրա անհրաժեշտությունը մարդկանց բարոյական առողջության համար։ Իսկապես, երբ կարդում ենք Նարեկացու տողերը՝

Ո՛չ ոք մեղաւոր իբր զիս, 15
Ո՛չ ոք անաւրէն, ո՛չ ոք ամբարիշտ,
Ո՛չ ոք անիրաւ, ս՛չ ոք չարագործ,
Ո՛չ ոք վրիպեալ, ո՛չ ոք սխալեալ,
Ո՛չ ոք մոլեգնեալ, ո՛չ ոք խաղախեալ,
Ո՛չ ոք շաղախեալ,
Ո՛չ ոք ամաչեցեալ,
Ո՛չ ոք դառապարտեալ.
Ս՛ս միայն, եւ այլ ո՛չ ոք,
Ես ամենայնն. եւ յիս ամենեցումն։

Ո՛չ ճեքաճոսք, զի ոչ գիտէին,
Ո՛չ ճրեայք, բանզի կուրացան,
Ո՛չ ագէտք եւ խառնիճաղանջք,
Քանզի յիմարք էին իմաստից,—

ընդունում ըոլոր այդ մեղքերը, մենք մաքրվում ենք, համեմատյալ դեպս, ուզում ենք մաքրվել։ Դրա համար էլ ասված է «կառափնարանում» (կրկնենք այդ միտքը), որ «զղջումը մարդկային ոգու հավերժական և անանցողիկ մտահոգությունն է իր ևսի մասին»։

Երբ ես կարդացի, որ Մոյրնկումյան տափաստանում սայդակներին ու գայլերին սպանում էին, և նրանք միասին էին փախչում ընդհանուր աղետից, չէի կարող չհիշել, թե ինչպես հայկական հերոսական դյուցազնավեպում նախորդ Դավիթը

Ասլանը մե՛կ կողմից բերեց,
Ղափլանը մե՛կ կողմից բերեց,
Պրնգըլը մե՛կ մողմից բերեց, 16
Գելերը մե՛կ կողմից բերեց,
Առյերը մե՛կ կողմից բերեց —
Ամե՛ն գազաններ ժողվեց, դաշտ ի՛ֆ արավ։
Դավթի աճից մեկ կարող չէր իրար դիպչի.
Մեկ որ փորձեր իրար դիպչեր, տեղեն շարժվեր՝
Դավիթ էնպես կը բարձրացներ, կը տար գետին,
Որ մեջ գետնին կը խրվեին։
Անասուններ գազաններու աճու կանգնած էին,
էդ գազաններ Դավթի աճու կանգնած էին,
Դավիթ էլ ամենու առաջ կայներ էր։

Այս պարզունակ, զվարճալի դրվագն էպոսից ցայտուն է դարձնում կործանարար սրությամբ ծագած գոյաբանական պրոբլեմի ողջ բարդությունը և ինչպես սայդակների հոտերի, այնպես էլ գայլային ընտանիքների ողբերդությունը։

«Կառափնարանը» կարդալով, ես մտածեցի նաև հայ հովիվների խնդիրների մասին։ Ահա թե ինչ է ասում Բոստոն Ուրկունչիևը (հիշենք, որ նա «սովխոզի հոտին վերաբերվում էր այնպես, ասես իր սեփականը լիներ. անձամբ իրեն էր պատկանում։ Հիվա՞նդ է, ի՞նչ է...»).«Ինչպիսի՞ արոտավայրեր, ինչպիսի՞ հողեր կային։ Իսկ հիմա՞։ Ամայի անապատ է շուրջը, ամեն խոտը հաշվված է և այն պատճառով, որ տասն անդամ ավելի շատ ոչխար են բաց թողնում, քան այդ տարածության վրա կարելի է, և ոչխարի կճղակները դառնում են նրա համար կործանիչ»։

Վերջերս այդ պրոբլեմը սրությամբ ծառացել է նաև հայ գյուղացիների առջև։ Ինչպես պահել ոչխարը և չորրորդ գե-

տինը, կանաչը։ «Կառափնարանում» ոչ գլխավոր, երկրորդական թեմաները ևս ճչում են օրվա հրատապ խնդրի մասին։

Մի անգամ Պարույր Սևակի խնդրանքով հավաքում էի գիտական մի արկածախնդրի գրքերն ու հոդվածները, որը պնդում էր, թե իբր ազգային լեզուներն ու մշակույթները խոչընդոտում են մարդկային ճշմարիտ ընդհանրությանը։ Այդ հրապարակումների դեմ Սևակը հոդված էր գրում։ Նա ինձ ասաց, որ շատ է հուզված ու զայրացած, որ պետք է հանդարտվի, որպեսզի լավ գրի այդ կարևոր թեման։ Բայց պարզվեց, որ ավելի լավ է գրել, քանի դեռ զայրացած ես. կորուստներ կլինեն բայց շահումն էլ մեծ է։ Եվ, փառք աստծո, «Կառափնարանը» գրված է սաստիկ հուզված ու զայրացած մարդու կողմից։

Ես իմ ես ինվանդ, երկիրն է ինվանդ և ժամանակը։

Որտեղ է ոսկին, որտեղ՝ ենոտին, չես ջոկի,—

ժամանակին գրել է Մախտումկուլին։

Գուցե թե, Չինգիզ, սառելով՝ դու ավելի լավ կգրեիր, բայց վատ կստացվեր, քանի որ ավելի քիչ կլիներ ցասումը, ավելի քիչ կլիներ կրակը։ Իսկ այնպիսի գործում, ինչպիսին «Կառափնարանն» է, ցասումն ամեն ինչ է։

Շնորհավորում եմ դժվար հաջողությունդ։

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Կարճ, մանկական շնչի պես թեթև ցերեկային տաքությունից հետո, արևին դարձած լեռնալանջերին եղանակը շատով աննկատելիորեն փոխվեց. սառցասարերից սկսեց քամի փչել և արդեն իջնում էր կիրճերին ամենուր թափանցող սառնաշունչ վաղ մթնշաղը, իր հետ բերելով մոտեցող ձյունագիշերվա ցուրտ խավարը։

Շուրջը շատ ձյուն էր։ Մերձիսսիկուլյան ամբողջ լեռնաշարքի երկարությամբ սարերը ծածկված էին ձյունահողմի կիտած ձյան շերտերով, որ սուրալով անցել էր այս վայրերով մի երկու օր առաջ՝ անհնազանդ տարերքի քմահաճույքով հանկարծակի բռնկված հրդեհի նման։ Զարհուրելի էր այն, ինչ կատարվեց այստեղ՝ բքի ականակուռը խավարի մեջ անհետացան լեռները, անհետացավ երկինքը, անհետացավ ողջ նախկին տեսանելի աշխարհը։ Հետո ամեն ինչ հանգարտվեց և եղանակը բացվեց։ Այն ժամանակից ի վեր, ձյունահողմից խաղաղված, վիթխարի ձնահյուսերով կալանդված լեռները մնացել էին քարացած, աշխարհում ամեն ինչից մեկուսացած սառը լռության մեջ։

Եվ միայն գնալով ուժգնացող, գնալով սաստկացող գըվ-վոցը բազմատոննանոց ռաղաթիհի, որ այդ նախաիրիկնային ժամին Ուզուն-Չաթ գետահովիտով ճեղքում-անցնում էր հողմալից բարձունքում քուլա-քուլա ամպերից ամբողջապես մշուշված Ալա-Մոնգյու լեռնանցքը, ավելի ու ավելի էր ահագնանում, րոպե առ րոպե դառնում ավելի ուժգին, և վերջապես

հաղթանակեց, տիրեց ամբողջ տարածությունը ու խլացուցիչ բարձր դղրդոցով սլացավ ձայնի և լույսի համար լոկ հասանելի լեռնաշղթայի, բարձունքների, բարձր սառցասարերի վրայով։ Ժայռերի և կիրճերի մեջ բազմապատկված արձագանքով լսվող դղրդյունը մոտենում էր այնպես անկասելի և ահարկու ուժով, որ թվում էր մի քիչ ևս, ու կկատարվի սարսափելի մի բան ,ինչպես այն ժամանակ, երկրաշարժին...

Վտանգավոր մի պահի հենց այդպես էլ եղավ. դիք, քամիներից մերկացած մի քարքարոտ ղառիվայրից, որ ընկած էր թռիչքի ուղղությամբ, ձայնային հարվածից շարժվեց ու սկսեց ցած սուրալ մի փոքր փլված, բայց անմիջապես էլ կանգ առավ՝ մի շարժումով կանգնեցրած արյան նման։ Սակայն անկայուն հողին այդ մի փոքր ցնցումն էլ բավական էր, որ ղառիվայրից մի քանի խշշոր քարեր պոկվեին ու գլորվեին ցած՝ ավելի ու ավելի թափ առնելով, պոռայտ գալով, հետևից փոշի ու մանրաքարեր վեր հանելով և հասնելով ստորոտին՝ թնդանոթի ռմբաձնդերի նման ճեղքեին մանրուռու ճյուղերն ու կծոխուրի թփերը, ծակեին ձյունակուտակները, գլորվելով հասնեին գայլի որջին, որ այստեղ, ժայռի տակ, մի փոքրիկ կիսաօդառած տաք վտակի մոտ սարքել էին գայլերը մացառուտներով ծածկված ծերպում։

Էգ գայլ Աքբարան ետ ցատկեց վերևից գլորվող քարերից և թափվող ձյունից, ու ետ-ետ քաշվելով ծերպի մթության մեջ, կծկվեց զսպանակի նման, վզակոթը ծառս արած նայելով իր առջև կիսամթի մեջ զարհուրելի կրակվող, ֆոսֆորափայլ աչքերով, պատրաստ վայրկենապես կռվի բռնվելու։ Սակայն նրա վախն իզուր էր։ Բաց գաշտում է սարսափելի, երբ հետապնդող ուղղաթիռից թաքնվելու տեղ չունես, երբ այն հասնելով քեզ սկսում է հետապնդել կրընկակոխ, խլացնելով պտուտակների սուլոցով և կոտորելով ավտոմատային կրակահերթերով, երբ համայն աշխարհում փրկություն չկա ուղղաթիռից, երբ չկա մի ծակ, որ կարողանաս թաքցնել խեղճ գայլագլուխդ, հո գետինը չի՞ պատրվի, որ պատսպարի հալածականին։

Իսկ լեռներում ուրիշ է. այստեղ միշտ կարելի է փախչել, միշտ թաքնվելու տեղ կգտնվի, մինչև վտանգն անցնի։ Ուղ-

դաֆիոն այստեղ սարսափելի չէ, լեռներում ուղղաթիռի համար է սարսափելի։ Եվ սակայն սարսափը խելահեղ է, մանավանդ արդեն ծանոթ, ապրած սարսափը։ Ուղղաթիռի մոտենալով գայլն սկսեց բարձր վնգվնգալ, կծկվեց, գլուխը ներս քաշեց, բայց մեկ է՝ չղերը չդիմացան, չկարողացավ իրեն պահել, ու կատաղի ոռնաց Աքբարան կույր, անզոր սարսափով բռնված, ու չղաձգորեն սողաց փորի վրա դեպի ելքը, չար ու կատաղի կատիկափելով ատամները, պատրաստ կռվի՝ առանց տեղից շարժվելու, ասես ուզում էր փախուստի մատնել կիրճի գլխին ղղրդացող երկաթյա հրեշին, որի հայտնվելով վերևից նույնիսկ քարեր սկսեցին պոկվել ու թափվել, ինչպես երկրաշարժի ժամանակ։

Աքբարայի սարսափահար ճչոցներից որջ սողոսկեց նրա գայլը՝ Թաշչայնարը, որն այն պահից, ինչ էգ գայլը ծանրացել էր, մեծ մասամբ լինում էր ոչ թե որջում, այլ մացառուտների միջի պատսպարանում։ Թաշչայնարը՝ Քաջարարդիչ, որին շրջակայքի չոբաններն այդ անունն էին տվել նրա շատ ուժեղ ծնոտների համար, մոտ սողաց Աքբարայի պառկած տեղին և հանգստացնող գոռոցով մոտենալով նրան, ավելի ու ավելի սեղմվելով նրա մարմնին, Աքբարան շարունակում էր վնգվնգալ, աղեկտուր դիմելով չգիտես անարդարացի երկնքին, չգիտես՝ էլ ում, կամ էլ՝ իր դժբախտ ճակատագրին, ու երկար դեռ դողում էր ամբողջ մարմնով, չէր կարողանում ինքն իրեն տիրապետել, նույնիսկ այն բանից հետո, երբ ուղղաթիռն արդեն անհետացել էր Ալա-Մոնգյուի վիթխարի սառցասարի եռևում ու ձայնն արդեն բոլորովին չէր լսվում ամպերի միջից։

Եվ այդ միանգամից տիրած լեռնային լռության մեջ, որ փլվեց տիեզերական համրության նման, էգ գայլը հանկարծ իր մեջ, ավելի ճիշտ որովայնի ներսում լսեց առաջին կենդանի զարկերը։ Այդպես եղել էր, երբ Աքբարան իր որսորդական կյանքի դեռ առաջին շրջանում մի անգամ վրա ցատկելով խեղդել էր մի մեծ նապաստակի. նապաստակի մեջ, նրա որովայնում նույնպես այն ժամանակ այսպիսի շարժում էր զգացվում՝ ինչ-որ անտեսանելի, աչքից թաքնված էակների, և այդ տարօրինակ բանը զարմացրել ու հե-

տաքրքրել էր ջահել հետաքրքրասեր էդ գայլին, որ զարմանքից ականջները սրած, ոչինչ չհասկանալով նայում էր իր խեղդած ղոհին։ Ու դա այնքան տարօրինակ էր և անհասկանալի, որ նույնիսկ փորձեց խաղ սկսել այն անտեսանելի մարմինների հետ, ճիշտ ու ճիշտ, ինչպես կատուն կիսամեռ մկան հետ։ Իսկ հիմա ինքը իր ներսում հայտնաբերեց նույնպիսի կենդանի ծանրություն՝ դա իրենց զգալ էին տալիս նրանք, որ հանգամանքների բարեհաջող բերումով աշխարհ պիտի գային մեկ ու կես, երկու շաբաթ հետո։ Բայց առայժմ այդ չծնված ձագերը անբաժանելի էին մոր ընդերքից, նրա էության անբաժանելի մասն էին կազմում, և ուրեմն նրանք էլ իրենց նոր ծագող, աղոտ, արգանդային ենթագիտակցությամբ ապրեցին նույն ցնցումը, նույն հուսահատությունը, ինչ նա ինքը։ Դա նրանց առաջին հեռակա շփումն էր արտաքին աշխարհի հետ, նրանց սպասվող իրականության հետ։ Դրա համար էլ նրանք սկսեցին շարժվել որովայնում, այդպես արձագանքելով մոր տառապանքներին։ Նրանց համար էլ էր սարսափելի և այդ սարսափը փոխանցվել էր նրանց մոր արյան հետ։

Ականջ դնելով այն բանին, ինչ իր կամքից անկախ կատարվում էր յուր կենդանացած ընդերքում, Աքբարան անհանգստացավ։ Էդ գայլի սիրտն սկսեց արագացած գարկել. քաջությամբ, վճռականությամբ էր լցվել այն անպայման պաշտպանելու, վտանգից հեռու պահելու նրանց, ում կրում էր իր մեջ։ Հիմա նա անվարան կռվի կբռնվեր ում հետ ասես։ Նրա մեջ արթնացել էր սերնդի պահպանության մեծ բնական բնազդը։ Եվ իսկույն էլ Աքբարան զգաց, ինչպես տաք ալիքի նման վրան հորդաց քնքշություն՝ պահանջ սիրելու, փաղաքշելու ապագա ծծկերներին, նրանց տալու իր կաթն այնպես, ինչպես եթե նրանք արդեն իր կողքին լինեին։ Դա կանխազգացումն էր երջանկության։ Եվ նա կիսափակեց աչքերը, տնքաց երանությունից, կաթի սպասումից իր կարմրելու աստիճանի ուռած, խոշոր, որովայնի երկու կողմերում շարված պտուկներում, և քնքշանվաղ, դանդաղ, շատ դանդաղ ձգվեց ամբողջ մարմնով, ինչքան որ թույլ էր տալիս ոլորը, ու, վերջնականապես հանգստացած, նորից սեղմվեց իր գորշաբաշ թաշլայնարին։ Սա ուժեղ էր,

մորթը տաք, հաստ ու ձիգ։ Եվ նույնիսկ նա, համառ Թաշչայնարը, նա էլ կռահեց, թե ինչ է զգում Աքբարան, մայր գայլը, ինչ-որ բնազդով հասկացավ, թե ինչ էր կատարվում նրա արգանդում, ու նույնպես, երևի, սրտաշարժված էր դրանից։ Ականջը ցցած, Թաշչայնարը բարձրացրեց իր անշնորհք, ծանր գլուխը և նրա խորն ընկած մուգ աչքերի սառը բիբերի մոայլ հայացքով ինչ-որ ստվեր անցավ, ինչ-որ անորոշ հաճելի կանխազգացում։ Եվ նա զուսպ գոմռաց, խոխռացնելով ու հազալով, այդ կերպ արտահայտելով իր բարյացակամությունն ու պատրաստակամությունը առանց առարկության ենթարկվելու կապտաչյա մայր գայլին ու պաշտպանելու նրան, և սկսեց իր լայն, տաք, խոնավ լեզվով հոգածությամբ, քնքշանքով լիզել Աքբարայի գլուխը, հատկապես նրա փայլփլուղ կապույտ աչքերն ու քիթը։ Աքբարան սիրում էր Թաշչայնարի լեզուն և այն ժամանակ, երբ նա սկսում էր իր գգվանքն ու սիրախաղը, անհամբերությունից դողալով, իսկ լեզուն արյան բուռն առլեցումից տաքացած դառնում էր ձիգ, շարժուն օձի նման, թեև սկզբում ձևացնում էր, թե դա իր համար այնպես, միևնույն է, սիրում էր և այն ժամանակ, երբ կուշտ ուտելուց հետո խաղաղված ու երջանիկ պահերին նրա գայլի լեզուն լինում էր փափուկ-խոնավ։

Դիշատիչների այդ զույգի մեջ Աքբարան գլուխն էր, ուղեղը, նրանն էր որս սկսելու իրավունքը, իսկ Թաշչայնարը հավատարիմ ուժն էր՝ վստահելի, անխոնջ, անշեղ կերպով նրա կամքը կատարող։ Այս հարաբերությունները երբեք չէին խախտվում։ Մի անգամ միայն եղավ տարօրինակ, անսպասելի մի դեպք, երբ նրա գայլը չքվեց մինչև լուսաբաց և վերադարձավ ուրիշ էգի հոտով. նոզկալի հոտով անամոթ կտղանքի, որ գրգռում ու կանչում է որձերին տասնյակ վերստեր հեռավորությունից, և դա նրան սարսափելի շատացրեց ու չղայնացրեց, նա անմիջապես մերժեց իր գայլին, անսպասելիորեն ժանիքները խոր խրեց նրա ուսին և որպես պատիժ ստիպեց օրեր շարունակ քարշ գալ ետևից։ Պահում էր հիմարին որոշ հեռավորության վրա, և սա ինչքան կաղկանձեց, ոչ մի անգամ չպատասխանեց, կանգ չառավ, ասես Թաշչայնարն իր գայլը չէր, ասես իր համար գո-

յութիւն չուներ, իսկ եթէ նա համարձակվեր նորից մոտենալ Աքբարային, որ սիրտն առնի, սիրաշահի, Աքբարան իսկապես նրա հետ կռվի կբռնվեր, զուր չէ, որ նա էր գլուխը, իսկ Թաշչայնարը ոտքերն էր այս եկվոր դորշաճերմակ գույդի մեջ։

Հիմա Աքբարան, այն բանից հետո, որ մի քիչ հանգրստացել ու տաքացել էր Թաշչայնարի լայն կողքին սեղմված, շնորհակալ էր իր գայլից նրա համար, որ սա իր հետ բաժանեց սարսափելի վախը, նրա համար, որ դրանով վերադարձրեց իր ինքնավստահությունը, ուստի չէր դիմադրում նրա եռանդուն զգվանքներին, և ի պատասխան նույնիսկ մի երկու անգամ լիզեց նրա շրթունքները, և հուզմունքը հաղթահարելով, որ դեռևս իրեն զգալ էր տալիս անսպասելի բռնված դողով, կենտրոնացավ ինքն իր մեջ՝ ականջ դնելով այն բանին, թե ինչ անհասկանալի և անհանգիստ էին պահում իրենց դեռ չծնված ձագերը, համակերպվեց եղածի հետ, այսինքն՝ և որջի, և լեռներում մեծ ձմռան, և կամաց-կամաց վրա հասնող սառնամանիք գիշերվա հետ։

Այսպես ավարտվեց էգ գայլի համար սարսափելի ցընցումի այդ օրը։ Մայրական զորեղ բնազդին ենթակա, նա սարսափում էր ոչ այնքան իր համար, որքան նրանց համար, որոնք շուտով սպասվում էին այս որջում, հանուն որոնց նա և իր գայլը գտել էին այս տեղը ժայռի տակ ընկած խոր ծերպում՝ զանազան մացառուտներով, հողմակուրծան ծառերով ու թափված քարերով ծածկված, գտել ու սարքել էին այստեղ իրենց գայլատորջը, որպեսզի տեղ լիներ սերունդ ծնելու, որպեսզի իրենց ապաստանն ունենային երկրի վրա։

Մանավանդ որ Աքբարան և Թաշչայնարը եկվորներ էին այս վայրերում։ Փորձված աչքի համար նրանք նույնիսկ արտաքնապես տարբերվում էին իրենց տեղական եղբայրակիցներից։ Առաջինը՝ եկվորների վզի մորթու եղերը, որ շքեղ արծաթա-մոխրագույն մորթեպատյանի նման կիպ եղերապատում էին ուսերը վզակոթից մինչև հետնաբաշը, բաց գույնի էին, որ բնորոշ է տափաստանային գայլերին։ Եվ հասակով էլ աքջալաները, այսինքն գորշաբաշերը, Մերձիսսիկուլյան լեռնաշխարհի սովորական գայլերից

բարձր էին։ Իսկ եթե որևէ մեկն Աքբարային մոտից տեսներ, նրան պիտի զարմացնեին գայլի վճիտ կապույտ աչքերը, որ հազվագյուտ բան էր, իսկ գուցե հենց եզակի դեպք էր։ Էգ գայլին տեղի չորաններն ասում էին Աքդալի, այսինքն Սպիտակաբաշ, բայց շուտով լեզվի փոխակերպության օրենքով այն դարձավ Աքբարի, իսկ հետո էլ՝ Աքբարա՝ Մեծ, և ոչ մեկի մտքով չէր անցնում, որ դա նախախնամության նշան էր։

Դեռևս մի տարի առաջ գորշաբաշերին այստեղ տեսած էլ չկային։ Օրերից մի օր հայտնվելով այստեղ, նրանք շաբունակում էին իրենց պահել հեռու, մեկուսի։ Սկզբում եկվորները տեղի տերերի հետ հանդիպումից խուսափելու համար թափառում էին մեծ մասամբ այստեղի գայլային տիրույթների չեզոք գոտիներում, մի կերպ գլուխ էին պահում, որս գտնելու համար վազ էին տալիս նույնիսկ դաշտեր, ցածրավայրերը, մարդկանց բնակավայրերին մոտ, սակայն տեղի ոհմակներին այդպես էլ չմիացան՝ չափազանց անկախ բնավորության տեր էր կապտաչյա էգ գայլ Աքբարան, որպեսզի միանար օտարներին և ենթակա դառնար։

Ամեն ինչին դատավոր է կյանքը։ Ժամանակի ընթացքում գորշաբաշ եկվորները կարողացան իրենց պաշտպանել, բազում դաժան կռիվներով իրենց համար հողեր նվաճեցին Մերձիսիկուլյան լեռնաշխարհում, և հիմա արդեն նրանք՝ եկվորներն էին տերերը, և արդեն տեղի գայլերը չէին համարձակվում խուժել նրանց սահմանները։ Այսպես, կարելի է ասել, հաջող դասավորվեց Իսսիկ-կուլում նոր հայտնված գորշաբաշ գայլերի կյանքը, սակայն այդ ամենն ուներ իր նախապատմությունը և եթե գազանները կարողանային հիշել անցյալը, ապա Աքբարան, իր չափազանց խելամտությամբ և նուրբ ըմբռնողությամբ, ստիպված պիտի լիներ նորից վերապրելու այն ամենն, ինչ թերևս նա հիշում էր երբեմն արցունքով ու ծանր հառաչանքով։

Այն կորսված աշխարհում, այստեղից հեռու ընկած Մոյընկումի տափաստանում մեծ որսորդական կյանք էր՝ Մոյընկումյան անվերջանալի լայնարձակություններում անվերջանալի հետապնդումով սայգակների անվերջանալի հո-

տին։ Երբ այծեղջերու-սայգակները, որ անհիշելի ժամանակներից ապրում էին արևադարձային տափաստաններում, պատսպարված մշտապես ցցաշոր սաքսաուլի թփուտներով, երբ երկկեղավորներից հնագույնները, հնագույն ինչպես կյանքը, վազքից չհոգնող այս արծվաուռնգ հոտակյաց կենդանիները՝ շատ լայն խողովականման ռունգներով, որ օդը թոքերով անց էին կացնում նույն ուժով, ինչ կետ ձկներն իրենց ընշացքով՝ օվկիանոսի ջրերը, ուստի և օժտված էին արևածագից մինչև մայրամուտ առանց շունչ առնելու վազելու կարողությամբ, ահա երբ նրանք վազքի էին մատնվում հավերժորեն նրանցից անբաժան գայլերից հալածված, երբ մի վախեցած հոտը խուճապահար իր ետևից տանում էր հարևան հոտը, իսկ հաճախ և մյուսը, երրորդը և երբ այդ համատարած փախուստին էին միանում հանդիպական մյուս մեծ ու փոքր հոտերը, երբ սլանում էին սայգակները Մոյընկումով՝ բարձրավանդակներով, հարթավայրերով, ավազուտներով՝ երկրի վրա թափվող հեղեղի նման, հողը ետ-ետ էր գնում ու դղրդում էր նրանց ոտքերի տակ, ինչպես դղրդում է ամռան կարկատաարափից, և օդը լցվում էր շարժման մրրկապատյար շնչով, քարախառն փոշիով ու ամբակների տակից թռչող կայծերով, հոտային քրտնահոտով, մահու և կենաց խելահեղ մրցության հոտով, և գայլերը վազելիս գետին փռվելով-բարձրանալով գնում էին նրանց ետևից ու նրանց կողքից, ջանալով սայգակների հոտերն ուղղել դեպի իրենց գայլային դարաններըր, որտեղ սաքսաուլների թփուտների մեջ նրանց սպասում էին մեծ ու փորձված հոշոտողները՝ այն գազանները, որ թաքըստոցից նետվում էին սրընթաց վազող զոհի վզակոթին և նրա հետ թավալգլոր տալով հասցնում էին կրծել կոկորդը, արյուն հանել, ու նորից վազում հետապնդելու, սակայն սայգակները ինչ-որ կերպ հաճախ հասկանում էին, թե որտեղ են գայլերի դարանները ու հասցնում էին շրջանցել դրանք, իսկ շուրջկալը նոր շրջանից սկսվում էր ավելի կատաղի և ավելի սրընթաց, և բոլորը՝ հալածվողներն ու հալածողները,— միևնույն օդակը դաժան կեցության,— ամբողջ ուժերն էին ներդնում վազքի մեջ, ինչպես մահառաջի հոգեվարքի ժամանակ, իրենց արյունը մրկելով, որպեսզի ապրեն,

որպեսզի կենդանի մնան, ու թերևս միայն աստված ինքը կարողանար կանգնեցնել և մեկին, և մյուսին, հալածվողներին ու հալածողներին, քանզի դա կենաց և մահու խնդիրն էր ապրել փափագող արարածների, քանի որ այն գայլերը, որ չէին դիմանում այդ կատաղի արագությանը, նրանք, որ աշխարհ չէին եկել գոյության պայքարի մրցության համար՝ վազք-պայքարի, այդ գայլերն ընկնում էին ու մնում շունչը փչելու մրրիկի պես սուրացող հալածողների բարձրացրած փոշու մեջ, իսկ եթե անգամ կենդանի էին մնում, հեռանում էին ուրիշ վայրեր, ուր սկսում էին թալանը խեղճ ոչխարի հոտերի, որոնք փորձ էլ չէին անում վազքով փրկվելու, ճիշտ է, այնտեղ էլ ուրիշ վտանգ կար, ամենասարսափելին հնարավոր բոլոր վտանգներից. այնտեղ, հոտերի մոտ մարդիկ կային, ոչխարների աստվածներն ու նույն իրենք՝ սորուկները ոչխարների, նրանք, որ իրենք ապրում են, բայց կենդանի չեն թողնում ուրիշներին, մանավանդ նրանց, ով անկախ է իրենցից, կարող է ազատ լինել...

Մարդիկ, մարդիկ՝ մարդաստվածնե՛րը: Մարդիկ նույնպես սայգակների որսի էին դուրս գալիս Մոյընկումի տափաստանում: Առաջ նրանք հայտնվում էին ձիերով, վրաները մորթի քաշած, նետերով զինված, հետո սկսեցին հայտնվել դրխկացնող հրացաններով, հայ-հույով այս ու այն կողմ էին սլանում, և սայգակները խմբով մեկ այս մեկ այն կողմն էին նետվում՝ դե գնա ու գտիր դրանց սաքսաուլի մացառուտներում, բայց եկավ ժամանակ, երբ մարդաստվածները սկսեցին շուրջկալներ անել մեքենաներով, հալից գցելով նրանց, ճիշտ ու ճիշտ, ինչպես գայլերը, և սայգակներին տապալում էին հենց վազքի ժամանակ գնդակահարելով, իսկ հետո մարդաստվածներն սկսեցին գալ ուղղաթիռներով, և նախապես օդից նայելով ու գտնելով տափաստանում սայգակների հոտերը, գալիս էին շրջապատելու կենդանիներին նշված կետերում, գետնի վրա մնացած կրակողները այդ ժամանակ սլանում էին հարթավայրերով հարյուր և ավելի կիլոմետր արագությամբ, որպեսզի սայգակները չհասցնեին թաքնվել, իսկ ուղղաթիռները վերևից ճշտում էին նշանակետն ու շարժումը: Մեքենաներ, ուղղաթիռներ, արագահար

հրացաններ՝ և կյանքը գլխի վրա շուռ եկավ Մոյընկումի տափաստանում...

Կապտաչյա էգ գայլ Աքբարան դեռ չծնած մատղաշ էր, իսկ նրա ապագա ամուսին-գայլ Թաշչայնարը մի քիչ էր նրանից մեծ, երբ եկավ նրանց ժամանակը սովորելու մեծ, հալածական շուրջկալների: Սկզբում նրանք չէին հասնում հալածողների ետևից, քրքրում էին տապալված այծեղջերուներին, սպանում կիսամեռներին, բայց ժամանակի ընթացքում ուժով և դիմացկունությամբ առաջ անցան շատ փորձված գայլերից, մանավանդ ծերացող: Եվ եթե ամեն ինչ ընթանար բնության սահմանած կարգով, շուտով նրանք ոհմակի առաջնորդներ կդառնային: Սակայն ամեն ինչ այլ կերպ ընթացավ...

Տարին տարուց տարբեր է և այն տարի գարնանը սայգակների հոտերում առանձնապես հարուստ ծնած էր՝ շատ մայրեր զույգ էին բերում, քանի որ անցյալ աշուն կտղանքի ժամանակ չոր խոտածածկոցը մի երկու անգամ նորից կաշեցնաշեց տաք եղանակին մի քանի առատ անձրևներից հետո: Կերը շատ էր, այստեղից էլ՝ ծնելիությունը: Սինի ժամանակ սայգակները դեռ վազ գարնանից հեռանում էին դեպի անձյուն մեծ ավազները, որ ընկած էին Մոյընկումի ամենախորքում. այնտեղ հասնելը գայլերի համար դժվար էր, և ավազաթմբերի վրայով սայգակներին հետապնդելն էլ անհույս բան էր: Ավազների վրա այծեղջերվին ոչ մի կերպ չես հասնի: Բայց փոխարենն, գայլերի ոհմակներն իրենց բաժինը լիուլի առնում էին աշնանն ու ձմռանը, երբ կենդանիների սեզոնային քոչը անհամար քանակությամբ սայգակա-գլխաքանակ էր լցնում կիսաանապատային և տափաստանային հարթավայրերը: Ու հենց այդ ժամանակ էր, որ գայլերն իրենց բաժինը պիտի առնեին: Իսկ ամռանը, հատկապես մեծ շոգի ժամանակ, գայլերը գերադասում էին ձեռք չտալ սայգակներին, մանավանդ որ ինչքան ասես ուրիշ, ավելի մատչելի որս կար՝ շատ ու շատ արջամկներ էին վազվզում տափաստանով մեկ. ձմռան քնին բաց թողածի տեղը հանելու համար, նրանք ամռան ընթացքում պետք է հասցնեին այն, ինչ մյուս կենդանիներն ու գազանները անում են մի տարվա մեջ: Դրա համար էլ ամենուր վխտում էր արջամկնային ցեղը,

վտանգն անտեսելով։ Ինչ պակաս որս էր, մանավանդ որ ամեն ինչ իր ժամանակն ունի, ձմռանն էլ արջամուկ չես գտնի, չեն լինում։ Եվ ուրիշ զանազան մանրիկ գազանիկներ, մեկ էլ թռչուններ, մանավանդ կաքավներ, դրանք էլ էին կեր դառնում գայլերին ամռան ամիսներին,, սակայն գլխավոր որսը,— սայգակների մեծ որսը,— լինում էր աշնանը և աշնանից ձգվում մինչև ձմռան վերջը։ Այսպես, դարձյալ ամեն ինչ իր ժամանակն ունի։ Եվ դրա մեջ կար յուր, բնությունից տրված նպատակահարմարությունը տափաստանի կյանքի ընթացքին։ Լոկ տարերային աղետներն ու մարդիկ կարող էին փոխել իրերի այդ նախասկզբնական ընթացքը Մոյընկումում...

2

Լուսաբացի մոտ տափաստանում օդը մի քիչ հովացավ, և այդ ժամանակ միայն որոշ թեթևություն եկավ՝ կենդանի արարածների համար շնչելը հեշտացավ, և սկսվեց ամենաբերկրալի ժամը ծագող օրվա՝ լցված գալիք տապով, որ այրում էր տափաստանը սպիտակելու աստիճանի, և անցնող տոթ, շոգ գիշերվա միջև։ Այդ ժամին լիալուսինը հուր-հրատում էր Մոյընկումի վրա կլոր դեղին գնդի նման, լուսավորելով երկիրը կայուն կապտավուն լույսով։ Ու չէր երևում ոչ սկիզբը, ոչ վերջը այդ երկրի։ Ամենուրեք մուգ, հազիվ նշմարվող հեռաստանները ձուլվում էին աստղալից երկնքին։ Լռությունը կենդանի էր, քանի որ այն ամենը, ինչ ապրում էր տափաստանում, ամենը, բացի օձերից, շտապում էր այդ ժամին վայելել զովը, շտապում էր շունչ քաշել։ Կարմրանի թփերի մեջ ծլծլում ու շարժվում էին վաղ գարնան թռչունները, գործունյա վազվզում էին ոզնիները, ճպուռները, որ երգել էին ամբողջ գիշեր, նոր ուժով էին ձայնում, արդեն բներից գլուխներն էին հանում ու շուրջը նայում քնից դուրս եկած արջամկները, առայժմ դեռ դուրս չգալով կերի՝ սաքսաուլի թափված սերմերի հավաքի։ Ամբողջ ընտանիքով տեղից տեղ էր թռչկոտում տափակապուխս մեծ դոշ բվենը իր մի հնգյակ տափակապուխս բվեճիկների հետ, որ արդեն մեծացել էին, թևավորվել և փորձում էին իրենց

թևերը, թռչում մի կերպ, շարունակ անհանգիստ իրար ձայնելով և միմյանց աչքից բաց չթողնելով։ Նրանց ձայնակցում էին հազարումի կենդանի էակներն ու զանազան գազանները նախալուսածագի տափաստանի...

Եվ ամառ էր, առաջին ամառը կապտաչյա Աքբարայի և Թաշչայնարի համատեղ կյանքի, որ շուրջկալների ժամանակ իրենց արդեն դրսևորել էին որպես լավ սայգակ հալածող և որ արդեն մոլընկումյան գայլերի ամենաուժեղ զույգերի թվում էին։ Բարեբախտաբար,— պետք է ենթադրել, որ գազանների աշխարհում էլ կարող են երջանիկներ և դժբախտներ լինել,— երկուսն էլ՝ և Աքբարան, և Թաշչայնարը ի բնե օժտված էին այն հատկություններով, որ կենսական կարևորություն ունեն տափաստանային գիշատիչների համար կիսաանապատային տափաստանում. վայրկենական կողմնորոշում, նախազգում որսի ժամանակ, այսպես ասած «ստրատեգիական» հնարամտություն, և, անշուշտ, ահռելի ֆիզիկական ուժ՝ արագություն և գրոհ՝ վազքի ժամանակ։ Ամեն ինչից երևում էր, որ այդ զույգը որսորդական մեծ ապագա պիտի ունենա և նրանց կյանքը լի պիտի լինի ամենօրյա կերի հայթայթման դժվարություններով և կատարելությամբ իրենց գազանային կոչման։ Իսկ առայժմ նրանց ոչինչ չէր խանգարում լիակատար տիրություն անելու Մոլընկումի տափաստաններում, քանի որ մարդու մուտքն այս սահմանները դեռևս պատահական բնույթ էր կրում և նրանք դեռ ոչ մի անգամ չէին հանդիպել մարդու երես առ երես։ Դա տեղի կունենա մի քիչ ավելի ուշ։ Եվ նրանց ևս մի արտոնությունը, եթե չասենք առավելությունը, աշխարհաստեղծումից ի վեր կայանում էր նրանում, որ, ինչպես և ողջ կենդանական աշխարհը, կարող էին ապրել օրվա կյանքով, տագնապ ու հոգս չունենալով վաղվա օրվան։ Նպաստավոր բնությունը ամեն ինչով ազատել է կենդանիներին գոյության այդ անիծյալ լծից։ Թեև հենց այդ բարերարության մեջ էր թաքնված և այն ողբերգությունը, որ դարանամուտ էր Մոլընկումի բնակիչներին։ Սակայն նրանցից ոչ մեկը չէր կարող այդ իմանալ։ Ոչ մեկը չէր կարող պատկերացնել, որ անծայրածիր թվացող Մոլընկումի տափաստանը, որքան էլ լայնարձակ ու մեծ լինի, եղած-չեղածը մի փոքրիկ

կղզի է Ասիայի մերձարևադարձային մայրցամաքում, ընդամենը բուժ մատի եղունգի չափ դեղնա-դարչնագույն մի տեղ աշխարհագրական քարտեզի վրա, որին տարեց տարի ավելի են նեղում անշեղորեն հերկվող խոպան հողերը, նեղում են անհամար ընտանեկան հոտերը, որ թափառում են տափաստանում արտեզյան հորանցքներին մոտ կերի նոր տարածքներ որոնելով, նեղում են ջրանցքներն ու ճանապարհները, որ բացում են սահմանամերձ գոտիներում՝ խոշորագույն գազատար խողովակագծերից մեկը տափաստանին անմիջապես մոտ գտնվելու պատճառով, ավելի ու ավելի համառորեն, հաստատուն, ավելի տեխնիկապես զինված են ներխուժում մարդիկ՝ մեքենաներով, շարժիչներով, ռադիոկապով, ջրի պաշարով, բոլոր անապատների և կիսաանապատների խորքերը, այդ թվում և Մոյնկումի տափաստան, ընդ որում ներխուժում են ոչ թե ինքնագոհ հայտնագործություններ կատարող գիտնականներ, որոնցով պետք է հպարտանան սերունդները, այլ սովորական մարդիկ, սովորական գործ անող, այնպիսի գործ, որ գրեթե ամեն մարդ կարող է անել։ Եվ առավել քան չէին կարող իմանալ իր նմանը չունեցող Մոյնկումի տափաստանի բնակիչները, որ մարդկանց ամենասովորական գործերի մեջ է բարու՝ և չարի սկիզբը երկրում։ Եվ որ այստեղ ամեն ինչ կախված է հենց մարդկանցից, թե նրանք ինչին կուղղեն այդ մարդկության համար սովորական բանները՝ բարուն, թե չարին, ստեղծելուն, թե կործանելուն։ Եվ արդեն բոլորովին անիմանալի էին Մոյնկումի տափաստանների չորքոտանի և մյուս արարածների համար այն բարդություններ, որ տանջում էին մարդկանց, այն, որ մտածող արարած դառնալուց ի վեր փորձում էին մարդիկ հասկանալ իրենց, թեև, միևնույն է, այդպես էլ չուժեցին մշտնջենական այն առեղծվածը, թե ինչու է չարը գրեթե միշտ հաղթում բարուն...

Բոլոր այդ մարդկային գործերն ըստ էության չպիտի վերաբերվեին Մոյնկումի կենդանիներին, քանի որ դրանք դուրս էին նրանց բնությունից, նրանց բնազդներից և փորձից։ Եվ, ընդհանուր առմամբ, առայժմ դեռևս ոչինչ լրջորեն չէր խանգարել ստեղծված կենսակարգը այդ մեծ ասիական տափաստանում, փուված շուշ կիսաանապատային հարթա-

վայրերի և բլուրների վրա, որ ծածկված էին միայն այստեղ աճող երաշտադիմացկուն կարմրանի տեսակներով, կիսաթուփ-կիսածառ այդ բուսականությամբ, քարի նման ամուր, ծովաճապանի նման ոլորված ավազուտային սաքսաուլով, կոշտ ցածրիկ խոտով և ամենից ավելի եղեգնյա ընձյուղավոր ամբուլով, կիսաանապատի այդ դեղեցկուհիով, որ և լուսնի, և արևի լույսի տակ շողշողում էր ոսկյա անիրական անտառի նման, որի մեջ, ինչպես ծանծաղ ջրի մեջ, ով էլ,— թեկուզ շան հասակի չափ հասակ ունեցող,— գլուխը բարձրացնի, կտեսնի շուրջն ամեն ինչ և ինքն էլ կերևա։

Այդ վայրերում էր ստեղծվել նոր գայլազույգի՝ Աքբարայի և Թաշչայնարի կյանքը, և այդ ժամանակ արդեն,— այն, որ ամենակարևորն է կենդանիների կյանքում,— նրանք ունեին իրենց առաջնեկներին, երեք լակոտ այն ձագերից, որ Աքբարան ծնել էր անմոռանալի այն գարնանը Մոյընկում, անմոռանալի այն որջում, արմով ծածկված սաքսաուլի տակի փոսում, կիսաչորացած կարմրանի անտառակի մոտերքը, ուր հարմար էր գայլաձագերին դուրս բերել վարժեցնելու։ Գայլաձագերն արդեն սովորել էին ականջները դիք պահել, ամեն մեկն իր բնավորությունն էր ձեռք բերում, թեև իրար հետ խաղալիս դարձյալ նրանց ականջները լակոտավարի ցցվում էին, և ոտքի վրա էլ արդեն իրենց բավականին պինդ էին զգում։ Ու ավելի, ավելի հաճախ էին ծնողների հետևից մոտ և հեռու թափառումների գնում։

Վերջերս ամբողջ մի օր ու գիշերը որջից դուրս անցկացնելու այդպիսի դեպքերից մեկը քիչ էր մնում անսպասելի աղետով վերջանար գայլերի համար։

Այն վաղ առավոտյան Աքբարան իր ձագերին տարավ Մոյընկումի տափաստանի հեռավոր ծայրամասը, ուր տափաստանային լայնարձակություններում, մանավանդ խուլ կիրճերում և խանդակներում ցողունավոր խոտ էր աճում, ոչ մի ուրիշ հոտի չնմանվող թանձր դյութիչ բույրով։ Եթե երկար թափառես այդպիսի բարձր աճած խոտի մեջ՝ խոտափոշին շնչելով, ապա սկզբում մի զարմանալի թեթևություն ես զգում շարժումներիդ մեջ, գետնի վրա սահելու հաճելի զգացողություն, լսկ հետո ոտքերդ մի տեսակ թուլանում են,

վրաղ քնատուբյուն է գալիս։ Աքբարան այդ տեղերը հիշում էր դեռ մանկուբյունից և տարին մի անգամ գալիս էր այս կողմերը թմրեցնող խոտի ծաղկման շրջանում։ Ճամփին տափաստանային մանր-մունր կենդանիներ որսալով, նա սիրում էր մի թեթև արբեցման վիճակ ապրել բարձր խոտերի մեջ, թավալ տալ շոգ, թանձր այդ խոտաբույրի մեջ, ճախրելու զգացում վայելել վազքից ու հետո քուն մտնել։

Այս անգամ նա և Թաշչյանարն արդեն մենակ չէին. նրանց ետևից գալիս էին գայլաձագերը՝ երեք անճոռնի երկարոտն լակոտներ։ Ջահելները պետք է ինչքան կարելի է շատ քան սովորեին շրջակայքում կատարած այդ արշավների ժամանակ, փոքրուց ճանաչեին ապագա գայլային տիրույթները։ Բուրումնավետ մարգագետինները, որ տանում էր նրանց ցույց տալու մայր գայլը, գտնվում էին այդ տիրույթների ամենավերջում, դրանից հետո արդեն ընկած էր ուրիշ աշխարհ, այնտեղ կարող էին հանդիպել մարդիկ, այնտեղից, այդ անծայրածիր հեռաստանից երբեմն լսվում էին աշնան քամու նման երկարաձիգ ոռնացող շոգեքարշերի սուլոցները, դա արդեն գայլերին թշնամի աշխարհն էր։ Այնտեղ, տափաստանի այդ ծայրը նրանք գնում էին Աքբարայի առաջնորդությամբ։

Աքբարայի ետևից մանրաքայլ վազում էր Թաշչյանարը, իսկ գայլաձագերը եռանդի հորդումից վազում էին արագ ու շարունակ չանում առաջ անցնել, սակայն գայլ-մայրը թույլ չէր տալիս նրանց ինքնագլխություն անել. նա խստորեն հետևում էր, որ ոչ մեկն իրենից առաջ ոտք չդնի կածանին։

Սկզբում ավազուտ վայրեր էին՝ սաքսաուլի և տափաստանային օշինդրի մացառուտներում, արեգակը բարձրանում ու բարձրանում էր, խոստանալով ինչպես միշտ պարզ, շոգ եղանակ։ Իրիկվա դեմ արդեն գայլերի ընտանիքը հասավ տափաստանի ծայրին։ Հասավ ճիշտ ժամանակին, դեռ լույսավ։ Խոտն այդ տարի բարձր էր՝ գրեթե մինչև մեծ գայլերի վզակոթին էր հասնում։ Օրվա ընթացքում շոգ արևի տակ տաքանալով, փրչոտ ցողունների վրայի փոքրիկ ծաղկաբույլերը ուժեղ հոտ էին արձակում, հատկապես ուժեղ էր այդ հոտը խիտ մացառուտների տեղերում։ Այստեղ, մի փոքրիկ ձորակի մոտ գայլերը կանգ առան երկար ճամփից հե-

տեղ։ Անդադրում գայլաձագերը ոչ այնքան հանգստանում էին, որքան վազվզում ձորակի շուրջ, հոտ քաշելով ու զբաղվելով այն ամենին, ինչ գրավում էր նրանց ուշադրությունը։ Թերևս գայլերի ընտանիքը այստեղ էլ մնար ամբողջ գիշեր, մանավանդ որ գազանները կուշտ էին և ծարավը հագեցրած՝ ճամփին հաջողվել էր մի քանի գիրուկ արջամկներ ու նապաստակներ բռնել և շատ զանազան բույներ քանդել, իսկ ծարավը հագեցրել էին իրենց ճամփին ձորակի հատակում եղած աղբյուրից, եթե մի արտակարգ իրադարձություն չստիպեր նրանց շտապով թողնելու այդ վայրն ու ետ դառնալու իրենց ապրելատեղը, տափաստանի խորքում գտնվող իրենց որջը։ Գնում էին ամբողջ գիշեր։

Իսկ պատահել էր այն, որ արդեն մայրամուտին, երբ Աքբարան ու Թաշչայնարը թմրեցնող խոտի բույրերից արբեցած մեկնվել էին թփերի տակերում, շատ մոտից հանկարծ լսվեց մարդու ձայն։ Սկզբում մարդուն տեսան գայլաձագերը, որ խաղում էին խանդակի վերևում։ Գազանիկները գաղափար չունեին և չէին էլ կարող իմանալ, որ հանկարծ այստեղ հայտնված արարածը մարդ է։ Ինչ-որ մեկը, գրեթե մերկ, միայն լողավարտիքով, բոբիկ ոտքերին ռետինե կոշիկներ հագած, մի ժամանակ սպիտակ, իսկ հիմա արդեն լավ կեղտոտված լայնեզր գլխարկով վազվզում էր նույն այդ խոտերի մեջ։ Վազում էր տարօրինակ կերպով՝ ընտրում ամենախիտ թփուտները և համառորեն ետ ու առաջ էր վազում այդ ցողունների մեջ, ասես դա իրեն հաճույք պատճառեր։ Գայլաձագերն սկզբում թաքնվեցին, զարմանալով և վախենալով. այդպիսի բան երբեք չէին տեսել։ Իսկ մարդը վազում, վազում էր խոտերի մեջ խելագարի նման։ Գայլաձագերը համարձակություն առան, հետաքրքրասիրությունը հաղթահարեց, ուզեցին խաղ սկսել այս տարօրինակ, ասես լարովի վազվզող անծանոթ, մերկ մաշկով երկոտանի գազանի հետ։ Եվ այդ ժամանակ մարդն էլ նկատեց գայլաձագերին։ Եվ որ ամենազարմանալին էր՝ փոխանակ զգուշանալու, մտածելու, թե ինչու են այստեղ հանկարծ գայլեր հայտնվել, այդ տարօրինակ մարդը մոտեցավ գայլաձագերին, քնքշորեն նրանց մեկնեց ձեռքերը։

— Մի տես է, այս ինչ է,— խոսում էր ծանր շնչելով ու երեսի քրտինքը սրբելով.— Գայլաձագեր են, չէ՞։ Ե՛ւ աչքիս է երևում պատվելուց։ Բայց չէ, երեքն են, և սիրուն են, ի՞նչ էլ մեծ են արդեն։ Այ իմ լավ գազանիկներ։ Որտեղի՞ց հայտնվեցիք։ Ի՞նչ եք անում այստեղ։ Ինձ սատանան այստեղ քշեց, բայց դո՞ւք ինչ եք անում այս տափաստաններում, այս անիծյալ խոտի մեջ։ Դեհ, եկեք, եկեք, մոտ եկեք ինձ, մի վախեցեք։ Այ հիմարիկ գազանիկներ։

Անխոհեմ գայլաձագերն իսկապես էլ տեղի տվեցին նրա զուրգուրանքին։ Պոչիկները խաղացնելով, ժիր-ժիր գետնին սեղմվելով՝ սկսեցին սողալ դեպի մարդը, հույս ունենալով նրա հետ վազքի բռնվելու, բայց այդ պահին խանդակից դուրս թռավ Աքբարան։ Էգ գայլը վայրկենապես հասկացավ վիճակի վտանգավորությունը։ Խուլ մռնչալով, նա նետվեց մերկ մարդու վրա, որ վարգագույն լուսավորվել էր տափաստանային արևի նախամայրամուտի շողերով։ Գայլի համար ոչինչ չարժեր միանգամից ժանիքներով պատռել նրա կոկորդը կամ որովայնը։ Իսկ մարդը կատաղի վրա հասնող գայլի տեսքից սարսափած նստեց՝ գլուխը երկու ձեռքով բռնած։ Հենց գա էլ փրկեց նրան։ Յատկի պահին Աքբարան մեկ էլ փոխեց մտադրությունը։ Նա թռավ մարդու վրայով,— մերկ ու անպաշտպան,— որին մի հարվածով կարող էր վերջացնել, թռավ վրայով, հասցնելով սակայն տեսնել նրա դեմքը և ահավոր սարսափից սառած աչքերը, զգալով նրա մարմնի հոտը, թռավ վրայով, շրջվեց ու նորից երկրորդ անգամ թռավ անցավ արդեն ուրիշ ուղղությամբ, նետվեց դեպի ձագերը, նրանց հետու քշեց, ցավոտ կծոտելով պոչուկները և ետ մղելով դեպի խանդակ, ու այստեղ բախվեց Թաշչայնարին՝ բաշատակը զարհուրելի ծառս արած մարդու տեսքից, նրան էլ կծեց ու ետ դարձրեց, և նրանք այդպես խմբով խանդակ գլորվելով, վայրկենապես անհետացան...

Ով դրանից հետո միայն այն մերկ ու տխմար արարածը ուշքի եկավ, վազեվազ փախավ... Ու երկար վազում էր տափաստանով, առանց հետ նայելու ու շունչ առնելու....

Դա Աքբարայի և նրա ընտանիքի առաջին պատահական հանդիպումն էր մարդու հետ... Բայց ով կարող էր իմանալ, թե ինչ էր կանխագուշակում այդ հանդիպումը...

Օրը մոտենում էր ավարտին՝ դաժան տապ տարածելով մայր մտնող արեից, օրվա ընթացքում շիկացած հողից։ Արևը և տափաստանը հավերժական մեծություններ են. արեգակով է չափվում տափաստանը, թե ինչ մեծության է արեգակով լուսավորված տարածությունը։ Իսկ տափաստանի գլխի երկինքը չափվում է ուրուրի թռիչքի բարձրությամբ։ Նախաերիկնային այն ժամին Մոլընկումի տափաստանի գլխին սպիտակապոչ ուրուրների ամբողջ մի երամ էր պտտվում։ Նրանք թռչում էին աննպատակ, ինքնամոռաց ու սահուն լողում էին, թռչելով միայն թռչելու համար այն միշտ զով, մի քիչ մշուշոտ անամպ բարձունքում։ Թռչում էին մեկը մյուսի ետևից մի ուղղությամբ շրջան կատարելով, դրանով ասես խորհրդանշելով հավերժությունն ու անսահմանությունը այս երկրի ու այս երկնքի։ Ուրուրները ոչ մի ձայն չէին արձակում, այլ լուռ նայում էին, թե ինչ էր կատարվում այդ պահին ցածում, նրանց թևերի տակ։ Իրենց բացառիկ սուր տեսողության շնորհիվ, հենց տեսողության շնորհիվ (նրանց լսողությունը երկրորդ տեղում է) այս ազնվազարմ գիտաշիխները տափաստանի երկնային բնակիչներն էին, որ մեղավոր երկիր էին իջնում միայն սնվելու և գիշերելու համար։

Թևերս այս ժամին, այն անասելի բարձրությունից նրանք պարզ տեսնում էին գայլին, մայր գայլին ու երեք ձագերին, որ տեղավորվել էին կարմրանի ցաքուցիր թփերի և սմբուլի ոսկեգույն շիվերի մեջ ընկած փոքրիկ թմբիկի վրա։ Շոգից լեզուները դուրս գցած, գայլերի ընտանիքը հանգստանում էր այն բլրակին, բնավ չմանալով, որ դիտակետ է դարձել երկնային թռչունների համար։ Թաշչայնարը կիսապառկած էր իր սիրած դիրքով՝ թաթերը առջևում խաչած, գլուխը կիսաբարձրացրած. նա մյուսներից տարբերվում էր իր բաշատակով, հաստոսկրությամբ, ծանր ու խոշոր մարմնով։ Կողքին, հաստ, կարճլիկ պոչը տակը քաշած, ինչ-որ բանով նման անշարժ քանդակի, նստել էր ջահել էգ գայլ Աքքարան։ Սա պինդ հենվել էր առաջ մեկնած ուղիղ ջլուտ ոտքերին։ Նրա սպիտակին տվող կուրծքը և ներս ընկած փորը՝ երկու շարք ցցված, բայց արդեն ուռածությունը կորցրած պտուկներով,

ավելի նկատելի էին դարձնում էգ գայլի ազդրերի նիհարությունն ու ուժը։ Իսկ գայլաձագերը, երեք ձագուկ, պտտվում էին նրանց շուրջ։ Ձագերի տեղում հանգիստ չմնալը, քաշքշոցն ու ժրությունը բոլորովին չէին զայրացնում ծնողներին։ Եվ գայլը և մայր գայլը նայում էին նրանց բացահայտ թողտվությամբ. էհ, թող իրենց համար խաղան...

Իսկ ուրուրները շարունակում էին թռչել երկնքի տակ և շարունակում նույն սառնասրտությամբ նայել, թե ինչ էր կատարվում Մոյընկումում այդ արևամուտին։ Գայլերից ու գայլաձագերից քիչ հեռու, կարմրանի անտառակներում արածում էին սայգակները։ Դրանք շատ էին։ Բավական մեծ մի հոտ արածում էր գրեթե գայլերի կողքին, կարմրանի թփերի մեջ ցրված, մի այլ, ավելի մեծ հոտից որոշ հեռավորության վրա։ Եթե ուրուրներին հետաքրքրեին տափաստանային այծեղջերուները, նրանք, իրենց հայացքի տակ առնելով ամեն կողմի վրա տասնյակ կիլոմետրեր ձգվող տափաստանը, կտեսնեին, որ սայգակներն անթիվ անհամար են՝ հարյուրներով ու հազարներով, քանի որ ի սկզբանե շատ են եղել իրենց համար բարեբեր այս կիսաանապատային տարածքում։ Իրիկնային տապն անցկացնելով, սայգակները դիշերով գնում էին ջուր խմելու տափաստանում այնքան սակավ ու հեռու ընկած ջրաղբյուրներում։ Առանձին խմբեր հիմա արդեն, արագ ընթացքի ընկնելով, շարժվեցին դեպի այդ կողմ։ Նրանք մեծ տարածություններ պետք է հաղթահարեին։

Հոտերից մեկն այնքան մոտ անցավ գայլերի բլրակից, որ սմբուլի աղոտ լուսավորված խոտածածկոցի միջից երևում էին նրանց արագ սահող կողերն ու մեջքերը, արուների կախ գցած գլուխները փոքրիկ եղջյուրիկներով։ Նրանք միշտ գլուխները կախ են շարժում, որպեսզի օդի ավելորդ դիմադրություն չկրեն, քանի որ ամեն վայրկյան պատրաստ են վազքի։ Այդպես է նրանց ստեղծել բնությունը էվոլուցիայի ընթացքում, և դա սայգակների գլխավոր առավելությունն է, որ ամեն վտանգից փրկվում են վազքով։ Նույնիսկ երբ տագնապած չեն, սայգակները սովորաբար շարժվում են չափավոր վարգով, միշտ և անպայման, ճանապարհ չտալով

ոչ մեկին, բացի գայլերից, քանի որ նրանք, այծեղջերուները շատ են և դա արդեն ուժ է...

Հիմա նրանք շարժվում էին Աքբարայի ընտանիքի կողքով, որ թաքնված էր թփերի մեջ, շարժվում էին քառարշավող զանգված կազմած, իրենց ետևից քամի բարձրացնելով, որից նախիրի և սմբակներից ելնող փոշու հոտ էր փչում։ Գայլաձագերը բլրակին իրար անցան, բնազդաբար անհանգըստացան։ Երեքն էլ լարված հոտոտում էին օդը և, դեռ չհասկանալով, թե դա ինչ է, փորձում էին վազ տալ այն կողմ, որտեղից նրանց էր հասնում այդ զրգռիչ նախրահոտը, շատ էին ուզում նետվել սմբուկի ցողունաշատ թփուտները, որոնց մեջ երևում-անհետանում էին շատ ու շատ վազող մարմիններ։ Սակայն գայլ-ծնողները, ոչ Աքբարան, ոչ Թաշչայնարը, տեղից չշարժվեցին և իրենց դիրքը չփոխեցին, թեև նրանց համար ոչինչ չարժեր ուղղակի երկու ոստյունով հասնել կողքից անցնող հոտին և քշել նրանց, կատաղի, անդադար հետապնդել մինչև հալից գցելը, այնպես որ այդ ընդհանուր վազքի մեջ, մահու և կենաց վազք-մրցության, երբ թվում է, թե երկինք ու գետին իրար են խառնվում, մի որևէ կորուկ պտույտի ժամանակ հաջողացնեն ու հենց ընթացքից մի երկու այծեղջերու գետին տապալեն։ Դա միանգամայն ռեալ հնարավորություն էր, բայց կարող էր պատահել և, որ բախտները չբաներ, չհաջողվեր որսին վրա տալ, այդպես էլ էր լինում։ Ամեն դեպքում, Աքբարան և Թաշչայնարը մտքներով էլ չանցկացրին հետապնդում սկսել, թեև, կարելի է ասել, որսն ինքն էր ասես նրանց ձեռքը գալիս, նրանք տեղներից չշարժվեցին։ Դա էլ իր պատճառներն ուներ. այդ օրը նրանք կուշտ էին և այսպիսի դժոխային շոգին լիքը ստամոքսներով կատաղի վազք սկսել, հետապնդել անորսալի սայգակներին, սարսափելի բան կլիներ։ Սակայն գլխավորը՝ մատղաշների համար դեռ ժամանակը չէր այդպիսի որսի մասնակցելու։ Գայլաձագերը կարող էին կոտրվել՝ և մեկընդմիշտ. եթե նրանք վազքից շնչասպառ ետ մնային անհասանելի նպատակից, այլևս երբեք չէին փորձի խիզախել, համարձակությունը կկորցնեին։ Ձմռանը, մեծ շուրջկալներին, ա՛յ, թե երբ կարող էին արդեն ուժեղացած ձագերը, այդ ժամանակ գրեթե տարին լրացրած, փոր-

ձել իրենց, կարող էին համոզվել, թե իրենց ուժն ինչքան է, կարող էին մասնակցել գործին, իսկ առայժմ չարժեր խաղը փչացնել։ Եվ այն փառավո՞ր ժամ է լինելու։

Աքբարան թեթևակի ետ քաշվեց որսի մոլուցքից անհամբեր իրեն ձանձրացնող ձագերից, նստած տեղը փոխեց, նույն կառչուն հայացքը չկտրելով այծեղջերուների շարժումից, որ գնում էին ջրի կողմը, կողք-կողքի սահելով արծաթավուն ամբույի մեջ, ինչպես ձկները ձկնկիթ դնելիս։ Լողում են դեպի գետի վերին հոսանքները՝ բոլորը նույն կողմը և բոլորը միանման, իրարից չզանազանվող։ Աքբարայի հայացքի մեջ սակայն իր ըմբռնումը կար այդ ամենի. Թող հիմա հեռանան սայգակները, կգա օրը, որ այն ամենն, ինչ կա տափաստանում, նրա ձեռքից չի պրծնի։ Իսկ ձագերն այդ ժամանակ սկսել էին հորը չարչարել, փորձելով որսի հանել համառ թաշչայնարին։

Եվ Աքբարան հանկարծ պատկերացրեց ձմռան սկիզբը, մեծ կիսաանապատը, մի գեղեցիկ օր լուսաբացին ամբողջապես սպիտակ նոր եկած ձյունից, որի ժամկետը գետնին մեկ կամ կես օր է, բայց այդ ձյունը գայլերի համար ազդանշան է մեծ որս սկսելու։ Այդ օրվանից սայգակների որսը ամենագլխավոր գործը կդառնա նրանց կյանքում։ Եվ կգա այդ օրը։ Թեթևակի մառախուղով՝ ցածրավայրերում, սառած եղյամով՝ տիրամած սպիտակ ամբույներին, ձյան ծանրությունից ծռված թփակալած կարմրաններին, և մշուշված արեգակով՝ տափաստանի գլխին. էգ գայլն այդ օրն այնքան հստակ պատկերացրեց, որ ակամա ցնցվեց, ասես հանկարծ սառնասառն օդ կուլ տվեց, ասես թաթերի ձիգ թմբիկներով, որ իրար էին միացած ծաղկաբույլերի նման, մխրճվեց ձյան շերտի մեջ և բոլորովին հստակ տեսավ ինքն իր խոշոր հետքերը, և իր ձագերի հետքերը, որ մեծացել էին, ամրացել, արդեն իրենց հակումներն ունեին, ինչը կարելի էր տեսնել արդեն նրանց հետքերում, և կողքին ամենախոշոր հետքերը, զորեղ ծաղկաբույլներ ճանկերով՝ բույնից հազիվ դուրս եկած կտուցների նման՝ թաշչայնարի թաթերի հետքերը, դրանք ամենախորն են և ամենից ուժեղ են խրված ձյան մեջ, քանի որ թաշչայնարը առողջ է, ծանր կրկնակզակով, նա ուժ է, նա կայծակնային դանակ է այծեղջերուների կո-

կորդին, և որ սայգակին նա հասնի, այդ սայգակը տափաստանի սպիտակ ձյունը կներկի իր ալ արյան շիթով, ինչպես թռչունը՝ տաք կարմիր թևերի թափահարումով, հանուն այն բանի, որ ապրի ուրիշ արյուն, իրենց գորշ մորթու տակինը, քանի որ նրանց արյունն ապրում է ուրիշ արյան հաշվին՝ այդպես է տնօրինել սկիզբն ամենասկզբի, ուրիշ ձև չի լինելու, և ոչ մեկը դատավոր չէ դրան, քանի որ չկան արդարացի և մեղավոր, մեղավոր է միայն նա, ով մի արյուն ստեղծել է մյուսի համար: (Միայն մարդուն է այլ բախտ վիճակվել. հացը հայթայթել աշխատանքով և միս աճեցնել աշխատանքով՝ ինքն իր համար բնաթյուն ստեղծել):

Իսկ այն հետքերը Մոյընկումի առաջին ձյան վրա՝ գայլերի ծաղկաբույլները՝ մեծ և քիչ փոքր, կձգվեին իրար կողքի ցածրավայրի մշուշի մեջ ու կանգ կառնեին թփերի մեջ քամուց պաշտպանված լեռնագոգում. այստեղ գայլերը կսպասեն, չորս կողմը կզննեն, կկանգնեցնեն նրանց, ով պետք է դարանի մեջ ընկնի...

Բայց ահա մոտենում է բաղձալի ժամը. Աքբարան թաքուն մոտ կսողա, ինչքան որ հնարավոր է մոտենալ, թաց ձյանը փռված, սառույց կտրած խոտերին սեղմվելով, շունչը պահած կմոտենա արածող սայգակներին այնքան, որ կտեսնի նրանց աչքերը, դեռ չտագնապած, ապա անսպասելի, ստվերի նման կնետվի նրանց վրա, և կգա գայլի աստեղնային ժամը: Աքբարան այնքան հստակ պատկերացրեց այդ առաջին շուրջկալը՝ դասը մատղաշներին, որ ակամա վրնդրստաց ու հազիվ կարողացավ իրեն տեղում պահել:

Ահ, ինչ որսահալածանք է լինելու տափաստանում ձմեռնամուտին: Սայգակների հոտերը կսկսեն փախչել, սրընթաց, ինչպես հրդեհից, և սպիտակ ձյունը վայրկենապես կխզմզվի սև հողային սպիներով, ու ինքը, Աքբարան, անմիջապես նրանց ետևից, շարժվելով բոլորից առաջ, իսկ իր ետևից գրեթե կրնկակոխ կվազեն իր ձագերը, ջահել գայլերը, բոլոր երեք առաջնեկները, իր սերունդը, որ նախասկզբնական կոչումով աշխարհ են եկել հենց այսպիսի որսի համար, իսկ նրանց ետևից կվազի նրա թաշշայնարը, հայրը՝ հզոր, անզսպելի վաղքի մեջ ,որը մի նպատակ էր միայն հետապնդում՝ սայգակներին այնպես քշի, որ գցի դարանը ու

դրանով որսի դաս տա իր զավակներին։ Այո, դա անզուսպ վազք է լինելու։ Եվ գալիքի ձգտման մեջ այդժամ Աքքարայի համար ոչ այնքան ինքը որսն էր ցանկալի, որքան այն, որ որսն ինչքան կարելի է շուտ տեղի ունենա, երբ իրենք կսլանան տափաստանային այդ հետապնդման մեջ արագաթև թռչունների նման... Դրանում է նրա գայլային կյանքի իմաստը...

Այս էին էզ գայլի երազանքները, բնությունից նրան ներշնչված, ինչ իմանաս, թերևս ի վերուստ առաքված, երազանքներ, որոնց վիճակված էր հետագայում հիշվելու դառնությամբ, սրտի ցավով, ու պետք է երևային երազում հաճախակի, անվերջ... Ու պիտի ոռնա գայլը իր այդ երազանքների համարւ Չէ որ բոլոր երազանքներն են այդպես՝ ծնվում են երևակայության մեջ, հետո, մեծ մասամբ, խորտակվում այն բանի համար, որ համարձակվել են ծիլ տալ առանց արմատների, ինչպես որոշ ծաղիկներ և ծառեր... Չէ որ այդպես են բոլոր երազները, և դրանում է ողբերգական անհրաժեշտությունը նրանց բարին ու չարն իմանալու...

3

Ձմեռը մուտք գործեց Մոլընկում։ Մի անգամ արդեն ձյուն եկել էր, բավականաչափ առատ կիսաանապատի համար. այդ ձյունը կարճ ժամանակով սպիտակեցրեց ամբողջ տափաստանը, որն այդ առավոտ կարծես մի անծայրածիր սպիտակ օվկիանոս լիներ գլորվելու պահին սառած ալիքներով, որտեղ ազատ կարող էր չնկշնկալ քամին, ազատ տարածվել դաշտագլուրը և որտեղ վերջապես հաստատվել էր այնպիսի մի լռություն, ինչպես սիբեզերքում, ինչպես անսահմանության մեջ, քանի որ ավազները հասցրել էին իրենց մեջ խոնավություն ներծծել, իսկ թացացած թաքիրները* փափկել էին, կորցրել իրենց կարծրությունը... Դրանից էլ առաջ տափաստանի գլխին կռնչալով անցան աշնանային

* Թաքիր — կավային նստվածքներով տափարակ։ Տարածված է Միջին Ասիայի անապատներում (Խմբ.)։

*սագերի անկյունաշար երամները, այնքան բարձր ու աղ-
մուկով նրանք Մոյրնկումի տափաստանների վրայով թռան
անցան Հիմալայի կողմ, հյուսիսային ծովերում ու գետերում
ամառն անցկացնելուց հետո թռչելով դեպի Ինդոսի և
Բրահմպուտրայի հիմնական ջրերը, որ եթե տափաստանի
բնակիչները թևեր ունենային, բոլորը կենթարկվեին այդ
կանչին։ Բայց ամեն արարածի համար իր դրախտն է նա-
խասահմանված... Նույնիսկ տափաստանի ուրուրները, որ
թռչում էին այն բարձրության վրա, նրանք էլ սոսկ մի կողմ
էին քաշվում...*

*Իսկ Աքբարայի ձագերը ձմռան մոտ նկատելի մեծացել
էին, դուրս եկել իրենց մանկական միանմանությունից, երեքն
էլ դարձել էին մի տեսակ կոշտուպտոշտ տարիքանցիկներ,
և արդեն ամեն մեկն իր բնավորությամբ։ Հասկանալի է,
մայր գայլը նրանց անուններ դնել չէր կարող. թե աստված
այդպես չի սահմանել, ուրեմն փոխել չես կարող, բայց հո-
տառությամբ, որ մարդը չի կարող, և մյուս կենդանի նշան-
ներով նա հեշտությամբ կարողանում էր զանազանել նրանց
և իր մոտ կանչել իր սերնդից ամեն մեկին առանձին-առան-
ձին։ Այսպես, գայլաձագերից ամենախոշորը Թաշչյաների
նման լայն ճակատ ուներ, ուստի ընդունվում էր որպես
Մեծգլխանի, միջնեկը, նույնպես խոշորամարմին, շատ եր-
կար լծականման ոտքերով, որը ժամանակին կարող էր որ-
սահալած գայլ դառնալ, սա ընդունվում էր որպես Արագա-
վազ, իսկ կապտաչյան, ճիշտ ու ճիշտ Աքբարայի նման, և
աճուկին էլ սպիտակ պիսակով, Աքբարայի վառվռուն սիրե-
լին, սա նրա անբաբռաո գիտակցության մեջ ընդունվում
էր որպես Սիրելի։ Նա կռիվների ու մահացու գոտեմարտերի
առարկա էր լինելու արու գայլերի համար, հենց որ յուր
սիրո պահը գար...*

*Իսկ առաջին ձյունը, որ աննկատելի եկավ նստեց գիշեր-
վա մեջ, այն վաղ առավոտյան անսպասելի ուրախություն
էր բոլորի համար։ Սկզբում գայլաձագերը մի քիչ երկչոտե-
ցին անծանոթ նյութի հոտից ու տեսքից, որ կերպարանա-
փոխել էր ամբողջ տեղանքը որջի շուրջ, իսկ հետո նրանց դուր
եկավ զով հաճույքը ու սկսեցին պտտվել, իրարից առաջ*

անցնելով վազ տալ, թավալվել ձյան մեջ, փնչացնել ու կաղկանձել հաճույքից։ Այսպես սկսվեց այդ ձմեռը առաջնեկների համար, որի վերջում նրանք պետք է բաժանվեին մայրգայլից, հայր-գայլից, միմյանցից, բաժանվեին ամեն մեկն իր նոր կյանքն սկսելու համար։

Իրիկվա դեմ ձյունը դեռ գալիս էր, և հաջորդ առավոտ արևածագից առաջ արդեն տափաստանում լույս էր և օդը թափանցիկ, ինչպես ցերեկը։ Խաղաղություն ու լռություն էր սփռված ամենուր, և ձմեռային ուժեղ քաղցը զգալ տվեց իրենն։ Գայլերի ոհմակը ականջ էր դնում շուրջը. ժամանակն էր որսի դուրս գալու, կեր հայթայթելու։ Աքբարան սայգակների շուրջկալ սկսելու համար սպասում էր գործակիցների մյուս ոհմակներին։ Առայժմ դեռ ոչ մեկը մեջտեղ չէր եկել։ Բոլորը ականջ էին դնում ու սպասում այն ազդանշաններին։ Ահա նստել է Մեծգլխանին անհամբերությունից լարված, դեռ չիմանալով, թե ինչ դժվարություններ ունի որսորդությունը, ահա Արագավազը նույնպես պատրաստ է, և ահա Սիրելին՝ մոր կապույտ աչքերին է նայում նվիրվածությամբ ու համարձակ, իսկ կողքին ետ ու առաջ է անում ընտանիքի հայրը՝ Թաշչայնարը։ Ու բոլորը սպասում էին, թե ինչ կհրամայի Աքբարան։ Բայց նրանց վրա իշխում էր և բարձրագույն արքան՝ Քաղց արքան, մարմնի հագեցման արքան։

Աքբարան տեղից ելավ և շարժվեց մանրավարգ, այլևս սպասել չէր լինի։ Եվ բոլորը հետևեցին նրան։

Ամեն ինչ սկսվում էր մոտավորապես այնպես, ինչպես երազում էր էգ գայլը, երբ ձագերը դեռ փոքր էին։ Ահա այդ ժամանակը եկավ՝ տափաստանում խմբային շուրջկալների ամենալավ ժամանակը։ Կանցնի ևս մի քիչ, և ցրտերի սաստկանալու հետ միայնակ գայլերը կմիանան, գայլային արտելներ կդառնան ու մինչև ձմռան վերջը միասին որսի դուրս կգան։

Մինչ այդ Աքբարան և Թաշչայնարն արդեն տանում էին իրենց առաջնեկներին փորձ ձեռք բերելու, նրանց առաջին մեծ սայգակաորսին։

Գայլերը շարժվում էին տափաստանին հարմարվելով՝ մեկ քայլքով, մեկ մանրավարգ, այն անարատ ձյան վրա

թողնելով գազանահետքերի ծաղիկները՝ ի նշան ուժի և միասնական կամքի, շարժվում էին մեկ կռանալով թփերի միջից, մեկ սահելով սովերի նման։ Ով հիմա ամեն ինչ կախված էր հենց իրենցից ու հաջողությունից...

Աքբարան շտապով վազ տվեց մի բլրակ բարձրացավ, որ շուրջը նայի, և տեղում քարացավ՝ կապույտ աչքերով դննելով հեռաստանները և հոտոտելով քամու բերած բույրերը։ Մեծ տափաստանն արթնանում էր, թեթև մշուշի մեջ, քանի աչքդ կարում էր, երևում էին սայգակների հոտերը. դրանք խոշոր կուտակումներ էին տարեկան մատղաշների հետ, որոնք այդ ժամանակ անջատվում էին ու կազմում նոր հոտեր։ Այդ տարին բեղուն էր սայգակների համար, ուտի և բարենպաստ գայլերի համար։

Էդ գայլը սմբուլով ծածկված այն բլագագաթին մի քիչ երկար մնաց կանգնած. պետք էր հաստատ ընտրություն կատարել՝ քամու ուղղությամբ որոշել, թե ուր, դեպի որ կողմ շարժվեն, որպեսզի անսխալ սկսեն որսը։

Ով հենց այդ պահին հանկարծ տարօրինակ դղրդոց լսվեց չգիտես որ կողմից ու վերևից ինչ-որ դղրդոց տարածվեց տափաստանի վրա, որ ամեհևին նման չէր ամպրոպի ճայթյունի։ Այդ ձայնը բոլորովին անծանոթ էր, և շարունակ սաստկանում ու սաստկանում էր, այնպես որ Թաշչայնարը չդիմացավ և նույնպես վեր թռավ էդ գայլի մոտ, ու երկուսն էլ սկսեցին վախից ետ-ետ գնալ. երկնքում ինչ-որ բան էր կատարվում, անծանոթ մի թռչուն էր հայտնվել ու զարհուրելի դղրդոց էր հանում, մի քիչ թեքված թռչում էր տափաստանի վրայով, այնքան ցած, որ քիչ էր մնում քիթը խրվեր գետնին, իսկ ետևից թռչում էր ևս այդպիսի մի հսկա բան։ Հետո դրանք հեռացան և աղմուկը կամաց-կամաց դադարեց։ Ուղղաթիռներ էին։

Այդպես, ուրեմն, երկու ուղղաթիռ կտրեցին-անցան Մոյընկումի երկինքը, ինչպես ձկներ, որ հետք չեն թողնում ջրի մեջ։ Սակայն ոչ վերևում, ոչ ներքևում ոչինչ չփոխվեց, եթե չհաշվենք այն փաստը, որ դա հետախուզություն էր օդից, որ այդ ժամին բաց տեքստով եթեր էին գնում օդաչուների ռադիոհաղորդագրություններ, թե ինչ էին տեսել և որ տեղերում, որ քառակուսիների մեջ, Մոյընկումում մեր-

ձատար ինչ ուղիներ կան ամենագնացների և կցովի բեռնատարների համար...

Իսկ գայլերը, էհ, գայլն ինչ հասկանար. բոպեական շփոթմունքից հետո նրանք շուտով մոռացան ուղղաթիռների մասին ու նորից սնգսնգալով ճամփա ընկան տափաստանով դեպի սայգակների բնակավայրերը, ամենևին չհասկանալով, քանի որ հասկանալ չէին կարող, որ նրանք բոլորը, տափաստանի բոլոր բնակիչներն արդեն նկատված են, արդեն նշված են քարտեզների վրա համարակալված քառակուսիների մեջ և դատապարտված են հրազենով զանգվածային ոչնչացման, որ նրանց կործանումն արդեն պլանավորված է, համաձայնեցված և արդեն նրանց է մոտենում բազմաթիվ շարժիչներով ու անիվներով...

Նրանք ինչ իմանային, տափաստանի գայլերը, որ իրենց հիմնական որսը՝ սայգակները, պետք են մսամթերման պլանը կատարելու համար, որ «որոշիչ տարվա» վերջին եռամսյակի վերջում մարզի համար ստեղծվել էր շատ ջղային իրավիճակ՝ «հնգամյակը չէին կատարում» և մարզային վարչությունից ճարպիկ մեկն առաջարկեց «օգտագործել» Մոյրնկումի մսի պաշարները, և բացատրությունն այս էր. քանի որ մսի արտադրությունը չէ միայն կարևոր, այլ փաստացի մսահանձնումը, դա միակ ելքն է ժողովրդի ու վերին խստապահանջ օրգանների առջև ամոթով չմնալու համար։ Ինչ իմանային նրանք, տափաստանի գայլերը, որ մարզի կենտրոններից հեռախոսազանգեր էին տեղում. ներկա պահի պահանջն է՝ գետնի տակից էլ լինի պետք է կատարել մսահանձնման պլանը, բավական է ձգձգեք, հնգամյակը եզրափակող տարին է, ի՞նչ պիտի ասենք ժողովրդին, ի՞նչ եղավ պլանը, ո՞ւր է միսը, ո՞ւր է մեր պարտավորությունների կատարումը։

«Պլանն անպայման կկատարվի,— պատասխանում էր մարզային վարչությունը,— մոտակա տասնօրյակում։ Լրացուցիչ պաշարներ կան տեղերում, կնեղենք, կպահանջենք...»։

Իսկ տափաստանի գայլերն այդ ժամանակ, ոչինչ չկասկածելով, կողմնակի ճամփաներով զգուշորեն մոտենում էին

բաղձալի նպատակին, նորից էգ գայլի՝ Աքբարայի առաջ-նորդությամբ, անձայն շարժվելով փափուկ ձյան վրայով, մոտեցել էին գրոհելու վերջին սահմանագծին, ամբուլների բարձր արմատամասերին ու թաքնվել դրանց մեջ, նմանվելով նույնպիսի գորշ դարչնագույն ճիմաթմբերի։ Աքբարայի գայլերն այստեղից ամեն ինչ պարզ տեսնում էին։ Անհաշիվ-անհամար սափաստանային այծեղջերուների հոտը,— բոլորը, ոնց որ ընտրովի, միևնույն գույնի, սպիտակակող, շագանակագույն մեջքով,— արածում էր կարմրանի լայն հովտում, դեռևս վտանգից անտեղյակ, ագահորեն ուտում էր ոսկեհատիկի փետրախոտը թարմ ձյան հետ։ Աքբարան դեռ սպասում էր, պետք էր սպասել, որ հարձակվելուց առաջ ուժ հավաքեն, համարձակություն առնեն ու բոլորով միանգամից դուրս թռչեն թաքստոցից, միանգամից նետվեն գրոհի, իսկ հետո արդեն հետապնդման ընթացքն ինքը կհուշի նոր քայլերը։ Ջահել գայլերն անհամբերությունից ջղաձգորեն պոչերն էին շարժում ու ականջները ցցում, զուսպ Թաշչյանարի արյունն էլ էր եռ գալիս, որ պատրաստ էր ժանիքները խրելու հասած-բռնած զոհի մարմինը, բայց Աքբարան աչքերի կրակը պահած, դեռ առաջ նետվելու նշան չէր անում, սպասում էր առավել ճիշտ պահին՝ միայն այդ դեպքում կարելի էր հաջողության հույս ունենալ. սայգակները մի վայրկյանում այնպիսի արագությամբ են տեղից պոկվում ու վազում, որ անկարող է ուրիշ մի գազան։ Պետք էր բռնել այդ պահը։

Եվ այդ ժամանակ հանկարծ կարծես երկնքից ամպրոպ պայթեց՝ նորից երևացին այն ուղղաթիռները։ Այս անգամ թռչում էին շատ արագ ու միանգամից սպառնալիքից կերպված սկսեցին թռչել՝ սայգակների իրար անցած հոտի վրայով, որ սարսափահար սկսեց փախչել զարհուրելի փորձանքից։ Դա կատարվեց կտրուկ և կայծակնային արագությամբ. հարյուրներով վախեցած այծեղջերուներ, խելակորույս, կորցնելով իրենց երամագլուխներին և կողմնորոշումը, անկանոն խուճապի մատնվեցին, քանի որ այդ անմեղ կենդանիները չէին կարող դիմանալ թռիչքային տեխնիկային։ Ուղղաթիռներին էլ կարծես հենց այդ էր պետք. փախչող հոտը զգետնելով և առաջ անցնելով, նրանք այն խառնեցին կողքին գտնվող նույնքան մեծաքանակ սայգակների հոտի

հետ, և շարունակ նոր ու նոր հանդիպական հոտեր առնելով այդ մոլընկումյան աշխարհակործանման մեջ, շփոթության մեջ էին գյուղում տափաստանային այծեղջերուների խումբ-պահար փախչող զանգվածին, որն ավելի էր սաստկացնում տափաստանի երբեք նման բան չտեսած երկկճղակավորների գլխին պայթած աղետը։ Եվ ոչ միայն երկկճղակավորները, այլև գայլերը, նրանց անբաժան ուղեկիցներն ու հավերժական թշնամիներն ընկան նույն վիճակի մեջ։

Երբ Աքբարայի և նրա ոհմակի աչքի առջև կատարվեց ուղղաթիռների այդ զարհուրելի հարձակումը, գայլերը թաքնվեցին, սարսափից սեղմվեցին ամբուլների կոճղարմատներին, բայց հետո չդիմացան, վազելով սկսեցին փախչել այդ անիծյալ տեղից։ Գայլերին պետք էր չքվել, մի կերպ գլուխները ազատացնել, ապահով մի տեղ ընկնել, սակայն հենց այդ բանին վիճակված չէր իրականանալ։ Դեռ չէին հասցրել մի քիչ հեռանալ, որ գետինը սկսեց ցնցվել ու դղրդալ, ինչպես մրրիկի ժամանակ. այծեղջերուների անհաշիվ-անհամար զանգվածը, որոնց ուղղաթիռները քշում էին տափաստանով իրենց հարկավոր ուղղությամբ, սարսափելի արագությամբ սլանում էր նրանց ետևից։ Գայլերը, չհասցնելով ոչ ճանապարհը շեղել, ոչ էլ թաքնվել, հայտնվեցին ամպի նման վրա հասնող ահռելի գլխաքանակի ամենակործան կենդանի հոսանքի ճանապարհին։ Ու եթե մի վայրկյան թեկուզ կանգ առնեին, անխուսափելիորեն կճզմվեին ու կտորվելին սայգակների ամբակների տակ, այնքան որ սրընթաց էր այդ հոծ, կատարյալ խելակորույս կենդանական տարերքի արագությունը։ Եվ միայն այն պատճառով, որ գայլերն իրենց վազքը չդանդաղեցրին, այլ, ընդհակառակն, սարսափից ավելի արագ սկսեցին վազել, մնացին կենդանի։ Եվ հիմա արդեն իրենք էին գերության մեջ, այդ մեծ փախուստի կենտրոնում, անասելի, աներևակայելի այդ փախուստի. պատկերացրեք միայն, չէ որ գայլերը հիմա փախչում էին իրենց զոհերի հետ, որոնց հենց նոր պատրաստվում էին հոշոտել ու կտոր-կտոր քաշել տանել, իսկ հիմա սայգակների հետ կողք-կողքի փախչում էին ընդհանուր վտանգից,

Հիմա նրանք հավասար էին ճակատագրի անողոք շրջադարձի առջև։ Այդպիսի բան, որ գայլերն ու սայգակները միասին փախչեին, Մոյընկումի տափաստանը տեսած չէր նույնիսկ տափաստանային մեծ հրդեհների ժամանակ։

Մի քանի անգամ Աքբարան փորձեց դուրս գալ վազողների հոսանքից, բայց դա անհնարին էր. նա կարող էր ընկնել հարյուրավոր կողք-կողքի սլացող այծեղջերուների ոտքերի տակ։ Այդ կատաղի կործանարար քաոսրշավի մեջ Աքբարայի գայլերը դեռ իրար հետ էին վազում, և Աքբարան դեռ աչքի պոչով կարողանում էր նրանց տեսնել. ահա նրանք, նրա առաջին ժառանգները, գետնին փռված այծեղջերուների մեջ արագացնում են իրենց վազքը՝ սարսափից աչքները չռած. ահա Մեծգլխանին, ահա Արագավազը, և հազիվ է նրանց ետևից հասնում, ավելի ու ավելի թուլանում է Սիրելին, իսկ նրանց հետ խուճապահար փախչում է և նա՝ Մոյընկումի ահ ու սարսափը, նրա Թաշչայնարը։ Մի՞թե այդ էր երազում կապտաչյա էգ գայլը, իսկ հիմա մեծ որսի փոխարեն նրանք փախչում են սայգակների հոտի հետ, անզոր որևէ բան անելու, քշվելով սայգակների հոսանքի հետ գետն ընկած տաշեղի նման... Առաջինն ընկավ Սիրելին։ Ընկավ հոտի ոտքերի տակ, վնգստոց միայն լսվեց, որն իսկույն խլացավ հազարավոր սմբակների դոփյունից...

Իսկ շուրջկալ արած ուղղաթիռները, գլխաքանակի երկու ծայրերից մոտենալով, իրար հետ հաղորդակցվում էին ռադիոկայանով, համաձայնեցնում իրենց գործողությունները, հետևում էին, որ գլխաքանակը ցաք ու ցրիվ չլինի, որ ստիպված չլինեն նորից տափաստանով մեկ հետապնդելու հոտերը, և ավելի ու ավելի մեծ սարսափ էին տարածում, ստիպելով սայգակներին վազելու ավելի արագ, ավելի, քան վազում էին։ Սաղավարտախոսների մեջ խոխոռում էին շուրջկալողների բորբոքված ձայները. «Քսաներորդ, լսիր, քսաներորդ։ Մի լավ հուպ տուր։ Էլի՛, էլի՛»։ Ուղղաթիռավորները վերևից շատ լավ տեսնում էին, թե ինչպես էր տափաստանով նոր դրած սպիտակ փուխր ձյան վրայով գլորվում խելակորույս սարսափի հոծ սև գետը։ Ով ի պատասխան լսվում էր կայտառ ձայն լսափողում. «Լսում եմ, հո՛ւպ տալ։ Հա-հա-հա, մի տես, սրանց հետ գայլեր էլ են փախչում։ Ի՞նչ եմ ասել։

Քաշվել են գիլերը։ Պրծում չունեք, ախպերս էս էլ ձեզ հա-մար «հապա մի սպասիր» չի»։

Այսպես նրանք քշում էին շուրջկալի մեջ առածներին մինչև հայից գցելը, ինչպես և որոշված էր, և հաշիվը ճիշտ էր արված։

Ու երբ հալածյալ այծեղջերուները լցվեցին մեծ հար-թավայրը, նրանց դիմավորեցին նրանք, ում համար առա-վոտից աշխատում էին ուղղաթիռները։ Այծեղջերուներին սպասում էին որսորդները, ավելի ճիշտ՝ գնդակահարողները։ Բայց թափով ամենագնաց — «ուազիկներով», գնդակահա-րողները սայգակներին քշեցին ավելի հեռու, ընթացքից ավ-տոմատներով կրակելով նրանց վրա դիմահար, առանց նշան բռնելու, խոտի նման հնձելով։ Իսկ նրանց ետևից շարժվեցին բեռնատար կցամեքենաները՝ ավարը իրար ետևից գցում էին թափքերը, մարդիկ ձրի բերք էին հավաքում։ Աժդահա տղեր-քը առանց ժամանակ կորցնելու արագ յուրացրին նոր գործը, դանակով սպանում էին չսպանված սայգակներին, հետա-պնդում էին վիրավորներին և նույնպես վերջացնում, բայց նրանց գլխավոր խնդիրն էր ոտքերից բռնած տանել-բերել ու թափով մեքենայի թափքը նետել արյունաշաղախ մարմին-ները։ Տափաստանն աստվածաներին արյունոտ տուրք էր տալիս այն բանի համար, որ համարձակվել էր մնալ տա-փաստան։ Թափքերում սայգակամարմինների սար էր բարձ-րացել։

Իսկ կոտորածը շարունակվում էր։ Մեքենաներով խըր-վելով հալածված, արդեն հալից ընկած սայգակների մեջ-տեղը, գնդակահարողները աջ ու ձախ ցած էին փռում կեն-դանիներին, նրանց էլ ավելի խուճապի ու հուսահատության մատնելով։ Սարսափն աշխարհակործանման հասավ այնպի-սի չափերի, որ հրացանազարկերից խլացած գայլ Աբբա-բային թվում էր, թե խլացել ու համրացել է համայն աշ-խարհը, որ ամեն տեղ քաոս է տիրել, որ վերևում լուռ հուշ-հրատող արեգակն էլ նրանց հետ հալածվում է այդ կատաղի շուրջկալի մեջ ընկած, նա էլ է այս ու այն կողմ նետվում ու փրկություն որոնում, և որ նույնիսկ ուղղաթիռներն էլ հանկարծ համրացել են ու արդեն անձայն, առանց դղրդոցի, առանց սուլոցի պտտվում են անդունդ գլորվող տափաստանի

գլխին՝ վիթխարի լուռ ուրուրների նման... Եվ ավտոմատա-
վոր զնդակահարողները անձայն կրակում էին կանգնած
տեղից, «ուազիկների» կողերից, և անձայն սլանում էին
մեքենաները, գետնից կտրվելով, անձայն սուրում էին խե-
լակորույս սայգակները ու անձայն փուվում նրանց ծակծկող
գնդակներից, արյուն հեղելով... Եվ այդ աշխարհավերջի
լռության մեջ գայլ Աքբարան տեսավ մարդու դեմքը։ Տեսավ
այնքան մոտ և այնքան սարսափելի, այնքան պարզորոշ, որ
զարհուրեց ու քիչ մնաց ընկներ անիվների տակ։ «Ուազիկը»
սլանում էր նրա հետ կողք-կողքի, շատ մոտ։ Իսկ այն մարդը
նստել էր առջևում, մինչև գոտկատեղը դուրս կախված մե-
քենայից։ Նա քամուց պաշտպանող ապակյա աչքապահպա-
նակներով էր, կապտա-կարմրավուն, քամահար դեմքով, սև
բերանի մոտ պահել էր խոսափողը և տեղից վեր-վեր թըռ-
չելով ինչ-որ բան էր բղավում տափաստանով մեկ, սակայն
բառերը չէին լսվում։ Հավանաբար նա ղեկավարում էր շուրջ-
կալը, և եթե էդ գայլն այդ պահին կարողանար աղմուկ ու
ձայներ լսել և եթե նա հասկանար մարդկային լեզուն, ապա
կլսեր, որ մարդը բղավում էր խոսափողի մեջ. «Կրակեք
ծայրերում եղածների վրա։ Խփեք ծայրերից շարժվողներին։
Մի կրակեք մեջտեղում, ոտքի տակ կտան, գրողը ձեզ տա-
նի»։ Վախենում էր, որ սպանված սայգակների մարմինները
կտրորվեն ետևից վազող գլխաքանակի սմբակների տակ...

Ու հանկարծ խոսափողով մարդը նկատեց, որ կողքից,
մեքենային համարյա կիպ կպած փախչող այծեղջերուների
մեջ վազում է և գայլ, իսկ նրա ետևից ևս մի քանի գայլեր։
Նա ձգվեց, ինչ-որ բան բղավեց խռպոտ ու չարախնդորեն,
խոսափողը նետեց և արագ ձեռքն առավ հրացանը, միա-
ժամանակ նորից լցնելով։ Աքբարան ոչինչ չէր կարող անել՝
շուրջկալի մեջ առնված, նա չէր կարող ոչ դուրս պրծնել,
ոչ էլ կանգ առնել, իսկ մարդը դեռ նշան էր բռնում, և հենց
այդ էլ փրկեց Աքբարային։ Մի բան ուժեղ հարվածեց նրա
ոտքերի տակ, մայր գայլը թավալգլոր եղավ, բայց խոկույն
էլ ոտքի կանգնեց, որպեսզի սմբակների տակ չտրորվի, ու
հաջորդ պահին տեսավ, ինչպես բարձր օդ թռավ վազքի մեջ
խփված Մեծգլխանին, նրա առաջնեկներից ամենամեծը,
ինչպես նա արյունաշաղախ դանդաղ ցած ընկավ, դանդաղ

կողքի շուռ եկավ, ձգվեց թաթերն իրար քսելով, միգուցե ցավի ճիչ արձակելով, միգուցե մահառաջի իր ողբը, բայց Աքբարան ոչինչ չէր լսում, իսկ ապակե աչքապահպանակով մարդը հաղթական թափահարում էր հրացանը գլխավերևում, և հաջորդ պահին արդեն Աքբարան թռավ անցավ Մեծգլխանիի անշնչացած մարմնի վրայով, ու այդ ժամանակ նորից նրա գիտակցության մեջ թափանցեցին իրական աշխարհի հնչյունները՝ ձայներ, շուրջկալի աղմուկը, հրացանազարկերի անլռելի դղրդյունը, ավտոմեքենաների ականջ ծակող շչակները, մարդկանց բղավոց-ճղավոցը, այծեղջերուների հոգևարքի խոխոջոցները, ուղղաթիռների թնդյունը գլխավերևում... Շատ սայգակներ ցած էին ընկնում ու մնում պառկած, սմբակներով դոփդոփում, ու շարժվելու ուժ չունենալով, խեղդամահ էին լինում շնչահեղձությունից և սրտի պայթյունից։ Նրանց տեղնուտեղը մորթում էին մարմիններ հավաքողները՝ մի հարվածով կոկորդը կտրելով, և ոտքերից բռնած թափահարելով, դեռ ջղաձգորեն ցնցվող ու կիսամեռ կենդանիներին նետում էին բեռնատարների թափքերը։ Զարհուրելի էր տեսնել ոտքից գլուխ արյունոտված հագուստով այդ մարդկանց...

Թթե երկնային բարձունքներից աչալուրջ մի աչք նայեր աշխարհին, կտեսներ անպայմանորեն, թե ինչպես կատարվեց շուրջկալը, և ինչ դարձավ այն Մոյընկումի տափաստանի համար, սակայն նա էլ, թերևս, չէր կարող իմանալ, թե ինչ հետևանք պիտի ունենար այդ և թե դեռ ինչեր էին մատրված....

Մոյընկումի շուրջկալն ավարտվեց իրիկնադեմին միայն, երբ բոլորը՝ և՛ հալածվողները և՛ հալածողները, հալից ընկել էին և երբ սկսեց մթնել տափաստանում։ Ենթադրվում էր, որ հաջորդ օրն առավոտից ուղղաթիռները, վառելիքի նոր պաշար վերցնելով, կվերադառնան և շուրջկալը կշարունակվի. ենթադրվում էր, որ դեռ մի երեք-չորս օրվա այդպիսի աշխատանք կա այդ վայրերում, եթե հիշատ է, որ Մոյընկումի տափաստանների արևմտյան, ամենաամազուրկ մասերում, ըստ ուղղաթիռա-օդային նախնական հետազոտության, դեռ շատ չվախեցրած սայգակահոտեր կան, որ

պաշտոնապես անվանվում են երկրամասի չբացահայտված ռեզերվներ։ Իսկ քանի որ գոյություն ունեին չբացահայտված ռեզերվներ, դրանից անխուսափելիորեն բխում էր անհրաժեշտություն, երկրամասի շահերից ելնելով, շուտափույտ կերպով պլանային շրջանառության մեջ դնել վերոհիշյալ ռեզերվները։ Այսպիսին էր մոլընկումյան արշավի զուտ պաշտոնական հիմնավորումը։ Սակայն, ինչպես հայտնի է, ամեն մի պաշտոնական եզրակացության ետևում միշտ լինում են այլևայլ կենսական հանգամանքներ, որոնք որոշում են պատմության ընթացքը։ Իսկ այդ հանգամանքները, վերջին հաշվով, մարդիկ են, իրենց մղումներով ու կրքերով, արատներով և առաքինություններով, իրենց անկանխագուշակելի տարուբերումներով և հակասություններով։ Այս առումով մոլընկումյան ողբերգությունն էլ բացառություն չէր։ Այն գիշեր տափաստանում մարդիկ էին՝ կամա թե ակամա կատարողները այդ չարագործության։

Իսկ էգ գայլ Աքբարան և նրա գայլ Թաշչայնարը, որ փրկվել էին ամբողջ ոհմակից, մթության մեջ անգնդգալով վազում էին տափաստանում, ջանալով որքան կարելի է հեռանալ շուրջկալի վայրից։ Շարժվելը նրանց համար դժվար էր, փորատակին, շեքերում և գրեթե մինչև սրբոսկրը մորթին ցեխից թացացել էր։ Տրորված, քրքրված ոտները վառվում էին այրվածի պես, գետնին ամեն դիպչելը ցավոտ էր։ Ամենից ավելի նրանք ուզում էին վերադառնալ իրենց սովորական որջը, մոռացության տրվել-մոռանալ, թե ինչ փորձանք եկավ նրանց դժբախտ գլխին։

Սակայն այստեղ էլ նրանց բախտը չբանեց։ Արդեն որջի մոտերքը հանկարծ տեսան մարդկանց։ Իրենց ձորակի եզրին, որ խրվում էր ցածրիկ, անիվի բարձրությունից էլ ցածր կարմրանի անտառակը, կանգնած էր վիթխարի բեռնատար ավտոմեքենա։ Մթության մեջ ավտոմեքենայի մոտից մարդկային ձայներ էին լսվում։ Գայլերը մի քիչ կանգնեցին ու լուռ շրջվեցին, որ քաշվեն բաց տափաստան։ Ու չգիտես ինչու հենց այդ պահին մթությունը ճեղքելով, հզոր վառվեցին լապտերները։ Ու թեև նրանց լույսն ուղղված էր հակառակ կողմը, այդքանն էլ բավական եղավ։ Գայլերն սկսեցին փախչել կաղին տալով, մի կերպ ցատկոտելով, և սլացան ուր

աչքը կտրեր։ Աքբարան ավելի ծանր հենվում էր առջևի թաթերին... Որպեսզի հոգնած, հալից ընկած ոտքերը մի քիչ հովանան, Աքբարան ընտրում էր այն տեղերը, ուր պահպանվել էր առավոտյան ձյունը։ Մոսյլ ու վշտալի ձգվում էին ձյան վրա նրա հետքերի տրորված ծաղկանախշերը։ Ջագերը սպանվել էին։ Ետևում մնացել էր այլևս անմատչելի որջը։ Հիմա այնտեղ մարդիկ էին...

Նրանք վեց հոգի էին, վեց հոգի իրենց վարորդ Քյոփայի հետ, դիպվածով իրար միացած մարդիկ, սպանված որսի հավաքողները, որ այդ գիշեր մնացել էին տափաստանում, որպեսզի առավոտյան շուտ գործի անցնեն, այդքան շահավետ դուրս եկած գործին՝ հատը հիսուն կոպեկ։ Թեև արդեն երեք բեռնատարի թափքեր լիքը լցրել էին, բայց մինչև մութն ընկնելը չէին հասցրել հավաքել խփված ու շուրջկալի ժամանակ ճզմված բոլոր սայգակներին։ Լույսը բացվելուն պես հարկավոր էր գտնել մնացած սայգակներին՝ գցել մեքենա՝ ուղարկելու համար, որ ապա տեղափոխում էին կցասայլերը և որսը բրեզենտով ծածկված դուրս տանում Մոյընկումիից։

Այդ երեկո հորիզոնի գլխին շուտ բարձրացավ լուսինը, որ արդեն կատարյալ լիալուսին էր և ամեն տեղից երևում էր խամրած, տեղ-տեղ դեռ ձյունածածկ տափաստանում։ Լուսնի լույսը մերթ լուսավորում, մերթ ստվերում էր տափաստանի փոքրիկ ծառերը, հեղեղատներն ու թմբերը։ Սակայն հսկայական բեռնատար մեքենայի ուրվապատկերը, որ այնքան օտարոտի էր այս անմարդաբնակ վայրերում, դեռ երկար սարսափահար էր անում գայլերին. ամեն ետ նայելիս նրանք պոչերն իրենց էին քաշում ու արագացնում էին վազքը։ Եվ չնայած դրան, նորից ու նորից կանգ էին առնում և ուշադիր, լարված նայում էին, ասես փորձելով հասկանալ, թե ինչ է կատարվում, ի՞նչ էին անում մարդիկ իրենց հին որջի տեղում, ինչո՞ւ էին այնտեղ կանգ առել և արդյոք երկա՞ր պիտի մնար այդտեղ այդ հսկայական, իրենց սարսափեցնող մեքենան։ Դա ի դեպ ասած, ՄԱԶ էր, ռազմական կառուցվածքի ամենագնաց, բրեզենտի ծածկով, այնպիսի հզոր անիվներով, որ թվում էր դեռ մի հարյուր տարի չեն մաշվի։ Մեքենայի թափքում, մի տասնյակ սպանված սայ-

գակների մեջ, որ թողնված էին հաջորդ օրն ուղարկելու համար, պառկած էր մի մարդ, նրա ձեռները կապված էին գերի վերցվածի նման։ Նա զգում էր, ինչպես գնալով ավելի ու ավելի սառչում և պնդանում են կողքին ընկած սայգակների մարմինները։ Բայց, այնուամենայնիվ, դրանց մորթիները տաքացնում էին նրան, այլապես նրա բանը բուրդ էր լինելու։ Թափքի վրա քաշված բրեզենտե վրանի բացվածքից երևում էր լուսինը, նա նայում էր մեծ լուսնին, ասես ոչինչ չտեսնելով, նրա գունատ դեմքին տառապանք կար։

Հիմա նրա բախտը այն մարդկանց ձեռքին էր, որոնց հետ եկել էր այստեղ, ինչպես կարծում էին այդ մարդիկ, իրենց նման փող աշխատելու մոլընկումյան շուրջկալում...

Դժվար է որոշել, թե ինչ է մարդկային կյանքը։ Համենայն դեպս, ամեն տեսակի մարդկային հարաբերությունների, ամեն տեսակի խառնվածքների անվերջանալի զուգակցություններն այնքան բարդ են, որ ոչ մի գերժամանակակից կոմպյուտերային սիստեմ ի վիճակի չէ ամբողջացնելու ամենասովորական մարդկային խառնվածքների մի ընդհանուր կորագիծ... Եվ այս վեցն էլ, ավելի ճիշտ, հինգը, քանի որ ամենագնացի վարորդ Քյոփան, որին կցել էին նրանց որպես վարորդ, կապ չուներ նրանց հետ, և հետո՝ միակ ընտանիքավորն է նրանց մեջ, թեև ըստ էության շատ մոտ էր նրանց հոգով, չէր տարբերվում մյուսներից, մի խոսքով, այս վեցը կարող էին հիանալի օրինակ հանդիսանալ այն բանին, որ լինում են և հակառակ դեպքեր, երբ կարելի է յոլա գնալ և առանց կոմպյուտերային ամբողջացման, ու նաև այն բանին, որ անխմանալի են ճանապարհներն աստծո, երբ խոսքը վերաբերում է մարդկանց թեկուզ ամենափոքրիկ մի կոլեկտիվի։ Կնշանակի այդպես կամեցել էր Տերը, որ նրանք բոլորը զարմանալիորեն համարժեք մարդիկ լինեին։ Համենայն դեպս, երբ նոր մեկնում էին Մոյընկում...

Նախ և առաջ նրանք բոլորն էլ անտուն-անտեր, ընտանիք չունեցող մարդիկ էին, բացի, իհարկե, Քյոփայից, երեքի կանայք թողել հեռացել էին, բոլորն էլ այս կամ այն չափով անհաջողակ էին և, հետևաբար, մեծ մասամբ գազազած աշխարհի դեմ։ Բացառություն կարող էր կազմել թերևս

նրանցից ամենաջահելը՝ տարօրինակ, Հին կտակարանից եկող Աբդիա անունով,— այդպիսին հիշատակվում է Աստվածաշնչում, Թագավորաց երրորդ գրքում,— Պսկովի մոտերքից ինչ-որ մի սարկավագի որդի, որ հոր մահից հետո մտել էր հոգևոր սեմինարիա, որպես եկեղեցական սպասավորի խոստումնալից ժառանգ, և երկու տարի հետո հեռացվել էր այնտեղից հերետիկոսության համար։ Եվ հիմա նա պառկած էր ՄԱՋ-ի թափքում ձեռները կապված, սպասելով հատուցման, ըստ հենց իր՝ Օբերի ձևակերպման, նավում խռովությունն բարձրացնելու փորձի համար։

Նրանք բոլորը, բացառությամբ Աբդիայի, թունդ, կամ, ինչպես իրենք էին իրենց հորջորջում, պրոֆեսիոնալ հարբեցողներ էին։ Դարձյալ, հազիվ թե նրանց թվին պատկաներ Քյոփան, ինչքան չլինի ստիպված էր վարորդական իրավունքը պահել, թե չէ կինն աչքերը կհաներ, սակայն Մոյընկումում այն գիշեր նա պինդ կոնծել էր, մյուսներից ոչ պակաս, և այդ իմաստով կասկածի տակ էր դարձյալ Աբդիա-Ավդյուխան. սա ինչից էր վախենում, թափառականը, բայց արի տես որ չէ, հակառակվեց, չխմեց, ու դրանով է՛լ ավելի սաստկացրեց Օբերի ատելությունը։

Օբերը՝ կարճ լինելու համար նա հրամայել էր այդպես կոչել իրեն իր ենթականերին, խփված մարմինները հավաքողներին, նկատի ունենալով հավանաբար, որ այդ բառը նշանակում է ավազ, իսկ նա իսկապես էլ մինչև աստիճանազրկումը ավազ էր կարգավարժական գումարտակում։ Երբ նրան աստիճանազրկեցին, բարյացակամները վշտանում էին, թե իբր նա տուժեց ծառայական ջանադրության համար, այլպես էր համարում և նա ինքը, հոգու մեջ խորապես վիրավորված պետերի անարդարությունից, սակայն բանակից իր վտարման իսկական պատճառների մասին գերադասում էր չխոսել։ Եվ պետք էլ չէր, անցած-գնացած բան էր։ Իսկ իրականում Օբերի ազգանունը կանգալով էր, ի սկզբանե, հավանաբար, Ղանդալով, բայց դա ոչ մեկի պետքը չէր. Օբեր էր նա, և հենց օբեր էլ էր բառիս կատարյալ իմաստով։

Երկրորդ դեմքն այս խունտայում,— իսկ խունտա էին կոչել նրանք իրենց ջոկատը բոլորի համաձայնությամբ,—

միակ մարդը որ թույլ առարկեց, այդ անվանը Համլետ-Գալկինն էր, մարզային դրամատիկական թատրոնի նախկին դերասան. «Էհ, գրողը տանի այդ խունտան, ես, տղերք, խունտա չեմ սիրում։ Ախր մենք մեկնում ենք սաֆարայի, ուրեմն թող սաֆարա լինենք», բայց նրա առաջարկին ոչ ոք չմիացավ, թերևս քիչ հասկանալի «սաֆարան» տուժում էր ակտիվ «խունտայի» համեմատությամբ,— այսպես, ուրեմն, խունտայի երկրորդ դեմքը մի ոմն Միշաշ էր, իսկ եթե լրիվ ասենք՝ Միշկա-Շաբաշնիկ, մի տիպ, որ ցուլի կատաղություն ուներ, ու թե բանը դրան հասներ, կարող էր հենց Օքեր հախից էլ գալ։ Միշաշի սովորությունը ամեն առիթով «ըղվկ» ասելու, նրա համար ոնց որ շունչ քաշել լիներ։ Աբդիային կապելու ու մեքենայի թափքը գցելու միտքը հենց նա տվեց, որը և անմիջապես կատարեց խունտան։

Այս խունտայում ամենահամեստ տեղը գրավում էր դերասան Համլետ-Գալկինը, հարբեցող, ժամանակից շուտ բեմից հեռացած և պատահական վաստակներով մի կերպ գլուխը պահող մեկը, իսկ հիմա ահա այսպիսի օգուտով գործ էր հանդիպել. ոտներից բռնած մեքենայի թափքը գցի ինչ-որ այծեղջերուների, թե սայգակների, հաշիվը մեկ է, ու ստացիր այնքան, ինչքան մի ամսում էլ չես վաստակի, ու գեռ Օքերի էլ պարգևատրությունը՝ մի արկղ օղի բոլորի համար, թեև դա գործի ընդհանուր գումարի հաշվից էր։ Եվ, վերջապես, նրանց մեջ ամենազիջողն ու անչարը,— տեղացի մի տղա Մոյընկումի շրջակայքից,— Ուզյուկբայը կամ պարզապես Բնիկը։ Բնիկ-Ուզյուկբայը բացարձակապես զուրկ էր ինքնասիրությունից, մի բան, որ անգին էր նրա մեջ, ինչ էլ ասեիր համաձայն էր, ու մի շիշ օղու համար պատրաստ էր թեկուզ Հյուսիսային բևեռ գնալ։ Բնիկ-Ուզյուկբայի կարճ պատմությունը այսպիսին էր։ Նախ տրակտորիստ էր եղել, հետո սկսել էր անընդհատ խմել, գիշերվա կեսին տրակ...րը թողել էր ճամփի միջին, անցնող մեքենան խրվել էր տրակտորի մեջ, մարդ էր մահացել։ Ուզյուկբայը երկու տարի նստել էր, կինը երեխաներին առած հեռացել էր նրանից, և նա քաղաք էր ընկել որպես չհաշվառված աշխատուժ, բեռնակիր էր աշխատում մթերային խանութում, հարբում տների շքամուտքերում ,որտեղ էլ նրան գտել էր Օքերը, և

Ուղյուկբայը հետևել էր նրան առանց մտածելու, ասենք մտածելու բան էլ չուներ... Օբեր Կանդալովը, ժխտել չէր կարելի, իսկապես սոցիալ-կողմնորոշվող հոտառությամբ էր օժտված...

Ահա այսպես միացել էին նրանք Օբեր-Կանդալովի գըլխավորությամբ, և այսպես էլ շուրջկալի համար հայտնվել էին Մոյընկումի տափաստանում...

Ու եթե խոսելու լիներնք ճակատագրի և ճակատագրերի մասին, իրադարձությունները կանխորոշող կենցաղային այլևայլ հանգամանքների մասին, ապա, վկա է Աստված, Օբեր-Կանդալովը ոչ մի գործ չէր ունենա սեմինարիայում սովորող Աբդիայի հետ, եթե վերջինս վիճակվեր ուսումն ավարտել և ձեռնադրվել համապատասխան աստիճանի։ Ի դեպ, Աբդիայի նախկին ուսումնակիցները սեմինարիայում, մի ժամանակ նույնպիսի թեթևամիտ, ինչպես բոլոր աշակերտները, մի անգամ իրենց կյանքի ուղին ընտրելով, շատ ավելի կայուն դտնվեցին, իսկ ամենակարևորը՝ ավելի խոհեմ, քան Աբդիան, հանգուցյալ սարկավագի որդին, և հոգևոր կրթությունն ավարտելով, արդեն հաջողությամբ առաջանում էին եկեղեցական կարիերայի սանդուղքով։ Եթե Աբդիան էլ նրանց թվում լիներ,— իսկ սկզբում նա աստվածաբան հայրերի սիրելի ամենաշնորհալի պատանիներից էր,— Օբեր-Կանդալովն ու Աբդիան հազիվ թե առիթ ունենային հանդիպելու, թեկուզ հենց նրա համար, որ Օբեր-Կանդալովը տերտերներին իսկապես համարում էր ժամանակի թյուրիմացություն և կյանքում երբեք ոտք չէր դրել եկեղեցի, նույնիսկ հետաքրքրության համար...

Եթե, թե որ... Բայց ով կարող էր իմանալ, թե այդպիսի բան կպատահի։ Եթե առաջուց իմացվեր... Բայց ով է ումից պահանջում անկետա լրացնել, եթե վերցնում է մի անգամվա գործի՝ միասին մի քիչ փող վաստակելու։ Դա չէ որ նույնն է, թե կոլեկտիվիզ հետ մեկնես կարտոֆիլ հավաքելու։ Այն տարբերությամբ միայն, որ պալարների փոխարեն պետք է հավաքեիր շուրջկալում սպանված կենդանիներին... Օբեր-Կանդալովը եթե իմանար, որ կայարանում հանդիպած թափառական Աբդիան ցնդած է, աննորմալ, հիմա Մոյընկումի

ավազների մեջ ստիպված չէր լինի գլուխ կոտրելու, թե ինչ անի, առանց իրեն վնասելու ինչպես ազատվի այդ վայրենի Աբգիայից, որը քիչ էր մնում խափաներ այն, ինչ ինքը նախապատրաստել էր մեծ ջանքերով, ինչի միջոցով հույս ուներ մաքրելու, վերականգնելու իր անցյալը։ Ով կարող էր մտածել, որ այսպիսի տարօրինակ, անհավատալի ու նաև հիմար ձևով այդ ամենն իրար կխառնվի։ Այդ մտքերից Օբեր-Կանդալովը սարսափելի ուզում էր խմել, խմել, ինչպես ասում են, այնպես, որ աչքերի առաջը մթնի, իսկ նա դա շատ լավ էր կարողանում՝ կես բաժակ միանգամից, հետո էլի ու էլի կեսական բաժակ, ուղեղը մթնեցնի, իրեն գրգռի այնպես, որ այլևս ոչ մի արգելք չմնա, որպեսզի գիտակցությունը լրիվ դուրս մղվի... և այն ժամանակ դրա գլխին տալ... Բայց դրանից էլ էր վախենում, որովհետև գիտեր, թե որքան ծանր է լինելու հետո...

Եվ որտեղից լույս ընկավ այդ Աբգիան, ինչ փորձանք էր նրա գլխին։ Ու գարձյալ եթե խոսելու լինենք ճակատագրի ու ճակատագրերի մասին, կենցաղային այլևայլ հանգամանքների մասին, որ կանխորոշում են այլ իրադարձությունների պատճառները, ապա այդ ամենը սկսվել էր շատ ավելի վաղ և այստեղից հեռու...

Հոգևոր սեմինարիայից վտարված որպես հերետիկոսնորամտածող Աբգիան այն ժամանակ աշխատում էր մարզի կոմերիտական թերթում, արտահաստիքային աշխատակից էր։ Թերթի խմբագրությունը շահագրգռված էր սեմինարիայից նոր հեռացած երիտասարդի աշխատանքով, որը բավական լավ գրում էր ընթերցողների սիրած թեմաներով։ Խկեղեցու կողմից բանադրանքի ենթարկված, նա շահեկան էր ակնառու հակակրոնական պրոպագանդայի համար։ Չկայացած սեմինարիստին էլ, իր հերթին, հետաքրքրում էր իրեն սրտամոտ բարոյա-բարոյախոսական թեմաներով հանդես գալու հնարավորությունը։ Այդ առումով, թերթի էջերում երևացող նրա փոքր-ինչ անսովոր դատողություններն անկասկած գրավում էին ընթերցողներին, և ոչ միայն երիտասարդ, հատկապես մարզի մամուլը հեղեղած ձանձրալի-խրատական կոչերի և սոցիալական արգելքների ֆոնի վրա։ Եվ առայժմ կարծես փոխադարձ շահերը պահպանվում էին,

Սակայն քչերը գիտեին, ավելի շուտ մի հոգուց բացի ոչ ոք չգիտեր, թե ինչ նպատակներ ուներ իր հոգում այդ չահել ու նորելուկ նորամտածողը։ Աբգիան Կալիստրատովը հույս ուներ ժամանակի ընթացքում, իր լրագրողական անունը հաստատուն դարձնելուց հետո, գտնել ընդունելի մի ձև, մի գաղափարական բնագիծ ,որը նրան հնարավորություն տար արտահայտելու խիստ հրատապ և իր կարծիքով կենսակա-նորեն անհրաժեշտ նորամտածողական պատկերացումները Աստծո և մարդու մասին ժամանակակից գարաշրջանում՝ ի հակադրություն արխաիկ դավանաբանության քարացած կանխադրույթների։ Մտահղացման ծիծաղելիությունը կա-յանում էր նրանում, որ նրա առջև կանգնած էին երկու բա-ցարձակապես անմատչելի և անխորտակելի ամրոցներ, որոնց ուժը խարսխված էր նրանց փոխադարձ անսասանու-թյան և բացարձակ փոխանհանդուրժողականության վրա. մի կողմից ժամանակին ոչ ենթակա, հազարամյա անփո-փոխ զատկական ըմբռնումները, որ կատաղի պահպանում էին հավատի դավանանքի մաքրությունը ամեն մի, ինչպի-սին էլ լինի, թեկուզ բարեմիտ նորամտածողությունից, մյուս կողմից՝ կրոնը որպես այդպիսին հիմնովին ժխտող գիտա-կան աթեիզմի հզոր տրամաբանությունը։ Իսկ նա, տարա-բախտը, դրանց մեջ, ոնց որ երկանաքարերի մեջ լիներ։ Եվ սակայն, նրա մեջ իր կրակն էր վառվում։ Փոթորկված սե-փական՝ «ժամանակի ընթացքում մարդկության պատմական զարգացման հետ Աստծու կատեգորիայի զարգացման» գա-ղափարներով, հերետիկոս Աբգիա Կալիստրատովը հույս ուներ, որ վաղ թե ուշ ճակատագիրը նրան հնարավորություն կընձեռնի բացելու մարդկանց իր եզրահանգումների էությու-նը, քանզի, կարծում էր նա, ամեն ինչ տանում է այն բանին, որ մարդիկ իրենք էլ կուզենան հասկանալ, իմանալ Աստծու հետ իրենց փոխհարաբերությունները հետինդուստրիալ դա-րաշրջանում, երբ մարդու հզորությունը հասնի ամենածայ-րագույն փուլին։ Աբգիայի եզրահանգումները առայժմ դեռ հեղհեղուկ, վիճելի բնույթ էին կրում, սակայն մտքի նույ-նիսկ այդքան ազատություն պաշտոնական աստվածաբանու-թյունը չներեց նրան, և երբ նա հրաժարվեց խոստովանելու

նորամտածողության մոլորությունը, թեմի աստիճանավորները նրան վտարեցին հոգևոր սեմինարիայից։

Աբգիա Կալիստրատովը գունատ, լայն ճակատ ուներ, իր տրնգի չատ մարդկանց նման պահում էր մինչև ուսերը հասնող երկար մազեր և թավ դարչնագույն փոքրիկ մորուք, որ, ի դեպ, նրան այնքան էլ չէր գեղեցկացնում, սակայն դեմքին բարեգութ արտահայտություն էր տալիս։ Մոխրագույն, դուրս պրծած աչքերը տենդագին փայլում էին, դրանց մեջ երևում էր հոգու ու մտքի անհանգստությունը, հատուկ նրա խառնվածքին, որը նրան մեծ ուրախություն էր պարգևում իր շատ ու շատ իմացությունների համար, ու նաև շատ ծանր տառապանքներ բերում շրջապատի մարդկանցից, որոնց միայն բարին էր նա ուզում...

Հագնում էր Աբգիան մեծ մասամբ վանդականախշ վերնաշապիկ, սվիտեր և չինս, ցրտին վրան էր գցում թեթև մի վերարկու և գնում հին, մորթե գլխարկը, հորից մնացած։ Այդպես նա հայտնվեց Մոյրնկումի տափաստանում...

Եվ այն, որ նա այդ ժամին կապկպված ընկած էր մեքենայի թափքում, զանազան դառն մտքեր էր արթնացնում նրա մեջ։ Սակայն այս անգամ ամենից սուր նա իր միայնությունն էր զգում։ Հիշեց արևելյան մի բանաստեղծի կիսամոռացված իմաստալից խոսքը. «Եվ հազարավոր մարդկանց մեջ ես դու միայնակ, և ինքդ քեզ հետ մենակ մնացած՝ միայնակ ես»։ Ու ավելի ցավով, տառապանքով էր նա մտածում այն մեկի մասին, նրա, որ որոշ ժամանակից ի վեր դարձել էր իր համար ամենամտերիմ էակն այս աշխարհում, որ մշտապես նրա հետ էր իր մտքերում, ինչպես երրորդությունն իր սեփական էության, և այդ պահին նա չէր կարող նրան անջատել իրենից, չէր կարող նրան չուղղել իր զգացումներն ու տառապանքը, և եթե հիրավի գոյություն ունի հեռազգացություն, որպես մոտ խառնվածքների գերզգայուն հաղորդակցություն՝ ծայրահեղ լարված հոգեվիճակներում, ապա այդ գիշեր անպայման նրա հոգին անորոշ մի տառապանք պիտի զգար, պիտի ունենար աղետի կանխազգացում։

Հիմա նա վերջապես հասկացավ նույն այն բանաստեղծի տարիմաստ բառերի ճշմարտությունը, որոնց վրա առաջ

ծիծաղում էր, չէր հավատում, թե կարելի է պնդել՝ «Թող սեր չիմանա նա, ով կարող է իսկապես սիրել...» Որպիսի անհեթեթություն։ Իսկ հիմա լուռ լալիս էր՝ մտածելով նրա մասին, հասկանալով, որ եթե չլիներ նրա գոյությունը, եթե չսիրեր նրան այդքան խորն ու այդքան սաստիկ, չէր լինի այս չդադարող ցավը, այս կարոտը, այս անհաղթահարելի, խելահեղ ու տառապագին ցանկությունը անհապաղ, իսկույնևեթ դուրս պրծնելու, ազատվելու ու վազ տալու նրա մոտ գիշերվա կեսին տափաստանով դեպի այն անդրմայրցամաքային երկաթուղու երկայնության մեջ կորսված Ջալփաղ-Սազ կայարանը, որպեսզի գոնե կես ժամով հայտնվի, ինչպես այն ժամանակ, նրա դռան մոտ, մեծ անապատների սահմանին ընկած այն մերձհիվանդանոցային տնակում, ուր ապրում է նա... Սակայն ի վիճակի չլինելով ազատվելու, Աբդիան անիծում էր իր, թերևս, ավելորդ նվիրվածությունը նրան. չէ որ հանուն նրա վերադարձավ, երկրորդ անգամ եկավ այս ասիական երկրամաս, հայտնվեց Մոլընկումում, որտեղ և ընկած էր հիմա կապկպված, վիրավորված և նվաստացված։ Սակայն որքան անիրականանալի էր նրան տեսնելու ցանկությունը, այնքան ավելի սուր էին նրա զգացմունքները, այնքան ավելի տառապալից էր միայնության գիտակցությունը, և այդ զգացումները միաժամանակ նրա մեջ արթնացնում էին Աստծու հետ միաձուլվելու ողջ բարեգթությունը, քանզի հիմա նա հասկացավ, որ Աստված, ի հայտ գալով սիրո միջոցով, դրանով իսկ մարդուն պարգևում է կեցության ամենաբարձրագույն երջանկությունը, և շռայլությունն Աստծու այստեղ անսահման է, ինչպես անսահման է ժամանակի ընթացքը, իսկ սիրո դեմն անկրկնելի է ամեն մի առանձին դեպքում և ամեն առանձին մարդու համար.

— Փառք Ամենաբարձրյալին,— շշնջաց նա, նայելով լուսնին, և մտածեց. «Եթե նա գիտենար, թե որքան մեծ է Աստծու ողորմածությունը, երբ այն սեր է սերմանում մարդու սրտում...»։

Եվ այդ պահին մեքենայի մոտ քայլեր լսվեցին, ու ինչոր մեկը ֆսֆսացնելով ու բղկալով բարձրացավ թափթփ։ Դա Միշաշն էր, իսկ նրա հետևից երևաց և Քյոփայի գլուխը։

Երևում է, նրանք արդեն հասցրել էին կոնծել՝ քթին տվեց օդու սուր հոտը։

— Դու ի՞նչ ես, բըղկ, պառկել։ Հապա մի վեր կաց, գարշելի տերտեր, Օբերը կանչում է քեզ գորգի, պիտի վերադաստիարակի,— ասում էր Միշաշը, ինչպես արջը որջում՝ ոտները հազիվ շարժելով մեքենայի մեջ լցված սայգակների մարմինների միջով։

Ջյոփան հռհռալով ավելացրեց իր հերթին.

— Գորգ չի լինելու, սեփական քամակիդ, մոլընկումյան հողին պիտի նստես։

— Գորգն էր սրան պակաս,— բամբաճայն ասաց Միշաշը բղկալով,— էդ տեսակ բանի համար, բըղկ, դրան Սիբիր էր պետք։ Ուզում էր մեզ խելքահան անել, երևի մըտքին կար մեզ ճգնավոր դարձներ, բայց դե էն տեսակներին չէր, բըղկ, դեմ առել։

4

Աբգիա Կալիստրատովն այդ ժամանակաընթացքում մի քանի նամակ էր ուղարկել Ինգա Ֆյոդորովնային Ջալփաղ-Սազ կայարան, և Ինգան պատասխանել էր նրան ց՝պահանջ քաղաքային փոստի հասցեով, քանի որ այդ ժամանակ արգեն նա մշտական հասցե չուներ։ Մորից նա զրկվել էր դեռ մանուկ հասակում, իսկ հայրը, սարկավագ Կալիստրատովը, այրիանալով, իր ողջ բարուքյունն ու բավական կարգացածուքյունը՝ և՛ աստվածաբանական, և աշխարհիկ, ծախսում էր որդու և դստեր վրա, որը Աբգիայից երեք տարով մեծ էր։ Արգիայի քույրը՝ Վառվառան, մեկնեց Լենինգրադ սովորելու, ուզում էր ընդունվել մանկավարժական ինստիտուտ, բայց նրան այդ ինստիտուտ չընդունեցին որպես պաշտամունքի սպասավորի դստեր, քանի որ դա նրա համար ճամփա պիտի բացեր դեպի դպրոցական ուսուցումը, և այն ժամանակ նա մրցակցուքյամբ անցավ և ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ ու այդպես էլ հիմնավորվեց ու մնաց Լենինգրադում, ամուսնացավ, ընտանիք կազմեց և հիմա աշխատում էր որպես գծագրուհի ինչ-որ նախագծային ինստիտուտում։ Իսկ Աբգիայի ճամփան գնաց հոգևորական

գծով, այդ էր ուզում նա ինքը և շատ էր ուզում հայրը, հատկապես աղջկա՝ Վառվառայի մանկավարժական ինստիտուտ չընդունվելու պատմությունից հետո։ Երբ Աբգիան սկսեց սովորել սեմինարիայում, սարկավագ Կալիստրատովը մանէր գալիս երջանիկ և հպարտ, նա ուրախանում էր, որ իր երազանքը կատարվել է, որ զուր չէին անցել իր ջանքերն ու նեղշնչանքները, որ Տերը անսացել էր իր աղաչանքներին։ Շուտով, սակայն, նա մահացավ, ու թերևս դա ողորմածությունն էր ճակատագրի, քանի որ նա չէր դիմանա իր որդի Աբգիայի հետ կատարված հերետիկոսական վերափոխությանը, որը տարվել էր նորամտածողությամբ հավերժական, ինչպես աշխարհը, աստվածաբանության ասպարեզում՝ ուսմունքի, որ տրված էր մեկընդմիշտ անվախճանությամբ ու մշտականությամբ աստվածային ուժի։

Իսկ երբ Աբգիա Կալիստրատովն սկսեց աշխատակցել մարզի երիտասարդական թերթին, այն փոքրիկ բնակարանը, ուր սարկավագ Կալիստրատովն իր ընտանիքով ապրում էր երկար տարիներ, ետ պահանջվեց եկեղեցու նոր սպասավորի համար, նախկին սեմինարիստ Աբգիա Կալիստրատովին առաջարկեցին ազատել այն որպես եկեղեցու հետ ոչ մի կապ չունեցող անձնավորության։

Աբգիան այդ առիթով կանչեց քրոջը, Վառվառային, որպեսզի սա իր հայեցողությամբ լեհինգրադ տեղափոխի ծնողներից մնացած իրեն անհրաժեշտ իրերը, հիմնականում հնագույն սրբապատկերները և նկարները, որպես հիշատակ և ժառանգություն։ Աբգիան իր համար պահեց հոր գրքերը։ Դա եղբոր և քրոջ վերջին հանդիպումն էր՝ նրանցից ամեն մեկն իր ճակատագիրն ուներ։ Այլևս նրանք չհանդիպեցին, նրանց հարաբերությունները միանգամայն նորմալ էին, կյանքի ճանապարհները, սակայն, տարբեր։ Այդ ժամանակից Աբգիան ապրում էր մասնավոր բնակարաններում, սկզբում առանձին սենյակներում, հետո անկյուններում, քանի որ առանձին սենյակ վարձելու միջոցներ չուներ։ Դրա համար էլ նամակները գրվում էին ց՚պահանջ։

Եվ հենց այդ ժամանակ էլ որոշվեց Աբգիա Կալիստրատովի առաջին ուղևորությունը Միջին Ասիա՝ մարզի կոմերիտական թերթի կողմից։ Ուղևորության համար անմիջական

ահիթ հանգիստացավ Աբգիայի մտահղացումը՝ ուսումնասիրելու և նկարագրելու, թե ինչ ուղիներով և ինչ կերպ է երկրի եվրոպական շրջանների երիտասարդության մեջ թափանցում թմրամիջոց անաշան, մի բույս, որ աճում է Միջին Ասիայում, Չույի և Մերձմոյընկումյան տափաստաններում։ Անաշան՝ նշանավոր մարիխուանայի հարազատ քույրը, հարավային վայրի կանեփի հատուկ մի տեսակ է, որ իր տերևներում և հատկապես ծաղկաբույլերում ու ծաղկափոշու մեջ պարունակում է ուժեղ ազդող թմրեցուցիչ նյութեր, որոնք ծխելու ժամանակ առաջ են բերում էյֆորիա, երանության պատրանք, իսկ չափն ավելացնելու դեպքում՝ ճնշվածության փուլ, որից հետո և՝ ագրեսիվություն, իրեն տիրապետել չկարողանալու մի վիճակ, որ վտանգավոր է շրջապատի համար։

Այդ ուղևորության պատմությունը Աբգիա Կալիստրատովը մանրամասն նկարագրել էր իր ճամփորդական տակնարկներում, նկարագրել էր նաև, թե ինչպես հանկարծ տափաստանում հանդիպել էր գայլերի ընտանիքին, նկարագրել էր իր ապրածը՝ ցավով ու տագնապով, որպես ականատես, որպես քաղաքացի, անհանգստացած թմրեցուցիչ թունավոր դեղանյութի տարածումից։ Սակայն ակնարկների հրապարակումը, որոնք սկզբում խմբագրությունում ընդունեցին «կեցցե»-ներով, կասեցվեց, իսկ հետո ընդհանրապես կանգնեցվեց։

Իր այդ բոլոր անհաջողությունների և ապրումների մասին էլ Աբգիա Կալիստրատովը գրում էր Ինգա Ֆյոդորովնային, որին համարում էր ճակատագրի պարգև իր համար, իր ամենամտերիմ մարդը։ Չէ որ նա, ինչպես գետ, կենդանացնում ու վերակենդանացնում էր նրան ամենօրյա կեցության համար։ Շուտով նա հասկացավ, որ Ինգա Ֆյոդորովնայի հետ նամակագրությունը իր կյանքի գլխավոր իրադարձությունն է ու, թերևս, հենց այն կոչումը, որ պետք է արդարացնի յուր գոյությունը։

Նամակն ուղարկելով նրան, հետո սկսում էր ապրել դրանով, նորից վերականգնելով հիշողության մեջ գրածը և մի տեսակ մեկնաբանելով ինքն իրեն։ Դա տարօրինակ մի

ձև էր հեռվից հաղորդակցվելու՝ նրա տառապող հոգու անդադար ճառագումը ժամանակի և տարածության մեջ։

«... Իսկ հետո օրեր շարունակ մտածում էի, արդյոք տհաճություն չե՞ն պատճառել ձեզ իմ նամակի առաջին բառերը. «Հանուն Հոր, և Որդու, և Սուրբ Հոգու»։ Ես դրանք բերեցի, քանի որ դաստիարակված եմ այդ ավանդություններով, դրանք միշտ ինձ համար կամերտոնի դեր են կատարում որևէ լուրջ խոսակցությունից առաջ, բերելով հոգիս աղոթելու վիճակի, չնայած և ավելորդ անգամ եմ Ձեզ հիշեցնում իմ ծագումը հոգևորական դասից և իմ սեմինարիական անցյալը։ Իմ վերաբերմունքը Ձեզ թույլ չի տալիս ինձ լռության մատնելու որևէ հանգամանք, որ վերաբերում է ինձ։

Ու նաև մտածում էի այն մասին, որ գրում եմ «Դուք», երբ իրարից բաժանվելիս արդեն իրար «դու» էինք ասում։ Ներեցեք, բայց ինչ-որ բան է կատարվել հետս, թեև այնքան քիչ ժամանակ է անցել, ինչ հեռացել եմ Ձեզնից։ Ասենք, բոլոր խեղճերն էլ աշխատում են իրենց համար որևէ անհեթեթ արդարացում գտնել։ Բայց սա ի միջի այլոց։ Թույլ տվեք, այնուամենայնիվ, հեռավորությունից դիմել Ձեզ «Դուք»-ով։ Այսպես ես ինձ անհամեմատ ավելի հարմար եմ զգում։ Իսկ եթե մեզ վիճակվի հանդիպել, որի մասին են իմ թաքուն և դրանով իսկ առանձնապես նվիրական երազանքները (այդ երազանքներն իմ զավակներն են, ես նրանց պահպանում եմ, սնուցում և չեմ կարող առանց նրանց, պատկերացնում եմ, թե որպիսի երջանկություն է զավակներին սիրելը, եթե սիրես նրանց, ինչպես երազանք), իսկ ծնվել են այդ երազանքները որպես հոգու ձգտում աստվածային կատարելության, հավերժորեն ձգող և անսահման, և ահա այդ երազանքների շնորհիվ, ինքս էլ այդ չհասկանալով, ես դիմակայում եմ չգոյության սպառնալիքին, թերևս նրա համար ,որ սերը մահվան հակադրությունն է, հենց դրա համար էլ այն հանդիսանում է կարևոր պահը կյանքի՝ ծնընդյան խորհրդից հետո, այս ամենը ես կրկնում եմ որպես թախանձանք, որպեսզի մեզ վիճակվի նորից հանդիպել և խոստանում եմ հանդիպելուց հետո Ձեզ չնեղել՝ խոստանում եմ դիմել «դու»-ով։ Իսկ առայժմ այնքան բան կա ասելու...

Ինգա Ֆյոդորովնա, հուսով եմ Դուք հիշում եք, որ պայմանավորվել էինք հենց թերթում հրապարակվեն իմ նյութերը, հանուն որոնց ես եկել էի Ձեր վայրերը, անմիջապես պիտի ուղարկեմ Ձեզ օդային փոստով։ Ցավոք, վրստահ չեմ, թե իմ ակնարկները պատանի-դեռահասների մասին, անաշայի եռանից ընկած այդ բոլոր ջահելների և այն ամենի մասին, ինչ կապված է մեր օրերի այս տխուր իրողության հետ, կարող են լույս տեսնել մոտակա ժամանակներում։ Ես ասում եմ մեր օրերի, որովհետև անհիշելի ժամանակներից ի վեր անաշան աճում էր այս հողերում որպես մոլախոտ, իսկ մի տասնհինգ տարի առաջ՝ Դուք ինքներդ էլ գիտեք, ախր ես ինչ եմ պատմում Ձեզ, մասնագետին, սակայն ներեք ինձ, միևնույն է պիտի պատմեմ, Ինգա Ֆյոդորովնա, հենց Ձեզ, և դա է միայն հիմա որոշ իմաստ հաղորդում ողջ այդ ձեռնարկմանը. այսպես, ահա, մի տասնհինգ տարի առաջ, ինչպես պնդում են տեղի բնակիչները, ոչ մեկի մտքով էլ չէր անցնում հավաքելու այդ վատ բանը, կամ, ինչպես անաշիտներն են ասում, խոտը, ոչ ծխելու համար, ոչ էլ այլ օգտագործման համար։ Այդ չարիքը բոլորովին վերջերս է առաջացել և մեծապես Արևմուտքի աղդեցության տակ։ Եվ ահա հիմա ինձ առաջարկում են սահմանափակվել ինչ-որ զեկուցագրով ինչու-ինչ ատյաններին՝ դա ուղղակի խելքից-մտքից դուրս բան է։ Հասկանում եմ, սա բարդ խնդիր է, բայց այն հնարովի անհանգստությունը, թե երիտասարդության մեջ տարածում գտած հաշիշամոլության մասին խոսք սենսացիոն նյութը,— վերապահություն անենք ըստ կարգի՝ երիտասարդության պակաս գիտակից մասի մեջ,— իրր մեծ վնաս կհասցնի մեր հեղինակությանը, կարող է սոսկ զայրույթ և ծիծաղ առաջ բերել։ Չէ որ հենց դա է չայլամային քաղաքականությունը... Ինչի՞ է պետք այդ հեղինակությունը, եթե դրա համար այդքան թանկ պետք է հատուցել։

Պատկերացնում եմ, Ինգա Ֆյոդորովնա, ինչպես եք Դուք ներողամտորեն ժպտացել այս տողերը կարդալիս, ավելի շուտ իմ միամիտ վրդովմունքի վրա, իսկ գուցեև, ընդհակառակն, մռայլվել եք, որ, ի դեպ, Ձեզ շատ է վայելում։ Երբ մռայլ-

վում եք, Ձեր դեմքը դառնում է պարզ և խորունկ, ինչպես դեռատի միանձնուհու դեմք, լրջորեն մտահոգված աստվածային իսկության ըմբռնումով, չէ որ Քրիստոսի այդ հարսնացուների իսկական դեղեցկությունը նրանց ոգեշնչվածության է։ Եթե ես այդ ասեի բարձրաձայն, այն էլ ուրիշների ներկայությամբ, շողոքորթելու փորձ պիտի թվար։ Բայց արդեն ասել եմ, որ Ձեր նկատմամբ իմ վերաբերմունքի մեջ չկա բացարձակապես ոչինչ, որ ես պետք է պակասեցնեմ կամ չափազանցնեմ։ Եվ եթե Ձեր մտահոգ տեսքն ինձ հիշեցնում է Աստվածամորը Վերածննդի գեղանկարչության մեջ, ծայրահեղ դեպքում վերագրեցեք դա արվեստագիտության իմ ոչ բավարար փորձին։ Ամեն պարագայի, պիտի հուսամ, որ հավատում եք իմ անկեղծությանը... Չէ որ ամեն ինչ հենց դրանից սկսվեց՝ Դուք հավատացիք ինձ առաջին իսկ խոսքից և ինձ համար կյանքի նոր շրջան բացեցիք...»։

* * *

Այսօր նորից գնացի խմբագրություն իմ նյութի համար, և նորից նույն վիճակը՝ ամեն ինչ նույն կետում է, ոչ մի տեղաշարժ, ոչ մի հույս։ Ոչ մեկը չի կարողանում կարգին բացատրել, թե տափաստանային իմ ակնարկները, որ սկզբում այնպիսի խանդավառությամբ ընդունվեցին խմբագրությունում, ինչու հիմա ոչ մեկին չեն ոգևորում, մինչդեռ այնքան անկեղծ խոստովանություններ առաջ բերեցին շոշափած խնդիրները։ Թերթի գլխավոր խմբագիրը հիմա ամեն կերպ խուսափում է ինձ հանդիպել, զանգահարել նրան հնարավոր չէ, քարտուղարուհին շարունակ ասում է, որ պրազված է՝ մեկ խորհրդակցություն է նրա մոտ, մեկ թուղթիկ ժողով, մեկ նրան կանչել են վերադաս, ինչպես սիրում է շեշտել, ատյաններ։

Եվ նորից քայլում եմ ես միայնակ ծանոթ փողոցներով, ինչպես կողմնակի մարդ, որ պատահմամբ է եկել այս վայրերը, ասես այստեղ չեմ ծնվել ու մեծացել, այնքան որ դատարկ և օտարացած է հոգիս։ Որոշ ծանոթներ ինձ չեն բարևում, նրանց համար ես եկեղեցական բանադրանքի արժա-

նացած մեկն եմ, սեմինարիայից վտարված հերետիկոս և այլն, և այլն։ Ու միայն մի բան է իմ սիրտը ջերմացնում, մի ցանկալի մտահոգություն է միայն ինձ հետ՝ իմ նամակը։ Քայլում եմ ու մտածում, որ կգրեմ, հերթական նամակում կպատմեմ այն ամենն, ինչ իմ կարծիքով հետաքրքիր պիտի լինի նրա համար, այն ամենն, ինչ ինձ ուրիշ կտա բաժանելու նրա հետ իմ խոհերը։ Երբեք չէի մտածի, որ սիրելի կնոջ մասին մտածելն ու նամակներ գրելը կյանքիս իմաստը կդառնա։ Անհամբեր սպասում եմ, որ մի փոքր հնարավորություն լինելուն պես մեկնեմ այնտեղ, ուր մենք հանդիպեցինք։ Միայն թե շուտ լիներ։ Քայլում եմ ու մտածում այդ մասին։ Հավանաբար ուրիշներն էլ ունեցել են այսպիսի օրեր,— երբ նրանք էլ ինչ-որ ժամանակ սիրո մեջ գտել են կյանքի գլխավոր իմաստը և երջանիկ են եղել սիրով, սակայն ի տարբերություն նրանց, ես չեմ դադարի սիրել մինչև կյանքիս վերջը, և կյանքիս իմաստը միայն այդ պիտի լինի...

Ահա արդեն տերևները թափվում են պուրակում։ Բայց չէ որ այն, ինչի մասին գրել եմ, տեղի է ունեցել ամռան սկզբին։ Խմբագրությունն այն օրերին ողջունում էր իմ գաղափարը, շտապեցնում։ Ես հո չէի կարող մտածել, որ հենց բանը հասնի գործին, խմբագրությունը փախուստի կդիմի։ Ոչ մի կերպ չէի կարող մտածել, որ անհասկանալի այդ սկզբունքը՝ մամուլում հրապարակելու միայն այն, ինչ բարենպաստ է մեզ համար, հեղինակություն բարձրացնող, այդչափ զորեղ է։

Այն օրերին ես ամբողջապես զբաղված էի առաջիկա երկարատև ուղևորությամբ՝ անծանոթ և ինձ, գավառաբնակ ռուսաստանցու համար, հրապուրիչ հարավային վայրեր։ Մտադիր էի մեկնել ոչ թե որպես կողմնակի դիտող, այլ որպես անաշա բերող, ներքաշվելով նրանց գաղտնի խմբի մեջ։ Իհարկե տարիքով ես մեծ եմ նրանցից, բայց արտաքինով այնքան էլ մեծ չեմ երևում, որ դա նրանց մեջ կասկած հարուցի։ Խմբագրությունում վճռեցին, որ հին չինսով և գունեղ մայկայով միանգամայն կարող եմ այդ տղերքին նմանվել, մանավանդ եթե մորուքս էլ սափրեմ։ Գրառումների համար

ոչ մի բան հետս չէի վերցրել, հույս դնելով հիշողությանս վրա։ Ինձ համար կարևոր էր թափանցել նրանց միջավայրը, պարզել, թե ինչու էին այդ տղաները ներքաշվել նման գործի մեջ, ինչ նպատակ էին հետապնդում փող շահելու և սպեկուլյացիայի զայթակղությունից զատ. ինձ անհրաժեշտ էր ներսից ուսումնասիրել այդ երևույթի անձնական, սոցիալական, ընտանեկան և, վերջին հերթին չէի դասի, հոգեբանական հանգամանքները։

Այդպես էլ պատրաստվեցի։ Դա մայիսին էր։ Հենց այդ ժամանակ է սկսում ծաղկել կանեփ-անաշան, և հենց այդ օրերին են սկսում հավաքել նրա ծաղիկները նրանք, ովքեր հատկապես մեկնում են այդ դեղաթույնը հավաքելու Մերձմոլընկումյան և Ջույի տափաստանները։ Այդ ամենն ինձ պատմել էր իմ մի ծանոթը, մեր փոքրիկ քաղաքի դպրոցի պատմության ուսուցիչ Վիկտոր Նիկիֆորովիչ Գորոդեցկին։ Երբ մենք մենակ էինք լինում, հազարումի բաներից զրուցելով, նա ինձ կատակով հայր Աբդիա էր կոչում։ Ինքը դեռ երիտասարդ էր, քրոջս՝ Վառվառայի հետ էր սովորել։ Իսկ նրա զարմիկը, հարազատ քրոջ որդին, Պաշան, Պախոմը, որին պարզվում է Վիկտոր Նիկիֆորովիչն ինքն էր այդպես կոչել, ահա այդ Պաշան, ինչպես պարզվեց հետագայում, ընկել էր անաշխատների խմբի մեջ։ Ոչ ծնողները, ոչ էլ Վիկտոր Նիկիֆորովիչը չգիտեին այդ մասին։

Մի անգամ Պաշան թույլտվություն էր խնդրել ծնողներից մեկնելու Ռյազան՝ պապի մոտ, որի մոտ հաճախ էր լինում։ Նրա մեկնելուց մի հինգ օր հետո Վիկտոր Նիկիֆորովիչը Ղազախստանի հեռավոր ինչ-որ կայարանից հեռագիր էր ստացել տրանսպորտային դատախազության քննիչ Ջաալիբեկովից։ Հեռագրով հայտնում էին, որ նրա քրոջ որդի Պաշան կալանքի տակ է, նրան բռնել են երկաթուղով թմրադեղանյութեր տեղափոխելու հանցանքի մեջ։

Վիկտոր Նիկիֆորովիչն անմիջապես հասկացավ, թե ինչու հատկապես իրեն և ոչ ծնողներին է ուղղել քննիչ Ջաալիբեկովն իր հեռագիրը։ Պաշան վախենում էր հորից, որը խիստ և դաժան մարդ էր։ Վիկտոր Նիկիֆորովիչն անմիջապես թռավ Ալմա-Աթա, իսկ այնտեղից էլ գնացքով մի ամբողջ օր ճա-

նապարհ կտրեց մինչև այդ տափաստանային կայարանը։ Պաշային գտավ հուսահատական վիճակում, նրան սպառնում էր անհապաղ դատ և դատավճիռ հատուկ հրամանագրով՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով խիստ ռեժիմի գաղութում։ Դատն անխուսափելի էր՝ հանցակազմն առկա էր։ Վիկտոր Նիկիֆորովիչը ջանում էր ամեն կերպ հասկացնել քրոջ որդուն, որ ցավոք, ուրիշ ելք չկա, որ համաձայն օրենքի հանցագործությանը հետևում է պատիժը։ Խուրհուրդ էր տալիս, թե ինչպես պահի իրեն դատարանում, խոստանում ամեն ինչ բացատրել ծնողներին, խոստանում էր տեսակցության գնալ նրա մոտ գաղութ։ Այդ ամենը տեղի էր ունենում Ջասլիբեկովի ներկայությամբ։ Եվ ահա հանկարծ Ջասլիբեկովն ասում է.

— Վիկտոր Նիկիֆորովիչ, եթե դուք երաշխավորեք, որ ձեր քրոջ որդին այլևս նման հանցագործություն չի կատարի, ես նրան բաց կթողնեմ իմ պատասխանատվությամբ։ Չգիտեմ ինչու ինձ թվաց, որ դուք կարող եք այս երիտասարդին ուղիղ ճանապարհի վրա դնել։ Իսկ եթե նա մի անգամ էլ բռնվեց անաշա փոխադրելիս, նրան կդատեն ինչպես կրկնահանցագործի։ Դեհ, ինքներդ որոշեք։

Վիկտոր Նիկիֆորովիչն, իհարկե, անասելի ուրախացավ, անմիջապես երաշխավորեց Պաշայի համար, չգիտեր ինչպես իր երախտագիտությունը հայտներ քննիչին, և այդժամ Ջասլիբեկովն ասաց.

— Իսկ ձեզ Վիկտոր Նիկիֆորովիչ, կխնդրեի օգնել մեզ այնտեղ, ձեր տեղերում։ Փորձեք լուրջ խոսակցություն բացել մամուլում այս թեմայով։ Չէ որ դուք ուսուցիչ եք։ Մենք պայքարում ենք հանցագործությունների դեմ, երբ դրանք արդեն կատարված են կամ էլ կատարվելու ընթացքում են։ Իսկ ահա թե ով և ինչն է այսպիսի, կարելի է ասել, տղեկներին, մղում հեռավոր, անմարդաբնակ վայրեր, ապադասակարգայնացած տարրերի, իսկ հաճախ էլ անուղղելի կրկնահանցագործների միջավայր մենք չգիտենք, իսկ չէ որ այս դեռահասներին դատում ենք, ստիպված ենք, պարտավոր ենք դատել։ Շատ լավ է, որ դուք, անձնապես, անմիջապես արձագանքեցիք և եկաք ու դրանով շատ օգնեցիք ինձ, իսկ շատ ազգականներ, այդպիսիները շատ-շատ են,— ընդ-

հանրապես չեն գալիս։ Եվ այդպես հազիվ տասնհինգ տարեկան մարդն ընկնում է խիստ ռեժիմի գաղութ։ Իսկ ի՞նչ է լինում այնտեղ։ Ի՞նչ է կատարվում նրանց հետ, ի՞նչ են այնտեղ սովորում։ Անպետք, խեղված մարդիկ՝ ահա թե ինչպիսին են նրանք այնտեղից դուրս գալիս։ Ինքներդ էլ գիտեք, բանտ լավ կյանքից չեն ընկնում։ Վիկտոր Նիկիֆորովիչ, մարդու սիրտ ցավում է այս ամենը տեսնելիս։ Կհավատաք, միայն անցյալ սեզոնին Ճանապարհի մեր այս հատվածում դատել ենք հարյուրից ավելի դեռահասների, իսկ ինչքան-ինչքաններին ենք բաց թողել, չենք կարողացել բռնել, բայց նրանք շարունակ գալիս ու գալիս են ամեն տեղից, Արխանգելսկից մինչև Կամչատկա, վրա են տալիս, ինչպես ձուկը ձվադրման։ Այսպես ինչքա՞ն կարելի է։ Ախր բոլորին հո չե՞ս դատի։ Սրանց մոտ արդյունահանման ամբողջ մի սխեմա է ստեղծվել։ Սրանց մեջ կան և ուղեկցողներ՝ տեղացի և ոչ տեղացի, որոնք տանում են նրանց ուղիղ անաշայի աճելու վայրերը, մենք դրանց էլ ենք դատում։ Իսկ ինչեր են անում գնացքների հետ։ Կանգնեցնում են տափաստանում ապրանքատարները, մարդատար գնացքներ չեն համարձակվում խցկվել, այնտեղ անմիջապես կբռնվեն։ Ինչ-որ մարդիկ սրանց տալիս են հատուկ մի նյութ, փոշու նման բան է, որ եթե գիշերով լցնես փայտակոճերի, երկաթգծի վրա, ապա լապտերների լույսը վրան ընկնելիս այնպիսի խաբկանք է առաջանում, կարծես ճամփան կրակով բռնված լինի։ Վառվում են փայտակոճերը, վառվում են երկաթգծերը։ Անշուշտ, մեքենավարը կանգնեցնում է գնացքը. տափաստանում ինչ ասես կարող է պատահել, դուրս է թռչում ճամփան ստուգելու, բայց ոչ, ոչինչ չի վառվում, ամեն ինչ կարգին է։ Իսկ անաշխատները այդ միջոցին մրցում են վագոններն իրենց պայուսակներով, ճամպրուկներով։ Հիմիկվա գնացքներն այնքան վագոններից են կազմված, մի ամբողջ կիլոմետր են ձգվում, դեհ, փորձիր, հետևել, իսկ նրանք վագոններն են մտնում ու գնում մինչև հանգուցային կայարան։ Այնտեղ տոմս են գնում։ Ուղևորներ, խնդրեմ, ինչքան ասես։ Դեհ, իմացիր թե ով՝ ով է։ Ճիշտ է միլիցիան վերջին տարիներս հատուկ շներ է պա-

հում, դրանք անաշան հոտով գտնում են։ Հենց ձեր քրոջորդուն էլ շան միջոցով են գտել...

Եվ էլի ուրիշ բաներ իմացավ Վիկտոր Նիկիֆորովիչն այդ վայրերում։ Նա էլ ինձ ծանոթացրեց այդ գործերին։ Բայց դրանից առաջ էլ ես ներքուստ պատրաստ էի նման խոսակցության։ Ինձ վաղուց տանջում էր այդ միտքը՝ ուղիներ գտնել դեպի իմ հասակակիցների մտքերն ու սրտերը։ Իմ կոչումը տեսնում էի քարոզչության մեջ։ Միգուցե մի փոքր անձնապաստանություն էր իմ կողմից մտածել, որ դա է իմ կոչումը, սակայն, ամեն դեպքում, ես անկեղծորեն ուզում էի այդ, ու, դա, թերևս, ոչ վերջին հերթին պետք է բացատրել իմ ծագումով։ Իմ որոշ հոդվածներում արդեն խոսել էի, թեև շատ ընդհանուր գծերով, երիտասարդության մեջ տարածված ալկոհոլիզմի կործանարարության մասին, մոտավորապես նույնն էլ գրել էի հաշիշամոլության մասին, վկայակոչելով Արևմուտքի տխուր օրինակը։ Սակայն այդ ամենն, ըստ էության, ուրիշներից լսածի հիման վրա էր, աչ իմ տեսածի։ Իսկ տպավորիչ և միաժամանակ խոր նյութի համար, ուր կլինեին և իմ սեփական խորհրդածությունները ու ապրումները հաշիշամոլության տարածման մասին, որ հայտնի է բոլորին, որից սակայն շատերը սնահավատորեն խուսափում են ինչպես ժանտախտից, հուշիշամոլության տարածման մասին երիտասարդության և մասնավորապես դեռահասների մեջ, որ բերում են ծանր հետևանքների՝ անհատի ինքնաքայքայումից մինչև սադիստական սպանությունների, ահա այդպիսի նյութի համար ինձ պետք էր ուսումնասիրել խնդիրը ներսից և տեսնել իրականության մեջ։ Ու հենց այդ ժամանակ այնպես ստացվեց, որ Վիկտոր Նիկիֆորովիչ Գորոդեցկին սեփական փորձով բախվելով այդ երևույթի հետ, հաղորդակից դարձրեց ինձ իր խոհերին, իր կրած դառնություններին։ Պաշային նախկին բարեկամ-ընկերներից կտրելու համար, որոնք զբաղվում էին անաշայի առուծախով, ամբողջ ընտանիքը՝ հայրը, մայրը, երեխաները, ստիպված եղավ բնակարանը փոխանակել ավելի փոքր բնակարանի հետ և տեղափոխվել ուրիշ քաղաք։ Այդ ամենը

պատմեց ինձ Վիկտոր Նիկիֆորովիչը ցավով և դառնությամբ։

Հենց դա էլ ստիպեց ինձ վճռաբար ձեռնամուխ լինելու մտածածս գործին։

* * *

Գնացի Մոսկվա, որտեղից՝ Կազանսկի կայարանից պետք է մեկնեի կանեփի տափաստաններ։ Բանն այն է, որ հենց այստեղ, Կազանսկի կայարանում էր սկզբնապես կազմավորվում բանբերների խումբը, նրանք իրենց այդպես էին կոչում՝ բանբերներ։ Այդ բանբերները, ինչպես հետագայում համոզվեցի, գալիս էին Հյուսիսի և Մերձբալթյան երկրների ամենաուարբեր քաղաքներից, ընդ որում ամենաթեժ կետերը Արխանգելսկն ու Կլայպեդան էին, հավանաբար այն պատճառով, որ անշշան այնտեղ կարող էին վերավաճառել նավարկության մեկնող ծովայիններին։ Բանբերներին գտնելու և կապ ստեղծելու համար պետք է Կազանսկի կայարանում գտնեի ուխտավորի համարի կրծքանշանով բեռնակրին, Ուտյուգ* կամ Ուտյա մականունով, և նրան ողջույն հաղորդեի իր հին բարեկամներից մեկից, որի անունը Պաշան էր տվել։ Ուտյուգը ծանոթություններ ուներ տոմսարկղերում. նա ապահովում էր, անշուշտ որոշ հատուցումով, մեկնումը։ Սակայն, թե հատկապես ով էր այդ դասավորում, ինձ չհաջողվեց իմանալ, երևում է ինչ-որ մեկը գլխավորում էր այդ օղակը, բայց գաղտնի։ Ահա, ուրեմն, այդ Ուտյան ապահովում էր բանբերների խմբի կազմակերպված մեկնումը, այսինքն նա սիրտ բոլորի տոմսերը հայթայթեր նույն գնացքի համար, բայց ցանկալի էր տարբեր վագոններում։ Բանբերների հետ ավելի մոտ շփվելով, իմացա, որ անշշա հայթայթողների առաջին պատվիրանն այն էր, որ բռնվելիս ոչ մի դեպքում իրար չմատնեն, ուստի մարդկանց աչքի առաջ նրանք քիչ պետք է շփվեին միմյանց հետ։

Եվ ահա ծանոթ հրապարակը երեք կայարանների, որտեղ եղել եմ այնքան անգամներ Մոսկվա գալիս և մեկնե-

* Հարթուկ (ռուս.)։

լինի։ Ջարհուրելի հրմշտոց, հատկապես մետրոյում և կայարաններում, չես կարողանում դուրս գալ անցնել մարդաշատությունից, ում ասես և որտեղից ասես իր մեջ չի առնի ու տաշեղի պես պտտեցնի երեք կայարանների հրապարակի կենդանի հորձանուտը, բայց ես, միևնույն է, սիրում էի գալ Մոսկվա, սիրում էի կենտրոնին արդեն մի քիչ մոտ դուրս գալով, ուր համեմատաբար ավելի ընդարձակ էր, թափառել փողոցներում, խցկվել հնագրավաճառների խանութները, կանգնել թատրոնների հայտարարությունների և ռեկլամների մոտ և, եթե հաջողվեր, նորից ու նորից գնալ Տրետյակովկա կամ Պուշկինի թանգարան։

Այս անգամ Յարոսլավսկի կայարանում դուրս գալով էլեկտրագնացքից և բազմության հեղեղի հետ շարժվելով դեպի Կազանսկի կայարան, ինձ բռնեցի այն մտքի մեջ, որ, պարզվում է, շատ լավ էի ապրում ու շատ լավ էի զգում ինձ առաջ, երբ, ինքս ինձ և իմ պարզ ու հասարակ ցանկություններին թողնված, ոչ մի հոգսի տակ չէի ընկած և ոչնչով առանձնապես չէին սահմանափակված իմ ժամանակն ու թափառումները մոսկովյան փողոցներում։ Իսկ հիմա հսկայական Կազանսկի կայարանում, այդ մրջնանոցի նման եռուզեռի մեջ, պետք է որքան կարելի է շուտ գտնեի ութանասունյոթ համարը կրող Ուտյուգ մականունով այն բեռնակրին։ Տեր իմ, ինչքան շատ են, ուրեմն, Կազանսկի կայարանում այս բեռնակիրները, ավելի ճիշտ բեռնասայլակավորները, եթե սա ութանասունյոթ համարն է կրում, երևի հարյուրից ոչ պակաս կլինեն։ Իսկապես էլ այս խառնաշփոթության մեջ նրան գտնելն այնքան էլ հեշտ չեղավ։ Ամենաքիչը մի կես ժամ վատնելով, որ շրջեմ ու նայեմ բեռնասայլակավորների բոլոր հնարավոր կանգառները, վերջապես նրան գտա կառամատույցում Տաշքենդ մեկնող գնացքի մոտ։ Ուտյուգն ինչ-որ մեկի իրերն էր բեռնում՝ շտապով սայլակից վագոն տեղափոխելով ճամպրուկներն ու արկղերը, հետո էլ աշխույժ կատակներ փոխանակելով ուղեկցորդների հետ և կրկնելով կայարանային տարածված ասացվածքը. «Փող ունեմ՝ Կազան կմեկնեմ, փող չունեմ՝ Ջեշմա կերթամ»։ Սպասեցի քիչ հեռվում, մինչև նա ազատվեր, մինչև մեկնողները մտնեն վագոնները, իսկ ուղեկցողները շարվեն գնացքի

երկայնությամբ վագոնախցիկների պատուհանների առջև։ Եվ այդ ժամանակ նա դուրս եկավ վագոնի փակ հարթակ, հևասպառ, թեյանվեր դրամները գրպանը խոթելով։ Մի շիկամազ աժդահա, մի խորամանկ որձ կատու խլվլան աչքերով։ Քիչ էր մնում սխալ թուլլ տայի՝ այն է պիտի դիմեի նրան «դուք»- ով ու հետն էլ ներողություն խնդրեի անհանգստացնելու համար.

— Ողջույն, Ուայուգ, գործերդ ո՞նց են,— ասացի որքան կարելի է անկաշկանդ։

— Ոնց որ լեհաստանում. ով սայլ ունի, նա էլ պան է,— ժիր պատասխանեց նա, ասես մի հարյուր տարվա ծանոթներ լինեինք։

— Ուրեմն դու հենց պան ես,— ասացի, ցույց տալով նրա բեռնասայլակը։

— Բա ի՞նչ էիր կարծում։ Մենք էլ առաջուց գիտենք, թե ով է փողավոր։ Իսկ դու ինչ ես ուզում, ի՞նչ կա։ Բանամո՞ն պիտի տանենք։ Բեր։

— Տանելը, ես էլ կտանեմ,— կատակեցի։— Գործ ունեմ հետդ։

— Ասա, ի՞նչ գործ։

— Այստեղ չէ, մի կողմ քաշվենք։

— Գնացինք, ինչ կա որ, քաշվենք։

Եվ մենք երկար կառամատույցով քայլեցինք դեպի կայարանի շենքը։ Տաշքենդի գնացքը շարժվեց, սահելով պատուհանների շարանի և ապակիների հետևում կանգնած դեմքերի կողքով, իսկ հարևան գծին կանգնեց ուրիշ գնացք, ինչ-որ տեղից ժամանած։ Գնացքները կանգնած էին մի քանի շարք, մարդիկ իրար էին անցել, շտապում էին, բարձրախոսը շարունակ բղավում էր մեկնող և ժամանած գնացքների համարները։

Երբ հասանք կայարանի շենքին, Ուայուգը սայլակը մի անկյուն մտցրեց, ուր մարդիկ չկային, և այնտեղ ես, չորս կողմս նայելուց հետո, նրան ողջույն հաղորդեցի Պաշկայի ընկերոջից, որի անունը Իգոր էր, իսկ բանբերները Մորժ* էին ասում։ Ինչու մորժ, հայտնի չէ։

---

* Մովափիղ (ռուս.)

— Իսկ Մորժն ինքն ո՞ւր է,— հարցրեց Ուտյուգը։

— Հալ չունի,— պատասխանեցի։— Ստամոքսի խոցից տանջվում է։

— Դիտեի է՛,— ափսոսանքով, բայց և ոչ առանց հրճվանքի ձեռքը ճակատին խփեց Ուտյուգը։— Ասում էի դրան, ախր, անցյալ անգամ ասացի, համը մի հանի, Մորժ, խելքդ գլուխդ հավաքի։ Ախր նա էքստրա էր ընդունում, դեհ, չափն անցկացրեց։ Ըհը, էս էլ խոց։

Դեմքիս կարեկցանքի արտահայտություն տվեցի, թեև անկեղծ ասած, չէի հասկանում էքստրան ինչ է. օղի է, թե ուրիշ մի բան։ Բայց, փառք աստծո, գլխի ընկա, որ չպետք է ճշտեմ։ Ինչպես հետո պարզվեց, էքստրա ասելով հասկանում էին պլաստիլինից,— կանեփափոշու զանգվածից, որ նման է մանկական պլաստիլինի,— լուծազատված ամենաթանկ հումքը (պլաստիլինի մասին, ի դեպ գիտեի, Վիկտոր Նիկիֆորովիչը պատմել էր), հատուկ թմրադեղանյութ, նման ափիոնի։ Հենց դա էր էքստրան։ Քիմիական լաբորատորիաներում էքստրան կարող էր վերածվել փոշու՝ սրսկումների համար, ինչպես հերոինը։ Դա Մորժի նմանների ու մյուս բանբերների համար անմատչելի էր, բայց նրանք մեծ ցանկության դեպքում կարող էին էքստրա օգտագործել՝ պահել լեզվի տակ, ծամել, օղիով խմել, հացի հետ ուտել։ Էքստրա օգտագործելը նրանց մոտ կոչվում է գլխին տալ։ Իսկ ամենամատչելի ու պարզ ձևը անաշա ծխելն էր, ով ինչպես կարող էր՝ անխառն, ծխախոտի հետ խառնած։ Սա էլ, հավանաբար, գլխին տալուց պակաս չէր, թեև, իսկապես, ծխի ազդեցությունը ավելի արագ էր անցնում, քան մյուս ձևերի դեպքում։

Այդ ամենը և էլի ուրիշ շատ բաներ այդ բանբերների կյանքից ես աստիճանաբար իմանում էի «խալխին-գոլի» ճանապարհին. «խալխին-գոլ» ասելով էլ հասկանում էին անաշայի աճելու վայրերը։ Այդ «խալխին-գոլ»-ով դարձյալ քիչ էր մնում հիմար դրության մեջ ընկնեի։

— Իսկ դու, հիմի դո՞ւ էլ ես «խալխին-գոլ» գնում,— ասես ի միջի այլոց հարցրեց Ուտյուգը։

Սկզբում շփոթվեցի, չհասկանալով, թե դա ինչ «խալխին-գոլ» է, հետո մի կերպ գլխի ընկա.

— Հա երևի՝ Մի խոսքով, հա, թե չէ ինչ գործ ունեի...

— Դեհ, ուրեմն, էսպես՝ Տոմսի համար, ասեմ, հանգիստ մնա՝ Տեղը-տեղին կլինի՝ Իսկ մնացածը՝ էդ որ խոսը բերեք, Դոգն ինքը կորոշի՝ Դա իմ գործը չի՝

Ով էր այդ Դոգը, որ մեզ ապահովում էր տոմսերով և ինչ պիտի նա հետո որոշեր, ես չգիտեի և մինչև վերջ էլ չպարզեցի՝ Բայց Ուայլդի հետ այդ խոսակցության ժամանակ իմացա, որ «խալխին-գոլ» մեր մեկնումը կարող է լինել հաջորդ օրվանից ոչ շուտ՝ Նախ այն պատճառով, որ դեռ բոլոր բանբերները չէին հավաքվել՝ Մուրմանսկից երկու բանբեր գալու էին գիշերվա գնացքով՝ Ու ևս մեկը, չգիտեմ որտեղից, կարող էր տեղ հասնել միայն առավոտյան՝ Դա ինձ բնավ չէր հուզում, քանի որ ևս մի օր Մոսկվայում մնալն էլ ինձ համար մեծ բան էր՝

Մինչև հաջորդ օրն ինձ հրաժեշտ տալով, երբ պայմանավորված ժամին պետք է գայի Կազանսկի կայարան (իսկ կայարան գալու խնդիր չունեի, քանի որ ամեն դեպքում ստիպված էի կայարանում գիշերել), Ուայլդը հարցրեց, թե ուսապայուսակ և պոլիէթիլենե պարկիկներ ունե՞մ խոտը, այսինքն՝ անաշան, մեջը լցնելու համար՝ Ուսապայուսակն ու պարկիկները փոքրիկ ճամպրուկիս մեջ էին՝ Ով նա ինձ խորհուրդ տվեց խանութներում որոնել հերմետիկ փակվող ապակյա կամ պլաստմասսայից տուփ, որպեսզի մեջը հավաքեմ փոշեզանգվածը, այսպես կոչված պլաստիլինը՝

— Թե դանդալոշ չես, մի քիչ պլաստիլին կհավաքես, չնայած դա հեշտ բան չի,— բացատրեց նա՝— Ես ինքս ոչ մի անգամ չեմ գնացել, բայց շատ եմ լսել՝ Էստեղ մեկը կա, Լյոխան, այ դա երկու անգամ գնաց, «Ժիգուլի» առավ՝ Ման է գալիս հիմի իրա քեֆին Մոսկվայում պարապ-սարապ... Իսկ չարչարանքն էլ՝ ամենաշատը տասն օրվա բան է...

Այդ խոսքերով էլ բաժանվեցինք իրարից՝ Ես իմ փոքրիկ ճամպրուկը գցեցի պահարանյակ և գնացի թափառելու Մոսկվայում՝

Մայիսի վերջն էր՝ Մոսկվայի համար, թերևս, չկա ավելի լավ ժամանակ, քան ամռան սկսվելուց առաջ այս օրերը՝ Թեև աշունն էլ, վաղ աշունը, երբ օդի թափանցիկությունը,

տերևների ոսկին արտացոլվում են նույնիսկ անցորդների աչքերում, նույնպես անասելի գեղեցիկ է։ Սակայն ինձ ավելի դուր է գալիս հենց մոսկովյան ամառասկիզբը. և ցերեկն է հաճելի փողոցներում, և սպիտակ գիշերները, երբ գիշերվա վերջալույսը մինչև առավոտ իշխում է և քաղաքի վրա, և քաղաքի գլխին՝ աստղալից երկնքում։

Շտապեցի կայարանից դուրս պրծնել մաքուր օդի, և հիշելով, որ կենտրոն հասնել ավելի լավ է մետրոյով, նորից սուզվեցի բազմամարդ շարժման մեջ։ Մինչ իրիկնային եռուզեռի ժամը դեռ շատ կար, և իրար հաջորդող դղրդալից խավարի ու լույսի հերթափոխից հետո, հանգիստ հասա մինչև կենտրոն։ Սվերդլովի հրապարակում մոտ իմ սիրելի զբոսաշրջիկ։ Կլոր զբոսաշրջիկը կանաչում էր ու երփներանգում անդադար շարժման և ամեն կողմից շրջապատող շինությունների օդակի մեջ առնված բարելի կղզյակի նման։ Եվ ես զրեթե բնազդորեն անցորդների հոսանքի հետ շարժվեցի նախ դեպի Մանեժ, կարծում էի այնտեղ որևէ ցուցահանդես կլինի, բայց Մանեժը փակ էր, և այն ժամանակ դանդաղ քայլեցի նախկին մոսկովյան համալսարանի կողքով, Վոլխոնկայի վրա գտնվող Պաշկովի տան կողքով ու այնտեղից էլ դեպի Պուշկինի թանգարան։ Չգիտեմ ինչու էր հոգիս այնպես խաղաղ ու բարությամբ լի. միգուցե մոսկովյան կենտրոնի փողոցներից էր եռուզեռի ժամից առաջ այդպիսի խաղաղություն բխում, իսկ գուցե դա բխում է Կրեմլի աղյուսե ուրվապատկերից, որ անսասան լեռնաշարքի նման իշխում է քաղաքի այդ մասի վրա։ «Ինչե՞ր են տեսել այս պատերը և ինչե՞ր դեռ պետք է տեսնեն»,— մտածում էի ես, և ակամա ինձ պաշարած փողոցային այդ մտորումների մեջ, մոռացել էի բոլորովին, որ օրերս սափրել էի մորուքս, ու ձեռքս շարունակ տանում էի կզակիս. մի կարճ ժամանակով մոռացել էի և այն, ինչ ուզում էի հասկանալ Կազանսկի կայարանում բուն դրած պղտոր չարիքի կենտրոն մուտք գործելով։

Ոչ, համենայն դեպս, ճակատագիր կա, այն կանխորոշում է և՛ լավ, և՛ վատ իրադարձությունները։ Հապա ինչպես պատահեց այն հաջողությունը, որ մտքովս էլ չէի կարող

անցկացնել դեպի Պուշկինյան թանգարան քայլելիս։ Չէ որ ես գնում էի հույս ունենալով լավագույն դեպքում ինչ-որ նոր ցուցադրված գործեր տեսնելու թանգարանում, թեև դա էլ պարտադիր չէր. ման կգայի հենց այնպես սրահներում, կթարմացնեի տպավորություններս։ Մեկ էլ, հենց մուտքի առջև, պուրակի կողքին, դեմիցս եկող մի զույգ կանգնեցրեց ինձ.

— Լսիր, ախպերս, տոմս չե՞ս ուզի,— առաջարկեց վառ կանաչ փողկապով ու նոր շիկավուն կոշիկներով, որ, երևում էր, սեղմում էին ոտքերը, տղան։ Նրա դեմքն էլ, նրա ուղեկցուհու դեմքն էլ անհամբերություն և ձանձրույթ էին արտահայտում։

— Իսկ ինչ է, տոմսեր չկա՞ն,— հետաքրքրվեցի, քանի որ ոչ մի հերթ չէր երևում։

— Չէ, սա համերգի տոմսեր են։ Բայց երկուսն էլ պիտի վերցնես։

— Ի՞նչ համերգ է,— հարցրեցի։

— Ես ինչ գիտեմ, ինչ-որ եկեղեցական երգչախումբ է։

— Թանգարանո՞ւմ,— զարմացա ես։

— Հիմի վերցնո՞ւմ ես, թե չես վերցնում։ Երկու տոմսը երեք մանեթով տալիս եմ, վերցրու։

Երկու տոմսն էլ վերցրի ու շտապեցի թանգարան։ Երբեք չէի լսել, որ Պուշկինյան թանգարանում համերգներ լինեին։ Սակայն պարզվեց, ինչպես իմացա կառավարիչից, որոշ ժամանակից ի վեր թանգարանին կից գործում էր դասական երաժշտության լեկտորիումի նման մի բան, գլխավորապես կամերային երաժշտության ընտիր երկերի՝ նշանավոր երաժիշտների կատարմամբ։ Իսկ այս անգամ,— ուղղակի հրաշք,— Իտալյանսկի դվորիկ կոչվող սրահում հին բուլղարական եկեղեցական երգասացության համերգ պետք է լիներ։ Մի բան, որ երազել նույնիսկ չէի կարող։ Մի՞թե կատարվելու է սլավոնական պատարագի հայր Իհոան Կուկուզելը։ Յավոք, կառավարիչ կինը մանրամասնություններ չգիտեր։ Ասաց միայն, որ սպասվում են կարևոր հյուրեր, երևի թե նույնիսկ բուլղարական դեսպանը ներկա լինի։ Ինչքան էլ դա ինձ չէր վերաբերում, այնուամենայնիվ, հուզվեցի և ուրախացա,

քանի որ հորինս պետք շատ էի լսել բուլղարական ժամերգությունների մասին, և ահա, խնդրեմ, այսպիսի պարզև ինձ համար վտանգավոր ուղևորությունից առաջ։ Մինչև համերգի սկսվելը կես ժամ կար, բայց այլևս չշրջեցի թանգարանում, այլ դուրս եկա փողոց օդ շնչելու և խաղաղվելու։

Ախ Մոսկվան, Մոսկվան, Մոսկվա գետի մոտ ընկած այս յոթ բլրակներից մեկի վրա, մայիսյան օրվա վերջին։ Ամեն ինչ բերկրալի և իմաստավորված է քաղաքում, երբ հոգուդ մեջ չկա ստվեր և կարճատև ներդաշնակություն է տիրում կեցությանդ։ Շնչում էի ազատ և խոր, երկինքը պարզ էր, երկիրը՝ տաք, ու ես ետ ու առաջ էի քայլում թանգարանի առջևի այգու թուջե պարիսպի երկայնությամբ։

Սկսեցի ափսոսալ, որ ոչ մեկին չեմ սպասում. գուցեև այն պատճառով, որ մոտս երկու տոմս կար։ Եվ որքան հասկանալի ու բնական կլիներ, եթե ահա ուր որ է գալու լիներ ու ես տեսնեի նրան փողոցի մյուս կողմում, տեսնեի ինչպես է նա պատրաստվում անցնել փողոցը, վախենալով թե կուշանա, իսկ ես անհանգստանալով նրա համար, այնքան զեղեցիկ, անզգույշ ու հիմարիկ, նշաններ եմ անում նրան տագնապած, որ ոչ մի դեպքում վազելով չկտրի փողոցը. ահա, ինչքան մեքենաներ են սլանում, ինչքան մարդիկ են ամենուրեք, սակայն նրա, միայն նրա մեջ է այն երջանկությունը, որ տրված է ինձ, և նա կժպտար ինձ, չէ որ նա իմ մտքերը կկռահեր դեմքիս արտահայտությունից։ Եվ այնժամ ես ինքս, կանխելով նրան, վազ կտայի նրա մոտ փողոցի մյուս կողմ, ինձ համար չէի վախենա, ես ճարպիկ եմ, և մոտ վազելով նրան, կնայեի աչքերի մեջ ու կբռնեի ձեռքը։ Չգիտես ինչու այդ տեսարանը պատկերացնելով, հանկարծ իսկապես էլ սիրտ կարստ զգացի և քանիցս արդեն մտածեցի, որ մինչև օրս դեռ չեմ հանդիպել այն մեկին, որին նախասահմանված է ճակատագրով իմ սիրելյալը լինելու։ Սակայն գոյություն ունի՞ արդյոք նա, այդ նախասահմանվածը, արդյոք ի՞նքս չեմ հորինել նրան և չե՞մ բարդացնում պարզ բաները։ Այդ մասին շատ եմ մտածել և ամեն անգամ եկել եմ տխուր մի եզրակացության, որ թերևս ինքս եմ ամեն ինչում մեղավոր. կամ շատ բան եմ պահանջում, կամ էլ անհետաքրքիր մարդ եմ աղջիկների համար։ Համենայն դեպս,

իմ հասակակիցները այդ իմաստով ինձնից շատ ավելի հաջողակ և ճարպիկ դուրս եկան։ Արդարացում կարող էր լինել միայն այն, որ հոգևոր սեմինարիան խանգարում էր երիտասարդական կյանքի մեջ մխրճվելու։ Սակայն սեմինարիայից հեռանալուց հետո էլ ամենևին հաջողություն չունեցա այդ բնագավառում։ Ինչո՞ւ։ Ահա եթե հիմա իսկապես հայտնվեր նա, այն մեկը, որին ես պատրաստ եմ սիրելու, ապա նախ և առաջ կասեի նրան. գնանք լսենք ժամերգությունը և դրանում գտնենք ինքներս մեզ։ Սակայն հետո սկսեցի կասկածներ ունենալ։ Իսկ եթե դա նրան թվա տաղտկալի և միապաղաղ, ոչ լավ հասկանալի, իսկ գլխավորը՝ մի բան է արարողական ժամերգությունը տաճարում, այլ բան՝ աշխարհիկ շենքում և բազմատարր հասարակության առջև։ Այնպես չի՞ ստացվի արդյոք, ինչպես եթե Բախի բազմաձայն օրհներգերը սկսեն կատարել ֆիզկուլտուրայի ստադիոններում կամ ավիադեսանտայիններին զորանոցներում, ուր սովոր են աշխույժ քայլերգերի։

Դեպի Պուշկինյան թանգարան սկսեցին գալ փայլարձակ մեքենաներ, եկավ նույնիսկ ինտուրիստի ավտոբուսը։ Կնշանակի ժամանակն է։ Իտալյանսկի պվորիկի մուտքի մոտ մարդիկ էին խմբվել։ Ինչ-որ բանով նրանք բոլորը նման էին մեկմեկու, և կանայք, և տղամարդիկ. այդպես լինում է, երբ մարդիկ բոլորը սպասում են ինչ-որ գործողության, իրադարձության։ Մեկը ավելորդ տոմս էր հարցնում։ Տվեցի մի տոմսս այդ ուսանողին, կարճատես, կամ, գուցե, ոչ աչքին հարմար ակնոցով։ Ու կրակն ընկա։ Սա սկսեց այդ բազմության մեջ մանր դրամները հաշվել, ցած էր գցում, խնդրեցի նրան վերջ տալ, ասացի, որ տոմսերն ինձ նվիրել էին ու ես էլ մեկը նվիրում եմ իրեն, սակայն նա ոչ մի կերպ չէր համաձայնվում, ու երբ արդեն սրահ էինք մտնում, այդ մանր դրամները լցրեց բաճկոնիս գրպանը։ Փողն ինձ, իհարկե, պետք էր, ապրում էի, ինչպես ասում են, ուղածիս պես, բայց սուղ, սակայն... Անհարմար էի զգում և այն բանից, որ մայրաքաղաքային հասարակությունը հագնված էր համապատասխան կերպով, իսկ ես հին, մաշված չինսով էի, կուրծքը բաց բաճկոնով, մեծ ու կոպիտ կոշիկներով ու նաև սափրված մորուքով, որին այնքան դժվար էի ընտելանում,

սահս շարունակ մի բան պակասում էր ինձ. դե պատրաստվում էի հետու ճամփա ընկնել, ինչ-որ անծանոթ կանեփատափաստաններ չգիտես ինչուինչ անաշա հայթայթողների հետ։ Բայց այդ ամենը չնչին մանրուքներ էին...

Բարձր, երկհարկանի Իտալյանակի գլորիկում բոլոր ցուցադրանմուշները, ինչպես թվաց ինձ, իրենց տեղերում էին, միայն սրահի մեջտեղում խիտ շարքերով դրված էին աթոռներ, որոնց վրա էլ նստեցինք։ Ոչ բեմ կար, ոչ միկրոֆոններ, ոչ վարագույր՝ ոչ մի այդպիսի բան չկար։ Այնտեղ, ուր ըստ կարգի նախագահությունն է լինում, մի քիչ կողքի դրված էր ոչ մեծ ամբիոնը։ Մի երկու րոպեից բոլոր տեղերն արդեն զբաղված էին, մարդիկ նույնիսկ խմբվել էին մուտքի մոտ։ Երևում է, ներկաներից շատերն իրար ճանաչում էին, բոլորն իրար հետ աշխույժ խոսում էին ու ես էի միայն լռում, ինքնված ինքս ինձ։

Բայց ահա կողքի ինչ-որ դռնից դուրս եկան երկու կին։ Մեկը, Պուշկինյան թանգարանի ծառայողը, ներկայացրեց մյուսին, բուլղարացի, ինչպես ինքն ասաց, կոլեգային Սոֆկայի Ալեքսանդր Նևսկու տաճարին կից թանգարանից։ Սրահում լսվող ձայները լռեցին։ Բուլղարուհին, լուրջ երիտասարդ մի կին, հարթ սանրվածքով, գեղեցիկ կիսակոշիկներով և գեղեցիկ ոտքերով, որ չգիտես ինչու նկատեցի, խիստ նայեց մեծ, մութ գույնի ակնոցի վրայից, ողջունեց մեզ և բավական տանելի ռուսերենով փոքրիկ մի զեկուցում արեց։ Պատմեց, որ եկեղեցական ճարտարապետության անգ՛ն ցուցադրանմուշների, հնագույն ձեռագրերի, սրբանկարչության և գրատպության նմուշների կողքին իրենց թանգարանում, կրիպտում՝ տաճարի կիսանկուղային սրահներում, իրիկնային համերգների ժամանակ, ասաց ժպտալով, նրանք ցուցադրում են և կենդանի կատարվող ցուցադրանմուշներ՝ միջնադարյան ժամերգություններ։ Այդ նպատակով հենց, Պուշկինյան թանգարանի հրավերով, նրանք եկել են «Կրիպտ» կապելլայով։

— Խնդրենք,— առաջարկեց նա ծափահարությունների ներքո։

Երգչները ներս եկան, այնինքն նրանք հենց այդտեղ էին, դռան եռևում, որով մենք ներս էինք մտել։ Տասը հոգի

էին, ընդամենը տասը հոգի։ Ընդ որում, բոլորը երիտասարդ, կարելի է ասել ինձ տարեկից։ Բոլորը միանման համերգային սև կոստյումներով, սպիտակ կրծքակալներին ձիգ թիթեռնիկ-փողկապներով, բոլորը սև կոշիկներով։ Ոչ երաժըշտական գործիքներ, ոչ միկրոֆոններ, ոչ էստրադային ձայնազորիչներ, ոչ էլ նույնիսկ մի փոքր բարձրահարթակ բեմի համար և, իհարկե, ոչ մի լուսաձոխություն. պարզապես սրահում լույսը մի քիչ աղոտացրին։

Ու թեև համոզված էի, որ այստեղ հավաքված էին կապելլայի մասին պատկերացում ունեցող ունկնդիրներ, չգիտես ինչու, այնուամենայնիվ, վախենում էի երգիչների համար։ Շատ մարդ էր հավաքվել, ու մեր երիտասարդությունն էլ սովոր էր էլեկտրոնային բարձրաձայնության, իսկ սրանք՝ ոնց որ անգեն զինվորներ մարտի դաշտում։

Երգիչները կիպ շարվեցին ուս-ուսի, կազմելով մի փոքր կիսաշրջան։ Դեմքերը հանգիստ էին ու կենտրոնացած, ասես ամենևին վախ չունեին իրենց համար։ Ու ես մի տարօրինակ բան նկատեցի. բոլորը զարմանալիորեն կարծես նման լինեին իրար։ Թերևս այն պատճառով, որ այդ պահին նրանց նույն բանն էր մտահոգում, նույն պատրաստականությունը, միևնույն հոգեկան մղումը։ Չէ որ նման պահերին ամենաամեն բան, որ գուցեև շատ կարևոր է ուրիշ ժամանակ յուրաքանչյուրի առօրյա կյանքում, բացարձակապես դուրս է գալիս մտքից, ճիշտ ինչպես մարտից առաջ բոլորը մտածում են մի բան միայն, ինչպես հաղթեն։

Մինչդեռ համերգ վարողը միշտ նույն լրջությամբ նայելով մթնեցված ապակիներով ակնոցի միջով, համերգն սկսելուց առաջ կարճ պատմական տեղեկություն տվեց բուլղարական եկեղեցու բնույթի մասին, որ գալիս էր բյուզանդական արմատներից, սակայն իր առանձնահատկություններով, իր պատարագով, անդրադարձավ նաև բուլղարական երգեցողության ազգային ավանդույթների որոշ գծերին։ Եվ հայտարարեց համերգի սկիզբը։

Երգիչները պատրաստ էին։ Նրանք մի փոքր էլ լռեցին, շունչը կարգավորելու համար, ավելի կիպ մոտեցրին ուսերը, և այդ ժամանակ արդեն բացարձակ լռություն տիրեց, ասես

սրահը դատարկված լիներ, այնքան որ բոլորի համար հետաքրքիր էր, թե ինչ պիտի կարողանային անել տասը հոգին, ինչպես էին նրանք իրենց վրա այդ համարձակությունն առել և ինչ հույսեր ունեին։ Եվ ահա աջ կողմի ծայրից կանգնած երրորդի գլխի շարժումով,— հավանաբար խումբը վարողի,— սկսեցին երգել։ Եվ ձայները վեր խոյացան...

Այդ լռության մեջ թվում էր դանդաղ տեղից շարժվեց աստվածային օդային կառքը փայլփլուն անվագոտիներով ու ճաղերով և անտեսանելի ալիքների վրայով գլորվեց սրահից դուրս, իր ետևից թողնելով երկար չլռող, հոգու անհատակ պաշարներից ամեն անգամ նորից ու նորից ծնվող հանդիսավոր ու հաղթական հետքը ձայների։

Նախերգից արդեն պարզ էր, որ այս կապելլան հասել է համերգելու այնպիսի մի աստիճանի, ձայների այնպիսի ճկունության և ներդաշնակության, որ գործնականում գրեթե անհնարին է տասը տարբեր մարդկանց համար, ինչպիսի երգչական տվյալներ ու վարպետություն էլ նրանք ունենան, ու եթե այս երգեցողությունը տեղի ունենար որևէ, մանավանդ ժամանակակից երաժշտական գործիքների ուղեկցությամբ, ապա տասը հենարանի վրա կանգնուն այս բացառիկ շինությունն անտարակույս կփշրվեր։ Հազվագյուտ ճակատագիր միայն կարող էր այսպիսի հրաշք արարել, որ հենց սրանք, հենց այս տասը հոգին, օժտված ի վերուստ, ծնվեին մոտավորապես նույն ժամանակ, կենդանի մնային և գտնեին մեկմեկու, որդիական պարտքի զգացումով տոգորվեին իրենց նախահայրերի հանդեպ, որ մի ժամանակ տառապել են Նրա համար, հորինված ,անհասանելի և հոգուց անբաժանելի Նրա համար. չէ որ դրանից միայն կարող էր գոյանալ այսպիսի անասելի ջերմեռանդ երգեցողություն։ Եվ դրանում էր նրանց արվեստի ուժը, ուժեղ միայն խանդավառությամբ, ինքնամոռացումով, դուրս նետած հնչյունների և զգացմունքների հզորությամբ, երբ սովորած աստվածային տեքստերը զուտ առիթ են, ձևական դիմում Նրան, իսկ առաջին տեղում է մարդկային հոգին, սեփական մեծության բարձունքներին ձգտող հոգ՛ին։

Ունկնդիրները դերված էին, համակված, իրենց մտքերի մեջ սուզված. յուրաքանչյուրի համար առիթ էր ներկայացել

ինքն իրեն, միայնակ, հաղորդակցվելու այն բանին, ինչ դարերով ստեղծվում էր ողբերգական մոլորությունների և պայծառացումների մեջ բանականության, որ մշտապես որոնում էր իրեն իրենից դուրս, և միաժամանակ բոլորի հետ միասին, ընդհանրաբար ըմբռնելու Բանն, և բազում հոգիների համամասնակցությունն այդ տանջապատկում էր երգեցողության ուժը։ Միևնույն ժամանակ երևակայությունը յուրաքանչյուրին տանում է այն անհասկանալի, բայց միշտ ցավագնորեն տենչալի աշխարհը, գոյացած սեփական հիշողություններից, երազանքներից, կարոտից, խղճի խայթերից, կորուստներից և ուրախություններից, որ մարդն ունենում է իր կյանքի ընթացքում։

Ես չէի հասկանում, ու, ճիշտն ասած, չէի էլ ուզում հասկանալ, թե ինչ էր կատարվում ինձ հետ այդ պահին, ինչն էր իմ մտքերն ու զգացումներն այդպիսի անդիմադրելի ուժով կապել այս տասը երգիչների հետ, արտաքուստ նույնպիսի մարդկանց, ինչպես ես եմ, սակայն նրանց երգած հիմներն ասես իմ միջից էին դուրս գալիս, իմ սեփական մղումներից, մեջս կուտակված ցավերից, տագնապներից և հիացմունքներից, որ մինչև օրս ելք չէի գտել իմ մեջ, և ազատվելով նրանցից ու միաժամանակ լցվելով նոր լույսով ու մտքի պայծառությամբ, այդ երգիչների շնորհիվ ես հասկանում էի ժամերգության նախասկզբնական էությունը՝ այդ կյանքի ճիշը, մարդու ճիշը վեր կարկառած ձեռքերով, որ խոսում է հավիտենական փափագի մասին ինքնահաստատման, սեփական ճակատագիրը թևթևացնելու, տիեզերքի անծայրածիր տարածքում հենակետ գտնելու, ողբերգական հույսով, թե իրենից դուրս գոյություն ունեն ինչ-որ երկնային ուժեր, որ կօգնեն իրեն դրանում։ Հոյակապ մոլորություն։ Օ՜, որքան մեծ է մարդու ձգտումը լսելի լինելու վերևում։ Եվ որքան եռանդ, որքան միտք է դրել նա հավաստիացումների, ղեղումների, փառաբանությունների մեջ՝ հարկադրելով իրեն հանուն դրա հնազանդության, խոնարհության, հեզության հակառակ իր ընդվզող արյան, հակառակ մշտապես խռովության, նորության և ժխտման տենչող իր տարերքի։ Օ՜, որքան դժվար ու տառապալից էր դա նրան հաջողվում։

Ռիգվեդա, սաղմոսներ, նզովքներ, հիմներ, շամանուհյուն։ Եվ դարերի ընթացքում այնքան անվերջանալի աղերսանք ու աղոթքներ են ասվել, որ եթե դրանք լինեին նյութեղեն, վաղուց հեղեղած պետք է լինեին ամբողջ աշխարհը ափերից ելած դառն-աղի օվկիանոսների նման։ Որքան դժվար է ծընվել մարդու մեջ մարդկայինը...

Իսկ նրանք երգում էին, այդ տասը հոգին։ Աստծու կողմից փոխադարձաբար կապված նրա համար, որ մենք սուզվեինք մեր մեջ, մեր ենթագիտակցության մրրկվող հորձանուտները, վերակենդանացնեինք մեր մեջ անցյալը, անցած սերունդների հոգին և վշտերը, որպեսզի հետո համբառնայինք, ճախրեինք ինքներս մեզ և աշխարհի վրա և գտնեինք գեղեցկությունն ու իմաստը սեփական կոչման՝ մի անգամ աշխարհ գալով սիրել կարգը նրա հրաշքներով լի։ Այդ տասը հոգին երգում էին այնքան ինքնամոռաց, այնքան աստվածարժանի, թերևս իրենք էլ այդ չիմանալով, որ հոգու մեջ արթնացնում էին ամենաբարձր մղումները, որ առօրյա կյանքում, ձանձրալի հոգսերի ու իրարանցման մեջ հազվադեպ է մարդկանց համակում։ Ու դրանից հավաքվածներին համակում էր անբացատրելի մի բարություն, նրանց դեմքերը հուզված էին, ոմանց աչքերին արտասուք էր փայլում։

Ինչպես էի ես ուրախանում, ինչքան շնորհակալ էի դիպվածից, որ բերել էր ինձ այստեղ, որպեսզի պարգևի այս տոնը, երբ իմ գոյությունն ասես գտնվում էր ժամանակից ու տարածությունից դուրս մի ազատության մեջ, ուր հրաշքով միաձուլվում էին բոլոր իմ իմացությունները ու ապրումները՝ և անցյալի մասին հիշողություններում, և ներկայի ըմբռնման մեջ, և ապագայի մասին երազանքներում։ Եվ այդ խոհերի մեջ էր և այն միտքը, որ դեռ չեմ սիրել, ու սիրո կարոտը, որ կար արյանս մեջ ու սպասում էր իր ժամին, զգալ տվեց իրեն սրտիս մորմոքուն ցավով։ Ո՞վ է նա, որտե՞ղ է նա, և ինչպե՞ս կլինի դա։ Մի քանի անգամ ակամա նայեցի դռանը, գուցե նա եկել է ու կանգնած է այնտեղ, լսում է ու սպասում, թե երբ իրեն կտեսնեմ։ Ինչ ափսոս է, որ չկար նա այն ժամին այն սրահում, ինչ ափսոս է, որ անհնարին էր այն ժամանակ բաժանել նրա հետ այն, ինչ հուզում էր ինձ ու սնունդ տալիս իմ երևակայությանը։ Ու

մեկ էլ մտածում էի. հանկարծ ու ճակատագիրը ծիծաղելի մի բան չդարձնի այդ, այնպիսի մի բան, որ հետո ինքդ էլ ամաչես հիշել...

Չգիտես ինչու հիշեցի մորս վաղ մանկական հասակումս... Հիշում եմ պարզ ձմեռային առավոտ, նոսր թափվող ձյունափաթիլներ ծառուղում, մայրս նայելով ինձ ժպտուն աչքերով կոճկում է փոքրիկ վերարկուիս կոճակները ու ինչոր բան է ասում, իսկ ես փախչում եմ նրանից, նա ուրախ հասնում է ետևիցս, ու փռվում է մեր քաղաքի վրա բարձունքին կանգնած եկեղեցու զանգակների ղողանջը, ուր այդ պահին սպասավորում է հայրս, գավառային սարկավագը, ջերմեռանդ հավատացյալ, որը սակայն, ինչպես հասկանում եմ հիմա, հիանալի կերպով գիտեր ողջ սայմանակցությունը այն ամենի, ինչ ստեղծել է մարդը Աստծու անունից և հանուն Աստուծո... Իսկ ես, հակառակ զգացմունքներիս, գնացի բոլորովին այլ ճանապարհով, ոչ այն, ինչ ուզում էր նա։ Ու հոգիս դառնանում էր այն մտքից, որ հայրս գնաց այն աշխարհ ինքն իրեն չդավաճանած, իսկ ես դեսուդեն եմ ընկնում, ժխտում եմ անցյալը, չնայած նաև հիանում եմ անցած-գնացած վեհությամբ, հզոր ազդեցությամբ այդ երբեմնի ամենազոր գաղափարի, որ դարեդար տարածվելով փորձում էր հավատի բերել անհավատների հոգիները բոլոր մայրցամաքներում և կղզիներում, այնպես, որ առմիշտ, հավիտենապես հաստատվի աշխարհում, սերունդների մեջ, բոլոր հայացքներում՝ ու զսպելով ետ տանի, ինչպես շանթարգելը կայծակն է հետացնում հողի մեջ, խոնարհության խորքերը տանի մշտական մարտակոչը մշտապես խռովահույզ մարդկային կասկածներիս։ Երախտապարտ ենք դրանց՝ Հավատին և Կասկածին, կեցության ուժերին, որ երկուստեք առաջ են մղում կյանքը։

Ես ծնվել եմ, երբ կասկածի ուժերը հաղթել են, իրենց հերթին առաջ բերելով նոր կասկածներ, և ես այդ պրոցեսի արգասիքն եմ, բանաղարանքի ենթարկված մի կողմից և իմ բոլոր բարդություններով հանդերձ չընդունված մյուս կողմից։ Ինչ արած, ինձ նմաններով պատմությունը տանուլ տվածը ետ է բերում, հոգին թեթևացնում է... Այդպես մտածում էի ես, լսելով հին բուլղարական ժամերգությունները։

Իսկ այդ երգերը երգվում էին մեկը մյուսի ետևից, երգվում այն սրահում, որպես արձագանք անցած-գնացած ժամանակների։ «Ջոհն ընթրիքի», «Կոտորածն մանկաց», «Հրեշտակն հեծեծող» — այս երգերի բիբլիական չարչարանքները փոխվում էին խիստ ու բոցաշունչ երգերով հավատի այլ նահատակների, ու թեև այդ ամենը մեծ մասամբ ծանոթ էր ինձ, ես անբացատրելիորեն գերված էի բուն գործողությամբ, թե այս տասը հոգին ինչպես էին դյութում, իմացածը վերածում մեծ արվեստի, որի ուժը պայմանավորված է ժողովրդական հոգու տարողությամբ՝ ով շատ է տառապել, շատ է իմացել...

Ականջ դնելով Սոֆիայի երգիչների ձայներին, որ արբեցած, ոգևորված էին սեփական երգեցողությունից, ուշադիր նայելով նրանց դեմքերին, հանկարծ նկատեցի, որ նրանցից մեկը, ձախից երկրորդը, միակ բաց դույներ ունեցողը թուխ ու սևամազ բուլղարացիների մեջ, շատ նման է ինձ։ Զարմանալի էր տեսնել այդքան քեզ նման մեկին։ Մորթագույն աչքերով, նեղուս,— սրան էլ, երևի, երեխա ժամանակ նվազ են ասել,— բայց շիկավուն երկար մազերով, իմ ձեռքերի նման չղուտ երկար ձեռքերով, նա էլ, հավանաբար, իր ամաչկոտությունը հաղթահարում էր երգեցողությամբ, ինչպես ես հաճախ ստիպված էի լինում քաշվածությունս հաղթահարելու խոսակցությունը փոխելով ինձ մոտ աստվածաբանական թեմաներին։ Դժվար է պատկերացնել, թե որքան հիմար բան է ստացվում, երբ այդպիսի լուրջ խոսակցություններ եմ սկսում կնոջ հետ ծանոթանալիս։ Եվ արտաքինն էլ մորթագույն աչքերով երգիչի նույնն էր. ներս բնկած այտեր, թեթևակի արծվաքիթ, ճակատն ակոսում էին երկու երկարուկ կնճիռներ և, ամենակարևորը, մորուքն էլ ճիշտ ու ճիշտ նման էր իմին մինչև սափրելս։ Ակամա ձեռքս տանելով նախկին մորուքիս, նորից հիշեցի, որ վաղը պետք է ճամփա ընկնեմ անաշա հայթայթողների հետ։ Ու ինքս էլ զարմացած մնացի այդ մասին մտածելով. ո՞ւր եմ գնում, ինչո՞ւ։ Որպիսի հակադրություն՝ աստվածային հիմներ և կայսրանային Ուտյուգների արատավոր մոլությունը վնասակար խոտի վնասակար ծխի հանդեպ։ Սակայն բոլոր ժա-

մանակներում էլ իսկական մարդկային կյանքն իր բարկով ու չարով ընթացել է եկեղեցիների պատերից դուրս։ Ու մեր ժամանակն էլ բացառություն չէ...

Ահա թե որպիսի նման կերպար ես հայտնաբերեցի հոմերոսում։ Հետո արդեն այլևս չէի կորում իմ երկվորյակից, հետևում էի, թե նա ինչպես էր երգում, ինչպես էր ձգում դեմքը, ինչպես էր լայն բացվում բերանը, երբ նա բարձր ձայնանիշներ էր վերցնում։ Եվ կարեկցելով նրան, պատրաստ էի ինձ նրա տեղում, ասես նա իմ վերամարմնավորումը լիներ։ Այդպիսով ինքս կարծես մասնակցում էի երգեցողությանը։ Մեջս երգում էր ամեն ինչ, միաձուլվել էի երգչախմբին անասելի, արտասվելու աստիճան մի զգացում ունենալով եղբայրության, վեհության, ընդհանրության, ասես հանդիպած լինեինք երկար բաժանումից հետո, մեր ամրացած, ուժեղ և հաղթական ձայները երկինք են հառնում ու հողը մեր ոտքերի տակ ամուր է ու անսասան։ Ու մենք պիտի երգենք, ինչքան որ ուզենք երգել, պիտի երգենք անվերջ...

Այդպես երգում էին նրանք ու ես էլ նրանց հետ։ Հրաշալի ինքնամոռացության այդպիսի պահեր ես ունենում եմ սովորաբար հին վրացական երգեր լսելիս։ Դժվարանում եմ բացատրել, թե ինչու, բայց բավական է թեկուզ երեք վրացի, թեկուզ ամենասովորական երգողներ սկսեն երգել, ու սիրտ է թեթևանում, շունչ է ստանում արվեստը պարզ ու բացառիկ իր ներդաշնակությամբ, հոգուդ վրա իր ազդեցության ուժով։ Հավանաբար դա բնության հատուկ պարգևն է նրանց, կուլտուրայի մի ձև, իսկ գուցեև պարզապես Աստծու պարգև։ Ինձ համար անհասկանալի է, թե նրանք ինչի մասին են երգում, ինձ համար կարևոր է, որ ես երգում եմ նրանց հետ։

Այդ մասին մտածելով, լսում էի երդիչներին, ու հանկարծ միտքս պայծառացավ, հասկացա մի անգամ կարդացածս վրացական պատմվածքի՝ «Վեպը և յոթերորդը» էությունը։ Դա փոքրիկ պատմվածք էր, որպիսի պատմվածքներով լցված է պարբերական մամուլը, ու չի կարելի ասել, որ շատ աչքի ընկնող էր, ավելի շատ ֆաբուլային էր, քան հոգեբանական, ավելի ռոմանտիկական բնույթի, սակայն այդ

պատմության վերջը երկար մնաց հիշողության մեջ, այդ վերջը չգիտես ինչու փշի նման խրվեց-մնաց մեջս։

«Վեցը և յոթերորդը» պատմվածքի, ավելի ճիշտ բալլադի (նրա քիչ հայտնի հեղինակի բարդ ազգանունը չեմ հիշում) բովանդակությունը նույնպես ծամծմված թեմա է։ Հեղափոխությունը բորբոքվել է, արյունահեղ քաղաքացիական պատերազմ է, հեղափոխությունը հաստատում է իրեն թշնամու հետ վերջին գոտեմարտները մղելով, և Վրաստանում էլ, ուրեմն, նույն պատմական ելքն է՝ խորհրդային իշխանությունը հաղթանակում է ավելի ու ավելի դուրս մղելով դինված հակահեղափոխականների վերջին մնացորդներին, նույնիսկ լեռնային խուլ գյուղերից։ Գործում է այդպիսի դեպքերում հիմնական օրենքը՝ եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են։ Սակայն դաժանությունը ծնում է պատասխան դաժանություն՝ սա էլ հին օրենք է։ Առանձնապես կատաղի դիմադրում է քաջ Գուրամ Ջոխաձեի ջոկատը, որը հիանալի գիտեր շրջակա լեռները, նախկին հովիվ-ձիապան էր, իսկ հիմա դարձել էր դասակարգային պայքարի մեջ խճճված հանդուգն և անորսալի ելուզակ։ Սակայն նրա օրերն էլ են հաշված։ Վերջին ժամանակները նա պարտություն պարտության ետևից էր կրում։ Գուրամի ջոկատ է ուղարկված չեկիստ, որը չվախենալով բացահայտվելու վտանգից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ, կարողանում է Գուրամ Ջոխաձե վստահությունը ձեռք բերել և դառնալ նրա զինակիցը։ Նա այնպես է հաջողացնում, որ մեծ մարտից հետո կորուստներից արդեն նոսրացած ջոկատով նահանջելիս, Գուրամ Ջոխաձեն գետային անցումի ժամանակ ընկնում է շուրջկալի մեջ։ Երբ նրանք կատաղի արշավով հասնում են ափին և գետն են նետվում, չեկիստը մացառուտների մոտ ընկնում է ձիուց, իբր թամբակալը պոկվել է։ Իսկ Ջոխաձեի հեծյալների մեծ խումբը տաքացած ձիերով հաղթահարում է լայն լեռնային գետի ծանծաղուտները ու հենց գետի մեջտեղում, ուր նրանք բաց էին ամեն կողմից, երկու նախապես դրված և քաղարկված հաստոցավոր գնդացիրներ հնձում են նրանց երկու ափերից, վերցնում նրանց խաչաձև սվինակրակի տակ։ Ջարհուրելի տապալում, մար-

դիկ կործանվում են լեռնային գետի մեջ խեղդվելով, սակայն Գուրամ Ջոխաձեն,— ճակատագիրը խնայում է նրան,— հասցնում է դուրս պրծնել կրակի տակից, ետ է շրջվում ու իր հզոր ձիու շնորհիվ սլանում է ափի երկայնությամբ մացառուտների միջով։ Իսկ նրա հետից սլանում են կենդանի մնացած նրա մի քանի հավատարիմ հեծյալները, ու դրանց մեջ չհկիստը, որն անմիջապես միանում է նրանց, հենց հասկանում է, որ գործողությունը լրիվ չի հաջողվել և որ պարագլուխը ազատվում է դատաստանից։

Դետում այդ դնդացրային գնդակահարությունը Ջոխաձեի ջոկատի վերջնական ջախջախումն էր, փաստորեն նրա լիակատար ոչնչացումը։

Երբ հետապնդողներից վերջապես պոկվելով, Գուրամ Ջոխաձեն կանգնեցնում է հալից ընկած ձիուն, պարզվում է, որ ջոկատից, Գուրամ Ջոխաձեին էլ հաշված, մնացել են յոթ հոգի, և յոթերորդը չհկիստն էր, անունը Սանդրո։ Այստեղից էլ երևի պատմվածքի անունն է՝ «Վեցը և յոթերորդը»։

Սանդրոն հրաման էր ստացել ինչ գնով էլ լինի վերացնել բանդայի պարագլուխին՝ Գուրամ Ջոխաձեին։ Նրան մեծ գլխատին էր հայտարարված։ Բայց բանը նույնիսկ գումարը չէր, այլ այն, թե ինչպես իրագործել այդ հրամանը հիմա, երբ արդեն պարզ էր, որ Ջոխաձեն այլևս մարտի մեջ չի մտնելու, ուր հնարավոր կլիներ նրան խփել. չէ որ հիմա, երբ նա փաստորեն մնացել էր մենակ դարանն ընկած հալածական գազանի նման, հույսը միայն ինքն իր վրա, իր սեփական ճարպկության վրա, նա չափազանց աչալուրջ կլինի։ Պարզ էր, որ Ջոխաձեն չէր հանձնվի առանց կռվելու մինչև վերջին շունչը..

Եվ ահա այս պատմության վերջը. դա ինձ ամենից ավելի հուզեց...

Դետի վրա դաժան ջախջախումից հետո Գուրամ Ջոխաձեն, որ գիտեր կիրճերում բոլոր անցումները, նույն օրը ուշ երեկոյան կանգ է առնում մի դժվարամատչելի վայրում, Թուրքական սահմանին մոտ լեռնային անտառակում։ Եվ բոլորը, վեցը և յոթերորդը, ձիերին թամբերից ազատելով, հոգնածությունից գետին են տապալվում։ Հինգն անմիջապես

քնում են պինդ քնով, իսկ երկուսը չեն քնում։ Չի քնում չեկիստ Սանդրոն, նրան տանջում է անհանգստությունը, մտածում է, թե ինչ պիտի անի հիմա, ինչպես հասնի իր նպատակին, ինչպես իրագործի պատիժը։ Կործանիչ աղետից հետո չի քնում և կարիճ Դուրամ Ջոխաձեն, նա տառապում է չոկատի կործանման համար, նրան տանջում է վաղվա օրը։ Ու Աստծուն է միայն հայտնի, թե էլ ինչի մասին էին մտածում այս երկու անհաշտ թշնամիները, հեղափոխությամբ բաժանված։

Լիալուսինը կանգնած էր աչից նրանց գլխավերևում, անտառն աղմկում էր գիշերային մռայլ և խուլ, ցածում անլուելի աղմկում էր քարերին գետը, և լեռները չորսբոլոր իլացել էին քարե լռության մեջ։ Բայց ահա Դուրամ Ջոխաձեն հանկարծ վեր է թռչում, ասես ինչ-որ բանից անհանգըստացած։

— Դու քնած չե՞ս, Սանդրո,— զարմացած հարցնում է նա յոթերորդին։

— Ոչ, իսկ դու ինչո՞ւ վեր թռար,— իր հերթին հարցնում է Սանդրոն։

— Էհ, ոչինչ։ Քունս չի տանում, չգիտեմ ինչու չեմ կարողանում պառկել այս տեղում, լուսինը շատ է լուսավորում։ Գնամ պառկեմ քարանձավում։— Եվ Ջոխաձեն վերցնում է իր յափնջին, զենքն ու թամբը գլխի տակ դնելու համար և հեռանալով ասում է.— Մնացածի մասին վաղը կխոսենք։ Մեզ արդեն շատ խոսելու ժամանակ չի մնացել։

Եվ այդ ասելով գնում է, տեղավորվում քարանձավի բերանին. հովիվ եղած ժամանակ նա շատ անգամներ էր այստեղ պատսպարվել վատ եղանակից, և հիմա էլ թաքնվել էր չգիտես իր անսահման դժբախտության ցա՞վն ապրելու, թե նախազգացումն էր նրան հուշել գրավելու այնպիսի դիրք, որ ոչ մի կողմից հնարավոր չլինի նրան մոտենալ և ինքն էլ, ընդհակառակն, տեսնի յուրաքանչյուրին, ով մոտենա քարանձավին։ Սանդրոն անհանգստացավ. ինչպես հասկանալ պարագլխի այդ, թվում է, ողջամիտ քայլը։ Իսկ եթե նա ինչ-որ բան է կասկածո՞ւմ։

Այդպես անցավ այդ գիշերը, իսկ առավոտյան Դուրամ Ջոխաձեն կարգադրեց ձիերը թամբել։ Ու ոչ ոք չգիտեր, թե

նա ինչ է մտածում, ինչ է մտադիր ձեռնարկել։ Եվ երբ ձիերն արդեն թամբված էին ու ձիերի սանձերից բռնած բոլորը լուռ կանգնած էին նրա դիմաց, նա հառաչելով ասաց.

— Ջէ, հարազատ հողից այսպես չի լինի հեռանալ։ Այսօր պիտի հրաժեշտ տանք մեր հողին, մեզ մեծացրած հողին, իսկ հետո կցրվենք ով ուր կգնա։ Բայց քանի դեռ այստեղ ենք, կլինենք ինչպես մեր տանը։

Նա երկու հեծյալի ուղարկեց մոտակա գյուղ, ուր հավատարիմ մարդիկ ուներ, գինի և ուտելիք բերելու, երկու հոգու էլ՝ Սանդրոյին ու մի ուրիշ տղայի, թողեց կրակի համար չոր խոիվ հավաքելու ու ձիերին հսկելու, իսկ ինքը մյուս երկուսի հետ գնաց որսի՝ գոցե հաջողվի որևէ վայրի թռչուն կամ էլ այծյամ խփելու հրաժեշտի ընթրիքի համար։

Չեկիստ Սանդրոն ուրիշ հնար չուներ, պիտի ենթարկվեր հրամանին և սպասեր հարմար պահի, երբ կկարողանար հրամանը կատարել։ Բայց առայժմ դեռ հարմար իրադրություն չէր ստեղծվում։

Երեկոյան բոլոր վեցը և յոթերորդը նորից միացան. անտառի եզրին քարանձավի մոտ խարույկ վառեցին, քաթանի կտորի վրա դարսեցին գյուղից բերված հացը, գինին, աղը, ուտելիքը, որ ուղարկել էին հրաժեշտի համար Գուրամ Ջոխաձեի հավատարիմ մարդիկ։ Խարույկը լավ բոցավառվեց։ Յոթը մոտեցան կրակին։

— Բոլո՞ր ձիերն են թամբված և բոլո՞րդ եք պատրաստ թամբին թռչելու,— հարցրեց Գուրամ Ջոխաձեն։

Ի պատասխան բոլորը լուռ գլխով արեցին։

— Լսիր, Սանդրո,— ասաց Գուրամ Ջոխաձեն,— դու լավ փայտ ես հավաքել, ուժեղ վառվում են, բայց ինչո՞ւ ես դրանք խարույկից այդքան հեռու դրել։

— Հանգիստ եղիր, Գուրամ, դա իմ գործն է, կրակի համար ես եմ պատասխանատու։ Իսկ դու քո խոսքն ասա։

Եվ այնժամ Գուրամ Ջոխաձեն ասաց.

— Իմ բարեկա՛մներ, մենք մեր գործը տանուլ տվեցինք։ Երբ կռվերը պատերազմում են, մի կնումեկը պարտություն է կրում։ Դրա համար էլ նրանք կռվում են։ Մենք արյուն թափեցինք, և մեր արյունը թափեցին։ Շատ որդիներ իրենց

պայծառ գլուխները դրեցին և այս և այն կողմից՝ նշածը եղած է։ Ներում եմ խնդրում իմ սպանված բարեկամներից և սպանված թշնամիներից։ Երբ թշնամին սպանվում է մարտում, նա դադարում է թշնամի լինելուց։ Եթե հիմա հաղթող էլ լինեի, միևնույն է պետք է ներում խնդրեի սպանվածներից։ Սակայն ճակատագիրը երես է դարձրել մեզնից, դրա համար ժողովուրդն էլ մեծամասնությամբ երես է դարձրել մեզնից։ Ու նույնիսկ հողը, որի վրա մենք ծնվել ենք ու մեծացել, չի ուզում, որ մնանք իր վրա։ Մենք տեղ չունենք այս հողի վրա։ Ու ներում էլ մենք չունենք։ Եթե ես հաղթող լինեի, չէի ների իմ թշնամիներին, ասում եմ սա ինչպես Աստծո առաջ։ Հիմա մենք մի ելք ունենք, գլուխ-ներս փախցնենք օտար-հեռավոր երկրներ։ Ահա այն մեծ լեռան ետև Թուրքիան է, մեզ կիպ կպած, իսկ քիչ հեռում, լեռնաշղթայի ետևում, որի գլխին ելնում է լուսինը՝ Իրանն է։ Ընտրեցեք, թե ով որտեղ է գնում։ Ես ինքս գնում եմ Թուրքիա, Ստամբուլ, այնտեղ բեռնակրություն կանեմ շոգենավերի վրա։ Մեզնից յուրաքանչյուրը պետք է հիմա որոշի, թե որտեղ է ապաստան գտնելու։ Մնացել ենք յոթ հոգի։ Եվ քիչ անց մենք իրար ետևից կդնանք օտար երկրներ, կցրվենք յոթ տարբեր կողմերի վրա։ Ցրիվ գալով աշխարհով մեկ, ամեն մեկս իր ցավը պիտի մինչև վերջ կրի։ Մենք այլևս երբեք չենք հանդիպի։ Սա վերջին օրն է, որ մենք, կենդանի մնացած յոթս, միասին ենք ու տեսնում և լսում ենք իրար։ Սկեք ուրեմն հրաժեշտ տանք իրար ու հրաժեշտ տանք մեր հողին, հրաժեշտ տանք վրացական աղուհացին, հրաժեշտ տանք մեր գինուն։ Այսպիսի գինու համ մենք այլևս չենք տեսնի։ Հրաժեշտ տալով, կցրվենք ու ամեն մեկը կդնա իր ճամփով։ Մենք ոչինչ չենք տանում մեզ հետ, նույնիսկ մի փոշեհատիկ վրացական հողից։ Հայրենիքն անկարելի է տանել, կարելի է տանել կարոտը, եթե հնարավոր լիներ հայրենիքը հետդ քարշ տալ մի պարկի նման, ապա այն կոպեկ չէր արժենա։ Համենք, ուրեմն, վերջին անգամ և վերջին անգամ երգենք մեր երգերը...

Գինին տիկի գինի էր, գյուղական, մեջը զուգակցվել էին երկրայինն ու երկնայինը։ Այն առաջ էր բերել քաջսիրտ մի դիմովություն և տխրություննն արտահայտելու ցանկություն,

հոգիների մեջ նորից պայքարում էին խինդն ու վիշտը։ Եվ երգը հորդաց ինքն իրեն, ինչպես հանկարծ քարերի միջից աղբյուր է բխում սարալանջին, և այն ամենը, ինչին դիպչեն նրա ջրերն իրենց ճամփին, պիտի ծաղկի ու շենանա։ Եվ դանդաղ սկսեցին նրանք իրենց հայրերի երգը, և դանդաղ ուժգնանում էր այն կոկորդային կարկաչով, ինչպես սարալանջին թափվող աղբյուր։ Յոթն էլ հիանալի էին երգում, քանի որ չերգող վրացի չկա, երգում էին ներդաշնակ, ամեն մեկն իր ձևով և իր ուժով, և երգը կրակվեց ինչպես խարույկը, որի շուրջ կանգնած էին նրանք։

Այդպես սկսվեց հրաժեշտի երգեցողությունը յոթի, ավելի ճիշտ՝ վեցի և յոթերորդի, որը, սակայն, ոչ մի րոպե չէր մոռանում այն, ինչ պետք է աներ։ Նրանցից ոչ մեկը, և առաջին հերթին Գուրամ Ջոխաձեն անպատիժ չպետք է հեռանային ու անցնեին սահմանը։ Նա, չեկիստը, այդ չէր կարող թույլ տալ. այդպիսին էր նրա ստացած հրամանը։ Եվ նա այդ հրամանը պետք է կատարեր։

Իսկ երգերը երգվում էին մեկը մյուսի ետևից, ու խմվում էր գինին, որ ինչքան խմում էիր, այնքան ավելի էիր ուզում խմել, ու այնքան ավելի էր այրվում հոգիդ նորից ու նորից ծարավի գինու և երգի։

Նրանք կանգնած էին շրջան կազմած, երբեմն ձեռներն իրար ուսերի դրած, երբեմն թույլ ցած թողած, իսկ երբ ուզում էին, որ իրենց լսի աստվածային ուժը, խորհրդավոր և անխափանելի, սակայն ամենատես և ամենիմաց, ձեռքերը երկինք էին կարկառում։ Ախր ինչպես կարելի է, եթե Աստված ամեն ինչ տեսնում է և ամեն ինչ գիտի, նա նրանց ինչո՞ւ է քշում իրենց հողից։ Եվ ինչո՞ւ է կյանքն այնպես ստեղծված, որ մարդիկ կռվում են իրար դեմ, որ արյուն է թափվում, արցունք թափվում, և ամեն մեկն իրեն համարում է իրավացի, իսկ մյուսին անիրավացի, և ո՞րն է ճշմարտությունը ու ով իրավունք ունի այն բարբառելու։ Որտե՞ղ է այն մարդարեն, որ նրանց պիտի դատի արդար... Այդ մասին չէ՞ր արդյոք երգվում հինավուրց այդ երգերի մեջ, մեղեդու մեջ լցված այդ վաղուց-վաղուց ապրած տառապանքների, հայրերի կողմից իմաստավորված որպես նախասկզբնական փորձ բարու և չարի, զգացմունքներով

հասկացված իրենց գեղեցկությամբ և հավերժությամբ, երգերի, որ պահպանվել էին ժողովրդի հիշողության մեջ։ Եվ այդ պատճառով այն յոթի շուրթերին երգից երգ էր ծնվում և նրանք իրենց շրջանը չէին բացում, միայն յոթերորդը, Սանդրոն, ժամանակ առ ժամանակ հեռանում էր շրջանից, որպեսզի փայտ բերի դնի խարույկի մեջ։ Ձուր չէր երևի (կյանքում ամեն ինչ իր պատճառն ունի), ձուր չէր նա անտառում մի հսկայական կույտ չոր ճյուղեր հավաքել, դրա շնորհիվ հիմա ինքն էր կրակի տերը։ Ու երգերն էլ նա երգում էր բոլորի նման ի սրտե. չէ որ այդ երգերը պատկանում էին բոլորին հավասարապես։ Չկան այնպիսի երգեր, որ երգեն միայն արքաներն, իսկ մյուսներին թույլ չտրվի երգել, ինչպես չկան երգեր, որ վայել լինեն միայն հասարակ ժողովրդին։ Նրդիր, ուրախացիր, տխրիր ու լացիր, պար եկ, քանի դեռ ողջ ես...

Ում ես սիրել, ում ես սրտի դողով սպասել հանդիպման, ով է քեզ դադարել սիրելուց, և ինչպես ես տառապել, ինչպես ես դու, հասկացված չլինելով, ուզել մեռնել, ուզել, որ երգը քո մահից առաջ լսի նա, ինչպես է մայրդ գուրգուրել քեզ մանուկ ժամանակդ, և որտեղ է հայրդ սպանվել, ինչպես են բարեկամներդ կռվել արյունալի մարտում, ինչ աստվածների առջև ես սիրտդ բացել մաքուր և ազնիվ պոռթկումով. և մտածել ես արդյոք, թե ինչ է մարդու ծնունդը, և մտածել ես, որ մահը միշտ քեզ հետ է, քանի դեռ շնչում ես, իսկ մեռնելուց հետո մահ չկա, սակայն կյանքը բարձր է մահից, կյանքից բարձր ոչինչ չկա աշխարհում, և ուստի խուսափիր մարդասպանությունից, սակայն եթե թշնամին եկել է քո երկիր, երկիրդ պաշտպանիր, և սիրեցյալիդ պատիվը պաշտպանիր, ինչպես երկիրդ հայրենի, ապրել ես արդյոք դու բաժանում, ու գիտես, որ բաժանումը ծանր է, ինչպես ծանր սարը մեջքիդ առնես, բայց առանց սիրեցյալի ոչինչ քեզ չի ուրախացնի. ոչ ծաղիկ, ոչ լույս, ոչ օրը գալիք. ինչի մասին ասես, որ չի երգվում այդ երգերում, բոլորը չի լինի պատմել...

Եվ այդ գիշեր չկային ավելի հարազատ ու մոտ մարդիկ, քան այդ յոթ վրացին, որ վշտալի ու ներշնչված երգում էին այդ անջատման պահին։ Երգերի տարերքը նրանց ավելի էր

մոտեցնում։ Ինչքան շատ էին սակայն նախնիները տառապել ու սերունդների համար հորինել անմահ ներդաշնակությամբ լի սրտալի խոսքեր։ Ինչպես թռիչքից կարելի է տարբերել թռչունին, այնպես էլ երգով վրացին վրացուն հեռվից-հեռու կիմանա ու կասի, թե ով է նա, որտեղացի, նրա հետ ինչ է պատահել, ինչ կա հոգում՝ ուրախ հալսանկյում է եղել, թե վիշտն է նրան տանջում...

Լուսինն արդեն բավական բարձրացել էր լեռների գլխին, լուսինը մեղմ լույս էր սփռել ամբողջ երկրի վրա. անտառը քամու շնչից կամացուկ ճոճում էր ծառերի մութ կատարները, գետը խուլ աղմկում էր փայլփլելով, թաց արծաթափայլին տալով գլաքարերի վրա, գիշերային թռչունները սովերների նման անձայն թռչում էին խարույկի մոտ երգողների գլխների վրայով, և նույնիսկ ձիերը, թամբված, համբերությամբ սպասում էին տերերին զգայուն ականջները խլշած, և նրանց աչքերի մեջ թրթռում էին կրակի ցոլքերը... Այդ ձիերին ճամփա էր սպասվում օտար երկրներ և այդ ժամը մոտենում էր...

Սակայն երգերը, թվում էր, վերջ չէին ունենալու, ամեն ինչի համար ասես երգել էր ուզում Գուրամ Ջոխաձեն. «Դեհ, երգեք, ախպեր տղերք, խմեք գինին, մենք այլևս չենք կարողանա իրար հետ շրջան բռնել, ու մեր ականջն այլևս չեն շոյի վրացական մեղեդիները...»։ Մեկ առանձին էին երգում, մեկ միասին, մեկ պարում էին սեփական երգի տակ ինքնամոռաց և կատաղի, ինչպես մահից առաջ, և նորից շրջան էին բռնում այն յոթը, ավելի ճիշտ վեցը և յոթերորդը։ Իսկ Սանդրոն շուտ-շուտ դուրս էր գալիս շրջանից՝ փայտ էր գցում կրակի մեջ ու թեժ-թեժ վառվում էր խարույկը։

Վճռեցին երգել վերջին երգը, հետո ևս մի երգ, ևս մեկը որպես հրաժեշտ, չէին կարողանում հանգստանալ և նորից շրջան էին բռնում, գլուխները կախ գցում և ախուր ու հզոր, գետնի տակից եկող թնդյունի նման ուժգնանում էր մեղեդին։ Իսկ Սանդրոն նորից հեռացավ փայտ բերելու, թեև խարույկը թեժ վառվում էր։ Դա ճշգրիտ հաշվարկ էր. հեռվից նա հստակ տեսնում էր վեցից յուրաքանչյուրին, իսկ

նրանց համար, որ երգում էին աչք կուրացնող խարույկի մոտ, ինքը վատ տեսանելի էր... Ծանր մաուզերն արդեն պատրաստ էր, հրահանը քաշած։ Եվ հասել էր հատուցման անխուսափելի ժամը, պատժի ժամը։ Արագ կրակող բազմալիցք զենքը բարձրացնելով, նա այն հենեց ձեռքին, որ ալինդ պահի և առաջին կրակոցով, որ մթության մեջ ճայթեց որոտի պես, տապալեց պարագլուխ Գուրամ Ջոխաձեին և տեղնուտեղը, դեռ երգի խոսքը բերաններին, իրար հետևից տապալեց բոլոր մյուսներին, այնպես որ նրանք չհասցրեցին էլ հասկանալ, թե ինչ կատարվեց։ Եվ այդպես, և նորից սպանությունների արատավոր շրջապտույտի մեջ, թափված արյան դիմաց նորից մի անգամ արյուն թափեց։

Այո, մարդկային հարաբերությունների օրենքները մաթեմատիկական հաշիվների չեն ենթարկվում, և այս իմաստով Երկիրը պտտվում է, ինչպես արյունոտ դրամաների կարուսել... Արդ մի՞թե այդ կարուսելը պիտի պտտվի մինչև աշխարհի վերջը, մինչ պտտվում է երկիրը Լուսատուի շուրջ։

Կրակոցը դիպուկ էր, և մեկը միայն ջղաձգվելով բարձրացավ արմունկներին, սակայն Սանդրոն մոտ վազեց և կրակեց նրա ծոծրակին։ Ձիերը վախից խրտնեցին, ապա նորից անշարժացան կապված տեղում...

Խարույկը դեռ վառվում էր, գետն աղմկում էր, անտառը և լեռները՝ ամենն իրենց տեղերում էին, և լուսինն էր իր տեղում խաղաղ բարձունքում, երգն էր միայն լռել, որ այնքան երկար հնչում էր այդ երեկո...

Սանդրոյի դեմքը գիշերվա մեջ սպիտակ էր կավճի նման, շունչը կտրվում էր, ձեռքը գցեց տիկին, որի հատակին դեռ գինի էր մնացել, ու վրան թափելով, խեղդվելով սկսեց խմել, որպեսզի գինով հանգցնի իր ներսի կրակը... Հետո շունչը ետ բերեց, հանգիստ անցավ սպանվածների կողքով, որ տարբեր դիրքերով ընկած էին խարույկի շուրջ։ Այնուհետև հանեց սպանվածների զենքերը, կախեց իրենց թամբակալերին, ձիերի գլուխներից հանեց սանձիկներն ու առասանները և ազատ արձակեց ձիերին։ Բայց թողեց յոթը ձին էլ, նաև իր աշխատ ձիուն... Ու նայում էր, ինչպես նրանք ազատության զգալով մեկը մյուսի հետևից իջան դեպի գետի ստորին հոսանքը, նախալեռնային գյուղերը, մարդկանց մոտ...

Չէ որ ձիերը գնում են միշտ այնտեղ, ուր մարդիկ են ապրում... Բայց ահա լռեց և պայտերի չխկչխկոցը, ու լուսնի աղոտ մշուշաքողի մեջ անհետացան նեթքևում շարան-շարան շարժվող ձիերի ուրվապատկերները...

Ամեն ինչ արված էր։ Սանդրոն մի անգամ էլ լուռ պտըտվեց տեղնուտեղը սպանված վեցի կողքով և, մի փոքր հեռու քաշվելով, մաուզերի փողը դրեց քունքին։ Ելա մի կրակոց հնչեց լեռներում կարճ արձագանքով։ Հիմա յոթերորդն էր, իր երգերը երգած...

Այսպես վերջացավ վրացական այն բալլադը։

Ես այն հանկարծ հիշեցի Թանգարանում լսելով քուլղարական երգիչներին, որ հին բուլղարական ժամերգություններ էին կատարում։ Այդ ժամերգություններն ստեղծել էին մարդիկ, որ դարերի խավարից վեհորեն ու նույնիսկ մոլեգին դիմում էին Ամենաբարձրյալին, իրենց իսկ կողմից ստեղծված, անիրականին, իրենց իսկ կողմից դարձված հոգևոր իրականություն, մարդկանց կողմից, համոզված, որ իրենք միայնակ են այս աշխարհում, և որ միայն երգերի ու աղոթքների մեջ կգտնեն Նրան։

Այս պատմությունը ես հիշեցի և վերապրեցի մի քանի վայրկյաններ միայն։ Մտքի արագության դիմաց լույսի արագությունը՝ ոչինչ է, միտքը, որ անցյալը գնալով, ժամանակի և տարածության մեջ կարող է ետ դառնալ ամեն ինչից արագ...

Հիմա ես հավատացի, որ այն տարիներին իսկապես էլ հենց այդպես կարող էր լինել։ «Վեցը և յոթերորդը» պատմվածքի վերջում հեղինակը գրում է, որ Սանդրոն, այսինքն յոթերորդը, հետամահու պարգևատրվում է ինչ-որ շքանշանով։

Սակայն եթե քաղաքացիական պատերազմների ողբերգությունները չդառնային ազգի ողբերգություններ, եթե դիմադրությունը մի մասի նոր մուտք գործող պատմությանը և անհամբերությունը մյուսների՝ այդ նույն պատմությունն արագացնելու պայքարում չփոխեին կյանքը դեռ արմատի վրա, ինչո՞ւ ալիտի այդ սարսափելի ակռաներն առաջանային

հեղափոխության հերկում և մի՞թե վրացական բալլադն այդպիսի ավարտ կունենար... Արժեքը գնով է իմացվում... Չէ որ նա, յոթերորդը, կարող էր դա իր հաղթանակը համարել, մնալ կենդանի, սակայն նա կենդանի չմնաց՝ դժվար բացատրելի պատճառներով։ Ամեն մեկը դա կարող է յուրովի բացատրել։ Իսկ ես այդ ժամին, երբ բուլղարական ժամերգությունների նավակում լսում էի բարձր հոգու սպիտակ առագաստների ներքո, որ հեռվում հավերժորեն ակոսում էր կյանքի բաց օվկիանոսը, մտածեցի, որ վրացական պատմության նման ավարտի պատճառը երգերն էին, որոնց մեջ էր ամփոփված հավատը բոլոր յոթի...

Երբ քեզ համար հայտնագործություն ես կատարում, քո մեջ ամեն ինչ համերաշխ է լինում և հոգիդ պայծառանում է։ Նայելով, թե ինչպիսի բարեպաշտությամբ, նվիրված ու ոգեշնչված են փայլում սրբազան հիմներ երգող սոֆիացի երգիչների աչքերը, ինչպես նրանց դեմքերը լարվածությունից թացացել են առատ քրտինքից, նախանձում էի, որ ես նրանց մեջ չեմ, որ ես նա չեմ, իմ երկվորյակը։

Եվ վրաս հորդած այդ պայծառացման ալիքի մեջ մտածեցի հանկարծ. որտեղի՞ց է այս ամենը մարդու մեջ. երաժշտություն, երգեր, աղոթքներ, ինչո՞ւ են դրանք անհրաժեշտ եղել և են։ Թերևս ենթագիտակցական զգացողությունից կյանքի հորձանուտում սեփական գոյության ողբերգականության, երբ ամեն ինչ գալիս և ամեն ինչ գնում է, նորից է գալիս և նորից գնում, ու մարդը հույս ունի այդ կերպ արտահայտելու, նկատելի դարձնելու, հավերժացնելու իրեն։ Չէ որ երբ ամեն ինչ վերջանա, երբ վրա հասնի միլիարդավոր տարիներ հետո այն գալիք աշխարհի վերջը և մեր մոլորակը մեռնի, մարի, ինչ-որ համաշխարհային գիտակցություն ուրիշ գալակտիկաներից եկած, մեծ լռության և ամայության մեջ պետք է անպայման լսի մեր երաժշտությունն ու երգը։ Մի բան, որ անջնջելիորեն դրված է մեր մեջ մեր ստեղծման օրից՝ ապրել մեռնելուց հետո։ Չէ որ այնքան կարևոր է մարդու համար, այնքան անհրաժեշտ վստահ լինել, որ այդ երկարացումն իր համար սկզբունքորեն հնարավոր է։ Հավանաբար մարդիկ կմտածեն իրենցից հետո թողնել այնպիսի մի հավերժական մեքենայական սարքավո-

րում, վոկալ-երաժշտական մշտական մի շարժիչ, դա կլինի անթոլոգիան բոլոր ժամանակների մարդկային մշակույթի մեջ ստեղծված լավագույնի, և երբ ես զմայլվում էի երգիչների երգով, հավատում էի, որ նրանք, ովքեր կլսեն այդ երգերն ու երաժշտությունը, կկարողանան հասկանալ, զգալ, թե ինչ հակասական էակներ են եղել, ինչ հանճարներ ու նահատակներ են եղել երկրում մարդիկ, միակ բանականության օժտվածները։

Կյանք, մահ, սեր, կարեկցանք և ներշնչանք՝ ամեն ինչ ասված կլինի երաժշտության մեջ, քանզի այդտեղ, երաժըշտության մեջ մենք կարողացել ենք հասնել առավելագույն ազատության, որի համար պայքարել ենք ողջ պատմության ընթացքում, սկսած մարդու գիտակցության առաջին նշույլներից, բայց որին հասնել մեզ հաջողվեց միայն երաժըշտության մեջ։ Եվ միայն երաժշտությունն է, որ բոլոր ժամանակների դոգմաները հաղթահարելով միշտ դեպի գալիքն է ուղղված... Ուստի նա հնարավորություն ունի ասել այն, ինչ մենք չենք կարող ասել...

Շուտ-շուտ նայելով ժամացույցին, սարսափով մտածում էի, որ կավարտվի համերգը իմ սիրած Պուշկինյան թանգարանում, և ես պիտի մեկնեմ Կազանսկի կայարան, բոլորովին այլ աշխարհ, և պիտի սուզվեմ բոլորովին այլ կյանքի մեջ, այն, որ դարերից ի վեր պատսպ է գալիս ունայնության և հարափոխության հորձանուտում, ուր աստվածային երգեր չեն հնչում, ուր դրանք ոչ մի արժեք չունեն... Բայց հենց այդ պատճառով ես պետք է լինեմ այնտեղ...

5

Կեսօրն անցավ, գնացքն արդեն շարժվում էր մերձվոլգյան վայրերով, և խցիկավորված վագոններում արդեն հաստատվել էր սեփական, հնարավորին չափ կայուն ճանապարհային կենցաղ՝ երկար օրերի ուղևորության հաշվով, իսկ ընդհանուր վագոնում, որով մեկնում էր Աբդիխ Կալիստրատովը, կարելի է ասել իսկական կոմունալ կյանք էր։ Ծարբեր տեսակի մարդիկ էին մեկնում և ամեն մեկն իր պատճառն ուներ այդ ուղևորության։ Ու դա միանգամայն

բնական էր. մարդկանց պետք է, մարդիկ մեկնում են: Եվ դրանց մեջ էին անաշայի բանբերները, Աբգիա Կալիստրատովի ուղեկիցները: Նա գլխի էր ընկնում, որ այդ գնացքով ամենաքիչը մի տասը բանբեր է մեկնում, սակայն ինքը առայժմ միայն երկուսին էր ճանաչում, նրանց, որոնց նրան կցել էր կայսրանում ճարպիկ բեռնակիր Ուտյուգը: Դրանք մուրմանսկցի տիպերն էին՝ մեկը ավելի մեծը՝ Պետրուխան, մի քսան տարեկան կլիներ, իսկ մյուսը դեռ բոլորովին տղեկ էր, հազիվ տասնվեց տարեկան, անունը Լյոնյա, բայց այդ Լյոնյան էլ անաշա բերելու էր գնում երկրորդ անգամ: Ուստի իրեն փորձված գայլ էր համարում ու նույնիսկ հպարտանում էր դրանով: Մուրմանսկցիներն սկզբում իրենց զուսպ էին պահում, թեև գիտեին որ Սյդիան, Ավդյան, ինչպես սկսեցին նրան կոչել հյուսիսային ձևով, իրենց մարդն է, որ բանբերությունն սկսում է վաստահելի մարդկանց հանձնարարականով: Գործի մասին ակնարկներով խոսել ստիպված էին հիմնականում վագոնի փակ հարթակում, ծխելու ժամանակ: Մարդիկ հիմա արդեն վագոնում ծխողներ չէին հանդուրժում, այդպիսի խցկվածության և առանց այդ էլ ծանր օդի մեջ: Ահա և դուրս էին գալիս փակ հարթակ խոսելու և ծխելու: Այն, որ Աբգիան ծխում է ոչ այն ձևով, ինչ իրենց կարգի մարդիկ, առաջինը նկատեց Պետրուխան.

— Լսիր, Ավդյա, դու կյանքումդ հեչ չե՞ս ծխել... Ոնց որ կնիկ, վախենո՞ւմ ես ներս քաշես:

Ստիպված եղավ ասել.

— Ծխել եմ մի ժամանակ, բայց թողել եմ...

— Իսկույն երևաց, իսկ ես փոքրուց սովոր եմ: Բա մեր Լյոնկան՝ այ իսկական ծխող, հալևորի պես փստացնում է, ու խմելու հետ էլ գլուխ ունի: Հիմի, դե գիտենք, չի կարելի, բայց հետո տեղը կհանենք:

— Ախր նա դեռ փոքր է:

— Ո՞վ, Լյոնկա՞ն: Պստիկ է, բայց ճստիկ է: Դու ես, որ երևում է առաջին անգամ ես մեծ գործի գնում, սա չիմանաս հեշտ ու հանգիստ բան է: Իսկ նա արդեն բոլոր ճամփեքն ու հնարքները գիտի, իմացած լինես:

— Ու խոտ էլ է օգտագործում, թե՞ մենակ բանբերություն է անում,— հետաքրքրվեց Աբգիան:

— Լյոնկա՞ն։ Բա ոնց չի քաշի։ Հիմի բոլորն են քաշում։ Բայց դե քաշելն էլ պիտի խելքով անես,— սկսեց դատել Պետրուխան։— Էնպեսները կան, որ հուպ են տալիս խենթանալու չափ։ Դրանք բանի պետք չեն։ Դրանք փչացած են։ Ամբողջ գործը կփչացնեն։ Խոտը, դա գիտես ինչ է, դա ուրախություն է տալիս մարդուն, հոգու մեջ դրախտ է բացվում։

— Իսկ ուրախությունն ինչի՞ց է։

— Նրանից, որ, ասենք, մի պստիկ առու է հոսում, դրա վրայով թռչելը հեչ բան է, իսկ քեզ համար նա գետ է, օվկիանոս, երանություն։ Ահա քեզ ուրախություն։ Իսկ ուրախությունն ինչ բան է, որտեղի՞ց գտնես ուրախություն։ Դեհ, օրինակի համար, հաց կառնես, հագուստ կառնես, կոշիկն էլ կառնես, օղին էլ փողով են խմում։ Իսկ խոտից, չնայած շատ փող ես տալիս, հատուկ հաճույք կա. ոնց որ երազի մեջ լինես, չորս կողմդ ամեն ինչ ոնց որ կինոյում։ Բայց տարբերություն կա, կինոն հարյուրավոր, նույնիսկ հազարավոր աչքեր են նայում, իսկ էստեղ ինքդ ես քեզ հետ, ոչ մեկը գործ չունի, իսկ թե մեկն էլ քիթը խոթի, կարելի է դընչին տալ, թե քո գործը չի, ոնց ուզում եմ, էնպես եմ ապրում, ուրիշի բոստան մի մտի։ Այ թե ոնց է լինում։— Եվ, լռելով, ակնարկեց լպիրշորեն, ծակող աչքերը կկոցելով.— Միգուցե, Ավդյա, կփորձես խոտը, կայֆ կանես քեֆիդ, կարող եմ տալ անձնական պաշարիցս...

— Չէ, ես իմից կփորձեմ,— հրաժարվեց Աբգիան,— այ որ իմ փայը հավաքեմ, դա ուրիշ է։

— Դա էլ ես ճիշտ ասում,— համաձայնվեց Պետրուխան,— քոնն ուրիշ է։— Մի քիչ լռեց ու որոշեց միտքը շարունակել,— մեր գործի մեջ, Ավդյա, գլխավորն զգուշությունն է, նրա համար, որ մեր չորս կողմը թշնամիներ են. ամեն կնիկ, ամեն մեղալ կպցրած վետերան, ամեն թոշակառու, մյուսների մասին էլ չասած։ Բոլորն էնպես են ուզում, որ մեզ դատեն ու քշեն հեռու աքսորները, աչքերից հեռու։ Դրա համար էլ մենք էսպես կարգ ունենք. քեզ էնպես պահի, ոնց որ ոչ ոք ես, խեղճուկրակի մեկը, մինչև փողիդ տերը դառնաս։ Իսկ հետո, հերներն անիծած։ Փողը որ գրպա-

նումդ լինի, նրանց, ասել էի հա... Իսկ թե բան է քաշվես, Ավդյա, ինչ էլ անեն, մեռնես էլ քոնոնց չծախես։ Դա օրենք է։ Իսկ որ չդիմանաս, իմացածդ դուրս տաս, վերջ, շան պես կատակացնեն։ Թեկուզ բանտում-աքսորում, մեկ է, ձեռնեռից չես պրծնի։ Սա հանաք բան չէ. խաղ չկարծես...

Աստիճանաբար պարզվեց, որ Պետրոխան ինչ-որ զանազան շինարարությունների մեջ աշխատում է, բայց միշտ ամառը գալուն պես թողնում է գործն ու մեկնում մերձմոլլյունկումյան վայրեր, ուր գիտեր անաշխով հարուստ տեղերը։ Ասում էր, այնպիսի թփուտներ կան, հատկապես ձորակներում, որ ամբողջ աշխարհին կհերիքի։ Տանը միայն ծեր մայր ուներ, հարբեցող։ Եղբայրները գնացել էին ամեն մեկը մի կողմի վրա, Անդրբևեռ, գազամուղի վրա աշխատելու։ Փող են աշխատում, ինչպես ինքն ասաց, խեղճուկրակները, մեկ ցրտի մեջ սառելով, մեկ կեղտ ու ապականության մեջ։ Իսկ ինքը մի զբոսանք-ուղևորություն է անում շեղաչքանիների կողմերը՝ Ասիա, ու հետո ամբողջ տարին կարող ես քեզ համար առաստաղին թքելով ապրել, մեննակ թուքդ հերիքի։ Իսկ նրա զուգընկեր Լյոնյայի ընտանեկան գործերն ավելի վատ են։ Մայր չի տեսել։ Մանկատուն են տարել, իսկ երբ երեք տարեկան էր, մուրմանսկցի հեռավոր նավարկության մի կապիտան, որ գլխավորապես Կուբա էր գնում, հայտնվում է կնոջ հետ ու օրենքով, կարդով որդեգրում է տղային։ Նրանք երեխա չունեին։ Բայց հինգ տարի հետո ամեն ինչ տակնուվրա է լինում։ Կապիտանի կինն իր սիրածի հետ փախչում է Լենինգրադ։ Կապիտանն սկսում է խմել, անցնում է նավահանգստային աշխատանքների։ Լյոնկան դպրոցում սովորում էր մի կերպ, ապրում էր մեկ կապիտանի մորաքրոջ, մեկ եղբոր տանը, որ հաշվապահ էր, իսկ դրա կինն էլ մի իսկական հրեշ էր, ու այդպես էլ, մեկը մեկի վրա, մեկը մեկի վրա, տղան դառնում է շլսող, չենթարկվող, գազազում է։ Ընդմիշտ հեռանում է կապիտանից։ Տեղավորվում է մի պատերազմի հաշմանդամի մոտ, նախկին սուզանավորդի, միայնակ, բարի մարդու մոտ, բայց որը ոչ մի ազդեցություն չուներ Լյոնկայի վրա։ Տղան ապրում էր խելքին փչածի պես։ Ուզում էր թողնել մի կեղտի վրա գնալ, գնում էր։ Ուզում էր վերադառնալ՝ գալիս էր։ Եվ ահա

արդեն երկրորդ անգամն էր գնում անաշա բերելու, ու ինքն էլ երևում է, սովորել է այդ թունավոր խոտին, իսկ չէ որ դեռ տասնվեց տարեկան էր, ամբողջ կյանքն առջեւում էր...

Աբդիա Կալիստրատովը մեծ ջանք թափեց, որ չխորանա այդ բոլոր աղաղակող մանրամասնությունների մեջ, քանի որ խնդիր էր դրել իր առջև հասկանալու այդ երևույթի բնույթը, որն իր ցանցի մեջ էր առնում շարունակ նորանոր երիտասարդների: Եվ որքան ավելի էր խորամուխ լինում այդ տխուր պատմությունների մեջ, այնքան ավելի համոզվում էր, որ այդ ամենը նմանվում է ստորջրյա հոսանքի՝ կյանքի ծովի մակերևույթի խաբուսիկ հանդարտության ժամանակ, և որ արատի հակում ծնող մասնավոր և անհատական պատճառներից զատ գոյություն ունեն նաև հասարակական պատճառներ, որոնք հնարավոր են դարձնում երիտասարդների մեջ այս կարգի հիվանդությունների առաջացումը: Այդ պատճառներն առաջին հայացքից դժվար էր նկատել, դրանք նման էին իրար հետ հաղորդակցվող արյունատար անոթների, որ հիվանդությունը տարածում են ամբողջ օրգանիզմում: Ինչքան էլ փորձես խորանալ այդ պատճառների մեջ անհատականի մակարդակով, քիչ բանի կհասնես, կամ էլ ոչնչի չես հասնի: Այս հարցում անհրաժեշտ է ամենաքիչը մի մեծ սոցիոլոգիական տրակտատ գրել, իսկ ավելի լավ է բանավեճ բացել՝ մամուլով և հեռուստատեսությամբ: Մի տես ի՞նչ ուզեց, կարծես այս աշխարհից չլինի... Բայց նա հենց այդպիսին էր որ կար, եթե հաշվի առնենք նրա սեմինարիական սահմանափակությունը և առօրյա կյանքը չիմանալը: Հետո նա կհամոզվի. ոչ ոք շահագրգռված չի, որ նման բաների մասին բաց խոսվի, և դա բացատրվում էր նախ և առաջ իբր մեր հասարակության հեղինակությունը չցցելու նկատառումներով, թեև ըստ էության դա նախ և առաջ սեփական դիրքը ավելորդ անգամ վտանգի չենթարկելու անհանգստությունից էր, որ կախված էր ուրիշ անձանց կարծիքից ու տրամադրություններից: Երևում է, հասարակության ինչ-որ մասի դժբախտության մասին տագնապ բարձրացնելու համար, ամեն ինչից բացի, հարկավոր է նախ չվախենալ, թե գա կարող է վնասել քեզ: Ի բարեբախտություն, թե դըժ-

բախտություն չուր, Աբդիա Կալիստրատովն ազատ էր այդպիսի թաքուն սարսափի ճնշումից։ Սակայն բոլոր այս կենցաղային հայտնագործությունները դեռ պետք է կատարվեին։ Նա նոր էր ոտք դրել այդ ճամփան, նոր էր առնչվում իրականության այն կողմի հետ, որը մոլորված հոգիների հանդեպ իր կարեկցանքից դրդված փափագում էր հասկանալ սեփական փորձով, որպեսզի օգնի այդ մարդկանցից գոնե մանր, օգնի ոչ թե բարոյախոսությամբ, ոչ թե կշտամբանքներով և դատապարտությամբ, այլ սեփական մասնակցությամբ և սեփական օրինակով ապացուցի նրանց, որ այդ կործանիչ վիճակից հնարավոր է դուրս գալ միայն սեփական վերածնունդով և որ այդ առումով նրանցից յուրաքանչյուրը պետք է հեղափոխություն կատարի գոնե իր հոգու մասշտաբով։ Եվ դարձյալ նա չէր կարող պատկերացնել, թե որքան թանկ պիտի հատուցի այդ բարեհոգի գաղափարների համար։

Ջահել էր։ Բայց ջահելությո՞ւնն էր միայն... Չէ որ երբ սեմինարիայում ուսումնասիրում էր Քրիստոսի պատմությունը, նրա տառապանքներն իր վրա էր առնում այն աստիճանի, որ երբ կարդաց, թե ինչպես Հուդան Նրան մատնեց Գեթսեմանիի այգում, լաց եղավ հոնգուր-հոնգուր։ Ո, որպիսի աշխարհակործանում էր տեսնում նա այն բանում, որ Քրիստոսին խաչեցին այն շոգ օրը, այն Լերկ սարում։ Բայց չմտածեց այն ժամանակ անփորձ պատանին. իսկ եթե աշխարհում գոյություն ունի օրինաչափություն, ըստ որի աշխարհն իր որդիներին ամենից ավելի պատժում է հոգու ամենամաքուր գաղափարների ու մղումների համա՞ր։ Միգուցե արժեր մտածել. գուցե հենց դա՞ է նման գաղափարների գոյության ձևն ու հաղթանակելու միջոցը։ Եվ եթե հենց այդպե՞ս է։ Եթե հենց դա՞ է այդպիսի հաղթանակի արժեքը։

Թեև մի անգամ, դեռ սկզբում այդ մասին խոսել էին Վիկտոր Գորոդեցկու հետ, որին չնայած տարիքների փոքր տարբերության, Աբդիան դիմում էր հայրանունով՝ Նիկիֆորովիչ։ Իսկ խոսակցությունն սկսվեց այն բանից առաջ, երբ Աբդիան արդեն վճռել էր հեռանալ հոգևոր սեմինարիայից։

— Ի՞նչ ասեմ։ Այսպես, ուրեմն, հայր-պատանյակ, Աբբա պիա, մի նեղացիր, որ երբեմն քեզ հայր-պատանյակ եմ կոչում, բայց զուգակցությունը շատ է հաջող,— խորհում էր Դորոթեցկին, երբ թեյ էին խմում նրա տանը։— Դու կհեռանաս սեմինարիայից, իսկ ավելի շուտ քեզ կհեռացնեն եկեղեցուց, համոզված եմ, քո ուսուցիչները թույլ չեն տա, որ դու իրենցից հեռանաս, նրանց մարտահրավեր նետելով... Մանավանդ որ դու հեռանում ես եկեղեցու համար հազվագյուտ, այսպես ասած, և շատ ուշաճ պատճառով, ոչ թե նրա համար, որ որևէ անարդարություն ես զգացել քո հանդեպ, ոչ թե վիրավորանքի, ճնշվելու պատճառով և ոչ էլ որևէ եկեղեցականի հետ կռվելու համար, ոչ, հայր-պատանյակ, եկեղեցին քո հանդեպ ոչ մի մեղք չունի... Դու հեռանում ես, այսպես ասած, զուտ գաղափարական նկատառումներով։

— Այո, Վիկտոր Նիկիֆորովիչ, այդպես է։ Ուղղակի պատճառներ չկան, բայց դա շատ հասարակ բան կլիներ՝ վիրավորանք։ Խնդիրը ես չեմ ամենևին, այլ այն, որ հնավանդ կրոններն այսօր անհուսալի կերպով հնացել են, չի կարելի լրջորեն խոսել մի կրոնի մասին, որը նախանշված է եղել արթնացող զանգվածների տոհմային գիտակցության համար։ Ինքներդ էլ հասկանում եք, եթե պատմությունը կարողանա առաջ քաշել նոր կենտրոնական կերպար համաշխարհային հավատների հորիզոնում՝ Աստված-ժամանակակից կերպար նոր, աշխարհի այսօրվա պահանջներին համապատասխանող աստվածային գաղափարներով, դեռ կարելի կլինի հուսալ, որ հավատի դավանանքն ինչ-որ արժեք կունենա։ Այս է իմ հեռանալու պատճառը։

— Հասկանում եմ, հասկանում եմ,— ներողամտորեն ժպտաց Դորոթեցկին և թեյը խմելով շարունակեց.— Դա կարծես ցնցող տպավորություն է գործում։ Բայց մինչ քո պատմությանն անդրադառնալը, պիտի ասեմ քեզ, որ ահա նրսատած թեյ եմ խմում և իսկապես ուրախ եմ, որ ես և դու միջին դարերում չենք ապրում։ Ախր այդպիսի չլսված-չտեսնված հերետիկոսության համար կաթոլիկական Եվրոպայում ուր էլ լիներ՝ Իսպանիայում, թե Իտալիայում, միայն այն պատճառով, որ դու համարձակվել ես ասել, իսկ ես անդ

դգուշություն եմ ունեցել լսելու քեզ, երկուսիս էլ, հայր-պատանյակ, նախ կքառատեին, հետո կայրեին խարույկի վրա, հետո մեր աճյունը փոշի կդարձնեին և քամուն կտային։ Օ՜հ, ինչ կատաղի դատաստան կտեսներ մեզ հետ ինկվիզիցիան, և ինչ հաճույքով։ Եթե սուրբ ինկվիզիցիան մի դժբախտ այրեց միայն նրա համար, որ նրա դեմ մատնության մեջ ասված էր, որ նա իբր իրեն թույլ է տվել ժպտալու կուսական հղիության հիշատակման ժամանակ, ապա պետք է մտածել...

— Վիկտոր Նիկիֆորովիչ, ներիր, բայց ստիպված եմ քեզ ընդհատել,— քմծիծաղեց Աբդիան սեմինարիական սև սերթուկի կոճակները կոճկելով։— Հասկանում եմ, որ քեզ բավական զվարճացրի, բայց կատակը մի կողմ, եթե մեր ժամանակներում գոյություն ունենար ինկվիզիցիա և եթե վաղն ինձ սպա՛նար խարույկի վրա ողջակիզվելու վտանգ իմ հերետիկոսության համար, ես չէի հրաժարվի իմ ոչ մի խոսքից։

— Հավատում եմ,— համաձայնելով գլխով արեց Գորոդեցկին։

— Ես այդ գաղափարին եմ հասել ոչ պատահական։ Ես գրան հասել եմ ուսումնասիրելով քրիստոնեության պատմությունը և հետևելով ժամանակակից կյանքին։ Ես պիտի որոնեմ Աստծու նոր, ժամանակակից ձև, եթե անգամ ինձ երբեք չհաջողվի այն գտնել...

— Լավ է, որ պատմությունը հիշեցիր,— ընդհատեց նրան Գորոդեցկին։— Հիմա լսիր ինձ։ Նոր Աստծու քո գաղափարը՝ վերացական տեսություն է, թեև ինչ-որ բանով չափազանց արդիական, եթե արտահայտվելու լիներ մեր ինտելեկտուալների լեզվով։ Դա քո ենթադրություններն են, ինչպես առաջ ասում էին, քո հաշվումները։ Դու ծրագրում ես Աստված, իսկ Աստված չի կարող մտահայեցական հորինվել, որքան էլ հրապուրիչ ու համոզիչ այն երևա։ Հասկանում ես, եթե Քրիստոսը չհաչվեր, նա Աստված չէր լինի։ Արդարության համընդհանուր տիրապետության գաղափարով ոգեշնչված այդ բացառիկ անձնավորությունը նախ գազանաբար սպանվեց մարդկանց կողմից, հետո երկինք հանվեց, գովերգվեց, ողբի արժանացավ և տառապանքով

ձեռք բերվեց ի վերջո։ Այստեղ զուգակցվում է պաշտամունքն ու ինքնաճեզադրումը, զղջումն ու հույսը, պատիժն ու ողորմածությունը՝ և մարդասիրությունը։ Այլ խնդիր է, որ հետո այդ ամենն այլասերվեց և հարմարեցվեց որոշակի ուժերի որոշակի շահերին, դեհ, այդպիսին է ընդհանրական բոլոր գաղափարների վերջը։ Հիմա մտածիր, որն է ավելի ուժեղ, ավելի հզոր և հրապուրիչ, որն է ավելի մոտ՝ Աստված նահատակը, որ հանուն գաղափարի կառափնարան է ելել խաչվելու, թե կատարյալ գերագույն էակը, թեկուզ ժամանակից մտածող, այդ վերացական իդեալը։

— Ես մտածել եմ այդ մասին, Վիկտոր Նիկիֆորովիչ։ Դուք իրավացի եք։ Բայց չեմ կարող հրաժարվել այն մըտքից, որ ժամանակն է վերանայելու Աստծո մասին նախկին պատկերացումը, որքան էլ այն հաստատուն լինի, երբ վաղուց արդեն չի համապատասխանում աշխարհի նոր ճանաչողությանը։ Չէ որ դա ակնհայտ է։ Զվիճենք։ Շատ հնարավոր է, որ ես ելնում եմ վերացական հասկացություններից, որոնում եմ այն, ինչ որոնելու ենթակա չէ։ Ինչ կա որ։ Թող իմ մտքերը անհամատեղելի լինեն եկեղեցու կանոններով սահմանված աստվածաբանությանը։ Ես ինձ փոխել չեմ կարող։ Երջանիկ կլինեի, եթե որևէ մեկը կարողանար համոզմունքս փոխել։

Դորոդեցկին հասկանալով ձեռքերը տարածեց.

— Ես քեզ հասկանում եմ, հայր Աբդիա։ Բայց այդուհանդերձ պետք է նախազգուշացնեմ քեզ. աստվածախնդրությունը եկեղեցականների աչքում ամենասարսափելի հանցանքն է եկեղեցու հանդեպ, դա նույնն է, թե դու վճռեիր գլխի վրա շուռ տալ աշխարհը։

— Գիտեմ,— հանգիստ ասաց Աբդիան։

— Բայց աստվածախնդրությունն է՛լ ավելի չեն սիրում հասարակության մեջ։ Այդ մասին մտածե՛լ ես։

— Դա անհասկանալի է,— զարմացավ Աբդիան։

— Կապրես՝ կտեսնես...

— Բայց ինչպե՞ս։ Այս հարցում նրանց տեսակետները համընկնո՞ւմ են։

— Ոչ թե համընկնում են, այլ դա ոչ մեկին պետք չէ...

— Տարօրինակ է, պարզվում է ոչ մեկին պետք չէ...

— Կարծում եմ, քեզ համար դժվար է լինելու, հայր Աբդիա։ Քեզ չեմ նախանձում, բայց և ետ չեմ պահում,— ասաց վերջում Գորոդեցկին։

Նա իրավացի էր։ Ամեն ինչում իրավացի էր։ Որոշ ժամանակ անց Աբդիա Կալիստրատովը հնարավորություն ունեցավ համոզվելու դրանում։

Այդ փոքրիկ պատմությունը տեղի ունեցավ նրան սեմինարիայից հեռացնելուց առաջ։ Այդ օրը նրանց քաղաք եկավ կարևոր մի անձնավորություն, որին մեծ հարգանքով կայարանում դիմավորեց ռեկտորատը, Մոսկվայի հայրապետության Քահանայապետ Դիմիտրին։ Սեմինարիստների միջավայրում նրան այդպես էլ կոչում էին՝ հայր Կոորդինատոր*։ Միջին տարիքի բարետես և խելամիտ մի մարդ, որպիսին և պետք է լինի նա իբրև կատարելատիպ, հայր Կոորդինատորը այս անգամ եկել էր արտակարգ իրադարձության առիթով, որի մեղավորը, լավագույն սեմինարիստներից մեկը՝ Աբդիա Կալիստրատովը, կանգնել էր հերետիկոսության՝ սուրբ գրքի բացահայտ վերանայման ուղու վրա, առաջ քաշելով Աստված-ժամանակակից կասկածելի գաղափարը։ Իհարկե, հայր Կոորդինատորը ժամանել էր որպես խրատող և հաշտարար, այն նպատակով, որ իր հեղինակության ուժով կարողանա եկեղեցու գիրկը վերադարձնել մոլորված պատանուն, առանց գժտությունը եկեղեցու պատերից դուրս հանելու։ Այս առումով եկեղեցին շատ չի տարբերվում բարձրաշխարհիկ ինստիտուտներից, որոնց համար համազգեստի պատիվը վեր է ամեն ինչից։ Եթե Աբդիա Կալիստրատովի փոխարեն կյանքի հարցերում ավելի փորձված մեկը լիներ, այդպես էլ կհասկանար Կոորդինատորի հայրական մտադրությունը, բայց Աբդիան միանգամայն անկեղծորեն չհասկացավ նշանավոր եկեղեցականին, որով խիստ բարդացրեց նրա հաշիվները։

Աբդիան հայր Կոորդինատորի մոտ զրույցի հրավիրվեց օրվա կեսին և նրա մոտ մնաց մի երեք ժամ, ոչ պակաս։ Հայր Կոորդինատորը նախ առաջարկեց նրան միասին ազո-

* Կարգավորիչ (լատ.)։

թել ակադեմիական եկեղեցու զոհասեղանի մոտ, որ սարքված էր գլխավոր շենքի սրահներից մեկում։

— Որդիս, դու անշուշտ կռահում ես, որ հետդ լուրջ խոսակցություն ունեմ, սակայն չշտապենք, բարի եղիր ինձ առաջնորդիր դեպի Աստուծո զոհասեղան,— խնդրեց նա Աբդիայից, նայելով նրան դուրս սրծած կարմրավուն աչքերով,— զղում եմ, որ մենք նախ պետք է աղոթենք միասին։

— Փրկյա ձեզ, Տեր, հայրապետ,— ասաց Աբդիան,— ես պատրաստ եմ։ Անձնապես ինձ համար աղոթքը ձայնակարգություն է Ամենաբարձրյալի մասին մշտական խորհրդածություններին։ Ինձ թվում է, Աստված — ժամանակակցի միտքը երբեք ինձ չի լքում։

— Այդքան չշտապենք, որդիս,— զուսպ ասաց Կոորդինատորը, բազկաթոռից ելնելով։ Նա նույնիսկ չսելու տվից Աստված—ժամանակակցի մասին, ձայնակարգության մասին ասվածը, բազմափորձ կղերականը չուզեց հենց սկզբից խոսակցությանը սուր բնույթ տալ։— Աղոթենք։ Պետք է ասեմ քեզ,— շարունակեց նա,— ինչքան երկար եմ ապրում աշխարհում, այնքան ավելի եմ համոզվում Աստուծո բարեգթությանը, նրա ողորմածությանը մեր հանդեպ։ Ով երջանիկ եմ, որ մեզ շնորհված է այդ զգալ ինքնամոռաց աղոթքում։ Անսահման է Աստուծո ամենաներումը։ Հիրավի Ամենաբարձրյալը անսահման է մեր հանդեպ իր սիրո մեջ։ Միդուցե մեր աղոթքները նրա համար սոսկ անլուրջ թոթովանք են, սակայն դրանցում է մեր անքակտելի միասնությունն Աստուծո հետ։

— Դուք իրավացի եք, վեհապետ,— ասաց Աբդիան՝ դռան մեջ կանգնած։

Հետո, քանի որ դեռ խակ էր ու անհամբեր, չդիմացավ զրույցի մեջ հավուր պատշաճի դադար պահելու և անմիջապես վրա տվեց ասելիքը։

— Համարձակվում եմ նկատել, սակայն, որ Աստված մեր հասկացողության մեջ անսահման է, իսկ քանի որ միտքը բնության մեջ զարգանում է իմացությունից իմացություն, այստեղից եզրակացություն է բխում՝ Աստված նույնպես պետք է զարգանալու հատկություն ունենա։ Դուք ի՞նչ եք կարծում, վեհապետ։

Այդտեղ արդեն հայր Կոորդինատորը չկարողացավ խուսափել պատասխանից։

— Սակայն դու տաքարյուն ես, որդիս,— խոսեց նա՝ խուլ հազալով և ուղղելով վրան հաստ զգեստը։— Աստծու մասին վայել չէ այդպես դատել, թեկուզ դա չհեղութիւնից լինի։ Մեզ տրված չէ իմանալ մշտնջենական Արարչին։ Նա գոյություն ունի մեզնից դուրս։ Նույնիսկ մատերիալիզմն ընդունում է, որ աշխարհը գոյություն ունի մեր գիտակցությունից դուրս։ Իսկ Աստված՝ առավել ևս։

— Ներեցեք, վեհապետ, բայց լավ է իրերը կոչել իրենց անուններով։ Մեր գիտակցությունից դուրս Աստված չկա։

— Եվ դու համոզվա՞ծ ես դրանում։

— Այո, այդ պատճառով էլ ասում եմ։

— Էհ, եկեք միանգամից բոլոր եզրակացությունները չանենք։ Ենթադրենք, թե մի փոքրիկ ուսումնական բանավեճ պիտի ունենանք։ Դրան կանդրադառնանք աղոթքից հետո։ Իսկ առայժմ, բարի եղիր, ուղեկցիր ինձ տաճար։

Այն փաստն արդեն, որ հայր Կոորդինատորը Աբդիային արժանացրեց իր հետ միասին ակադեմիական եկեղեցում աղոթելու պատվին, ըստ տրամաբանության պետք է հասկացվեր որպես բարյացակամության նշան, և սեմինարիստը, որին սպառնում էր հեռացում, պետք է որ օգտվեր իր համար այդ բարենպաստ վիճակից։

Նրանք քայլում էին միջանցքով, առջևից հայր Կոորդինատորը, կողքից, կես քայլ ետ՝ Աբդիա Կալֆստրատովը։ Նայելով վեհապետի ուղիղ կեցվածքին, նրա վստահ քայլքին, սև, լայն, մինչև գետին հասնող փարաջային, որ նրան առանձնահատուկ վեհություն էր տալիս, Աբդիան նրա մեջ զգաց դարերով գոյացած այն ուժը, որը յուրաքանչյուր մարդկային գործում, պահպանելով հավատի կանոնները, նախ և առաջ սեփական շահերն է հետապնդում։ Հենց դրա, այդ հակադիր ուժի հետ նա պետք է բախվեր կյանքում ճշմարտություն որոնելու ճանապարհին։ Սակայն առայժմ երկուսն էլ գնում էին դեպի Նա, որին հավատում էին, ամեն մեկը յուրովի, և որի անունով պարտավոր էին ներշնչելու ուրիշ մարդկանց համընդհանուր գաղափարներ աշխարհի, և մարդու տեղի

մասին աշխարհում։ Եվ մեկը, և մյուսը ապավինում էին Նրան, քանզի Նա ամենագետ էր և ամենաողորմած։ Եվ այդպես, նրանք գնում էին...

Ակադեմիական եկեղեցին այդ ժամին դատարկ էր, ուստի այնքան էլ փոքր չթվաց։ Մնացյալում դա սովորական եկեղեցի էր, թերևս միայն կիսամութ բեմի խորքում Քրիստոսի դեմքը՝ մուգ մազերով խիստ եզերված, սևեռուն, խստապահանջ հայացքով չափից ավելի էր սպիտակին տալիս բեմի փայլատ լուսավորումով զատված։

Նրան էին ուղղել իրենց հայացքներն ու մտքերը երկու ծնկաչոք մարդիկ, հովիվն ու երիտասարդ ուսանողը, որ դեռ չէր զրկվել սեփական դատողությունից։ Նրանցից յուրաքանչյուրը եկել էր այստեղ իր կարծես անհատական խոսակցությունն ունենալու Նրա հետ, քանզի Նա կարող էր միաժամանակյա խոսակցություն վարել օրվա բոլոր ժամերին բոլոր իրեն դիմել ցանկացողների հետ, ինչքան էլ որ նրանք լինեին, փաստորեն ողջ մարդկության հետ միաժամանակ երկրի ամբողջ տարածքի ամեն կետում։ Դրանում էր հենց Նրա ամենահասությունը։

Եվ այս անգամ էլ ամեն ինչ ճիշտ այդպես էր. աղոթք ասելով յուրաքանչյուրն ուզում էր դրա մեջ արտահայտել և իր տագնապները, իր մտահոգությունները և սեփական արարքների արդարացումը, որ բխում էին Նրա հանդեպ հավատից, և յուրաքանչյուրը փորձում էր իրեն համեմատել տիեզերքի հետ, որում նա այնքան չնչին տեղ էր գրավում, այնքան չնչին ժամկետով, և յուրաքանչյուրն իրեն խաչակնքելով, շնորհակալ էր լինում Արարչից նրա համար, որ իրեն բախտ էր վիճակվել աշխարհ գալու, և յուրաքանչյուրը խնդրում էր, որ երբ վրա հասնի իր վերջին օրերից վերջինը, թույլ տրվի իրեն մահանալ Նրա անունը շուրթերին...

Հետո նրանք նորից վերադարձան առանձնասենյակ իրենց գործով, և այստեղ տեղի ունեցավ բաց խոսակցություն երես առ երես։

— Այսպես, որդիս, ես քո գլխին խրատներ չեմ կարդա,— սկսեց խոսքը հայր Կոորդինատորը՝ հարմար տեղավորվելով բազկաթոռին, Աբդիա Կալիստրատովի դիմաց, որ նստել էր

սթոուին, ձեռները խոնարհ դրած սեմինարիստի գորշ զգեստի տակից սուր ցցված նիհար ծնկներին։

Աբդիան սպասում էր խիստ խոսակցության, և դա մի քիչ զարմացրեց նրան. նա վեհապետի աչքերում չէր տեսնում ոչ զայրույթ, ոչ էլ չար մղումներ, ընդհակառակն, հայր Կոորդինատորը արտաքուստ շատ հանգիստ էր երևում։

— Լսում եմ, վեհապետ,— հնազանդ պատասխանեց սեմինարիստը։

— Այսպես, ուրեմն, կրկնում եմ, չպիտի քեզ վրա բարկանամ, նախատեմ ու խրատ կարդամ։ Ներգործության այդ միամիտ միջոցները քեզ համար չեն։ Բայց այն խոսակցությունները, որ դու թույլ ես տալիս քեզ, և ոչ անլրջությունից կամ տաքարյունությունից, չեն կարող զայրույթ չառաջացնել։ Եվ այդուհանդերձ, դու հավանաբար նկատեցիր, որ ես քեզ հետ խոսում եմ ինչպես հավասարի հետ։ Ավելին. Դու բավականին խելացի ես... Ասեմ քեզ անկեղծորեն. եկեղեցու շահերը պահանջում են, որ քո խելքը ոչ թե հակադրվի նրա ուսմունքին, այլ ծառայի լիակատար կերպով և անպայմանորեն Տիրոջ պատվիրաններին։ Եվ ես այդ չեմ թաքցնում։ Թեև կարող էի հայրաբար ականջներդ քաշել, քանի որ լավ ճանաչում էի հանգուցյալ հորդ և նրա հետ մենք լիակատար փոխըմբռնում ունեինք։ Նա հիրավի քրիստոնեական առաքինությունների տեր մարդ էր ու նաև իսկապես ուսումնական։ Բայց ահա ճակատագիրն ինձ հանդիպացրեց քեզ հետ, Աբդիա, հանգուցյալ սարկավագ Իննոկենտի Կալիստրատովի որդու հետ, որը, գրասենյակային ոճով ասած, երկար տարիներ եղել է եկեղեցու սպասավոր։ Եվ ի՞նչ է ստացվում։ Ջեմ թաքցնում, սկզբում քո մասին շատ էի լսել դրական առումով, բայց այժմ ինձ այստեղ են բերել, ինչպես ինքդ էլ հասկանում ես, տագնապալի հանգամանքներ։ Այնպես է ստացվում, որ դու կանգնել ես հավատի դավանանքի վերանայման ուղու վրա, ինքդ լինելով դեռ ընդամենը ուսանող։ Քո նույնիսկ զուտ պատահական արտահայտություններից ես արդեն համոզվեցի, որ մոլորություններդ, թերևս, ավելի շատ տարիքային բնույթի են։ Կուզեի այդպես մտածել։ Բանն այն է, որ ջահելությանը մի շարք այլևայլ պատճառներով հատուկ է բացառիկ անձնապաստանություն, որը տարբեր

անձանց մոտ տարբեր ձևով է արտահայտվում, համապատասխան նրանց խառնվածքին և դաստիարակության։ Լսե՞լ ես երբևէ, որ տարիդ մարդը, կյանքում շատ տառապանքներ տեսած, կյանքի վերջում հավատը կորցնի Աստծու նկատմամբ կամ էլ սկսի իր ձևով մեկնաբանել կրոնական հասկացությունները։ Ոչ, այդպիսի բան եթե անգամ պատահում է, անտարակույս, հազվադեպ միայն։ Աստվածային էությունը ավելի ու ավելի խորն է հասկացվում հենց տարիքի հետ։ Չէ որ եվրոպական բոլոր փիլիսոփաները, մասնավորապես այսպես կոչված ֆրանսիական էնցիկլոպեդիստները, որ նախահեղափոխական խառնակ դարաշրջանում սկսեցին աթեիստական գրոհը կրոնի վրա, որը շարունակվում է ահա երկու հարյուրից ավելի տարի, ի դեպ ասված, երիտասարդներ էին, այնպես չէ՞։

— Այո, վեհապետ, նրանք երիտասարդ էին,— հաստատեց Աբդիան։

— Ահա, տեսնում ես, Դա չի՞ խոսում արդյոք այն մասին, որ երիտասարդությանը հատուկ է այսպես ասած,— ներկայումս մոդայիկ բառով,— էքստրեմիզմը նախ և առաջ այն պատճառով, որ դա նրա տարիքային առանձնահատկությունն է։

— Այո, բայց այդ երիտասարդները, որ ձեր կարծիքով, վեհապետ, էքստրեմիստներ էին, հանուն արդարության ասենք, որ ունեին և բավական հիմնավոր համոզմունքներ,— միջամտեց Աբդիան։

— Անկասկած, անկասկած,— շտապեց համաձայնել հայր Կոորդինատորը,— բայց դա առանձին խնդիր է։ Համենայն դեպս, նրանք հոգևորականներ չէին, կրոնի հանդեպ նրանց վերաբերմունքը իրենց մասնավոր գործն էր, նրանցից և այլ է պահանջը, որդիս, իսկ դու ապագա հովիվ ես։

— Առավել ևս,— ընդհատեց նրան Աբդիան,— չէ որ ըստ էության մարդիկ պետք է լիովին հավատան ինձ և իմ գիտելիքներին։

— Մի շտապիր,— մռայլվեց հայր Կոորդինատորը,— եթե դու մտադիր չես իմ ասածները հասկանալու քո իսկ օգտի համար, այլ կերպ խոսենք, ուրեմն։ Այսպես, նախ՝ դու ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինը, որ համակվում է հակա-

դրության ոգով հավատի ըմբռնման ճամփին։ Քեզ նման կասկած ունեցողներ եկեղեցին իր գոյության ընթացքում շատ է տեսել։ Հետո ի՞նչ։ Ամեն մեծ գործի մեջ դա անխուսափելի է։ Այդպիսի անցողիկ պահեր, պատահականություններ եղել են և կլինեն։ Կարևորն այն է, որ դրանք միանգամայն անխուսափելի վախճան են ունենում. կամ այդ անձը կտրականապես հրաժարվում է իր կասկածներից և վճռաբար, ավելի մեծ ջանք ու եռանդով դառնում իսկական հավատի անշեղ ճանապարհը, որից և բխում է նրա ներումը վերադաս հայրերի կողմից, կամ էլ, նրա համառության և անհամաձայնության դեպքում, սույն հերետիկոսին վտարում են եկեղեցուց և բանադրանքի ենթարկում։ Քեզ համար պա՞րզ է, որ երրորդ ճանապարհը բացառված է։ Քո նորամտածողությունը չի կարող ընդունվել։ Քեզ համար պա՞րզ է։

— Այո, վեհապետ, սակայն ինձ թույլ եմ տալիս մտածելու, որ երրորդ ճանապարհը պետք է ոչ այնքան ինձ, որքան հենց եկեղեցուն։

— Օ՜յ-օյ,— ծաղրական գլուխն օրորեց հայր Կոորդինատորը։— Ահա թե ինչեր ես բարբաջում,— բացականչեց և դառն չարախնդությամբ առաջարկեց.— Բարի եղիր ասա խնդրեմ, թե այդ ինչ երրորդ ճանապարհ ես նախանշում Սուրբ եկեղեցուն։ Միգուցե որևէ հեղափոխությո՞ւն։ Չէ որ նման բան պատմությունը դեռ չի տեսել...

— Հավերժական քարացածության հաղթահարում՝ դոգմատիզմից ազատագրում, մարդկային հոգուն ազատություն՝ ճանաչելու Աստծուն որպես բարձրագույն էության սեփական կեցության...

— Կանգ առ, կանգ,— բողոքեց հայր Կոորդինատորը։— Այդ անձնապաստանությունը ծիծաղելի է, սիրելիս։

— Դեհ, եթե դուք բացառում եք մտքի ինքնուրույնությունը որպես այդպիսին, ապա, ցավոք, վեհապետ, միտք չունի շարունակել մեր խոսակցությունը...

— Ճիշտ այդպես, միտք չունի,— բորբոքվեց հայր Կոորդինատորը ու վեր կացավ տեղից։ Նրա ձայնը դողաց.— Սթափվիր, երիտասարդ, դեն նետիր ամբարտավանությունդ։ Դու կործանարար ճամփի վրա ես։ Դու, ողորմելի, մտածում ես, թե Աստված սոսկ քո երևակայության պտուղն է, և

ուսաի մարդն ինքը գրեթե Աստված է Աստուծո վրա, այն դեպքում, երբ գիտակցությունն ինքը ստեղծված է երկնային ուժով։ Ազատություն ուղղորդող ուժին, և դու ոչնչի կհանգեցնես հազարամյա բոլոր պատվիրաններն ու արգելքները՝ այնքան թանկ գնով ձեռք բերված մարդկանց կողմից տառապանքով և ըմբռնումով, որպեսզի սերնդե-սերունդ փոխանցեն այդ աստվածային հիմքերը։ Ահա թե ինչին ես դու խիստ պայքարելով դոգմատիզմից ազատագրվելու համար, մինչդեռ այդ դոգմաները տրված են Տիրոջ օգնությամբ։ Առանց նորամատածողության եկեղեցին կանգուն կմնա, ինչպես եղել է, իսկ առանց դոգմանների հավատի դավանանք չի լինի։ Ու, եթե կուզես իմանալ, հիշիր արդ՝ դոգմատիզմը ամենաառաջին հենարանն է բոլոր կանոնակարգերի և բոլոր իշխանությունների համար։ Հիշի՛ր։ Դու նորամատածողությամբ իբր բարելավելով Աստծուն, իրականում անտեսում ես նրան։ Եվ պատրաստ ես քեզնով նրան փոխարինելու։ Սակայն, բարեբախտաբար, քեզնից և քեզ նմաններից չէ կախված, թե Աստված մեզ ինչ պիտի անի, և քո աստվածանարգությունը միայն քեզ է ոչնչացնում։ Իսկ Աստված կլինի միշտ և հավերժորեն։ Ամե՛ն։

Աբդիա Կալիսարատովը կանգնել էր հայր Կոորդինատորի առջև սպիտակած շրթունքներով. պատանու համար տառապալից էր նրա սոսկալի զայրույթը։ Եվ, այնուամենայնիվ, նա չէր նահանջում։

— Ներեցեք ինձ, վեհապետ, երկնային ուժերին պետք չէ վերագրել այն, ինչ մեզնից է բխում։ Ինչու պիտի Աստված ստեղծեր մեզ այդքան ոչ կատարյալ, եթե Նա կարողանար խուսափել այն բանից, որ մենք, Նրա արարածները, մեր մեջ չզուգակցեինք միաժամանակ երկու հակադիր ուժեր՝ բարու և չարի։ Նրա ինչին էր պետք դարձնել մեզ այդքան ննջեցյակա կասկածների, արատների, խարդավանքի նույնիսկ հենց Իր հանդեպ։ Դուք պայքարում եք հավատի դավանանքի բացարձակության համար, աշխարհի և մեր հոգու վերջնական և հավիտենական ըմբռնման համար, սակայն դա տրամաբանական չէ. մի՞թե քրիստոնեության երկու հազար տարվա ընթացքում մենք ի վիճակի չենք ոչ մի խոսք ավելացնելու նրան, ինչ ասված է եղել նախաբիբլիական ժամանակներում։

Դուք պայքարում եք ճշմարտության մենաշնորհատիրության համար, սակայն դա առնվազն ինքնախաբեություն է, քանզի չի կարող լինել այնպիսի ուսմունք, նույնիսկ ազնիվ, որ մեկընդմիշտ հասկանա ճշմարտությունը մինչև վերջ։ Չէ որ եթե այդպես է, ուրեմն դա մեռած ուսմունք է։

Նա լռեց և տիրած լռության մեջ լավեց, ինչպես պատուհանից դուրս ղողանջեց եկեղեցու զանգը։ Այնքան մոտ և այնքան ծանոթ էր այդ զանգի ղողանջը՝ խորհրդանշական կապը մարդու և Աստծու միջև, որ Աբդիան ցանկություն ունեցավ այս հնչյունների նման չքվելու, հեռանալու, անհետանալու անսահմանության մեջ...

— Դու շատ հեռու ես գնում, երիտասարդ,— ասաց հայր Կոորդինատորը սառն, օտարացած ձայնով։— Ես քեզ հետ աստվածաբանական վեճեր չպետք է սկսեի, քանզի քո գիտելիքները չափազանց խակ են և նույնիսկ կասկածելի, և չե՞ս խոսում արդյոք դու մարդկության թշնամի՝ սատանայի դրդմամբ։ Մի բան, սակայն, կասեմ քեզ հրաժեշտ տալով. դու այսպիսի մտքերով քեզ կկործանես, ուրվհետև աշխարհիկ կյանքում էլ չեն հանդուրժում այնպիսիներին, ովքեր կասկածի տակ են առնում հիմնադրական ուսմունքները. չէ որ ամեն մի գաղափարախոսություն հավակնում է, որ հասել է վերջնական ճշմարտության, և դու անպայման կբախվես դրան։ Իսկ աշխարհիկ կյանքը շատ ավելի դաժան է, քան կարող է թվալ, և դու կհատուցես քո անհասկացողության համար ու դեռ կհիշես մեր խոսակցությունը։ Սակայն բավ է, պատրաստվիր հեռանալ սեմինարիայից, դու կվտարվես եկեղեցուց՝ Աստուծո տնից։

— Իմ եկեղեցին միշտ ինձ հետ կլինի,— իրենն էր պրնդում Աբդիա Կալիստրատովը։— Իմ եկեղեցին՝ ես ինքս եմ։ Ես չեմ ընդունում տաճարներն ու էլ ավելի չեմ ընդունում հոգևորականներին, հատկապես նրանց այսօրվա տեսակը։

— Ինչ արած, տղա, տա Աստված, ամեն ինչ լավ վերջանա, սակայն կարող ես համոզված լինել, աշխարհիկ կյանքը քեզ կսովորեցնի հնազանդվել, քանզի այնտեղ գոյություն ունի կենսական անհրաժեշտություն՝ մի կտոր հաց հայթայթելու անհրաժեշտությունը։ Եվ այդ անհրաժեշտու-

թյունը մինչև օրս տնօրինել է քեզ նման միլիոնների կյանքը...

Այս նախազգուշացումները հետագայում իսկապես էլ շատ անգամ էր հիշում, սակայն Արդիա Կալիստրատովին ամեն անգամ թվում էր, թե իր գլխավոր կոչումը՝ ինչ-որ մի բարձրագույն իմաստ դեռ առջևում է, ինչպես տեսանելի հորիզոնի գիծը, որ դրան հասնելու ճամփին կյանքի բոլոր անհաջողություններն ու հանկարծական փոփոխությունները ժամանակավոր են և կգա այն օրը, երբ շատ մարդիկ կհետևեն իր օրինակին, իսկ մի՞թե հենց այդ չէ յուր գոյության նպատակը։

Իսկ այն օրերին, երբ անաշա բերդեղների հետ մեկնում էր կանեփատափաստաններ, առավոտից իրիկուն գնացքի պատուհանից նայելով ամայի լայնարձակություններին, նա ասում էր իրեն. «Դեհ, խնդրեմ, հիմա դու քո գլխի տերն ես, ոչ մի պարտավորություն չունես, իմբազրության առաջադրանքից բացի, ոչնչով կապված չես և ազատ ես տնօրինելու կյանքդ քո հայեցողությամբ։ Եվ ի՞նչ, ի՞նչ պարգեցիր քեզ համար այս տառապանքի ուղիներում։ Ահա կյանքը, ինչպես ուր կա, և դու նրան դեմ-հանդիման։ Ինչպես և հարյուր տարի առաջ, մարդիկ գնացքով գալիս են ինչ-որ տեղից, մեկնում ինչ-որ տեղ, և դու մեկն ես ուղևորներից, ու բանբերներն էլ նրանց մեջ սովորական ուղևորներ են, ըստ էության, նրանք շատ վատ մարդիկ են, չէ ուր ձրիակերություն են անում մարդկային ամենասարսափելի արատներից մեկի հաշվին։ Այն դառը ծուխը, թվում է դատարկ բան է, քաղցր թմբիր, սակայն այն կործանում է մարդը մարդու մեջ։ Իսկ ինչպե՞ս պիտի նրանց պաշտպանես, եթե նրանք իրենք են իրենց զոհաբերում։ Իսկ գիտե՞ս ինչից է այդ ամենը ծագում։ Ո՞րն են դրա պատճառները։ Լռում ես՝ չգիտես որ կողմից մոտենաս, ինչպե՞ս բացատրես, ի՞նչ ձեռնարկես։ Իսկ դու չէի՞ր, որ անզսպելի ուժով սեմինարիայից նետվում էիր կյանքի հորձանուտը, որպեսզի գոնե ինչ-որ չափով այն բարեփոխես։ Սեմինարիայի քո ուսումնակիցները քեզ իդեալիստ էին կոչում։ Տեղին, հավանաբար։ Իսկ հիմա դու արդեն մտածում ես արդյոք քո կարիքն ունե՞ն այս բանբերները,

նրանց պե՞տք է, որ դու խառնվես իրենց գործերի և արարքների մեջ։ Ով ի՞նչ կարող ես անել նրանց համար։ Վերահսկո՞ղ, ստիպես ուրի՞շ կյանքով ապրել։ Իսկ մինչ դու տառապում ես, մտածում ինչ ու ինչպես անես, նրանք մեկնում են հաստատ որոշած նպատակով, հաջողություն փափագում իրենց համար, իրենց երջանկությունն են տեսնում դրա մեջ։ Բայց ինչպես նրանց համոզմունքը փոխես, ինչպես դարձնես ճշմարիտ ճամփի։ Իսկ եթե չմիջամտես, չօգնես, նրանք վաղ թե ուշ կդատավեն, գաղտնիներ կաքսորվեն, սակայն այդ կհամարեն ոչ թե իրենց մեղքը, այլ դժբախտությունը։ Այլ բան է, եթե կարողանաս ետ պահել նրանց չարիքից, ազատես զղջմամբ, ստիպես, որ իրենք հրաժարվեն հանցագործ զբաղմունքից և իսկական երջանկությունը տեսնեն այլ բանում։ Ի՞նչ հիանալի կլինի այդ։ Սակայն ինչո՞ւմ պիտի նրանք տեսնեն իրենց երջանկությունը։ Մեր ռեկլամած արժեքներո՞ւմ։ Չէ՞ որ դրանք չափազանց արժեքազրկված և գռեհկացված են։ Աստծո՞ւ մեջ, որին նրանք մանկուց համառում են տատ ու պապին ծաղրանքի առարկա, հեքիաթ, ուրիշ ոչինչ։ Ով վերջին հաշվով ի՞նչ կարող է անել խոսքը հեշտ ու հանգիստ մեծ փողեր ունենալու հնարավորության դիմաց։ Հիմա բոլորի բերնում տարածված մի ասացվածք կա՝ շնորհակալությունը գործիդ չես կցի, իսկ փողը՝ փող է։ Իսկ այդ փողը, որ շինում են բանբերները, հավանաբար միայն մեր փողը չի, շատ հնարավոր է, որ նաև օտարերկրյա փողեր են. ահա ինչքան բանբերներ են գնում նավահանգստային քաղաքներից՝ Մուրմանսկից, Օդեսայից, Մերձբալթիկայից, ասում են նաև Հեռավոր Արևելքից։ Ո՞ւր է գնում անաշան և պլաստիլինից ու էքստրայից ստացվածը։ Ով մի՞թե կարևորն այն է, թե ուր է գնում։ Ինչո՞ւ է այդ տեղն ունենում, ինչո՞ւ է այդ հնարավոր մեր կյանքում, մեր հասարակության մեջ, ու ամբողջ աշխարհում հռչակել է, թե մեր սոցիալական սիստեմն անմատչելի է արատների համար։ Ո, եթե հաջողվի այնպես անել, այնպիսի նյութ գրել, որ դրան արձագանքեն շատ-շատերը, որպես իրենց կենսական գործին, ինչպես հրդեհին սեփական տանը, ինչպես իր սեփական զավակների դժբախտությանը, այդ դեպքում միայն խոսքը, բազում ոչ անտարբեր մարդկանց կողմից պաշտո-

պանված, կարող է հաղթել փողին, հաղթել արատին։ Տա Աստված, որ այդպես լինի, որպեսզի այն հենց այնպես չասվի, որպեսզի, եթե իսկապես էլ, «ի սկզբանե էր բանն», ապա այն մնա իր նախնական ուժի մեջ... Այդպես ապրեիր, այդպես մտածեիր...

Սակայն, Տեր իմ, դարձյալ քեզ եմ դիմում. ի՞նչ է բառը զրնգուն փողի դիմաց։ Ի՞նչ է քարոզը թաքուն արատի դիմաց։ Խոսքով ինչպե՞ս հաղթահարես չարիքի մատերիան։ Ուրեմն ուժ տուր ինձ, մի լքիր ինձ իմ ճամփին, ես մենակ եմ, առայժմ մենակ եմ, իսկ նրանց, հեշտ հասոտահոտու մոլուցքով բռնվածներին թիվ ու հաշիվ չկա...

* * *

Սարատովյան հողերն անցնելով, Մոսկվա—Ալմա-Աթա գնացքն արդեն երկրորդ օրը շարժվում է Ղազախստանի վայրերով։ Առաջին անգամ հայտնվելով մայրցամաքի Թուրանյան կողմում, Աբդիա Կալիստրատովը ուղևորության ընթացքում զարմանում էր երկրամասի մեծությամբ ու մասշտաբով, ինչ-որ ժամանակ Ռուսաստանի ձեռք բերած աշխարհագրական տարածությամբ՝ հայացքիդ առաջ բացվում էին հիրավի անծայրածիր հեռանկարներ. եթե սա և Սիբիրը միասին հաշվենք, մտովի պատկերացնում էր նա, գրեթե աշխարհի ցամաքի կեսը կկազմի... Եվ որքան նոսր են այստեղ բնակավայրերը... Քաղաքները, գյուղերը և աուլները, կայարանները, կիսակայարանները, պատահական անասնաբակերը և տները մոտենում էին երկաթուղուն, ինչպես ցանցառ վրձնախազեր անծայրածիր տափաստանային կտավի վրա, սակս միայն նախաներկված և այդպես էլ թողնված առանց ներկելու, գորշ միապաղաղության մեջ... Այս կողմերում ամենուրեք տարածվում էին բաց տափաստաններ, հիմա դրանք ծաղկունքի այն շրջանում էին, երբ մեծ ու փոքր խոտերը հասնում էին իրենց ծաղկման գագաթնակետին, որ հոգի տհսքը փոխում է ընդամենը մի քանի օրով, որպեսզի հետո կրկին թողնի անողոք արևի տակ և ապա ամբողջ մի տարի սպասի գարնան...

Վագոնների կիսաբաց պատուհաններից ներս էին լցվում

տափաստանային ծաղկող խոտերի բույրերը, որ հատկապես ուժեղ էր զգացվում, երբ գնացքը կանգնում էր որևէ անհայտ կիսակայարանում, չորս կողմից բաց, և այն ժամանակ ուզում էիր դուրս թռչել տոթ վագոնից ու ազատության մեջ վազվզել այդ խոտերի վրա, որ տեսքով խղճուկ էին, բայց այնպես օշինդրա-բուրմունալից հողի հյութեղության ու չորության միախառն բուրմունքով: Տարօրինակ է, մտածում էր Աբդիան, մի՞թե այն անիծյալ կանեփ-անաշան էլ աճում է այսպես ազատ ու այսքան հրապուրիչ բուրումն: Թերևս նրա բուրմունքը շատ ավելի ուժեղ և սուր պիտի լինի, դատելով այն բանից, ինչ պատմում են բանբերները անկեղծության պահերին, բայց գլխավորը, ասում են նրանք, անաշան բարձր և ցողունավոր է, նրա թփուտները հասնում են գրեթե մինչև գոտկատեղ: Սակայն վայրի կանեփը ամեն տեղ չէ աճում, այն ունի իր աճելու տեղերը, և փառք աստծու, որ ամեն տեղ չէ աճում, որ այն բերելու համար պետք է ճամփա կտրել, որ այն պետք է որոնել, այլապես եթե ավելի մատչելի լիներ, դժվար չէ պատկերացնել, թե ինչ էր կատարվելու... Ահա մեկնում են բանբերները հեռավոր նավահանգստային քաղաքներից, աշխարհի մի ծայրից մյուսը, մեկնում են կախարդվածի պես հարբեցնող անաշա որոնելու... Դեռ հեռու է, դեռ պետք է գնան ու գնան, և հայտնի չէ, թե դա ինչով կավարտվի, ինչ կստացվի այդ ձեռնարկումից:

Իսկ լինում էր, որ Աբդիա Կալիստրատովը, ժամանակավորապես մոռանալով իր թաքուն ուղևորության նպատակը, երևակայությամբ սկսում էր պատկերացնել, թե որ ժամանակներում են սկսել բնակեցվել այս վայրերը, հիշում այդ մասին կարդացած գրքերը, ֆիլմերը, որ տեսել էր աշակերտական տարիներին և ուրախանում նրա համար, որ դեռ հանդիպում էին անցած-գնացած կյանքի հետքերը. գորշ ուղտերի նախիրներ՝ լքյալ քաղաքների նման ցրված տափաստանում, գերեզմանատուն-մազարներ, մի քանի վայրենիներով փոքրիկ աուլներ, երբեմն էլ մի յուրտ է երևում՝ մեն-միայնակ աչքդ կտրած ողջ տարածության մեջ և սարսափ ես զգում աշխարհում կորսված այդ խարխուլ կացարանի բնակիչների համար, հայացքիդ առջև երևում-անցնում են ձիավորներ՝ մեկ միայնակ, մեկ խմբով, ոմանք նույ-

նիսկ, ինչպես հին ժամանակներում, սրածայր գլխարկներով, հինավուրց լծասարքով ձիեր հեծած... Եվ մտածում էր նա, ինչպես էին կարողանում մարդիկ ապրել այստեղ, չմեռնել ձանձրույթից ու անջրուիյունից այս մեծ տափաստաններում։ Իսկ ինչպե՞ս են զգում նրանք իրենց գիշերները։ Ի՞նչ է զգում մարդն այստեղ գիշերային սիեզերքի առջև, որքան սարսափելի, զարհուրելի պետք է լինի նրա համար իր լիակատար միայնությունը աշխարհի անսահմանության մեջ, և ուստի այստեղից անցնող գնացքները ուրախություն են և ամենևին չեն ազդում նրանց նյարդերի վրա, ինչպես մեծ քաղաքներում։ Իսկ գուցե, ընդհակառակն, տափաստանային գիշերների վեհությունը հոգու մեջ էլ մեծ բանաստեղծություններ է ծնում, քանզի ինչ է պոեզիան, եթե ոչ մարդկային հոգու ինքնահաստատումը սիեզերական տարածության մեջ...

Սակայն այդպիսի խորհրդածությունները նրան շեղում էին շատ կարճատև, նորից սկսում էր մտածել, որ ինքը բանբերների հետ մեկնում է անաշա բերելու, որ դործ ունի օրենքի սեսակետից հանցագործ անձանց հետ և առժամանակ, թերթի համար իր մտածած սոցիալ-բարոյական լրահաղորդման շահերից ելնելով, սակայն ստիպված է համակերպվել այս կյանքին, այն չարիքի հետ, որ կրում են իրենց մեջ այս անաշա բերողները։ Բայց այդպես մտածելով, նա ակամա սառնություն էր զգում սրտագդալի տակ, տհաճ զգացողություն ստամոքսում, անորոշ, դաղի հասնող տագնապ, ասես ինքն էլ այդ բանբերներից մեկը լիներ, այդ հանցագործությունների մեջ խառնված։ Եվ այնժամ նա հասկանում էր այն մարդկանց հոգեվիճակը, ովքեր ապրում են թաքուն բեռ ունենալով հոգու վրա, հասկանում էր, որ ինչքան էլ մեծ լինի երկիրը, ինչքան էլ ուրախալի լինեն նոր տպավորությունները, այդ ամենը, սակայն, ոչինչ չարժե, ոչինչ չի տալիս մարդու մտքին ու սրտին, եթե նրա գիտակցության մեջ կա թեկուզ շատ չնչին մի ցավոտ կետ, որը կամաց-կամաց որոշում է մարդու և ինքնագգացողությունը, և նրա վերաբերմունքը շրջապատի հանդեպ։ Ուշադիր հետևելով բանբերներին, որոնց հետ նա հիմա ճամփա էր կտրում դեպի կանեփի տափաստանները, փորձելով խոսեցնել նրանց,

անկեղծության մղել, Աբդիա Կալիստրատովը ենթադրում էր, որ չնայած իրենց արտաքին ինքնավստահությանը, իր ուղեկից բանբերներից յուրաքանչյուրը պետք է որ ընկճված լինի իր զրազմունքից ու անխուսափելի հատուցման մշտական սարսափից, և խղճում էր նրանց։ Չէ որ ուրիշ ոչնչով չէր կարելի բացատրել նրանց հոխորտանքը, գրգռիչ ժարգոնը, թղթախաղը, օղին, նրանց հանդգնությունը՝ ինչ լինում է լինի, քանի որ նրանք իրենց համար կյանքի ուրիշ ճանապարհ չեն տեսնում։ Փրկել այս մարդկանց հոգին արատի ազդեցությունից, ազատագրել, նրանց աչքերը բացել, որ տեսնեն իրենք իրենց, ազատել մշտապես հետապնդող վախից, որ օդի մեջ տարածված թույնի նման թունավորում է նրանց՝ ահա թե ինչ էր ուզում Աբդիա Կալիստրատովը, և օգնության կոչելով իր ողջ գիտելիքները ու թեկուզ ոչ հարուստ, սակայն կյանքի փորձը, նա ջանում էր մոտեցում գտնել իր այդ վեհ մտադրությունն իրականացնելու համար, և հիմա հասկանում էր, որ հեռանալով սեմինարիայից, հրաժարվելով պաշտոնական եկեղեցուց, հոգով մնացել էր քարոզիչ և որ մարդկանց բարու և ճշմարտության խոսք հասցնելը, ինչպես ինքը հասկանում էր այդ, ամենամեծ բանն է, որ նա կարող է անել իր կյանքում։ Իսկ դրա համար պարտադիր չէր ձեռնադրված լինել, դրա համար պետք էր նվիրված լինել նրան, ինչը երկրպագում ես։ Բայց միաժամանակ նա ինքն իր համար դեռ լիովին չէր պատկերացնում այն, ինչի համար ձգտում էր ունեցել գնալու մտքի և սրտի թելադրանքով, բարի մղումներից դրդված։ Չէ որ մի բան է գեղեցիկ երազանքներ ունենալ և երազանքներում փրկություն բերել արատներից, այլ բան բարի գործ անել իրական մարդկանց մեջ, որոնք բնավ էլ չեն փափագում, որ իրենց առաքինության համար դարձնի ինչ-որ մի Աբդիա, իրենց նման մի բանբեր-հայհոյող, որը, ինչպես և իրենք, այս աշխարհի ծայրն է հասել հեշտ ու առատ վաստակի համար։ Նրանց ինչ պետքն է, թե Աբդիա Կալիստրատովը համակված է ազնիվ ցանկությամբ դեպի լույսը շրջելու նրանց հակատագրերը խաչի ուժով, քանզի անսասան հավատում է, որ

Աստված ապրում է խոսքի մեջ, և որպեսզի խոսքն աստվածային ազդեցություն ունենա, այն պետք է ելնի իսկական և անբասիր ճշմարտությունից։ Դրան նա հավատում էր, ինչպես տիեզերական օրենքի։ Սակայն նա դեռ չգիտեր մի բան, չգիտեր, որ չարիքը դիմակայում է բարուն նույնիսկ այն ժամանակ, երբ բարին ուզում է օգնել չարիքի ճամփան բռնածներին... Այդ նա դեռ պետք է իմանար...

6

Չորրորդ օրվա լուսաբացին հայտնված ձյունածածկ սապատավոր լեռնաճյուղերը նշան եղան գնացքի մոտենալուն Ջուլի և Մերձմոյընկումյան տափաստաններին, ուր և մեկնում էին նրանք։ Ձյունածածկ լեռները սոսկ ընդհանուր կողմնորոշիչ էին այս տարածություններում, տափաստանային լայնարձակություններ մեջ խորանալուց հետո դրանք էլ պետք է անհետանային տեսադաշտից։ Բայց ահա հայտնվեց արեգակը երկրի ծայրին, և անթիվ-անհամար անգամ ամեն ինչ լուսավորեց խաղաղ լույսով, ու գնացքը այդքան տարբեր ճակատագրերի մարդկանցով լցված, լեռներին չհասած, տափաստանում փայլփլեց իր երկար վագոնաշարանով և շրջվեց դեպի թեթև մշուշված հարթավայրը՝ այնտեղ, որտեղից լեռները չէին երևում։

Ջալփաղ-Սազ կայարանում բանբեր-հայթայթիչները պետք է իջնեին և շարունակեին ճամփան ոտքով, իրենց պատասխանատվությամբ՝ ամեն մեկն առանձին, բայց միասնական ծրագրով և մի ընդհանուր ղեկավարության տակ։ Հենց այդ էր ամենից ավելի հետաքրքրում Աբդիա Կալիստրատովին՝ ո՞վ է նա։ Նա, այս գործի գլխավորը՝ որի արթուն աչքը հետևում է նրանց, որի մասին հիշատակում էին անցողակի և կամացուկ։

Մինչև Ջալփաղ-Սազ կայարան մնացել էր մի երեք ժամվա ճանապարհ։ Բանբերներն սկսեցին իրերը հավաքել։ Ուղևորների գժգոհությունը հարուցելով, Պետրուխան երկար լվացվում էր զուգարանում գիշերային հարբեցողությունից հետո, նախքան կգնար Ամենայի մոտ վերջին ցուցումները

ստանալու։ Անցյալ երեկո նա ընկերների հետ սկսեց շամպայնով, որը նրանց համար մանկական զվարճալիք էր. նրանք այն խմում էին բաժակով, լիմոնադի նման, հետո անցան օղուն, և դա իրեն զգալ տվեց։ Անչափահաս Լյոնկան բոլորովին հալից ընկել էր, և Աբդիան դժվարությամբ կարողացավ նրան ոտքի հանել։ Միայն երբ ասացին, որ շուտով Ջալփաղ-Սազն է լինելու, դա ստիպեց Լյոնկային ուժ գործադրել իր վրա և նստել մահճակատեղում, փրչոտ գլուխը թուլլ, նիհար ու կեղտոտ վզին կախ գցած։ Ով կարող էր մտածել, որ այս տղան լավ փող է վաստակում հանցագործ ճանապարհով և որ նրա կյանքն արդեն կործանված է։

Գնացքը համալափ և արագընթաց շարժվում էր տափաստանի լայնարձակություններով և ինչ-որ տեղ, ինչ-որ վագոնում էր գոնվում Ամենան, որի մոտ շտապեց ապուշ կըտրած Պետրուխան, լիովին սթափվելու համար մի բաժակ թունդ, ձյութի պես սև թեյ գլուխը քաշելով։ Երևում է Ամենան խմելուն այնքան էլ լավ չի նայում։ Ամբողջ ճանապարհի ընթացքում Աբդիա Կալիստրատովին այդպես էլ չհաջողվեց տեսնել Ամենային գոնե հեռվից, իսկ բոլորը մեկնում էին նույն գնացքով։ Ո՞վ է նա, ի՞նչ տեսք ունի։ Փորձիր կռահել հարյուրավոր ուղևորների մեջ։ Բայց ով էլ լինի, գիտուշ է, եղեգնուտի գազանի նման թավուտում թաքնված, նա ամբողջ ճանապարհի ընթացքում ոչնչով չմատնեց իրեն։ Շուտով Պետրուխան վերադարձավ Ամենայի մոտից ծեծված շան նման, մոայլ, գազազած, լրջացած։ Հասկանալի էր, որ Ամենան պինդ հայհոյել էր սրան գիշերային հարբեցողության համար, այն էլ հենց տեղ հասնելու նախօրեին։ Նրան կարելի էր հասկանալ. գնացքը Ջալփաղ-Սազ հասնելուն պես սկսվում էր անաշա հայթայթողների գործելու ժամանակը, իսկ ապուշ Պետրուխան այնպես էր լակել, որ ամբողջ շաբաթ տառապելու էր գլխացավից։ Դժգոհությամբ նայելով Աբդիային, ասես սա ինչ-որ բանով մեղավոր էր նրա առաջ, Պետրուխան մոլտաց.

— Գնանք, խոսելիք կա։

Անցան վագոնի փակ հարթակ։ Ծխեցին։ Թխկթխկում, դղրդում էին անիվները։

— Դու, ուրեմն, միտդ պահի, Ավդյա,— սկսեց Պետրուխան։

— Այո, լսում եմ,— խոժռովեց Աբդիան։

— Դու քիթդ շատ մի տնկիր,— զայրացավ Պետրուխան։— Դու ո՞վ ես, է։

— Ինչ ես ասում, Պյոտր,— շտապեց հանգստացնել նրան Աբդիան,— ինչո՞ւ ես զուր նեղանում։ Էհ, ես չեմ խմում, դու խմում ես, հետո՞, դրա համար պիտի իրար հետ կռվե՞նք։ Ավելի լավ է ասա, թե սրանից հետո ի՞նչ պիտի անենք։

— Հետո կանենք, ինչպես Ամենան կասի։

— Դեհ, ես էլ այդ եմ հարցնում։ Ամենան ի՞նչ ասեց։

— Քո գործը չի,— ընդհատեց նրան Պետրուխան։— Դու մեզ համար նոր մարդ ես, դրա համար էլ կգնաս իմ և Լյոնկայի հետ, մի խոսքով, երեքով ենք լինելու։ Իսկ մյուս տղաները, ով կգնա ինքն իր համար մենակ, ով ընկերոջ հետ, երկուսով։

— Պարզ է։ Բայց ո՞ւր ենք գնալու։

— Դա էլ քո գործը չի, ինձ հետ կգնաս։ Ջալփաղ-Սազում կիջնենք։ Իսկ հետո ինքներս պիտի տեղ հասնենք։ Ճամփին պատահած մեքենաներով մինչև «Մոյընկումսկի» սովխոզ, դրանից հետո անմարդաբնակ տարածություններ են, կգնանք արդեն ոտքով։

— Ա՜յ թե ինչ։

— Բա ինչ էիր կարծում, «Ժիգուլիո՞վ» պիտի քեզ տեղ հասցնենք։ Չէ, ախպեր։ Ախր էնտեղ որ աչքներին ընկանք, կարող են բռնել, իսկ թե մեկը մեքենայով կամ մոտոցիկլետով է գնում, նա որ կորած է։

— Ա՜յ քեզ բաներ։ Իսկ Ամենան ինչ է անելու, ինքը ուրե՞ղ է լինելու, ո՞ւմ հետ է գնալու։

— Քո ի՞նչ գործն է,— վրդովվեց Պետրուխան։— Եվ ի՞նչ ես մի գլուխ նրա մասին հարցնում։ Գալիս է, չի գալիս։ Իսկ միգուցե նա հեչ էլ չի գալիս։ Ինչ է, Ամենան քեզ հաշի՞վ պիտի տա, մի ասա իմանանք։

— Չէ, ոչինչ։ Թե որ նա է գլխավորը, մի բան որ լինի, լավ է տեղն իմանանք։

— Այ հենց դա քեզ պետք չի իմանաս,— մեծամտորեն ասաց Պետրուխան։— Իմ ու քո գործը չէ, թե նա որտեղ կլինի ու ինչ կանի։ Թե պետք լինենք, ինքը մեզ գետնի տակից էլ կգտնի։— Պետրուխան բազմանշանակ լռեց, ասես ստուգելով թողած տպավորությունը, և հետո ավելացրեց, սևեռուն նայելով իր պղտոր, դեռ չզգաստացած աչքերով.— Իսկ քեզ, Ավդյա, Ամենան ասաց, որ հայտնեմ. եթե աշխատես ինչպես պետքն է, մեզ հետ մշտական եկող կդառնաս, իսկ թե, աստված չանի, մատնիչ դուրս գաս, լավ կանես հենց հիմի գործից հեռանաս։ Հիմի որ կայարանում իջնենք, գնա սուսուփուս ուր ուզում ես, մենք քեզ ձեռք չենք տա, բայց որ գործի մեջ մտար՝ վերջ, էլ ետ ճամփա չկա։ Թե մատնություն անես, էս աշխարհում էլ տեղ չես ունենա։ Հասկացա՞ր։

— Հասկացա, իհարկե, ինչ չհասկանալու բան կա։ Երեխա չեմ,— պատասխանեց Աբդիան։

— Դեհ, հիշիր, ուրեմն, ես քեզ հայտնեցի, դու իմացար, որ հետո էլ չասես՝ չգիտեի, չհասկացա, ներող եղեք, խղճացեք։

— Վերջ տուր, Պյոտր,— ընդհատեց նրան Աբդիան։— Անտեղի մի կրկնիր։ Ես էլ գլխումս խելք ունեմ։ Գիտեմ ինչի եմ գնում, ինչ եմ ուզում։ Դու լավ է հիմա իմ խորհուրդը լսիր։ Այսօրվանից խմելուդ վերջ տուր ու Լյոնկային էլ մի խմացրու։ Նա հիմար տղա է։ Ախր քո՞ ինչին է պետք։ Հիմա գնալու ենք այն կողմերը, խմած ու այն էլ էս տեսակ շոգին, ախր մեզնից ի՞նչ անաշա հավաքող դուրս կգա։

— Համաձայն եմ,— ընդհատեց Պետրուխան ու թեթևացած ժպտաց, թաց շրթունքները ծռելով։— Ինչ ճիշտ է՝ ճիշտ է։ Հավատա, Ավդյա, մի կաթիլ բերանս չեմ առնի, ու Լյոնկային էլ չեմ թողնի, վերջ, պրծանք։

Նրանք լռեցին, գոհ, որ խոսակցությունն ավարտվեց երկուսի համար էլ ցանկալի ձևով։ Գնացքը ճոճվելով շտապում էր Ջալփաղ-Սազ հանգուցային կայարան, որտեղ կատարվում էր շոգեքարշի և մեքենավարների հերթափոխություն։ Շատ ուղևորներ, որոնք պետք է իջնեին, արդեն իրերն էին հավաքում, Լյոնկան նույնպես անհանգստացած դուրս նայեց վագոնի փակ հարթակ։

— Ի՞նչ եք անում այստեղ,— հարցրեց նա, գլխացավից խոժռվելով։— Պետք է պատրաստվել։ Մի ժամից հասնում ենք։

— Մի վախենա,— պատասխանեց Պետրուխան։— Ի՞նչ պիտի պատրաստվենք։ Հո կնի՞կ չենք։ Ուսապարկը ուսներիս կգցենք՝ ու հայդա։

— Լյոնյա,— մոտ կանչեց տղային Աբդիան։— Մոտեցիր ինձ։ Գլուխդ ցավո՞ւմ է։— Լյոնյան մեղավոր տարուբերեց գլուխը։— Այ ես ու Պյոտրը վճռել ենք. այսօրվանից ոչ մի կաթիլ։ Համաձա՞յն ես։— Լյոնկան լուռ գլխով արեց։— Դեհ, գնա, մենք հիմա կգանք։ Կհասցնենք, մի անհանգստացիր։

— Հա, ժամանակ շատ կա,— ասաց Պետրուխան՝ նայելով ժամացույցին։— Մի ժամից ավելի։— Իսկ երբ Լյոնկան գնաց, ասաց.— Լյոնկայի համար դու ճիշտ ասացիր։ Լոկոտն ինքն է մեջ ընկնում, որ խմի, իսկ հենց խմեց՝ ոտքի վրա մնալ չի կարողանում։ Բայց հիմա՝ վերջ։ Գործ ենք անում, պիտի գործ անենք։ Էդ ճամփին էր, ուզեցինք մի քիչ ուրախանալ։ Հետո, իմացի, ես Լյոնկայի փողով չեմ խմել, միգուցե ինքը ինչ... բայց ես իմ փողով եմ խմում։

— Դա ինչ կարևոր է,— դառնությամբ պատասխանեց Աբդիան։— Ուղղակի մեղք է տղան։

— Ճիշտ ես ասում,— հասկանալով հառաչեց Պետրուխան։ Անկեղծ խոսակցությունն, ըստ երևույթին, Պետրուխային դարձրեց վաղուց իրեն հանգիստ չտվող մտքին։— Լսիր, Ավդյա, իսկ մինչև այս, այսինքն մինչև մեզ հետ գալը, դու ինչո՞վ էիր զբաղված, թե՞ աշխատում էիր որևէ տեղ։ Միգուցե դու գող տղերքից ես։ Մի նեղվի, հիմի մենք կամ ռեստորանում մի սեղանի պիտի քեֆ անենք, կամ էլ բանտախցից նույն պարաշան դուրս տանենք։ Ոնց կուզես գցիբռնի։

Աբդիան չուզեց թաքցնել.

— Ես ոչ մի գող էլ չեմ։ Ու նեղվելու էլ բան չունեմ։ Մինչև այս ես հոգևոր սեմինարիայում եմ սովորել։

Այսպիսի պատասխանի Պետրուխան, հավանաբար, ամենևին չէր սպասում։

— Սպասիր, սպասիր... Ասում ես սեմինարիայո՞ւմ, ուրեմն դու սովորում էիր, որ տերտե՞ր դառնաս։

— Այո, այդպես է ստացվում...

— Օհո,— աչքերը չռեց Պետրուխան և շրթունքներն ուռցնելով չարաճճի սուլեց։— Բայց ինչի՞ դու այնտեղից հեռացար, թե՞ քշեցին ինչ-որ բանի համար։

— Եվ այդպես, և այնպես։ Մի խոսքով, հեռացա։

— Ախր ինչի՞։ Աստծուն չկարողացաք իրար մեջ բաժանել, հա՞,— նորից չարաճճիությամբ շարունակեց Պետրուխան։— Այ քեզ խնդալու բան։

— Երևում է, չկարողացանք։

— Դե հիմի ասա, որ էդպես ամեն ինչ գիտես... Աստված կա, թե՞ չկա։

— Դրան դժվար է պատասխանել, Պյոտր։ Մեկի համար կա, մյուսի համար չկա։ Ամեն ինչ կախված է մարդուց իրենից։ Ինչքան մարդիկ ապրեն աշխարհում, այդքան էլ միշտ մտածելու են՝ Աստված կա, թե՞ չկա։

— Բայց որտե՞ղ է նա, Ավդյա, եթե, ասենք, կա։

— Նա մեր մտքերի մեջ է և մեր խոսքերի մեջ...

Պետրուխան լռեց՝ մտածելով ասվածի մասին։ Ավելի բարձր ու հատու թխկթխկացին վագոնների անիվները. դրանց ձայնը լսվում էր վագոն անցած ինչ-որ ուղևորների կողմից հարթակի բաց թողնված դռնից։ Պետրուխան դուռը ծածկեց, ականջ դրեց անիվների խլացած թխկոցին և վերջապես ասաց.

— Ուրեմն իմ մեջ չկա։ Իսկ քո մեջ, Ավդյա, կա՞, թե չկա։

— Չգիտեմ, Պյոտր։ Կուզեի մտածել, որ կա, կուզեի, որ լիներ...

— Ուրեմն, քեզ դա պե՞տք է։

— Այո, ինձ համար դա անհրաժեշտ է...

— Դե արի ու հասկացիր քեզ,— կոպիտ ասաց Պետրուխան։ Ինչ-որ բան երևի վիրավորել էր նրան։— Բա էլ ինչի՞ ես մեզ հետ գալիս, թե քեզ Աստված է պետք։

Աբդիան որոշեց, որ հիմա ոչ ժամանակն է, ոչ էլ տեղը խոսակցությունը խորացնելու։

— Բայց չէ որ փող էլ է պետք,— ասաց նա հաշտվողաբար։

— Դե տես, թե հիմի ոնց երգեցիր։ Կամ Աստված, կամ անաշխատ փող։ Իսկ ինքդ համենայն դեպս փողի հետևից ես եկել։

— Այո, առայժմ այդպես է ստացվում,— ստիպված եղավ ընդունել Աբգիան։

Այս խոսակցությունը Աբգիա Կալիստրատովի համար մտածմունքի առիթ հանդիսացավ։ Առաջինը, նա իր համար որոշակիորեն պարզեց, որ Ամենան, այն մեկը, որ անտեսանելի կերպով իր հսկողության տակ էր պահում անաշխի բանբերների ուղևորությունը ամբողջ ճանապարհի ընթացքում, չափազանց կասկածամիտ է, հաշվենկատ և, հավանաբար, դաժան ու եթե նա իր անցկացրած գործողության որևէ օղակում մի վատ բան կասկածի, ոչնչի առաջ կանգ չի առնի, որպեսզի վրեժխնդիր լինի կամ ապահովի իրեն և իր եռև կանգնածներին։ Դա պետք էր սպասել, սա թմրադեղերի առևտուր էր։ Երկրորդը, որ հասկացավ Պետրուխայի և ուրիշների հետ ունեցած ճանապարհային խոսակցություններից, դա այն էր, որ բանբերների վրա պետք է ազդել խոսքով, որը քարոզչի պարտականություն է՝ մտերմական խոսակցություն, ներշնչում խոսքով, առանց վախենալու սպառնացող վտանգից. չէ՞ որ այդպես մի ժամանակ անձնազոհ քարոզիչները տարել են Քրիստոսի խոսքը աֆրիկյան վայրենի ցեղերին, տարել են վտանգելով իրենց կյանքը, քանզի կյանքի գնով հոգիների փրկությունը կարող է դառնալ վերջնական հանրագումարը, ճակատագիրը, իմաստը նրա կյանքի ուղու. այդպես նա կփրկի իր հոգին։

Ջալփաղ-Սազ կայարան հասան ցերեկվա ժամը տասնմեկի մոտ։ Կայարանը հանգուցային էր, գնացքափոխ, երկու ճյուղն այդտեղից գնում էին դեպի լուսաբացին հեռվում երևացող ճյունածածկ լեռները, ուստի տարբեր ծայրեր մեկնողներն այստեղ շատ էին, որը հարմար էր բանբերների համար. կարելի էր կորսվել կայարանային այդ իրարանցման մեջ։ Եվ ամեն ինչ ավելի քան լավ դասավորվեց։ Աբգիան զարմանում էր, թե որքան հեշտ ու գործնական նրանք կարողացան մուտք գործել կայարանային ճաշարան ճաշի ժա-

Մին։ Աբդիայի հետ, նրանք մի տասներու հոգի էին (նրան այդպես թվաց), նրանք, որ պետք է շարունակեին տափաստաններ գնալ անաշայի։ Բանբերները սեղանների մոտ նըստած էին իրարից հեռու, մեկ կամ երկու հոգով, բայց այնպես, որ իրար տեսնեին, թեև իրար հետ բացահայտ չէին շփվում, և արտաքուստ չէին տարբերվում ճամփորդող բազմությունից... Լյոնկայի նման ու ավելի մեծ՝ Պետրուխայի տարիքի տղաներ ինչքան ասես կային։ Բոլորը որևէ տեղ էին մեկնում կամ վերադառնում ամառային այդ ամենաեռուն շրջանում. ասիական և եվրոպական դեմքերի տիպիկ միախառնում... Ու թեև այստեղ շարունակ մտնում-դուրս էին գալիս միլիցիայի աշխատողները՝ կարգուկանոնը հսկելու համար, ու թեև կայարանում ամեն քայլափոխին միլիցիոներ էր հանդիպում, նրանց այդ չէր անհանգստացնում։ Ճաշեցին արագ, տեղերը զիջելով ուրիշ անհամբեր հերթի սպասողներին՝ պատրաստի ճաշատեսակներից մի բան ուտելու, և ապա անորսալի մի նշանով աննկատելիորեն ցրվեցին՝ ամեն մեկն իր իրերը վերցնելու. ուսապայուսակ, ձեռնապայուսակ, որի մեջ տանում էին հաց, պահածոներ և իրենց պետք այլ իրեր։ Ահա այդպես բանբերներն իրարից բաժանվեցին ամեն մեկն իր ճամփան բռնելով, ցրվեցին Մերձմոյընկումյան այստեղի տափաստանի անծայրածիր տարածությունների մեջ։

Պետրուխան ու նրա հետ Աբդիան և Լյոնկան մեկնեցին երեքով, ինչպես մտածված ու հրահանգավորված էր Ամենայի կողմից, որին Աբդիան այդպես էլ չէր կարողացել տեսնել։ Բայց այն, որ Ամենան անտեսանելի ղեկավարում է ամբողջ գործողությունը, կասկածի տեղիք չէր տալիս։ Նրանք Պետրուխայի հետ մեկնում էին ամենահեռավոր ծայրը, գրեթե մինչև Մոյընկումը, համընթաց բեռնատար մեքենայով մինչև «Ուչկուդուկ» սովխոզի բաժանմունքը, քսանհինգանոցով, որ վճարում էր Պետրուխան Ամենայի տված փողից։ Ամեն դեպքում, իրենց համար մի առասպել էին մոգոնել. իրր իրենք շաբաշնիկներ են։ Աբդիան հյուսն է, այս վայրերում ամենապետքական մարդը, որ, ի դեպ, համապատասխանում էր իրականությանը. Աբդիան իսկապես էլ

լավ հյուսն էր։ Հայրն էր մանկուց սովորեցրել։ Պետրոսիան նրա ուսապայուսակի մեջ էր դրել, դարձյալ համենայն դեպս, սովորական գործիքներ՝ ռանդա, կացին, դուր, որ դարձյալ հեռատեսորեն բերել էր հետը տնից։ Իրեն և Լյոնկային Պետրոսիան պետք է ներկայացներ որպես սվաղողներ և ներկարարներ. իրենք, իբր ՊՏՈՒ-ի սովորողներ են ու արձակուրդին մեկնում են ժամանակավոր աշխատանքի հեռավոր Ուչկուդուկ, Մերձմոյընկումի շրջանում մի քիչ փող վաստակելու տափաստանաբնակների մոտ տների շինարարության վրա։ Միանգամայն խելքի մոտ պատմություն։

Տոթ օր էր, սակայն բաց բեռնատարում ավելի հեշտ էր դիմանալ, շոգն այնքան էլ չէր վառում ու տափաստանի զով քամի էր փչում։ Ճիշտ է, ճանապարհը, ինչպես ամեն մի կողմնուղի, բանի պետք չէր, ամբողջովին քարուքանդ էր։

Երբ մեքենան արգելակում էր դարուփոսերում, անիվների տակից փոշու ամպ էր բարձրանում, մնում էր միայն քիթ ու բերան ծածկել և հազալով կոկորդ մաքրել։ Միակ բանը, որ համակերպում էր ծանր ճանապարհի հետ՝ շրջապատի լայնարձակություններն էին, ակամա ցանկություն էր առաջանում՝ թևեր ունենայիր ու թռչեիր երկրի վրայով... «Հիմա կարծես իմ աչքով տեսա ու համոզվեցի, որ երկիրը մոլորակ է,— մտածում էր Աբգիան, խցիկի մոտ կանգնած։— Իսկ որքան նեղվածք է մարդու համար մոլորակի վրա, ինչպես է նա վախենում, որ չի տեղավորվի, իրեն չի կերակրի, չի կարողանա գոյակցել ուրիշ իր նմանների հետ։ Եվ բանը նրանում չէ՞ արդյոք, որ նախապատմադրվածությունը, վախը, ատելությունը նեղացնում են մոլորակը մինչև ստադիոնի չափերի, որի վրա բոլոր հանդիսականները պատանդներ են, քանզի երկու թիմերն էլ, որպեսզի հաղթեն, հետները միջուկային ռումբեր են բերել, իսկ մարզասերները ոչինչ հաշվի չառնելով, բղավում են՝ գոլ, գոլ, գոլ։ Եվ հենց դա էլ մոլորակն է։ Իսկ չէ որ յուրաքանչյուր մարդու առաջ կանգնած է մշտական, անմարելի խնդիր՝ լինել մարդ այսօր, վաղը, միշտ։ Դրանից է գոյանում պատմությունը։ Ո՞ւր ենք մենք գնում հիմա, կենսական ի՞նչ կարևոր պետքի համար են մարդիկ որոնում թույնը իրենց և

իրենց նմանների համար, ի՞նչն է նրանց դրդում անելու այդ և ի՞նչ են գտնում նրանք ինքնուրացման այդ սարսափելի պատյտի մեջ»։

* * *

Ուչկուդուկում, այդ հիրավի կորած-մոլորած ու աստծուց մոռացված զազախական ավանում նրանք անմիջապես իրենց համար աշխատանք գտան. մի չոբանի շինարարությունը չավարտված տանը վարձվեցին սվաղ ու հյուսնություն անելու։ Չոբանն ինքը հոտի հետ արոտավայրում էր, ընտանիքն էլ հետը, իսկ կիսասարքված տունը դատարկ էր հարևան-ազգականին թողնված, այն հաշվով, որ միգուցե անցյալ տարվա նման հանկարծ շաբաշնիկներ հայտնվեն։ Եվ հայտնվեցին, ասես առաջուց գիտեին՝ Պետրոսյան, Աբդիան ու Լյոնկան, երեկ կտրիճ բանբեր։

Ապրում էին հենց այդ շինության մեջ, քանի որ գլխներին տանիք կար ու եղանակն էլ շոգ էր։ Բակում օջախ էին սարքել ու նույնիսկ բան-ման էին եփում։ Պետք է ասել, որ աշխատում էին գազանի նման։ Պետրոսյան լույսը բացվելուն պես վեր էր կենում ու անմիջապես արթնացնում էր իր արտելականներին՝ Աբդիային և Լյոնկային, և սկսում էին գործ անել, աշխատում էին մինչև մութն ընկնելը, և այդ ժամանակ միայն Պետրոսյան իրեն թույլ էր տալիս մի քիչ շունչ քաշել ու խորհրդածել։

— Դու, Ավդյա, տեսնում եմ նույնիսկ շատ գոհ ես՝ աշխատում ես։ Դեհ, տանտիրուջից մենք մեր հասանելիքը կստանանք, իհարկե։ Բայց այդքան փողը, եթե կուզես իմանալ, մեզ համար հեչ բան է։ Մի ատամի հաշիվ։ Դա մենք հենց այնպես, ուշադրություն շեղելու համար ենք անում։ Իսկ որ արդեն գործի գնացինք, ու մանավանդ մի լավ տեղ ընկանք, որ երկու ձեռքով պոկոտենք այդ ծաղիկը, դա արդեն ուրիշ բան է։ Մի օր չարչարվում ես տափաստանում, բայց հետո մի ամբողջ տարի ապրում ես մինիստրի նման։ Լյոնկա, դու հո գիտե՞ս։ Էդպես չի՞։

— Գիտեմ մի քիչ,— պատասխանեց ավելի շատ լուռ մնացող Լյոնկան։

— Բայց տեսեք, տղերք,— խստիվ զգուշացրեց Պետրուխան,— ոչ մեկին ոչ մի խոսք, ոչ հարևանին, ոչ էստեղացի ուրիշներին, նրանք բարի մարդիկ են, բայց մեկ է՝ մեռի, բայց ոչ մեկին ոչ մի խոսք։ Մանավանդ թե մեկնումեկը հայտնվի ու սկսի հարցուփորձ անել։ Դու, Աբգիա, ասա. ոչինչ չգիտեմ, ոչ մի բանից տեղյակ չեմ, հրեն, ասա, մեր բրիգադիրը, դա էլ իբր ես եմ, նրա հետ խոսեք, իսկ ես փոքր մարդ եմ, ոչինչ չգիտեմ։ Պա՞րզ է։

Ինչ կարող ես ասել՝ պարզ է, թող պարզ լինի... Բայց Աբգիային այդ չէր անհանգստացնում, այլ այն, որ ստիպված էր լռել, փորձ չէր կարող անել որևէ կերպ ազդելու տղաների վրա, որ ոտք էին դրել այդ սայթաքուն ճամփին, փափագում էին ինչ գնով էլ լինի ձեռք բերել այդ հանցավոր փողը. այդպիսի միջամտություն պահանջում էր նրա հոգին, սակայն նա չէր կարող իրեն այդ թույլ տալ։ Եթե անգամ Աբգիային հաջողվեր մտքի և խոսքի ուժով նրանց մեջ կասկած հարուցելու, ստիպելու, որ մտածեն իրենց կործանման մասին, եթե նույնիսկ, ասենք, այս երկուսը անսան ողջախոհության ձայնին ու վճռեն վերջ տալ նման կյանքին, նրանք չեն համարձակվի և չեն կարող այդ անել այն պարզ պատճառով, որ արդեն մի դաժան համերաշխիքով պինդ կապերով կապված են ուրիշների հետ, որոնք չգրված օրենքով կարող են նրանց պատժել դավաճանության համար։ Բայց ինչպես խափանել այդ արատավոր շրջանը։ Մի բան էր միայն Աբգիային մխիթարում, որ կարող է իր փորձով իմանալ, թե ինչպես են գործում անաշառի բանբերները ու հետո ամեն ինչ լրագրային մեծ նյութի մեջ շարադրելով, մարդկանց աչքերը բաց անել։ Եվ դա, ինչպես նա հույս ուներ, պետք է բարոյական պայքարի սկիզբ դառնար երիտասարդության ճամփից շեղված մի մասի հոգիների փրկության համար։ Այդ էր միայն օգնում Աբգիային համակերպվելու այն իրողության հետ, որ ինքն ակամա մասնակից էր դարձել նրանց գործերին, Պետրուխայի խմբի մեջ էր։

Ուչկուդուկում նրանց գտնվելու երրորդ օրը մի փոքր դեպք տեղի ունեցավ։ Աբգիան դրան մեծ նշանակություն

չավեց, իսկ Պետրոսյան, երբ իմացավ, շատ անհանգստացավ։ Պետրոսյան ինքն այդ ժամին բացակայում էր, հարևան Ծերուկի, հայրենական պատերազմի հաշմանդամի հետ նրա սայլակով գնացել էին սովխոզի կենտրոն պահածոների, ծխախոտի ու շաքարի պաշար բերելու, քանի որ հաջորդ օրը լուսաբացին վճռել էին դուրս գալ տափաստան, իբր գնում էին հիմա էլ ուրիշ տեղ փող վաստակելու։

Լյոնկան տան ներսը սվաղեց վերջացրեց, իսկ Աբդիան սովերում տեղավորված դռան էր սարքում մառանի համար։ Երբ դրսից հանկարծ շարժիչի դոդոց լսվեց, Աբդիան ետ նայեց ձեռքի ափը աչքերին պահած։ Տան առջև դոդոալով կանգնեց մի մեծ մոտոցիկլետ, վարորդը թեթև ցած թռավ նստած տեղից։ Ի զարմանս Աբդիայի, մոտոցիկլավորը շատ ջահել կին էր։ Եվ ինչպե՞ս էր նա կարողանում վարել այս ծանր մեքենան, այն էլ այսպիսի ճանապարհներով։ Կինը գլխից ցած քաշեց կախ ընկած կապիչով սաղավարտագլխարկը, հանեց հողմապաշտպան ակնոցը, գլուխը թափահարելով ուսերին թափեց խիտ շիկավուն մազերը։

— Խաշվեցի,— ժպտաց նա՝ ցույց տալով սպիտակ ատամնաշարը։— Եվ ո՞նց եմ փոշոտվել, աստված իմ,— ուրախ բացականչեց թափ տալով վրայից փոշին։— Բարև ձեզ։

— Բարև,— շփոթված պատասխանեց Աբդիան։ Պետրոսխայի անհեթեթ խրատները ազդել էին նրա վրա։ «Ո՞վ է սա։ Ինչո՞ւ է այստեղ եկել»,— մտածեց Աբդիան։

— Իսկ տերն այստե՞ղ է,— հարցրեց մոտոցիկլավորը, շարունակելով սիրալիր ժպտալ։

— Ի՞նչ տեր,— չհասկացավ Աբդիան։— Այս տանտե՞րը, ինչ է։

— Այո, ինարկե։

— Կարծես նա հիմա այստեղ չի, արոտավայրում է ինչ-որ տեղ։

— Դուք, ի՞նչ է, նրան չե՞ք տեսել։

— Չէ, չեմ տեսել։ Ոչ, տեսել եմ, հենց այնպես, անցորդակի, եկել էր օրերս։ Բայց հետը չեմ խոսել։

— Տարօրինակ է, ինչպես հետը չեք խոսել, չէ՞ որ կարծեմ աշխատում եք այստեղ, նրա տունն եք սարքում։

— Ներեցեք, բայց ես իսկապես էլ չեմ հասցրել խոսել նրա հետ։ Կարծեմ նա այն ժամանակ շտապում էր։ Նրա հետ խոսել է իմ ավագը։ Անունը Պյոտր է։ Հիմա նա այստեղ չէ։ Բայց շուտով կգա։

— Ոչ, նա ինձ պետք չէ, ներեցեք, որ զբաղեցրի։ Պարզապես ուզում էի Օրմանին տեսնել, նա լաբան է և գիտի այն, ինչ հետաքրքրում է ինձ։ Դրա համար էլ ճամփին մտա այստեղ, կարծում էի տանը կլինի։ Դեհ, ներեցեք, կարծեմ խանգարեցի։

— Ոչ, ոչ, ինչ եք ասում։

Մոտոցիկլավորը նորից գլխին դրեց կախ ընկած կապիչով սաղավարտագլխարկը, շարժիչը գործի գցեց, հեռանալով նայեց Աբդիային աչքապահպանակի ապակիների միջից և թեթևակի գլխով արեց։ Աբդիան էլ ի պատասխան, ինքն էլ այդ չնկատելով, ձեռքով արեց նրան։ Եվ հետո երկար դեռ նրա միտքը զբաղված էր այդ, թվում է, աննշան, պատահական դիպվածով։ Եվ բնավ ոչ այն պատճառով, որ հոգին կասկած էր ընկել, թե դա իսկապե՞ս պատահական այց էր գործի դուրս գալու նրանց նախօրեին, արդյոք նա չէ՞ր եկել բան-ման իմանալու, ոչ, բոլորովին այլ կողմ էին շեղվել նրա մտքերը։ Երբ այդ կինն արդեն հեռացել էր իր մեքենայով, եւևից փոշու ամպ հանած, նա պատկերացրեց նրան տեսանելի, մանրամասն, ասես նպատակ դրած լիներ մինչև կյանքի վերջը հիշելու։ Եվ հիմա անդրադառնում էր, զարմանքով ու հաճույքով, որ կինը լավ կազմվածք ուներ, ոչ բարձրահասակ, միջինից քիչ բարձր, բայց ամեն ինչ նրա մեջ կանացի էր ու համաչափ, ինչպես հենց սիրում էր ինքը։ «Ոչ, կատակը մի կողմ,— ասում էր այնպես, ասես վիճում էր որևէ մեկի հետ։— Կինը հենց այսպիսին պիտի լինի»։ Աբդիայի հիշողության մեջ մնացել էին նրա ոգեշունչ դեմքի նուրբ դիմագծերը, կենդանի փայլով շողացող մուգ շագանակագույն, գրեթե սև աչքերը, մինչդեռ ուսին ազատ թափված ու դեմքը շրջանակող մազերը շատ րաց շիկավուն էին և մուգ աչքերի ու բաց գույնի մազերի այդ զուգակցությունը նրան առանձին հմայք էր տալիս։ Ամեն բան նրանց դուր էր գալիս այդ կնոջ մեջ՝ և փոքրիկ հազիվ նկատելի

սպին ձախ այտին (գուցե երեխա ժամանակ ընկե՞լ է), և այն, թե նա ինչքան լավ էր հագնված՝ չինս, բաճկոն, մաշված երկարաճիտք կոշիկներ, ճիտքերը ծալած, և այն, թե նա ինչքան վստահ էր վարում մոտոցիկլետը. չէ որ Աբդիան ինքը միայն հեծանիվ էր կարողանում նստել... Ու մեկ էլ մտածում էր, թե ինչպես շփոթվեց, երբ կինը նրան հարցրեց տանտիրոջ մասին, իսկ ինքը՝ տեսել եմ, ոչ, չեմ տեսել, ոչ տեսել եմ... իսկական լակոտի նման, ախր ինչո՞ւ այդպես շփոթվեց։

Հետաքրքիր, շատ հետաքրքիր էր Աբդիա Կալիստրատովի համար մտածել նրա մասին, թեև, թվում է, հիշելու բան էլ չկար. եկավ, տեղնուտեղը մեկնեց, ուրիշ ոչինչ։ Եվ սակայն ո՞վ էր նա, որտեղի՞ց էր հայտնվել,— ըստ ամենայնի նա ինչ-որ տեղից եկած էր, բայց ինչո՞ւ, և այդպիսի կինն ինչ գործ ուներ այս տափաստանային վայրերում...

Պետրուխան իմանալով, որ իրենց մոտ անծանոթ կին էր եկել մոտոցիկլետով, լրջորեն անհանգստացավ և երկար ու մանրակրկիտ հարցուփորձ էր անում, թե ինչ էր նա հարցրել, ինչով էր հետաքրքրվել ու Աբդիան ինչ էր նրան պատասխանել։ Ստիպված եղավ մի քանի անգամ բառ առ բառ վերապատմելու իրենց խոսակցությունը։

— Այստեղ մի բան կա, այստեղ մի բան կա,— կասկածով գլուխն օրորեց Պետրուխան։— Ափսոս ես չկայի, ես միանգամից կհասկանայի դրա ով, ինչ լինելը։ Տեսնում ես, Ավդյա, չնայած դու խելոք ես, գրագետ, բայց էստեղ ես քեզնից լավ գլուխ կհանեի, հարցուփորձ կանեի, թե որ էդպես էր։ Կիմանայի նա ով է, ի՞նչ է ուզում, իսկ դու, ախպերս, գլուխդ կորցրել ես, տեսնում եմ, որ գլուխդ կորցրել ես, չնայած քեզ զգուշացրել էի, որ էդպես դեպք էլ կլինի։

— Ինչո՞ւ ես անհանգստանում,— փորձում էր համոզել նրան Աբդիան։— Ի՞նչ է եղել, որ այդպես վախենում ես։

— Այն է եղել, որ հիմի շները կարող են մեր հետքը գտնել։ Բա որ նրանք լինեն էդ կնկան մեր մոտ ուղարկած, որ գա տեսնի, իմանա։

— Վերջ տուր, դատարկ բաներ ես դուրս տալիս։

— Մի տեսնեմ հետո ինչ կասես, որ ծակը կոխեն կամ երբ Ամենայնին պատասխան տալու լինես, իսկ նա, իմացած

լինես, շներից խիստ կլինի, կաշիդ կքերթի, ու հլա մեկ էլ տեսար ծակեց։ Գոնե հասկանո՞ւմ ես, ինչ կնշանակի ծակե՞լ։

— Պյոտր, հանգիստ մնա, ինչ լինելու է կլինի։ Դրա մասին առաջուց պիտի մտածեիր։ Ահա Լյոնկան, դեռ փոքր տղա է, և ո՞վ է նրան այդ գործի մեջ քաշել։ Կամ թեկուզ դու, քանի՞ տարեկան ես՝ քսան կա՞ս, թե չէ։ Իսկ ապուշի նման մի քայլ չես կարող անել, մի խոսք ասել չես համարձակվում, թե չլինի հանկարծ զայրացնես Ամենայինին։ Լավ կանեիր մտածեիր, թե հետո ինչ է լինելու, այստեղ մտածելիք շատ կա։

Սակայն Աբդիայի փորձը հաջողություն չունեցավ, Պետրուխան անմիջապես ջղայնացավ։

— Դա քո գործը չի, Ավդյա, ու Լյոնկայի հետ էլ գործ չունենաս։ Էն որ սովորել ես տերտեր դառնաս, մտքիդ հան, մուացիր։ Մոռացիր։ Քո լավ խոսքերից կոպեկի օգուտ չկա, իսկ էսպես, Ամենայի մոտ, մենք փուլ ենք շինում։ Հասկացա՞ր։ Լյոնկան որը տղա է, նա ո՞ւմ է պետք, խլ փող ունեցավ, ինքն իրա գլխի տերն է։ Կուզի՝ կխմի, կուզի՝ կուտի։ Իսկ քո հեքիաթները փոր չեն կշտացնի, էլ չասած որ ընկերներիդ հետ մի լավ քեֆ անես, էնպես որ սուղանը տրաքվի, որ աղջիկները բեմում էնպես երգեն, որ հոգիդ շուռ տան, դա երազումդ էլ չես տեսնի։ Հրեն իմ հարազատ ախպերներս, բանվոր-աշխատավոր են, մի տեսնես, թե էդ մանեթը ոնց են աշխատում։ Մեջք կոտրելով։ Իսկ ինձ համար մանեթը հեչ, ուզեմ՝ հետևս կսրբեմ։ Փողը մենակ հիմարը չի սիրի, ճիշտ չե՞մ ասում, Լյոնկա։

— Ճիշտ ես ասում,— երանավետ ժպտալով, սա գլխով էր անում, առանց մի կասկածի։

Սակայն այսքանը դեռ նախապատրաստություն էր ավելի հիմնավոր խոսակցության համար, հենց որ առիթ ներկայանար։ Աբդիան հասկանում էր, որ շատ չպետք է խոբանալ, այլապես ով կհավատա, թե նա գնում է անշահի՝ փափագելով նախ և առաջ փող շահել։

Հաջորդ օրը լույսը բացվելուն պես վեր կացան։ Երկրի ծայրին արշալույսը հազիվ էր շառագունել, ավանի քիչ հեռու շարված տները դեռ քնած էին, ու նույնիսկ շները չէին հաչում, երբ երեք բանբերները զգույշ, անաղմուկ բանջարա-

նոցներով դուրս էին գալիս բաց տափաստան։ Պետրուխայի ասելով, այնքան էլ հեռու չպիտի գնային։ Նա գիտեր, թե որ կողմը պիտի գնար և խոստացել էր հենց մի տեղ կանգնեփ-անաշա տեսներ, անմիջապես ցույց տար Աբդիային։

Շուտով այդ առիթը ներկայացավ։ Բավական պինդ, ցողունավոր, ուղիղ աճած բույսը՝ ցողունի շուրջ խիտ ծոպավոր ծաղկաբույլով, պարզվեց, հենց այդ անաշան էր, հանուն որի նրանք Եվրոպայից Ասիա էին եկել։ «Տեր իմ,—մտածում էր Աբդիան, անաշային նայելով,— տեսքով այսքան սովորական բույս է, ոնց որ մոլախոտ լինի, բայց ո՞մանք այնքան թմրեցնող երանություն են գտնում դրա մեջ, որ կյանք են տալիս այդ թմրադեղի համար։ Իսկ ահա այստեղ թափված է ոտներիդ տակ»։ Այո, դա անաշա էր, արևն արդեն բարձրացել էր և սկսել էր այրել, իսկ նրանք կանգնած էին ամայի բաց տափաստանում, ուր ոչ մի ծառ չկար, ու մատներով ծաղկաթերթիկները տրորելով, շնչում էին վայրի կանեփի կպչուն, տհպ բույրը։ Իսկ չէ որ դարեր շարունակ ինչ տարօրինակ տեսիլքներ ասես չի ծնել անաշան ծխամոլների մոտ։ Աբդիան փորձում էր պատկերացնել առաջվա արևելյան շուկաները (այդ մասին կարդացել էր գրքերում) Հնդկաստանում, Աֆղանստանում կամ Թուրքիայում, ինչ-որ տեղ Ստամբուլում կամ Ջայպուրում, հին ամրոցի պատերի մոտ, երբեմնի նշանավոր պալատների դարպասների մոտ, որտեղ անաշան բացեիբաց ծախում էին, առնում ու տեղնուտեղն էլ ծխում, ուր ամեն մեկն իր ձևով, իր երևակայության սահմաններում անձնատուր էր լինում այլևայլ զգայախաբությունների. մեկի աչքին երևում էին հարեմի վայելքներ, մեկին հանդիսավոր շրջագայություն շահի ոսկեզօծ փղերով շքեղ ամպհովանու տակ, տոնական փողոցների խայտաբղետ բազմության և շեփորների որոտի միջով, մեկի աչքին էլ՝ միայնության մռայլ խավար, ծնունդ առած ամայացած մտքի ընդերքից, խավար, որ փոթորկվող կատաղություն է առաջացնում, աշխարհը խորտակելու և հողմացրիվ անելու ցանկություն։ Անմիջապես, հիմա, դեմ առ դեմ... Այդ չէ՞ արդյոք երբեմնի ծաղկող Արևելքի կորստաբեր աղետներից մեկը։ Եվ մի՞թե գիտակցության այդ քաղցր

մթագնումը թաքնված է վայրի կանեփի մեջ, որ հենց այնպես, սովորական աճում է այս չոր տափաստաններում...

— Ահա սա է, հարազատս,— ուրախ ասում էր Պետրոսյանը, ձեռքի լայն շարժումով ցույց տալով տափաստանային լայնարձակություններըն— Նայիր հրեն, էլի, էլի՝ Ամբողջը, ամբողջը անառա է՝ Բայց այստեղ չենք հավաքելու, սա ինչ է որ՝ Սա հեչ՝ Ձեզ է՞ն տեսակ տեղեր տանեմ, որ շշմած մնաք...

Ու նրանք շարունակեցին և մի ժամից հասան անառայի այնպիսի խիտ թփուտների, որ դրա հետից միայն քեֆները լավացավ, ինչպես թեթև հարբածությունից՝ Կանեփ այստեղ կար սրտիդ ուզածին չափ՝ Եվ նրանք սկսեցին հավաքել անառայի և տերևները, և ծաղիկը, ու հավաքածը փուռում էին չորացնելու՝ Պետրոսյան ասում էր, որ պետք է չորացնել մի երկու ժամի չափ, ոչ ավելի՝ Գործն առաջ էր գնում... Եվ ամեն ինչ ավելի քան լավ էր ընթանում՝ Սակայն հանկարծ ինչ-որ տեղից ուղղաթիռի գվվոց լսվեց՝ Այն ցածր թռչում էր տափաստանի վրայով և, կարծես, նրանց կողմն էր գալիս՝

— Ուղղաթիռ, ուղղաթիռ,— տղայավարի բարձր և ուրախ բղավեց Լյոնկան ու սկսեց թռչկոտել՝

Սակայն Պետրոսյան իրեն չկորցրեց՝

— Պառկիր, ապուշ,— բղավեց, հետո էլ մայր հայհոյելով՝

Ու բոլորն էլ պառկեցին երեսնիվայր, թաքնվեցին խոտերի մեջ. ուղղաթիռն անցավ նրանցից շատ մոտ, և ուղղաթիռավորները հաղիվ թե նկատեցին նրանց, բայց Պետրոսյան ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ, դեռ երկար հանդիմանում էր Լյոնկային. նրան թվում էր, թե ուղղաթիռը հատկապես եկել էր բանբերներին հայտնաբերելու՝

— Դեհ, խմարկե,— խոսում էր նա,— վերևից ամեն ինչ երևում է, նույնիսկ մուկն էլ է երևում՝ Իսկ մենք, ապուշներս, հարյուր վերստի վրա էլ կերևանք՝ Նա մեզ հենց տեսնի, իսկույն ռադիոյով կհայտնի ուր պետք է՝ Իսկ որ միլիցիան մեքենաներով վրա տա, փախչելու տեղ էլ չունենք, մնում է ձեռներդ բարձրացնես՝ ու վերջ՝

Սակայն շուտով նա էլ մոռացավ այդ մասին, պետք էր աշխատել՝ Հենց այդ օրն էլ տեղի ունեցավ մի չլսված-չտես-

նրված դեպք։ Աբդիան հանդիպեց գայլերի ընտանիքին։ Իսկ դա այսպես եղավ։

Դադար տվեցին, մի թեթև նախաճաշեցին, և այդ ժամանակ Պետրոսյան ասաց.

— Լսիր, Աբդիա, դու ոնց որ արդեն հարմարվել ես մեզ, դարձել ես մերը մինչև վերջ։ Դե՛հ, տես, թե քեզ ինչ կասեմ։ Մեր մոտ, ուրեմն, էս տեսակ օրենք կա բոլոր նորեկների համար, քեզ նմանների։ Եթե ուրեմն, առաջին անգամ ես գործի դուրս գալիս, պետք է Ամենայինի դրա համար վճարես կամ նվեր տաս, ոնց կուզես։

— Ի՞նչ նվեր,— ձեռները տարածեց Աբդիան, զարմացած գործի նման ընթացքից։

— Դու մի լսիր, ինչ ես իրար անցել։ Կարծում ես, ինչ է խանո՞ւթ պիտի վազ տաս նվերի։ Չես հասնի։ Իմ ասածը ուրիշ է։ Դու պիտի պլաստիլին հավաքես, դե՛հ, թեկուզ մի լուցկու տուփի չափ։ Կվազվզես էստեղ խոտերի մեջ, քեզ կասեմ, թե դա ոնց են անում, իսկ էդ պլաստիլինը, ուրեմն, հանդիպելիս կտաս որպես բարեկամության նշան, դե՛հ, դու խելոք մարդ ես, ամեն ինչ հասկանում ես. Ամենան՝ գլխավորն է, դու ենթակա ես, նա քեզ վստահել է...

Աբդիան մտածեց, բայց չէ որ իր համար էլ դա ձեռնտու է. պլաստիլինի՝ անաշայի փոշեզանգվածի, ամենաթանկագին նյութի նվիրումը կարող էր իր համար ճամփա բացել դեպի Ամենան։ Հնարավորություն էր ստեղծվում տեսնելու, ի վերջո, Ամենայինին։ Իսկ որքա՞ն պետք էր այդ։ Հանկարծ ու հաջողվի խոսակցություն բացել Ամենայի հետ, որի իշխանության տակ էին բոլոր բանբերները։ «Իշխանություն, իշխանություն ,որտեղ երկու մարդ, այնտեղ արդեն իշխանություն»,— դառնորեն քմծիծաղեց Աբդիա Կալիստրատովը։

— Լավ,— ասաց նա,—ուրեմն պլաստիլին կհավաքեմ ու կտամ Ամենայինին։ Իսկ ե՞րբ եմ տալու, կայարանո՞ւմ, ինչ է։

— Հաստատ չգիտեմ,— խոստովանեց Պետրոսյան։— Գուցե հենց վաղն էլ տաս։

— Ինչպե՞ս, վա՞ղը։

— Այո։ Մեր վերադառնալու ժամանակն է։ Բավական է։ Իսկ վաղը ամսի քսանմեկն է։ Վաղը, ոնց որ զինվոր,

ցերեկվա ժամը չորսին պետք է տեղում լինենք։ Ուրեմն պիտի գնանք։

— Ո՞ր տեղում։

— Որտեղ պետք է,— պարծեցավ իր լավատեղյակությամբ Պետրոսիանն։— Կհավաքվենք՝ կիմանաս։ Երեք հարյուր երեսուն կիլոմետրում։

Աբդիան այլևս հարց չտվեց. հասկացավ, որ երեք հարյուր երեսուն կիլոմետրը որևէ տեղամաս պիտի լինի Ջուլի երկաթգծի որևէ ճյուղում, կարևորն այլ բան էր՝ հանդիպումը ամենայն հավանականությամբ կարող էր տեղի ունենալ այնտեղ և ամենայն հավանականությամբ վաղը։ Ուրեմն ավելի լավ չի՞ առանց ժամանակ կորցնելու սկսել այդ պլաստիլինը հավաքել։

Պարզվեց դա դժվար գործ չէր, բայց սարսափելի հոգնեցնող էր և արվում էր բարբարոսական եղանակով։ Հարկավոր էր լրիվ մերկանալ ու վազվզել թիուտների մեջ, որպեսզի կանեփի ծաղկաբույլերից ծաղկափոշին կպչի մարմնիդ, ինչ և նա արեց։ Եվ ինչքա՜ն ստիպված եղավ վազվզել այդ օրը Աբդիա Կալիստրատովը, կյանքում երբեք այդքան չէր վազել։ Ծաղկափոշին, շատ մանր, գրեթե անտեսանելի, գրեթե անգույն թեև կպչում էր մարմնին, բայց այդ համարյա անտեսանելի շերտը այնքան էլ հեշտ չէր մարմնի վրայից հավաքել, այնպես որ հակառակ բոլոր ջանքերին, պլաստիլին չափազանց քիչ էր ստացվում։ Եվ միայն այն գիտակցությունը, որ դա անհրաժեշտ է գլխավորի, Ամենա հորջորջվողի հետ հանդիպելու համար, նրա համար, որ նյութ հավաքելով կարողանա բացել բանբերների վարքագծի թաքուն զսպանակները և խոսքի, թերթի միջոցով ցավի աղաղակով հայտարարի այդ երկրով մեկ, միայն այդ էր ստիպում Աբդիային ետ ու առաջ վազվզել կիզիչ արևի տակ։

Այդ վազվզոցի մեջ Աբդիան բավական հեռացավ իր ընկերներից, որոնելով տափաստանում անաշալի ավելի խիտ թիուտներ։ Եվ այդժամ նրա մեջ մի ինչ-որ պահ առաջացավ զարմանալի թեթևության վիճակ, հարթմնի, թե երևակայության մեջ ճախրելու վիճակ։ Աբդիան չնկատեց էլ, թե դա

ինչպես եղավ։ Երկնքում շռայլորեն լուսավորում էր արեգակը, օդը հագեցած էր տաքությամբ, ճախրում ու սուլոցով իրար ձայն էին տալիս ինչ-որ թռչուններ, հատկապես կըլկըլացնում էին արտույտները, երևում էին թիթեռնիկներ ու այլ միջատներ, և դրանք էլ զանազան ձայներ էին արձակում. մի խոսքով իսկական երկրային դրախտ էր, և այդ դրախտում, լրիվ մերկանալով, թողնելով հագին միայն ծղոտե գլխարկը, ակնոցը, լողավարտիքն ու սպորտային կոշիկները, Աբդիա Կալիստրատովը նիհար, սպիտակամաշկ հյուսիսցին, ծաղկափոշուց հարբած, ասես լարովի ետ ու առաջ էր վազվզում տափաստանում, ընտրելով ամենաբարձր և խիտ խոտածածկոցը։ Նրա շուրջ քուլա-քուլա բարձրանում էր ծաղկող, սերմ գցող կանեփի ծաղկափոշին, և այդ ճախրող թմբիրի երկար ներքաշումից Աբդիայի երևակայության մեջ բնականաբար զանազան տեսիլքներ էին առաջանում։ Հատկապես բերկրալի էր մեկը. նա սլանում էր մոտոցիկլետով, այն երեկվա մոտոցիկլավոր կնոջ ետևում տեղավորված։ Ընդ որում, նրան ամենևին չէր շփոթեցնում այն հանդամանքը, որ ինքը չէ նստած հզոր մոտոձիան ղեկին, ինչպես վայել էր իսկական տղամարդուն, այլ ուղևորի նման տեղավորվել էր ետևում, այնտեղ, ուր սովորաբար նստում են կանայք։ Բայց ինչ արած, եթե ինքը մոտոցիկլետ վարել չգիտի և ընդհանրապես տեխնիկայից հեռու մարդ է։ Նրան միանգամայն բավարարում էր այն, որ սլանում է այդ կնոջ հետ նույն մոտոցիկլետով։ Կնոջ մազերը ծածանվում էին քամուց, դուրս գալիս սաղավարտագլխարկի տակից, դիպչում էին նրա դեմքին, քամու ձեռքերի նման, կպչում շրթունքներին, աչքերին, խոտոտացնում էին պարանոցը, և այդ ամենը հրաշալի էր. երբեմն կինը ետ էր նայում, չարաճճի ժպտում նրան, աչքերը փայլեցնում՝ ինչպե՞ս էր ուզում նա, որ դա շարունակվի հավերժորեն, անվերջ։

Սթափվեց այն ժամանակ միայն, երբ տեսավ կողքին երեք գայլաձագերին։ Ա՛յ քեզ բան։ Սրանք որտեղի՞ց հայտնվեցին։ Աչքերին չէր հավատում։ Երեք գայլաձագերը, պոչները խաղացնելով, ուզում էին մոտենալ նրան, խաղալ հետը, վախենում էին, բայց չէին փախչում։ Դեռահասների

նման բարձրասրունք, կիսացցված, թույլ ականջներով, դեռ սրագունչ ու աշխույժ, ծիծաղելիության չափ վստահող աչքերով: Դա չգիտես ինչու այնպես հուզեց Աբգիային, որ ամեն բան մոռանալով, սկսեց քնքշորեն մոտ կանչել փոքրիկ գայլերին, զվարճացնել ու գրավել, և ինքն էլ ամբողջապես փայլում էր մարդկային բարեհաճությունից, երբ հենց այդ պահին տեսավ սպիտակ կայծակի փայլկատում՝ վրա հասնող էդ գայլի բացված սպիտակ ատամնաշարը... Դա այնքան անսպասելի էր, այնքան պարզ, բայց և այնքան դանդաղ ու սարսափելի, որ նա չզգաց, ինչպես ծնկներն իրենք իրենց ծալվեցին և ինչպես ինքը պզզեց, գլուխը բռնած. նա չհասկացավ էլ, որ հենց այդ փրկեց իր կյանքը. իսկ էդ գայլն արդեն երեք քայլի վրա էր ու կատաղի ցատկով հանկարծ թռավ նրա դեմի վրայով, դազանի շունչ փչելով, և նույն պահին նրանց աչքերը հանդիպեցին, Աբգիան տեսավ գայլի հրե կապույտ հայացքը, նրա աննման կապույտ ու դաժան աչքերը, ու մարմինը սարսռաց, իսկ գայլն այդ միջոցին ևս մի անգամ հողմի պես սուրաց թռավ նրա վրայով և նետվեց դեպի ձագերը, թափով նրանց ետ քաշելով, գործի դնելով ատամները, հետո էլ միանգամից ետ դարձրեց ձորակից դուրս եկած սարսափելի դազանին՝ բաշը ցցած ահռելի գայլին, և բոլորով վայրկենապես անհետացան, ասես փոթորիկը քշեց տարավ...

Իսկ Աբգիան գլուխը պրծացնելով երկար վազում էր տափաստանով, ու սարսափը ճիշով դուրս էր ժայթքում միջից: Նա վազում էր, իսկ գլուխը պտտվում էր, մարմինը ծանրացել էր, դեմինը երերում էր թուլացած ոտքերի տակ. ուզում էր ընկնել, փռվել դետնին, քնել, և այդ ժամանակ սկսեց սիրտը խառնել, սկսեց փսխել, և զգաց, որ հասել է իր մահվան ժամը: Բայց, այնուամենայնիվ, կամքի ուժ ունեցավ ամեն անգամ հեռու փախչելու զզվելի փսխածից ու շարունակելու վազել, մինչ փսխումի նոր նոպան երեքտակ էր անում նրան որովայնի մեջ ահավոր ցավ ու ծակոցով: Ծաղկափոշու թույնը փսխելով, ջղաձգումներից տառապելով, Աբգիան հեծեծում էր մռմռթալով. «Տե՛ր Աստված, դադարեցրու, բավական է: Երբեք, երբեք այլևս անաշա չեմ հավաքի: Այլևս չեմ դիմանում, չեմ ուզում,

չեմ ուզում տեսնել ու զգալ այս հոտը, օօ, Աստված, գթա ինձ...»։

Երբ վերջապես փսխումը դադարեց և նա պատրաստվում էր արդեն դնալ գտնել իր հագուստը, նրա մոտ վազեցին Պետրոսյան և Լյոնկան։ Դայլերին հանդիպելու պատմությունը սարսափելի ազդեց նրանց վրա։ Հատկապես վախեցավ Լյոնկան։

— Լավ, մի վախենա։ Ի՞նչ ես դողում,— վրա տվեց նրան Պետրոսյանը։— Մարդիկ որ ոսկու էին գնում, ինչ ասես որ չէր պատահում, բայց ոչինչ, մեկ է գնում էին... Իսկ դու ինչ-որ գայլերից ես վախեցել, ախր նրանց հետքն էլ չկա...

— Հա, ոսկու էին գնում,— ասաց Լյոնկան, քիչ լռելով։

— Իսկ քեզ համար ինչ տարբերություն,— կոպիտ ասաց Պետրոսյանը։

Հենց դրանից էլ օգտվեց Աբդիան։

— Տարբերություն կա, Պյոտր,— ասաց նա։— Եվ շատ շատ մեծ տարբերություն։ Ոսկուց էլ շատ չարիք է լինում, բայց այն թաքուն չեն հանում, իսկ անաշան թույն է, թույն է բոլորի համար։ Ինձ վրա զդացի, քիչ էր մնում մեռնեի, ամբողջ տափաստանը փսխունքով լցրի...

— Լավ, վերջ տուր, մի քիչ թունավորվել ես անսովորությունից, ոչ ոք մեղավոր չի,— դժգոհ ձեռքը թափ տվեց Պետրոսյանը։— Քեզ հո զորով չե՞ն բերել էստեղ։ Հենց մի գլուխ աստծուց ես խոսում, մեկ էլ՝ ինչն է լավ, ինչը վատ, ինչի՞ ես մեր գործը փչացնում։ Ի՞նչ ես հա ջուր պղտորում։ Բայց որ բանը փողին եկավ, իսկի դեմ չեղար, եկար, քիչ էր մնում դելի բաժին դառնայիր։

— Ուզում եմ ոչ թե ջուրը պղտորել, այլ մաքրել։— Աբդիան որոշեց, որ պետք է ավելի բաց խոսի, քան մտադիր էր։— Դու, ահա, Պյոտր, կարծես խելացի տղա ես, ուրեմն չի կարող պատահել, որ չհասկանաս, թե ինչ հանցագործության ես գնում...

— Գնո՛ւմ եմ։ Իսկ դո՞ւ ինչի ես գնում։

— Ես գնում եմ, որ փրկեմ։

— Փրկես,— չարությամբ բղավեց Պետրոսյանը։— Դու էդ ո՞նց պիտի մեզ փրկես։ Մի պատմի տեսնեմ։

— Նախ՝ եկեք մեր մեղքերը խոստովանենք Աստծուն և մարդկանց...

Ի զարմանս Աբդիայի, նրանք չծիծաղեցին։ Միայն Պետրուխան թքեց, ասես մի զզվելի բան էր բերանն ընկել։

— Խոստովանենք։ Բա՞ն մոդտնեց,— փնթփնթաց նա։— Դու խոստովանի, իսկ մենք փող ենք շինելու։ Մեզ փող է պետք, հասկացա՞ր՝ պարզ և որոշակի։ Իսկ դու խոստովանիր։ Ու թե կատակ ես անում, Ավդյա, զդույշ եղիր։ Ամենան որ իմացավ մեզ ճամփից հանում ես, էլ տեղ չես հասնի, միտդ պահի։ Ասում եմ քեզ, ոնց որ բարեկամիս։ Ու մեզ հանդիստ թող, մեզ համար կարևորը փողն է։ Լյոնկա, ասա, քեզ ինչ է պետք՝ Աստվա՞ծ, թե՞ փող։

— Փող,— պատասխանեց նա։

Աբդիան լռեց։ Վճռեց սպասել, հետաձգել խոսակցությունը։

— Լավ, բավական է, խոսեցինք-պրծանք, հավաքվենք ճամփա ընկնենք,— հաշտվող տոնով կարդադրեց Պետրուխան։— Իսկ քո պլաստիլինը, Ավդյա, ուրեմն, դլուխ չեկա՞վ։

— Դժբախտաբար, ոչ։ Հենց էդ դայլը նետվեց վրաս, ինքս էլ չդիտեմ ուր դցեցի։ Հագուստս էլ ինչ-որ տեղ եմ թողել, դնամ ման դամ...

— Հագուստդ կգտնվի, բան չի լինի, բայց պլաստիլին արդեն չես հասցնի հավաքել։ Այսօր պետք է դնանք։ Լավ կպատմենք, ինչն ինչոց է, կհասկանա։ Թե չհասկացավ էլ, մյուս անդամ կհավաքես...

Անաշա խոտով բերնեբերան պինդ լցված ուսապայուսակներն ուսերին, նրանք մինչև կեսդիշեր քայլում էին երկաթուղու կողմը։ Քայլելն այնքան էլ դժվար չէր, ինչ մի ծանրություն էր՝ չորացրած խոտ, բայց անաշայի ուժեղ հոտը, որ չէր մեղմանում նույնիսկ պոլիէթիլենե պարկերի միջից, դլխապտույտ էր առաջացնում, քուն էր բերում։ Կեսդիշերին նրանք տափաստանում մի տեղ մեկնվեցին քնելու, այն հաշվով, որ լուսաբացին շարունակեն ճամփան։ Լյոնկան խցկվեց Արդիայի և Պետրուխայի միջև՝ այն դեպքից հետո

վախենում էր գայլերից։ Դժվար չէր հասկանալ,, դեռ փոքր տղա էր։ Ամեն ինչ հակառակն էր ստացվում. քայլելիս այնպե՞ս էր քունը տանում, իսկ երբ պառկեցին, Աբդիան երկար չէր կարողանում քնել։ Այն, որ Լյոնկան խնդրեց նրանց մեջտեղում պառկել, նրան շատ էր հուզել. ով կարող էր մտածել՝ պստիկ տղա, վախենում է գայլերից, բայց որքան մեծ է արատի իշխանությունը, փոքրուց աղավաղված պատկերացումները կյանքի մասին, որ նույնիսկ Լյոնկան երեկ, առանց աչքը թարթելու, ասաց, որ փողն իր համար Աստծուց կարևոր է։ Աստվածն, իհարկե, հասկացվում էր պայմանական, որպես արդար կյանքի խորհրդանիշ։ Ահա թե ինչի մասին էր մտածում Աբդիան...

Իրենց յուրահատուկ գեղեցկությունն ունեն տափաստանի դիշերներն ամռանը։ Անսահման լռություն, որ գալիս է երկրի և երկնքի մեծությունից, տաք օդ բազում խոտերի շնչով լցված, և ամենադյուրիչ տեսարանը՝ փայլփլող լուսինը, աստղերն անթիվ-անհամար, և ոչ մի փոշեհատիկ հայացքիդ ու աստղի միջև ընկած տարածության մեջ, և այնպիսի մաքրություն, անաղարտություն է այնտեղ, որ նախ և առաջ այնտեղ՝ այդ խորհրդավոր աշխարհի խորքն է գնում մարդու միտքը հազվագյուտ այն պահերին, երբ կտրվում է առօրյա դործերից։ Ափսոս միայն, որ կարճ ժամանակով...

Ու մտածում էր Աբդիան, որ առայժմ ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես ուզում էր ինքը. բանբերների հետ հասավ կանեփի տափաստանները, ամեն ինչ իր աչքով տեսավ, ինչպես ասում են, փորձեց իր վրա։ Հիմա մնում էր ամենադժվարը՝ գնացք նստել և մեկնել։ Բանբերների համար ամենավտանգավոր պահը անաշան տանելն էր։ Միլիցիան նրանց բռնում էր գլխավորապես ասիական կայարաններում, ռուսաստանյան մասում այդ խմաստով ավելի հեշտ էր։ Իսկ եթե հաջողվում էր հասնել Մոսկվա և այնուհետև մինչև իրենց տեղերը, դա արդեն կատարյալ հաղթանակ էր։ Կյանքի մեծագույն չարիքը հաղթանակում էր դառնալով փոքր հաջողությունը փոքր մարդկանց։

Աբդիայի համար դժվար էր համակերպվել դրան նույնիսկ մտովի, սակայն և ձեռնարկել որևէ բան, որպեսզի ոչ

թե միայն կանխի, ասենք, այդ հանցագործությունը, այլ վերափոխի մտածողությունն, համոզի և վերահամոզի բանբերներին, նա հասկանում էր, որ իր ուժերից վեր է։ Նա, ով դիմադրում էր իրեն, դանվելով այստեղ մոտերքում, այս տափաստաններում, նա ով անտեսանելի իր ձեռքում էր պահում բանբերներին, այդ թվում հսկողության տակ պահում նաև իրեն՝ Աբդիային, նա, ով այդ բոլորի մեջ կոչվում էր Ամենա, իրենից շատ ու շատ ուժեղ էր։ Եվ հենց նա, այդ Ամենան էր տերը, եթե ոչ ավելին՝ միկրոդիկտատորն անաշայի այս արշավում, իսկ ինքը՝ Աբդիան, որ միացել էր նրանց, ինչպես թափառական կրոնավոր՝ ավազակներին, առնվազն ծիծաղելի էր... Սակայն կրոնավորը, Աստուծո իդեալիստը և ֆանատիկոսը, բոլոր հանդամանքներում պետք է կրոնավոր մնա... Այդ էր սպասվում և նրան...

Մտածում էր և այն մասին, թե ինչ տարօրինակ դեպք կատարվեց իր հետ անցած օրը. այդ գայլաձագերը, անխնայ երկարոտն ձագերը, ու մարդուն մի անվնաս ծիծաղելի էակի տեղ էին դրել ու հետը դեմ չէին մի քիչ խաղալ, և հանկարծ այդ կապտաչյա կատաղած էդ գայլը։ Ինչ կատաղություն էր եփ գալիս նրա մեջ, և ինչպես հետո ամեն ինչ լավ վերջացավ, և ի՞նչ միտք ուներ այն, որ մայր գայլը երկու անդամ թռավ իր վրայով։ Եվ հետո՝ նրա և իր գայլի համար ոչինչ չարժեր մի րոպեում հոշոտել այդ մերկ,— եթե չհաշվենք ծղոտե գլխարկն ու լողավարտիքը,— քաղաքաբնակ անպաշտպան ապուշին, որ մերկ էր ու անպաշտպան ծիծաղելիության աստիճանի։ Բայց, խնդրեմ, ճակատագիրը հանձինս այդ գազանների դթաց նրան. չի՞ նշանակում արդյոք, որ նա դեռ պետք է այս կյանքում։ Բայց որքան դեղեցիկ, որքան սլացիկ էր չտեսնված կապտաչյա էդ գայլը իր կատաղության պոռթկման, ձագերի համար իր վախի մեջ։ Այո, իհարկե, նա իրավացի էր յուրովի, և շնորհակալ եմ նրան, որ չհարձակվեց, դժբախտությունն չբերեց, չէ որ ինքն էլ ոչ մի մեղք չէր գործել։ Եվ այդ մտածելով Աբդիան կամացուկ ծիծաղեց, պատկերացնելով, որ եթե այդ պահին տեսներ նրան այն մոտոցիկլավոր կինը, ինչպես պիտի ծիծաղեր։ Կղվարճանար երևի, ինչպես կրկեսում ծաղրածուին նայելիս։

Բայց նրան սարսափ համակեց. իսկ եթե հանկարծ մոտոցիկլետը փչանար այս ամայի տափաստանում, նա մենակ լիներ ու մեկ էլ գայլերը հարձակվեի՞ն: Ու պատկերացնելով սկսեց անհավատորեն թախանձել կապտաչյա էգ գայլին. «Լսիր ինձ, դեղեցկուհի մայր գայլ: Դու ապրում ես այստեղ, ու ապրի ինչպես ուզում ես, ինչպես բնությունն է կարգել: Միակ բանը, որ աղաչում եմ քեզնից, եթե հանկարծ այն կնոջ մոտոցիկլետի շարժիչը լռվի, Աստծու սիրուն, քո գայլ աստվածների սիրուն, քո ձագերի սիրուն ձեռք չտաս նրան: Նրան վնաս չտաս: Իսկ եթե ուզենաս հիանալ նրանով, որ այնքան դեղեցիկ է իր հզոր երկանքվ մեքենայի վրա, վազիր կողքից, ճամփի եզրից, վազիր թաքուն, թևեր առ և թռիր կողքից: Եվ գուցե, եթե հավատանք բուդդայականներին, դու, կապտաչյա էգ գայլ, կտեսնես նրա մեջ քո քրոջը մարդու կերպարանքով: Կարող է, չէ՞, այդպես լինել՝ հետո ինչ, որ դու գայլ ես, իսկ նա մարդ, բայց չէ որ երկուսդ էլ դեղեցիկ եք, ամեն մեկդ իր կերպ: Ջեմ թաքցնում քեզնից՝ ես նրան կսիրեի ամբողջ հոգով, բայց հիմար եմ, իհարկե, հիմար եմ, ուրիշ էլ ինչ: Միայն անուղղելի ապուշները կարող են այսպես երազել: Իսկ եթե նա հանկարծ իմանար, թե ես ինչ եմ մտածում, ա՜յ թե կծիծաղեր, ա՜յ թե կքրքջար: Բայց եթե դա նրան պետք է ուրախացներ, Թող, ուրեմն, ծիծաղեր...»:

Դեռ համեմատաբար մութ էր. նոր, նոր էր լույսը բացվում տափաստանի վրա, երբ Պետրուխան սկսեց արթնացնել Աբդիային և Լյոնկային: Ժամանակն էր վեր կենալու և քայլելու դեպի երեք հարյուր երեսուներորդ կիլոմետրը: Ինչքան շուտ, այնքան լավ: Որովհետև միայն նրանք չէին, բանբերների ուրիշ երկու-երեք խմբեր էլ պետք է այդ ժամին միանային նույն տեղում իրենց հավաքած և արդեն չորացրած անաշայով: Պետք էր կանգնեցնել այդ ճանապարհով անցնող որևէ ապրանքատար, աննկատելի կերպով նրստել ու հասնել մինչև Ջալփաղ-Սազ կայարան, իսկ այնտեղից արդեն թափանցել մյուս գնացքները: Մի խոսքով, բանբերների համար սկսվում էր ճանապարհի ամենավտանգավոր շրջանը: Ամբողջ գործողությունը, երևում է, պիտի ղե-

կավարեր Ամենան։ Նա իրենց կդիմավորի, մի իրենք պիտի նրան գտնեն երեք հարյուր երեսուներորդ կիլոմետրում՝ Պետրուխան կարդին չբացատրեց։ Կամ չգիտեր, կամ չէր ուզում ասել։

Եվ նորից ուսապայուսակներն ուսերին առան ու քայլեցին Պետրուխայի հետից։ Աբդիային զարմացնում էր Պետրուխայի տեղագրական բնազդը, հիշողությունը։ Նա առաջուց ասում էր— որտեղ ինչ խանդակ կա, որտեղ աղբյուր ստվերի տակ, որտեղ փոքրիկ ձորակ, որտեղ հեղեղատ։ Եվ ափսոսում էր Աբդիան, որ Պետրուխայի այդպիսի ընդունակությունները, այդպիսի հիշողությունը, զուր կորչում են։ Անցողակի է եղել այստեղ, բայց ի՞նչպես դիտի ամեն ինչ։

Ախր, ասում էր նա, ես ծագումով դյուղացու ընտանիքից եմ։ Պատմում էր մեկ էլ Պետրուխան, որ ըստ լուրերի, այս վայրերից մի երկու հարյուր կիլոմետր հեռավորության վրա սկսվում է Մոյընկումի անապատը, իսկ այնտեղ, իբր, այդ սայդակներին, տափաստանային այծեղջերուներին խիվ ու հաշիվ չկա ու որ, իբր, լավ տղերքը, որոնք ծառայողական «դազիկներ» ունեն, այստեղ որսի են դալիս նույնիսկ Օրենբուրդից։ Ու դալիս են ո՞նց. կենդանի միսը վազվզում է, իսկ խմիչք, ինչ տեսակ ուզես, բերում են հետները։ Հա, արքայական որս է։ Բայց վտանգն էլ, ասում են, քիչ չի. պատահել է, որ մեքենան շարքից դուրս է եկել ու դյսորդները տափաստանում մոլորվելով մեռել են ծարավից։ Իսկ ձմռանը, եղել է, որ տափաստանի բուքն է վրա տվել։ Հետո, իբր, միայն ոսկորներն են դտել։ Իսկ մի որսորդիկ նույնիսկ խելագարվել է. նրան հետո որոնել են ուղղաթիռով։ Ուղղաթիռը հետից թռչում է, ուզում է դրան փրկել, իսկ դա ուղղաթիռից փախչում է, թաքնվում։ Երկար ընկել են հետից, իսկ երբ բռնել են, արդեն խոսելը մոռացած է եղել։ Իսկ կինն, ասում են, արդեն հասցրել է ուրիշին մարդու դնալ։ Ա՛յ քեզ լիրբ։ Դրանք բոլորն էլ նույնն են։ Դրա համար էլ չեմ ուզում ամուսնանալ։ Ունեմ մեկին քաղաքում, ուզածիդ պես կնիկ, մի քիչ փող ես ձեռը դցում փալաս-փուլուսի համար, դրանիդ լավը չկա, ու խոսք էլ տալիս է՝ երեխա՝ մերեխա չի լինի։ Ամենապլխավորը՝ մոռո, արդեն առել եմ,

չեխական սպորտային, ցախատանը կանգնած է, իսկ հիմի, ուրեմն, «ժիգուլ», դա էլ դժվար չի, ա՛յ թե կարողանայի «Վոլգա», էն նորից, «մերսեդեսի» նման, ա՛յ էդ տեսակը որ ճարեմ՝ կասետով, միացնես ու սկսի քեզ համար երգել, հոգիդ փառավորել: Ծանոթություն, կապեր են պետք, ամեն տեղ պիտի ավել փող տաս: Մի իմ «Վոլգայով» գնայի Վորկուտա՝ թող ախպերներս տեսնեին: Հա, հա, նրանց կնիկները նախանձից կտրաքվեին: Իսկ բագաժատեղում էլ ուզածդ խմիչքը, շատը արտասահմանյան: Դեհ, իհարկե, մեր օղին էլ, դրանից լավը չկա: Էլ ոնց չնախանձեն, կարծում էին անխելք Իվանուշկա եմ, ու հիմի դե տեսնեք: Դրա համար եմ, է՛, բանբերություն անում ու ձեզ էլ, ախպեր տղերք, բերում եմ, որ հարստանաք, ապրեք, քանի կա, իսկ որ չեղավ, էնքան զկոտացեք, մինչև փորներդ ուռչի...

Լսելով Պետրուխայի այդ, թվում էր, ավելորդ, անհեթեթ դատարկախոսությունը, որով նա զբաղեցնում էր իրեն և իր ուղեկիցներին, Աբդլան ինքն իր միտքն էր անում, մտածում, որ մարդը ծվատվում է հարստացման գայթակղության, համընդհանուր նմանակման նմանակության և փառասիրության միջև, որ հենց դրանք են զանգվածային գիտակցության երեք գլխավոր հիմքերը, դրանց վրա է ամենուրեք և բոլոր ժամանակներում պահվում քաղքենու անսասան աշխարհը, ապաստարանը մեծ ու փոքր չարիքների, հայացքների ունայնության և աղքատության, որ դժվար է գտնել երկրում այնպիսի ուժ, ներառյալ և կրոնը, որը կարողանա հաղթել քաղքենիական աշխարհի ամենազոր գաղափարախոսությանը: Հոդու որքան ինքնազոհ սլացքներ են ջախջախվել այդ անխորտակելի, թեկուզ և անկերպարան ամրությանը բախվելով... Եվ այն, որ ինքն այդ պահին գնում էր ժյաշա տանողների հավաքատեղին, նույնն էր վկայում՝ հոգին անզոր է, թեկուզև անխոնջ... Եվ այդպիսին է, ուրեմն, նրա ճակատագիրը... Ամբողջ ճանապարհին նա մտովի իրեն նախապատրաստում էր Ամենայի հետ հանդիպման. նա պետք է պատրաստ լիներ ճակատամարտի...

Նրանք երեք հարյուր երեսուներորդ կիլոմետր հասան մի երկու ժամ առաջ, և ժամը երեքին արդեն տեղում էին: Մտենալով երկաթուղու երկայնությամբ ձգվող խանդակին,

Պետրոսյան զգուշացրեց. ուսապայուսակները թաքցնել իր ցույց տված տեղում, դուրս չգալ, անցնող գնացքներին ի տես չղբոսնել։ Ամբողջ ժամանակ սպասել իր ցուցումներին։

Շատ էին հոգնել, և ինչպես չհոգնեին՝ այդքան ճամփա էին կտրել մի օրում։ Հաճելի էր փռվել խանդակի փափուկ խոտի վրա, ուր եղեսպակի հետ խառնիխուռն աճում էր և փետրախոտ։ Հաճելի էր ականջ դնել, ինչպես հեռվից սկսում էր լսվել գնացքի շաչոցը, ինչպես այն սաստկանում էր, ինչպես դոդոում ու ցնցվում էին երկաթգծերը վրայից անցնող ծանր, կիլոմետրանոց գնացքներով, ինչքան ահարկու էին անցնում այդ գնացքները անիվները ղղրղացնելով և իրենց հետ երկաթի ու մազութի հոտ բերելով, և ինչքան երկար հեռվում չէր լռում շարժման ալմուկը աստիճանաբար տարրալուծվելով շրջապատող լռության օվկիանոսում... Անցնում էին և մարդատար գնացքներ, մեկը այս, մյուսը՝ հակառակ կողմը։ Աբդիան քիչ էր մնում տեղից շարժվեր. նա մանկուց սիրում էր նայել, թե ուր են սլանում մարդատար գնացքները, ով է երևում պատուհանից, ում մարմինն ու դեմքը։ Ահ, երջանիկ մարդիկ, ինձ էլ տարեք ձեզ հետ։ Այս անգամ, սակայն, նա զրկված էր այդ կարճատև ուրախությունից, ստիպված էր թաքնվել թփի տակ և գլուխը չբարձրացնել։ Իսկ որ ամենավատն էր, նա մասնակից կամ թեկուզ ականատես պիտի դառնար այս հատվածում ապրանքատար գնացքներից մեկի ավազակային կանգնեցմանը։ Ոչ, ոչ ոք մտադիր չէր գնացքը թալանել, բայց գնացքի կանգնեցումը բանբերներին հնարավորություն կտար թռնել վագոններ, իսկ հետո արդեն ամեն ինչ կընթանար իր կարգով։ Հետո նրանք պետք է հեռանային այստեղից ապրանքատարի մեջ թաքնված...

Գնացքները գնում էին այս ու այն կողմ։ Հետո տիրեց երկարատև դադար և լիակատար լռություն։ Աբդիան արդեն սկսել էր ննջել, բայց հանկարծ սուլոց լսվեց։ Պետրոսյան ականջ դրեց, ինքն էլ սուլեց, և նրան ի պատասխան նորից սուլոց լսվեց։

— Դեհ, դուք այստեղ հանգիստ սպասեք,— ասաց Պետրոսխան,— իսկ ես դնացի, ինձ կանչում են։ Ու առանց ինձ ոչ մի տեղ չդնաք, լսեցի՞ր, Ավդյա, լսեցի՞ր, Լյոնկա։ Ապրանքատար կանդնեցնելը հեշտ բան չի։ Դա պիտի խելքով անես։

Այս ասելով նա չքվեց։ Վերադարձավ մոտ կես ժամից։ Եվ տարօրինակ կերպով փոխված վերադարձավ Պետրոսխան։ Նրա մեջ ինչ-որ բան փոխվել էր կարծես, աչքերը երկյուղավոր էին, խուսափում էին ուղիղ նայելուց։ Աբդիան նման դեպքերում չէր սիրում ազատություն տալ իր կասկածամտությանը, իրենից վանում էր ավելորդ մտքերը։ Հետո ինչ, շատ բան կարող է թվալ, հանկարծ ու պարզապես մարդու փորն է ցավում... Ուստի հանգիստ հարցրեց.

— Հը, Պյոտր, գործերն ինչպե՞ս են։

— Առայժմ ոչինչ, ամեն ինչ նորմալ է։ Շուտով կսկսենք գործել։

— Ապրանքատարը պիտի կանդնեցնենք, հա՞։

— Պարզ բան է։ Մեր գործի մեջ ամենաապահովը ապրանքատարով դնալն է։ Իսկ ամենալավը, որ դիշերով հասնես կայարան ու գնացքը կանդնեցնես պահեստային ծծի վրա։

— Ահա թե ինչ։

Երկուսն էլ լռեցին։ Պետրոսխան ծխեց և ասաց, ասես ի միջի այլոց, ծուխը ներս քաշելով։

— Էստեղ մեր տղերքից մեկի ոտքը ոլորվել է, Գրիշան է անունը։ Ես հիմի նրան տեսա։ Գրիշանի բախտը չբերեց։ Էդ ոտքով ինչքան պիտի հավաքես, ոնց հավաքի, փայտով է ման գալիս։ Դեհ, խղճում ես մարդուն։ Միդուցե ամենքս, ինչքան որ կանք այստեղ, մի տասը մարդ, ամենքս մի քիչ հավաքենք նրա համար։ Ամենքը մի քիչ իր անաշայից որ տա, մարդուն կհանենք այդ վիճակից։

— Ես պատրաստ եմ,— ասաց Աբդիան։— Լյոնկան այնտեղ քնած է, բայց, կարծում եմ, նա էլ կտա։

— Դեհ, Լյոնկային մեզ թող։ Իսկ դու, Ավդյա, լավ կանեիր գնայիր խոսեիր Գրիշանի հետ։ Իմացիր ինչն ինչոց է, դե, դու գրագետ մարդ ես, միդուցե էդ ոտքը ցավող մարդու տրամադրությունն էլ բարձրացնես...

— Իսկ Ամենան ո՞ւր է, այնտեղ չէ՞,— անզգուշորեն հարցրեց Աբդիան։

— Ինչ ես մի գլուխ Ամենա հա Ամենա,— զայրացավ Պետրոսյանն։— Ես ինչ իմանամ։ Ես քեզ Գրիշանի մասին եմ ասում, իսկ դու թե՝ Ամենան։ Պետք եղավ, ինքը մեզ կգտնի, իսկ թե պետք չենք, մեր գործը չի։ Դու ինչի՞ ես անհանգստանում։

— Լավ, մի ջղայնացիր։ Հենց այնպես հարցրեցի։ Հանգըստացիր։ Իսկ որտե՞ղ է այդ Գրիշանը։ Ո՞ր կողմը գնամ։

— Գնա այ էնտեղ, էն սովերի մոտ, թփի տակ նստած է։ Գնա՛, գնա՛։

Աբդիան քայլեց այն կողմ և շուտով տեսավ Գրիշանին։ Սա նստած էր խոտերի մեջ փոքրիկ ծալովի աթոռակին, փայտը ձեռքին պահած։ Գլխարկը ծածկում էր ճակատը։ Ճարպիկ մարդ էր երևում. Աբդիան դեռ չմոտեցած, նա արդեն նտ նայեց և հազաց բռի մեջ։ Նրանից քիչ հեռու ևս երկու հոգի էին նստած։ Ընդամենը երեք հոգի էին։ Եվ Աբդիան հասկացավ, որ հենց նա էր Ամենան... Քայլերը դանդաղեցնելով, նա զգաց, ինչպես սարսռաց ամբողջ մարմնով և սիրտն սկսեց արագ բաբախել...

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

1

— Ողջույն տուժածին,— ասաց Աբդիան որքան կարելի է սովորական, ջանալով այդ կերպ զսպել կրծքում սրտխփոցը։

Գրիշանը իր փոքրիկ, ձկնորսների աթոռակի նման ծալովի աթոռակին նստած, ձեռքի մեջ փայտը խաղացնելով, կկոցեց մի աչքը։

— Ողջույնը հասկացանք, բայց ումի՞ց ողջույն։

Աբդիան ակամա ժպտաց.

— Նրանից, ով նախ ուզում է ողջույնդ իմանալ։

— Հա։ Շատ շնորհակալ եմ, չափազանց շնորհակալ եմ, բայց առայժմ միայն։ Ամայի տափաստանում այդպիսի ուշադրությունը կրկնակի թանկ է։ Հապա ինչպե՞ս։ Բոլորս էլ մարդ արարած ենք, այնպես չէ՞։

«Սա շատախոս է, եթե հետն էլ կարդացած եղավ, կորած ենք։ Այ դա իսկապես չէի կարող մտածել, չէի սպասում։ Կոտրատվում է, իրեն շատախոս է ձևացնում,— մտածեց Աբդիան։ Ինչի՞, հետաքրքիր է։ Թե սա հենց Ամենայի խաղրն է»։ Ու նաև նշեց ինքն իր մտքում, որ Գրիշանի կերպարանքում ոչ մի աչքի ընկնող բան չկա։ Նրա ամեն ինչը շատ սովորական էր. չափավոր շագանակահեր, միջահասակից բարձր, նիհարավուն, հագնված է պարզ, ինչպես սովորաբար հագնում են նրա տարիքում՝ չինս, կիսամաշ վերնաշապիկ «կայծակ» շղթայիկով ,աչքի չզարնող գլխարկ, որ պետք եղած ժամանակ կարող ես գրպանդ խոթել։ Եթե Գրիշանը մի թեթև չհագար և այդ պատճառով հասատ կոստզավոր ձեռնափայտով ման չգար, նրան դժվար կլիներ նկա-

տել, բազմության մեջ նա երբեք չէր երևալ։ Թերևս Գրիշանի աչքերը միայն մխվեին հիշողության մեջ, եթե մի քիչ երկար նայեիր։ Նրա շագանակագույն խլվլան աչքերի արտահայտությունը շարունակ փոխվում էր, թերևս նա ինքն էլ չէր նկատում, թե ինչքան հաճախ է աչքերը կկոցում, շլում, անգույն հոնքերը շարժում, նմանվելով նեղն ընկած գազանիկի, որն ուզում է հարձակվել, բայց չի համարձակվում ու հետո էլ ինքն իրեն քաջանում է ու սպառնալից դիրք ընդունում։ Միգուցե այդ տպավորությանը նպաստում էր վերին կոտրված կտրիչը, որ բացվում էր խոսելիս։ «Բայց հո կարո՞ղ էր մի ոսկե շապիկ գցել, իսկ չգիտես ինչու չի անում,— մտածեց Աբդիան։— Հավանաբար չի ուզում ավելորդ նշան ունենալ»։

— Ոտքիդ ի՞նչ է եղել։ Ոլորվե՞լ է։ Ոտքիդ տակ չե՞ս նայել երևի,— հետաքրքրվեց նա քաղաքավարությամբ։

Գրիշանը գլուխն անորոշ տարուբերեց։

— Այո, մի քիչ վնասել եմ կարելի է ասել։ Չեմ նայել, ճիշտ ես ասում, Աբդիա, կարծեմ այդպես են քեզ կոչում։

— Այո, անունս Աբդիա է։

— Շատ հազվագյուտ անուն է, աստվածաշնչական,— բառերը դիտավորյալ ձգելով ու ըմբոշխնելով խոսում էր Գրիշանը։— Աբդիա՝ դա հաստատ եկեղեցածխական ծագում է,— մտախոհ եզրակացրեց նա։— Այո, կար ժամանակ, որ մարդիկ աստված ունեին։ Ահա թե որտեղից են Ռուսիայում՝ Պրեչիստենսկիները, Բոգոլեպովները, Բլագովեստովները։ Եվ ազգանունդ էլ, Աբդիա, երևի համապատասխան է, չէ՞։

— Կալիստրատով։

— Տեսնում ես, ճիշտ է դուրս գալիս... Դեհ, իսկ իմ անունը հասարակ է, պրոլետարական՝ Գրիշան։ Բայց դա կարևոր չէ։ Այսպես, ահա, Աբդիա Կալիստրատով, դու ճիշտ ես, ես ոտքիս տակ չեմ նայել։ Սարսափելի հետևություն է բխում այստեղից. եթե մարդը անհուսալի ապուշ չի, անպայման պետք է իր ոտքի տակ նայի։ Ու առանձն էլ, որ՝ գլխումդ խելք չեղավ, ոտներիդ հանգիստ չի լինի, այդ է ասում։ Ինչպես տեսնում ես, հաշմանդամություն եմ անում։ Սովորական պատմություն է, մի խոսքով։

— Եվ դա ինչի՞ վրա է ազդել,— հարցրեց Աբդիան, նկատի ունենալով Պետրոսյանի ակնարկները։

— Չհասկացա,— զգուշացավ Գրիշանը։

— Ուզում եմ ասել, որ այդ սովորական պատմությունը ազդել է քո գործնական հաջողության վրա, այդպե՞ս պիտի հասկանամ,— բացատրեց Աբդիան։

— Դեհ, սա արդեն ուրիշ խոսակցություն է,— Գրիշանն անմիջապես փոխվեց, դեն նետելով ավելորդ արհեստականությունը։— Թե գործի մասին ես ասում, ճիշտ է։ Բայց հիմա դա չէ գլխավորը, ինձ դա չի անհանգստացնում։ Ես, ասենք, ինքդ էլ երևի գլխի ես ընկնում, թե չէ ինչի պիտի ես հիմա քեզ հետ խոսեի, ինչիս էր պետք այս դատարկ բառաչոցը... Կարճ ասած, ես այստեղ կարգադրիչի նման մի բան եմ, դեհ, ասենք ոնց որ ավագը բանակում, և ինձ համար հիմա ամենակարևորն է անցնել ռազմաճակատի գիծը, պահպանելով կենդանի ուժը։

— Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել այդ գործում։ Եվ, ընդհանրապես, արժե խոսել,— առաջարկեց Աբդիան։— Ես էլ այդ կենդանի ուժի մասին ասելու բան ունեմ...

— Ուրեմն, քանի որ հետաքրքրությունների այսպիսի զուգադիպություն կա, արդեն ոչ թե խոսել, այլ բացատրվել է պետք,— ճշտեց Գրիշանը։— Իմ միտքն էլ հենց այդ էր։ Դեհ, օրինակի համար, հարց է ծագում, ոնց որ ասում են, մեր մեջ ասած,— խորամանկորեն սկսեց նա և, մի փոքր լռելով, կարգադրեց այն երկուսին, որ խոսակցությանը չհառնվելով նստած էին մի կողմի վրա.— Իսկ դուք, փոխանակ անգործ նստելու, գնացեք պատրաստվեք։

Եվ նրանք լուռ գնացին կատարելու այն, ինչ, երևում է, նախօրոք պայմանավորված էր։ Այդ կարգադրությունը տալով, Գրիշանը նայեց ժամացույցին։

— Մի ժամից կսկսենք գնացք նստելու գործողությունը։ Կտեսնես, թե այդ ինչպես է արվում,— խոստացավ նա Աբդիային։— Մեզ մոտ շատ խիստ է կարգապահությունը՝ ոնց որ դեսանտայինների մոտ։ Եվ մենք հենց իսկական դեսանտ ենք, որ կանք, անձնուրաց կերպով հայրենիքին նվիրված։ Եվ մեծատառով։ Ու դու էլ պետք է գործես ըստ

հրամանի։ Առանց մի «կարող եմ», «չեմ կարողի»։ Եթե բոլորս միասնաբար գործենք ինչպես պետք է, երեկոյան դեմ կհասնենք այդ Ջալփաղ-Սազը։

Գրիշանը բազմանշանակալի լռեց։ Հետո մի չարախինդ հայացք նետելով Աբդիային, ասաց քմծիծաղով, կոտրված առածը բացելով.

— Իսկ հիմա դառնանք կարևոր հարցին։ Թե ինչը քեզ բերեց մեզ մոտ։ Դու հանգիստ, մի շտապիր։ Ահա, ուրեմն, այսպես կոչված հանցավոր աշխարհում, ուր դու հայտնվել ես զարմանալի կերպով, որի մասին դեռ կխոսենք, քո վիճակն այսպիսին է. դու բանբեր ես, կապված ես մեզ հետ և չափազանց շատ գիտես։ Դու, երևում է, հիմար չես, բայց չէ որ ինքդ ես ծուղակը մտել։ Այնպես որ հիմա, բարի եղիր, և իմ բարձր վստահության համար հատուցիր ոչ պակաս բարձր գնով։

— Դու ի՞նչը նկատի ունես։

— Կարծում եմ, ինքդ հասկանում ես...

— Հասկանալը մի բան է, պարզ ասելը՝ ուրիշ բան։

Երկուսն էլ լռեցին, սպասելով, թե երբ պետք է դղրդալով անցնի կողքից շարժվող գնացքը. ամեն մեկը յուրովի պատրաստվում էր արդեն անխուսափելի դարձած մենամարտին։ Աբդիան այդ պահին մտածեց, թե որքան տարօրինակ են դասավորվում մարդկային ճակատագրերը. նույնիսկ այստեղ, մերկ տափաստանում, ուր թվում է բոլորը հավասար են, ուր բոլորը միանման հնարավորություններ ունեն, բոլորին սպառնում է տապալում և քրեական պատասխանատվություն, իսկ հաջողության դեպքում՝ միանման հաջողություն, մարդիկ, ինչպես իրենց արյուն, հետները բերել են անջնջելի օրենքները, համաձայն որոնց Գրիշանը, տվյալ դեպքում, ուներ մի չգրված իրավունք հրամայելու, որովհետև նա այստեղ տեր էր։

— Ուրեմն, ասում ես պարզ խոսենք,— լռությունն ընդհատեց Գրիշանը։— Լավ,— անորոշ ծոր տվեց հանկարծ, և սթափվելով հարցրեց խորամանկորեն։— Լսիր, իսկ ճի՞շտ է, որ գայլերը հարձակվել են վրադ։

— Այո, պատահեց,— հաստատեց Աբդիան։

— Իսկ քեզ չի՞ թվում, Աբդիա Կալիստրատով, որ ճակատագիրը քեզ ողջ է թողել, որպեսզի հիմա պատասխանես իմ մի քանի հարցերին,— ժպտալով ասաց բեկորը բացեց Գրիշանը։

— Թեկուզ այդպես։

— Ուրեմն էլ պոչ մի խաղացրու։ Դու այստեղ, հենց հիմա, առանց տեղիցդ շարժվելու ինձ պիտի բացատրես, թե ինչու ես զրպռում իմ տղաներին։

— Մի ուղղում,— ընդհատեց նրան Աբդիան։

— Ի՞նչ։ Ի՞նչ ուղղում մեր օրենքին։

— Ես չանում եմ նրանց ճիշտ ճամփի դարձնել, կնշանակի «զրպռել» խոսքը դրան ոչ մի կերպ չի բռնում։

— Դու դա վերջ տուր, ընկեր Կալիստրատով։ Ճշմարիտ, ոչ ճշմարիտ՝ ամեն մարդ դա իր ձևով է հասկանում։ Այդ կատակներդ վերջացրու։ Այստեղ լեզվին զոռ տալու տեղ չի։ Ես ուզում եմ իմանալ, թե դու ինչ ես փորձում հասկանալ, քեզ ինչ է պետք, սուրբ հայր։

— Դու նկատի ունես որևէ անձնական օգո՞ւտ։

— Անկասկած, ուրիշ էլ ի՞նչ,— ձեռները լայն տարածեց Գրիշանը և հաղթական քմծիծաղեց։

— Ուրեմն՝ ոչինչ, բացարձակապես ոչինչ,— կտրեց Աբդիան։

— Հիանալի է,— գրեթե ուրախ բացականչեց Գրիշանը։— Ավելի լավ հնարավոր չէ։ Ամեն ինչ համընկնում է։ Ուրեմն, դուրս է գալիս դու խելագար ապուշների այն լուսապսակ տեսակից ես, որ...

— Կանգ առ։ Գիտեմ ինչ ես ուզում ասել։

— Ուրեմն դու Մոյրնկում ես հասել անաշայի բանքեր ձևանալով, խցկվել ես մեր մեջ, դարձել մեզ համար մեր մարդը, ու ոչ թե նրա համար, որ սկսել ես սիրել փողը, ինչպես Քրիստոսին, ոչ նրա համար, որ քեզ սեմինարիայից քշել են ու ոչ մի տեղ ճանապարհ չէին տալիս, հա՞։ Ես որ քո տերտերների տեղը լինեի, վաղուց քեզ քացի տալով քշած կլինեի. ախր քեզ նմանը նրանց էլ պետք չի։ Ախր նրանք հին խաղեր են խաղում, իսկ դու ամեն ինչ ընդունում ես ճիշտ, ամեն ինչ լուրջ...

— Այո լուրջ։ Եվ դու էլ ինձ լուրջ ընդունիր,— ասաց Աբդիան։

— Հապա ի՞նչպես։ Դու ինչ է, կարծում ես քեզ չե՞մ հասկանում, բայց ես տեսնում եմ քեզ քո ամբողջ էությամբ, տեսնում եմ, թե ով ես։ Դու ցնդածի մեկն ես, սեփական տխմարությանդ ֆանատիկոսը, դրա համար էլ եկել հասել ես այս տեղերը, թե չէ ի՞նչը պիտի քեզ այստեղ բերեր։ Եկել ես, ուրեմն, աղնիվ նպատակով, այսպես ասած, մեսիայով, որ մեր աչքերը բացես, մեր, ընկածներիս, որ զբաղվում են անաշա բերելով, վաճառում ու սպեկուլյացիա են անում այդ արգելված թմրադեղով։ Եկել ես տարածելու վաղեմի փրկարար գաղափարները, որոնցից, միզահոտի նման, երեք վերստից արդեն ծեծված ճշմարտություններ հոտ է փչում։ Եկել ես մեզ ետ կանգնեցնելու չարիքից, որպեսզի մենք զղջանք, փոխվենք, որպեսզի ընդունենք քո պատշաճ համընդհանուր գիտակցության ստանդարտները։ Խնդրեմ, Արևմուտքն էլ ասում է, որ մեզ մոտ բոլորը մխանման են մտածում։— Դրիշանը հանկարծ տեքը վնասած մարդու համար զարմանալի ճարպկությամբ վեր կացավ ՙր ծալովի աթոռակից ու քայլեց դեպի Աբդիան, իր տաքացած դեմքը կիպ մոտեցնելով նրա դեմքին։— Իսկ դու, փըրկիչ-էմիսար, իսկի մտածե՞լ ես, թե ինչ ուժ է քո դեմ կանգնած։

— Մտածել եմ, և այդ պատճառով եմ այստեղ։ Ու ղգուշացնում եմ քեզ, որ պետք է աշխատեմ նպատակիս հասնել հենց հանուն ձեզ, ինչ գնով էլ լինի, և մի զարմացիր։

— Հանուն հենց մեզ,— ծոմուվեց Դրիշանը։— Մի անհանգստացիր, չեմ զարմանա, ինչու պիտի զարմանամ այն բանի համար, ինչից խելքը գցել էր դեռ նա, որին խաչեցին, մարդկային ցեղի Փրկիչը... Մեխված ձեռները խաչի վրա տարածեց, գլուխը կախ գցեց, դեմքը տատապանքից ծամածռեց և խնդրեմ՝ հիացեք, ողբացեք և երկրպագեք մինչև աշխարհի վերջը։ Դիտես ինչ, որոշ խելոքներ իրենց համար վատ գործ չեն մոգոնել հավիտյանս հավիտենից՝ փրկել մեզ մեզնից։ Եվ ինչ, ո՞վ է փրկվել և ի՞նչ է փրկվել այս աշխարհում։ Պատասխանիր ինձ։ Ամեն բան ինչպես եղել է մինչև

Գողգոթան, այնպես էլ մնացել է մինչև օրս։ Մարդը միշտ նույնն է։ Եվ մարդու մեջ մինչև օրս ոչինչ չի փոխվել։ Իսկ մենք շարունակ սպասում ենք, թե ահա կգա մեկը, որը կփրկի մեզ, մեղավորներիս։ Այ դու, Կալիստրատով, դու էիր պակաս մնացել այդ գործում։ Բայց, խնդրեմ, դու էլ եկար մեզ մոտ։ Եկար ու չվռովեցիր,— դեմքը ծաղրական ծռմռեց Գրիշանը։— Բարի գալուստ, նոր Քրիստոս։

— Իմ մասին կարող ես թույլ տալ քեզ ասել ինչ ուզես, բայց Քրիստոսի անունը զուր մի հիշատակիր,— սաստեց նրան Աբդիան։— Դու վրդովվում ու զարմանում ես, որ ես հայտնվել եմ այստեղ, բայց դա զարմանալի չէ. չէ՞ որ ես և դու անխուսափելիորեն պետք է հանդիպենք։ Լավ մտածիր։ Մի՞թե դու այդ չես հասկանում։ Եթե ոչ ես, մի ուրիշը անպայմանորեն պետք է հանդիպեր քեզ։ Իսկ ես հաշվարկել էի այս հանդիպումը։

— Գուցե ի՞նձ էլ էիր հաշվարկել։

— Քեզ էլ։ Իմ և քո հանդիպումն անխուսափելի էր։ Ահա ես էլ եկա ու չվռովեցի, ինչպես դու ես ասում։

— Միանգամայն տրամաբանական է, գրողը տանի. իսկապես այլ կերպ չի լինում։ Ու դրանում, թերևս, ինչ-որ մի սրիկայական օրինաչափություն կա։ Բայց հրճվել պետք չէ, փրկիչ Կալիստրատով, քո տեսությունը գործնականում արդյունք չի տա։ Սակայն բավական է փիլիսոփայենք, թեև դու, պետք է ասել, հետաքրքիր արարած ես։ Բավական է, քո հարցը պարզ է։ Ահա իմ բարի խորհուրդը, թե որ արդեն այսպես ստացվեց. գնա, Կալիստրատով, քո ճամփով, փրկիր նախ և առաջ քո գլուխը, հիմա քեզ ոչ ոք ձեռք չի տա, իսկ այն, ինչ հավաքել ես տափաստանում, եթե ուզում ես կարող ես բաժանել, այրել, քամուն տալ՝ քո կամքն է։ Բայց տես, որ իմ ու քո ճամփանները այլևս երբեք իրար չհանդիպեն,— և Գրիշանը շատ բազմանշանակ փայտը թխկթխկացրեց քարին։

— Բայց ես չեմ կարող քո խորհուրդն ընդունել։ Ինձ համար դա բացառված է։

— Լսիր, դու կատարյալ ապուշ ես։ Ի՞նչն է քեզ խանգարում։

— Ես Աստծու և իմ առջև պատասխանատու եմ ձեզ բոլորիդ համար... Դու գուցե այդ չհասկանաս...

— Ոչ, ոչ։ Ինչո՞ւ չեմ հասկանում,— բացականչեց Գրիշանը զայրույթից գունատվելով և ձայնը բարձրացնելով։— Ես, ի միջի այլոց, թաաերական ընտանիքում եմ մեծացել և, հավատա ինձ, գնահատել ու հասկացել եմ քո խաղը։ Բայց շատ չե՞ս ոգևորվել արդյոք, չէ որ ամեն մի, նույնիսկ հանճարեղ կատարումից հետո վարագույրը փակվում է։ Եվ հիմա, ընկեր Կալիստրատով, վարագույրը կփակվի մեն մի հանդիսատեսի առջև։ Հնազանդվիր։ Եվ մի ստիպիր ինձ հոգուս վրա ավելորդ մեղք վերցնել։ Հեռացիր, քանի դեռ ուշ չէ։

— Դու մեղքի մասին ես խոսում։ Հասկանում եմ, թե ինչ նկատի ունես, սակայն մի կողմ քաշվել, երբ աչքովդ տեսնում ես չարագործությունը, ինձ համար հավասարազոր է ծանր մեղսագործության։ Եվ պետք չէ ինձ համոզել։ Ինձ համար բնավ միևնույն չէ, թե ինչ է լինելու, ասենք, անչափահաս Լյոնկայի հետ, Պետրուխայի հետ, ու նաև քեզ մոտ եղած մյուս տղաների հետ։ Ու նաև քեզ հետ՝ այդ թվում։

— Ցնցված եմ,— ընդհատեց նրան Գրիշանը։— Բայց դու ինչո՞ւ ես քեզ իրավունք վերապահում խառնվելու մեր կյանքին։ Վերջ ի վերջո ամեն ոք ազատ է ինքն իր ճակատագիրը տնօրինելու։ Ախր ես քեզ կյանքումս առաջին անգամ եմ տեսնում, ախր դու էդ ով եղար, որ տառապես ինձ և ուրիշների համար, թե իբր քեզ ինչ-որ լիազորություններ են տրված վերուստ։ Հանգիստ թող մեզ։ Փորձության մի ենթարկիր ճակատագիրը։ Եթե խենթ ես, գնա քո ճամփան, իսկ մենք մի կերպ կկարողանանք առանց քեզ։ Հասկացա՞ր։

— Բայց ես չեմ կարող։ Դու լիազորություններ ես պահանջում. իմացիր, ուրեմն, ինձ ոչ ոք մանդատ չի տվել։ Իրավացիությունն և պարտքի գիտակցում՝ ահա իմ լիազորությունները, և դու ուզում ես հաշվի առ դրանք, ուզում ես հաշվի մի առ։ Բայց ես անշեղորեն դրանք պիտի կատարեմ։ Ահա դու հայտարարեցիր, որ իրավունք ունես ինքդ տնօրինելու քո ճակատագիրը։ Լավ է հնչում։ Սակայն առանձին, մեկուսացված ճակատագրեր չեն լինում, չկա ճա-

կատագիրը ճակատագրից սահմանազատող գիծ, բացի ծնունդից ու մահից։ Իսկ ծնունդի ու մահվան արանքում մենք բոլորս միահյուսված ենք իրար, ինչպես թելերը գործվածքի մեջ։ Չէ որ դու, Դրիշան, և նրանք, որ քո իշխանության տակ են, հանուն ձեր շահի հիմա այս տափաստանից անաշալի հետ տանում եք դժբախտություն ու աղետ ուրիշների համար։ Անցողիկ գայթակղությամբ դուք ձեր շրջանն եք քաշում մարդկանց՝ հուսահատության ու անկման շրջանը։

— Իսկ դու ո՞վ ես, որ մեզ դատավոր լինես։ Դո՞ւ պիտի որոշես, թե մենք ոնց ապրենք, ինչ անենք։

— Ոչ, ես դատավոր չեմ։ Ես մեկն եմ ձեղնից, միայն թե...

— Ի՞նչ «միայն թե»։

— Միայն թե ես գիտակցում եմ, որ մեր վերև կա Աստված որպես բարձրագույն չափանիշ խղճի և գթասրտության։

— Նորից Աստված։ Եվ ի՞նչ ես ուզում դրանով մեզ ասել։

— Այն, որ Աստծու վերին օգնությունը մեր կամքի մեջ է արտահայտվում։ Այն մեր մեջ է, այն մեր գիտակցության միջոցով ազդում է մեզ վրա։

— Լսիր, ո՞ւմ են պետք այս խրթնաբանությունները։ Եվ հետո դա ի՞նչ է տալիս։ Ի՞նչ կարող է տալ մեզ։

— Ինչպես թե։ Չէ որ բանականության ուժի շնորհիվ մարդն իշխում է ինքն իր վրա, ինչպես Աստված։ Վերջապես ի՞նչ է արատի ճիշտ գիտակցումը։ Իմ կարծիքով դա իր մեջ չարի դատապարտումն է Աստծո մակարդակով։ Մարդն ինքն նոր տեսակետ է որոշում իր սեփական էության համար։

— Ինչո՞վ է տարբերվում քո տեսակետը զանգվածային գիտակցությունից։ Իսկ մենք դրանից փախչում ենք, որպեսզի ամբոխի գերի չդառնանք։ Մենք ձեզ հետ կապ չունենք, մենք մեր գլխի տերն ենք։

— Սխալ է։ Ազատությունը միայն այն ժամանակ է ազատություն, եթե չի վախենում օրենքից, այլապես այն

սուտ է։ Իսկ քո ազատությունը մշտական վախի և օրինական պատժի ճնշման տակ է...

— Էհ, հետո ի՞նչ։ Քո ի՞նչ գործն է, չէ որ դա մեր ընտրությունն է, ոչ թե քո։

— Այո, քոնն է, բայց միայն քեզ չէ վերաբերում։ Հասկացիր, փակուղուց դուրս գալու ելք կա։ Ջղջացեք հենց հիմա, ահա այստեղ, տափաստանում, բաց երկնքի տակ, խոսք տվեք ինքներդ ձեզ մեկընդմիշտ վերջ տալու այս գործին, հրաժարվելու սև շուկայից քաղվող հարստությունից, արատից և փորձեք հաշտվել ինքներդ ձեզ հետ և այն բանի հետ, ինչը կոչվում է Աստված և ընդհանուր գիտակցությամբ միացնում է մեզ...

— Եվ այն ժամանա՞կ։

— Եվ այն ժամանակ նորից ձեռք կբերեք ձեր իսկական մարդկային էությունը։

— Գեղեցիկ է հնչում, դրողը տանի։ Եվ ինչքան պարզ է։— Գրիշանը մոայլվեց, կոստղոտ ձեռնափայտը խաղացնելով սպասեց, մինչև երկարաբլուրի հետևում ծածկված բեռնատար մի գնացք էլ անցավ, և երբ գնացքի աղմուկը դադարեց, տիրած լռության մեջ ասաց չոր, ծաղրական հայացքով շաղափելով չափազանց անկեղծացած Աբդիային.— Ահա թե ինչ, հարգարժան Աբդի՛ա, ես համբերությամբ լսեցի քո դատողությունները, ինչպես ասում են, թեկուզ հենց հետաքրքրասիրությունից և պետք է մեծապես քեզ հիասթափեցնեմ. դու սխալվում ես, եթե քո ինքնադոհությամբ կարծում ես, որ միայն քեզ է շնորհված մտքով Աստծու հետ խոսելը, որ ես շփում չունեմ նրա հետ, որ այդպիսի արտոնություն միայն դու ունես, արդար մտածողդ, իսկ ես զրկված եմ դրանից։ Այ հիմա քիչ մնաց զարմանքից շունչդ կտրվի, ականջդ ծակե՞ց, որ ինձ նմանն էլ կարող է Աստծու հետ կապի մեջ լինել...

— Ամենևին ոչ։ Պարզապես «կապ» բառն այստեղ մի քիչ անսովոր է։ Ընդհակառակն, ուրախ եմ այդ լսելու քեզնից։ Միգուցե ինչ-որ բան փոխվե՞լ է քո մեջ։

— Ոչ մի բան։ Որպիսի միամտություն։ Իմացած լինես, կալիստրատով, միայն թե տես վախից չսկսես կակազել, ես

Աստծուն հասնելու իմ ճանապարհն ունեմ, ես նրա մոտ եմ գնում այլ կերպ, եռնամուտքից։ Քո Աստվածն այնքան էլ խորաբարո ու անմատչելի չէ, ինչպես քեզ է թվում...

— Եվ ինչի՞ պիտի հասնես եռնամուտքից Աստծու մոտ ընկնելով։

— Ոչ պակաս բանի, քան դու։ Ես մարդկանց օգնում եմ երջանկության ճաշակելու, Աստծուն զգալու կայֆի մեջ։ Ես նրանց տալիս եմ այն, ինչ դուք չեք կարող տալ ոչ ձեր քարոզներով, ոչ էլ ձեր աղոթքներով... Իմ մարդկանց ես մոտեցնում եմ Աստծուն շատ ավելի գործարար կերպով, քան ուրիշ մեկը։

— Մոտեցնում ես փողով գնած Աստծո՞ւն։ Թույնի միջոցո՞վ։ Թմրեցնելո՞վ։ Եվ դու դա կոչում ես Աստծուն իմանալու երջանկությո՞ւն։

— Իսկ ի՞նչ։ Մտածում ես երևի սրբապղծության է, աստվածանարգության։ Թող այդպես լինի։ Ես պղծում եմ լողությունդ։ Քո մրցակիցն եմ, հասկանո՞ւմ ես։ Ճանապարհիդ քար եմ գցել։ Այո, դրողը տանի, այո, փողով, այո, թմրադեղերով։ Ուրեմն, իմացած լինես՝ փողն ամեն ինչ է։ Թե՞ կարծում ես փողի Աստվածն ուրիշ է։ Իսկ եկեղեցիներում և այլ տեղերում դուք առանց փողի՞ եք բան անում։

— Բայց դա բոլորովին այլ խնդիր է։

— Վերջ տուր։ Գլուխս մի տանի։ Աշխարհում ամեն ինչ ծախվում է, ամեն ինչ առնվում, այդ թվում և քո Աստվածը։ Բայց ես գոնե մարդկանց հնարավորություն եմ տալիս մի քիչ հաճույք վայելելու և զգալու այն, ինչ դուք նրանց միայն խոստանում եք, էլ չասած որ՝ այն աշխարհում։ Կայֆն է միայն տալիս երանություն, հանգստություն և ազատություն տարածության և ժամանակի մեջ։ Թեկուզ այդ երանությունը վաղանցիկ է, թեկուզ խաբուսիկ, թեկուզ դժոխություն ունի միայն զգայախաբության մեջ, բայց դա երջանկություն է և կարելի է դրան հասնել միայն տրանսի մեջ։ Իսկ դուք, արդարակյացներդ, զրկված եք նույնիսկ այդ ինքնախաբեությունից։

— Մի բան ճիշտ ասացիր՝ որ այդ ամենը ինքնախաբեություն է։

— Իսկ ի՞նչ էիր ուզում։ Հինգ կոպեկով արդարության հասնե՞ս։ Այդպես չի լինում, սուրբ հայր։ Ուրիշ երջանկության չունենալու դեպքում, կայֆը դրա դառն փոխարինողն է։

— Բայց ով է քեզ խնդրում փոխարինել այն, ինչ չկա։ Չէ որ դա չար դիտավորություն է, ահա թե ինչ է այդ։

— Մի քիչ զգույշ, զգույշ արտահայտվիր, Կալիստրատով։ Ախր ես, եթե խորանանք, ձեր օդնականն եմ։

— Ինչպե՞ս թե։

— Հենց այդպես։ Ու զարմանալի ոչինչ չկա։ Մարդուն այնքան բան են խոստացել իր արարման օրից, ինչ հրաշքներ ասես, որ չեն խոստացել նվաստացյալներին ու անարգյալներին. ահա Աստծու արքայությունը կգա, ահա դեմոկրատիա, ահա եղբայրություն, ահա և երջանկություն կոլեկտիվում, ուզում ես՝ ապրիր կոմունայով, իսկ թե ջանադիր լինես, այդ բոլորին ի հավելումն և դրախտ են խոստանում։ Եվ ի՞նչ եղավ իրականում։ Դատարկ խոսքեր։ Իսկ ես, թե կուզես իմանալ, մոռացության եմ տալիս անամոքներին, կյանքում իրենց տեղը չգտածներին։ Ես շանթարգել եմ, ես ետնամուտքից մարդկանց տանում եմ անիրականանալի Աստծու մոտ։

— Բայց դու շատ ավելի վտանգավոր ես, քան կարծում էի։ Համաշխարհային ինչպիսի երկպառակություններ դու կարող էիր առաջ բերել, մտածելն իսկ սարսափելի է։ Քո մեջ, թերևս, մի փոքրիկ Նապոլեոն է մեռել։

— Ավելին ասա։ Իսկ ինչո՞ւ ոչ մեծ։ Հնարավորություն տային, ինչե՜ր կարող էի անել։ Եթե հանկարծ Արևմուտքում հայտնվեինք, ես դիտեի, թե ինչ գործեր կանեի։ Եվ այն ժամանակ դու չէիր համարձակվի ինձ հետ վեճի բռնվել, այլ բարին ու չարը կհասկանայիր այնպես, ինչպես ես կհամենայի...

— Չեմ կասկածում։ Բայց քո ասածի մեջ սարսափելի բան էլ չեմ տեսնում։ Այն ամենն, ինչ ասացիր, նորություն չէ։ Դու, Գրիշան, մակաբուծություն ես անում այն հաշվին, որ մարդիկ հավատը կորցրել են, իսկ քոնը արմատավորելը շատ ավելի հարմար է։ Ամեն ինչ վատ է, ամեն ինչ սուտ, ու քանի որ այդպես է՝ միխիթարվիր կայֆով։ Իսկ դու, եթե

ամեն բան վատ ես համարում, փորձիր մարդկանց նոր հայացք տալ աշխարհատեսության։ Հավատը քեզ համար կայֆ չի, հավատը շատ սերունդների տառապանքի արդյունք է, հավատի համար ջանք են թափել հազարամյակներ և ամեն օր։ Իսկ դու խայտառակ զբաղմունքով ուզում ես գիշեր ու ցերեկ իրարով փոխարինել, շուռ տալ մշտնջենական կարգը։ Եվ, վերջապես, սկսում ես դու կենացով, իսկ վերջացնես պիտի ողորմի տալով, չէ որ կայֆից հետո վրա է հասնում խելահեղության և հոգու վերջնական անկման շրջանը։ Ինչո՞ւ մինչև վերջ չես ասում։ Կնշանակի քո կայֆը խաբեություն է, քանի որ սուտ Աստծու մոտ դնալով, անմիջապես ընկնում ես սատանայի դիրկը։ Հետո՞ ինչ պիտի անես։

— Ոչինչ։ Աշխարհում ամեն ինչի դիմաց հատուցում կա։ Եվ դրա համար նույնպես։ Ինչպես կյանքի համար հատուցում ես մահով... Այդպես իսկի չե՞ս մտածել։ Ինչո՞ւ սկսվեցիր։ Քեզ համար, սուտ ճգնավոր, իմ հայացքներն, իհարկե, ընդունելի չեն։

— Անարխիստի հայացքնե՞րը։ Երբեք։

— Քահ-քահ։ Ինչի՞ է պետք քո քրիստոնեությունն առանց անարխիստի։ Առանց նրա մարտահրավերի։ Ո՞ւմ է պետք։ Նրա ի՞նչ անհրաժեշտությունը կա։ Ահա և ստացվում է, որ ես պետք եմ ձեզ։ Այլապես ո՞ւմ դեմ պետք է պայքարեք, ինչպե՞ս պիտի ցուցադրեք ձեր գաղափարների մարտականությունը։

— Այ թե հնարամիտ ես, խոսք չկա,— ակամա ծիծաղեց Աբգիան։— Պատրաստ եմ խոսքը շարունակել հակասությունների շուրջ։ Բայց ճարտասանություն մի արա։ Մենք իրար հետ լեզու չենք գտնի։ Մենք հակոտնյաներ ենք, մենք անհամատեղելի ենք՝ ահա թե ինչու ես դու ինձ այստեղից քշում։ Դու վախենում ես ինձանից։ Բայց ես միևնույն է պնդում եմ. խոստովանիր, բաց թող բանբերներին քո ոստայնից։ Քեզ իմ օգնությունն եմ առաջարկում։

Գրիշանն անսպասելիորեն չպատասխանեց։ Մոայլվեց, սկսեց ետ ու առաջ քայլել փայտին հենված, հետո կանգ առավ.

— Եթե կարծում ես, ընկեր Կալիսարատով, որ վախենում եմ քեզնից, սխալվում ես չարաչար։ Մենք, ես քեզ չեմ քշում։ Հիմա պիտի ապրանքատար մտնենք։ Պիտի, այսպես ասած, կազմակերպված հարձակում գործենք տրանսպորտի վրա։

— Ավելի լավ է ասա՝ ավազակային,— ուղղեց Աբդիան։

— Ուզում ես ավազակային, թող ավազակային լինի, բայց ոչ կողոպուտի նպատակով, այլ անլեգալ մեկնումի, իսկ դրանք տարբեր բաներ են, չէ որ քո պետությունը թույլ չի տալիս մեզ ազատ տեղաշարժվել...

— Պետությանը հանգիստ թող։ Ուրեմն ի՞նչ ես ուզում ինձ առաջարկել։

— Առանձնապես ոչինչ։ Ավազակային, ինչպես համեցիր ճշտել, գնացք նստելու ժամանակ,— Գրիշանը գլխով ցույց տվեց երկաթգծի կողմը,— բոլորն այստեղ կլինեն, բոլորը կլինեն աչքիդ առաջ։ Դեհ փորձիր համոզիր նրանց, անչափահաս Լյոնկաներին և ընկած-ելած պետրուխաններին՝ փրկիր նրանց հոգիները, փրկիչ Հաշվիր, ես չկամ։ Եվ եթե քեզ հաջողվի այդ մարդկանց քո հետևից տանել, դարձնել քո Աստծուն, ես անմիջապես կհեռանամ, ինչպես և հարկ է հեռանալ պարտության դեպքում։ Ինձ հասկացա՞ր։ Ընդունո՞ւմ ես հրավերս։

— Ընդունում եմ,— կարճ պատասխանեց Աբդիան։

— Ուրեմն, գործիր։ Իսկ այն մասին, ինչ այստեղ խոսել ենք, ոչ ոք չի իմանա։ Կասենք զրուցում էինք դեսից-դենից։

— Շնորհակալ եմ։ Բայց ես թաքցնելու բան չունեմ,— պատասխանեց Աբդիան։

Գրիշանը ուսերը թոթվեց։

— Տես, ինչպես ասված է Աստվածաշնչում, «դու ես ասում»։

Արդեն երեկոյան ժամը յոթն էր, մայիսի վերջին օրերից մեկը։ Սակայն արեգակը դեռ պայծառ ու տաք փայլում էր տափաստանային հարթավայրի գլխին, և կասկածելիորեն անշարժացած արծաթա-մոխրագույն ամպերը, որ ամբողջ օրը կանգնած էին, ինչպես կապված, սկզբում նոսր, իրիկվա դեմ սկսեցին թանձրանալ և մուգ շերտով կախվեցին

հենց հորիզոնի գլխին, անբացատրելի տագնապի զգացում հարուցելով Աբգիայի հոգում։ Երևում է, ամպրոպ էր լինելու։

Իսկ գնացքները շարունակ գնում էին մեկ այս, մեկ այն կողմ, հյուսիսից հարավ և հարավից հյուսիս. գետինը դղրդում ու ցնցվում էր նրանց ծանր անիվների տակ։ «Ինչքան հող, ինչքան տարածություն ու լույս կա, իսկ մարդուն միևնույն է, միշտ մի բան պակասում է, ու նախ և առաջ՝ ազատություն,— մտածում էր Աբգիան, նայելով անծայրածիր տափաստանային հարթություններին։— Եվ առանց մարդկանց մարդը չի կարող ապրել, և մարդկանց հետ է դժվար։ Ահա հիմա՝ ի՞նչ անեմ։ Ի՞նչ անեմ, որ Գրիշանի ցանցն ընկած ամեն մեկը վարվի այնպես, ինչպես թելադրում է նրան բանականությունը, և ոչ ինչպես ստիպում են հանցակիցները, ոչ վախից կամ հոտային զգացումից դրդված, ու մանավանդ ոչ այն պատճառով, որ ի վիճակի չէ հաղթահարելու այդ հաշիշամոլության ճիզվիտի ազդեցությունը։ Ինչ տիպ է։ Սարսափելի, շատ վտանգավոր խաբեբա։ Ի՞նչ անեմ, ի՞նչ միջոցի դիմեմ»։

Եվ ժամը եկավ։ Ապրանքատարը կանգնեցնելուց առաջ բանտարկյալները խոտերի ու թփուտների մեջ թաքնվելով, երկուերեքական հոգուց խմբեր կազմելով ցրվեցին երկաթուղու երկայնությամբ։ Սուլոցը պայմանական նշանն էր։ Երբ հեռվում երևաց գնացքը, որ սողացող օձի նման հայտնվեց ճանապարհի հեռավոր ոլորանում, բոլորը, հենց սուլոցը լսվեց, պատրաստվեցին գնացք ցատկելու։ Անաշայով լցված ուսապայուսակները, ճամպրուկները ձեռքի տակ էին։ Աբգիան Լյոնկայի և Պետրուխայի հետ պառկել էր երկաթուղու վերանորոգումից մնացած խճաքարի կույտի հետև։ Նրանցից քիչ հեռու Գրիշանն էր երկու ուրիշ բանբերների հետ. մեկի, շիկահերի անունը Կոլյա էր, մյուսին՝ կորաքիթ, ճարպիկ տղային, որ խոսում էր կովկասյան առոգանությամբ, Մախաչ էին կոչում, հավանաբար Մախաչքալայից էր։ Մնացածների մասին Աբգիան ոչինչ չգիտեր, բայց ևս երկու-երեք բանբերներ իրենց համար հարմար թաքստոց էին գտել և պատրաստվում էին վճռական ցատկի։ Ինչ վերաբերում է այն երկուսին, որոնց Գրիշանն ուղարկեց քիմիկոսություն անելու

երկաթգծի վրա, հրդեհի պատրանք ստեղծելու կամուրջին ու դրանով ստիպելու մեքենավարին, որ կանգնեցնի գնացքը, ապա նրանք հեռու էին, առջևում, գնացքի շարժման ճանապարհին «330 կմ» ցույց տվող ճանապարհացույցի մոտ։ Այստեղ երկաթուղին անցնում էր գարնանային վարարաջրերով հեղեղված խոր ձորակի վրա դրված ոչ մեծ կամուրջով։ Այնտեղ, հենց այդ վտանգավոր տեղում էլ քիմիկոսությունն էին անում այն երկուսը, որոնց բանբերներն իրենց շրջանում դիվերս էին կոչում։

Գնացքը սրընթաց մոտենում էր, և Աբդիան հասկանում էր, որ բոլորը չափազանց ներվայնանում են, թե ինչ կլինի, ինչպես կատացվի, կհաջողվի՞, թե ոչ վագոններ ցատկել և ինչպիսի գնացք կլինի դա, իսկ եթե հանկարծ ամբողջը միայն ցիստեռներ լինեն, այն դեպքում ինչպես պիտի տեղավորվեն։ Մեկ էլ, հակառակի նման, ռազմական էշելոն դուրս գա, զինվորներով պաշտպանված, այն ժամանակ արդեն լրիվ կորած են։

Լյոնկան հուզմունքից դողացող ձեռներով ծխախոտ կպցրեց։ Պետրուխան անմիջապես զայրացած ֆշշացրեց.

— Շուտ դի՛ր։ Կսպանեմ, լակոտ։

Բայց սա, կապտած ու դունատ, շարունակում էր ագահորեն, խեղդվելով ծուխը ներս քաշել, և այն ժամանակ Պետրուխան գազանի նման հարձակվեց վրան, թափով խփեց գլխին, գլխարկը գլխից գցեց։ Սակայն Լյոնկան էլ պակաս չթողեց, հարվածին հարվածով պատասխանեց և հնարք գտնելով քացով տվեց Պետրուխային։ Պետրուխան բոլորովին գազազեց, և նրանց մեջ կատաղի ծեծկռտոց սկսվեց։

Աբդիան ստիպված եղավ տեղից բարձրանալ.

— Վերջ տվեք, անմիջապես վերջացրեք։ Պետրուխա, Լյոնկային ձեռք մի տուր։ Ինչպես չես ամաչում։

Սակայն Պետրուխան կատաղած հարձակվեց Աբդիայի վրա.

— Իսկ դու ինչի ես մեջ ընկնում, տերտեր, տո հաստակլուխ։ Ինչ ես վեր կացել, դմբո, ախր դու հեռվից հեռու երեվում ես,— և ամբողջ ուժով քաշեց նրա շալվարից։ Ընդհա-

րամից բորբոքված, իրար հայհոյելով ու ծանր շնչելով, նրանք նորից իրենց տեղերը քաշվեցին։

Իսկ գնացքն արդեն մոտենում էր։ Բանբերների հուզմունքըն ակամա հաղորդվել էր և Աբգիային։ Իսկապես էլ, չափազանց լարված և վտանգավոր պահ էր։

Աբգիան մանկուց սիրում էր հետևել գնացքներին. նրան հաջողվել էր տեսնել նույնիսկ եռպատերազմյան շոգեքարշերը, այն ռոմանտիկ մեքենաները, որ գոլորշու հզոր սյուներ ու քուլաներ էին բաց թողնում, շշոցներով դղրդացնում շրջակայքը. սակայն նա չէր կարող պատկերացնել, որ այսպիսի սրտի դողով պիտի սպասի գնացքին. չէ որ անօրինական կերպով, ավելին՝ բանի կերպով պետք է մուտք գործի գնացք։

Իսկ ծանր ապրանքատարը, իրար կցված երկու գնացքաքարշերով մղված, մոտենում ու մոտենում էր, ու նրա մոտենալը զգացվում էր գրեթե շոշափելի, մարմնի դողով, մաշկի սարսուռով։ Առաջվա գնացքները ուր էր, որ հասնեին այս դիզելներին։ Սրանց ուժը իրենց մեջ էր թաքնված, բայց վագոնների այնպիսի մի երկար շարան էին քարշ տալիս, որ թվում էր, վերջ չէր ունենալու։ Իսկ անթիվ-անհամար անիվները գլորվում էին, գլորվում, վագոնների տակից պոռթկուն քամի, դղրդոց և մի տեսակ մասնատված թխկթխկոց էր լսվում։ Աբգիան նայում էր այդ սրընթաց և հավաք շարժվող հսկա մեքենային, և հավատը չէր գալիս, թե այդ զարհուրելի ծանր ու վիթխարի գնացքը կարելի է կանգնեցնել։

Վագոնները՝ բաց վագոններ, ցիստեռներ, փայտակիրներ, բաց և փակ բեռնարկղեր, անցնում էին իրար հետևից, ահա արդեն գնացքակազմի կեսն անցավ, և Աբգիան մտածեց, որ ոչինչ չի ստացվի, որ զուր բան է. այսպիսի արագությամբ սլացող հսկա մեքենան անհնարին է կանգնեցնել, երբ հանկարծ գնացքի արագությունն սկսեց պակասել, անիվներն ավելի ու ավելի դանդաղ պտտվեցին, լսվեց արգելակի ճռռոցը և գնացքը, չղաձգորեն ցնցվելով, ասես սայթաքելով, կամաց-կամաց ընթացքը դադարեցրեց։ Աբգիան աչքերին չէր հավատում, գնացքը գրեթե կանգ էր առել։ Սակայն այդ պահին լսվեց ականջ ծակող սուլոց, և ի պատասխան նույնպիսի սուլոց։

— Գնացի՛նք,— հրամայեց Պետրուխան։— Առա՛ջ անցեք։

Ուսապայուսակներն ու պայուսակներն առնելով, նրանք նետվեցին դեպի ընթացքը դանդաղեցրած վագոնները։ Ամեն ինչ կատարվում էր արագ և շեշտակի, ինչպես դարանից հարձակման անցնելիս։ Հարկավոր էր մի բանից բռնելով կամ կառչելով, հասցնել մագլցել որևէ վագոն, որևէ հարթակ, միայն թե գնացք ցատկես, իսկ հետո արդեն կարելի է ընթացքում տեղափոխվել տանիքների վրայով ու ավելի հարմար տեղավորվել։ Աբդիայի համար այնուհետև ամեն ինչ կատարվեց, ինչպես մղձավանջային երազում. նա այս ու այն կողմ էր նետվում դեմը կանգնած, թվում էր մինչև երկինք հասնող վագոնների փակ պատերի առջև, ենթագիտակցաբար ղարմանալով, թե ինչքան բարձր են դրանք և ինչ սուր մազութահոտ է փչում անիվներից՝ պատրաստ ամեն վայրկյան շարունակելու իրենց վազքը։ Սակայն չնայած այդ ամենին, Աբդիան շտապ-շտապ մագլցում էր, ինչ-որ մեկին օգնում, ինչ-որ մեկը նրան էր օգնում։ Գնացքը մի երկու անգամ սպառնալից ցնցվեց, գնացքակազմը ճռնչաց ու ղրնգաց. ամեն րոպե կարող էիր անիվների տակ ընկնել։ Սակայն ամեն ինչ հրաշալի ստացվեց։ Եվ երբ գնացքը նորից ցնցվեց ու նորից սկսեց արագ շարժվել, որպեսզի կորցրած ժամանակի տեղը հանի, Աբդիան նայեց շուրջն ու տեսավ, որ գտնվում է դատարկ վագոնում իր մշտական ընկերակիցների՝ Պետրուխայի ու Լյոնկայի հետ, այդտեղ էր և Գրիշանը։ Աստված միայն գիտե, թե նա ինչպես էր հաջողացրել գնացք ցատկել ընտանված ոտքով, նրա հետ էին նաև այն երկուսը՝ Մախաշը և Կոլյան։ Բոլորը գունատ էին, շնչում էին ծանր, սակայն ուրախ և գոհ տեսք ունեին։ Աբդիան չէր կարողանում հավատալ, որ ամեն ինչ այդպես հաջող ստացվեց և որ ամենադժվար պահն արդեն անցած է։ Հիմա բանբերները մեկնում էին Ջալփաղ-Սաղի կողմը, իսկ այնտեղից արդեն ճամփա պիտի շարունակեին դեպի մեծ երկիր, մեծ քաղաքներ, մարդաշատություն...

Հինգ ժամվա ճանապարհ էր։ Նրանց բախտը բերել էր. գրաված դատարկ վագոնում փայտե արկղեր էին թափթփ-

ված, հավանաբար ապրանքը դատարկելուց հետո որպես անպետք դեն նետված. այդ հարմարեցրին նստելու համար։ Տեղավորվեցին, ինչպես Գրիշանը կարգադրեց, այնպես, որ դրսից չնկատվեն։ Վագոնում բավականին լույս էր անգամ մի կողմից դուռը բաց թողնելու դեպքում, մանավանդ որ վերևի փոքրիկ պատուհաններն էլ էին բաց օդ խաղալու համար։

Ինչ-որ կիսակայարանում առաջին իսկ կանգառին նրանք դուռը կիպ ծածկեցին ու սակվեցին՝ տոթի ու շոգի մեջ սպասելով, բայց գնացքի մոտերքը մարդ չերևաց։ Պետրոսյան զգուշորեն դուրս նայեց ու հայտնեց, որ ամեն ինչ կարգին է, շուրջը մարդ չի երևում։ Հենց դղրդալով անցավ կողքից հանդիպական մարդատար գնացքը, ապրանքատարը նորից շարժվեց, հաջորդ կիսակայարանում Մախաչը հասցրեց մի մեծ ման սառը ջուր բերել, և կյանքը վագոնում վերականգնվեց. բոլորն աշխուժացան, մի թեթև կերան մոտների պաքսիմատ ու պահածոներից և արդեն սկսեցին երազել, թե ոնց են տաք կերակուր ուտելու Ջալփաղ-Սազ կայարանի ճաշարանում։

Իսկ գնացքը շարունակում էր իր երթուղին Ջուլի տափաստաններով դեպի լեռներ...

Մայիսյան այն երկար երեկոյան դեռ լույս էր։ Խոսում էին դեսից դենից, բայց ամենից շատ ուտելիքից ու փողից։ Պետրոսյան հիշեց իր այն փառավոր կնկան, որ սպասում էր նրան Մուրմանսկում, որի առթիվ Մախաչը իսկական կովկասյան արտահայտչությամբ ասաց.

— Լսիր, Պետրոսյա, դու Մուրմանսկից բացի էլ ուրիշ տեղ կնիկ չունե՞ս կարողանում։ Ինչ ա, Մոսկվայում էլ մի քիչ անել չի՞ լինում։ Համ-համ-համ։ Ինչ ա, Մոսկվայում կնիկ չկա՞։

— Տո փսլնքոտ Մախաչկա, դու էդ գործից ի՞նչ ես հասկանում,— ջղայնացավ Պետրոսյան։— Հալա քանի՞ տարեկան ես։

— Քանի-քանի։ Քանի պետք է, էնքան եմ։ Մեր մոտ, Կովկասում, իմ նմանները վաղուց երեխա են չունում։ Համ-համ-համ։

Բոլորին զվարճացրեց այս խոսակցությունը, նույնիսկ Աբգիան ժպտաց, ժամանակ առ ժամանակ հայացք նետելով Գրիշանին, իսկ սա քիչ հեռու նստած քմծիծաղում էր զինջ-ղամտաբար։ Նա դարձյալ նստած էր իր ծալովի աթոռակին՝ ձեռքին այն նույն կոստղոտ ձեռնափայտը։ Մյուս բանբերներին նա նման էր թերևս միայն այն բանով, որ մյուսների պես չժանգին ծխախոտ էր ծխում։

Այսպես մեկնում էին նրանք ուրախ խմբով, հարմար տեղավորված ապրանքատարի դատարկ վագոններում։ Լյոնկան կուչ եկած պառկեց վագոնի մի անկյունում, մյուսներն էլ էին պատրաստվում քնել, թեև արևը դեռ մարմրում էր երկրի ծայրին ու լուսավորում շուրջը։ Ծխելով, աննշան ինչ-որ բաների մասին զրուցելով, բանբերները հանկարծ սսկվեցին, հետո նայելով Գրիշանին, սկսեցին փսփսալ։

— Լսիր, Գրիշան,— դիմեց նրան Մախաչը,— ի՞նչ ենք էսպես նստել, հասկանում ես, ընդհանուր ժողովում մենք որոշեցինք՝ մի քիչ կայֆ անենք, հա՞։ Ժամանակ կա, կայֆ անե՞նք։ Ես, մեր թամադա, էն տեսակ համ ու հոտովն ունեմ, փայ-փա՜յ, որ մենակ բաղդադի գողն է էդ տեսակը ծխել։

Գրիշանը մի արագ հայացք նետեց Աբգիային. դեհ, էբր, ի՞նչ կասես։ Եվ մի փոքր լռելով, ասաց.

— Արե՛ք։

Բոլորն աշխուժացան, խմբվեցին Մախաչի շուրջ։ Իսկ նա բաճկոնի ինչ-որ տեղից հանեց անաշան, այն համուհոտը, որ միայն բաղդադի գողը կարող էր ծխել։ Մի մեծ գլանակ փաթաթեց, ինքն առաջինը քաշեց ու ինքնափաթեթ գլանակը տվեց, որ հերթով ծխեն։ Յուրաքանչյուրն ակնածանքով ներս էր քաշում անաշայի ծուխն ու գլանակը տալիս մյուսին։ Երբ հերթը հասավ Պետրոսիկային, սա ագահորեն ներս քաշեց, աչքերը կկոցեց, ապա գլանակը մեկնեց Աբգիային։

— Դեհ, Ավդյա, մի քիչ կուլ տուր։ Կունտ հո չե՞ս։ Առ, քաշի։ Մի կոտրատվի, վերջ տուր, աստված վկա, հո կնիկ չես։

— Չէ, Պյոտր, ես չեմ ծխի, զուր մի չարչարվի,— Պետրոսիկայի առաջարկը կտրականապես մերժեց Աբգիան։

Նա իսկույն վիրավորվեց.

— Ինչ որ եղել ես տերտեր, տերտեր էլ կմնաս։ Էլ ո՞նց կլիներ, տեր-տիրացու։ Ուզում եմ էնպես անեմ, որ քեզ լավ լինի, իսկ դու թքում ես մարդու վրա։

— Ես չեմ թքում, Պյոտր, ճիշտ չես։

— Էհ, քեզ համոզել կլինի,— ձեռքը թափ տվեց Պետրուխան, և նորից մի հատ քաշելով, գլանակը տվեց Մախաչին, իսկ սա իսկական կովկասյան ճարպկությամբ այն մեկնեց Գրիշանին։

— Իսկ հիմի, մեր թամադա, քո հերթն է։ Քո կենացը։

Գրիշանը լուռ հեռացրեց նրա ձեռքը։

— Դու գիտես, տեր-աղա,— խղճալով գլուխը տարուբերեց Մախաչը և գլանակը նորից սկսեց ձեռքից ձեռք անցնել։ Ագահորեն քաշեց Լյոնկան, նրա հետից շեկ Կոլյան, հետո Պետրուխան, և նորից Մախաչը։ Ու շուտով ծխողների տրամադրությունն սկսեց փոխվել, աչքերը մեկ մշուշվում էին, մեկ փայլփլում, շրթունքները ճապաղվում չգիտես ինչու երջանիկ ժպիտից, և միայն Պետրուխան դեռ չէր կարողանում վիրավորանքը մոռանալ, շարունակ խեթ հայացքներ էր նետում Աբդիային և քթի տակ ինչ-որ բաներ փնթփնթում տերտերների մասին, որ նրանք, իբր, բոլորն էլ սրիկաներ են սրա նման։

Իր աթոռակին նստած, Գրիշանը տեղից լուռ, անվրդով հետևում էր ծխելու սեանսին գերմարդու հեգնական-գրգռիչ, ղիջողամիտ քմծիծաղով։ Խլվլան, ոչնչացնող հայացքները, որ նա ժամանակ առ ժամանակ նետում էր բաց դռան մոտ կանգնած Աբդիային, խոսում էին այն մասին, որ նա գոհ է տեղի ունեցածից և անկասկած հասկանում է, թե դա որքան ծանր է արդարակյաց Աբդիայի համար։

Աբդիան հասկացավ, որ Գրիշանը թույլ տալով բանբերներին կայֆ անել ճանապարհին, ցուցադրական ներկայացում էր սարքել իր համար։ Ահա, խնդրեմ, ի՞նչ կասես։ Տես, թե ինչքան ուժեղ եմ ես և որքան անզոր են չարիքի դեմ պայքարելու քո բարձր մղումները։

Ու թեև Աբդիան ձևացնում էր, իբր իր համար միևնույն է, թե նրանք ինչով են զբաղվում, հոգու խորքում վրդովվում էր, տառապում Գրիշանին որևէ կերպ դիմադրելու անզորու-

թյունից, այդ տղաներին Գրիշանի ազդեցությունից դուրս բերելու համար գործնական որևէ քայլ անելու անկարողությունից։ Եվ հենց դրանից էլ Աբդիան կորցրեց ինքնատիրապետումը։ Նա ի վիճակի չէր զսպելու իր մեջ գնալով սաստկացող զայրույթը։ Ու վերջին կաթիլը եղավ դարձյալ Պետրուխայի առաջարկը՝ քաշելու իր մարխից, այն նույն ինքնափաթեթ գլանակից, որ ամեն քաշողից հետո ավելի ու ավելի թքոտվում էր, մինչև վերջապես թունոտ դեղնա-կանաչ գույն էր ստացել։

— Ահ, Ավդյա, մռութդ շուռ մի տուր, մեր պստիկ տերտեր։ Ես քեզ սրտանց եմ ասում։ Դրա համն առնողը խելքամաղ կլինի,— սանձարձակորեն կպել էր նրան Պետրուխան։

— Հանգիստ թող,— զայրացած ընդհատեց նրան Աբդիան։

— Ինչը թողնեմ։ Ես քեզ լավ սրտով եմ մոտենում, իսկ դու երևակայում ես, երեսդ ես ծամածռում։

— Դեհ լավ, տո՛ւր, տո՛ւր ինձ,— չդայլայլացած ասաց Աբդիան ու ձեռքը մեկնեց մարմրող մարխին, բարձրացրեց այն գլխավերևը, ասես ցուցադրելով Պետրուխային, և դուրս շպրտեց ապրանքատարի բաց դռնից։ Դա այնքան արագ կատարվեց, որ բոլորը, այդ թվում և Գրիշանը ինչ-որ ժամանակ քարացան անակնկալից։ Տիրած լռության մեջ ավելի հատու, ավելի ուժեղ և ահարկու լսվեց երկաթգծուղ արագ դղրդող անիվների թխկթխկոցը։— Տեսա՞ր,— հանդուգն դիմեց Աբդիան Պետրուխային.— Բոլորը՞ տեսան, ես ինչ արեցի,— ասաց զայրագին հայացք դցելով անաշա տանուղներին։— Եվ այսպես կլինի միշտ։

Պետրուխան, նրա հետևից և մյուսները զարմանքով ու հարցական դարձան Գրիշանին. իբր, սա ինչպե՞ս հասկանանք, տեր, այս տխմարը որտեղի՞ց լույս ընկավ այստեղ։

Գրիշանը ցուցադրաբար լռում էր, հեգնական հայացքը Աբդիայից դարձնելով վիրավորված բանբերներին։ Առաջինը չդիմացավ Մախաչը։

— Լսիր, թամադա, ինչի՞ ես լռում։ Հո չե՞ս լալացել։

— Ոչ, չեմ լալացել,— նրա ձևով ասաց Գրիշանը և չոր ավելացրեց, իր չարախնդությունը չթաքցնելով։— Ես այս տիպին խոսք եմ տվել լուռ մնալ։ Մնացածը ձեր գործն է։ Այլևս ոչինչ չեմ ասելու...

— Էդպե՞ս է,— շվարած հարցրեց Մախաչը Աբդիային։

— Այդպես է, բայց այդքանը չէ միայն,— բղավեց Աբդիան։— Ես խոսք եմ տվել, որ պիտի մերկացնեմ նրան,— գլխով ցույց տվեց նա Գրիշանին,— այդ սատանային, որ ձեզ այս կործանարար գայթակղության մեջ է քաշել։ Եվ ես չեմ լռի, որովհետև ճշմարտությունն իմ կողմն է,— Եվ ինքն էլ չհասկանալով, թե իր հետ ինչ է կատարվում, ինչ է անում և ինչ է բղավում, անաշալով լցված ուսապայուսակների կույտի միջից դուրս քաշեց իր ուսապայուսակը։ Բոլորը, Գրիշանից բացի, անսպասելիությունից վեր թռան տեղներից, չհասկանալով, թե ինչ է ուզում անել այս համեստ տեր-տիրացու Աբդիա Կալիստրատովը։

— Ահա, տղաներ, նայեցեք,— գլխից վեր բռնած թափահարեց ուսապայուսակը Աբդիան։— Մենք սրա մեջ տանում ենք կործանում, մահ, թույն մարդկանց համար։ Եվ այդ անում եք դուք, բանբերներդ, հեշտ փող ձեռք բերելուց գլուխներդ կորցրած, դո՛ւ Պյոտր, դո՛ւ Մախաչ, դո՛ւ Լյոնյա, դո՛ւ Կոլյա։ Գրիշանի մասին խոսել չարժե։ Ինքներդ էլ գիտեք, թե նա ով է։

— Սպասիր, սպասիր, Աբդիա։ Հապա, սիրելիս, հապա մի ինձ տուր պարկդ,— դեպի նա քայլեց Պետրուխան։

— Հեռացիր,— հրեց նրան Աբդիան։— Քո գործը չէ։ Ես գիտեմ, թե ոնց պիտի ոչնչացնել մարդկանց այս թույնը։

Եվ բանբերները դեռ ուշքի չեկած, Աբդիան քանդեց ուսապայուսակի կապը, սկսեց գնացքի դռնից քամուն տալ անաշան։ Եվ թույնը,— իսկ պարզվում է կանեփի այնքան շատ դեղնա-կանաչ ծաղկաբույլեր ու ծաղկաթերթեր էր հավաքել,— թափթփվեց երկաթուղու երկայնությամբ, ճախրելով ու պտտվելով աշնան տերևների պես։ Այդ քամուն էր տրվել փողը՝ հարյուրավոր և հազարավոր ռուբլիներ։ Մի պահ բանբերներն անշարժացան, հմայվածի պես նայելով Աբդիային։

— Տեսա՞ք,— բղավեց Աբդիան և դռնից դուրս նետեց նաև ուսապայուսակը։— Իսկ հիմա հետևեք իմ օրինակին։ Ու մենք միասին մեր մեղքերը կխոստովանենք, և Աստված կսիրի ու կների մեզ։ Դեհ, Լյոնկա, Պյոտր։ Թափեք, դուրս գցեք անիծյալ անաշան։

— Սա խելքը գցել է։ Սա հենց առաջին կայարանում մեզ կծախի։ Բռնեք, խփեք էս տերտերին,— իրեն կորցրած բղավեց Պետրուխան։

— Սպասեք, սպասեք։ Ինձ լսեք,— փորձում էր նրանց մի բան բացատրել, բղավում էր Աբդիան տեսնելով, ինչպես էին գազազել անաշա քաշած բանբերները, սակայն արդեն ուշ էր։ Նրանք կատաղած շների նման հարձակվեցին վրան։ Պետրուխան, Մախաչը, Կոլյան, իրար հերթ չտալով, հարվածում էին նրան բռունցքներով։ Միայն Լյոնկան էր զուր փորձում հեռացնել, իրարից բաժանել կռվողներին։

— Բավական է, թողեք,— անզոր վազվզում էր նրանց շուրջ։ Սակայն չէր կարողանում կանգնեցնել. ինչպես կարող էր միանգամից երեքին զսպել։ Դաժան ձեռնակռիվ սկսվեց։

— Խփի՛ր։ Քա՛շ տուր։ Դուրս գցի դրան վագոնից,— ոռնում էր գազազած Պետրուխան։

— Խեղդիր էդ տերտերին։ Ցա՛ծ գցի,— ձայնակցում էր նրան Մախաչը։

— Պետք չէ։ Մի սպանեք։ Պետք չէ սպանել,— աղաղակում էր գունատ Լյոնկան ամբողջ մարմնով ցնցվելով։

— Հետ քաշվի, սրիկա, կմորթեմ,— պոկվեց Լյոնկայի ձեռքից գազազած Կոլյան։

Աբդիան ետ էր մղում նրանց ինչքան ուժ ուներ, աշխատելով հեռանալ բաց դռնից, ընկնել այս ու այն կողմ ճոճվող վագոնի մեջտեղը. նա հիմա իր աչքով տեսավ, համոզվեց, թե որքան դաժան, կատաղի, սադիստ են հաշիշամոլները, իսկ դեռ քիչ առաջ երանավետ ժպտում էին էյֆորիայի մեջ։ Աբդիան հասկանում էր, որ սա կենաց և մահու կռիվ է, հասկանում էր, որ ուժերը շատ անհավասար են։ Նրանք երեքն են, հաղթանդամ գազազած տղամարդիկ, ինչպես կարող է ինքը նրանց հաղթել, չէ որ միայն Լյոնկան է նրան պաշտպանում, բայց Լյոնկան հաշիվ չէ։ Գրիշանն այդ ամբողջ ժամանակ նստել էր առաջվա նման իր տեղում, ինչպես կրկեսի կամ թատրոնի հանդիսատես, սակայն չէր թաքցնում իր չարախնդությունը։

— Ա՛յ քեզ բան։ Ա՛յ թե հա,— ծիծաղում, ծաղրում էր նա։ Հաջողացրեց նրանց կռվացնել, առաջուց հաշվել էր, որ

կընդհարվեն և հիմա հաղթանակի պատուղներն էր վայելում՝ նայում էր, թե ինչպես են իր աչքի առաջ մարդ սպանում։

Աբդիան հասկանում էր, որ միայն Գրիշանի միջամտությունը կարող էր իր վիճակը փրկել։ Բավական էր բղավեր՝ «Փրկի՛ր, Գրիշան»,— և բանբերներն անմիջապես կհնազանդվեին։ Սակայն Գրիշանի օգնությանը դիմել Աբդիան չէր կարող ոչ մի դեպքում։ Մնում էր մի բան՝ քաշվել վագոնի խորքը, մի անկյուն մտնել, ու հետո թող ծեծեն, ջարդեն, ինչ ուզում են անեն իր հետ, միայն թե դուրս չգցեն գնացքի շարժման ժամանակ. դա արդեն հաստատ մահ էր...

Սակայն մինչև անկյուն հասնելը այնքան էլ հեշտ չէր։ Բռունցքի հարվածները, աքացիները նրան շպրտում էին դեպի դռան բացվածքը։ Եթե նա մի վայրկյան այնտեղ մնար, բանբերներն առանց մտածելու նրան դուրս կգցեին վագոնից։ Եվ Աբդիան վեր էր կենում նորից ու նորից, համառորեն ջանում էր իրեն զցել հեռավոր անկյունը, հույսով, որ հաշիշամոլները հոգնեն կամ ուշքի կգան։ Այդ կատաղի գոտեմարտում առաջինը գետին տապալվեց Լյոնկան, գլխին ստացած հարվածից։ Կոլյան նրան այդպես հասցրեց, որ չհանգարի դատաստան տեսնել այդ տերտերի, արդարակյացի, ուրեմն և՝ բանբերների թշնամու, Աբդիայի հետ։ Կատաղի էին բռունցք բանեցնում բանբերները, չէ որ հաշիվն էլ կատաղի փողի հաշիվ էր։

— Տո՛ւր, հասցրո՛ւ դրան։ Փորի՛ն տուր, փորի՛ն,— փըրփըրել էր Պետրոսյան, և Աբդիային հետևից բռնելով, ձեռները հետ ծալեց, դեմ տալով նրան Մախաչի հարվածներին, ու սա գազազած ցուլի նման սոսկալի ուժով հարվածեց նրա փորին, և Աբդիան երեքտակված ու արյուն թքելով փովեց սլացող վագոնի հատակին։ Այն ժամանակ երեքով սկսեցին նրան քարշ տալ դռան մոտ, սակայն նա դեռ դիմադրում էր, եղունգները պլոկելով կառչում էր հատակի փայտերից։ Ջանալով մի կերպ պոկվել, դուրս պրծնել, իսկ չարագուշակ Գրիշանը, ասես ոչ մի կապ չունենար, նստել էր վագոնի անկյունում իր աթոռակին ոտքը ոտքին գցած, անվրդով-հրճվալից արտահայտությունը դեմքին և ինչ-որ բան էր սուլում, կոստղոտ փայտը ձեռքին խաղացնելով։ Ու դեռևս հնարավորություն կար գթություն խնդրելու, բղավելու. «Գրիշա՛ն,

փրկի՛ր», բացառված չէ, որ սա բարեհաճ գտնվեր, մեծահոգություն ցուցաբերեր և կանգնեցներ մարդասպանությունը, սակայն Աբդիան բևրանը չբացեց և, նրա գլխով հատակի փովածքին արյան հետք գծելով, նրանք նրան քարշ տվեցին վագոնի բայվածքի մոտ և այդտեղ, դռան մոտ տեղի ունեցավ ևս մի, վերջին գոտեմարտը։ Նրանք վախեցան Աբդիային ընթացքի ժամանակ դուրս շպրտել, որովհետև երեքն էլ կարող էին հեռը դուրս ընկնել։ Աբդիան հաջողացրեց կախվել դռնից, ավելի շուտ դռան ետևից կառչելով բռնակի օղից։ Հանդիպական քամին վրա տվեց փոթորիկի նման, սեղմեց դռանը, սակայն Աբդիային հաջողվեց ձախ ոտքով ինչ-որ մետաղյա ելուստ շոշափել և կախ ընկնել մի կերպ պահելով իրեն, ու երբեք, հավանաբար, նրա մեջ այդքան ուժ չէր եղել, այդքան փափագ ողջ մնալու, ինչպես այդ պահին, երբ ջանում էր աղետի դեմն առնել։ Եթե նրան հանգիստ թողնեին, թերևս կարողանար մի կերպ բարձրանալ, հետ մագլցել վագոն։ Սակայն բանբերները ոտքով հարվածում էին նրա դրլխին, ֆուտբոլի գնդակի նման, հայհոյում վերջին խոսքերով, արնաշաղախ էին անում, իսկ նա կառչել ու բաց չէր թողնում բռնակը։ Վերջին րոպեներն ամենասարսափելին էին։ Պետրոսյան, Մախաչն ու Կոլյան բոլորովին էին գաղանացել։ Այդ ժամանակ Գրիշանն էլ չդիմացավ, մոտեցավ դռանը. հիմա արդեն կարելի էր չկեղծել, կարելի էր հաճույքով նայել, թե ինչպես պիտի ընկնի ու ջարդուփշուր լինի Աբդիա Կալիստրատովը։ Եվ Գրիշանը կանգնել ու սպասում էր այն անխուսափելի պահին, երբ բանբերները պիտի վերջացնեին Աբդիային։ Խոսք չկա, Գրիշանն իր գործը լավ գիտեր։ Նա Աբդիա Կալիստրատովին սպանում էր ուրիշի ձեռքերով։ Իսկ վաղը եթե մեռած Կալիստրատովին գտնեին ու չհավատային, որ նա ընկել կամ իրեն դուրս է գցել գնացքից, վատագույն դեպքում էլ Գրիշանը մաքուր կլիներ. նա ինքը ձեռք չի դիպցրել։ Կասի տղաները գժտվեցին, կռվեցին, որի հետևանքով եղավ դրժբախտ դեպք՝ ոտքը սայթաքեց ու ընկավ։

Վերջինը, որ մնաց Աբդիայի հիշողության մեջ՝ աքացիներն էին դեմքին, բանբերների կուշիկներն արյունոտվել էին, և հանդիպական քամին գվվում էր ականջների մեջ բացառա-

վող կրակի նման։ Արճիճե ծանրությամբ լցված Աբդիայի մարմինը ավելի ու ավելի էր իջնում՝ զարհուրելի, անողոք ամայության մեջ, իսկ գնացքը սլանում էր քամու դիմադրությունը հաղթահարելով, սլանում էր այն նույն տափաստանով և ոչ մեկի պետքը չէր նա աշխարհում՝ դատապարտված, կյանքը մազից կախված։ Եվ արևը նույն անսահմանորեն երկար օրվա մայրամուտին, կուրացնելով նրա տառապանքից ու սարսափից դուրս պրծած աչքերը, նրա հետ գլորվում էր անէության սև անդունդը։ Սակայն ինչքան էլ աքացի էին տալիս, Աբդիան ձեռները բաց չէր թողնում, և այդ ժամանակ Պետրուխան նրան հասցրեց վերջին վճռական հարվածը, խլելով Գրիշանի ձեռնափայտը, որը Գրիշանն իբր պատահմամբ պահել էր նրա աչքի առաջ։ Ահա, իբր, խընդրեմ, վերցրու և խփիր, խփիր ձեռքերին, որ բաց թողնեն...

Եվ Աբդիան ցավի կծիկ դառած ցած ընկավ, չդգալով այլևս, թե ինչպես գլորվեց թեքությամբ, ջարդոտվելով ու պոկոտվելով, ինչպես ընկած տեղի մոտով անցավ գնացքի պոչը, ինչպես գնացքն անհետացավ տանելով իր նախկին ուղեկիցներին, ինչպես լռեց անիվների աղմուկը։

Շուտով արեգակը մարեց, տիրեց խավար, և արևմուտքում դարշա-կապարագույն երկնքում ամպրոպաբեր ամպեր կուտակվեցին...

Իսկ չարաբաստիկ տեղի մոտով արդեն ուրիշ գնացքներ էին անցնում, և նա ով օգնություն չաղերսեց իր կյանքը պահպանելու համար, չախչախված ընկած էր հիմա երկաթուղու ճամփեզրի առվի հատակին։ Եվ այն ամենն, ինչ նա իմացավ ճշմարտության խելահեղ որոնումներից, այն ամենն, ինչ հաստատում էր, հիմա դեն էր շպրտված, կործանված էր։ Եվ արժե՞ր արդյոք, առանց իրեն խնայելու, հրաժարվել կենդանի մնալու հնարավորությունից։ Չէ որ հարցը, ոչ ավել, ոչ պակաս՝ իր սեփական կյանքին էր վերաբերում, և պետք էր ընդամենը ասել. «Փրկիր ինձ, Գրիշան»։ Բայց նա այդ բառերը չասաց...

Հիրավի սահման չունեն տարօրենություններն Աստծո... Չէ որ պատմության մեջ եղել է արդեն մի դեպք, նույնպես խենթ մի գալիլիացի իրեն այնքան է երևակայել, որ հրա-

ժարվել է մի երկու խոսքից ու զրկվել է կյանքից։ Ու հենց այդ պատճառով է նրա վերջը եկել։ Եվ մարդիկ, թեև այդ ժամանակից անցել է հազար ինը հարյուր հիսուն տարի, դևռ չեն կարողանում ուշքի գալ, շարունակ վիճում են ու զղջում, թե ինչպես եղավ, ինչ եղավ այն ժամանակ, ինչպես կարող էր այդ պատահել։ Եվ ամեն անգամ թվում է նրանց, թե դա հենց երեկ է պատահել, այնքան որ անմոռաց է ցնցումը։ Ու ամեն սերունդ, իսկ թե ինչքան սերունդներ են փոխվել այն ժամանակից ի վեր, հաշիվ չկա, կրկին հանկարծ ուշքի է գալիս ու հայտարարում, որ եթե նրանք լինեին այն օրը, այն ժամին Լերկ լեռան վրա՝ ոչ մի դեպքում թույլ չէին տա դատաստան տեսնել այն գալիլիացու հետ։ Ահա թե ինչպես է թվում նրանց հիմա։ Բայց ով կարող էր այն ժամանակ մտածել, թե բանն այնպես շուռ կգա, որ դարերի մեջ կմոռացվի ամեն ինչ, բայց ոչ այդ օրը...

Եվ այն ժամանակ նույնպես, ի դեպ, ուրբաթ էր, և նա ով կարող էր փրկվել, նա էլ չմտածեց երկու խոսք ասել հանուն իր փրկության...

2

Շոգ էր առավոտն այն Երուսաղեմում, ու գուշակում էր է՛լ ավելի շոգ օր։ Հերովդեսի Կամարակապ մարմարյա պալատական պատշգամբի տակ, ուր կուսակալ Պոնտացի Պիղատոսը հրամայել էր իր համար աթոռ դնել, թեթևակի հով էր փչում ցածում շարժվող ջրմուղ ու զովացնում էր առնդակ հագած ոտները։ Մեծ այգու բրգաձև բարձր բարդիների կատարները հազիվ լսելի խշխշում էին, նրանց տերևներն այս տարի ժամանակից շուտ էին դեղնել։

Այստեղից, այս քարակոփ բարձրությունից, պալատի Կամարակապ պատշգամբից երևում էր քաղաքը, որի ուրվագծերը ճապաղվում էին երերուն մշուշի մեջ, օդը գնալով շիկանում էր, նույնիսկ Երուսաղեմի շրջակայքը, որ միշտ շատ հստակ երևում էր, հազիվ աղոտ նշմարվում էր սպիտակ անապատի սահմանագծին։

Այն առավոտ միայնակ մի թռչուն թևերը լայն բաշած, ասես անտեսանելի թելով երկնքից կախված, անձայն ու սահուն պտտվում էր բլրի գլխին, հավասար ժամանակահատվածում անցնելով մեծ այգու տարածքի վրայից։ Կամ արծիվ էր, կամ ուրուր, այդ երկուսից բացի, ուրիշ թռչուն համբերություն չէր ունենա այդքան երկար ու միապաղաղ թռչելու շոգ երկնքում։ Նկատելով իր առջև կանգնած ոտքից ոտք հենվող Հիսուս Նազովրեցու պատահական հայացքը, որ նա նետեց թռչունին, կուսակալը զայրացավ և նույնիսկ վիրավորվեց։ Ու ասաց թունոտ ու դաժանորեն.

— Աչքդ ո՞ւր ես հառել, հրեաների թագավոր։ Դա քո մահն է պտտվում։

— Այն բլուրի գլխին է պտտվում,— կամացուկ պատասխանեց Հիսուսը, ասես ինքն իր հետ խոսելով, և ակամա ձեռքը տարավ դեմքն ուղելուց փոքրացած, և այտուցված աչքին. շուկայի մոտ, երբ նրան տանում էին ծեծրակուտի դատին, քահանաների և տոհմավարների կողմից հրահրված ամբոխը հարձակվեց նրա վրա ու սկսեց ծեծել։ Ոմանք դաժանորեն հարվածում էին նրան, ոմանք թքում երեսին և այնժամ նա հասկացավ, որ իրեն ամենից դաժանորեն ատում են Կայիափա քահանայապետի մարդիկ, ու հասկացավ, որ ոչ մի ողորմածություն չպիտի սպասի երուսաղեմյան դատից, և սակայն մարդկայնորեն նրան զարմացնում էր, ապշեցնում ամբոխի վայրագությունն ու դավաճանությունը, կարծես նրանցից ոչ մեկը մինչ այդ չգիտեր, որ ինքը թափառաշրջիկ է, կարծես մինչ այդ ոչ մեկը շունչը պահած ականջ չէր դրել նրա քարոզներին տաճարներում ու հրապարակներում, կարծես նրանք չէին հրճվում, երբ ինքը ներս էր մտնում քաղաքի դարպասից մոխրագույն ավանակին նստած, ավանակի ձագն էլ եռևից, կարծես նրանք չէին ավանակի ոտքերի տակ ծաղիկներ նետելով աղաղակում հույսով. «Օվսաննա Որդուն Դավթի։ Օվսաննա երկնավորին»։

Հիմա նա պատառոտված հագուստով կանգնած էր Պոնտացի Պիղատոսի առջև, սպասելով, թե ինչ է լինելու հետո։

Իսկ կուսակալը չափազանց վատ տրամադրության մեջ էր, ու նախ և առաջ, որքան էլ տարօրինակ լինի, նա զայրացած էր ինքն իր վրա՝ իր դանդաղկոտության և անբացատրելի անվճռականության վրա։ Այդպիսի բան նրա հետ դեռ չէր պատահել ոչ հռոմեական գործող բանակի մեջ եղած ժամանակ, ոչ էլ մանավանդ կուսակալ եղած ժամանակ։ Իսկապես, մի՞թե ծիծաղելի չէ. փոխանակ տեղնուտեղը հաստատելու ծերակույտի դատավճիռն ու իրեն ազատելու ավելորդ հոգսից, նա ձգձգում էր հարցաքննությունը, զուր ժամանակ և ուժեր վատնելով։

Չէ որ, թվում է, շատ հեշտ բան էր՝ կանչել իր վճռին սպասող Երուսաղեմի քահանայապետին ու իր հետևորդներին ու ասել. ահա, խնդրեմ, վերցրեք ձեր դատապարտյալին ու վարվեք ձեր վճռի համաձայն։ Սակայն, ինչ-որ բան խանգարում էր Պոնտացի Պիղատոսին այդպես հեշտ ձևով վարվելու։ Իսկ արժանի՞ է արդյոք այս խեղկատակը որ, հետը գլուխ դնի...

Բայց ահա թե ինչպիսին է այս խենթը։ Նա, իբր, Հրեաների թագավորն էր, Աստծու սիրեցյալն ու Աստծու կողմից պարգևված հրեաներին, որպես ուղիղ ճանապարհ դեպի ճշմարիտ թագավորությունն Աստուծո։ Իսկ դա այն թագավորությունն է, ուր տեղ չի լինելու կեսարի իշխանությանն ու կեսարներին, նրանց կուսակալներին և կամակատար սինագոգներին, և բոլորն իբր հավասար կլինեն ու երջանիկ հավիտյանս հավիտենից։ Ինչ մարդիկ ասես գերագույն իշխանության չեն ձգտել, սակայն այսպիսի խելացի, խորամանկ ու նենգ մեկը դեռ երբեք չի եղել. չէ որ ինքն էլ բավական է հաջողվի հասնել իշխանության ղեկին, հաստատ ճիշտ նույն կերպ կկառավարի, քանզի կյանքի ուրիշ ընթացք չկա և չի լինի աշխարհում։ Եվ ինքը չարագործը դա շատ լավ գիտի, սակայն իր խաղն է անում։ Կաշառում է դյուրահավատ մարդկանց Նոր Թագավորության խոստումով։ Եթե ճշմարիտ են ասում, որ ամեն ոք ուրիշի մասին դատում է ըստ իր կասկածամտության, ապա այստեղ հենց այդ դեպքն էր. կուսակալը Հիսուսին վերագրում էր այն մտքերը, որ հոգու խորքում, հույս չունենալով նրանց իրա-

կանացմանը, փայփայում էր ինքը։ Հենց այդ էր ամենից ավելի ջղայնացնում Պոնտացի Պիղատոսին և այդ պատճառով դատապարտյալը նրա մեջ առաջացնում էր միաժամանակ և հետաքրքրություն և ատելություն։ Կուսակալը կարծում էր, որ հասկացել է Հիսուս Նազովրեցու մտադրությունը. կա՞ չկա այս թափառաշրջիկ մարգարեն որևէ երկրում խառնակություն գցել, մարդկանց նոր թագավորություն խոստանալ և խորտակել այն, ինչին հետագայում ուզում էր տիրանալ ինքը։ Սրա՞ն տեսեք։ Ում մտքով կանցներ, որ այս ողորմելի հրեան համարձակվել է երազել այն, ինչ չէր կարող երազել, այսինքն իրեն թույլ չէր տալիս երազել ինքը՝ Հռոմեական կայսրության փոքրասիական նահանգների տիրակալ Պոնտացի Պիղատոսը։ Այդպես էր իրեն համոզում, տրամադրում, այդպիսի եզրակացության էր իրեն բերում փորձառու կուսակալը, Հիսուսին հարցաքննելով բավական տարօրինակ ձևով՝ ամեն անգամ իրեն նրա տեղը դնելով, և սկսում էր զայրանալ այդ չլսված-չտեսնված բռնատիրողի դիտավորություններից։ Ու դրանից Պոնտացի Պիղատոսը գնալով ավելի էր բորբոքվում, ավելի էր տառապում կասկածներից. Նա ուզում էր և կուսակալի իր ստորագրությամբ անմիջապես վավերացնել մահվան դատավճիռը, որ կայացրել էին նախորդ օրը Երուսաղեմի ծերակույտի ավագները, և ուզում էր ձգձգել այդ պահը, ըմբոշխնել հաճույքը մինչև վերջ պարզելու, թե ինչ սպառնալիք էին ներկայացնում հռոմեական իշխանության համար այս Հիսուսի մտքերն ու գործողությունները...

Դատապարտված թափառաշրջիկի պատասխանը երկնքում պտտվող թռչունի վերաբերյալ տհաճություն պատճառեց կուսակալին իր բացորոշությամբ և անհարգալիցությամբ։ Կարող էր և լուռ կամ շողոքորթող մի բան ասել, բայց չէ, մի տես թե ինչո՞վ է մխիթարվում. մահն, իբր, բոլորիս գլխին է պտտվում։ «Չէ, սա ինքն է իր գլխին փորձանք բերում, ասես իսկապես էլ մահապատժից չի վախենում»,— զայրանում էր Պոնտացի Պիղատոսը։

— Էհ, դառնանք մեր խոսակցությանը։ Դու գիտե՞ս, թշվառական, թե քեզ ինչ է սպասվում,— հարցրեց կուսակալը խոպոտ ձայնով, արդեն քանիցս թաշկինակով սրբելով քրո-

տինքը դարչնադույն յուղափայլող դեմքից ու նաև ճաղատից, հատ պինդ վզից։ Մինչ Քրիստոսը պատրաստվում էր պատասխանել, կուսակալը ճոթճոթացնում էր քրտնած մատները, ամեն մատն առանձին-առանձին քաշելով. նա այդ վատ սովորությունն ուներ։— Հարցնում եմ քեզ, գիտե՞ս, թե քեզ ինչ է սպասվում։

Հիսուսը ծանր հառաչեց, գունատվելով այն մտքից միայն, ինչ սպասվում էր իրեն։

— Այո, հռոմեական կուսակալ, գիտեմ, որ ինձ այսօր պետք է մահապատժի ենթարկեն,— դժվարությամբ ասաց նա։

— «Գիտե՞մ»— ծաղրական կրկնեց կուսակալը, արհամարհանքով ու խղճահարությամբ լի քմծիծաղով ոտքից գլուխ չափելով իր առջև կանգնած ձախորդ մարգարեին։

Սա կանգնել էր նրա առջև գլուխը կախ գցած, անշնորհք երկարավիզ և երկարամազ, գզգզված խոպոպներով, պատատված շորերով, բոկոտն,— սանդալները, երևի, կորցրել էր կռվշտոցի ժամանակ,— իսկ նրա եռևում պալատի պատշգամբի ճաղաշարքի միջից երևում էին քաղաքի տները առանձին բլրակների վրա։ Քաղաքը սպասում էր նրան, ով կանգնած էր հարցաքննության կուսակալի առջև։ Գարշելի քաղաքը գոհի էր սպասում։ Այսօր, այս տապին քաղաքը արյունահեղության էր ուզում, նրա գիշերվա նման մթին բնազդները ցնցում էին ուզում, և այնժամ փողոցի ամբոխները շնչասպառ կլինեին ոռնոցից ու լացուկոծից շնագայլերի ոհմակների նման, որ ոռնում ու չար հաչում են, տեսնելով ինչպես լիբիական անապատում կատաղած առյուծը քրքրում է վագրաձիուն։ Պոնտացի Պիղատոսը առիթ էր ունեցել հետևելու այդպիսի տեսարանների և՛ գազաններ, և՛ մարդկանց մեջ ու ներքուստ սարսափեց, պատկերացնելով խաչ հանելու պահը, եվ նա կրկնեց կշտամբանքով, որ զուրկ չէր կարեկցանքից.

— Դու ասացիր՝ գիտեմ։ «Գիտեմ» չէ, ոչ, չգիտես։ Դու այդ լրիվ կիմանաս, երբ այնտեղ կլինես...

— Այո, հռոմեական կուսակալ, ես գիտեմ և այդ միտքն իսկ սարսափեցնում է ինձ։

— Իսկ դու մի ընդհատիր ու մի շտապիր այն աշխարհ, դեռ կհասցնես,— մռթմռթաց կուսակալը, որին խանգարեցին միտքն ավարտել։

— Ներող եղիր, տիրակալ, եթե պատահմամբ ընդհատեցի քեզ, ես այդ չէի ուզում,— ներողություն խնդրեց Հիսուսը։— Ես ամենևին չեմ շտապում։ Կուզեի մի քիչ էլ ապրել։

— Եվ չե՞ս ուզում հրաժարվել արտառոց քո խոսքերից,— ուղղակի հարցրեց կուսակալը։

Հիսուսը ձեռները տարածեց, և նրա աչքերը մանկականորեն անօգնական էին։

— Ես հրաժարվելու բան չունեմ, տիրակալ, այդ խոսքերը կանխորոշված են Հորս կողմից, ես պարտավոր էի դրանք մարդկանց հասցնել, կատարելով Նրա կամքը։

— Էլի քոնն ես պնդում,— Պոնտացի Պիղատոսը ջղայնացած բարձրացրեց ձայնը։ Նրա դեմքի արտահայտությունը՝ խղճր արծվաքիթ, խոր կնճիռներով շրջանակված բերանի դաժան գծագրությամբ, դարձավ սառն-արհամարհական։— Չէ որ ես քեզ շատ լավ եմ հասկանում, ինչքան էլ քեզ ձևացնես,— ասաց նա առարկություն չվերցնող տոնով։— Ինչ կնշանակի իրականում Հորդ խոսքերը մարդկանց հասցնել՝ դա նշանակում է հիմարացնել, ձեռդ հավաքել ամբոխին խաժամուժին դրդել անկարգություններ։ Դուցե դու ինձ էլ պետք է հասցնես նրա խոսքերը՝ ես էլ եմ մարդ։

— Դու, հռոմեական տիրակալ, չունես հիմա դրա կարիքը, դու չես տատապում և պետք չունես փափագելու, որ կյանքն այլ կերպ լինի։ Քեզ համար իշխանությունը՝ Աստված է և խիղճ։ Իսկ այն դու լիուլի ունես։ Ու քեզ համար դրանից բարձր բան չկա։

— Ճշմարիտ է։ Հռոմի իշխանությունից բարձր բան չկա։ Հուսով եմ, դու այդ ես ուզում ասել։

— Դու ես այդպես մտածում, տիրակալ։

— Այդպես են միշտ մտածել խելացի մարդիկ,— ոչ առանց զիջողամտության ուղղեց նրան կուսակալը։— Դրա համար էլ ասված է,— խրատում էր նա,— կեսարը Աստված չէ, բայց Աստվածն կեսարի է նման։ Համոզիր ինձ հակա-

ռակը, եթե վատահ ես, որ այդպես չէ։ Դեհ,— և ծաղրանքով նայեց Հիսուսին։— Հռոմի կայսր Տիբերիոսի անունից, որի կուսակալն եմ հանդիսանում, ես կարող եմ ինչ-որ բաներ փոխել ժամանակի և տարածության մեջ։ Իսկ դու փորձում ես դրան հակադրել մի գերագույն ուժ, մի այլ ճշմարտություն, որ իբր բերում ես դու։ Դա շատ հետաքրքիր է, չափազանց հետաքրքիր։ Այլապես դուր տեղը չէի պահի քեզ այստեղ։ Քաղաքում արդեն համբերությունները կորցրել են, թե երբ պիտի ծերակույտի վճիռն ի կատար ածվի։ Պատասխանիր, ուրեմն։

— Ի՞նչ պատասխանեմ։

— Դու համոզվա՞ծ ես, որ կեսարը Աստծուց պակաս է։

— Նա մահկանացու է։

— Պարզ է, որ մահկանացու է։ Բայց քանի դեռ ողջ է, կեսարից բարձր Աստված կա՞ արդյոք մարդկանց համար։

— Կա, հռոմեական տիրակալ, եթե կեցության այլ չափում ընդունենք։

— Չէի ասի, թե ծիծաղս շարժեցիր,— շինծու վիրավորանքով ճակատը կնճռած և կոշտ հոնքերը վեր քաշելով ասաց Պոնտացի Պիղատոսը։— Սակայն դու չես կարող ինձ դրանում համոզել այն պարզ պատճառով, որ դա ծիծաղելի չէ անգամ։ Զգո՛ւշ եմ, չեմ հասկանում, թե ով և ինչու է քեզ հավատում։

— Ինձ հավատում են նրանք, ում ինձ մոտ է բերում հալածանքն ու կեղեքումը, արդարության դարավոր փափագը, և այդ ժամանակ իմ ուսմունքի սերմերն ընկնում են տառապանքներով պարարտացված ու արցունքով թրջված հողի մեջ,— բացատրեց Հիսուսը։

— Բավական է,— հուսահատաբար ձեռքը թափ տվեց կուսակալը։— Ժամանակի դուր կորուստ է։

Եվ երկուսն էլ լռեցին, ամեն մեկն իր մտքի հետ։ Հիսուսի գունատ դեմքին առատ քրտինք էր դուրս տվել։ Բայց նա քրտինքը չէր սրբում ոչ ձեռքով, ոչ էլ քղամիդի պատռված թևքով, դրա ժամանակը չէր։ Վախից կոկորդը սեղմում էր սրտխառնուքը, և քրտինքն սկսեց հոսել դեմքից, կաթկաթ թափվելով մարմարե սալիկներին՝ նիհար, ջլատ ոտների մոտ։

— Եվ դու ուզում ես, որ սրանից հետո քեզ ազատեմ,— խռպոտած ձայնով հանկարծ շարունակեց Պոնտացի Պիղատոսը,— որ ես, հռոմեական կուսակալս քեզ ազատությո՞ւն շնորհեմ։

— Այո, բարի տիրակալ, բայց թող ինձ։

— Եվ ի՞նչ պիտի անես։

— Աստծու խոսքերով կշրջեմ աշխարհում։

— Հիմարի տեղ մի դիր,— բղավեց կուսակալն ու զայրույթից իրեն կորցրած վեր թռավ տեղից։— Հիմա արդեն վերջնականապես համոզվեցի, որ քո տեղը խաչի վրա է, միայն մահը կարող է քեզ զսպել։

— Սխալվում ես, մեծն տիրակալ, մահն անզոր է հոգու առջև,— համոզված և հստակ ասաց Հիսուսը։

— Ի՞նչ, ի՞նչ ասացիր,— զարմացավ Պոնտացի Պիղատոսը, ինքն իրեն չհավատալով և մոտենալով Հիսուսին. զայրույթից ու զարմանքից ծոմռված նրա դեմքին մուգ դարշնագույն բծեր երևացին։

— Այն, ինչ լսեցիր, տիրակալ։

Թոքերում օդ հավաքելով, Պոնտացի Պիղատոսը ձեռնեը թափով երկինք կարկառեց, պատրաստվելով ինչ-որ բան ասել, սակայն այդ պահին հեծելային պայտած կոշիկների թնդաձայն քայլք լսվեց։

— Ի՞նչ ես ուզում,— խստորեն դիմեց կուսակալը զինված լեգեոներին, որ նրան էր մոտենում մի մագաղաթ ձեռքին։

— Հրամայված է հանձնել,— ասաց սա խոնարհ ու հեռացավ։

Դա Պոնտացի Պիղատոսին ուղղված կարճ նամակ էր կնոջից։ «Կուսակալ, ամուսինս, խնդրում եմ քեզ անուղղելի վնաս չպատճառես այդ թափառականին, որ, ինչպես ասում են, Քրիստոս է կոչվում։ Բոլորն ասում են, որ նա անվնաս, արդարակյաց մարդ է, ամեն տկարություն ապաքինող։ Իսկ այն, որ նա, իբր, Աստծու որդի է, մեսիա, ու նույնիսկ հրեաների թագավոր, դա, կարող է պատահել, չարախոսել են նրան։ Ես չէ, որ պիտի որոշեմ, ճիշտ է այդ, թե ոչ։ Ինքդ գիտես, թե ինչ խառնակիչ և մոլագար մարդիկ են այդ հրեա-

ները։ Իսկ եթե հանկարծ դա ճի՞շտ լինի։ Չէ որ շատ հաճախ, այն ինչ խոսվում է հասարակ ժողովրդի մեջ, հետո հաստատվում է։ Ու եթե այս անգամ էլ այդպես լինի, հետո քեզ պիտի անիծենն։ Ասում են, որ այստեղի սինագոգի սպասավորներն ու քաղաքի տոհմավագները վախեցել ուատել են այդ Հիսուս Քրիստոսին այն բանի համար, որ ժողովուրդն, իրր, գնացել է նրա ետևից, և քահանաները նախանձից զրպարտել են նրան ու նրա դեմ լարել տգետ ամբոխին։ Նրանք, որ երեկ աղոթում էին նրա համար, այսօր քարեր էին նետում վրան։ Ինձ թվում է, որ եթե դու համաձայնություն տաս այդ խենթի մահապատժին, հետագայում վատ համբավն ամբողջությամբ քեզ վրա կընկնի, ամուսինս։ Չէ որ մենք հավերժորեն չենք մնալու Հրեաստանում։ Ես ուզում եմ, որ դու վերադառնաս Հռոմ քեզ արժանավայել բարձր մեծարանքով։ Այդ բանը մի անիր։ Քիչ առաջ, երբ պահազորը տանում էր նրան, տեսա, թե որքան գեղեցիկ է, իսկական ջահել աստված։ Ի միջի այլոց, երեկ երազ էի տեսել։ Հետո կպատմեմ։ Շատ կարևոր երազ։ Անեծք մի բեր ոչ քո, ոչ էլ ժառանգներիդ գլխին»։

— Օ, աստվածներ, աստվածներ։ Ինչո՞վ եմ ձեր զայրույթը շարժել,— հառաչեց Պոնտացի Պիղատոսը և քանիցս արդեն ափսոսաց, որ առանց ավելորդ խոսելու ու երկարաձգելու այս խելքը թոցրած ու անզուսպ-սուտ մարգարեին հենց անմիջապես պահակազորով չուղարկեց դահիճների մոտ քաղաքի այգիներից դուրս, ուր բարձունքի վրա պետք է ի կատար ածվեր Երուսաղեմի դատարանի պահանջած մահապատիժը։ Իսկ հիմա, ահա, կինն էլ է խառնվում իր կուսակալական գործերին, որի մեջ նա տեսնում էր, եթե ոչ թաքուն աշխատանքը Հիսուս Քրիստոսի ետև կանգնած ուժերի, ապա առնվազն երկնային ուժերի դիմադրությունն այդ գործին։ Սակայն երկնաբնակներին երկրային գործերը քիչ են հետաքրքրում, իսկ կինը՝ իր կանացի խելքով ինչ է հասկանում քաղաքականությունից, ինքն ինչու պիտի թշնամություն առաջ բերի քահանայապետ Կայիափայի և Երուսաղեմյան վերնախավի մեջ, որ հավատարիմ ու նվիրված են Հռոմին, հանուն այս կասկածելի թափառաշրջիկ Հիսուսի, որ հայհոյում

է կեսարներին։ Կինը ինչից որոշեց, որ այս տիպը գեղեցիկ է չահել ասածու նման։ Լավ, չահել է։ Այդքան միայն։ Իսկ ոչ մի առանձին գեղեցկություն չունի։ Ահա կանգնած է, կովի մեջ շան նման ծեծկված։ Սրա մեջ ի՞նչ է գտել կինը։ Կուսակալը մտածմունքի մեջ մի քանի քայլ արեց՝ խորհելով նամակի բովանդակության մասին, ու նորից հառաչելով նստեց բազկաթոռին։ Եվ ահա նորից գլխով անցավ մի միտք, որ արդեն շատ անգամ էր նրան զբաղեցրել. թվում է, այնքան ողորմելի են մարդիկ՝ կեղտոտում են, միզում, մերձավորվում, ծնվում, մեռնում, նորից ծնվում ու մեռնում, ինչքան ստորություն ու չարագործություններ են կրում նրանք իրենց մեջ, և ողջ այդ զզվանք ու նողկանքի մեջ մեկ էլ հանկարծ՝ նախախնամություն, մարգարեներ, հոգու մղումներ։ Վերցնենք թեկուզ սրան. նա այնպես է հավատացել իր կոչմանը, որ ասես երազի մեջ է ապրում, ոչ իրականության։ Սակայն բավական է, հարկավոր է դրան սթափեցնել։ Պետք է վերջացնել։

— Եվ, այնուամենայնիվ, մի բան կուզեի իմանալ,— դիմեց կուսակալը Հիսուսին, որ նույն վիճակում լուռ կանգնած էր իր տեղում,— ենթադրենք դու արդարակյաց ես, ոչ չարագործ, որ դյուրահավատ մարդկանց մեջ խառնակություն է սերմանում, ենթադրենք, թե Արդարության թագավորության մասին խոսելով դու կասկածի տակ ես առնում աշխարհը տիրելու կեսարի իրավունքը, ենթադրենք, ես քեզ հավատամ, բայց ասա, ուրեմն, ի՞նչն է դրդում քեզ մահվան գնալու։ Ասա ինձ, ո՞րն է քո մղումը։ Եթե մտադիր ես այդ կերպ իշխել իսրայելյան ժողովրդին, ես հավանություն չեմ տալիս, սակայն կարող եմ քեզ հասկանալ։ Բայց ինչո՞ւ ես նախ կարում ճյուղը, որի վրա պատրաստվում ես նստել։ Ինչպե՞ս պիտի կեսար դառնաս, եթե ժխտում ես կեսարի իշխանությունը։ Ինքդ ես հասկանում՝ հիմա իմ կամքն է քեզ կենդանի թողնել, թե ուղարկել մահապատժի։ Ուրեմն ինչո՞ւ ես լռում։ Պապանձվե՞լ ես վախից։

— Այո, հռոմեական կուսակալ, ես սարսափում եմ դաժան մահապատժից։ Եվ բնավ մտադիր չեմ կեսար դառնալու։

— Այդ դեպքում հրաժարվիր, սխալներդ խոստովանի՛ր քաղաքի բոլոր հրապարակներում, դատապարտիր ինքդ քեզ։ Ընդունիր, որ դու սուտ կանխատես ես, սուտ մարգարե, մի հավատացրու, որ դու հրեաների թագավորն ես, որպեսզի ամբոխը ետ կանգնի քեզնից, որպեսզի չգայթակղես նրանց զուր ու հանցագործ սպասումով։ Ոչ մի Արդարության թագավորություն չի կարող լինել։ Արդարացի է միայն այն, ինչ կա։ Կա աշխարհում կայսր Տիբերիոս, ուրեմն հենց նա է աշխարհակարգի անսասան հենարանը։ Իսկ Արդարության թագավորությունը, որի մասին խոսելով դու դրդում ես միամիտ մարդկանց բողոքի, դատարկ բան է։ Մտածիր։ Ու ոչ ուրիշներին, ոչ էլ քեզ մի հիմարացրու։ Ի դեպ, դու ո՞վ ես, որ Հռոմի կայսրը քեզնից զգուշանա. մի անհայտ թափառաշրջիկ, կասկածելի մարգարե, շուկայական կոկորդ պատռող, որոնցով լեփլեցուն է Հրեաստան երկիրը։ Բայց դու քո ուսմունքով գայթակղություն ես առաջացրել և դրանից խիստ անհանգստացած է ձեր քահանայապետը, ուստի բացահայտիր քո սուտը։ Իսկ ինքդ գնա Սիրիա կամ ուրիշ երկրներ, և ես, որպես հռոմեական կուսակալ, կփորձեմ քեզ օգնել։ Համաձայնվիր, քանի դեռ ուշ չէ։ Ինչո՞ւ ես շարունակում լռել։

— Ես մտածում եմ, հռոմեական կուսակալ, որ մենք երկուսս այնքան տարբեր ենք, որ հազիվ թե իրար հասկանանք։ Ինչո՞ւ պիտի ես ինձ կեղծեմ ու հրաժարվեմ Աստծու ուսմունքից այնպես, որ շահեկան լինի քեզ և կեսարի համար, իսկ ճշմարտությունը տուժի։

— Մի խորամանկիր, թե դա Հռոմին է շահեկան, Հռոմը վեր է ամեն ինչից։

— Ամենից վեր է ճշմարտությունը, իսկ ճշմարտությունը մեկն է։ Երկու ճշմարտություն չի լինում։

— Դարձյալ խորամանկո՞ւմ ես, թափառաշրջիկ։

— Չեմ խորամանկել ոչ առաջ, ոչ էլ հիմա։ Իսկ պատասխանս այս է. առաջինը՝ վայել չէ հրաժարվել այն բանից, ինչ ասված է հանուն ճշմարտության, քանդի դու ինքդ ես այդ ուզել։ Եվ երկրորդ՝ վայել չէ վրադ մեղք վերցնել չարածիդ համար ու կուրծք ծեծել, որ քեզ սևացնող ասեկոսեներից մաքրվես։ Եթե մի բան սուտ է, ինքը կմեռնի։

— Բայց նախ կմեռնես դու, Հրեաստանի թագավոր։ Արդ, դու գնում ես դեպի մահ, փրկության ինչ ճանապարհ էլ որ լինի՞։

— Փրկության միայն մի ճանապարհ է ինձ թողնված։

— Ի՞նչ փրկության,— չհասկացավ կուսակալը։

— Աշխարհի փրկության։

— Բավական է խենթ ու խելառ դուրս տաս,— համբերությունից դուրս եկավ Պոնտացի Պիղատոսը։— Ուրեմն դու կամովին ես գնում կործանմանդ։

— Այդպես է ստացվում, քանզի ուրիշ ճանապարհ ես չունեմ։

— Օ՜ աստվածներ, աստվածներ,— հոգնած մռթմռթաց կուսակալը, ձեռքը տանելով ճակատն ակոսած խոր կնճիռներին։— Ինչ շոգ է, երևի եղանակը պիտի փոխվի՞,— փընթփընթաց նա քթի տակ ու վերջնական վճիռ ընդունեց։ «Ինչի՞ս է պետք այս ամենը։ Ինչո՞ւ եմ փորձում փրկել մեկին, որն ինքը դրա մեջ իմաստ չի տեսնում։ Ես էլ եմ տարօրինակ»։ Եվ ասաց.— Այդ դեպքում ես ձեռքերս լվանում եմ։

— Քո կամքն է, կուսակալ,— պատասխանեց Հիսուսը և գլուխը կախ գցեց։

Նրանք նորից լռեցին և, հավանաբար, երկուսն էլ զգացին, որ պալատի պարիսպից դուրս, փարթամ այգիներից այն կողմ, ուր տապից տոչորվում էին ցածրավայրերում ու բլրատ տեղերում ընկած երուսաղեմյան փողոցները, ասես լցվում, ուռչում էր խուլ չարագուշակ լռությունը, պատրաստ ուր որ է պայթելու։ Առայժմ այնտեղից նրանց էին հասնում դեռ խառնիխուռն ձայներ՝ մեծ շուկաների գվվոցը, ուր առավոտից լցվել էին մարդիկ, ապրանքներ, լծկան և բեռնակիր անասուններ։ Սակայն այս երկու աշխարհների մեջ ընկած էր այն, ինչ բաժանում էր նրանց ու պահպանում վերինը ստորինից. պարիսպից դուրս քայլում էին լեգեոներները, իսկ ավելի ցած, անտառակում, կանգնած էր հեծելազորային շրջապատող ջոկատը։ Երևում էր, ինչպես ձիերը պոչերով քշում էին ճանճերին։

Հայտարարելով, որ ինքը լվանում է ձեռքերը, կուսակալը որոշ թեթևություն զգաց, քանի որ հիմա կարող էր ինքն

իրեն ասել. «Ես արեցի ամեն բան, ինչ ինձնից կախված էր։ Սատվածները վկա են, ես նրան չեմ դրդել, որ իր ասածը պնդի, ուսմունքը գերադասելով սեփական կյանքից։ Բայց քանի որ նա չի հրաժարվում, թող այդպես լինի։ Մեզ համար դա նույնիսկ լավ է։ Նա ինքն իր մահվան դատավճիռը ստորագրեց...» Այդպես մտածելով, Պոնտացի Պիղատոսը միաժամանակ պատասխան էր պատրաստում կնոջ համար։ Ու նաև մտածեց նա, խեթ նայելով Հիսուս Նազովրեցուն, որը տագնապալից ժպիտը դեմքին լուռ սպասում էր իր առաջուց որոշված ճակատագրին. «Ի՞նչ է մտածում հիմա այս մարդը։ Գուցե հիմա ինքն էլ դառնորեն զղջում է, հասկանում է, թե ինչ է նստելու իր վրա իր գերիմաստուն ուսմունքը, որից չի համարձակվում հրաժարվել։ Ընկել է սեփական ծուղակը։ Դեհ, փորձիր դուրս պրծնել. մի Աստված բոլորի համար՝ բոլոր երկրների, մարդկային ողջ ցեղի, բոլոր ժամանակների համար։ Մի հավատ։ Արդարության մի թագավորություն բոլորի համար։ Ի՞նչ նպատակ է սա հետապնդում։ Պարզ բան է, բոլորն էլ այդ կուզեին, և սա էլ որոշել է դրա վրա խաղալ։ Բայց ահա կյանքն այսպես դաս է տալիս մեզ, ահա այսպես պատժում է չափից ավելի խորամանկումը։ Ահա այսպիսի վախճան է ունենում գահի տիրանալու փորձը, երբ այն քեզ չէ պատկանում քո ծնունդյամբ։ Ի՞նչ է ուզում։ Որոշել է հասարակ ժողովրդի մեջ խառնակություն գցել, ապստամբել կեսարների դեմ և որպեսզի ամբոխից ամբոխ անցնելով այդ վարակը տարածվի աշխարհով մեկ։ Աշխարհի ողջ հիմնական կենսակարգը որոշել է շրջել գլուխն ի վայր։ Քաջ է։ Խոսք չկա։ Ոչ, սրա նմանին չի կարելի կենդանի թողնել։ Արտաքինից նայում ես՝ ծեծված, հեզ, բայց ի՞նչ է մեջը թաքնված. ահա, խընդրեմ, ինչ գործեր է սկսել, միայն շատ մեծ խելքը ի վնաս է այդպիսի ծրագրեր իրագործելու։ Ով կարող էր այդպես մտածել նրա մասին»։

Այս մտքերով կուսակալ Պոնտացի Պիղատոսն ուզում էր ինքն իր հետ համաձայնության գալ։ Նրան հանգստացնում էր այն, որ հիմա ստիպված չի լինելու տհաճ խոսակցություն ունենալ քահանայապետ Կայիափայի հետ, որը ծերակույտի

անունից բացեիբաց պահանջում էր հաստատել դատարանի վճիռը Հիսուս Նազովրեցու վերաբերյալ։

— Կասկածների մի տրվիր, իմաստուն տիրակալ, դու համաձայնության կգաս ինքդ քեզ հետ և իրավացի կլինես ամեն ինչում,— ասաց Հիսուսը, ասես կոահելով կուսակալի մտքերը։

Պոնտացի Պիղատոսը վրդովվեց.

— Դու իմ մասին մի մտածիր,— կոպիտ հարձակվեց նա Հիսուսի վրա,— ինձ համար Հռոմի գործը ամեն ինչից վեր է, դու քո մասին մտածիր, թշվառական։

— Ներիր, վսեմ տիրակալ, պետք չէր ինձ բարձրաձայն ասել այդ խոսքերը։

— Շատ ճիշտ է։ Ես որպեսզի ստիպված չլինես զղջալու, երբ արդեն ուշ կլինի, մի քիչ էլ մտածի, քանի ես բացակայելու եմ, ու եթե մինչև վերադառնալս վճիռդ փոխես, ես կասեմ վերջին խոսքը։ Ես մի երևակայիր, որ դու Հրեաստանի թագավորն ես, աշխարհի հենարանը, որ առանց քեզ երկիրը չի լինի։ Ընդհակառակն, ամեն ինչ դառնում է ոչ քո օգտին։ Ես քո ժամանակը վաղուց անցել է։ Հրաժարությամբ միայն դու դեռ կկարողանայիր քեզ փրկել։ Հասկացա՞ր։

— Հասկացա, տիրակալ...

Պոնտացի Պիղատոսը տեղից վեր կացավ և գնաց իր սենյակները, ուղղելով ուսերին լայն պատմուճանը։ Ոսկրուտ, մեծագլուխ, ճաղատ, վեհատես, վստահ իր արժանավորությանը և ամենազորությանը։ Երբ անցնում էր կամարակապ պատշգամբով, հայացքը դարձյալ ընկավ այն թռչունին, որ վեհաշուք ճախրում էր երկնաբարձունքում։ Նա չկարողացավ որոշել արծի՞վ էր դա, թե փետրավորների նույն տեսակից ուրիշ թռչուն, բայց նրան այդ չէր հուզում, այլ այն, որ թռչունն անհասանելի էր իր համար, ենթակա չէր իրեն, ու չես կարող նրան վախեցնել, ինչպես չես կարող և մոտդ բերել տալ, կամ քշել։ Հոնքերը վեր նետելով, կուսակալը անբարյացակամ հայացքը գցեց դեպի բարձունքը. մի տես, պտըտվում է, հա պտտվում, ու ոչ մեկի պետքը չունի։ Ես այնուամենայնիվ, մտածեց նա, այս թռչունն ինչպես կայսր լինի

երկնքում։ Պատահական չէ, երևի, որ կայսրական մեծությունը խորհրդանշում է արծիվը՝ հզոր կտուցով գլուխ, գիշատիչ աչք, երկաթի պես ամուր թևեր։ Այդպիսին պետք է լինի կայսրը։ Բարձրության վրա՝ բոլորին ի տես և բոլորի համար անմատչելի... Եվ այդ բարձրությունից պետք է կառավարի աշխարհը, և ոչ մի հավասարություն ոչ մի բանում, ոչ մեկի հետ, նույնիսկ աստվածները կայսեր համար այլ պիտի լինեն, իրենը, մյուսներից անջատ, անկարեկիր հպատակների նկատմամբ, նրանց արհամարհող։ Ահա թե ինչով է կանգուն ուժը, ահա թե ինչն է ստիպում վախենալ իշխանությունից, ահա թե ինչի վրա է խարսխված կենսակարգը աշխարհում։ Իսկ այս Նազովրեցուն, որ համառում է իր ուսմունքով և որը մտադիր է հավասարեցնել բոլորին՝ կայսրից մինչև ստրուկ, քանզի Աստված, իբր, մեկն է և բոլոր մարդիկ հավասար են Աստծու առջև, պնդում է, թե Արդարության թագավորություն կգա բոլորի համար։ Նա խռովել է մարդկանց մտքերը, բորբոքել հասարակ ժողովրդին, նպատակ է դրել ամբողջ աշխարհը վերակառուցել իր ձևով։ Եվ ի՞նչ ստացվեց դրանից։ Այդ նույն ամբոխը դանակոծել է նրան և թքել երեսին՝ սուտ կանխատեսին, սուտ մարգարեին, խարդախ խաբեբային... Բայց, իսկապես, ի՞նչ մարդ է սա։ Կատարյալ հուսահատական այս վիճակում, իրեն այնպես է պահում, կարծես ոչ թե ինքն է պարտություն կրել, այլ նրանք, որ դատում են իրեն...

Այդպես էր մտածում Պոնտացի Պիղատոսը, հռոմեական կայսեր կուսակալը, կարելի է ասել, ինքն էլ կիսակայսր, համմենայն դեպս, Միջերկրական ծովի այս մասում, երբ դադարեցրեց հարցաքննությունն ու դուրս եկավ, որպեսզի Հիսուս Նազովրեցուն մի քանի րոպե մենակ թողնի. թող զգա, հասկանա, թե ինչ խոր անդունդի գլխին է կախված։ Հարկավոր է կոտրել նրա հոգին, ստիպել, որ սատրացած սողա, հրաժարվի Աստծուց, բոլորի համար մի Աստծուց, հրաժարվի համընդհանուր հավասարությունից, որպեսզի հետո ողնաշարը չարդած գեհենի նման դուրս շպրտվի իսրայելական հողերից՝ թող թափառի ու կործանվի անհայտության մեջ, այդպես երկար չի կարողանա ձգել, հենց իր աշակերտները վերջը կտան, հավատը կորցնելով նրա նկատմամբ...

Այդպես մտածում էր, մաքառում ինքն իր կասկածների դեմ բազմափորձ տիրակալ Պոնտացի Պիղատոսը, որոնց-լով առավել ապահով, առավել շահեկան և առավել ցուցադրական ուղի այդ նորահայտ խռովարարությունն արմատախիլ անելու համար։ Կամարակապ պատշգամբից հեռանալով, նա կարծում էր, որ դատապարտյալը մենակ մնալով կզգա, թե ինչ է սպառնում իրեն և կուսակալի վերագառնալուն պես նրա ոտքերը կընկնի։ Կուսակալն ինչ իմանար, որ այդ կարճատև րոպեներին սույն տարօրինակ մարդը մտածում էր ոչ այդ մասին, կամ, ավելի շուտ, ամենևին ոչ այդ կերպ, այլ ընկել էր հիշողությունների գիրկը, քանզի հիշողությունը նույնպես ողջերին է վիճակված և վերջին բարիքներից մեկն է կյանքին հրաժեշտ տալու շեմին։

Կուսակալի հեռանալուն պես կողմնային երկու որմնախորշերից դուրս եկան չորս պահակներ և կանգնեցին կամարակապ պատշգամբի եզրին, ասես դատապարտվածը կարող էր փախչել այդտեղից։ Եվ նա իրեն թույլ տվեց դիմելու ամենամոտ կանգնած լեգեոներին.

— Կարո՞ղ եմ ես նստել, բարի զինվոր։

— Նստիր,— պատասխանեց սա, նիզակը քարե հատակին զարկելով։

Հիսուսը նստեց պատի մոտի մարմարյա ոտնատեղին, կծկված, գունատ, սրված դեմքով, որ օղակված էր երկար, ալիք-ալիք թափվող մուգ մազերով։ Եվ ձեռքի ափով աչքերը փակելով, ամփոփվեց ինքն իր մեջ, տրվեց երազանքներին։ «Կուշտ ջուր խմեի,— մտածում էր նա,— լողանայի գետում մի տեղ»։ Եվ կենդանի պատկերացրեց հոսող ջուր գետափին — ջուրը փրփրում է համբուրելով հողն ու մերձափնյա խոտերը, ու թվաց լսում է ջրի հողփյունը, կարծես թիակներ էին շարժվում նավակը մոտեցնելով այն տեղին, ուր նստած էր ինքը, կարծես ինչ-որ մեկն ուզում էր նրան նավակի մեջ առնել և տանել, հեռու լողալ նրա հետ այստեղից։ Դա մայրն էր, նա էր նավակով մոտենում իրեն տագնապած ու սարսափած. «Մայր,— շշնջաց նա անձայն։— Մայրիկ, թե իմանայիր ինչքան ծանր է ինձ համար։ Դեռ անցյալ գիշեր Գեթսեմանիում Ձիթենեաց լեռան վրա ես

հալումաշ էի լինում, սարսափում սև գիշերվա նման վրաս իջած տխրությունից, ինձ տեղ չէի գտնում և արթուն մնալով աշակերտներիս հետ, ոչ մի կերպ չէի կարողանում հանգըստանալ ու ահեղ մի բանի կանխազգացումով արյուն քրտինք էի թափում։ Եվ այնժամ դիմեցի Տիրոջը, Հորս իմ երկնավոր։ «Հայր իմ,— ասացի։— Ո, եթե դու օրհնեիր, որ այս բաժակը ինձնից հեռացվեր, բայց ոչ լինի կամքը իմ, թող Քո կամքը լինի»։ Եվ ահա այն՝ բաժակն այդ, բերնեբերան լցված, ու չի անցնում, չի հեռանում, այլ մոտենում է անկասաբար, ու կկատարվի այն, ինչ դու էլ, հավանաբար, գուշակում ես։ Ու եթե այդպես է, ուրեմն դու գիտեիր, թե ինչ է լինելու ինձ հետ, ասված իմ, ինչպես էիր դու ապրում բոլոր այս տարիներին, մայր իմ հարազատ, ինձ ծնող, ինձ շունչ տվող, ինչ խոհերով ու ինչ հույսով էիր դու մեծացնում ինձ, որ Աստծու կամքով կոչված էր այս մեծ և սարսափելի օրվա համար, ամենաաղետալի օրվա, քանզի չկա մարդու համար ավելի մեծ վիշտ, քան իր մահը, սակայն մոր համար, երբ նրա աչքի առջև մահանում է պատուղն իր որովայնի, իր սերունդը՝ վիշտը կրկնակի է։ Ներիր ինձ, մայր, ես չեմ որոշել քո ճակատագիրը, այլ Հայրն իմ Ամենաբարձրյալ, նրան դարձնենք, արդ, մեր հայացքն առանց տրտնջալու, ու թող լինի կամքը Նրա»։

Հիշելով մորը՝ Մարիամին, նա հիշեց այն ժամը, ինչպես մանուկ ժամանակ, երբ դեռ մի հինգ տարեկան էր, իր հետ մի դեպք պատահեց։ Այն ժամանակ իրենց ընտանիքն ապրում էր Եգիպտոսում, ուր փախել էին Հերովդեսից, որն ուզում էր կորստյան մատնել նորածին մանկանը՝ ապագա Հիսուս Քրիստոսին, քանզի ասել էին գուշակները, որ ծնվել է թագավորը Հրեաստանի։ Այդ ժամանակ տղան արդեն մեծացել էր, և նրանցից քիչ հեռու մի մեծ, հորդ գետ էր հոսում, գուցեև Նեղոսն էր՝ գետը մեծ էր, լայն։ Մարիամը մանկան հետ գնում էր այնտեղ սպիտակեղեն լվանալու, այդ վայրերի շատ կանանց նման։ Իսկ այն օրը, երբ նրանք գետի մոտ էին, նավակով ափին մոտեցավ մի ծերունի և քայլեց դեպի մայրն ու մանուկը, քնքշալի բարևեց Մարիամին և որդուն։ «Հայր,— ձայն տվեց նրան Մարիամը,— թույլ

կտա՞ս քո նավակով մի քիչ ման տամ տղայիս։ Նա այնպես է ուզում, լաց է լինում փոքրիկս»։ «Այո, Մարիամ,— պատասխանեց Յերուսին,— ես հենց դրա համար էլ բերեցի նավակը, որպեսզի ման տաս փոքրիկ Հիսուսին»։ Մարիամին զարմացրեց, որ նա գիտե իրենց անունները, նա մտածեց, որ Յերուկը հավանաբար այդ շրջակայքում ապրողներից է։ Սակայն երբ ուզեց խնդրել, որ Յերուկը նստի թիերի մոտ, սա հանկարծ չքվեց, ասես օդի մեջ տարրալուծվեց։ Բայց դա էլ չշփոթեցրեց Մարիամին, այնքան որ ուզում էր տղային ման տալ նավակով, քանի որ երեխան շատ-շատ էր ուրախացել ու վազվզում էր շուրջը հուզմունքից թռչկոտալով, շտապեցնում մորը։ Նվ ահա նա սպիտակեղենը գցեց գետափի քարերին, գրկեց տղային, նստեցրեց նավակ, ինքը նավակն արձակեց, հրեց ծանծաղուտից, թռավ նավակի մեջ, տղային նստեցրեց ծնկներին, և լողացին գետի հոսանքով։ Ի՜նչ հրաշալի էր լողալ փայլկտող ջրի վրայով, ափին շատ մոտ՝ առափնյա ծանծաղուտներում երերում էին եղեգները, երփներանգում ծաղիկները, վառ գույների թռչուններ էին թռչկոտում թփուտներում, երգում ու ծլվլում, տաք, խոնավ օդի մեջ գվվում, վխտում, ճոռում էին միջատները։ Ինչ հրաշալի էր։ Մարիամը կամացուկ մի երգ երգեց և երջանիկ էր, իսկ տղայի համար այնքան հետաքրքրքիր էր լողալ նավակով։ Ու դա ավելի էր ուրախացնում Մարիամին։ Այդ միջոցին,— նրանք այնքան էլ հեռու չէին լողացել իրենց տեղից ու այնքան էլ հեռու չէին ափից,— մի մեծ ծուռումուռ կոճղ, որ ընկած էր ծանծաղուտում, հանկարծ կենդանացավ և ալիքներ հանելով ահարկու և արագ նրանց կողմը լողաց։ Դա մի հսկայական կոկորդիլոս էր, նրա դուրս պրծած աչքերը ագահորեն նրանց էին նայում։ Տղան վախեցավ և բղավեց։ Մարիամը քարացավ ու չգիտեր ինչ անել։ Պոչի հարվածով կոկորդիլոսը քիչ էր մնում շրջեր նավակը։ Թիերը նետելով, Մարիամն ամուր իրեն սեղմեց մանկանը։ «Տե՛ր,— աղաչեց նա։— Սա նա է։ Քո որդի Հիսուսը։ Քո պարգևածը։ Մի թող նրան, Տե՛ր։ Փրկի՛ր նրան»։

Կինը այնքան էր վախեցել, որ ի վիճակի էր միայն աչքերը փակելու ու կանչելու նրան, ով էր Ամենը Տիեզերքում և Հայրը Երկնավոր իր մանկան։ «Մեզ մի լքիր, Նա դեռ պետք է քեզ»— բղավեց նա։ Իսկ նավակը մնալով առանց ղեկավարման, լողաց տակից կոկորդիլոսի հրոցով։ Երբ Մարիամը համարձակվեց աչքերը բացել, ուրախության ճիչ թռավ նրա կրծքից. նավակը հասել էր ափին, ասես մեկը բերել էր այդտեղ, և կոկորդիլոսը շրջվելով հետ էր լողում։ Մարիամն ուրախությունից գլուխը կորցրած դուրս թռավ նավակից և վազեց ափով, լաց լինելով կրած ցնցումից և ծիծաղելով երջանկությունից։ Նա վազում էր մանկանն իրեն սեղմած, ու կրկնում շարունակ համբուրելով նրան ու ողողելով արցունքներով. «Հիսուս, Հիսուս։ Իմ աննման զավակ։ Հայրդ քեզ ճանաչեց։ Նա քեզ փրկեց։ Նա քեզ սիրեց, դու նրա սիրեցյալ որդին ես, Հիսուս։ Դու կդառնաս գերիմաստուն Հիսուս։ Դու կդառնաս Ուսուցիչ, Հիսուս։ Ու դու կբացես մարդկանց աչքերը, Հիսուս։ Եվ նրանք կգնան քո հետից, Հիսուս, ու դու երբեք չես դավաճանի մարդկանց, երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք»։ Այսպես ողբալով, հրճվում էր «ամենաօրհնյալը կանանց մեջ»։

Այդպես ողբում ու հրճվում էր նա ուրախությունից, որ հրաշքով փրկվեց Որդին Աստծու, ու չգիտեր նա, որ դա Տիրոջ նշանակն էր, որպեսզի իմանային մարդիկ, թե ով է նա, մեծացող Հիսուսը, հյուսն Հովսեփի որդին, երբ մանկանը Հերովդեսից փրկելու համար թաքնվում էր Եգիպտոսում։ Քանզի հենց Մարիամը մանկան հետ ափ թռավ նավակից ու վազեց, նավակը չգիտես ուր անհետացավ, լողաց գետով, իսկ կանայք, որ սպիտակեղեն էին լվանում գետում ու մոտ էին վազել նրա բղավոցը լսելով, հավատացնում էին հետո, որ երբ նա մանուկը գրկին վազում էր, մանկան գլխի շուրջ ոսկե լուսապսակ էր ճառագում։ Ու բոլորն ուրախացան դրա համար։ Եվ հուզվել էին արտասվելու չափ, երբ փոքրիկ Հիսուսը մորը փարվելով ամուր գրկեց նրա պարանոցը ու մոր շունչը քաշելով, ասաց. «Մայրիկ, երբ մեծանամ, կրոնեմ այն կոկորդիլոսի պոչից, որ մեզ այլևս չվախեցնի»։ Բոլորը ծիծաղեցին մանկան խոսքերը լսելով, իսկ հետո սկսեցին մտածել, թե ով կարող էր լինել նավա-

կի տերը։ Եվ այդ ժամանակ պարզվեց, որ ոչ ոք շրջակայքում չգիտեր այդ մարդուն և ոչ ոք այլևս նրան երբեք չտեսավ։ Հյուսն Հովսեփը օրեր շարունակ փորձում էր գտնել այդ խորհրդավոր նավակատիրոջը, որպեսզի ներողություն խնդրի նրանից և հատուցի վնասը, բայց այդպես էլ նրան չգտավ։

Ահա թե ինչ պատահեց մի անգամ մանուկ Հիսուսի հետ Եգիպտոսում, և հիմա նա հիշեց այդ կամարակապ պատշգամբում, երբ ներում էր խնդրում մորից նրան պատճառած վշտի ու տառապանքի համար։ «Հրաժեշտ եմ տալիս քեզ հիմա, մայր,— ասում էր նրան,— մի նեղացիր, եթե չհասցընեմ կամ չկարողանամ դիմել քեզ, երբ մահապատիժն սկսեն։ Ես սարսափում եմ մահից, և ոտքերս սառչում են, թեև այսօր անտանելի շոգ է։ Ներիր ինձ, մայր, և իմ այս ծանր պահին մի տրտնջա ճակատագրից դու։ Իսկ ես ուրիշ ճանապարհ չունեմ մարդկանց մեջ ճշմարտության հասնելու, որոնք ամենածանր բեռն են Արարչի, բացի, որ այդ ճշմարտությունը հաստատեմ իմ մահվամբ։ Ուրիշ ճանապարհ դեպի մարդիկ չկա։ Եվ ես գնում եմ դեպի նրանք։ Ներիր և մնաս բարով, մայրիկ։ Բայց ափսոս, որ այն կոկորդիլոսի պոչից չբռնեցի։ Ասում են, նրանք շատ երկար են ապրում, երկու-երեք մարդկային կյանք, այդ կոկորդիլոսները։ Իսկ եթե բռնեի, բաց կթողնեի, որ գնա... Թող իր համար... Ու մեկ էլ մտածում էի, մայրիկ, եթե այն նավակավարը հրեշտակ էր ծերունու կերպարանքով, միգուցե ինձ վիճակված է տեսնել նրան այն աշխարհում... Կհիշի՞ արդյոք այդ դեպքը։ Քայլեր եմ լսում, գալիս է իմ ականջադհիճը՝ Պոնտացի Պիղատոսը։ Մնաս բարով, մայր, նախապես հրաժեշտ եմ տալիս»։

Պոնտացի Պիղատոսը վերադարձավ կամարակապ պատշգամբ նույն հաստատուն քայլքով, ինչպես հեռացել էր։ Պահակ զինվորներն անմիջապես գնացին և դարձյալ այդ երկուսը մնացին մենակ պատշգամբում, երես առ երես։ Ուշադիր նայելով Հիսուսին, որ տեղից վեր էր կացել նրա ներս գալուց, կուսակալը հասկացավ, որ ամեն ինչ ընթանում է իր ուզածի նման՝ զոհն ինքն է հաստատորեն մոտենում

վերջին սահմանին։ Սակայն այս անգամ էլ նա որոշեց միանգամից վճիռ չկայացնել՝ գործն առանց այդ էլ ընթանում էր իրեն հարկավոր ուղղությամբ։

— Դեհ, ինչպես տեսնում եմ, խոսակցությունն ավարտված է,— ասաց Պոնտացի Պիղատոսը ներս գալով։— Դու վճիռդ չե՞ս փոխել։

— Ոչ։

— Իզուր։ Մի քիչ էլ մտածիր։

— Ոչ,— գլուխը բացասաբար շարժեց սա։— Թող լինի այնպես, ինչպես լինելու է։

— Ջուր,— կրկնեց Պոնտացի Պիղատոսը, թեև ոչ շատ վստահ։ Սակայն հոգու խորքում ցնցվեց՝ նրան սասանեց Հիսուս Նազովրեցու վճռականությունը։ Բայց միաժամանակ, նա չէր ուզում, որ սա ուրանա ինքն իրեն ու սկսի փրկություն որոնել, գթություն խնդրի։ Եվ Հիսուսն այդ հասկացավ։

— Մի վշտացիր,— ժպտաց նա հեզաբար։— Հավատում եմ, որ խոսքերդ անկեղծ են։ Հասկանում եմ քեզ։ Ես էլ շատ եմ ուզում ապրել։ Անէության շեմին է միայն մարդ հասկանում, թե որքան թանկ է իր համար կյանքը։ Եվ մորս եմ շատ խղճում, ես նրան սիրում եմ, միշտ սիրել եմ, ամենամանուկ հասակից, թեև չեմ ցույց տվել։ Բայց ամեն դեպքում, հռոմեական կուսակալ, հիշիր, դու կարող էիր փրկել, ասենք, մի հոգի, և այդքանի համար էլ քեզ մեծ շնորհակալություն էր լինելու, իսկ ես պարտավոր եմ փրկել շատ հոգիներ, ու նույնիսկ նրանց, որ մեզնից հետո են աշխարհ գալու...

— Փրկե՞լ։ Երբ դու չե՞ս լինի աշխարհում։

— Այո, երբ ես չեմ լինի մարդկանց մեջ։

— Մեղքը քո վիզը, մենք այլևս այս հարցին չենք դառնա,— վճռաբար հայտարարեց Պոնտացի Պիղատոսը, չցանկանալով այլևս վճիռը վտանգել։— Բայց պատասխանիր իմ վերջին հարցին...— ասաց նա բազկաթոռի մոտ կանգ առնելով, և լուռ մտածմունքի մեջ, թավ հոնքերը խժռոտելով։— Ասա ինձ՝ դու հիմա ի վիճակի՞ ես խոսակցություն շարունակելու,— ավելացրեց հանկարծ մի տեսակ մտեր-

մաբար։— Եթե ցանկություն չունես, քեզ մի պարտադրիր, ես քեզ չեմ պահի։ Քեզ սպասում են լեռան վրա։

— Ինչպես կկամենաս, տիրակալ, ես քո տրամադրության տակ եմ,— պատասխանեց խոսակիցն ու կուսակալին հառեց վճիտ-կապույտ աչքերը, որ վերջինիս ապշեցրին մտքի ուժով և սևեռունությամբ՝ ասես լեռան վրա Հիսուսին չէր սպասվում անխուսափելին։

— Շնորհակալ եմ,— նույնպես անսպասելի հանկարծ շնորհակալություն հայտնեց նրան Պոնտացի Պիղատոսը։— Այդ դեպքում պատասխանիր իմ մի հարցին, այժմ արդեն հանուն հետաքրքրասիրության։ Խոսենք ինչպես ազատ մարդիկ՝ ես քեզանից ոչ մի կախում չունեմ, և դու էլ հիմա, ինչպես ինքդ էլ հասկանում ես, մեծ ազատության շեմին ես, այնպես որ անկեղծ լինենք,— շարունակեց նա նստելով իր տեղում։— Ասա ինձ, ասե՞լ ես դու քո աշակերտներին, քո հետևորդներին, ընդ որում, ինչպես ինքդ հասկանում ես, ես քո ուսմունքին չեմ հավատում, այսպես, ուրեմն, ասե՞լ ես դու քո հետևորդներին, հավատացրե՞լ ես, որ եթե քեզ խաչեն, դու երրորդ օրը հարություն կառնես, և հարություն առնելով, մի գեղեցիկ օր կվերադառնաս երկիր ու Ահեղ դատաստան կանես նրանց գլխին, ով ապրում է հիմա, և նրանց գլխին, ով պետք է աշխարհ գա, բոլոր հոգիների, բոլոր սերունդների գլխին՝ աշխարհաստեղծումից սկսած։ Եվ որ դա կլինի, իբր, քո երկրորդ գալուստը երկիր։ Ճի՞շտ է այդ։

Հիսուսը տարօրինակ քմծիծաղեց, կարծես ասելով ինքն իրեն. ահա, թե ինչ, և ոտաբոբիկ քայլելով մարմարի վրա, լռեց, կարծես ուզում էր որոշել, արժե՞, թե ոչ նրան պատասխանել։

— Այդ ամենը Իսկարիովտացի Հուդա՞ն է ասել,— հարցրեց ծաղրաբար։— Եվ քեզ դա շա՞տ է անհանգստացնում, հռոմեական կուսակալ։

— Ես չգիտեմ ով է Հուդան, բայց այդպես հաղորդել են ինձ հարգարժան մարդիկ, տոհմավաղները։ Ուրեմն ի՞նչ, դարս է գալիս, որ դրանք դատարկ խոսքե՞ր են։

— Ինչպես կուզես մտածիր, տիրակալ,— սառը պատասխանեց Հիսուսը։— Ոչ ոք քեզ չի պարտադրում այն, ինչ անընդունելի է քո մտքին։

— Բայց ես լրջորեն եմ հարցնում, չեմ ծիծաղում,— շտապեց հավատացնել կուսակալը։— Պարզապես մտածում եմ, որ ինձ և քեզ համար գրուցելու այսպիսի հնարավորություն արդեն չի լինի։ Հենց որ քեզ այստեղից տանեն, ետ դարձի ճանապարհ դու չես ունենա։ Բայց ինձ համար ես ուզում եմ պարզել, թե մահվանից հետո ինչպես կարելի է նորից երկիր գալ չծնվելով և դատաստաններ տեսնել բոլոր հոգիների հետ։ Եվ որտե՞ղ կլինի այդ դատաստանը՝ երկնքում, թե մի այլ տեղ։ Եվ որքան պիտի սպասեն քեզ հավատացող մարդիկ այդ օրվանը, որպեսզի արժանանան հավիտենական հանգստի։ Թույլ տուր ինձ նախ ասել, թե ես ինչպես եմ դրան նայում։ Քո հաշվարկը շատ պարզ է, դու հույսդ դնում ես նրա վրա, որ ամեն ոք այն աշխարհում էլ է ուզում հարմար կյանք ունենալ։Ահ, մահկանացու մարդ արարածը, նա միշտ ինչ-որ բան է փափագում, միշտ ինչ-որ բան է տենչում։ Այնքան հեշտ է նրան խոստումներով գրավել, և նա նույնիսկ այնտեղ, հանդերձյալ կյանքում շան պես քարշ կգա եսևիցդ։ Էհ, ենթադրենք թեկուզ այնպես է, ինչպես դու ես ուսուցանում, դու մարգարե ես, սակայն քո կյանքն արդեն ավարտին է մոտենում, երկարացնել այն դու կարող ես միայն գրուցելով...

— Ես կարող էի այն բնավ չերկարացնել։

— Սակայն դու հո չես գնա լեռը, իմ հարցը թողնելով անպատասխան։ Իմ հասկացողությամբ այդպես հեռանալը մահվանից վատ է։

— Շարունակիր։

— Այսպես ուրեմն, ենթադրենք, քո ուսմունքը ճիշտ է, այն դեպքում ասա, երբ է լինելու քո այդ երկրորդ գալստյան օրը։ Ու եթե սպասումը երկար պիտի ձգվի, աներևակայելիորեն երկար, ապա մարդու ինչի՞ն է պետք։ Չէ որ այն, ինչ չի կատարվելու իր կյանքի ընթացքում, դրանից նրան օգուտ չկա։ Իսկ հետո, ճիշտն ասած, անհնարին է պատկերացնել, թե կարող է այդպիսի անհավանական իրադար-

ձուլություն լինել։ Թե՞ պետք է սպասել կույր հավատով։ Եվ ի՞նչ կտա դա։ Ի՞նչ օգուտ դրանից։

— Քո տարակույսները հասկանալի են, հռոմեական տիրակալ, դու մտածում ես կոպիտ, երկրային, ինչպես քո ուսուցիչները, հույները։ Մի նեղացիր իմ դիտողությունից։ Քանի դեռ կանգնած եմ քո դեմ, ինչպես մարդ մահկանացու, իրավունք ունես վիճելու։ Ու նաև մենք չափազանց տարբեր ենք, ես և դու, ինչպես ջուրն ու կրակը։ Եվ մեր դատողությունները էլ են տարբեր, ես և դու տարբեր եզրերից ենք մոտենում ամեն ինչին։ Բայց ահա այն մասին, ինչ քեզ հուզում է, տիրակալ... Այն, որ երկրորդ գալուստին պետք է անսահմանորեն երկար սպասել, ճշմարիտ է։ Դրանում դու իրավացի ես։ Թե երբ կգա այդ օրը, ոչ ոք չի կարող գուշակել, քանզի այդ նախորոշված է մտքում Նրա, ով արարել է աշխարհ։ Այն, ինչ մեզ համար հազարամյակներ պիտի տևի, Նրա համար, թերևս, մի պահ է։ Սակայն էականը այդ չէ։ Արարիչը մեզ օժտել է աշխարհի ամենաբարձր բարիքով՝ բանականությամբ։ Եվ մեզ ազատություն է տվել ապրելու մեր հասկացողությամբ։ Ինչպես մենք կօգտվենք այդ երկնային պարգևից, այդպիսին էլ կլինի պատմությունը մարդկության պատմության։ Չէ որ դու չես ժխտի, հռոմեական կուսակալ, որ մարդու գոյության իմաստը յուր հոգու ինքնակատարելագործումն է, դրանից բարձր նպատակ չկա աշխարհում։ Այդ է բնական կեցության գեղեցկությունը՝ օրեցօր ավելի ու ավելի բարձրանալ անվերջանալի աստիճաններով դեպի հոգու շողշողուն կատարելություն։ Մարդու համար ամենից ավելի ծանր է լինել մարդ մշտապես, ամեն օր։ Ուստի՝ թե որքան երկար պիտի սպասել այն օրվան, որին դու չես հավատում, տիրակալ, դա կախված կլինի հենց մարդկանցից։

— Ինչպես թե,— Պոնտացի Պիղատոսը վեր թռավ, բռնեց բազկաթոռի թիկնակից։— Սպասիր, սպասիր, ասում ես մարդկանցի՞ց է կախված, բայց դա անհնարին, չլսված բան է։ Ես քո ուսմունքի հավատացյալը չեմ, և այդ չեմ կարող հասկանալ։ Եթե մարդիկ կարողանային իրենց կամքով մոտեցնել կամ հեռացնել նման երևույթը, արդյոք նրանք չէի՞ն նմանվի աստվածներին։

— Դու ինչ-որ բանում ճիշտ ես, հռոմեական տիրակալ, սակայն ես նախ կուզեի խոսակցություններն անջատել ճըշմարտությունից։ Ճշմարտության մասին խոսք ու զրույցը մեծ դժբախտություն է։ Այդ ասեկոսեն նույնն է, ինչ տիղմը ջրի մեջ, որը ժամանակի ընթացքում խոր ջուրը վեր է ածում ծանծաղ ջրափոսի։ Կյանքում միշտ այդպես է՝ ամեն մի մեծ միտք, որ ծնվում է ի բարօրություն մարդկանց, որին հասնում են կռահումներով և տառապանքներով, բերնեբերան անցնող խոսք ու զրույցն այն միշտ աղավաղում է ու դարձնում չարիք՝ և՛ իր և՛ ճշմարտության համար։ Ահա թե ինչ եմ ուզում ես ասել, կուսակալ, այն, որ հնարովի բաները, որոնց դու հավատում ես, ասեկոսեներ են, իսկ ճշմարտությունն այլ է։

— Իսկ չե՞ս ուզում այդ ճշմարտությունն ասել։

— Այո, կփորձեմ։ Չեմ խուսափի խոսակցությունից։ Մանավանդ որ այս մասին խոսում եմ վերջին անգամ։ Իմացիր, ուրեմն, հռոմեական տիրակալ, Աստծու նախախնամությունը ոչ թե նրանում է, որ մի անգամ, ինչպես ամպրոպ պարզ երկնքում վրա կհասնի այն օրը, երբ Մարդու Որդին հարություն առնելով կիջնի երկնքից ու դատաստան կտեսնի մարդկանց գլխին, այլ այդ ամենը կլինի ընդհակառակն, թեև նպատակը նույնն է լինելու։ Ոչ թե ես, որին մնացել է ապրելու քաղաքից մինչև Լերկ լեռ անցնելու ճանապարհի չափ, ոչ թե ես հարություն առնելով կգնամ, այլ դուք, մարդիկ, կգաք ապրելու ըստ Քրիստոսի, բարձր արդարակյացությամբ, դուք կգաք ինձ մոտ անճանաչելի ապագա սերունդներում։ Եվ դա կլինի իմ երկրորդ գալուստը։ Այլ կերպ ասած, ես մարդկանց մեջ կվերադառնեմ ինձ իմ տառապանքների միջով, մարդկանց մեջ կվերադառնամ մարդկանց մոտ։ Ահա թե խոսքն ինչի մասին է։ Ես կլինեմ ձեր ապագա ժամանակի մեջ հազարամյակներ ետ մնալով, այդ է Աստծու նախախնամությունը, որպեսզի այդ կերպ մարդուն բարձրացնի իր կոչման բարձունքին՝ բարու և գեղեցկության կոչման։ Այդ է իմ քարոզների իմաստը, այդ է ճշմարտությունը, և ոչ թե պատվող խոսք ու զրույցները և բարձր գաղափարները գոհհացնող այլևայլ հնարովի բաները։ Սակայն այդ ճանապարհը կլինի ամենածանրը մարդկային ցե-

դին վիճակված ճանապարհներից, և անսահմանորեն երկար կլինի այն, ու դու, հռոմեական կուսակալ, արդարացիորեն երկյուղ ունես դրա համար։ Ճանապարհն այդ սկսվում է ճակատագրական օրվանից, Աստծու Որդու սպանությունից, ու թող հավերժական ապաշխարության մեջ լինեն սերունդները, ամեն անգամ սարսափելով այն հատուցման համար, որ ես այսօր պիտի կրեմ հանուն մարդկանց մեղքերի քավության, հանուն նրանց մեջ աստվածային էության արթնացնելու։ Հենց դրա համար էլ ես աշխարհ եմ եկել, որպեսզի մարդկանց համար անմահ օրինակ լինեմ։ Որպեսզի մարդիկ ապավինեն իմ անվան և դեպի ինձ գան տառապանքների միջով, մշտապես իրենց մեջ չարի դեմ պայքարի միջով, արատների, բռնության, արյունռուշտության հանդեպ նողկանքի միջով, որ այնքան կործանարար են ազդում Աստծու, այսինքն և իրենց, մարդկանց հանդեպ սիրով լցված հոգիների վրա։

— Սպասիր, Հիսուս Նազովրեցի, դու նույնացնո՞ւմ ես Աստծուն և մարդկանց։

— Ինչ-որ իմաստով, այո։ Եվ ավելին, բոլոր մարդիկ, միասին վերցված, Աստծու նմանակն են երկրում։ Եվ անունն է այդ Աստծու երրորդության՝ Աստված-Վաղը, Աստված անսահմանության, որ պարգևված է աշխարհին յուր ստեղծման օրից։ Դու, հռոմեական տիրակալ, հավանաբար շատ անգամ ես ինքդ համոզվել, որ ցանկություններդ միշտ ուղղված են վաղվա օրվան։ Այսօր դու կյանքն ընդունում ես այնպես, ինչպես կա, բայց անպայման ուզում ես, որ վաղը այլ լինի, ու եթե անգամ այսօր քեզ համար լավ է, միևնույն է ուզում ես, որ վաղն ավելի լավ լինի։ Եվ դրա համար էլ հույսերը մեր մեջ անմար են, ինչպես լույսն Աստծու։ Աստված-Վաղը դա հենց հոգին է անսահմանության, իսկ ընդհանրապես, դրանում է ողջ էությունը, ամբողջությունը մարդկային արարքների և ձգտումների, ուստի, թե ինչպիսին պետք է լինի Աստված-Վաղը՝ լավը, թե վատը, գթասիրտ, թե պատժող՝ կախված է հենց մարդկանցից։ Այսպես մտածելը թույլատրելի է և անհրաժեշտ, այդ է ուզում մտածող արարածներից ինքն Աստված-Արարիչը, ուստի վաղվա կյանքի համար երկրում թող մտածեն իրենք մարդիկ, չէ

որ նրանցից յուրաքանչյուրը մի մասնիկն է Աստվածավաղվա։ Մարդն ինքը և դատավորն է և ստեղծողը մեր ամեն օրվա...

— Սպասիր, հապա Ահեղ դատաստանը, որ այնքան սպառնալից հայտարարել ես դու։

— Ահեղ դատաստանը... Իսկ չե՞ս մտածել, հռոմեական տիրակալ, որ վաղուց արդեն այն ամեն օր կատարվում է մեր գլխին։

— Արդյոք հիմա ասածդ չի՞ նշանակում, որ մեր ողջ կյանքը Ահեղ դատաստան է։

— Դու հեռու չես ճշմարտությունից, հռոմեական տիրակալ, անցնել ճանապարհով, որ սկսվում է տառապանքներով ու չարչարանքներով, անեծքի Ադամին, չարագործություններով, որ գարեգար կատարում են մարդիկ մեկը մյուսի գլխին, որ չարիքից չարիք են ծնում, սուր, սուտ, դա հավանաբար հեշտ չի եղել նրանց համար, ովքեր ապրել և ապրում են այս աշխարհում։ Այն ժամանակից, ինչ եդեմից քշվել են մարդկանց նախահայրերը, չարիքի ինչպիսի վիհ է բացվել, ինչ պատերազմներ, դաժանություններ, սպանություններ, հալածանքներ, անարդարություններ, վիրավորանքներ ասես, որ չեն տեսել մարդիկ։ Հապա բարու, մարդու բնության դեմ երկրային բոլոր ահավոր մեղանչումները, որ կատարվել են աշխարհաստեղծման օրից, այդ ամենն ինչ է, եթե ոչ Ահեղ դատաստանից էլ ծանր պատիժ։ Որն է պատմության նախասկզբնական նպատակը՝ բանական էակներին մոտեցնել սիրո և կարեկցանքի աստվածային բարձունքներին։ Բայց որքան զարհուրելի փորձություններ են եղել մարդկանց պատմության մեջ, և առջևում չի երևում վերջը չարագործությունների, որ փոթորկվում են օվկիանոսի ալիքների նման։ Այդպիսի դժոխքի մեջ ապրելը Ահեղ դատաստանից վատ չէ՞։

— Եվ դու, Հիսուս Նազովրեցի, մտադիր ես կանգնեցնե՞լ պատմությունը չարագործության։

— Պատմությո՞ւնը։ Այն ոչ ոք չի կարող կանգնեցնել, իսկ ես ուզում եմ չարիքն արմատախիլ անել մարդկանց արարքներում և մտքերում, ահա թե ինչ եմ ես ուզում։

— *Այն ժամանակ պատմություն էլ չի լինի։*

— *Ի՞նչ պատմություն։ Այն, որի համար դո՞ւ ես մտածում, հռոմեական կուսակալ։ Այդ պատմությունը, դրժբախտաբար, հիշողությունից չնչել չի լինի, բայց եթե չլիներ այն, մենք շատ ավելի մոտ կլինեինք Աստծուն։ Ես քեզ հասկանում եմ, կուսակալ։ Սակայն իսկական պատմությունը, մարդկայնության ծաղկման պատմությունը դեռ չի սկսվել երկրի վրա։*

— *Սպասիր, Հիսուս Նազովրեցի, ինձ մի կողմ թողնենք առայժմ։ Բայց դու, Հիսուս, ինչպե՞ս ես մտադիր այդ նպատակին հասցնել մարդկանց և ժողովուրդներ։*

— *Արդարության թագավորության հռչակմամբ, առանց կեսարների իշխանության, ահա ինչպես։*

— *Եվ այդքանը բավակա՞ն է։*

— *Այո, եթե այդ ուզեին բոլորը..*

— *Հետաքրքիր է։ Այսպես, ես քեզ ուշադիր լսեցի, Հիսուս Նազովրեցի։ Դու հեռուն ես գուշակում, սակայն շատ չե՞ս արդյոք ինքնապաստան, չափազանց չե՞ս ապավինում մարդկային հավատին, մոռանալով հրապարակների ստոր բնույթը։ Դու դրանում շատ շուտով կհամոզվես քաղաքի պատից դուրս, սակայն պատմությունը ոչ մի կերպ չես կարող շրջել, այդ գետը ոչ ոք չի կարող շրջել։ Իսկ ինձ մի բան է զարմացնում. ինչո՞ւ ես հրդեհ վառում, որի մեջ բոլորից առաջ ինքդ ես այրվելու։ Առանց կեսարների աշխարհը չի կարող լինել, չի կարող գոյություն ունենալ հզորությունը ոմանց և հնազանդությունը այլոց, ու զուր ես փորձում պարտադրել այլ, քո կողմից հորինված կարգը որպես նոր պատմություն։ Կեսարներն ունեն իրենց աստվածները՝ նրանք պաշտում են ոչ թե քո վերացական Աստված-Վաղը, որը բոլոր «վաղերի» անվերջության մեջ զուրկ է որոշակի սահմաններից, և պատկանում է բոլորին հավասար հիմունքներով, ինչպես օդը, քանզի այն ամենն, ինչ կարելի է տալ հավասարապես, այն ոչինչ է, այն անարժեք է, այն սին է, ու դրա համար էլ կեսարներին տրված է տիրակալություն յուրաքանչյուրի վրա և բոլորի վրա։ Իսկ աշխարհը տիրող բոլոր կեսարների մեջ արժանապատվորեն Տիբերիոսին գերադասել են աստվածները՝ նրա պետությունը, Հռոմեական կայսրու-*

թյունը, ընդգրկել է աշխարհի կեսը։ Եվ այդ պատճառով Տիբերիոսի հովանու տակ ես իշխում եմ Հրեաստանին և դրանում եմ տեսնում իմ կյանքի իմաստը, ու իմ խիղճը հանգիստ է։ Չկա ավելի բարձր պատիվ, քան ծառայել անպարտելի Հռոմին։

— Դու բացառություն չես, հռոմեական կուսակալ, գրեթե ամեն ոք փափագում է իշխել իր նման գոնե մեկի վրա։ Հենց այդ է ժժբախտությունը։ Դու կասես, այդպես է ստեղծված աշխարհը։ Արատը միշտ հեշտ է արդարացնել։ Սակայն քչերն են փորձում հասկանալ, որ դա հենց նզովք է մարդկային ցեղի գլխին, որ իշխանասիրության չարիքը, որով վարակված են բոլորը՝ շուկաներ ավլողների ավագից մինչև ահեղ կայսրերը, չարագույնն է բոլոր չարիքներից, և մի օր դրա համար մարդկային ցեղը կհատուցի լիովին։ Կկործանվեն ժողովուրդներ սիրակալության, հողերի համար, հիմնովին, հիմնահատակ կկործանեն միմյանց։

Պոնտացի Պիղատոսն անհամբերությամբ վեր բարձրացրեց ձեռքերն, զրուցակցի խոսքը կտրելով.

— Կա՛նգ առ, ես քո աշակերտը չեմ, որպեսզի ակնածանքով ականջ դնեմ քեզ։ Կա՛նգ առ։ Խոսքերով ինչ ասես կարելի է կործանել։ Բայց ինչ էլ որ դու նախագուշակես, Հիսուս Նազովրեցի, քո չանքերը զուր են։ Իշխանությունները կառավարվող աշխարհը այլ կերպ չի կարող լինել։ Ինչի վրա որ նա կանգնում է եղել, նրա վրա էլ պիտի մնա կանգուն, ով ուժեղ է՝ նա էլ իշխանություն ունի, և հետայսու նույնպես աշխարհը հզորները պետք է կառավարեն։ Եվ այդ կարգն անփոփոխ է, ինչպես աստղերը երկնքում։ Ոչ ոք չի կարող նրանց տեղից շարժել։ Զուր ես տառապում մարդկային ցեղի համար, զուր պատրաստ ես փրկելու նրանք կյանքիդ գնով։ Մարդկանց ոչինչ չեն սովորեցնի ոչ քարոզները տաճարներում, ոչ ձայները երկնային։ Նրանք միշտ կգնան կեսարների ետևից, ինչպես հոտը հովվի, և խոնարհվելով ուժի ու բարիքների առջև, կերկրպագեն նրան, ով ամենից անողոք ու ամենից զորեղ կլինի, կփառաբանեն այն զորավարներին ու նրանց ճակատամարտերը, որտեղ արյունը հեղեղի պես կհոսի հանուն սիրապետության ոմանց ու

նվաճման և նվաստացման այլոց: Հենց դա էլ կլինի հոգու արիությունը, գովերգված, սերնդե-սերունդ անցնող, ի պատիվ նրա դրոշներ կպարզվեն ու փողեր կհնչեն, արյունը եփ կգա երակներում, երդում կտրվի՝ ոչ մի վերշոկ ուրիշին չտալ. և ժողովրդի անունից կսկսեն անհրաժեշտություն դարձվել ռազմական գործողությունները, ատելություն նետարկել հայրենիքի թշնամիների դեմ. թող սեփական թագավորը բարեբախտ, հաջողության մեջ լինի, իսկ մյուսին պետք է ճզմել, ծնկի բերել, ստրկացնել իր ժողովրդի հետ, իսկ հողը խլել. այո, հենց դրանում է կյանքի ողջ քաղցրությունը, կեցության ողջ իմաստը սկսած անհիշելի ժամանակներից, իսկ դու, Նազովրեցի, ուզում ես այդ ամենը դատապարտել, նզովել, դու փառաբանում ես խեղճերին և անզորներին, դու ամեն տեղ բարօրություն ես ուզում, մոռանալով, որ մարդը գազան է, որ նա չի կարող առանց պատերազմների, ինչպես մեր մարմինը չի կարող առանց աղի: Մտածիր, թե որն են քո սխալներն ու մոլորությունները, գոնե այս ժամին, մինչ քեզ պահակախմբով կտանեն լերկ լեռ: Իսկ հրաժեշտ տալով, կասեմ քեզ. դուք չարիքի արմատը տեսնում ես մարդկանց մեծ իշխանասիրության մեջ, հողեր և ժողովուրդներ ուժով նվաճելու մեջ, սակայն դրանով դու միայն սաստկացնում ես քո մեղքը, քանզի ով դեմ է ուժին, նա դեմ է ուժեղներին: Կասկած չկա, դու մեր Հռոմեական կայսրությանն ես ակնարկդ ուղղում, հռչակելով քո Արդարության թագավորությունը, ուզում ես խանգարել Հռոմի մեծացող հզորությանը, նրա համաշխարհային տիրապետությանը երկրի վրա: Բայց հենց միայն այդ մտադրության համար, դու երիցս արժանի ես մահապատժի.

— Ինչի համար այդքան շռայլություն, բարի տիրակալ, կարծում եմ միանգամայն բավական է և մի մահապատիժը: Բայց, այնուամենայնիվ, շարունակենք մեր խոսակցությունը, թեև հասկանում եմ, թե հիմա ինչպես են տառապում կիզիչ արևի տակ դահիճները, սպասելով ինձ լերկ լեռան վրա, այսպես, ահա, շարունակենք մեր խոսակցությունը, սակայն հիմա արդեն մահից առաջ իմ վերջին ցանկությամբ: Եվ

այդպես, հռոմեական կուսակալ, դու համոզված ես, որ ուժը հենց այն է, ինչը դու ես համարում ուժ։ Սակայն կա և այլ կարգի ուժ՝ բարու ուժը, և նրան հասնելը, թերևս, ավելի դժվար է ու բարդ, և առաքինության համար ոչ պակաս քաջություն է պահանջվում, քան պատերազմելու համար։ Արդ, լսիր ինձ, կուսակալ, այնպես ստացվեց, որ դու վերջին մարդն ես, որի հետ խոսում եմ ես Լերկ լեռից առաջ։ Եվ ես ցանկություն ունեմ սիրտս բացել քո առաջ, սակայն դու մի մտածիր, ես քեզնից ներում չեմ խնդրելու...

— Դա ուղղակի ծիծաղելի կլիներ։

— Այդ պատճառով էլ ասում եմ նախապես, որպեսզի դու, հռոմեական կուսակալ, հանգիստ լինես դրա համար։ Հիմա արդեն միայն դու այդ կիմանաս։ Տառապում էր հոգին իմ անցյալ գիշեր, և, ինչպես թվում էր ինձ սկզբում, առանց պատճառի։ Ոչ, տոթ չէր Գեթսեմանիում, քաղաքամերձ բլուրներում թեթև քամի էր շնչշնչում։ Բայց ես ինձ տեղ չէի գտնում, անձկությունը, վախ ու թախիծը խեղդում էին ինձ, և ահա ասես սրտիցս դուրս եկող ծանր ձայները երկինք էին գնում։ Իմ հետևորդները, աշակերտներս, փորձում էին արթուն մնալ հետս, սակայն թեթևություն չէի զգում։ Եվ գիտեի, որ ժամը նախանշված մոտենում է, որ վրա է հասնում մահն անխուսափելի։ Ու սարսափ համակեց ինձ... Չէ որ ամեն մարդու մահը՝ աշխարհի վերջն է նրա համար։

— Բայց ինչո՞ւ,— ոչ առանց չարախնդության նայեց մեղադրյալին Պոնտացի Պիղատոսը։— Հապա ո՞ւր մնաց, Նազովրեցի, հանդերձյալ կյանքի գաղափարը։ Չէ որ դու պնդում էիր, որ մահվան հետ կյանքը չի ավարտվում։

— Դարձյալ խոսք ու զրույցով ես դատում, տիրակալ։ Հանդերձյալ կյանքում անձայն հոգին է շրջում, ինչպես ստվերը ջրի վրա, այն անորսալի մտքի արտացոլանքն է սահում անդրսահմանյան տարածության մեջ, իսկ մարմինն այնտեղ մուտք չունի։ Չէ որ դա բոլորովին այլ աշխարհ է, ուրիշ, անիմանալի կեցության։ Եվ ժամանակի ընթացքն էլ այնտեղ այլ է, երկրային չափումից վեր։ Իսկ խոսքը չափումի ենթակա կյանքի մասին է, երկրի վրա կյանքի։ Ինձ տանջում էր աշխարհում կատարյալ լքվածության նախազգացումը, ու ես շրջում էի այդ գիշեր Գեթսեմանիում ուր-

վականի նման, հանգիստ չգտնելով, ասես համայն աշխարհում մեն միայն ես էի մնացել բանական արարածներից, ասես սավառնում էի երկրի վրա ու չտեսա ոչ ցերեկը, ոչ գիշերը, ոչ մի կենդանի մարդ. ամեն ինչ մեռյալ էր, ամեն ինչ մարած հրդեհների սև մոխիրով պատած, երկիրը ծածկված էր ավերակներով՝ ոչ անտառներ, ոչ հերկած դաշտեր, ոչ նավեր ծովերում, ու միայն տարօրինակ, անվերջանալի ղողանջ էր լսվում հեռվից, ինչպես քամու բարակ տխուր հառաչ, ինչպես երկաթի ողբ երկրի ընդերքից, ինչպես թաղման զանգահարություն, իսկ ես սավառնում էի միայնակ փետուրիկի նման երկնաբարձունքում, վախից ու վատ նախազգացումից տանջահար, ու մտածում՝ սա աշխարհի վերջն է, և անտանելի մի թախիծ տառապեցնում էր հոգիս. Ի՞նչ եղան, ո՞ւր են մարդիկ, որտե՞ղ հիմա պետք է ապաստանեմ։ Ու տրտնջացի ես հոգուս խորքում. ահա, Տեր, այն օրհասական վախճանը, որին սպասում էին բոլոր սերունդները, ահա Հայտնությունը, ահա վերջը բանական արարածների, բայց ինչո՞ւ եղավ այս, ինչպես կարելի էր այս կերպ կործանվել, հիմնահատակ վերանալ, ոչնչացնելով քո մեջ սերունդը, ու սարսափեցի այդժամ զարհուրելի կռահումից. ահա հատուցումը նրա համար, որ դու սիրում էիր մարդկանց ու քեզ զոհաբերեցիր նրանց։ Մի՞թե կատաղի աշխարհը մարդկային իրեն սպանեց իր կատաղությամբ, ինչպես կարիճն է իրեն մեռցնում հենց իր թույնով։ Մի՞թե այս ահավոր վախճանին հասցրեց մարդկանց անհամատեղելիությունն իր հետ, անհամատեղելիությունը կայսերական սահմանների, անհամատեղելիությունը գաղափարների, անհամատեղելիությունը գոռոզության և իշխանասիրության, անհամատեղելիությունը միապետական իշխանությունից հղփացած մեծ կեսարների և կույր հնազանդությամբ ու կեղծ փառաբանությամբ նրանց հետևից գնացող ժողովուրդների, զինված ոտքից գլուխ, երկպառակչական պատերազմներում իրենց անհամար հաղթանակներով պարծեցող։ Ահա թե ինչով ավարտվեց երկրի վրա մարդկանց գոյությունը, որ իր հետ անէություն տարավ բանականության աստվածային պարգևը։ Օ՜, Տեր, տրտնջացի ես, ինչո՞ւ օժտեցիր խելքով ու խոսքով, ստեղծելու ունակ ազատ ձեռքերով նրանց,

ովքեր սպանեցին իրենց իրենց մեջ և երկիրը դարձրին համընդհանուր անարգանքի գերեզմանոց։ Այսպես լացում ու ողբում էի ես մենակ լուռ աշխարհում ու անիծում էի իմ բախտը, ասում Աստծուն. այն, ինչ Քո ձեռքը չէր բարձրանա անել, մարդն ինքը հանցագործ կերպով կատարեց... Իմացիր, ուրեմն, հումանական կուսակալ, աշխարհի վերջը կգա ոչ ինձնից, ոչ տարերային աղետներից, այլ մարդկանց ինչնամոլություններից այն վրա կհասնի։ Այն ինչնամոլություններից և այն հաղթանակներից, որ այդպես փառաբանում ես դու տիրակալական արբեցումով...

Հիսուսը շունչ առավ ու շարունակեց.

— Այդպիսի տեսիլք երևաց ինձ անցյալ գիշեր, ու երկար մտածում էի դրա մասին, չէի քնում, աղոթում էի շարունակ արթուն, և մի քիչ գոտեպնդվելով, որոշեցի պատմել աշակերտներիս Հորս կողմից ինձ առաքված տեսիլքի մասին, սակայն այդ պահին մեծ ամբոխ հայտնվեց Գեթսեմանիում, ու նրանց հետ և Հուդան, Հուդան արագ գրկեց ինձ, համբուրեց սառը շրթունքներով։ «Ողջ եղիր, Վարդապետ»,— ասաց նա ինձ, իսկ եկածներին ասել էր մինչ այդ. «Ում հետ ես համբուրվեմ, Նա է, Նրան կբռնեք»։ Եվ նրանք ինձ բռնեցին։ Եվ հիմա, ինչպես տեսնում ես, կանգնած եմ քո դեմ, հռոմեական կուսակալ։ Գիտեմ, ինձ հիմա կտանեն Վերկ լեռ։ Սակայն դու բարեհաճ էիր իմ հանդեպ, տիրակալ, ու գոհ եմ ես նրա համար, որ մահվանից առաջ հաջողվեց ինձ պատմել այն, ինչ ապրեցի երեկ Գեթսեմանիում։

— Ու դու վստահ ես, որ լսելով քեզ հավատացի՞ ամենին։

— Քո գործն է, կուսակալ, հավատալ, կամ չհավատալ։ Ավելի շուտ դու ինձ չես հավատում, չէ որ ես և դու, ինչպես երկու տարբեր տարերք լինենք։ Սակայն, չհավատալով, դու լսեցիր ինձ։ Հո չես կարող ինքդ քեզ ասել, որ ոչինչ չես լսել, ու չես կարող արգելել քեզ մտածելու այդ մասին։ Իսկ ես կարող եմ ասել ինձ, որ հետս գերեզման չտարա այն, ինչ հայտնվեց ինձ Գեթսեմանիում։ Իմ խիղճը հանգիստ է հիմա։

— Ասա, Նազովրեցի, դու պատահմամբ դուշակություն չի՞ս արել շուկաներում։

— Ոչ, տիրակալ, ինչո՞ւ այդ հարցրիր։

— Չեմ հասկանում, կամ դու խաղում ես, կամ իսկապես զուրկ ես վախից և չես վախենում ամենատառապալից մահապատժից։ Մի՞թե, երբ դու չես լինի, քեզ համար այդքան կարևոր է, թե ինչ հասցրեցիր ասել, և ինչ չհասցրեցիր, ով քեզ լսեց, ով չլսեց։ Ո՞ւմ է պետք այդ բոլորը։ Մի՞թե ունայնություն չէ այդ, նույն այն ունայնությունն ունայնությանց։

— Այդպես չէ, տիրակալ, ունայնություն չէ այդ։ Չէ որ մահվանից առաջ ունեցած մտքերն ուղիղ հասնում են Աստծուն, Աստծու համար կարևոր է, թե մարդն ինչ է մտածում մահվանից առաջ, և դրանով Աստված դատում է մարդկանց մասին, որոնց երբեմնի ստեղծել է ինքը որպես բարձրագույն արարած կենդանի ամեն ինչի մեջ, քանզի ամենավերջին մտքերից վերջիններն միշտ մաքուր են և բացարձակ անկեղծ, դրանցում միայն ճշմարտություն է, և չկա խորամանկություն։ Ոչ, տիրակալ, ներիր, սակայն զուր ես մտածում, թե խաղում եմ։ Մանուկ ժամանակ եմ խաղացել խաղալիքներով, և այլևս երբեք։ Իսկ այն, թե վախենո՞ւմ եմ ես տանջանքներից, այդտեղ թաքցնելու բան չկա, այդ մասին արդեն ասել եմ քեզ։ Վախենում եմ, շատ եմ վախենում։ Եվ Տիրոջն իմ, Հորս բարեգութ աղերսում եմ ուժ տալ արժանապատվությամբ ենթարկվելու ինձ համար սարքած ճակատագրին, որ չստորացնի ինձ մինչ անասնական աղաղակների և չխայտառակի մի այլ կերպ... Արդ, պատրաստ եմ ես, հռոմեական կուսակալ, այլևս ինձ մի պահի, չարժե։ Իմ ժամանակն է...

— Այո, դու հիմա կգնաս Լերկ լեռ։ Բայց դու քանի՞ տարեկան ես, Հիսուս Նազովրեցի։

— Երեսուներեք, տիրակալ։

— Որքան ջահել ես։ Քսան տարով ինձնից ջահել,— խղճահարությամբ ասաց Պոնտացի Պիղատոսը, գլուխը տարուբերելով, և, մի փոքր մտածմունքից հետո, ասաց,— Որքան ինձ հայտնի է, դու ամուսնացած չես, կնշանակի զավակներ չունես, քեզնից հետո որբեր չես թողնելու, այդ-

պես էլ դրի առնենք։— Եվ լռեց, ուզում էր էլի մի բան ասել, բայց միտքը փոխեց, լռեց։ Ու լավ է, որ լռեց։ Քիչ էր մնում անհարմար վիճակի մեջ ընկներ։ Իսկ կին դու ճաշակե՞լ ես՝ այդ էր ուզում հարցնել։ Եվ ինքն էլ շփոթվեց. սա ինչ կանացի հետաքրքրասիրություն է, ինչպես կարելի է, որ պատվարժան այրը հարց տա այդպիսի բաների մասին։

Եվ նույն պահին հայացք նետելով Հիսուս Նազովրեցուն, նրա աչքերից հասկացավ, որ Հիսուսը գլխի է ընկել, թե ինչ էր ուզում հարցնել կուսակալը, ու անպայմանորեն չէր պատասխանելու այդ հարցին։ Հիսուսի ջինջ-կապույտ աչքերը մթնեցին, ու նա ամփոփվեց ինքն իր մեջ։ «Այնքան հեզ երևույթ ունի, սակայն ինչ ուժ կա սրա մեջ»,— զարմացավ Պոնտացի Պիղատոսը, ոտքով շոշափելով ոտքից դուրս եկած սանդալը։

— Դեհ լավ,— հարցին ուրիշ ուղղություն տվեց նա, ասես փոխհատուցելով կանանց մասին չկայացած խոսակցության համար,— բայց ասում էին, թե դու իբր ընկճցիկ ես, ճի՞շտ է այդ։

Հիսուսը ժպտաց շիտակ և բարեհոգի, բացելով սպիտակ, հավասարաշար ատամները։

— Թերևս և այդպես է որոշ իմաստով։

— Իսկ ավելի ճիշտ՝ այդպե՞ս է, թե ոչ։

— Այդպես է, այդպես, բարի տիրակալ,— հաստատեց Հիսուսը, զգալով որ Պոնտացի Պիղատոսը սկսում է զայրանալ, քանզի այդ հարցն էլ այնքան վայել չէր կուսակալին։— Ինձ «գցել է» իմ երկնավոր Հայրը Սուրբ հոգու միջոցով։

— Լավ է, որ դու այլևս ոչ մեկին չպիտի կարողանաս հիմարացնել,— հոգնած փնթփնթաց կուսակալը։— Բայց և այնպես, ով է քեզ ծնող մայրը։

— Նա Գալիլիաում է, Մարիամ է անունը։ Զգում եմ, որ նա այսօր կգա կհասնի։ Ամբողջ գիշեր ճանապարհին է եղել։ Դա ես գիտեմ։

— Ջեմ կարծում, թե նրան կուրախացնի որդու վախճանը,— մռայլ ասաց Պոնտացի Պիղատոսը, պատրաստվելով վերջապես ավարտել երկարած խոսակցությունն այս նազովրեցի խեղճի հետ։

Եվ կուսակալը հասակով մեկ ձգվեց Կամարակապ պատրգամբի սյուների տակ, վեհատես, մեծագլուխ, խոշոր դեմքով և ծանր հայացքով, ձյունասպիտակ պատմուճանը հագին։

— Այսպես, ուրեմն, ճշտենք ըստ կարգի,— ասաց նա և սկսեց թվարկել։— Հայրդ, ինչպե՞ս էր անունը, Հովսեփն է, մայրդ Մարիամը։ Ինքդ ծնված Նազարեթում։ Երեսուներեք տարեկան։ Ամուսնացած չես։ Երեխաներ չես թողնում։ Մարդկանց հրահրել ես ապստամբությունների։ Սպառնացել ես քանդել Երուսաղեմի մեծ տաճարն ու երեք օրում նորը կանգնեցնել։ Ներկայացրել ես քեզ որպես մարգարե, Հրեաստանի թագավոր։ Ահա կարճ քո պատմությունը։

— Իմ պատմության մասին չխոսենք, բայց քեզ ահա կասեմ. դու կմնաս պատմության մեջ, Պոնտացի Պիղատոս,— կամաց ասաց Հիսուս Նազովրեցին, շեշտակի ու լուրջ նայելով կուսակալի դեմքին։— Կմնաս ընդմիշտ։

— Ինչպես,— անփութորեն խուսյ տվեց Պոնտացի Պիղատոսը։ Նրա համար, համենայն դեպս, հաճելի էր ասվածը. սակայն հանկարծ տոնը փոխելով, հանդիսավոր կերպով ասաց.— պատմության մեջ կմնա փառապանծ կայսր Տիբերիոսը։ Փառավորվի թող նրա անունը։ Իսկ մենք լոկ նրա հավատարիմ զինակիցներն ենք, ոչ ավելին։

— Եվ սակայն պատմության մեջ կմնաս դու, Պոնտացի Պիղատոս,— համառորեն կրկնեց նա, ով գնում էր վերև լեռ, Երուսաղեմի պատերից դուրս...

Եվ այն թռչունը՝ ուրուր, թեև արծիվ, որ առավոտից պտտվում էր Հերովդեսի պալատի գլխին, ասես սպասելով ինչ-որ մեկին, վերջապես պոկվեց իր տեղից ու թռավ այն կողմ ուր բազմաթիվ հեծյալ պահակներով շրջապատված, վտանգավոր հանցագործի նման կապկպված տանում էին նրան, ում հետ այդքան երկար զրուցում էր ինքը ողջ Հրեաստանի կուսակալ Պոնտացի Պիղատոսը։

Իսկ կուսակալը դեռ կանգնած էր Կամարակապ պատրգամբում, զարմանքով ու սարսափով հետևելով տարօրինակ թռչունին, որ թռչում էր նրա ետևից, ում տանում էին վերև լեռ...

— Սա ի՞նչ կարող է նշանակել,— շշնջաց կուսակալը տարակուսած և տագնապած...

3

Այն ամառային անձրևը տափաստանում, որ երկար հավաքում էր, դեռ իրիկվանից մթնելով ու հասունանալով հորիզոնում կայծակների անձայն փայլատակումներով և ամպերի շարժումով, սկսվեց ուշ գիշերին միայն։ Նրա ծանր կաթիլները, որ ուժգին թմբկահարում էին չոր դետնին, ու հետո սկսեցին թափվել հեղեղի նման, զգաց իր դեմքին Աբդիա Կալիստրատովը ուշքի գալով. դրանք կյանքի առաջին պարգևն էին։

Աբդիան ընկած էր նույն տեղում, երկաթուղու խրամատավի մոտ, ուր գլորվեց զառիվայրից, երբ նրան գնացքից գցեցին։ Առաջին միտքը եղավ նրա. «Որտե՞ղ եմ ես։ Կարծես անձրև է գալիս»։ Նա հառաչեը, ուզեց շարժվել, և կողի ահավոր ցավից ու գլխի արձիճե ծանրությունից նորից գիտակցությունը կորցրեց, սակայն որոշ ժամանակ անց, այնուամենայնիվ, ուշքի եկավ։ Փրկարար անձրևը նրան կյանքի կոչեց։ Անձրևը թափվում էր առատ և ուժգին, ու ջուրը զառիվայրից ցած հոսելով հավաքվում էր խրամատավի մեջ, որտեղ ընկած էր Աբդիան։ Հասնելով մարդուն, այն փրփրում էր, բարձրանում ավելի ու ավելի, դեպի կոկորդը, և դա ստիպեց Աբդիային իրեն հաղթահարել, մի հնար գտնել, որ դուրս գա այս վտանգավոր տեղից։ Առաջին պահերին, մինչ մարմինը հաղթահարում էր իրեն շարժման ընտելանալով, դա առանձնապես տառապալից էր։ Աբդիան չէր կարողանում հավատալ, որ ողջ է մնացել։ Նրան այնքան դաժանորեն էին ծեծում վագոնում, այնպիսի զարհուրելի արագության ժամանակ դուրս գցեցին գնացքից, բայց ինչ դատարկ բան է այդ ամենը, նրա համեմատ որ ինքը ողջ է, ողջ՝ հակառակ ամեն ինչի։ Ողջ է և կարող է շարժվել, թեկուզ սողալով, որ լսում է ու տեսնում, և ուրախանում ասես դույլից թափվող այդ փրկարար անձրևի համար, որ

ողողում է նրա ծեծված մարմինը, զովացնում ձեռքերը,— ոտքերը և գվվացող տաք գլուխը, ու կսողա, քանի դեռ ուժերը ներում են. չէ որ շուտով կլուսանա և կբացվի առավոտը, ու կվերականգնվի կյանքը... Եվ այդ ժամանակ ինքը մի հնար կգտնի, մի բան կանի, հարկավոր է միայն մի կերպ ոտքի կանգնել...

Այդ ընթացքում, անձրևն ու խավարը ճեղքելով իրար հետևից դղրդոցով անցան մի քանի դիշերային գնացքներ... Եվ նա դրա համար էլ էր ուրախ, այն ամենն, ինչ վկայում էր կյանքի մասին, ուրախացնում էր նրան ինչպես երբեք չէր ուրախացրել...

Աբդիան չէր ուզում պատսպարվել անձրևից, եթե նույնիսկ կարողանար, նա հասկանում էր, որ այդ կենարար անձրևը պետք է իրեն։ Միայն թե ձեռք-ոտքը չարդված չլինեն, իսկ թեթև վերքերն ու վնասվածքները, նույնիսկ աջ կողի սոսկալի ցավը նա պատրաստ էր անտրտունջ կրելու... Նրան համենայն դեպս հաջողվեց դուրս սողալ, մի կերպ մագլցել անվտանգ տեղ, փոքրիկ թմբի վրա, և հիմա պառկած էր անձրևի տակ, ուժ հավաքելով, որ շարունակի սպրել...

Այդպես նորից հայտնվեց նա անէությունից, և հայտնվելով վերականգնում էր այն ամենը, ինչ նրա կյանքի իմաստն էր հանդիսանում, ու զարմանում էր, թե որպիսի հստակ ու խոր մտքեր են գալիս գլուխը...

Եվ նա ասաց նրան, որին Պոնտացի Պիղատոսի մոտից տանում էին Լերկ լեռ. «Ուսուցիչ, ես այստեղ եմ։ Ի՞նչ անեմ Քեզ փրկելու համար, ի՞նչ անեմ, Տեր։ Ինչպե՞ս փրկեմ Քեզ։ Օ՛, սարսափում եմ Քեզ համար հիմա, երբ ինքս նորից կենդանացա»։

Պատմական համաժամանակությունը,— երբ մարդն ընդունակ է մտովի ապրելու մի քանի ժամանակահատվածներում, հաճախ հարյուրամյակներ և հազարամյակներ իրարից հեռու,— այս կամ այն չափով հատուկ է եթևակայությունից ոչ զուրկ յուրաքանչյուր մարդու։ Սակայն նա, ում համար անցյալի իրադարձությունները նույնքան մոտ են, ինչպես այս պահի իրականությունը, նա ով անցյալը վեր-

ապրում է իր հետ անխզելի, ինչպես իր ճակատագիրը, նա նահատակ է, նա ողբերգական անձնավորություն է, քանզի գիտենալով նախապես, թե ինչ վախճան է ունենալ այս կամ այն պատմությունը, ինչ հետևանքների է բերել այն, նա տառապում է միայն, ուժ չունենալով ազդելու դեպքերի ընթացքի վրա, և զոհաբերում է իրեն արդարության հաղթանակին, որը չի լինելու երբեք։ Եվ անցյալի ճշմարտությունը հաստատելու այդ փափագը սուրբ է։ Հենց այդպես են ծագում գաղափարները, այդպես է տեղի ունենում նոր սերունդների հոգեկան միահյուսումը նախորդների և նախանախորդների հետ, և դրա վրա է խարսխված աշխարհը, ու նրա կենսափորձը մշտապես մեծանում է, ավելանում՝ բարին ու չարը փոխանցվում են սերնդե-սերունդ մարդկանց աշխարհի անվերջանալի հիշողության, անվերջանալի ժամանակի և տարածության մեջ...

Եվ այդ պատճառով է ասված. երեկվանները չեն կարող իմանալ, թե ինչ է կատարվում այսօր, բայց այսօրվանները գիտեն, թե ինչ է կատարվել երեկ, իսկ վաղն այսօրվանները կդառնան երեկվաններ...

Ու նաև ասված է. այսօրվաններն ապրում են երեկվա մեջ, բայց եթե վաղվանները մոռանան այսօրվանը, դա կլինի աղետ բոլորի համար...

Աբդիան շատ էր հուզվում, հուսահատվում, երբ վրա հասավ այն օրը գատկի առաջին օրվա նախօրյակին, և նախատոնական տոթ երեկոյան փորձում էր գտնել այն տունը ցածի քաղաքում, ուր նախորդ օրը տեղի էր ունեցել խորհրդավոր ընթրիքը աշակերտների հետ, որտեղ Նա կտրեց հացն ասելով, որ այդ մարմինն է Իր, ու լցրեց գինին, ասելով, որ այդ արյունն է Իր, չէ որ այդ ժամանակ արդեն կարելի էր նրան զգուշացնել սպառնացող վտանգի մասին, Հուդա Իսկարիովտացու դավաճանության մասին, այդ սարսափելի քաղաքից շտապ, անհապաղ հեռանալու մասին, որ որքան կարելի է շուտ ճամփա ընկնի։ Այդ տունը որոնելով՝ նա մարող մթնշաղի մեջ դեսուդեն էր ընկել ծուռումուռ, խճճված նեղլիկ փողոցներում, չգիտես ինչու ուշադիր նայում էր անցորդների դեմքերին, ասես կարող էր այստեղ ծանոթներ ունենալ, սակայն ոչ այդ ժամին ընտանեկան ընթրիքի

շտապող քաղաքացիների մեջ, ոչ էլ նրանց մեջ, ովքեր դեռ խանութներ էին մտնում փակվելուց առաջ, նա չտեսավ մեկին, որին կարող էր վստահել։ Իսկ շատ անցորդներ չգիտեին էլ, թե ով է Հիսուս Քրիստոսը։ Ինչ իմանային, ինչքան ասես թափառաշրջիկ կար քաղաքում։ Մի բարեսիրտ քաղաքացի սկսեց նրան զատկի հրավիրել իր տուն։ Սակայն Աբդիան շնորհակալություն հայտնելով հրաժարվեց։ Նա հույս ուներ նախազգուշացնելու Ուսուցչին։ Հուզմունքից, պատուհաններից երևացող լույսից, օդում զգացվող ուժեղ բուրմունքից, որ տարածվում էր օջախների վրա եփվող կերակուրներից, խոնավ տոթից, որ ելնում էր զովության համար առատորեն ջրված ճամփաներից ու բակերից, նրա գլուխը ցավեց։ Սկսեց սիրտը խառնել։ Եվ այնժամ նա քաղաքից դուրս վազեց, դեպի Գեթսեմանի, հույսով, որ այնտեղ դեռ կլինի Ուսուցիչն իր աշակերտներով, այգում, աղոթքով ու զրույցով զբաղված։ Բայց իզուր։ Այստեղ էլ, այս ուշ ժամին նա ոչ մեկին չգտավ։ Այգին ամայի էր։ Ձիկուսի այն մեծ ծառի տակ, որտեղ զինված ամբոխը բռնել էր Ուսուցչին, նույնպես ոչ ոք չկար։ Աշակերտներն այստեղից փախել էին, ինչպես նախագուշակում էր Ուսուցիչը...

Լուսինը լողում էր հեռավոր ծովի և ցամաքի վրա, արդեն կեսգիշերն անցել էր՝ մոտենում էր ճակատագրական օրը, որի հետևանքները դարերով չեն վերանա և երկար ու տարբեր ձևերով պիտի արտահայտվեն մարդկության պատմության վրա։ Սակայն Գեթսեմանիում և շրջակա մրգատու ու խաղողի այգիներով ծածկված բլրակների վրա այդ ժամին լուռություն էր տիրում, միայն գիշերային թռչուններն էին երգում թփերին, գորտերն իրար ձայնում, և խոխոջում էր գետը, գալարվում հին քարքարոտ հոսանքներով, փայլփլում լուսնի լույսի տակ, սկիզբ առնելով մայրիների անտառից, բաժանվելով առուների և նորից միանալով ու մեծ հոսանք կազմելով։ Ամեն ինչ իր տեղում էր և գոյություն ուներ, ինչպես հնուց ի վեր. խաղաղ ու երանավետ էր այդ գիշերը երկրի վրա, և միայն նա, Աբդիան իրեն տեղ չէր գտնում այն պատճառով, որ ամեն ինչ կատարվել էր այնպես, ինչպես պետք է կատարվեր, ու ինքը չէր կարող ոչինչ ոչ կասեցնել, ոչ կանխել, թեև գիտեր նախապես, թե այդ ամենն

ինչպես է վերջանալու։ Ջուր էր նա լալիս ու հուսահատությամբ դիմում Աստված-Վաղվան։ Ու չէր կարողանում հաշտվել կատարվածի հետ հազար ինը հարյուր հիսուն տարի անց այդ ժամանակից, և ինքնաորոնումներով, տեղափոխվելով անցյալ կեցության մեջ, մտովի վերադարձավ այն սկզբին, որից ժամանակի բոլոր շրջապտույտների միջով թելը ձգվում էր և մինչև իր ճակատագիրը։ Պատասխան էր որոնում՝ մեկ հազարամյակներ ետ գնալով, մեկ նորից վերադառնալով այսօրվա իրականությանը տափաստանի անձրևի տակ, որ թափվում էր գլխին, ուսերին, մեկ վերանալով, մեկ սթափ կշռադատելով փաստերը։

Եվ բարի պոռթկումներով իրեն վոլյունտարիզմ էր թույլ տալիս պատմության նկատմամբ,— Ահեղ դատաստանի հասկացությունը, որ շատ ավելի ուշ էր առաջ եկել, դնում էր դրանից ավելի վաղ ապրած մարդկանց բերանը,— որովհետև շատ ու շատ էր շտապում Արդիան, որ այդ ասված լինի իրեն՝ Պոնտացի Պիղատոսին, քանզի Պիղատոսի, կայսրության ամենազոր կուսակալի ստվերն այսօր էլ դեռ չի չքվել։ (Չէ որ պոտենցիալ պիղատոսներ կան և հիմա)։ Եվ դեպքերից այսպես առաջ անցնելով, Արդիա Կալիստրատովը ելնում էր նրանից, որ աշխարհի նախասկզբնական օրենքները գործում են միշտ, թեև ի հայտ են գալիս ավելի ուշ։ Այդպես է և Ահեղ դատաստանի գաղափարը. վաղուց արդեն մարդկային միտքը տանջել է գալիք հատուցման գաղափարը երկրի վրա կատարվող բոլոր անարդարությունների համար։

Սակայն ով էր այդ Հիսուսը, որից սկսվում է թվականությունը, ինչպես զրույից, հոգու ողբերգական ինքնագիտակցության մեջ։ Եվ ինչու էր պետք այս ամենը։ Մի՞թե նրա համար, որ պատճառ ունենանք մշտական զղջման համար։ Եվ ինչո՞ւ նրա խաչ հանվելուց ի վեր այսքան երկար ժամանակ մտքերը չեն խաղաղվում։ Չէ որ այն ժամանակից հետո շատ բաներ, որ հավակնում էին անմահության, մոռացվեցին, հող ու մոխիր դարձան։ Ընդ որում, մի՞շտ էր հիշվում արդյոք, որ մարդկանց կյանքն ամեն օր կատարելագործվում է. այն, ինչ այսօր նոր էր, վաղն արդեն հին է,

այն ինչ ամենալավն էր, վաղը խամրում է էլ ավելի լավի դիմաց, ուրեմն ինչո՞ւ Հիսուսի ասածը չի հնանում և իր ուժը չի կորցնում։ Իսկ այն ամենը, ինչ տեղի ունեցավ նրա ծնունդից մինչև մահապատիժը սյան վրա, ու դեռ ավելին՝ որ հետո նրանից անցավ ժամանակին և սերունդներին, մի՞թե այդքան անհրաժեշտ ու անխուսափելի էր մարդկության համար։ Եվ, վերջապես, ո՞րն էր այդ ճանապարհի իմաստը մարդկային պատմության մեջ։ Ինչի՞ հասան նրանք։ Ինչի՞ հանգեցին։ Եվ եթե ամենանվիրական նպատակը մարդասիրությունն էր՝ հումանիզմի գաղափարը, ինչպես պընդում են գիտուն մտքերը, այսինքն՝ մարդու ճանապարհը դեպի ինքը, դեպի իր մեջ, որպես բանականության օժտված էակի, հոգու մշտական կատարելագործումը, ուրեմն որքան բարդ, ծանր ու դաժան ճանապարհ էր մտածված ի սկզբանե, ո՞ւմ կողմից, ինչո՞ւ։ Կարո՞ղ էին մարդիկ գոյություն ունենալ առանց այդ յուրաքանչյուրի կողմից յուրովի մեկնաբանվող մարդասիրության՝ քրիստոնեականից մինչև ընդհանրականը, սոցիալ-եսասիրականից, դասակարգայինից, մինչև սկզբունքային վերացականը։ Եվ մեր դարում ինչի՞ է պետք այդ ճանապարհին վաղուց հնացած կրոնը։

Իսկապես, ինչի՞։ Չէ որ բոլորի համար վաղուց արդեն ամեն ինչ պարզ է, նույնիսկ երեխաների համար։ Արդյոք մատերալիստական գիտությունը մի հիմնավոր ցից չի խրել քրիստոնեական դավանանքի դերեզմանին, և ոչ միայն նրա, վճռականապես և տիրաբար դրանք մի կողմ չի նետել առաջադիմության և կուլտուրայի ճանապարհից՝ միակ ճիշտ ճանապարհից։ Այսօրվա մարդը, թվում է, պետք չունի հավատ դավանելու, այդ մեռած ուսմունքների մասին նրա համար միանգամայն բավական է գիտենալ ընդհանուր պատմական իմացության կարգով, ոչ ավելին։ Չէ որ այդ ամենը սպառել է իրեն, ամեն ինչ փորձված է և անցած։ Սակայն ինչի՞ ենք մենք հասել, ի՞նչ ունենք այն բարեգութ, անձնազոհ, վաղուց մի կողմ նետված, ռեալիստական աշխարհայացքներով չարախնդորեն ծաղրված գաղափարի փոխարեն։ Ի՞նչ ունենք մենք դրա նման, ավելի ճիշտ դրան գերազանցող։ Չէ որ նորն անպայմանորեն պետք է հնից լավ լինի։ Եվ այն կա, այդ նորը։ Կա՛։ Մոտենում է նոր հզոր

կրոնը՝ գերազանցող ռազմական ուժի կրոնը։ Ուրիշ ո՞ր դաւաշրջանում է մարդուն վիճակվել ամեն օր, ամբողջ կեանքում՝ ծնվելուց մինչև մահը, գոյութիւն ունենալ ամբողջապես կախված այն բանից, արդյոք պատերազմ կսկսե՞ն այդ ու՛ժերը, թե իրենց կզսպեն։ Ովքե՞ր են հիմա աստվածները, եթե ոչ նրանք, այդ զենքի տերերը։ Թերևս առայժմ դեռ չկան եկեղեցիներ, ուր աղոթեին բեմին դրած միջուկային արկերի մանրօրինակներին ու մեկ էլ գլուխ խոնարհեին գեներալներին... Ի՞նչ պակաս կրոն է։

Կեանքի, անցած-գնացածի մասին այսպիսի խորհրդածութիւնների էր երբեմն տրվում Աբդիա Կալիստրատովը, և այս անգամ էլ, երբ մտածողութեան անսահման տարածականութեամբ նրան վիճակվեց թափանցել անցյալի այն իրադարձութիւնների էութեան մեջ, որ եղել էին նրանից առաջ,— այդպես նոր ջուրը հասում է հին ափերի մոտով,— նա վերադարձավ այն օրերի ակունքին, զատկին նախորդող ուրբաթ գիշերին, երբ Եսուի գոնի Ուսուցչին, հասցնի նրան հայտնել իր տագնապը, հաղորդի նրան հարյուրամյակներ հետո վրա հասնող տագնապների մասին, ասի, որ պատմութեան թատերաբեմում նոր Աստված է հայտնվել՝ Աստված-Դողիաթ, որ ժանտախտի նման ախտահարել է աշխարհի բոլոր մարդկանց գիտակցութիւնն իր կրոնով, անբարոյական և համակողմանի, գերազանցող ռազմական ուժի կրոնով։ Ինչ կասեր ուսուցիչը, ինչպես կսարսափեր. ռազմական գերազանցութեան այս կատաղի մրցակցութեամբ ո՞ւր է գնում մարդկային ցեղը։ Ու եթե Նա վճռեր երկրորդ անգամ իր վրա առնելու մեր մեղքերի բեռն ու նորից խաչ բարձրանալու, այդ դեպքում էլ հազիվ թե գթաշարժեր գերազանցող ռազմական ուժի ագրեսիվ կրոնով ստրկացված մարդկանց հոգիները...

Սակայն, ցավոք իր համար, նա Ուսուցչին չգտավ։ Հուդան արդեն մատնել էր Նրան, և Նրան բռնել ու տարել էին, և լալիս էր Աբդիան ամայացած Գեթսեմանիում այն ամենի համար, որ եղել էր, և այն ամենի համար, որ պիտի լիներ, միայնակ ամբողջ այգում և ամբողջ աշխարհում։ Այդպես, շտապելով ետ դառնալ, նա հայտնվեց Գեթսեմանիում, անց-

նելով իր նախահայրերի վրայից, որ այն ժամանակ դեռ ապրում էին հյուսիսային թավուտ անտառներում ու դեռ երկրպագում գերաններից փորած կուռքերին, որոնց նույնիսկ իր անունը՝ Աբդիա, հայտնի չէր։ Այն դեռ ժամանակներ անց պետք է փոխառվի, իսկ ինքը դեռ պետք է ծնվի հեռավոր քսաներորդ դարում...

Ու երկար նստել էր Աբդիան՝ հեկեկալով ֆիկուսի այն ծառի տակ, որտեղ ճանաչվել, բռնվել ու տարվել էր Ուսուցիչը, ու մորմոքում էր Աբդիան այնպես, ասես դրանից մի բան կարող էր փոխվել աշխարհի ճակատագրում...

Հետո նա վեր կացավ, տխուր գնաց քաղաք։ Այնտեղ, գիշերային Երուսաղեմի պատերի ներսում մարդիկ քնած էին հանգիստ քնով այդ նախազատկվա գիշեր, դեռ ոչինչ չկասկածելով, ու նա միայն տագնապած ու հուզված թափառում էր քաղաքում ու մտածում. որտե՞ղ է Ուսուցիչը, ինչ վիճակում է նա հիմա։ Իսկ հետո հանկարծ մտածեց, որ դեռ ուշ չէ Ուսուցչին փրկելու համար, ու սկսեց բախել պատուհանները, բոլոր պատուհանները, որ հանդիպում էին ճանապարհին. «Վեր կացեք, մարդիկ, փորձանք է գալիս։ Քանի դեռ ժամանակ կա, փրկենք Ուսուցչին։ Ես նրան կտանեմ Ռուսաստան, այնտեղ մի կղզյակ կա սրբազան մեր գետում, Օկայում...»։

Աբդիայի հասկացողությամբ գետի մեջտեղի այն սրբազան կղզյակում Ուսուցիչը կարող էր լիակատար ապահովության մեջ լինել՝ այնտեղ նա անձնատուր կլիներ աշխարհի փոփոխականության մասին մտորումներին, ու թերևս այնտեղ ծնվեր մի նոր հղացում ու նա գուշակեր մարդկության համար մի նոր ճանապարհ դեպ ժամանակների հեռաստանը, ու աստվածային կատարելություն պարգևեր մարդկանց, որպեսզի Իր վրա որպես անխախտ պարտավորություն վերցված դեպի մեսիան տանող ճանապարհն արյան միջով չանցներ, ու ստիպված չլիներ դրա համար հաղորդելու տառապանքներով ու նվաստացումներով, որոնք Նա, խելահեղը, պատրաստ էր ընդունել հանուն մարդկանց, հանուն ճշմարտության, որ վտանգավոր էր հալածողների համար, ուստի և արմատախիլ էր արվում անխնա. չէ որ հանուն ապագա սերունդների երջանկության Նա իր վրա

առավ այդ կործանարար պարտավորությունը, որ անխուսափելի էր մարդուն մշտական անարդարություններին մասնակից լինելու չծից ազատելու իր ընտրած ճանապարհին, քանզի բնական երևույթներում անարդարություն չի լինում, այն գոյություն ունի միայն մարդկանց մեջ և բխում է մարդկանցից։ Սակայն հնարավո՞ր է արդյոք նպատակին հասնել այսպիսի հակապատմական եղանակով և կա՞ արդյոք քիչ թե շատ վստահություն, թե Ուսուցչի այդ դասը չի մոռացվի ամեն անգամ, երբ իր շահը հետապնդելով մարդը կուղի մոռանալ Ուսուցչին, խլացնել ու ճնշել իր խիղճը, իր համար բազմաթիվ արդարացումներ գտնել. իբր ինքն ստիպված էր չարությամբ չարին պատասխանել. ինչպե՞ս ետ պահել արարչության պսակին՝ մարդուն, կործանարար կրքերից, որ մշտապես ուղեկցում են նրան և բարօրության և ձախողությունների ժամանակ, և աղքատության, և հարստությունից գերհագենալու ժամանակ, և երբ նա իշխանություն ունի, ու երբ ոչ մի իշխանություն չունի. ինչպե՞ս ետ պահել արարչության պսակին՝ մարդուն, ուրիշների վրա իշխանություն ունենալու անզուսպ փափագից, ինչպես ետ պահել մշտական իջեցումից դեպի ամենաթուլատրելիությունը. չէ որ ինքնահավանությունն ու գոռոզությունը մարդուն մղում են հրամայելու և պարտադրելու, երբ ինքն ուժ ունի, իսկ երբ ուժ չունի՝ հաճկատարությամբ, երեսպաշտությամբ և խարդավանքով ձգտելու նույն նպատակին, ո՞րն է այդ դեպքում կյանքի իսկական նպատակը, ինչո՞ւմ է նրա իմաստը, և ո՞վ է, վերջապես, ի վիճակի պատասխանելու այդ հարցին այնպես, որ ոչ մեկը չկասկածի նրա պատասխանի ճշմարտությանն ու անկեղծությանը։

Եվ այսպես, Ուսուցիչ, դու գնում ես տանջալից մահապատժի, որպեսզի մարդն անսա բարուն ու գթասրտությանը, այն ինչ իր նախահիմքում բանական մարդուն տարբերում է ոչ բանականից, քանզի ծանր է մարդու գոյությունը երկրի վրա, նրա մեջ խորն են թաղված չարի ակունքները։ Եվ մի՞թե այդ կերպ հնարավոր է հասնել բացարձակ իդեալի՝ միտք, թևավորված ազատ մտածողությամբ, վսեմ ան-

հատականություն, իր միջից հաղթահարած չարիքի անա-
խրոնիզմը հետայսու և մեկընդմիշտ, ինչպես հաղթահարում
են վարակիչ հիվանդությունը։ Օ՜, եթե դա հնարավոր լիներ։
Աստված, ինչու քեզ վրա այդքան մեծ բեռ առար, որ ուղղես
անուղղելի աշխարհը։ Փրկիչ, կանգ առ, չէ որ նրանք, հա-
նուն որոնց Դու պիտի գնաս խաչվելու, տանջալից մահվան,
հետո հենց նրանք քեզ վրա պիտի ծիծաղեն։ Այո, այո,
ոմանք պարզապես հոհոռալու են, ոմանք ծաղրելու են Քո
ունայնությունը հազարամյակներ անց, երբ մատերիալիս-
տական գիտությունը քարը քարի վրա չթողնելով Աստծու
հավատից, հեքիաթ կհամարի այն ամենն, ինչ եղել է քեզ
հետ. «Խենթ։ Հիմար։ Ո՞վ էր նրան խնդրում։ Ինչո՞ւ, ո՞ւմ
էր պետք խաչ հանելու այդ ներկայացումը։ Ո՞ւմ պիտի
դրանով զարմացնես։ Դա ի՞նչ տվեց, ի՞նչ փոխեց մարդու
մեջ թեկուզ մազաչափ, թեկուզ մի չնչին»։ Այդպես են մտա-
ծելու այն սերունդները, որոնց քո սխրանքը թվալու է գրե-
թե անհեթեթ, որոնք այդ ժամանակ արդեն հասկացած
կլինեն մատերիայի կառուցվածքը ընդհուպ մինչև նրա նա-
խասկզբնական էությունը և, հաղթահարելով երկրի ձգողա-
կան ուժը, մուտք գործելով տիեզերական ոլորտներ, կսկսեն
զարհուրելի ագահությամբ վիճարկել իրար մեջ տիեզերքը,
ձգտելով գալակտիկական տիրապետության, ու թեև ան-
սահման է տարածությունը, սակայն նրանց համար տիեզերքն
էլ քիչ կլինի, քանզի հանուն իրենց գոռոզամտության նրանք
հենց մոլորակն էլ կարող են հող ու մոխիր դարձնել, այն
մոլորակը, որի վրա Դու փորձում էիր բարեգթության
պաշտամունք հաստատել։ Բայց Դու մտածիր, ի՞նչ է
նրանց համար Աստված, երբ նրանք իրենց Աստծուց վեր են
դասում, ի՞նչ է նրանց համար խաչից կախված մի խենթը,
երբ նրանք բոլորին միանգամից ոչնչացնելով, Քո մասին
հիշողությունն իսկ կվերացնեն երկրի երեսից։ Օ՜, իմ խեղճ,
իմ միամիտ Ուսուցիչ, փախիր ինձ հետ Վոլգայի ափ, Օկայի
ափ, գետի մեջտեղում այն մեկուսի կղզյակ, ու դու այնտեղ
կլինես ինչպես երկնային աստղի վրա, բոլորի համար տե-
սանելի ամեն տեղից՝ բայց և անմատչելի բոլորի համար։
Մտածիր, դեռ ոչ չէ, մեր առջև դեռ գիշեր և առավոտ կա,
միգուցե Դու դեռ կկարողանաս խուսափել դաժան ճակա-

տագրից։ Սթափվիր, մի՞թե Քո ընտրած ճանապարհն է միակ հնարավորը։

Այդպիսի մտքերից ալեկոծված, Աբդիան խոր տառապանքը դեմքին թափառում էր գիշերային շոգ Երուսաղեմի փողոցներում ու հրապարակներում, ջանալով խելքի բերել Նրան, ով հենց Տիրոջ կողմից ուղարկված էր երկիր սարսափելի և ողբերգական ճակատագրի համար, որպես հավիտենական օրինակ և նախատինք մարդկանց... Սակայն մարդու էությունն այնպիսին է, որ ոչ ոք այդ նախատինքն ուղղակի իր վրա չի վերցնի, և ամեն մեկն իր համար արդարացում կգտնի. իբր ինքը դրա հետ կապ չունի, իբր աշխարհի ճակատագիրը վճռվում է առանց իր մասնակցության ու ինքը գործ չունի.. Որքան դառն ծաղր կա այդ դիտավորության մեջ, որ գալիս է մարդկային էության թերագնահատումից...

Արդեն քանիցս ետ ու առաջ անելով քաղաքի դարպասի մոտ, Աբդիան տեսավ թափառական մի շուն երեք թաթի վրա. չորրորդը, վնասված թաթը, շունը սեղմել էր փորին։ Խելացի և տխուր նայեց նրան շունը։

— Էհ, կաղլիկ,— ասաց նա շանը, նայելով վրան։— Դու էլ ինձ նման անտուն ես։ Արի ինձ հետ։

Ու մինչև լույս շունը թափառում էր Աբդիայի հետ։ Ամեն ինչ հասկանում էր այդ շունը։ Իսկ առավոտյան դարձյալ իր հոգս ու եռուզեռով արթնացավ քաղաքը, առավոտից բազար-շուկա լցվեցին հակերով բեռնված ուղտեր, որ ավազուտներից քշել-բերել էին բեդվինները, էշերով և ջորիներով, որ ավելի փոքր բեռներ էին տեղափոխում, ձիեր լծած սայլերով, մեջքներին հակեր բարձած բեռնակիրներով. ամեն ինչ շարժման մեջ մտավ, ամեն ինչ՝ կրքերը, ապրանքները, աղմուկը, ամեն ինչ սկսեց պտտվել առուծախի մի անիվի մեջ... Սակայն շատ երուսաղեմցիներ քայլեցին դեպի քաղաքի սպիտակապատ տաճարը ու այնտեղից հուզված բազմությամբ գնացին Հռոմեական կուսակալ Պոնտացի Պիղատոսի մոտ։ Նրանց միացավ և Աբդիա Կալիստրատովը. նա հասկացավ, որ Ուսուցչի ճակատագիրն է լուծվելու։ Եվ նա նրանց հետ գնաց դեպի Կամարակապ պալատը,

սակայն զինված պահակները նրանց ներս չթողեցին կուսակալի մոտ։ Ու նրանք կանգ առան պալատի առջև սպասումով։ Ժողովուրդը գնալով շատանում էր, թեև առավոտից շատ շոգ էր։ Տարբեր մարդկանց տարբեր կրքեր էին այստեղ բերել։ Ինչ խոսակցություններ ասես չէին գնում այդ անհանգիստ ամբոխի մեջ. ոմանք ասում էին, թե մարգարե Հիսուս Նազովրեցուն կուսակալը ներում կշնորհի Հռոմի կողմից իրեն տրվող իշխանությամբ, ազատ կարձակի, որ նա թողնի գնա Երուսաղեմից հեռու ու երբեք այլևս այստեղ չվերադառնա, ուրիշներն ասում էին, որ դատապարտվածներից մեկին զատիկի առթիվ կյանք են պարգևում և որ այդ ներում շնորհվածը Հիսուսը կլինի, մյուս մասն էլ պարզապես հավատում էր, որ նրան կփրկի ինքը Եհովան բոլորի աչքի առջև, սակայն բոլորն էլ՝ և մեկը, և մյուսը, և երրորդը սպասում էին, սպասում էին, չիմանալով, թե ինչ է կատարվում այնտեղ, պալատի պարիսպի ու պատերի ետև։ Ու բազմության մեջ շատ կային այնպիսիները, որ ծիծաղում էին խեղճի վրա, որը գլխով էր հատուցում իր զավեշտական թագավորության համար, ծաղրում էին դատապարտված խեղճին ու տրտնջում, թե իբր ինչու է կուսակալն այսքան ձգձգում, վերջ տալ է՝ միանգամից պիտի վերջ տալ, ինչ են դրա հետ գլուխ դնում, արևը հրեն ոնց է վառում, մինչև կեսօր մարդիկ կտապակվեն արևի տակ Լերկ լեռան վրա։ Այդ Հիսուս Նազովրեցին ում ասես խելքից կհանի, խոսելով կգժվացնի։ Պարզ բան է. լեզվին զոռ է տվել ու շփոթության մեջ է գցել կուսակալին, մեկ էլ տեսար Հռոմեական կուսակալը դրան բաց թողեց, այն ժամանակ մենք էլ ինչո՞ւ ենք այստեղ կանգնել... Ու այդ Հիսուս Նազովրեցին էլ մի պտուղ չի՝ ինչեր ասես չխոստացավ, բայց դե ուր է նրա այդ Նոր թագավորությունը, իսկ հիմա իրեն են շան նման կախելու... Այդպես էլ է լինում...

Նրանց խոսքերը լսելով, Աբդիան վրդովվում է։ «Չհամարձակվեք այդպես խոսել։ Անշնորհակալ, ցած հոգիներ։ Մի՞թե կարելի է այդպես գոհեկացնել մարդկային հոգու մեծ պայքարն ինքն իր հետ։ Դուք պետք է հպարտանաք նրանով, մարդիկ, նրա չափանիշով ձեզ չափեք»,— հուսահատ բղա-

վում էր Աբդիա Կալիստրատովը, աղի արցունք թափելով երուսաղեմցիների բազմության մեջ։ Բայց ոչ ոք նրան չէր լսում, ոչ ոք չէր նկատում նրա ներկայությունը։ Չէ՞ որ նա դեռ պիտի ծնվեր հեռավոր քսաներորդ դարում...

* * *

Անձրևը, որ ուժգին սկսեց տեղալ գիշերվանից, կամաց-կամաց նոսրանում էր։ Գնաց, ինչպես եկել էր, որ մի ուրիշ տեղ հեղեղի պես թափվի։ Եվ վերջապես բոլորովին դադարեց, երբեմն-երբեմն միայն պոկվելով վերևից ուշացած կաթիլներով։ Իսկ արդեն մոտենում էր լուսաբացը, մաքրված ու աստղազարդ լուսաբացը. երկինքը, որ դեռ մուգ-ագատյա էր խորքում, անձրևից հետո ավելի ու ավելի լուսանում էր եզրերից։ Ջովություն էր փչում խոնավ հողից, գիշերվա մեջ բարձրացած խոտերից։

Սակայն տափաստանում ապրող կենդանի էակներից ոչ մեկը, թերևս, այդ ժամին կեցության ուրախությունն այնքան սուր կերպով և շնորհակալությամբ չէր զգում, ինչպես Աբդիա Կալիստրատովը, թեև ինքնազգացողությունը նրա հեռու էր լավ լինելուց։

Բայց և այնպես Աբդիայի բախտը բերեց. նախորդ օրվանից չիկացած օդը գիշերվա ընթացքում չէր հասցրել սառչել և նա չսառեց։ Ու թեև թրջվել էր ոտքից գլուխ, և վերքերն ու վնասվածքներն էլ իրենց զգալ էին տալիս, սակայն նա, ցավը հաղթահարելով, կենտրոնացել էր իր պայծառատեսության մեջ, որը նրան հնարավորություն էր տալիս զգալ իրեն միաժամանակ և անցյալում, և ներկայում, կյանքն ընկալում էր նոր կերպով, հայտնագործում այն որպես ճակատագրի պարգև և այդ պատճառով ավելի էր գնահատում ապրելու և մտածելու հնարավորությունը։ Այն ժամին, երբ անձրևը դադարեց, Աբդիան նստած էր երկաթուղու կամուրջի տակ, ուր մի կերպ վերջին ուժերը ժողովելով, մթության մեջ ոտքերը քարշ էր տվել կաղալով...

Այդ կամուրջի տակ համեմատաբար չոր էր, նա այստեղ էր մտել շրջմոլիկի նման և գոհ էր, որ այդպիսի տեղ էր

գտնվել ու ինքն այնտեղ կարող էր պատսպարվել մինչև անձրևը դադարի ու կարող էր անձնատուր լինել իր մտորումներին։ Կամուրջի տակ ձայները լսվում էին բարձր և հնչեղ, ինչպես միջնադարյան տաճարի բարձր կամարների տակ։ Երբ գլխավերևում գնացքներ էին անցնում, կարծես թնդանոթային հրաձգություն լիներ՝ հեռվից եկող և աստիճանաբար հեռացող։ Լավ, ազատ մտածում էր այդ գիշեր Աբդիան, և միտքը, ծնվելով, զարգանում էր արդեն ինքն իրեն ու անսահմանորեն և անարգել տանում էր իր ետևից նրա հոգին։ Աբդիան մտածում էր մեկ Քրիստոսի և Պոնտացի Պիղատոսի մասին, մտովի դառնում այն ժամանակներին, և վերևից անցնող գնացքների դղրդյունը չէր խանգարում նրան զգալու իրեն հնադարյան Հրեաստանում, Գողգոթայում աղմկող ամբոխի մեջ ու ասես իր աչքերով տեսնելու այն, ինչ տեղի էր ունենում, մեկ հիշում էր Մոսկվան, դեռ օրերս իր այնտեղ լինելը և Պուշկինյան թանգարան գնալը, ուր երգում էր բուլղարական կապելլան, ու հիշում էր իր երկվորյակին, զարմանալիորեն իրեն նման բուլղարացի երգչին, աչքի առջև կանգնում էր նրա դեմքը, լայն բացված բերանով։ Ինչ վեհ հնչյուններ էին արձակում բուլղարացի երգիչների ձայները, ինչպես էին նրանք վեհացնում իր հոգին և միտքը։ Իր հայրը, սարկավագ Կալիստրատովը, շատ էր սիրում եկեղեցական երգեցողություն և լսելով լաց էր լինում սրտաշարժված։ Մի անգամ ինչ-որ մեկը հորը զարմանալի աղոթքի տեքստ էր տվել ժամանակակից մի միանձնուհու։ Այն ժամանակ դեռ երիտասարդ այդ կինը, որ եղել էր մանկատան՝ նախ սան, ապա դաստիարակչուհի, պատերազմի տարիներին կուսակրոնություն էր ընդունել այն բանից հետո, երբ նրա սիրեցյալը, որի հետ ընդամենը մեկ ու կես ամիս էին ապրել, զոհվել էր գերմանական սուզանավի կողմից ջրասույզ արված նավում։ Սարկավագ Կալիստրատովը այդ «հոգու փաստաթուղթը» կարդալիս, որի մեջ միահյուսված էին ողբն ու աղոթքը, ամեն անգամ արցունք էր թափում։ Նա շատ էր սիրում, երբ Աբդիան, դեռ փոքրիկ տղա, կանգնում էր տան կարմիր անկյունում՝ հին դաշնամուրի մոտ ու մաքուր պատանեկան ձայնով կար-

դում աղոթքը չրասույզ արված նավի մասին։ Եվ Աբդիան անգիր արեց այն, միանձնուհու, նախկին մանկատան սանուհու աղոթքը.

«Երկինքը դեռ նոր լուսանում է, ու մինչ քնած է աշխարհը արևածագից առաջ, Քեզ եմ ուղղում, Ամենատես և Ամենաբարեգութ, աղոթքն իմ ամենօրյա։ Ներիր, Տեր իմ, ինքնակամությունն այս, որ հիշում եմ նախ ոչ Քեզ, այլ դարձյալ ձանձրացնում եմ իմ գործով, սակայն ապրում եմ ես հանուն նրա, որ սույն աղոթքն ասեմ, քանի դեռ կամ այս աշխարհում։

Դու, կարեկից, Օրհնյալ, Արդար, ներիր ինձ, որ վրդովում եմ քեզ անդադար իմ աղերսներով։ Իմ աղերսանքի մեջ չկա շահամոլություն, ես դույզն իսկ երկրային բարիք չեմ խնդրում ու չեմ աղաչում կյանքս երկարացնել... Մարդկանց հոգիների փրկության համար լոկ չեմ դադարի դիմել քեզ։ Դու, Ամենաներող, մի թող մեզ անգիտության մեջ, թույլ մի տուր, որ մենք մեզ համար արդարացում որոնենք բարու ու չարի միացության մեջ աշխարհում։ Մտքի պայծառացում շնորհիր մարդկությանը։ Իսկ իմ մասին չեմ համարձակվի բերանս բացել։ Ես չեմ վախենում հարկ եղածի նման ընդունելու ամեն վաճառ՝ գեհենում պիտի այրվեմ, թե ընկնեմ արքայությունն այն անվերջանալի։ Մեր այդ ճակատագիրը Դու պիտի որոշես, Արարիչ Անտեսանելի և Անընդգրկելի։

Մի բան եմ խնդրում միայն, դրանից վեր խնդիրք չունեմ ես, ստրուկը Քո, միանձնուհին, հպատակը սիրո Քո խոսքերին, ճգնավորը, որ իր հուսահատությամբ հրաժարվել է երկրավոր աշխարհից, իրենից դուրս վանել սնապարծությունն ու ռնայնությունը, որպեսզի մտքերով իր մոտենա Հոգուն Քո, Տեր։

Մի բան եմ խնդրում լոկ, մի հրաշք թող երևա. թող այն նավը լողա նույն իր ուղղությամբ օրեցօր, գիշերից գիշեր, քանի դեռ ցերեկն ու գիշերը հաջորդում են իրար Քո սահմանած կարգով երկրի տիեզերական պտույտի մեջ։ Թող լողա այն նավը օվկիանոսից օվկիանոս իր մշտական հերթափոխով, ընդմիշտ փակված իր հրանոթներով, ու թող զարկվեն ալիքները նավախելին, թող լսվի նրանց անլռելի

Հզոր աղմուկն ու դղրդյունը։ Թող օվկիանոսի շիթերը հեղեղեն նրան անձրևի նման շառաչող թող շնչի նա խոնավությունն այդ դառն ու վաղանցիկ։ Թող լսի մեքենաների աղմուկն ու նավին հետևող ուրուրների աղաղակները։ Ու թող նավը ճանապարհվի դեպի լուսավոր քաղաքն այն օվկիանոսի ափին, թեև կանգ առնել նրան վիճակված չէ հավիտյանս հավիտենից...

Ահա ամենը, ոչինչ ուրիշ չեմ խնդրում ես օր ու գիշեր իմ աղոթքում։ Ու դու ներիր, Ամենաբարի ու Բարեգութ, որ ձանձրացնում եմ քեզ խնդրանքովս տարօրինակ, խորտակված նավի մասին իմ աղոթքով։ Բայց Դու՝ պատվար ես բոլոր վսեմ հույսերի, երկրային ու երկնային։ Դու եղել ես ու կաս Ամենագո, Ամենազոր ու կարեկից հիմքը բոլոր հիմքերի։ Ուստի աղերսանքով քեզ ենք դիմում և անցյալում, և ներկայումս, և ապագայում։ Եվ դրա համար, երբ ես չեմ լինի, ու չի լինի մեկը, որ խնդրի, թող լողա այն նավը հավիտենության սահմանից դուրս։ Ամեն»։

Նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչու այդ գիշեր նորից հիշեց միանձնուհու աղոթքը։ Ու երբ մի միտք էլ անցավ գլխով, որ եթե հիմա հանգիպեր այն աղջկան, նրան, որ եկել էր Ուչկուդուկ մոտոցիկլետով, նրա համար էլ կկարդար այդ աղոթքը, իրեն էլ դա ծիծաղելի թվաց։ Ակամա ծիծաղեց Աբդիան, թեթևամիտ հիմար կոչեց ինքն իրեն ու պատկերացրեց, թե աղջիկն ինչպես պիտի նայեր իրեն՝ ամենաողորմելի տեսքով կամուրջի տակ կուչ եկած, ասես մի թափառաշրջիկ գող կամ ձախորդ ավազակ լիներ։ Եվ ինչ պիտի մտածեր նա իր մասին, իսկ ինքը, մի սրա՞ն տեսնեք, դեռ ուզում է նրա համար աղոթք կարդալ նավի մասին, խելագար կհամարեր և, իհարկե, իրավացի կլիներ։ Սակայն նույնիսկ հիմա, նրա աչքում իրեն ստորացած զգալու գնով անգամ, նա ուզում էր տեսնել աղջկան...

Եվ մինչև լուսաբաց Աբդիան նստել էր կամուրջի տակ ու նրա գլխավերևում դղրդում էին տափաստանով անցնող գնացքները։ Սակայն ամենից ավելի մտածում էր նա այն մասին, թե որտեղ են հիմա բանբերները, իր նախկին ուղեկիցները, ինչ եղավ նրանց հետ։ Երևի արդեն անցել են Ջալփաղ-Սազից ու շարունակել իրենց ճամփան։ Որտե՞ղ են

հիմա Պետրոսյան, Լյոնկան և մյուսները։ Որտե՞ղ է հիմա փոխակերպուկի նման անորսալի Գրիշանը։ Եվ ափսոսում էր Աբգիան, որ սխալ էր թույլ տվել, կոպիտ սխալ, որ Գրիշանը հաղթանակել էր, որ հաղթել էր նրա սև գործը, որ ամեն ինչ այդքան վատ վերջացավ։ Այդուհանդերձ, Աբգիան համարում էր, որ այդ օրերին իրեն բաժին ընկած տառապանքները անհրաժեշտ էին իրեն։ Չնայած նրան չհաջողվեց վերադաստիարակել բանբերներին, սակայն թերթում հանդես գալու համար հետաքրքիր նյութ էր ձեռք բերել և ձեռք էր բերել իր սեփական չանքերով։

Այս նկատառումները մի քիչ հանգստացնում էին Աբգիային, սակայն նրա սիրտն առաջվա նման ցավում էր և ամենից ավելի Լյոնկայի համար։ Ահա նրան կարելի էր ճիշտ ճանապարհի դարձնել, բայց չհաջողվեց։

Հիշում էր հիմա Աբգիան այն ամենն, ինչ իմացավ և տեսավ Մերձմոլորնկումյան տափաստանում. և այն հանդիպումը գայլերի հետ, և այն, ինչպես գորշ էգ գայլը թռավ նրա գլխի վրայով, փոխանակ ժանիքները նրա մարմնի մեջ խրելու։ Տարօրինակ էր այդ, շատ տարօրինակ. և ընդմիշտ մնաց նրա հիշողության մեջ կատաղի ու իմաստուն հայացքն այդ գայլի կապույտ աչքերի։

Սակայն ահա երկաթուղու վրա նորից արև ծագեց, և կյանքն սկսեց իր ընթացքը։ Սքանչելի էր տափաստանում գիշերվա անձրևից հետո։ Շոգը դեռ չէր սկսվել և լայնարձակ ողջ տափաստանը, ինչքան աչքդ կտրեր, մաքրություն էր բուրում, և երգում էին երկնքում արտույտները։ Երգում, ճախրում էին երկնքի ու երկրի միջև տափաստանային թռչունները։ Իսկ տափաստանով, հորիզոնից հորիզոն ձգվելով, շարժվում էին գնացքները, հիշեցնելով այստեղից հեռու փոթորկվող կյանքի մասին։

Ներդաշնակություն ու հանգստություն էր տիրում այդ առավոտ տափաստանում, որ անցյալ գիշեր հագեցել էր երկնքի բարերեր հեղուկով։

Հենց որ արևն սկսեց տաքացնել, Աբգիան վճռեց չորացնել հագուստը և վրայից շորերը հանելով, սարսափեց՝ հագուստն այնպես էր պատառոտված, որ դրանով ամոթ էր

մարդկանց աչքին երևալ։ Իսկ մարմինն ամբողջապես ծածկված էր քերծվածքներով, արյունազեղումներով և հրապայական կապտուցներով։ Լավ էր, որ մոտը հայելի չուներ՝ եթե իրեն հայելու մեջ տեսներ, պիտի սարսափեր իր տեսքից, սակայն առանց հայելու էլ հասկանում էր, թե ինչ վիճակում է. դեմքին ձեռք տալ հնարավոր չէր։

Եվ, այնուամենայնիվ, բավականաչափ խելք ունեցավ ներշնչելու իրեն, որ այդ ամենը կարող էր ավելի վատ վերջանալ, որ ինքը կենդանի է մնացել, և դա արդեն մեծ երջանկություն է։

Երբ հանվում էր կամուրջի տակ, մի ուրիշ անախորժություն էլ պարզվեց. անձնագիրն ու այն մի քիչ դրամը, որ ուներ գրպանում, փշացել էին։ Անձնագիրն ընկնելիս պատրվել էր ու թրջվել անձրևից, դարձել էր խոնավ թղթի գունդ։ Իսկ փողից քիչ թե շատ պահպանվել էին երկու թղթադրամ՝ քսանհինգռուբլիանոց և տասը ռուբլիանոց։ Այդ փողով Աբդիան պետք է հասներ Մոսկվա և այնտեղից էլ մինչև Պրիօկսկ։

Տխուր մտքեր պաշարեցին Աբդիա Կալիստրատովին։ Սեմինարիայից վտարվելուց հետո Աբդիան ստիպված էր բավական նեղ պայմաններում ապրել։ Քրոջ՝ Վառվառայի համաձայնությամբ ստիպված եղավ վաճառել հին դաշնամուրը, որի վրա քույրը մանուկ հասակում նվագել էր սովորել։ Կոմիսիոն խանութում դաշնամուրին կես գին տվեցին, պատճառաբանելով, որ երաժշտական գործիքների պահանջ հիմա չկա, լիքը լցված են, նույնիսկ հին մագնիտաֆոնները չեն վաճառվում, ուր մնաց դաշնամուրը։ Ստիպված էր համաձայնել այդ գնին, քանի որ ուրիշ ելք չուներ։ Եվ ահա հիմա ոչինչ չէր մնացել։ Իսկապես որ բախտը բերում է։

Սկսվել էր նոր օրը, և կնշանակի պետք էր ապրել, ու նորից նյութական կեցությունը նեղն էր գցել իդեալիստ Կալիստրատովին։

Եվ այդ ժամանակ Աբդիայի համար մի հայտնություն եղավ։ Երբ լույսը բացվեց, պարզվեց, որ կամուրջի տակից, ուր նա պատսպարվել էր, կողմնուղի էր անցնում։ Սակայն, երևում է, այստեղից մեքենաներ հաճախ չէին անցնում։

Հայտնի չէ, թե ինչքան պիտի սպասեր նույն ուղղությամբ գնացող մեքենայի, ուստի Աբգիան վճռեց մի կերպ ոտքով հասնել մինչև մոտակա կիսակայարանը, իսկ հետո որևէ մեքենայով գնալ մինչև Ջալփաղ-Սազ՝ ճամփա ընկնելու համար, Աբգիան սկսեց նայել շուրջը. արդյոք մի փայտ չի՞ գտնի, որ կարողանա հենվել քայլելիս։ Այդ ծունկը, որ վնասվել էր գնացքից ընկնելուց, ուռել ու ցավում էր սաստիկ։ Շուրջը նայելով, Աբգիան ծիծաղեց. «Հանկարծ ու Գրիշանը ցան նետած լինի այն փայտը, որով Պետրոսյան ինձ վերջնական հարվածը հասցրեց։ Հիմա արդեն այդ փայտը նրան պետք չէ»։ Փայտը նա, իհարկե, չգտավ, բայց նկատեց, որ տափաստանով կամուրջի կողմն է գալիս մի մեքենա։

Դա բեռնատար մեքենա էր տախտակե ինքնաշեն տնակով թափքին։ Խցիկում վարորդի կողքին նստած էր մի կին երեխան գրկին։ Մեքենան իսկույն կանգ առավ։ Վարորդը, մարմնեղ թխադեմ ղազախը, զարմանքով Աբգիային էր նայում խցիկի կիսաբաց պատուհանից։

— Տղա, քեզ ինչ է, գնչունե՞րն են ծեծել,— չդիտես ինչու հարցրեց նա։

— Ոչ, գնչուները չեն։ Ինքս եմ գնացքից ընկել։

— Դու հո հարբա՞ծ չես։

— Ես երբեք չեմ խմում։

Վարորդը ու երեխայով կինը կարեկցանքով հառաչեցին, խոսեցին իրար հետ ղազախերեն, և խոսքի մեջ շարունակ կրկնվում էր «բիչարա»* բառը։

— Լսիր, արի նստի, մենք Ջալփաղ-Սազ ենք գնում։ Թե չէ մենակ կմեռնես տափաստանում, բիչարա։ Էստեղով մեքենաներ հազարից մեկ են անցնում։

Հազիվ արցունքը զսպելով, որ դավաճանաբար սեղմում էր կոկորդը, Աբգիան երեխայի նման ուրախացավ։

— Շնորհակալ եմ, եղբայր,— ասաց նա՝ ձեռքը կրծքին դնելով։— Ես էլ հենց ուզում էի խնդրել, որ ինձ վերցնեք, եթե ձեզ հարմար է։ Դժվարանում եմ քայլել, ոտքս վատ վիճակում է։ Շնորհակալ եմ։

---

* *Բիչարա — դժբախտ, խեղճ։*

Վարորդը դուրս եկավ, օգնեց Աբդիային մեքենա բարձրանալ։

— Արի էս կողմ։ Ես քեզ կբարձրացնեմ, բիչարա։ Ոչինչ, ոչինչ, բարձրացիր, մի վախեցիր. էնտեղ բուրդ է։ Տանում եմ հանձնեմ սովխոզ։ Լավ է, տեղդ փափուկ կլինի։ Մենակ թե չծխես։

— Ես ծխող չեմ։ Հանգիստ եղեք,— հավատացրեց նրանց Աբդիան ամենայն լրջությամբ։— Ես ամբողջ գիշեր անձրևի տակ եմ եղել, թրջվել եմ, այստեղ կտաքանամ, հալի կգամ...

— Լավ, լավ։ Ես հենց այնպես ասացի։ Հանգստացիր, բիչարա։

Կինը դուրս նայեց խցիկից, մի բան ասաց վարորդին։

— Կինս հարցնում է, ուտել ուզո՞ւմ ես,— բացատրեց վարորդը ժպտալով։

— Շատ եմ ուզում,— անկեղծորեն խոստովանեց Աբդիան։— Շնորհակալ եմ։ Թե ձեզ մոտ մի բան կա, տվեք, խնդրեմ, ես ձեզ շատ շնորհակալ կլինեմ։

Աբդիային թվաց, որ մի շիշ ոչխարի մածունն ու օշախի վրա թխած թարմ հացաբլիթը, սպիտակ ու անուշաբույր, իրեն երկնքից են հղված այդ գիշերվա տառապանքի համար։

Ուտելով, Աբդիան պինդ քուն մտավ ոչխարի բրդով լցված հակերի վրա, որոնցից ճարպի ու քրտինքի հոտ էր փչում։ Իսկ մեքենան շարժվում էր տափաստանով, որ դեռ պահպանել էր թարմությունը գիշերվա հորդ անձրևից հետո։ Եվ այդ ճանապարհը Աբդիայի համար օգտակար եղավ, ինչպես ապաքինում ծանր հիվանդությունից հետո։

Նա արթնացավ, երբ մեքենան կանգ առավ։

— Հասանք։ Դու ո՞ւր ես գնում,— խցիկից դուրս գալով, վարորդը կանգնած էր արդեն ետևի կողի մոտ, նայելով թափքի ներսը։— Տղա, դու ո՞ղջ ես։

— Ողջ եմ, ողջ եմ։ Շնորհակալություն,— ձայն տվեց Աբդիան։— Մենք, ուրեմն, արդեն Ջալփաղ-Սազո՞ւմ ենք։

— Այո, կայարանում։ Հիմա մենք կենդանու հումքի պատհաստ ենք գնում, իսկ դու ո՞ւր ես գնում։

— Ես կայարան եմ գնում։ Նորից եմ ձեզ շնորհակալ, փրկեցիք ինձ։ Եվ ձեր կնոջն էլ մեծ շնորհակալություն։ Չգիտեմ ինչ խոսքերով ձեզ շնորհակալ լինեմ։

Վարորդի օգնությամբ թափքից իջնելով, Աբգիան ցավից հառաչեց։

— Դու շատ վատ ես, բիչարա։ Դու գնա հիվանդանոց,— խորհուրդ տվեց Աբգիային վարորդը։— Քեզ մի փայտ է պետք, այն ժամանակ ավելի հեշտ կքայլես։

Մինչև կայարանի շենքը Աբգիան մի կերպ ոտքը քարշ տալով հասավ կես ժամում։ Լավ է դեռ ճանապարհին մի փայտի կտոր գտավ, թևի տակ հարմարեցրեց հենակի նման. այդպես նրա համար ավելի հեշտ եղավ կաղալով շարժվել։

Իսկ երկաթուղիների, ցցաթմբերի, լուսարձակների և ամբարձիչների գլխին, եկող և գնացող գնացքների գլխին, կայարանամերձ հրապարակի գլխին, ավելի ճիշտ, մերձկայարանային ավանի գլխին բարձրախոսից տափաստանով մեկ թնդում էին հրամաններ, հնչում շոգեքարշերի շչակները, ռադիոծառայությունը անդադար հայտնում էր մարդատար գնացքների ժամանելու և մեկնումի մասին։ Աբգիան ամայի վայրում գտնվելուց հետո միանգամից զգաց կյանքի եռուզեռը։ Շուրջն իրար անցած շտապում էին մարդիկ, իրենց գործերով զբաղված։ Ջալփաղ-Սազը զուր չէր համարվում Թուրքեստանի ամենախոշոր հանգուցային կայարաններից մեկը։

Հիմա Աբգիան պետք է վճռեր, թե ինչպես մեկնի, որ գնացքով և, ընդհանրապես, ինչ է անելու գրպանում ունենալով ընդամենը երեսունհինգ ռուբլի։ Իսկ տոմսը մինչև Մոսկվա պլացկարտային վագոնում,— այն էլ եթե տեղեր լինեն,— արժի երեսուն ռուբլի։ Իսկ ինչո՞վ պիտի ապրի։ Ի՞նչ պիտի անի ոտքի, վնասվածքների և վերքերի վիճակը թեթևացնելու համար։ Դիմի տեղի հիվանդանոցի՞ն, թե՞ շտապով մեկնի այստեղից։ Այդ մտքերի մեջ խորասուզված, Աբգիան կաղալով անցավ կայարանի հեղձուցիչ ու մարդաշատ սրահներով։ Պատուված հագուստով, ամբողջապես կապտուկներով ծածկված, հենակի փոխարեն էլ այդ անհե-

թեթ փայտը թևի տակ, նա իր վրա ուշադրություն էր հրավիրում. շատերը շրջվում նայում էին նրա ետևից։ Արդեն դուրս գալով կառամատույց, ուր գնացքների չվացուցակն էր, Աբդիան նկատեց, որ իրեն միլիցիոներ է հետևում։

— Հապա մի սպասիր, տղա,— կանգնեցրեց նրան միլիցիոները մոտենալով։ Նրա զայրացած, խիստ հայացքը ոչ մի լավ բան չէր գուշակում։— Այստեղ ի՞նչ ես անում։ Դու ո՞վ ես։

— Ե՞ս։

— Այո, դու։

— Ոչինչ, ուզում եմ մեկնել։ Չվացուցակն եմ նայում։

— Իսկ փաստաթղթեր ունե՞ս։

— Ի՞նչ փաստաթուղթ։

— Սովորական. անձնագիր, անձնական վկայական, տեղեկանք աշխատանքի վայրից։

— Ունեմ, միայն թե ես այնպես...

— Ներկայացրու, ուրեմն։

Աբդիան շփոթվեց.

— Հասկանում եք, ես այնպես, ընկեր, ընկեր..

— Ընկեր լեյտենանտ,— հուշեց զայրացած միլիցիոները։

— Ուրեմն, ընկեր լեյտենանտ, ես ձեզ պետք է ասեմ...

— Թե ինչ պետք է ասես, դա հետո կիմանանք։ Փաստաթղթերդ տուր։

Աբդիան ոչ միանգամից գրպանից հանեց խոնավ թղթի այն անձև գունդը, որ մի ժամանակ իր անձնագիրն էր։

— Ահա,— մեկնեց նա միլիցիոներին։— Սա իմ անձնագիրն է։

— Անձնագիրը,— միլիցիոները արհամարհանքով նայեց Աբդիային։— Ի՞նչ ես գլուխս տանում։ Բա սա անձնագի՞ր է։ Քեզ պահի, ու գնացինք տեղամասային բաժանմունք։ Այնտեղ կպարզեն քո ով լինելը։

— Բայց ես, ընկեր լեյտենանտ....— ամաչելով իր տեսքից, փայտ-հենակից և արագորեն իրենց շուրջ հավաքվող հետաքրքրասեր մարդկանցից, սկսեց Աբդիան անվստահ,— ես, հասկանում եք, թերթի թղթակից եմ։

Շուրջը հավաքվածները չարախնդորեն ծիծաղեցին.

— Մի տես ի՞նչ մոգոնեց՝ թղթակից է։

— Միգուցե քեզ արտաքին գործերի մինի՞ստր էլ կկոչես։

Սահպված եղավ կաղին տալով հետևել ջղային լեյտենանտին սպասասրահի միջով։ Եվ հիմա արդեն բոլորն, ով հանդիպում էր ճամփին, շրջվում նայում էին Աբդիային, փսփսում էին ու ծիծաղում։ Երբ անցնում էին մի ընտանիքի կողքով, որ իրենց իրերով տեղավորվել էին մեծ փայտե նըստարանին, Աբդիայի ականջին հասան խոսակցության պատառիկներ։

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ։ Մամա, մամա, տես, սա ո՞վ է։

ԿԻՆ։ Օ, աղջիկս, բանդիտ է։ Տեսնո՞ւմ ես նրան բռնել է քեռի միլիցիոները։

ՏՂԱՄԱՐԴԻ ՁԱՅՆ։ Սա ինչ բանդիտ։ Մանր խաբեբա է, գողի մեկը, ուրիշ ոչինչ։

ԿԱՆԱՅԻ ՁԱՅՆ։ Էհ, չասես, Միշա։ Դա տեսքից է էդպես ողորմելի։ Թող մի մութ անկյունում հանդիպի՝ կմորթի...

Սակայն ամենաստոսկալի անակնկալն Աբդիային դեռ սպասվում էր։ Միլիցիոների եռևից ներս մտնելով կայարանամերձ սենյակներից մեկի դռնով, նա հայտնվեց միլիցիայի մի բավական ընդարձակ սենյակում, որի պատուհանը նայում էր դեպի հրապարակ։ Միլիցիայի ցածրաստիճան աշխատողը, որ նստած էր հեռախոսով սեզանի մոտ, լեյտենանտի ներս մտնելուն պես, տեղից բարձրացավ։

— Ամեն ինչ կարգին է, ընկեր լեյտենանտ,— զեկուցեց նա։

— Նստիր, Բեկբուլատ։ Հրեն մի թռած-եկածի էլ եմ բերել,— գլխով Աբդիային ցույց տալով, ասաց լեյտենանտը։— Ճեսնում ես, ինչ գեղեցիկն է։ Համ էլ թղթակից։

Շեմքին կանգնած շուրջը նայելով, Աբդիան քիչ մնաց բղավեր, այնքան որ նրան զարմացրեց տեսածը։ Մուտքի դռան ձախ անկյունում, հատակից մինչ առաստաղ սենյակը բաժանող երկաթյա կոպիտ վանդակապատի եռևում, ճիշտ ինչպես գազանները գազանանոցում, նստած էին բանբերները՝ անաշա բերողները՝ Պետրուխան, Լյոնկան, Մախաչը, Կոլյան, երկու բանբեր-դիվերսները և էլի ինչ-որ տղաներ, ընդամենը մի տասը-տասներկու հոգի, գրեթե ամբողջ խումբը, բացի Գրիշանից։ Ամենան նրանց մեջ չէր։

— Տղաներ, ձեզ ի՞նչ է պատահել։ Դա ինչպե՞ս պատահեց,— ակամա դուրս թռավ Աբդիայի բերանից։

Բանբերներից ոչ մեկը չպատասխանեց։ Նրանք նույնիսկ չշարժվեցին։ Նստել էին վանդակի մեջ հատակին, իրար կիպ կպած, շատ փոխված, օտարացած և մռայլ։

— Չլինի՞ սրանք քո ընկերներն են,— տարօրինակ քըմ-ծիծաղեց ջղային լեյտենանտը։

— Իհարկե,— ասաց Աբդիան։— Սրանք իմ ընկերներն են։

— Ահա՛ թե ինչ,— զարմացավ լեյտենանտը, ուշադիր նայելով Աբդիային։— Սա, ինչ է, ձերոնցի՞ց է,— հարցրեց նա բանբերներին։

Ոչ ոք չպատասխանեց։ Բոլորը լռում էին, աչքերը ցած գցած։

— Էյ, ձեզ հետ եմ, ձեզ եմ հարցնում,— զայրացավ լեյտենանտը։— Ի՞նչ եք լռում։ Ոչինչ, կսպասենք։ Դուք հլա ինձ մոտ կտժտժաք տապակի մեջ գցած ձկան նման, դեռ ինձ կհիշեք, երբ որ ամեն մեկիդ կտան երեք հարյուր տասնյոթ հոգվածով, դեռ կերգեք հեռավոր երկրամասերի մասին։ Ու հույս չունենաք, թե փոքրահասակ ենք, թե դատվածություն չենք ունեցել։ Դա հաշիվ չի։ Այո, այո, հաշիվ չի։ Ձեզ բռնել ենք հանցագործության տեղում,— գլխով ցույց տվեց նա Աբդիային ծանոթ անաշայով լցված ուսապայուսակներն ու ճամպրուկները, որ թափթփված էին հատակին։ Դրանցից մի քանիսը բաց էին, մի քանիսը պատրոտված, տեղ-տեղ անաշան թափվել էր և սենյակում տափաստանային կանեփի ծանր հոտ էր տարածվել։ Սեղանին հեռախոսի կողքին դրված էին պլաստիլինով լցված լուցկու տուփեր և ապակյա սրվակներ։— Լռում են։ Սրա՞նց տեսնք, նեղացել են։ Դուք հանցագործության տեղում եք բռնվել,— կրկնեց լեյտենանտն ավելի խստանալով, և նրա ձայնը զայրույթից զնգզնգաց։— Ահա՛ հանցանշանները։ Ահա՛ իրեղեն ապացույցները։ Ահա՛ ձեր թմրադեղը։— Նա սկսեց ոտքով խփել անաշայով լցված ուսապայուսակներին։— Ձեր ավազակախմբից միայն մի սրիկա դուրս պըր-

ծավ շուրջկալից։ Բայց նա կնստի այս անկյունում վանդակապատի եռև, սրիկանե՛ր։ Ոտքի՛, ո՞ւմ եմ ասում՝ ոտքի՛։ Սրանց տեսեք, նստել են առաք-փառաք։ Կանգնել և նայիլ այս կողմ։ Աչքներդ մի փախցրեք։ Ո՞ւմ է հրամայված նայել ուղիղ։ Ձեզ նման տականքները կրակել են ինձ վրա վագոնների տակից, դուք ինձանից զիջություն չսպասեք։ Սրիկաներ, լակոտներ են, բայց արդեն զինվում են։ Հետո ի՞նչ է լինելու։ Ես ձեր թշնամին եմ ընդմիշտ, իսկ ես պայքարել գիտեմ։ Բոլոր գնացքներում և բոլոր ճանապարհներին պիտի բռնեմ ձեզ, ինչպես կատաղած շների, դուք ոչ մի տեղ չեք կարողանա թաքնվել ինձնից,— կատաղած բղավում էր նա։— Հիմա ձեզ հարցնում եմ, ո՞վ է սա, այս քնձռոտը, որ իրեն որպես թղթակից է ներկայացնում։ Ո՞վ է սա, այս տիպը։— Եվ Աբդիայի ձեռքից քաշելով, մոտեցրեց նրան վանդակապատին։— Պատասխանեք ձեր հոժար կամքով, քանի դեռ չեմ ստիպել։ Սա ձերոնցի՞ց է։

Մի պահ բոլորը լուռ էին։ Եվ նայելով նրանց մռայլ դեմքերին, Աբդիան ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել այն մտքին, որ այդ կտրիճ տղաները, որոնք դեռ երեկ գնացքներ էին կանգնեցնում տափաստանում, կայֆ էին անում ու իրեն ընթացքի ժամանակ դուրս շպրտում վագոնից, հիմա նստած են վանդակի մեջ, առանց տաբատակալների, առանց կոշիկների, ոտաբոբիկ (հավանաբար այդ արվում էր, որպեսզի չփախչեն, երբ դուրս էին տանում պետքերի համար), խղճուկ ու ողորմելի։

— Վերջին անգամ եմ ձեզ հարցնում,— հուզմունքից հևասպառ, հարցը կրկնեց լեյտենանտը։— Այս տիպը, որին ես բռնել եմ, ձերոնցի՞ց է, թե ոչ։

— Ոչ, մերոնցից չի,— չարությամբ պատասխանեց Պետրուխան բոլորի փոխարեն, դժկամությամբ հայացքը դարձնելով Աբդիային։

— Ինչպես թե ձերոնցից չեմ, Պյոտր,— զարմացավ Աբդիան, փայտ-հենակով կիպ մոտենալով վանդակապատին։— Դուք, ինչ է, մոռացե՞լ եք ինձ,— կշտամբեց նրանց, որոնցից իրեն բաժանում էր վանդակը։— Ես ձեզ այնպես եմ խրղճում,— ավելացրեց նա։— Դա ինչպե՞ս պատահեց։

— Այստեղ ձեզ համար ցավակցությունների տեղ չէ,— նրան ընդհատեց լեյտենանտը։— Հիմա ամեն մեկիդ առանձին-առանձին կհարցաքննեմ,— սպառնաց նա բանբերներին։— Ու եթե մեկը սուտ ասի, իսկ դա միևնույն է կպարզվի, նրան ավել ժամկետ կտան։ Դեհ, դու ասա տեսնեմ,— դիմեց նա Մախաչին։

— Մերը չի,— պատասխանեց սա, թաց շրթունքները ծռելով։

— Իսկ հիմա դու,— հրամայեց լեյտենանտը Լյոնկային։

— Մերոնցից չի,— պատասխանեց Լյոնկան և ծանր հառաչեց։

— Մերոնցից չի,— փնթփնթաց շիկամազ Կոլյան։

Եվ բոլորը միահամուռ չճանաչեցին Աբդիային։

Բանբերների արարքը, որքան էլ տարօրինակ է, վիրավորեց Աբդիա Կալիստրատովին։ Այն, որ բոլորը նրանից հրաժարվեցին անվարան, կտրականապես, վիրավորեց ու ստորացրեց նրան։ Աբդիան զգաց, որ վրան տաքություն է գալիս, գանգը տրաքվում է։

— Բայց ինչպե՞ս, ինչպես կարող եք ասել, որ ինձ չեք ճանաչում,— շվարած չէր կարողանում հասկանալ նա։— Ախր ես...

— Ահա թե ինչ, «Նյու-Յորք թայմսի» թղթակից,— ծաղրանքով ընդհատեց նրան լեյտենանտը։— Բավական է ասեք՝ «ախր ես», «ախր դու»։ Դու գիտես ինչ, լավ է գլուխս չտանես։ Առանց քեզ էլ գործ շատ ունեմ։ Թող գնա այստեղից, ինձ մի խանգարի։ Եվ սրանց հետ գործ չունես։ Դրանց նմանների համար օրենք գոյություն ունի, շատ խիստ օրենք՝ թմրադեղեր սարքելու, տարածելու և վաճառելու համար նրանք անմիջապես են դատապարտվում։ Սրանց նմանների հետ երկար գլուխ չեն դնում։ Իսկ դու, թղթակից եղբայր, շուտ գնա այստեղից։ Գնա ու էլ աչքիս չերևաս։

Տիրեց լռություն։ Աբդիա Կալիստրատովը ոտքից ոտքի էր փոխվում, բայց չէր հեռանում։

— Լսեցի՞ր քեզ ինչ ասաց ընկեր լեյտենանտը,— ձայնը բարձրացրեց միլիցիոները, որ այդ ամբողջ ժամանակ ինչ-որ թղթեր էր լրացնում սեղանի մոտ նստած։— Գնա, քանի ոչ չէ։ Շնորհակալ եղիր ու գնա։

— Իսկ այս դռան բանալին կա՞ ձեզ մոտ,— ցույց տվեց Աբդիան երկաթե դռան վրա կախված փականքը։

— Ո՞նց չէ գործն է։ Կա, իհարկե,— պատասխանեց լեյտենանտը՝ լավ չհասկանալով, թե ինչ է ուզում Աբդիան։

— Բացեք, ուրեմն,— ասաց Աբդիան։

— Էլ ինչ կուզես։ Լսիր, ախր դու ո՞վ ես,— վրդովվեց լեյտենանտը։— Ախր ես քեզ...

— Այո, այո, ես էլ հենց ուզում եմ, որ հիմա ինձ նրա-տեցնեք այնտեղ։ Իմ տեղն այնտեղ է։— Աբդիայի դեմքն այլևս էր, վրան նորից կատաղություն էր եկել, ինչպես այն ժամանակ վագոնում, երբ քամուն էր տալիս թանկարժեք անաշան։— Ես պահանջում եմ, որ ինձ բանտարկեն և դատեն,— բղավում էր Աբդիան,— ինչպես այս դժբախտներին, որ մոլորվել են աշխարհում, ուր այնքան հակասություններ, այնքան չարիք կա։ Ես նույնպիսի պատասխանատվություն պետք է կրեմ, ինչպես նրանք։ Չէ որ ես էլ եմ նույն բանն արել, ինչ նրանք։ Դուռը բացեք և ինձ նստեցրեք նրանց հետ։ Դատարանում նրանք կհաստատեն, որ ես էլ մեղավոր եմ իրենց նման։ Մենք մեր մեղքերը կխոստովանենք և դա մեզ հանգստություն կբերի...

Այստեղ միլիցիոները մի կողմ դրեց թղթերն ու տեղից վեր թռավ։

— Ախր սա խելագար է, ընկեր լեյտենանտ։ Մի դրան նայեք։ Իսկույն երևում է, որ անհորմալ է։

— Իմ խելքը տեղն է,— առարկեց Աբդիան։— Եվ ես սրանց հետ հավասար պատիժ պիտի կրեմ։ Ո՞րն է իմ խելագարությունը։

— Սպասիր, սպասիր,— սկսեց տատանվել լեյտենանտը։ Հավանաբար, տրանսպորտային միլիցիայում իր ողջ դժվարին աշխատանքի ընթացքում նա դեռ այսպիսի արտառոց դեպք չէր տեսել. ում պատմես, չեն հավատա։

Տիրեց լռություն։ Եվ այդ ժամանակ մեկը հեծկլտաց, հետո արցունքից խեղդվելով, հեկեկաց։ Դա լալիս էր Լյոնկան՝ երեսը պատին դարձրած։ Պետրուխան փակում էր նրա բերանն ու սպառնալից ինչ-որ բան էր շշնջում ականջին։

— Ահա թե ինչ, ընկեր,— հանկարծ մեղմանալով ասաց Աբդիային լեյտենանտը։— Գնանք խոսենք, ես քեզ շատ

ուշադիր կլսեմ, միայն թե ուրիշ տեղ։ Գնանք խոսենք։ Գնանք, գնանք, լսիր ինձ։

Եվ նրանք նորից դուրս եկան սպասասրահ, որ լեփ-լեցուն էր ամեն տեսակի ուղևորներով։ Լեյտենանտը Աբդիային մոտեցրեց մի ազատ նստարանի, առաջարկեց նստել ու ինքն էլ նստեց կողքին։

— Քեզ շատ եմ խնդրում, ընկեր,— անսպասելի մտերմաբար ասաց նա,— մեզ մի խանգարիր, թող աշխատենք։ Իսկ թե մի բան էլ այնպես չէ, մի ջղայնացիր։ Շատ դժվար է մեր աշխատանքը։ Ահա ինքդ էլ տեսար։ Ես քեզ խնդրում եմ, մեկնիր ուր գնալու ես։ Դու ազատ ես։ Միայն թե այլևս մեզ մոտ չգաս։ Հասկացա՞ր, այո՞։

Ու մինչ Աբդիան մտքերն էր ժողովում, թե լեյտենանտին ինչպես բացատրի իր արարքը ու ինչպես հասկացնի իր նկատառումները բանտարկված բանբերների վիճակի վերաբերյալ, վերջինս տեղից վեր կացավ ու մարդկանց արանքներով հեռացավ դնաց։

Ուղևորները պարապուրթյունից դարձյալ սկսեցին խեթ նայել Աբդիային. չափազանց էր նա աչքի ընկնում այս այլազան բազմութթյան մեջ։ Ծեծված, դեմքը կապտուկնեռով ծածկված, պատառոտված հագուստով, հենակի փոխարեն մի տախտակ թևի տակ՝ Աբդիան մարդկանց մեջ հարուցում էր հետաքրքրութթյուն և արհամարհանք։ Եվ հետո, նրան նոր այստեղ էր բերել միլիցիոները։

Իսկ Աբդիան գնալով վատանում էր... Ջերմութթյունը բարձրանում էր և գլուխը ցավում էր անտանելի կերպով։ Նախորդ օրվա իրադարձութթյունները, դիշերվա հորդ անձրևը, ուռած և իրեն չենթարկվող ոտքը, և, վերջապես, նոր ու անսպասելի հանդիպումը բանբերների հետ, որոնց հիմա սոսկալի հատուցում էր սպասվում իրենց հանցագործութթյան համար, այդ ամենը, բնականաբար, անհետ չանցավ Աբդիան սկսեց սարսռալ, մեկ դողում էր, մեկ ուժեղ ջերմում։ Նստել էր կուչ եկած, գլուխն ուսերի մեջ քաշած, ուժ չունենալով տեղից վեր կենալու։ Ջարաբաստիկ հենակն ընկած էր ոտքերի մոտ։

Նվ մեկ էլ Աբդիայի անկենդան հայացքի առջև ամեն ինչ լողաց, ինչպես մշուշի մեջ։ Ճապաղվելով, կորցնելով հստակ ուրվագծերը, մարդկանց դեմքերն ու մարմինները ձգվում էին, կծկվում, իրար վրա շարվում։ Աբդիայի սիրտը խառնում էր, մտքերը խառնշտվում էին, շնչառությունը դժվարացել էր։ Աբդիան նստել էր այդ վիճակում տոթ, հեղձուցիչ մարդաշատ սրահում պատահական մարդկանց մեջ։ «Օյ, ինչքան վատ եմ ես,— մտածում էր նա։— և ինչ տարօրինակ արարածներ են մարդիկ։ Ոչ մեկը ոչ մեկին պետք չէ։ Ինչ դատարկություն է շուրջս, ինչ անջատվածություն»։ Աբդիան կարծում էր, որ այդ վիճակը շուտով կանցնի, որ նա նորից կվերգտնի իրեն ու այն ժամանակ կփորձի ինչ-որ չափով օգնել նրանց, ում բանտարկություն էր սպասվում։ Այն, որ նրանք դեռ երեկ իրեն դուրս էին գցում գնացքից ընթացքի ժամանակ, վստահ, որ նա չարդուփշուր կլինի կմահանա, հիմա երկրորդ պլան էր մղվել։ Այդ հանցագործները, սրիկաները, բուլթ մարդասպանները պետք է որ նրա մեջ ատելություն առաջացնեին, վրեժխնդիր լինելու ցանկություն, ոչ թե կարեկցանք։ Սակայն իդեալիստ Աբդիա Կալիստրատովը չէր ուզում կյանքի դասերը յուրացնել, և ոչ մի տրամաբանություն այս դեպքում չէր օգնում։ Ենթագիտակցաբար նա հասկանում էր, որ անաշա բերողների պարտությունը՝ դա և իր պարտությունն էր, բարին կրող այլասիրության դաղափարի պարտությունը։ Նրա ուժերից վեր եղավ ազդել անաշա բերողների վրա, նրանց սարսափելի վիճակից փրկելու համար։ Բայց և միաժամանակ նա չէր կարող չհասկանալ, թե որքան խոցելի է ինքը ամեն ինչ նեղող իր էությամբ, թե ինչպիսի ճակատագրական հետևանքների դա կարող է հասցնել...

Բայց և այնպես, բարի մարդիկ կան աշխարհում, այդպիսիները գտնվեցին և կայարանում հավաքված պատահական մարդկանց մեջ։ Մի տարեց կին, ճերմակած մազերով, շալով փաթաթված, որն իր իրերով նստած էր Աբդիայի դիմացի նստարանին, հավանաբար հասկացավ, որ այդ մարդն իրեն վատ է զգում և օգնության կարիք ունի։

— Քաղաքացի,— ուզում էր սկսել նա, բայց իսկույն էլ հարցրեց մայրաքար.— Տղաս, քեզ վա՞տ ես զգում։ Հո հիվանդ չե՞ս։

— Կարծես հիվանդ եմ, բայց դուք մի անհանգստացեք,— փորձեց ժպտալ Աբդիան։

— Ինչպե՞ս չանհանգստանամ։ Վա՛յ, տեր աստված, դու ընկե՞լ ես, ինչ է։ Ու տաքուբյունդ էլ շատ բարձր է,— ասաց նա Աբդիայի ճակատին ձեռք տալով։— Աչքերդ էլ շատ ու շատ հիվանդ են։ Տղաս, դու տեղիդդ չշարժվես, չգնաս ոչ մի տեղ, իսկ ես հիմա կիմանամ, միգուցե այստեղ բժիշկ կա, կամ էլ գուցե քեզ հիվանդանոց կտանեն։ Քեզ այսպես թողնել չի կարելի...

— Ոչինչ, դուք մի անհանգստացեք, չարժե,— ասում էր Աբդիան թուլացող ձայնով։

— Ոչ, ոչ։ Դու մի քիչ նստիր էստեղ։ Ես հիմա, իսկույն... Կողքին նստած փոքր երեխաներով կնոջը խնդրելով, որ նայի իր իրերին, սրտացավ կինը գնաց ինչ-որ տեղ։

Ինչքան նա բացակայեց, Աբդիան չէր հիշում։ Նա բոլորովին վատացավ։ Հիմա հասկացավ, թե ինչու կոկորդը սոսկալի ցավում էր։ Անկարող էր նույնիսկ թուքը կուլ տալ։ «Հավանաբար անգինա է»,— մտածեց Աբդիան։ Նա այնքան էլ թուլացել, որ ուզում էր պառկել, փռվել հենց հատակին, թեկուզ իրեն կոխկրտեն, ու մոռացության մեջ ընկնել, մոռանալ, մոռանալ...

Աբդիան արդեն սկսել էր նիրհել, երբ մեկ էլ սպասարահի բազմությունը հանկարծ իրար անցավ, ձայների աղմուկ լսվեց։ Աչքերը բացելով, նա տեսավ, որ միլիցիայի սենյակից դուրս են բերում բանբերներին։ Դրանց ամեն կողմից շրջապատել էին միլիցիոներները։ Ջղային լեյտենանտը քայլում էր առջևից. մարդիկ ետ էին քաշվում ճանապարհ տալով, լեյտենանտի ետևից գնում էին բանբերները, ձեռնաշղթայված։ Նրանք քայլում էին պահակների ուղեկցությամբ մեկը մյուսի ետևից՝ Պետրոսյան, Մախաչը, Լյոնկան, Կոլյան, երկու դիվերսիոները և մյուսները, ընդամենը տասը հոգի։ Նրանց դուրս էին տանում կայարանից։

Իր վրա ուժ գործադրելով, Աբդիան դժվարությամբ բարձրացրեց հենակը և ընկավ նրանց ետևից։ Նրան թվում

էր, որ ինքը շատ արագ է քայլում, բայց չդիտես ինչու այդպես էլ չկարողացավ հասնել պահակախմբով տարվողներին։ Հավաքված հետաքրքրասերները նույնպես խանգարում էին Աբդիային հասնել բանբերներին։ Սակայն նա տեսավ ինչպես նրանց տարան. կայարանի դռան մոտ կանգնած էր փակ մեքենա եռաձի վանդակապատ դռնով, երկու միլիցիոներ նրանց մեկ-մեկ բռնում էին ու գցում մեքենայի ներսը։

Հետո մեքենա նստեցին պահակները և դռնակը փակվեց։ Խցիկում վարորդի կողքին նստեց լեյտենանտը, և մեքենան հեռացավ կայարանամերձ հրապարակից։ Մարդիկ զանազան ենթադրություններ էին անում։

— Բանդիտներ են բռնել։ Մի մեծ խումբ։

— Երևի հենց նրանք են, որ մտնում էին տներն ու մարդկանց սպանում։

— Վա՜յ, սարսափելի է։

— Սրանք ինչ բանդիտ։ Լակոտներ էին։

— Ասում ես՝ լակոտնե՞ր։ Հիմիկվա լակոտներն ում ասես կսպանեն ու հետ պետքներն էլ չի լինի։

— Չէ, չէ, բարի մարդիկ, սրանք անաշա բերողներ էին։ Նրանցից, որ այս տեղերով թաքուն անաշա են անցկացնում։ Ինչքան են դրանց նմաններին բռնում ապրանքատար գնացքներում...

— Բռնես-չբռնես, էլի գալիս են...

— Ախր սա ինչ բան է...

Այսպես ավարտվեց բանբերների տխուր պատմությունը, եվ Աբդիան իր հոգում անբացատրելի ամայություն էր զգում...

Լավ չհասկանալով, թե ինքն առաջ որտեղ էր նստած, Աբդիան սկսեց քարշ գալ սպասասրահում։ Շարժվում էր ինքն էլ չիմանալով դեպի ուր, դժվարությամբ ոտքերը քարշ տալով, և հանկարծ հանդիպեց այն նույն ճերմակահեր կնոջը։

— Ահա, ահա նա,— ասաց կինը սպիտակ խալաթով բուժքրոջը։— Ախր ուր էիր գնացել, տղաս, մենք էլ քեզ ենք որոնում։ Բուժքույրն էլ եկել է։ Դու երևի բարձր ջերմություն

ունես, նրանք վախենում են, որ հանկարծ վարակիչ հիվանդություն լինի։

— Ջեմ կարծում,— թույլ ձայնով պատասխանեց Աբդիան։

Բուժքույրը շոշափեց Աբդիայի ճակատը։

— Ջերմությունը բարձր է,— ասաց նա։— Իսկ փորլուծություն ունե՞ս։ Նեխահոտով փորլուծություն,— ճշտեց նա։

— Ոչ։

— Միևնույն է։ Պետք է գնանք բուժկայան։ Այնտեղ բժիշկն էլ քեզ կնայի։

— Ես պատրաստ եմ։

— Իսկ ո՞ւր են ձեր իրերը։

— Իրեր չունեմ...

4

Ջալփաղ-Սազի կայարանային հիվանդանոցում, ուր պառկեցրին Աբդիա Կալիստրատովին, բժիշկ Ալիյա Իսմայիլովան, մոայլադեմ ղազախուհին, նայեց հիվանդին, ասաց խստորեն.

— Ձեր վիճակը բավական բարդ է։ Ոտքի վնասվածքը պետք է մասնագետ նայի։ Իսկ առայժմ կբուժենք անտիբիոտիկներով, որպեսզի վարակումը չտարածվի։ Սակայն դուք, հիվանդ, ինձ պետք է պատմեք ձեզ հետ պատահածը, ամեն ինչ։ Ես հարցնում եմ ոչ թե հետաքրքրասիրությունից, այլ որպես բժիշկ...

Շատ ու շատ հանդիպումների և բաժանումների մեջ, կյանքում գեթ մի անգամ լինում է հանդիպում, որը չես կարող կոչել այլ կերպ, քան Աստծու կողմից առաքված։ Սակայն որքան մեծ է վտանգը, որ նման հանդիպումը կարող է մնալ անհետևանք, որ մարդն այդ կհասկանա հետո միայն, և այնժամ մի պահ պիտի սարսափի մտածելով, որ գուցե այդ հանդիպումը զուր անցավ...

Նման մի բան էլ կատարվեց Աբդիա Կալիստրատովի հետ։ Երրորդ օրը երեկոյան հիվանդանոց եկավ նա՝ այն կինը, որի մասին կարող էր երազել միայն, քանի որ

չգիտեր ով է նա, իսկ երազել չէ՞ որ կարելի է աշխարհում ամեն բան...

Ցերեկը սրսկումներից և դեղահաբերից ջերմությունը մի քիչ իջել էր և երեկոյան արդեն երեսունյոթ և երեքից չբարձրացավ։ Սակայն ոտքի ուռածությունը դեռ չէր անցել, և աջ կողմի մի կողը, պարզվեց, կոտրված էր, ռենտգենը ճաքվածք ցույց տվեց։ Իսկ ընդհանուր առմամբ դեպի լավն էր գնում։ Իր սուբյեկտիվ ինքնազգացությունից Աբդիան չէր կարող բողոքել։ Բժիշկ Ալիյա Իսմայիլովան բուժող դուրս եկավ այդ բառի բուն իմաստով, որ ապաքինում էր ոչ միայն գիտելիքներով, այլև իր տեսքով, պահվածքով։ Նրա բոլոր նշանակումները, հենց խոսելու ձևը հիվանդին հանգստություն և վստահություն էին ներշնչում, օգնում էին դիմադրելու հիվանդությանը։ Նրա հոգեբուժությունը չափավոր էր և իմաստուն, և Աբդիան իր գլխին եկած այդ բոլոր բարդություններից ու ցնցումներից հետո, հատկապես սուր էր զգում, թե որքան անհրաժեշտ է հաճախ մարդու համար մարդկային հոգատարությունն ու ուշադրությունը։ Անկեղծ ասած, նա նույնիսկ ուրախ էր, որ հիվանդացել էր ու ընկել լավ բժշկի ձեռք, այնքան որ խաղաղ ու լավ էր նրա համար փոքրիկ այգում գտնվող կայարանային այդ համեստ ու հանդիստ հիվանդանոցում։

Դեպի ծառուղի նայող սպիտակ վարագույրներով պատուհանը կիսաբաց էր։ Շոգը դեռ չէր անցել։ Հիվանդասենյակի երկու հարևանները դուրս էին եկել բակ ծխելու և օդ շընչելու, իսկ Աբդիան պառկած էր մենակ ու շուտ-շուտ իր ջերմությունն էր չափում։ Նա շատ էր ուզում, որ ջերմությունը նորից բարձրանա։ Պատուհանի կողքով կանացի կրունկների կտկտոց լսվեց և մի կանացի ձայն հարցրեց նրա մասին հերթապահ քրոջից։ Ո՞վ կարող էր լինել այդ կինը։ Ձայնը Աբդիային ծանոթ թվաց։ Շուտով քույրը բացեց հիվանդասենյակի դուռը։

— Ահա նա այստեղ է պառկած։

— Բարև ձեզ,— ասաց այցելուն։— Դո՞ւք եք կալիստրատովը։

— Ես եմ,— աչքերին չհավատալով, պատասխանեց Աբդիան։

Դա հենց նա, Աբդիայի երևակայությունը ցնցած աղջիկն էր, որ մոտոցիկլետով եկել էր Ուչկուդուկ։ Աբդիան այնպես շփոթվեց, որ գրեթե չէր լսում նրան, ասածի իմաստը կռահում էր այն պատճառով, որ վաղուց պատրաստ էր կես խոսքից հասկանալու նրան։ Պարզվեց, որ աղջկան կոչում են Ինգա Ֆյոդորովնա։ Եվ եկել էր այստեղ այն պատճառով, որ Ալիյա Իսմայիլովան, որի հետ մտերմություն է անում արդեն երրորդ տարին, այն ժամանակից, ինչ եկել է այստեղ գիտական աշխատանքով զբաղվելու, նրա մասին շատ է պատմել և, բնականաբար, դա իրեն խիստ հետաքրքրել է, քանի որ երկուսն էլ, այսինքն՝ նա, Աբդիան, և ինքը, Ինգա Ֆյոդորովնան զբաղվում են բավական մոտ խնդիրներով, անաշայի հետ կապված խնդիրներով. ինքն զբաղվում է Մոյնկումյան տափաստանում աճող այդ բույսի ուսումնասիրությամբ,— դրան հաջորդում էր ինչ-որ բարդ լատինական անվանումը նույն այդ տափաստանային կանեփ-անաշայի,— ուստի եկել է ծանոթանալու Աբդիայի հետ և իմանալու՝ արդյո՞ք նրան զանազան տեղեկություններ պետք չեն... Չէ որ լրագրողին, որքան հասկանում է, պետք են և գիտական տեղեկություններ։

Տե՜ր Աստված, էլ ինչ գիտական տեղեկություններ, երբ կնոջ անսպասելի հայտնվելուց ցնցված, նա հրաշքով միայն կարողանում էր կռահել, թե խոսքն ինչի մասին է, և տեսնում էր միայն նրա աչքերը, ու թվում էր նրան այդ պահին, որ ուրիշ ոչ ոք այլևս այդպիսի աչքեր չունի. այդպես աստղագետն է հանկարծ հայտնագործում անհայտ մի աստղ միլիոնավոր նման աստղերի մեջ, իսկ չէ որ անհրաժեշտ մարդու համար բոլոր աստղերը բացարձակապես միանման են։ Նա, թվում էր, ոգևորվել, սլացքի մեջ էր այդ կնոջ հայացքից միայն...

Այդ բոլորը Աբդիան տեղը բերեց հետո, մնալով մենակ ու մի քիչ խաղաղվելով, իսկ առաջին պահերին կատարյալ ապուշի էր նման։ Ճիշտ է, Ինգա Ֆյոդորովնան կարող էր այդ վերագրել բարձր ջերմությանը։ Չէ որ ապուշը միայն կարող էր միանգամից ասել. «Դուք ինչպե՞ս իմացաք, որ ես շարունակ ձեր մասին էի մտածում»։ Ի պատասխան կինը միայն զարմանքով հոնքերը վեր քաշեց, որից ավելի դեղեցկացավ,

ու խորհրդավոր ժպտաց։ Եթե նա այդ անհեթեթության հասնող միամիտ իր խոսքերն ընդուներ որպես տափակություն կամ գռեհկություն, ինչպես պիտի հետո տանջվեր ու անիծեր իրեն Աբդիան։ Սակայն Աստված ողորմած է, կինը բավականաչափ նրբանկատություն ունեցավ նրա խոսքերին առանձին նշանակություն չտալու։ Եվ նրանք հաճույքով հիշում էին, թե ինչպես նա եկավ Ուչկուդուկ, ինչպես առաջին անգամ հանդիպեցին, և ծիծաղեցին այն թուրքիկ, բայց երկուսի հիշողության մեջ էլ մնացած դեպքի վրա։ Իսկ Է՛լ ավելի զվարճացրեց Ինգա Ֆյոդորովնայի այն պատմությունը, թե ինչպես մի օր հետո երկու փորձված բանբերները, Պետրուխան և Լյոնկան, թաքնվել էին խոտերի մեջ, երբ տափաստանի գլխին ուղղաթիռ երևաց։ Պարզվում է այդ ուղղաթիռով մի փոքր գիտական արշավախմբի հետ Ինգա Ֆյոդորովնան էր թռչում Տաշքենդից. Տաշքենդի գիտահետազոտական ինստիտուտներից մեկն զբաղվում է կանեփ-անաշայի քիմիա. կենսաբանական ոչնչացումով նրա աճման հիմնական վայրերում։ Հիմա Աբդիայի համար պարզ դարձավ, որ այդ չարիքի դեմ պայքարը մղվում է երկու ուղղությամբ՝ թմրամոլության վերացումով և թմրադեղանյութեր պարունակող բույսերի ոչնչացումով։ Եվ, ինչպես լինում է աշխարհում, այդ խնդիրները լուծելն այնքան էլ հեշտ չէր։ Ինգա Ֆյոդորովնայի բացատրություններից ստացվում էր, որ միանգամայն հնարավոր է գտնել քիմիական նյութ, որ կանեփը ոչնչացնի ոչ միայն վեգետացիայի փուլում, այլև որպես տեսակ, նրա բազմացման սիստեմին հարված հասցնելով, սակայն այս մեթոդն իր հետ ավելի մեծ չարիք է բերում. այն քայքայում է հողը և առնվազն մի երկու հարյուր տարով շարքից դուրս հանում։ Կործանել բնությունը հանուն թմրամոլության դեմ պայքարի՝ դա էլ լուծում չէ։ Ինգա Ֆյոդորովնայի խնդիրն էր հենց հետազոտություններ կատարել լավագույն միջոցներ գտնելու էկոլոգիական այդ բարդ խընդրի լուծման համար։ Տե՛ր Աստված, մտածեց Աբդիան, եթե բնությունը օժտված լիներ մտածողությամբ, որպիսի ծանր մեղավորության զգացում պիտի ունենար վայրի աճող բուսականության և մարդու բարոյական դեգրադացիայի այս ահավոր փոխադարձ կապի համար։

* * *

Ինգա Ֆյոդորովնայի հետ առաջացած հարաբերությունները անվանելով «նոր ժամանակաշրջան իր կյանքում», Աբդիա Կալիստրատովը ոչ մի ռոմանտիկական չափազանցություն չէր անում։ Պրիօկսկ վերադառնալու ճիշտ հաջորդ օրը նա նրան մի երկար նամակ գրեց, և դա այն դեպքում, երբ երկաթուղային յոթաքանչյուր կայարանից, ուր գնացքը հինգ րոպեից ավելի էր կանգ առնում, նրան բացիկ էր ուղարկում։ Հիրավի անսահման, սիրահարության սովորական հասկացողության մեջ չտեղավորվող մի բան կար զգացմունքների այն լարումի, այն կրքի մեջ, որ զգում էր Աբդիան իր կյանքի ճանապարհին Ինգա Ֆյոդորովնային հանդիպելու օրից ի վեր։

Նա գրում էր նրան. «Թե ինչ է կատարվում ինձ հետ, անհնարին է պատկերացնել։ Ես ինձ համարում էի բավական զուսպ մարդ, կարծում էի, որ ողջախոհությունն ու հույզերն իմ մեջ անհրաժեշտ հավասարակշռության մեջ են, իսկ հիմա անկարող եմ ինձ հասկանալ։ Ի դեպ, ինձ համար էլ զարմանալի կերպով, չեմ ուզում որևէ բան հասկանալ։ Ես ամբողջապես մի չտեսնված երջանկության մեջ եմ, որ վրաս է թափվել լեռնային ձնահյուսի նման, մի վավերական ֆիլմում տեսել եմ, ինչպես սպիտակ ձնահյուսը ամեն ինչ սրբում ոտնում է իր ճամփին, և ես երջանիկ եմ, որ այդ հեղեղը թափվել է ինձ վրա։ Աշխարհում չի եղել ու չկա ինձ նման երջանիկ ուրիշ մեկը, միայն իմ բախտն այդպես բերեց, ու ես դափ զարկող ու թռչկոտող ֆանատիկոս վայրենու նման շնորհակալ եմ ճակատագրից բոլոր այն տառապանքների համար, որ վիճակվեց ինձ այս ամռանը, չէ որ ճակատագիրն ինձ կենդանի թողեց, հնարավորություն տալով հասկանալու այն, ինչ հնարավոր է հասկանալ միայն կյանքի հորձանուտում։ Ես կասեի, որ սերը, մի անհատի շրջանակներում, իսկական հոգու հեղափոխություն է։ Իսկ եթե այդպես է, ուրեմն՝ կեցցե հոգու հեղափոխությունը... Կործանող և վերածնող միաժամանակ։

Ներիր, Ինգա, մտքերիս այս շփոթի համար։ Բայց ես

սիրում եմ քեզ, և չունեմ ոչ ուժ, ոչ բառեր արտահայտելու, թե ինչ ես դու ինձ համար...

Հիմա թույլ տուր շունչ առնեմ։ Ես արդեն եղել եմ խմբագրությունում։ Կարճ պատմեցի ամեն ինչ։ Ինձ շտապեցնում են, որ ակնարկս գրեմ, սպասում են ակնարկիս։ Հնարավոր է նույնիսկ, որ մի ակնարկաշարք ստեղծվի այդ հրատապ թեմայով։ Եվ եթե իմ սպասումներն արդարանան, կարող եմ հույս ունենալ մշտական աշխատանքի լրագրում։ Սակայն առայժմ վաղ է այդ մասին խոսել։ Գլխավորը, վաղվանից պատրաստվում եմ սկսել աշխատանքս։ Չէ որ դիտավորյալ կերպով ոչ մի գրառում չեմ արել։ Սոխակած եմ ամեն ինչ հերթականությամբ վերականգնել հիշողությամբս։

Ամեն դեպքում, բանբերների ճակատագիրը, որոնց, միանգամայն օրինական կերպով, սպասվում է արդարացի և խիստ դատավճիռ թմրադեղանյութեր տարածելու համար, ինձ հանգիստ չի տալիս։ Քանի որ նրանք ինձ համար կենդանի մարդիկ են իրենց դառն, խեղված ճակատագրերով։ Առանձնապես խղճում եմ Լյոնկային։ Կործանվում է տղան։ Եվ ահա այստեղ առաջ է գալիս այն բարոյական խնդիրը, որի մասին այնքան շատ ենք խոսել մենք, Ինգա։ Դու միանգամայն իրավացի ես, Ինգա, որ մարդկային ամեն մի չարագործություն, ամեն մի հանցագործություն աշխարհի ամեն մի կետում, վերաբերում է մեզ բոլորիս, նույնիսկ, երբ մենք գտնվում ենք հեռու և չգիտենք այդ մասին ու չենք ուզում ոչինչ իմանալ։ Եվ, ինչու չխոստովանենք, հաճախ նույնիսկ ծիծաղում ենք. իբր տեսեք, թե ինչ օրի են հասել նրանք, որոնց մենք ըստ սովորության կոչում ենք մեր հակառակորդներ։ Սակայն լրագրերը ճիշտ են անում, որ գրում են մեր սահմաններից դուրս կատարվող հանցագործությունների մասին, դրանում մեծ իմաստ կա։ Քանզի աշխարհում գոյություն ունի մարդկային դժվարությունների մի ընդհանուր բալանս, մարդիկ միակ մտածող էակներ են տիեզերքում, և նրանց այդ հատկությունը՝ ուզում ենք մենք այդ, թե ոչ, վեր է այն ամենից, ինչ նրանց բաժանում է։ Ու մենք կհանգենք դրան, հակառակ մեր բոլոր հակասությունների, ու դրանում է բանականության փրկությունն աշխարհում։

Որքան ուրախ է սիրտս, Ինգա, չէ որ կարող եմ գրել քեզ այն մասին, ինչ շատ է հուզում հոգիս, քանի որ համապատասխան արձագանք կգտնեմ քո հոգում, ես համոզված եմ դրանում։ Վախենում եմ միայն ձանձրացնեմ քեզ իմ անվերջանալի նամակներով, ուզում եմ գրել անվերջ, իրար հետևից, առանց դադար տալու, այլապես չեմ դիմանա։ Ամբողջ ժամանակ պետք է քեզ հետ լինեմ, գոնե մտովին։ Ինչքան կուզեի հիմա նորից հայտնվել Մոյընկումի տափաստանում ու նորից տեսնել քեզ առաջին անգամ այն նույն մոտոցիկլետով, որով եկար Ուչկուդուկ ու միանգամից գերեցիր ինձ, եկեղեցական նորամտածողության պաշտպանին։ Ամաչում եմ խոստովանել, բայց այնքան էի ցնցված քո հայտնվելուց, որ հիմա էլ չեմ կարողանում ազատվել երկչոտության ու հրճվանքի զգացումից։ Դու իջար երկնքից, ինչպես աստվածուհի ժամանակակից կերպարանքով...

Ես հիմա հիշելով այդ, չեմ կարողանում ներել ինձ, որ երբ առիթ ունեցա առնչվելու բանբերների հետ, չկարողացա անել այնպես, որ մարդկային տառապանքների բալասանում, թեկուզ չնչին չափով, պակասեր վատը և ավելանար լավը։ Ես հույս ունեի, որ նրանք կվախենան Աստծուց, սակայն փողը նրանց համար առավել էր ամեն ինչից։ Ես ահա հիմա ինձ տանջում եմ այն միտքը, թե ինչպես օգնեմ գոնե նրանց, այն բանբերներին, որոնց հանդիպել էի ճակատագրի բերումով և որոնց հետ շփվելու ինչ-որ փորձ ունեի։ Ես նկատի ունեմ նախ և առաջ զղջումը։ Ահա թե ինչ ճանապարհ էի ուզում ես նրանց ցույց տալ։ Զղջումը, մարդկային հոգու պատմության մեծագույն նվաճումներից մեկը, մեր օրերում վարկաբեկվել է։ Այն, կարելի է ասել, լրիվ դուրս է եկել ժամանակակից մարդու բարոյական աշխարհից։ Սակայն մարդն ինչպես կարող է մարդ լինել առանց զղջման, առանց այն ցնցումի ու մտքի պայծառացման, որին հասնում է իր մեղքի գիտակցման միջոցով՝ լինի դա գործողությամբ, մտովի, թե ինքնախարազանմամբ կամ ինքնատապարտմամբ... Ճանապարհը դեպի ճշմարտություն՝ ամենօրյա ճանապարհ է դեպի կատարելություն...

Օ, Աստված, դարձյալ իմն եմ կրկնում։ Ներիր ինձ, Ինգա։ Այս ամենն այն պատճառով է, որ զգացմունքները խեղդում

են ինձ, այն պատճառով, որ շարունակ մտածում եմ քո մասին։ Ինձ միշտ թվում է, թե չեմ ասել նույնիսկ մի հազարերորդականը այն ամենի, ինչ կուզեի ասել քեզ...

Որքան կուզեի շուտ, հնարավորին չափ շուտ,— չէ որ արդեն մի ամբողջ շաբաթ է իրարից հեռու ենք,— նորից տեսնել քեզ...

Եվ այդ սաստկացող կարոտը միակ բանն է, որի մասին մտածում եմ։ Մնացած բոլոր կենցաղային խնդիրները մի հրաշքով հանկարծ կորցրին իրենց նշանակությունը, ու հիմա կարևոր չեն թվում ինձ...»։

* * *

Արդեն հուլիսի վերջերն էր, և եկավ այն օրը, երբ հեռացա թերթի խմբագրությունից ընկճված։ Ջափազանց վըշտացած էի, որովհետև իմ տափաստանային ակնարկների նկատմամբ խմբագրի վերաբերմունքը հանկարծ փոխվել էր։ Եվ խմբագրության իմ ընկերներն էլ, որ ինձ քաջալերում էին մեկնել հրատապ նյութ բերելու, հիմա նույնպես իրենց տարօրինակ էին պահում, կարծես ինչ-որ բանով մեղավոր լինեին իմ առջև։

Իսկ ինձ համար դա շատ ծանր է։ Երբ զգում եմ, որ մարդիկ մեղավորություն են զգում իմ հանդեպ, ինձ համար դա այնքան տառապալից է, որ ուզում եմ նրանց շտապով ազատել խղճի խայթերից, որպեսզի ինձ տեսնելիս իրենց անհարմար չզգան։ Քանի որ ես ինքս եմ ինձ մեղավոր զգում նրանց մեղքի համար...

Խմբագրությունից դուրս գալով, ինքս ինձ խոսք տվեցի այլևս չվերադառնալ այնտեղ և ոչ մեկի աչքին չերևալ. թող իրենք կանչեն, եթե պետք լինեմ։ Իսկ եթե պետք չեմ, ուրեմն այդպես պիտի լինի։ Կիմանամ, որ ոչինչ չստացվեց և ոչնչի հետ հույս չեմ կապի։

Քայլում էի ռուսաստանյան ամռան այդ ամենագեղեցիկ ժամանակ ծառապատ փողոցով, ու ոչինչ ինձ չէր ուրախացնում։ Որքան ուժ և ջանք գործադրեցի իմ այդ տափաստանային ակնարկները գրելու համար, իմ քաղաքացիական ցավն արտահայտելու համար, գրում էի դրանք որպես

հայտնություն և խոստովանություն, բայց ահա ինչ-որ նկա-տառումներ միջտեղ եկան երկրի հեղինակության վերաբեր-յալ (պատկերացրեք միայն, թե հանուն ինչի ենք մենք գաղտնիքներ ստեղծում ինքներս մեզ համար), որոնք սպառ-նում են լույս աշխարհ չհանել իմ այդպիսի դժվարությամբ ձեռք բերված ակնարկները։ Չեմ կարող ասել, թե որքան ցավալի էր դա ինձ համար։ Եվ որ ամենատարօրինակն է, խմբագիրը թույլ տվից իրեն ասել.

— Սակայն, պետք է մտածել, միգուցե արժե այս ամենը զեկուցագրի ձևով շարադրել վերադաս օրգաններին ներկա-յացնելու համար։ Որպեսզի համապատասխան միջոցներ ձեռք առնեն։

Այո, այդպես էլ ասաց.

Իսկ ես չդիմացա և առարկեցի նրան.

— Մինչև երբ մենք պետք է ասենք, որ նույնիսկ աղետ-ները մեզ մոտ ամենալավն են։

— Ինչ կապ ունեն աղետները,— մռայլվեց խմբագիրը։

— Այն կապը, որ թմրամոլությունը սոցիալական աղետ է։

Այդ ասելով, հեռացա։ Ու միակ բանը, որ թեթևացնում էր գոյությունս՝ Ինգայի նամակներն էին, որ կարդում էի նորից ու նորից, հենց սիրտս սկսում էր ճմլվել նրան հիշե-լուց։ Կա, անշուշտ, կա հեռազգացություն աշխարհում, այ-լապես, ինչով բացատրել, որ նրա նամակները կանխագու-շակում էին այն, ինչի մասին մտածում էի ես, ինչի համար ցավում էր սիրտս, ինչն ամենից ավելի հուզում ու անհան-գըստացնում էր ինձ։ Այդ նամակներն ավելի ու ավելի էին հուսադրում ինձ և իմ մեջ վստահություն ներշնչում, ոչ, ճակատագիրն ինձ չի խաբել ու մանավանդ չի ծաղրել ինձ, չէ որ ժամանակակից երիտասարդ կանանց բնավ այնպիսի-ները չեն դուր գալիս, ինչպիսին եմ ես՝ անհաջողակ, սե-միներիստ, որ եկեղեցական արխայիկ պատկերացում ունի բարոյական արժեքների մասին։ Չէ որ ես անչափ տուժում էի սուպերմենություն անող կոբիճների ֆոնի վրա։ Սակայն Ինգայի նամակներում ես այնքան վստահություն էի տեսնում, չեմ վախենում ասել, այնքան հարգանք և, գլխավորը, որո-շակի պատասխան զգացմունք, որ դա ինձ թե էր տալիս ու

բարձրացնում էր իմ սեփական աչքում, ի՞նչ երջանկություն է, որ ինձ հանդիպեց հենց նա, իմ Ինգան։ Եվ այդ չէ՞ արդյոք սիրո հմայությունը՝ փոխադարձաբար միմյանց ձգտել...

Կենցաղային խնդիրներին մենք դեռ չէինք անդրադարձել։ Եվ ինձ ավելի էր ուրախացնում այն, որ դրանք գոյություն ունեն և պետք է լուծվեն։ Ես պետք է ինձ համար մշտական աշխատանք գտնեի, մշտական վաստակ տվող։ Առայժմ ապրում էի հորս հին գրքերը վաճառելով, և դա ինձ շատ էր տանջում։ Մտածում էի, որ գնամ Ինգայի մոտ Ասիա, հիմնավորվեմ այնտեղ, աշխատանքի տեղավորվեմ և լինեմ նրա կողքին։ Ես պատրաստ էի որպես օժանդակ բանվոր աշխատելու նրա արշավախմբում և անելու ամեն բան, որպեսզի նա հաջողությամբ զբաղվի իր հետազոտություններով։ Չէ որ այդ հետազոտություններն այսուհետև կարևոր էին ինձ համար։ Դրանցում միավորվում էր և մեր ընդհանուր նպատակը. ես փորձում էի թմրամոլությունը վերացնել բարոյական ջանքերի միջոցով, նա փորձում էր այդ խնդիրը լուծել այլ կերպ՝ գիտության միջոցով։ Եվ ինձ շատ էր դուր գալիս նրա ոգևորությունը։ Չէր կարելի ասել, թե նրա աշխատանքը մոդայիկ, առանձնապես հեղինակավոր հետազոտությունների թվում էր կամ որ նրան նախապես ծառայության մեջ շուտափույթ կարիերա էր խոստանում։ Կարճ ասած, Ինգան գրեթե միակ մարդն էր, որ լրջորեն, որպես գիտական խնդիր, զբաղվում էր վայրի աճող կանեփանաշային ոչնչացման հարցով։ Իր աշխատանքի այդ ուղղությունն ընտրելու մեջ, կարծում եմ, դեր է խաղացել և այն, որ նա տեղացի էր, Ջամբուլի բնակիչ և որ սովորել էր Տաշքենդում, և այդ ամենն իրար գումարած չէր կարող, իհարկե, ազդեցություն չունենալ նրա բնավորության և հետաքրքրությունների վրա։

Ինգան էլ իր բարդություններն ուներ կյանքում։ Նախկին ամուսնուց, դինվորական օդաչուից արդեն գրեթե երեք տարի է բաժանված էր։ Բաժանվել էին, երբ ծնվել էր տղան։ Հիմա, կարծես, օդաչուն պատրաստվում էր ամուսնանալ ուրիշի հետ։ Դրա համար էլ նրանք պետք է հանդիպեին վերջին անգամ, որ վերջնական պարզություն մտցնեին տղայի հարցում։ Իգորյոկը տատի և պապի հետ Ջամբուլում էր,

բժշկի ընտանիքում, սակայն Ինգան շատ էր ուզում, որ տղան մշտապես իր հետ ապրի։ Եվ երբ գրել էր ինձ նամակում, որ հույս ունի աշնանը տղային հետը բերել Ջալփաղ-Սազ, նրան տեղ էին խոստացել երկաթուղայինների մանկապարտեզում, ես շատ ուրախացա նրա համար ու պատասխանեցի, որ կարող է լիովին ապավինել ինձ։

Եվ այն ժամանակ նա գրեց, որ շատ կուզեր աշնանը իր արձակուրդին ինձ հետ մեկնել Ջամբուլ և այցելել տղային ու ծնողներին։ Պե՞տք է արդյոք ասել, թե ինձ ինչպես հուզեց մեր միասին ուղևորության նրա մտադրությունը։ Ու ես նրան պատասխանեցի, որ ամեն րոպե պատրաստ եմ մեկնել իր մոտ և լինել իր տրամադրության տակ, և որ ընդհանրապես ողջ իմ կյանքում ես կուզեի ելնել մեր ընդհանուր ու նախ և առաջ նրա շահերից, և որ իմ երջանկությունը ես տեսնում եմ միայն նրան օգտակար և պետք լինելու մեջ։

Ամեն բան այնպես էր ընթանում, որ աշնանը մենք որոշեինք մեր ճակատագիրը։ Ես ապրում էի դրանով։ Եվ շատ, շատ էի հուզվում մտածելով, թե ինչպես պետք է գնանք Ջամբուլ Իգորյոկի և Ինգայի ծնողների մոտ։ Չէ որ այդ ուղևորությունից շատ բան էր կախված։ Բայց դրա համար որոշ դրամական միջոցներ էին պետք։ Միայն գնացքն արդեն ինչքան արժեր։ Այդ առումով հույսս դրել էի իմ մոլբեկումյան ակնարկաշարքի վրա, սակայն, ավաղ, այդտեղ հաջողություն չունեցա, և ոչ իմ մեղքով։ Այդ ժամանակ գնացի ժամանակավոր աշխատանքի մարզային տպարանում որպես գիշերային սրբագրիչ և դա ինձ մի փոքր վաստակ էր տալիս...

Եվ ահա հասավ այն օրը, երբ Ինգայից նամակ ստացա, որում նա հարցնում էր, թե կկարողանա՞մ գալ Ջալփաղ-Սազ հոկտեմբերի վերջին օրերին, այդ դեպքում նոյեմբերի տոներին միասին կմեկնենք Ջամբուլ...

Գժի նման վազ տվեցի քաղաքային հեռագրատուն, որպեսզի նրան հեռագիր ուղարկեմ... Հարկավոր էր շտապ վաճառել գրքերն ու այդ փողով ճանապարհ ընկնել։

Օբեր-Կանդալովը Աբդիային գտավ կայարանում, երբ խումբ էր հավաքում Մոյընկում շուրջկալի մեկնելու համար։

Ով հանձնարարել էր այդ գործը Օբեր-Կանդալովին, նա լավ էր հասկացել, թե ինչ է անում. Կանդալովը ընկածելած մարդ, հիմա երկաթուղային հրշեջ պահակության պրեստ, նախկինում զինվորական, ընդ որում տուգանային գումարտակից (իսկ դա մի բան նշանակում է), ավելի քան համապատասխան էր տափաստանում այդ չնախատեսված շտապ գործողության համար։ Ի դեպ, Կանդալովն էլ այդ գործում իր հեռահար նպատակներն ուներ։ Նա հույս ուներ, որ ծառայություն մատուցելով մարզային վարչությանը մամլերման պլանը կատարելու գործում, այդպիսով իրեն ռեաբիլիտացիայի կենթարկի և մարզային համապատասխան ատյանների միջնորդությամբ կվերականգնվի կուսակցության մեջ։ Չէ որ նրան վտարել էին ոչ թե ինչ-որ գողության կամ կոպիտ չարաշահումների պատճառով, այլ ընդամենը այնքան հազվագյուտ ու, գլխավորը, պետությանը բացարձակապես ոչ մի վնաս չպատճառող գործի համար, ինչպիսին է արվամոլությունը տուգանային գումարտակի զորանոցներում, որին նա պարտադրում էր իր պաշտոնեական դիրքն օգտագործելով։ Հա, ճիշտ է, նղել է, ստիպել է նա, գերաժամկետ ավագը, որոշ գաղափարապես կասկածելի անձանց, հատկապես զանազան աղանդավորների և թմրամոլների, հետո ինչ, դրանք ինչ խղճալու բան են։ Սվ ինչքան կարելի է այդ բանի համար խփել։ Այնքանն էլ բավական է, որ կինը թողնց գնաց մոտից, դրա համար էլ նա սկսնց խմել, թեև առաջ էլ խմել սիրում էր։ Բայց որ լավ մոտածես, նա շատ պետքական մարդ է։ Ահա, լուրջ գործ հանձնարարեցինք, նա անմիջապես խումբ հավաքեց։ Ուշ գիշերով գնաց կայարան, նայից ով կա չկա, փորձված աչքով որոշնց, թե դրանցից որն է կարիքից խեղդված ու կհամաձայնվի իր հետ Մոյընկում գնալ, որպեսզի արագ փող վաստակի։ Այդպես նա գտավ և Աբդիա Կալիստրատովին։

Աբդիային Կանդալովի առաջարկն ընդունել ստիպեց ոչ միայն կարիքը. չնախատեսված և նրա համար շատ տագնապալի բան էր պատահել՝ Ինգա Ֆյոդորովնային նա Ջալփաղ-Սազում չգտավ, թեև եկել էր նրա նամակն ստանալով, այնպես որ նա հուսահատության մեջ էր, չնայած դեռ չգիտեր արժե՞ր արդյոք այդպես տանջվել։ Եկել էր ինքնաթիռով, իսկ դրա համար հարկավոր էր գալ Մոսկվա, Մոսկվայում ամբողջ մի օր տոմս էր հայթայթում, Ալմա-Աթայից եկել էր գնացքով։ Սլացել էր, կարելի է ասել, երկու օրում, ու երբ վերջապես հասավ հիվանդանոցին մոտ լաբորատորիայի բակում գտնվող տնակին, այն փակ էր, իսկ փականքի անցքում երկտող կար Ինգա Ֆյոդորովնայից։ Այդ երկտողով նա խնդրում էր իր ց'պահանջ նամակն ստանալ կայարանի փոստից։ Աբդիան, հասկանալի է, շտապեց փոստ։ Նամակն անմիջապես տվեցին նրան։ Նա սրտի նվաղումով մտավ կողքի փոքրիկ պուրակն ու նստարանին նստած կարդաց նամակը։

«Աբդիա, թանկագինս, ներիր։ Եթե իմանայի, որ այսպիսի թյուրիմացություն կլինի, քեզ իմաց կտայի, որ առայժմ չգաս։ Վախենում եմ, որ հեռագիրս արդեն չես ստանա, և հիմա ճանապարհին կլինես։ Բանն այն է, որ անսպասելի կերպով Ջամբուլ էր եկել նախկին ամուսինս, որպեսզի դատական գործ սկսի մեր Իդորյոկի պատճառով։ Ստիպված եմ շատ մեկնել Ջամբուլ։ Թերևս ես ինչ-որ բանով նրան մղեցի այդ քայլին։ Ես նրան բացեիբաց գրեցի, որ պատրաստվում եմ նոր կյանք սկսել մի մարդու հետ, որ խորապես հետաքրքիր է ինձ համար։ Ես պետք է նրան տեղյակ պահեի, քանի որ մենք որդի ունենք։

Ներիր ինձ կրկին, սիրելիս, որ այսպես ստացվեց։ Միգուցե այսպես ավելի լավ է. միևնույն է, վաղ թե ուշ այդ հարցը պետք է լուծվեր։ Ավելի լավ է, ուրեմն, հենց սկզբից վերջացնենք։

Երբ դու գաս, դուռը փակ կլինի։ Բանալին թողնում եմ մեր լաբորանտուհի Սաուլա Ալիմբաևայի մոտ։ Նա հիանալի անձնավորություն է։ Դու հո դիահես մեր լաբորատորիայի

տեղը։ Խնդրում եմ, վերցրու նրանից բանալին ու ապրիր իմ տանը։ Ափսոս, որ Ալիյա Իսմաիլովան հիմա արձակուրդում է և մեկնել է, քեզ համար հետաքրքիր կլիներ շփվել նրա հետ։ Չէ որ նա մեծ հարգանքով է քեզ վերաբերվում։ Կարծում եմ, մի շաբաթում գործերս կավարտեմ։ Կաշխատեմ անել ամեն ինչ, որ այսուհետև մեզ ոչ մի բան չխանգարի։ Շատ եմ ուզում, որ դու տեսնես Իգորյոկին։ Ինձ թվում է, դուք կմտերմանաք, ես շատ եմ ուզում, որ մենք բոլորս միասին ապրենք, իսկ նախքան այդ, ինչպես որոշել էինք, կգնանք իմ ծնողների մոտ և դու կծանոթանաս նրանց հետ, Ֆյոդոր Կուզմիչի և Վերոնիկա Անդրեևնայի հետ։ Աբդիա, սիրելիս, մի վշտանա, մի տխրիր։ Ես կաշխատեմ ամեն բան անել այնպես, որ առավել լավ լինի։

Քո Ինգա

Հ. Գ. Եթե տեղ հասնես ոչ աշխատանքային ժամի, Ալիմբաևայի հասցեն է. Աբայի փողոց, 41։ Նրա ամուսնուն կոչում են Դաուրբեկ Իքսանովիչ»։

Նամակը, որ Աբդիան կարդաց մի շնչով, նրան մտածմունքի մեջ գցեց։ Նա շփոթված էր. գործը բոլորովին այլ ընթացք էր ստանում, իր համար անսպասելի։ Աբդիան բանալին վերցնելու չգնաց, այլ մնաց սպասասրահում, վճռելով նախ մի քիչ մտածել։ Հետո ճամպրուկը հանձնելով պահասենյակ, որպեսզի իրեն չխանգարի, գնաց պուրակ, նստեց այնտեղ, թափառեց ծանոթ հիվանդանոցի շուրջ, և կայարանի ու ավանի միջև մի մեկուսի արահետ դնելով, սկսեց ետ ու առաջ անել այդ ճամփով...

Տափաստանում ուշ աշուն էր։ Արդեն զով էր։ Գզգղված, փոփոլացած ամպերը, օվկիանոսի հեռվում երևացող փըրփըրալիքների նման սպիտակին էին տալիս ամռանից գունաթափված հոկտեմբերյան երկնքում, ծառերը կիսով չափ տերևաթափ էին, և ոտքերի տակ թոշնած բոսորագարշնագույն տերևներ էին թափված։ Բանջարանոցներն էլ արդեն

հավաքված էին և մերկացել էին։ Ջալփաղ-Սագի փողոցները ամայի էին, մռայլ Օդի մեջ թույլ փայլփլելով սարդոստայն էր ոռնում, անսպասելի դիպչելով դեմքին։ Այդ ամենը Աբդիայի հոգուն տխրություն էր բերում։ Իսկ կայարանում, որ իր ինդուստրիալ հզորությամբ ճնշում էր հրապարակային տափաստանային տարածությունը, թնդոց ու դղրդոց էր տիրում, կյանքն ընթանում էր ոչ մի բոպե կանգ չառնելով, զարկերակի նման։ Նորից նույն կերպ անթիվ-անհամար երկաթգծերի վրա շարժվում էին գնացքները, մարդիկ էին այս ու այն կողմ վազվզում, շրջակայքով մեկ բարձրախոսով խոսացնում էին դիսպետչերները։

Եվ նորից Աբդիան հիշեց ամռան այն օրերը, հիշեց բանբերների քաջագործության վերջը։ Եվ քանիցս արդեն այդ կապակցությամբ Աբդիա Կալիսարաուովը դառնում էր ղզջման շուրջ խորհրդածություններին։ Ու որքան շատ էր մտածում, այնքան ավելի էր համոզվում, որ ղզջումը մի հասկացողություն է, որ մարդու մեջ ուժեղանում է կյանքի փորձի հետ, դա խղճի մեծություն է՝ ձեռքբերովի, մարդկային բանականությամբ դաստիարակվող, մշակվող մեծություն։ Ոչ մեկը, մարդուց բացի, օժտված չէ ղզջալու հատկությամբ։ Ղզջումը՝ մարդկային հոգու հավերժական և անանցանելի հոգացողություն է ինքն իր հանդեպ։ Սրանից բխում է, որ ամեն մի պատիժ՝ լինի դա դանցանքի, թե հանցագործության համար, պատժվողի հոգում պետք է ղզջում առաջ բերի, այլապես այն հավասար կլինի գազանի պատժի։

Այս մտորումներով Աբդիան վերադարձավ կայարան։ Եվ միաը եկավ այն ջղային լեյտենանտը, ուզեց իմանալ արդյոք կհիշի՞ նա իրեն, ու նաև, թե ինչպես վճռվեց բանբերների, անաշա բերողների՝ Պետրուխայի, Լյոնկայի և մյուսների ճակատագիրը։ Այդ բանին էր պրպտում Աբդիային և մի ուրիշ հանգամանք. նա ամեն կերպ ուզում էր ազատվել այն մտքից, որ տանջում ու անհանգստացնում էր նրան հորիզոնում կուտակվող ամպրոպի նման, ազատվել Ինգա Ֆյոդորովնայի մասին իր մտքերից։ Իր ողջ կյանքը, ողջ ապա-

գան նա հիմա դիտում էր այդ տեսանկյունից. նրա կյանքը հիմա կախված էր հեռավոր Ջամբուլում կատարվող գործերի վիճակից։ Ոչ, քանի որ ինքն անզոր է որևէ բան ձեռնարկելու, այդ մասին չպետք է մտածել, խուսափել, փախչել է պետք այդ մտքերից։ Սակայն, դժբախտաբար, Աբդիային չհաջողվեց գտնել այն ջրային լեյտենանտին։ Երբ Աբդիան բախեց միլիցիայի սենյակի դուռը, նրան մոտեցավ մի միլիցիոներ։

— Ի՞նչ եք ուզում։

— Ես, հասկանում եք, ուզում էի տեսնել մի լեյտենանտի,— սկսեց բացատրել Աբդիան, նախազգալով, որ դրանից բան դուրս չի գալու։

— Իսկ ազգանունն ի՞նչ է։ Մենք շատ լեյտենանտներ ունենք։

— Դժբախտաբար, ազգանունն ինձ հայտնի չէ, բայց եթե տեսնեի, անմիջապես կճանաչեի։

— Իսկ նա ձեր ինչի՞ն է պետք։

— Ոնց ասեմ, ուզում եմ խոսել, զրուցել հետը...

Միլիցիոները հետաքրքրությամբ նայեց նրան.

— Արի տես, միգուցե գտնես քո լեյտենանտին։

Սակայն սենյակում սեղանի առջև հեռախոսի մոտ այս անգամ նստել ու ինչ-որ մեկի հետ խոսում էր բոլորովին անծանոթ մարդ։ Աբդիան ներողություն խնդրեց և դուրս եկավ։ Դուրս գալիս մի հայացք գցեց երկաթե վանդակապատի կողմը, որտեղ այն ժամանակ նստած էին բռնված հանցագործները։ Այս անգամ վանդակը դատարկ էր։

Ու դարձյալ, որքան էլ ջանում էր խուսափել, Աբդիան դարձավ իրեն անդադար տանջող մտքերին։ Ի՞նչ վիճակում է հիմա Ինգան։ Նա դևո չէր գնում Ինգայի թողած բանալին վերցնելու. գիտեր, որ եթե մնար մենակ իր մտքերի հետ Ինգայի դատարկ տանը, ավելի սուր պիտի զգար իր մեկայնությունը։ Նա կարող էր սպասել և կայարանում, եթե իմանար, թե հիմա Ինգան ինչ վիճակում է և երբ է վերադառնալու։ Աբդիան փորձում էր պատկերացնել, թե հիմա ինչ է կատարվում այնտեղ Ջամբուլում, որքան ծանր կացության մեջ է իր սիրած կինը, իսկ ինքը ոչնչով չի կարողանում նրան օգնել։ Իսկ եթե հանկարծ նրա ծնողները Լևկասյին հորից

չղրկելու համար պնդեն, որ նա վերականգնի ամուսնու հետ իր հարաբերությունները։ Այո, բանը միանգամայն կարող էր այդպես շուռ գալ, ու այդ դեպքում իրեն մնում էր միայն թողնել գնալ։ Աբդիան տեսանելի պատկերացրեց գեղեցիկ ռազմական օդաչուին, տպավորիչ, զինվորական համազգեստով և ասադիրներով, հավանաբար մայորի, ոչ պակաս, ու հասկանում էր, որ նրա համեմատությամբ ինքը, Աբդիան, խիստ տուժում էր։ Աբդիան համոզված էր, որ Ինգայի համար այլևայլ կոչումներն ու արտաքին փայլը կարևորություն չունեն, սակայն, ի՞նչ իմ։ նաս, հավանական ու ի՞նչ ձնուղների համար նշանակություն ունի, թե ում իրենց փեսա ընդունեն՝ ռազմական օդաչուին, Իգորյոկի հո՞րը, թե որոշակի ղբաղմունք չունեցող անհասկանալի մեկին։

Իրիկնանում էր։ Մութն ընկնելուց Աբդիան ավելի էր մոայլվում։ Մարդկանցով լեփ-լեցուն կայարանը կիսամթի մեջ էր, հեղձուցիչ, ծխախոտի ծխով լցված, և Աբդիայի վհատությունը ծայր աստիճանի էր հասել։ Նրան թվում էր, թե ինքը մութ ու մոայլ անտառում է։ Բոլորովին միայնակ։ Աշնանային քամին գվվում է ծառերի կատարներին, շուտով կսկսի ձյուն տեղալ և ձյունը ամբողջովին կծածկի անտառն էլ, իրեն, Աբդիային էլ, ու ամեն ինչ կմթագնվի ձյան մեջ, ամեն ինչ կմոռացվի... Աբդիան ուզում էր մեռնել, և եթե նա այդ պահին իմանար, որ Ինգան չի վերադառնալու կամ կվերադառնա ոչ մենակ, այլ նրա համար, որ իրերն ու գրքերն առած մեկնի իր ռազմական օդաչուի հետ, նա առանց մտածելու դուրս կգար ու կպառկեր առաջին իսկ գնացքի տակ...

Հենց այդ ծանր պահին, արդեն ուշ երեկոյան գտավ Աբդիա Կալիսարատովին Օբեր-Կանդալովը Ջալփաղ-Սազի կայարանում, որն իր համար համապատասխան խումբ էր հավաքում մոլընկումյան «փափախ գործի» համար։ Երևում է, Օբեր-Կանդալովը զուրկ չէր դիտողականությունից, համենայն դեպս, անսխալ կերպով հասկացավ, որ Աբդիան հոգեկան տվայտանքի մեջ է ու տեղ չի գտնում իրեն։ Եվ իրոք, երբ Օբել-Կանդալովը Աբդիային առաջարկեց մի երկու օրով գնալ Մոլընկումի տափաստան փող վաստակելու շահավետ շտապ գործով, սա անմիջապես համաձայնվեց։ Նա պատ-

բաստ էր ամեն ինչի, միայն թե չնստեր այսպես միայնության մեջ ու սպասեր, թե ինչ է լինելու։ Ու նաև մտածեց, որ մինչև ինքը վաստակած փողով վերադառնա Մոյընկումից, թերևս Ինգա Ֆյոդորովնան էլ կգա ու ամեն ինչ կպարզվի. կամ ինքը (ով երջանկություն) ընդմիշտ կմնա սիրած կնոջ հետ, կամ էլ ստիպված կլինի մեկնել և ուժ գտնել իր մեջ ապրելու... Սակայն այդպիսի վախճանից նա սարսափում էր...

Ու նույն երեկոյան Օբել-Կանդալովը Արդիային տարավ հյուրհաշեջ պահպանության ջոկատ, ուր և սա գիշերեց ազատ մահճակալին...

Իսկ հաջորդ առավոտյան ամբողջ ջոկատը մեքենաների շարասյունով մեկնեց Մոյընկումի տափաստան շուրջկալու։ Ուրախ գործի էին գնում...

* * *

Եվ հիմա նրանք դատ ու դատաստան էին անում Արդիա Կալիստրատովի գլխին։ Հինգ թունդ հարբեցող՝ Օբել-Կանդալովը, Միշոշը, Քյոփան, Համլետ-Գալկինը և Բնիկ-Ուզյուկբայը։ Իսկ ավելի ճիշտ, Համլետ-Գալկինը և Բնիկ-Ուզյուկբայը միայն ներկա էին դրան և փորձում էին, թեև խեղճ ու ողորմելի կերպով, մի կերպ մեղմել այն երեքի կատաղությունը, որ դատաստան էին տեսնում։

Իսկ բանն այն էր, որ իրիկվա դեմ Արդիան նույն խելահեղությամբ բռնվեց, ինչպես այն ժամանակ վագոնում, և դա էլ պատճառ դարձավ նրա հետ դատաստան տեսնելու Մոյընկումյան սայդակների այդ շուրջկալը այնքան սարսափելի էր նրա վրա ազդել, որ սկսեց պահանջել անմիջապես դադարեցնել այդ կոտորածը, գազազած որսորդներին կոչ էր անում մեղա գալ, դիմել Աստծուն, համոզում էր Համլետ-Գալկինին Ուզյուկբային միանալ իրեն և այն ժամանակ նրանք երեքով կհեռանան Օբել-Կանդալովից ու նրա կողմնակիցներից, տագնապ կհնչեցնեն, ու ամեն մեկը կհամակվի Աստծու մասին մտքով, Ամենաարարեգութ Արարչի, ու կասյալինի նրա անսահման ողորմածությանը, ներում կաղերսի այն չարիքի համար, որ իրենք, մարդիկ, հասցրին

կենդանի բնությանը, քանի որ անկեղծ ղեչումը միայն կարող է նրանց թեթևություն բերել։

Արդիան բղավում էր, ձեռքերը վեր կարկառում և կոչ էր անում անմիջապես միանալ իրեն, որպեսզի ազատվեն մեղքից և մեղա գան։

Իր մոլուցքի մեջ նա անհեթեթ ու ծիծաղելի էր, նա ճչում էր, դես ու դեն նետվում, ասես աշխարհի վերջը լիներ, նրան թվում էր, որ ամեն ինչ դժոխքի բաժին է դառնում, հրե անդունդն է գահավիժում։

Նա ուզում էր դեպի Աստված դարձնել նրանց, ովքեր այստեղ էին ևկել հեշտ ու մեծ վաստակի... Ուզում էր կանգնեցնել ոչնչացման ահռելի մեքենան, որ թափ էր առել Մոյընկումյան տափաստանի լայնարձակություններում մեջ, այդ մեքենայացված ամենակործան ուժը...

Ուզում էր հաղթահարել անհաղթահարելին...

Եվ այն ժամանակ Միշաշի խորհրդով նրան պարաններով կապկպեցին ու դցեցին բևռնատարի թափքը, հենց սպանված սայդակների մարմինների վրա։

— Դե վեր ընկի էդտեղ, բլխակ, ու սատկի։ Խեղդվի սայդակի հոտից,— բղավեց նրա վրա Միշաշը, զոռ տալուց խռպոտևլով։— Հիմի կանչի քո աստծուն։ Միգուցե, բլխակ, ձայնդ կլսի ու մոտդ կիչնի երկնքից...

Դիշեր էր, և լուսինը ելավ Մոյընկումի տափաստանի վրա, որով անցել էր արյունոտ շուրջկալը և ուր բոլոր կենդանի արարածները ու նույնիսկ գայլերն իրենց աչքով տեսան աշխարհի կործանումը...

Իսկ կործանողները, Աբդիա Կալիստրատովից բացի, որն ի զժբախտություն յուր այդ օրը հայտնվեց Մոյընկումում, բոլորով հաղթանակ էին տոնում...

Ու դրա համար պատրաստվում էին նրան դատել...

* * *

Արդիային թափքից ցած բշելով, Միշաշն ու Քյուփան նրան քարշ տվին Օրերի մոտ և ուժով ստիպեցին ծունկի գալ նրա առջև։ Օրեր-Կանդալովը նստած էր դատարկ արկղի վրա, ուռած թիկնոցի փեշերը բացած ու կիրպայն երկարա-

ճիտք կոշիկներով ոտքերը չոռած։ Մեքենայի առջևի լապտերիկների լույսի տակ նա անբնականորեն խոշոր, մռայլ ու չափազանց չարագույժ տեսք ուներ։ Կողքին, կրակի մոտ, որից դեռ թարմ սայգակամսից այրված խորովածի հոտ էր փչում, կուչ եկած կանգնել էին Համլետ-Գալկինն ու Բնիկ-Ուղղուկբայը։ Նրանք արդեն լավ խմած էին, ուստի Աբդիայի գլխին Օբերի դատին սպասելով, անհեթեթ ժպտում էին, ինչ-որ բան էին փսփսում, իրար բոթելով ու աչքով անելով։

— Հը, ի՞նչ կասես,— ասաց վերջապես Օբերը, արհամարհանքով նայելով իր առջև ծնկի եկած Աբդիային։— Մտածեցի՞ր։

— Ձեռքերս բացեք,— ասաց Աբդիան։

— Ձեռքե՞րդ։ Իսկ ինչո՞ւ են ձեռներդ կապված, այդ մասին մտածե՞լ ես։ Հո գիտես, կապում են միայն ապստամբներին, խռովարարներին, դավադիրներին, կարգ ու կանոն խախտողներին։ Կարգուկանոն խախտողներին, լսեցի՞ր։ Կարգը խախտողներին։

Աբդիան լռում էր։

— Լավ, փորձենք ձեռներդ բացել, տեսնենք քեզ ոնց ես պահելու,— գոհաց Օբերը։— Հապա մի դրա ձեռքերը բացեք,— հրամայեց նա,— հիմա ձեռքերը նրան պետք են գալու։

— Ջուր տեղն էլ, բրեխ, բացում ես,— դժգոհ փնթփնթում էր Միշաշը, Աբդիայի մեջքի հետևը պարանը բացելով։— Էս տեսակներին շան լակոտների նման միանգամից պիտի խեղդես։ Սրանց պիտի ճկուճկնես, հողը կոխես։

Հիմա միայն, երբ կապերը քանդեցին, Աբդիան զգաց, թե ինչպես էին ուսերն ու ձեռները թմրել։

— Լավ, քո խնդիրքը մենք կատարեցինք,— ասաց Օբեր-Կանդալովը։— Դու դեռ շանս ունես։ Բայց նախ և առաջ, առ, խմիր,— եվ նա Աբդիային մեկնեց բաժակով օղին։

— Ոչ, չեմ խմի,— կտրականապես հրաժարվեց Աբդիան։

— Առ քեզ, խեղդվի, տականք,— Օբերը կտրուկ շարժումով Աբդիայի երեսին շրխկ բաժակի պարունակությունը։ Սա, հանկարծակի եկած, քիչ մնաց խեղդվեր, տեղից վեր թռավ։ Սակայն Միշաշն ու Քյոփան նորից բռնան վրան ու Աբդիային գետնին սեղմեցին։

— Ստում ես, բրնիկ, կխմես,— ոռնում էր Միշաշը։— Ասում էի, չէ, սրա նմաններին պիտի խեղդես ջրի մեջ։ Հապա մի, Օբեր, էլի օղի լցրու։ Ես սրա կոկորդը կկցնեմ, թե չխմեց, շան նման կասատկացնեմ։

Միշաշի ձեռքի մեջ փշրված բաժակի եզրերը կտրեցին Աբդիայի դեմքը։ Օղուց և սեփական արյունից խեղդվելով, Աբդիան ետ քաշվեց, սկսեց ձեռքերով ու ոտքերով պաշտպանվել Միշաշից ու Քյոփայից։

— Տղերք, պետք չէ, ասեմ՝ իր հետ, թող չխմի, ինքներս կխմենք,— խղճալի վնգստում էր Համլետ-Գալկինը, կովողների շուրջ վազվզելով։ Բնիկ-Ուզուկբայը փախել թաքնվել էր մեքենայի ետև ու վախեցած նայում էր այնտեղից, չիմանալով ինչ անել. մնար իր տեղում,— հրեն դևո ինչքան օղի կա խմելու,— թե փախչեր այս փորձանքից հեռու... Եվ միայն Օբեր-Կանդալովն էր մնացել, ինչպես գահի վրա իր արկղին բազմած, ասես կրկեսի ներկայացում էր դիտում։

Համլետ-Գալկինը մոտ վազեց Օբերին։

— Կանգնեցրու դրանց, Օբեր, սիրելիս, ախր կսպանեն՝ դատի տակ կընկնենք։

— Դատի՞,— գոռոզ քմծիծաղեց Օբերը։— Ի՞նչ դատ Մոյընկումում։ Ես եմ այստեղ դատ անողը։ Թող հետո ապացուցեն, թե ոնց է եղել։ Միգուցե նրան գայլերն են պատառ-պատառ արել։ Ո՞վ է տեսել, ո՞վ կապացուցի։

Աբդիան գիտակցությունը կորցրեց, ընկավ նրանց ոտքերի տակ ու նրանք սկսեցին սապոգներով խփել նրան։ Աբդիայի վերջին միտքը Ինգայի մասին էր։ Ի՞նչ է լինելու նրա հետ. չէ որ ոչ ոք և երբեք նրան չի կարողանա սիրել այնպես, ինչպես ինքն է սիրում։

Նա արդեն ոչինչ չէր լսում, աչքերի առաջ մթնել էր, ու չգիտես ինչու աչքին երևաց գորշ էգ գայլը։ Նա, որ այն շոգ ամռանը թռավ իր վրայով կանեփի տափաստանում...

— Փրկիր ինձ, գայլ,— հանկարծ դուրս թռավ Աբդիայի բերանից։

Նա ասես բնազդով զգում էր, որ գայլերը՝ Աբբարան ու Թաշչայնարը, հիմա մոտենում են իրենց որջին, որն այն գիշեր գրավել էին մարդիկ։ Գազանները ձգտում էին իրենց

սովոր գիշերելու տեղին, ահա թե ինչու վերադարձել էին հույսով, որ մարդիկ հավանաբար արդեն հեռացել էին ձորակից ու գնացել ուր-որ հեռու...

Սակայն բեռնատարի հսկայազանգվածն առաջվա նման սարսափազդու սևին էր տալիս նույն տեղում, և այնտեղից ճիչ ու աղաղակ, քաշքշոց, բութ հարվածների ձայներ էին գալիս...

Եվ գայլերը դարձյալ ստիպված եղան քաշվել տափաստան։ Ուժասպառ, տեղ ու դադար չունենալով, նրանք գնում էին ուր պատահի, ուր աչքը կտրեր... Օր ու արև չունեին նրանք մարդկանց ձեռքից ոչ ցերեկ, ոչ գիշեր... Ու դանդաղ քարշ էին գալիս նրանք, ու լուսինը լուսավորում էր նրանց մութ, պոչն իրենց քաշած սովերապատկերները։

Իսկ դատաստանը, ավելի ճիշտ ինքնադատաստանը, շարունակվում էր... Սեսկալի հարբած շուրջկալավորները չէին նկատում, որ մեղադրյալ Աբդիա Կալիստրատովը, երբ նրան նորից բռունցքներով ցած տապալեցին, գրեթե չէր փորձում բարձրանալ։

— Հապա մի վեր կաց, տերտերի մռութ,— ստիպում էին նրան ուժեղ քացիներով ու մայր հայհոյելով մեկ Միշաշը, մեկ Քյուխան, սակայն Աբդիան միայն խուլ հառաչում էր։ Գազազած Օլեր-Կանդալովը բռնեց պարկի նման կախ ընկած Աբդիային, բարձրացրեց գետնից և օձիքից բռնած սկսեց խոսել էլ ավելի գազազելով իր խոսքերից։

— Ուրեմն դու մեզ աստվածո՞վ ես ուզում վախեցնել, սրիկա, ուզում ես սարսափեցնել, ուզում ես աստվածով մեր աչքը հանել, գարշելի արարած։ Մեզ աստվածով չես վախեցնի, հաշվիդ մեջ սխալվել ես, շուն։ Մի իմանանք, դու ո՞վ ես։ Մենք այստեղ պետական առաջադրանք ենք կատարում, իսկ դու, սրիկա, պլանի դեմ ես, մարդի դեմ ես դուրս գալիս, ուրեմն դու սրիկա ես, ժողովրդի թշնամի, ժողովրդի ու պետության թշնամի։ Իսկ քեզ նման թշնամիները, վնասարարները ու դիվերսանտները տեղ չունեն աշխարհում։ Դեռ Ստալինն է ասել. «Ով մեզ հետ չի, նա մեր դեմ է»։ Ժողովրդի թշնամիներին պետք է հիմնահատակ ոչնչացնել։ Ոչ մի թողություն։ Եթե թշնամին չի հանձնվում,

նրան ոչնչացնում են, նրանց մերը։ Իսկ բանակում այդ տեսակ ադիտացիայի համար գնդակահարում են՝ ու վերջ։ Որ մեր երկիրը մաքուր լինի ամեն տեսակի կեղտոտներից։ Իսկ դու, եկեղեցու առնետ, ի՞նչ էիր անում։ Սաբոտա՞ժ։ Խափանում էիր առաջադրանքի կատարումը։ Ուզում էիր մեզ վանք տանել։ Ես քեզ կատակացնեմ, սրիկայի մեկը, որպես ժողովրդի թշնամի, ու ինձնից միայն շնորհակալ կլինեն դրա համար, որովհետև դու իմպերիալիզմի գործակալ ես, գարշելի։ Կարծում ես, Ստալինը չկա, ուրեմն քեզ ա՞տիժ չի՞ հասնի։ Դե մի շուտ չոքի առաջս, տերտերի մատաթ։ Ես եմ հիմա քո իշխանությունը՝ հրաժարվիր Աստծուց, թե չէ վերջդ կտամ, սրիկայի մեկը։

Արդիան չկարողացավ չոքած մնալ, ընկավ։ Նրան բարձրացրին։

— Պատասխանիր, սրիկա,— բղավում էր Օբեր-Կանդալովը։— Հրաժարվիր Աստծուց։— Ասա, որ աստված չկա։

— Կա Աստված,— թույլ հառաչեց Արդիան։

— Մի տես է,— ինչ որ վրան եռման ջուր լցրած բղավից Միշաշը։— Ես ասում էի չէ, բրեկ, դու նրան ինչ ես ասում, իսկ նա քո ջիգրու ինչ է ասում։

Կատաղությունից խեղդվելով, Օբեր-Կանդալովը նորից օձիքից բռնած թափ տվեց Արդիային։

— Դե հիմի տես, աստվածասեր, հիմի քո գլխին էն տեսակ օյին սարքենք, որ օրումդ չմոռանաս։ Մի քարշ տվեք դրան հրեն էն ծառի մոտ, կկախենք, կկախենք էդ սրիկային,— բղավում էր Օբեր-Կանդալովը։— Ոտքերի տակ էլ կրակ կվառենք։ Թող խանձվի։

Եվ միասին Արդիային քարշ տվեցին ծուռումուռ սաքսաուլի մոտ, որ փռվել էր ձորակի եզրին։

— Պարաններըը բեր,— հրամայեց Օբեր-Կանդալովը Քյոփային։

Սա նետվեց դեպի խցիկը։

— Հեյ, ո՞ւր ես, Ուղյուկբայ, երկրի տեր, ես քո մերը, իսկ դու ո՞ւր ես, քոսոտ արտիստ, ինչի՞ ես մի կողմ քաշվել։ Դե մի եկեք, վրա տվեք։ Թե չէ օղուն մոտ չեմ թողնի,— վախեցրեց Օբեր-Կանդալովը ողորմելի հարբեցողներին, և

սրանք շտապ-շտապ վրա ընկան կախելու դժբախտ Արդիային։

Խուլիգանական մտայրությունը հանկարծ զարհուրելի իմաստ ստացավ։ Այդ խեղկատակությունը կարող էր լինչի դատաստանի վերածվել։

— Մի բան, բրեկ, ափսոս՝ խաչ ու մեխ չկա այս անիծյալ տափաստանում։ Այ, բրեկ, ափսոս,— տրտնջում էր Մրշաշը ճրթճրթոցով կոտրելով սաքսաուլի ճյուղերը։— Ահ թե բան կլիներ։ Դրան կխաչեինք։

— Հեչ պետք էլ չի, մենք սրան պարաններով կկախենք։ Մեխերից էլ լավ կկախվի,— ելքը գտավ Օրեր-Կանդալովը։— Ոտքերն ու ձեռները կձգենք գորտի նման, ու կկապենք էնպես, որ տեղից չի շարժվի։ Թող կախված մնա մինչև առավոտ, թող մտածի ստեղած կա, թե չկա։ Ես նրա հետ էնպես մի դաստիարակչական միջոցառում կանցկացնեմ, որ մինչև կյանքի վերջը չի մոռանա այդ գարշելի տերտերի մուութը։ Ես սրանից վատերին եմ բանակում խելքի բերել։ Դե մի վրա տվեք, տղերք, բռնեք սրան։ Բարձրացրու էն ճյուղի վրա, ավելի բարձր։ Ձեռքն այս կողմը քաշի կապի, ոտքն այն կողմը։

Ամեն ինչ կատարվեց վայրկենապես, քանի որ Արդիան արդեն չէր կարող դիմադրել։ Ծուռումուռ սաքսաուլին կապված, ձեռքերն ու ոտքերը պարանով ոլորած նա կախ ընկավ փորոտիքը հանած ու չորացնելու համար կախ տված փոստի նման։ Արդիան դեռ լսում էր հայհոյանք ու ձայներ, սակայն կարծես հեռվից։ Տառապանքը ուժասպառ էր անում։ Որովայնում, այն կողմում, ուր լյարդն էր, անտանելի ցավ էր զգում, գոտկատեղում ասես մի բան պոկվեց ու կտրվեց՝ այնքան որ անտանելի էր ցավը։ Արդիայի ուժերը դանդաղ հատնում էին։ Եվ այն, որ հարբած տանջողները ապարդյուն փորձում էին կրակ վառել նրա ոտքերի տակ, նրա համար այլևս միևնույն էր։ Ամեն ինչ միևնույն էր նրա համար։ Խարույկ, այնուամենայնիվ, չկարողացան վառել, նախորդ օրը եկած ձյունից թացացած խոտն ու ճյուղերը չէին ուզում վառվել... Իսկ վրան բենզին ցանել ոչ մեկի մտքով չանցավ։ Նրանց համար այնքանն էլ բավական էր, որ Արդիա Կալիսարատովը կախված էր բանջա-

բանոցի խրտվիլակի նման։ Ու նրա տեսքն էլ, չգիտես կախ-վածի, թե խաչվածի նման, բոլորին շատ էր աշխուժացրել ու զրգռել։ Հատկապես ոգևորվել էր Օբեր-Կանդալովը։ Նա շատ ավելի ազդեցիկ ու հափշտակիչ տեսարաններ էր երա-զում՝ ի՜նչ մի մեծ բան էր կախված մի մարդը տափաստա-նում։

— Այդպես կլինի յուրաքանչյուրի հետ, իմացած լի-նեք,— սպառնում էր նա, հայացք գցելով սաքսաուլից կախ-ված Աբդիային։— Ես ամեն մեկին, ով մեզ հետ չէ, կախ կտայի, ու էնպես, որ միանգամից լեզուն դուրս ընկներ։ Բոլորին կկախեի, բոլորին, ով դեմ է մեզ, ու էդպես մի շար-քով, օղագոտու նման կպատեի ամբողջ երկրագունդը, և այն ժամանակ այլևս ոչ ոք մեր ոչ մի խոսքին չէր հակա-ռակվի, բոլորը մոմ դարձած ման կգային մեր առաջ... Դհմ, գնացինք, կոմիսարներ, գնանք մի-մի հատ էլ գցենք, ինչ լինում է լինի,...

Օբերին ուռն տալով, նրանք աղմուկով գնացին դեպի մեքենան, իսկ Օբերն սկսեց երգել երևի միայն իրեն հայտնի մի երգ.

Դալիֆե մենք կհագնենք, ատրճանակ կկապենք,
Մեկ-երկու, մեկ-երկու...

Ղևռնները տաքացած «կոմիսար տղերքը» միացան. «Մեկ-երկու, մեկ-երկու»,— և ձեռքից ձեռք մի երկու կես-լիտրանոց էլ փոխանցելով, խմեցին հենց շշից։

Որոշ ժամանակ անց մեքենան լապտերները վառելով փնչացրեց, շրջվեց ու դանդաղ հեռացավ տափաստանով։ Ու խտացավ մթությունը։ Եվ ամեն ինչ լռեց շուրջը։ Ու մնաց միայն Աբդիան ծառից կապված, միայնակ համակ աշխարհում։ Կուրծքն այրվում էր, ծեծված, տրորված ներ-սը քրքրվում էր անտանելի, գիտակցությունը մթագնող ցա-վից... Եվ գիտակցությունը մարում էր, սուզվում, ինչպես դեռատվարարումից ջրի տակ մնացող կղզյակ։

«Իմ կղզյակը Օկայում... Ո՞վ քեզ կփրկի, Ուսուցիչ»,— կայծի նման բռնկվեց ու մարեց նրա վերջին միտքը...

Վրա էին հասնում կյանքի վերջին ջրերը...

Եվ նրա մարող հայացքի առջև երևաց մեծ ջուր, անծայրածիր համատարած ջրային մակերես, անվերջ-անսահման։ Ջուրն անձայն փրփրում էր ու վրայից սպիտակ անձայն ալիքներ էին գլորվում, ինչպես ձյունամրրիկը դաշտում, չգիտես որտեղից և չգիտես ուր։ Բայց անձայն այդ ծովի հարվի նշմարելի ամենաեզրին ջրի վրա աղոտ կերպով նըշմարվում էր մարդու կերպարանք, և Աբգիան ճանաչեց այդ մարդուն. դա նրա հայրն էր, սարկավագ Կալիստրատովը։ Եվ հանկարծ Աբգիան լսեց իր սեփական պատանեկան ձայնը. ձայնը հոր համար կարդում էր նրա սիրած աղոթքը ջրասույզ արված նավի մասին, ինչպես մանուկ ժամանակ տանը, հին դաշնամուրի մոտ կանգնած, սակայն հիմա նրանց միջև հեռավորությունը մեծ էր, և պատանեկան ձայնը հնչեղ ու ներշնչված փովում էր տիեզերական տարածության վրա...

«Երկինքը դեռ նոր լուսանում է, ու մինչ քնած է աշխարհը...

... Դու, կարևկից, Օրհնյալ, Արդար, Ներիր ինձ, որ վըրդովում եմ քեզ անդադար իմ աղերսներով։ Իմ աղերսանքի մեջ չկա շահամոլություն, ես զույգն իսկ երկրային բարիք չեմ խնդրում, ու չեմ աղաչում կյանքս երկարացնել։ Մարդկանց հոգիների փրկության համար լոկ չեմ դադարի դիմել քեզ։ Դու Ամենաներող, մի թող մեզ անգիտության մեջ, թույլ մի տուր, որ մենք մեզ համար արդարացում որոնենք բարու ու չարի միացության մեջ աշխարհում։ Մտքի պայծառացում շնորհի մարդկությանը։ Իսկ իմ մասին չեմ համարձակվի բերանս բացել։ Ես չեմ վախենում հարկ եղածի նման ընդունելու ամեն վախճան՝ գեհենում պիտի այրվեմ, թե ընկնեմ արքայությունն այն, որ վերջ չունի։ Մեր այդ ճակատագիրը Դու պիտի որոշես, Արարիչ Անտեսանելի ու Անընդգրկելի...

Մի բան եմ խնդրում լոկ, դրանից վեր խնդիրք չունեմ ես...

Մի բան եմ խնդրում լոկ, մի հրաշք թող երևա. թող այն նավը լողա նույն իր ուղղությամբ օրեցօր, գիշերից գիշեր,

քանի դեռ ցերեկն ու գիշերը հաջորդում են իրար Քո սահմանած կարգով երկրի տիեզերական պտույտի մեջ։ Թող լողա այն նավը օվկիանոսից օվկիանոս իր մշտական հեթափոխով, ընդմիշտ փակված իր հրանոթներով, ու թող զարկվեն ալիքները նավախելին, ու թող լսվի նրանց անլռելի հզոր աղմուկն ու դղրդյունը։ Թող օվկիանոսի շիթերը հեղեղեն նրան անձրևի նման շառաչող, թող շնչի նա խոնավությունն այդ դառն ու վաղանցիկ։ Թող լսի մեքենաների աղմուկն ու նավին հետևող ուրուրների աղաղակները։ Ու թող նավը ճանապարհվի դեպի լուսավոր քաղաքն այն օվկիանոսի ափին, թեև կանգ առնել վիճակված չէ նրան հավիտյանս հավիտենից... Ամեն...»

Ջայնն աստիճանաբար մարում էր, ավելի ու ավելի հեռանում... Ու լսում էր Արդիան իր ողբը օվկիանոսի վրա...

Եվ ամբողջ գիշեր անծայրածիր Մոյընկումի տափաստանը ամբողջ ուժով հեղեղում էր լուսնի պայծառ, կուրացուցիչ լույսը, լուսավորելով սաքսաուլի վրա անշարժացած խաչված մարդկային կերպարանքը։ Այն ինչ-որ բանով նմանվում էր թևերը տարածած վեր սլացող մեծ թռչունի, սակայն խփված ու ճյուղերին ընկած։

Իսկ այդտեղից մեկ ու կես կիլոմետրի վրա տափաստանում կանգնած էր ռազմական տիպի այն բեռնատարը, բրեզենտով ծածկված, որի մեջ, իրենց սև գործն անելով, հենց սայդակների մարմիններին վեր ընկած քնած էին օբերկանդալովականները, քնի մեջ ետ տված հացօդու իրենց փրսխուքի մեջ։ Ու վեր ու վար էր անում օդում նրանց բարձր, խռպոտ խռմփոցը։ Նրանք հեռացել էին, որ Աբդիային գիշերը մենակ թողնեն, ուզում էին դաս տալ նրան, թող զգա, թե առանց նրանց ինքը ինչ է, այն ժամանակ հաստատ կհրաժարվի Աստծուց, ու կենթարկվի ուժին...

Այդպիսի պատիժ հնարեց Աբդիայի համար նախկին դեբասան Համլետ-Գալկինը, նորից ու նորից շիշը բերանը տանելով, երբ օդին խմում էր արդեն անհամ մեռած ջրի նման։ Համլետ-Գալկինն այդ դաշափարն արտահայտեց յանկանալով հաճոյանալ Օբեր-Կանդալովին. թող, իբր, աստվածասերը մի լավ վախենա։ Թող կարծի, թե, ահա

կախեցին, ձեռք ու ոտք ոլորեցին ու թողեցին գնացին։ Կուզենա եհովներից վազ տալ, բայց ո՞նց կկարողանա։

Առավոտյան, երբ լույսն արդեն սկսեց բացվել, գայլերն զգուշորեն մոտեցան իրենց նախկին որջատեղին։ Առջևից գնում էր Աքբարան, գիշերվա մեջ նրա կողքերը փոս էին ընկել, մաշվել էին, նրա ետևից մռայլ կաղին էր տալիս մեծագլուխ Թաշչայնարը։ Հին տեղը դատարկ էր, մարդիկ գիշերվա մեջ թողել գնացել էին։ Բայց գայլերն այդ տեղերով անցնում էին, եթե կարելի է այսպիսի համեմատություն անել, ինչպես ականապատված դաշտով, մեծագույն զգուշությամբ։ Ամեն քայլափոխին նրանք որևէ թշնամական օտար բանի էին հանդիպում. հանգած խարույկ, դատարկ տուփեր, ջարդոտած ապակիներ, ռետինի ու երկաթի սուր հոտ, որ մնացել էր բեռնատարի թողած անվահետքերում, ու ամեն տեղ դեռևս հայօղու հոտ արձակուղ դատարկ շշեր։ Պատրաստվելով ընդմիշտ հեռանալ այս ապականված վայրից, գայլերն սկսեցին շարժվել ձորակի եզրով, ու մեկ էլ Աքբարան կտրուկ ետ ցատկեց ու տեղում քարացավ՝ մարդ։ Նրանից երկու քայլի վրա սաքսաուլից կախված էր մի մարդ, ձեռքերը տարածած ու գլուխը կողքի գցած։ Աքբարան նետվեց թփուտների մեջ, Թաշչայնարը հետևեց նրան։ Ծառի վրայի մարդը չէր շարժվում։ Թեթև քամին անգամ էր ճյուղերի մեջ, շարժում նրա մազերը սպիտակ ճակատին։ Աքբարան սեղմվեց գետնին, զսպանակի պես լարվելով, պատրաստվելով ցատկի։ Նրա առջև մարդ էր, մի արարած, որից սարսափելին չկար, նրանց գայլային դժբախտությունների հանցավորը, անհաշտ թշնամին։ Ջարհուրելի չարությամբ լցված, Աքբարան կատաղած մի քիչ ետ քաշվեց, որպեսզի թափ առնի ու ցատկի այդ մարդու վրա, ժանիքները նրա կոկորդը խրի։ Եվ այդ վճռական պահին էգ գայլը հանկարծ ճանաչեց այդ մարդուն։ Բայց որտե՞ղ էր նրան տեսել։ Սա չէ որ հենց այն խենթն է, որին արդեն հանդիպել էր ամռանը, երբ իր ձագերի հետ գնացել էր անուշահոտ խոտերի բույրը շնչելու։ Եվ հիշեց Աքբարան այդ պահին և այն ամռային օրը, և այն, ինչպես իր ձագերը խաղում էին այս մարդու հետ, և թե ինչպես ինքը խնայեց նրան ու վրայից ցատկեց անցավ, երբ սա սարսափած նստեց գետնին՝ գլուխը

ձևրքերով ծածկած։ Հիշեց նրա վախեցած աչքերի զարմացած հայացքը և այն, թե ինչպես սա մերկ ու անպաշտպան փախավ, հեռացավ...

Հիմա այդ մարդը տարօրինակ կերպով կախված էր ցածրիկ սաքսաուլի վրա, ճյուղերի մեջ խճճված թռչունի նման, և գայլը չէր հասկանում՝ ողջ է նա, թե մեռած։ Մարդը չէր շարժվում, ոչ մի ձայն չէր հանում, գլուխը կախ էր ընկել մի կողմի վրա, բերանի անկյունից արյան բարակ շիթ էր ծորում։ Թաշչայնարը պատրաստվում էր նետվել կախված մարդու վրա, սակայն Աքբարան նրան ետ հրեց։ Ու մոտենալով, ուշադիր նայելով խաչվածի դեմքին, կամացուկ վնգստաց. չէ որ նրանք բոլորը, ամառվա իր ձագերը սպանվել էին։ Ու ողջ կյանքը Մոյընկումում ոչնչացել էր։ Ու չկար մեկը, որի մոտ արցունք թափեր... Այս մարդը նրան ոչընչով չէր կարող օգնել, նրա վախճանը մոտ էր, բայց կյանքի ջերմությունը դեռ պահպանված էր նրա մեջ։ Մարդը ղժվարությամբ բացեց աչքերը և կամացուկ շշնջաց, դիմելով վնգստացող էդ գայլին։

— Դու եկար...— Ու նրա գլուխն անկամ կախ ընկավ։

Դա նրա վերջին բառերն էին։

Այդ պահին լսվեց շարժիչի հռնդյուն՝ տափաստանում երևաց ռազմական տիպի բեռնատարը։ Մեքենան մոտենում էր մեծանալով ու աղոտ փայլփլելով խցիկի ապակիներով։ Հանցագործության վայրն էին վերադառնում օբեր-կանդալովականները...

Եվ գայլերն անմիջապես փախան հեռացան, ու գնացին, գնացին ավելի ու ավելի վազքն արագացնելով։ Հեռանում էին առանց ետ նայելու՝ մոյընկումյան գայլերը հեռանում էին Մոյընկումից, մեծ սավաննայից, հեռանում ընդմիշտ...

* * *

Մի ամբողջ տարի Աքբարան ու Թաշչայնարը անցկացրին մերձալդաշյան եղևնուտում։ Այնտեղ ծնվեց նրանց ամենամեծ ձագախումբը՝ հինգ գայլաձագ, ա՛յ թե ինչ աճ էր։ Ձագերն արդեն մեծանում էին, երբ գաղանների գլխին նորից մի փորձանք եկավ՝ եղևնուտը վառվեց։ Այդ վայրերում

սաորգեսնյա ուղիներ էին սարքվում բացված լեռնահանքարանի շահագործման համար՝ անհրաժեշտություն էր առաջացել այրել եղեգնուտը։ Եվ Ալդաշ լճի շուրջ հարյուրավոր ու հազարավոր հեկտար տարածություններ վրա ոչնչացվեցին հնամյա եղեգները։ Պատերազմից հետո այս վայրերում հայտնաբերվել էին հազվագյուտ հումքի մեծ հանքաշերտեր։ Եվ ահա տափաստանում իր հերթին սկսեց ծավալվել ևս մի վիթխարի անանուն փոստարկղ։ Իսկ այդպիսի դեպքում եղեգն ինչ է որ, եթե հենց լճի կործանումն անգամ, թեկուզ հազվագյուտ լճի, ոչ մեկին չի կանգնեցնի, երբ հարցը վերաբերում է դևֆիցիտային հումքին։ Հանուն դրա կարելի է երկրագնդի փորը թափել, դղումի նման։

Սկզբում եղեգնաջունգլիների վրա խուզող թռիչքով թըռնում էին ինքնաթիռները, օդի մեջ ինչ-որ այրվող խառնուրդ ցանելով, որպեսզի հարկավոր պահին եղեգները միանգամից բռնկվեն։

Հրդեհի ազդանշանը տվեցին գիշերվա կեսին։ Բռնկվող նյութով մշակված եղեգները բռնկվեցին վառոդի նման, շատ ավելի ուժեղ և թափով, քան թավ անտառը։ Բոցը երկինք էր ելնում, ու ծուխը ծածկել էր անապատը, ինչպես ամոան մառախուղն է երկիրը պատում։

Հենց այրվածի հոտ զգացվեց և տարբեր ծայրերից կրակ բռնկվեց, գայլերը դես ու դեն նետվեցին եղեգների մեջ, ջանալով փրկել ձագերին։ Ատամներով բռնած տանում էին մեկ այս, մեկ այն տեղ։ Ու սկսվեց աշխարհակործանումը մերձալդաշյան եղեգնուտում։ Թռչունները խուռներամ թըռնում էին լճի վրա, շուրջը շատ ու շատ վերստեր թնդացնելով տափաստանը իրենց ականջ ծակող ճիչերով։ Այն ամենը, ինչ դարերով ապրում էր եղեգներում՝ սկսած վարազներից և վերջացրած օձերով, խուճապի էր մատնվել, եղեգնի թավուտներում իրար էին անցել բոլոր կենդանի էակները։ Նույն բախտին էին արժանացել և գայլերը. կրակը շրջապատել էր ամեն կողմից, փրկվել կարելի էր միայն լողալով։ Եվ երեք ձագերին թողնելով կրակի մեջ, Աքբարան ու Թաշչայնարը մյուս երկուսին ատամներով բռնած փորձում էին փրկել նրանց՝ լողալով լիճն անցնելով։ Երբ վերջապես գայլերը մյուս ափ հասան, պարզվեց, որ երկու ձագն էլ,

որքան էլ գայլերն աշխատել էին նրանց բարձր պահել, խեղդվել են։

Ու նորից Աքբարան և Թաշչայնարը ստիպված եղան նոր վայրեր գնալ։ Այս անգամ նրանք գնացին դեպի լեռներ։ Բնազդը հուշում էր գայլերին, որ լեռները հիմա միակ տեղն են երկրի վրա, ուր նրանք կարող են իրենց գոյությունը պահպանել։

Գայլերը գնում էին երկար, նահում թողնելով մարդկանց արած ծխացող, հորիզոնը ծածկող հրդեհները։ Գնում էին Կուրգայի լճանաշխարհով, մի քանի անգամ սպիտակած եղան գիշերով մեծ ավտոճանապարհներ կտրել, որոնցով վառվող լապտերներով սլանում էին մեքենաները և այդ արագ սլացող կրակներից սարսափելի բան չկար նրանց ճանապարհին։ Կուրգայից հետո գայլազույգը սպիտակած եղավ անցնել Ակ-Տյուղյան լեռներ, սակայն այդ տեղն էլ նրանց անվտանգ չթվաց, և վճռեցին ավելի հեռու գնալ։ Ակ-Տյուղյան լեռնանցքը կտրելով, գայլերն ընկան Մերձիսսիկուլյան գոգահովիտ։ Ավելին հեռանալու տեղ չկար։ Առջևում ծով էր...

Եվ այստեղ Աքբարան ու Թաշչայնարը մի անգամ էլ նորից սկսեցին իրենց կյանքը...

Եվ նորից գայլաձագեր ծնվեցին՝ այս անգամ չորս ձագ։

Դա վերջին հուսահատական ճիգն էր իրենց ցիկլը շարունակելու։

Եվ այնտեղ, Իսսիկ-Կուլում, զարհուրելի ողբերգությամբ ավարտվեց գայլերի այդ պատմությունը...

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

1

Մարդիկ իրենց ճակատագիրն են որոնում, իսկ ճակատագիրը՝ մարդկանց... Ով պտտվում է կյանքն այդ շրջանով... Իսկ եթե ճիշտ է, որ ճակատագիրը ձգտում է իր նպատակին հասնել, ապա հենց այդպես եղավ և այս անգամ։ Ամեն ինչ կատարվեց զարմանալիորեն հեշտ ու այդ պատճառով էլ անկասելի, ինչպես ճակատագիր...

Ով ինչ պետք էր, որ Բազարբայ Նոյգուտովը այդ օրը ուղեկցող վարձվեր երկրաբաններին։ Բազարբայը գաղափար էլ չուներ, որ երկրաբաններին ուղեկցող է պետք լինելու, երկրաբաններն իրենք նրան գտան ,իրենք առաջարկեցին։

Նրանք այդտեղ, Թաման, հասան տրակտորի բացած անվահետքերով, որով կեր էին տանում ոչխարներին։

— Այս տեղն ինչո՞ւ է Թաման կոչվում,— հարցրեց նրանցից մեկը։

— Իսկ ի՞նչ է որ։

— Ոչինչ, հետաքրքիր է։

— Թաման՝ նշանակում է կոշկատակ։ Տեսնում ես, ահա կոշիկի տակը։ Իսկ էստեղ լեռների տակն է, ստորոտը, դրա համար էլ կոչվում է Թաման։

— Ահա թե ինչ։ Ուրեմն այդտեղից էլ՝ և Թամանը, և Թամանյան դիվիզիա՞ն։

— Էդ մեկը չգիտեմ, ախպեր։ Դա գեներալների իմանալիքն է։ Իսկ մենք, դու էլ գիտես, հովիվ մարդ ենք։

Այսպես, ահա, երկրաբանները հասնում են մինչև Թաման, ու հետո ասում, որ ճանապարհն իրենց հայտնի է միայն քարտեզով, դրա համար լավ կլինի, որ տեղացիներից մեկնումեկն իրենց ուղեկցի լեռներն անցնելիս։ Էհ, ինչ կա որ։ Մանավանդ ձրի գործ չի։ Եղած-չեղածը մի չորս տղամարդ իրենց բեռով պիտի հասցնես Աչի-Թաշ կիրճը, էնտեղ սրանք, էս երկրաբաններն իբր ինչ-որ փորձեր պիտի անեն, պարզ բան է, ոսկի են ման գալիս։ Ու թե գտնեն, դրա համար մեծ պարգևատրություն են ստանալու։ Դեհ, դա, ասենք, իրենց գործն է, իսկ Բազարբայը իրիկվա դեմ պետք է վերադառնա Թամանի փարախը, ուր ձմեռում էր իր հոտի հետ։ Էդքան բան։

Իսկ տղերքը պարզվեց փողից բան չեն հասկանում, չնայած քաղաքացի էին, ու հենց Բազարբայն սկսեց չեմուչում անել, իբր ժամանակ չունեմ ձեզ ուղեկցեմ, մեկ էլ տեսար սովխոզի պետերը եկան, ձեզ ինչ կա որ, ինձնից են պահանջելու, ուր է, կասեն, ավագ չոբան Բազարբայ Նոյգուտովը, ինչի՞ է բացակայում, երբ ծնի կամպանիան ակսվելու վրա է, էն ժամանակ ո՞վ պատասխան կտա. էս խոսքի վրա տղերքն իսկույն փողն ավելացրին, խոստացան քանհինգանոց։ Սե՛լքներն ասեմ։ Բայց դրանց հետ ինչի՞ պիտի ձևեր թափեմ՝ պետական փող է, պետությունը չի աղքատանա։ Հենց իրենք ուզում են մի գլուխ փող ձեռք գցեն, որտեղից որ հաջողացնեն։ Թող ուրեմն վճարեն։ Իսկ Բազարբայի համար երկրաբաններին այդտեղ ուղեկցելը դատարկ բան էր՝ նստեց ձին ու գնաց։ Նա առանց այդ էլ համարյա թե երկու օրը մեկ գնում-գալիս էր կարևոր ու ոչ կարևոր գործերով, մանավանդ թե մի տեղ հարսանիք կամ քելեխ լիներ, որտեղից խմիչքի հոտ էր առնում։ Իսկ երբ սովխոզի գրասենյակ է գնում աշխատավարձ բերելու, ամբողջ բրիգադը՝ և հովիվը և երկու հոտաղները, և գիշերվա պահակը, ու հատկապես իր կինը (նա էլ էր բանվոր հաշվվում), իսկ բուծման ժամանակ և օգնականները, բոլորն անհանգստանում են։ Գալիս էր Բազարբայը գիշերով թունդ հարբած, ձիու վրա հազիվ էր մնում, իսկ չէ որ մարդկանց համար փող էր բերում։ Բայց արի ու տես իր անամոթ

կնիկը գանգատվել է սովխոզի դիրեկտորին, ու արդեն մի երեք ամիս է գանձապահ Բորոնբայն ինքն է ոռճիկը փարախ բերում։ Ասում է օրենքով ամեն մեկն անձամբ պետք է ստորագրի ոռճկացուցակը։ Դեհ, թող գա, թե շատ է ուզում...

Իսկ հիմի քանհինգանոցը, հաշվի, հենց էնպես գըրպանդ մտավ։ Ճիշտ է, Աչի-Թաշի կածանը քարքարոտ է, իսկ տեղ-տեղ էլ էնպես զառիկող, որ վախից շունդ կտըրվում է, մեկ էլ տեսար գլորվեցիր, բա ո՞նց, լեռ բարձրանալ-իջնելը հո մարզադաշտում վազվզել չի, ու հլա դրա համար էլ որ վզիդդ մեդալ կախեն։ Ինչ զարմանալու բան կա, աշխարհում ոնց որ չի եղել ոչ մի արդարություն, հիմի էլ չկա։ Դու էստեղ ամառ-ձմեռ մնա լեռներում, ոչ ասֆալտ կա, ոչ ջրմուղ, ոչ էլեկտրական լույս, ոնց կուզես ապրի, կլոր տարի ոչխար պահի կեղտահոտի մեջ, իսկ էնտեղ մի ճարպիկ տիպ սպիտակ չտեր հագած ժիր կվազվզի մարզադաշտում կամ գոլ կխփի դարպասին՝ իրա համար էլ հաճույք, հավաքված ժողովուրդն էլ ուրախությունից խենթանում է, ու փառքը պատրաստ է էդ ժիր տղայի համար, բոլոր թերթերում, ամեն տեղ կգրեն նրա մասին, լսկ ով առավոտից իրիկուն չաչշարվում է, ոչ հանգստի օր ունի, ոչ արձակուրդ, նա հազիվ մի փոր հացի է արժանանում։ Դեհ, դու էլ խմում ես դարդից, հետո էլ կնիկդ է սկսում հոգիդ հանել, փրկություն չունես։ Իսկ պահանջում են՝ աճ տուր, ոչ մի էգ ստերջ չպիտի մնա, քաշի ավելացում տուր, նրբագեղմ բուրդ տուր, մի գլուխ խոսում էին, որ սինթետիկա կգտնեն բրդի փոխարեն, բայց դե ուր է էդ սինթետիկան, իսկ հենց գալիս է խուզի ժամանակը, իսկույն մի հարյուր հսկիչ վրա են տալիս գիշանգղերի նման ու ամբողջը սրբում տանում են՝ մինչև վերջին թելը պիտի տաս։ Վալյուտայի համար, իբր, նրբագեղմ բուրդ է պետք... Ուրեմն է, շատ է պետք նրանց էդ վալյուտան... Ու էդ բոլորը ոնց որ խորխորատը լցվի։ Գրոզի ծոցը գնա այս ամենը՝ և ոչխարները, և մարդիկ, և այս զզվելի կյանքը...

Այս գիսի տխուր մտքեր էին պաշարել Բազարբային ճանապարհին։ Դրա համար նա ամբողջ ճանապարհին լուռ

էր, երբեմն միայն շրջվում էր հետևից եկող երկրաբանների կողմը՝ զգուշացնում որտեղ ինչ վտանգ կա... Պղտորված էր սիրտը։ Ու ամբողջն իր անամոթ կնկա պատճառով... Փորձանք է, հո կնիկ չի։ Անպայման պիտի մեջ ընկնի, անպայման ձենը գլուխը գցի։ Էս անգամ էլ սկսեց գոռգոռալ, էն էլ ուրիշների մոտ։ Թե չէ սիրտը կճաքի։ Ու էսպես էլ մարդու կյանքը սխալ է գնում։ Ջուր չեն հնում ասել. կնիկը գիշերը կատվի նման է, քամվող, իսկ ցերեկը՝ օձի նման։ Բա պետք էր։ Ձենը գլուխը գցեց։ Դու մենակ թե, ասում էր, մի տեղ թողնես գնաս, քո ինչի՞ն են պետք էդ երկրաբանները, էստեղ գործը մեզ ուտում է, ոչխարների ծինն սկսվել է, երեխեքը մնացել են վրաս, մեծերը գիշերօթիկում իսկական խուլիգան են դարձել, որ արձակուրդ են գալիս, հենց մենակ ուտել են ուզում, թեկուզ տրաքվի, դրանց պիտի ուտացնես, իսկ որ մի բանով օգնեն՝ չէ, օգնող չեն, ծխում են գժի պես, ով գիտի օղի էլ են խմում, գիշերօթիկում ով պիտի դրանց հետևի, դիրեկտորը հարբեցող է, էհ, տանն է, ումից պիտի օրինակ վերցնեն։ Դու հենց մենակ մտածում ես, թե որ կողմի վրա գնաս, ինչ անես, որ խմես։ Լավ է, որ ձին գոնե բերում հասցնում է, թե չէ վաղուց հարբած ճամփին մի տեղ ընկել սատկել էիր...

Անամոթ կնիկ։ Ինչքան ծեծել, ջարդել եմ, խելք սովորեցրել, ամբողջ կյանքում ծեծից կապտած է ման եկել, դրա համար էլ անունը դրել են Կոկ Թուրսուն՝ գորշակապույտ Թուրսուն, բայց մեկ է էդ անիծված լեզուն իրեն չի քաշում, խելքի չի գալիս։

Եվ հիմա էլ, անամոթը, անտեղի ձենը գլուխ գցեց երկրաբանների մոտ։ Իսկ քանի-քանի անգամ էնպես է դրան խեղդել, որ աչքերը դուրս են ընկել։ Հետո խոսք է տվել, որ էլ չի հակաճառի, բայց ո՞նց։ Ոչինչ, ինքը դրա բերանը փակելու ձևը գտավ։ Տուն կանչեց, իբր բան պիտի ասի, ու հենց ներս մտավ, սուսուփուս սեղմեց պատին, դեմ առ դեմ, էնպես, որ կնկա շունչն սկսեց կտրվել, ու այդ ժամանակ կնոջ արդեն հանգած, կապտած, կնճռոտ դեմքին, սարսափից մթագնած նրա աչքերում հանկարծ տեսավ նրա ապրած կյանքի ողջ տխրությունն ու դառնությունը, կյանքի դրժ-

բախտությունների ողջ չարությունը կարդաց նրա մեռած հայացքում, անատամ սև բերանի ծալվածքում, ու զղվելի դարձավ ինքն իր համար, ֆշշացրեց գազազած.

— Դե, շան կնիկ, համարձակվել ես մեկ էլ ձեն հանել, ոջիլի պես կճզմեմ։— Եվ կնոջը մի կողմ շպրտեց։

Կինը լուռ վերցրեց դույլերն ու դուռը շխկացնելով բակ դուրս եկավ։ Իսկ նա շունչը ետ բերեց, դուրս եկավ նրա-տեց ձին ու համփա ընկավ երկրաբանների հետ...

Լավ է, որ գոնե ձին լավ ձի է՝ նրա միակ ուրախությունը, շատ լավ ձի է ձիաբուծարանից, մի հիմարի մեկը այդ ձին խոտանել էր գույնի համար, իբր չի ջոկվում՝ աշխետ է, թե գորշ։ Բա դա՞ է կարևորը։ Ժիր ձի է, լեռներում ինքը գիտի, թե որտեղ տաք դնի, ու գլխավորը դիմացկուն է, իսկը ոնց որ գայլ։ Ամբողջ ժամանակ օգտագործում է, բայց քաշը չի գցել։ Խոսք չկա, սրա նման ձի էս կողմերում ոչ մի չոբան չունի, բացի Թե Բոստոնից, սովխոզի այդ առաջավորից, համա՞ Թե տիպ է, դրա նման ժլատը չկա, ամբողջ կյանքում իրենք չգիտես ինչի չեն սիրում իրար, բայց դե նրա ձին, պետք է ասել, շատ լավն է, ու գույնն էլ շքեղ, ոսկեգույն, ճարպիկ, անունը Դոնկուլյուկ։ Բոստոնի բախտը բերել է։ Ոնց է պահում, պահպանում ձիուն Բոստոնը, բա ոնց, պետք է սիրուն երևա ձիու վրա, հիմի ջահել կնիկ ունի, էրնաշարի այրին, նրա, որ երեք տարի առաջ սառցաճեղքն ընկավ Ալա-Մոնգայու լեռնանցքի սառույցներում ու այլևս էլ մնաց այնտեղ...

Լեռներում մեծ մասամբ շարժվում էին մեկ-մեկ, իրար նայից, ուստի լուռ էին, Բազարբայի տրամադրությունն էլ կնոջ հետ ունեցած գժտությունից հետո խոսակցության չէր տրամադրում։ Գնում էին այդպես լուռ։ Ժամեն արդեն վերջանալու վրա էր։ Պարզվից, տաքացած լեռնակողերին՝ արևակող լանջերին, որ հավատով բացվել էին ձյան տակից, արդեն գարնան հոտ էր փչում։ Խաղաղ ու պայծառ էր այդ պահին երկրի վրա։ Յածրավայրում սադափափայլ կապտին տվող լեռնային մեծ լճի հակառակ կողմի լեռների գլխին արդեն բարձրացել էր կեսօրվա արևը։

Շուտով Բազարբայը երկրաբաններին բերից ձորաբերանը, և ահա վերջին անգամ աչքին երևաց Իսսիկ-Կուլի մաքուր

հայելին, ու տեսարանը մնաց եռևում, լեռների եռև։ Գլխավերևում սպառնալից կախված իրար հաջորդեցին գահավիժ լեռնազանգվածները։ Շուրջբոլորը քարեր էին, վայրի ամայություն, չգիտես ի՞նչ պիտի հանեն սրանք այստեղից,— զարմանում էր Բազարբայը շուրջը նայելով։ Նա որոշեց, որ երկրաբաններին հենց տեղ հասցնի, անմիջապես կվերադառնա։ Աչի-Թաշ կիրճն այնպես երկար չէ, ինչպես նրան զուգահեռ ընկած կիրճը, որ դուրս է գալիս լճամերձ տարածություն։ Մտքում դրեց, որ վերադարձի ճամփին կանցնի Բաշաատի լեռնանցքով։ Այնտեղից ավելի կարճ ճանապարհ է դեպի տուն։ Երկրաբաններին հրաժեշտ տալով, այդպես էլ արեց, բաղձալի քսանհինգտուբլիանոց թղթադրամը գրպանը դնելով, համեհային դեպս ասաց.

— Բարեկամներս, ախր դուք տղամարդ եք, չէ՞,— քըմծիծաղեց նա, գոռոզաբար բեղերը սղալելով,— ու ես էլ հո պատիկ տղա չեմ, հիմի ձեր մոտից կոկորդս չորացա՞ծ պիտի գնամ։

Բազարբայը ընդամենը մի բաժակի հույս ուներ, իսկ սրանք շռայլաբար կես լիտրանոց տվեցին. մի քիչ կանաչավուն շիշ, տեղական աննդարդյունաբերության։ Վերցրու, ուրեմն, տանը կխմես։ Այդ անսպասելի ուրախությունից Բազարբայն խոսույն զլաթթացավ։ Իրար անցավ, ցույց տվեց, թե որտեղ ավելի լավ կլինի վրան խփեն, որտեղից փայտ կտրատեն խարույկի համար, հերթով երկար սեղմում էր բոլորի ձեռքերը, ամեն մեկին առանձին հրաժեշտ տալով, ու ձիուն էլ վարսակ չտվեց, որ բերել էր հետը խուրջինի մեջ։ Առանց ուտելու էլ կդիմանա, առաջին անգամ չի։ Արագ բարձրացավ թամբին ու ճամփա ընկավ դեպի ետ։ Ինչպես և մտածել էր, շուտով դուռ կածանը և կխառնվածածածկ լեռնապարն անցնելով, իջավ Բաշաատի կիրճ։ Այստեղ, կիրճում, երկու լանջերին նոսր անտառ էր աճում ու ավելի լուսավոր էր, այնպես մռայլ չէր, ինչպես Աչի-Թաշում, սակայն ամենակարևորը, շատ առվակներ ու աղբյուրներ էին հոսում, և այդ պատճառով էր կոչվում Բաշաատի՝ Աղբյուրի կիրճ։

Կիսամուշտակի վրայից անձրևանոցի գրպանում դրած փոքրիկ շիշը նրան հանգիստ չէր տալիս։ Շարունակ ձեռքը

տանում շոշափում էր ու մտածում, թե որտեղ, որ առվակի մոտ ավելի լավ կլինի կանգ առնել։ Իր չափը նա գիտեր, շշի կեսը կարող էր խմել, վրայից էլ ջուր խմել ու շարունակել ճամփան։ Բազարբայի համար այդպիսի դեպքերում կարևորը մի կերպ թամբին նստելն էր, իսկ հետո՝ ձին վրա-տահելի էր, ինքը տեղ կհասցներ։ Բազմաշարշար Կոկ Թուրսունը ճիշտ էր ասում, որ սատանան Բազարբային պահում է թևատակից՝ ոչ մի անգամ թամբից չէր ընկել։

Եվ ահա վերջապես ճամփին մի վտակ նրան դուր եկավ, որ քարերի վրայով զմայլելի կկլկլում էր թեթևակի սառած, փուխր ու թափանցիկ սառցաշերտի տակ։ Բազարբային տեղը հարմար թվաց։ Շուրջը մանրուռու և կծոխուրի թփուտներ էին, ձյունն էլ քիչ էր, ու ձիուն էլ կարող էր ջրել ու կերակրել։ Նա ձին արձակեց, վարսակով խուրջինը թամբից իջեցրեց, կապը քանդեց ու բացված մասով ձիու բերնի տակ դրեց։ Ձին սկսեց վարսակը ճրթճրթացնել, ծամել, թեթևացած շունչ քաշելով ու աչքերը փակելով, ասես վրայից թափ տալով հոգնածությունը։ Իսկ Բազարբայը հարմար տեղավորվեց ջրի մոտի ծուռումուռ կոճղին, հանեց կեսլիտրանոցը, հիանալով բռնեց լույսի դեմ, բայց ոչինչ չտեսավ, ետևս նկատեց միայն, որ օրն արդեն մոտենում էր ավարտին, ամպերները լեռներին արդեն շեղ էին, մինչև արևի մայրամուտ մնում էր մի ժամից քիչ ավելի, իսկ գուցե դրանից էլ պակաս։ Սակայն Բազարբայը շտապելու բան չուներ։ Օղու ծանոթ բթացնող ազդեցությունը կանխաճաշակելով, նա անշտապ հաստ եղունգով բացեց շիշը, հոտ քաշեց, գլուխը թափ տվեց ու շիշը տարավ բերանը։ Ջղաձգորեն մի քանի մեծ, այրող կում արեց։ Հետո բռով ջուր վերցրեց վտակից ու սառցակտորների հետ բերանը լցրեց։ Սառցակտորներն այնպես ճրթճրթացրեց, որ նույնիսկ ուղեղի մեջ ճրթճրթոց լսվեց։ Բազարբայի դեմքն այլանդակ ծամածռվեց, նա փնչացրեց, հետո կոնչաց, աչքերը փակեց, սպասելով, թե երբ սիտի գլխում թմրություն զգա։ Սպասում էր այն պահին, երբ ողջ հյուսապատող աշխարհը՝ լեռները, ժայռերը, դառնա երիտուն, լուդա ասես մշուշի մեջ, վեր խոյանա, սպասում էր, երբ իր տաքացած գլխում լսվեն ալոտ

ձայներ և հնչյուններ, ու անշարժացել էր, աչքերը փակել, պատրաստ տրվելու արբեցման և թուլացման այդ պահին կողքին մի տեղ անորոշ վնգստոց լսվեց, կարծես երեխա էր թնկթնկում. ի՞նչ կարող էր լինել։ Կծախուրի թփուտների նաև մի տեղ, քարակույտերի նաև, մեկը դարձյալ վնգստաց իսկական շան լակոտի նման... Բազարբայն ուշադրությունը լարեց, ականջ մի կում էլ արեց շշից, հետո մի կողմ դրեց, քարին հենելով, շրթունքները սինդ սրբեց ու տեղից վեր կացավ։ Նորից ականջ դրեց, լսողությունը լարած։ Եվ գիտի ընկավ, հաստատ, չի սխալվում։ Ինչ-որ գազանի ձագեր էին ձայն տալիս։

Դա գայլերի որջն էր, վնգստում էին Աքբարայի և Բաշչայնարի ձագերը, ծնողների երկար բացակայությունից տխրած։ Մոլընկումի տափաստանից մեծ փախուստից հետո, մերձալդաշյան եղեգնուտի հրդեհից հետո, երբ մի ամբողջ տարի նրանք ստիպված եղան տեղ որոնել, դա ժամանակից շուտ ծին էր՝ գարնան դեմ Աքբարան չորս ձագ ունեցավ։

Իսկ Բազարբայն արդեն գնում էր դեպի որջը, գազանակերծանները տնտղելով։ Եթե Բազարբայը խմած չլիներ, հավանաբար նախ կմտածեր, թե արժե՞ այդտեղ մտնել։ Նա բունն անմիջապես չգտավ ծերպում։ Օգնեց փորձը. ձյան շերտն ուշադիր զննելով, նա շղթայաձև ձգվող հետքեր հայտնաբերեց՝ պարզ էր, զգուշության համար, գայլերը շարունակ հին հետքերի վրայով էին անցնում։ Հետո Բազարբայը թփերում, քարակույտերի մեջ, կրծոտած, կիսակրծոտած որսի մի ամբողջ գերեզմանոց գտավ։ Ուրեմն, գազանները հաճախ այստեղ էին քարշ տալիս որսի մի մասն ու հանգիստ ուտում վերջացնում էին որջում։ Գայլերի կերածից մնացած մեծ ոսկորների և հոդավորումների քանակից դատելով, գազաններն այստեղ վաղուց էին ապրում։ Հիմա արդեն որջի մուտք գտնելը հեշտ էր։ Դժվար է ասել, թե ինչու Բազարբայը չվախեցավ ծերպ մտնել, որտեղ կարող էին մեծ գայլեր լինել։ Սակայն սովածացած անհասկացող պատիկնները շարունակ վնգստալով մաանում էին իրենց ու ասես իրենց մոտ էին կանչում։

Եթե իմանային ծծկերները, որ Աքբարան ստիպված էր այս անգամ Բաշչայնարի հետ որսի գնալու. գայլերի համար

սկսվել էին նախագարնանային ծանր օրերը, երբ բոլոր կենդանիները սաստիկ նիհարել էին, քշացել, երբ շրջակայքում ամենաթեթև վայրի այծերը և վայրի խոյերն արդեն ոչնչացվել էին, երբ ծինի ապասելով այծերի հոտերը քաշվել էին դժվար մատչելի ժայռերի վրա, իսկ ընտանի հոտերը նույն պատճառով հիմա պահվում էին միայն փակ փարախներում։ Այս պայմաններում կուրծք տալ մշտապես ծծող ձագերին այնքան էլ հեշտ չէր։ Աքբարան նիհարել էր, ինքն իրեն նման չէր՝ մեծագլուխ, բարակոտն, պոչուկները կախ ընկած։ Գայլերն, ընդհանրապես, չափազանց դիմացկուն գազաններ են՝ կարող են մի քանի օր շարունակ մնալ առանց սննդի, սակայն կերակրող էգ գայլը չի կարող այդպես առանց սննդի մնալ։ Կյանքն ստիպում էր Աքբարային ոխակի դիմել՝ դուրս գալ մեծ որսի, սակայն եթե նա կործանվեր, կկործանվեին և իր ծծկերները։

Թաշչայնարն, ինչպես միշտ, հետևում էր նրան։ Նրանք պետք է արագ գործը գլուխ բերեին, արագ որս գտնեին, արագ պատառոտեին, միսն արագ խժռեին, առանց ծամելու, կտոր-կտոր կուլ տալով և արագ ետ վազեին իրենց որջ կերածը մարսելու, իսկ էգ գայլի համար ամենակարևորը՝ ձագերին կաթ տալու։

Այդ օրը ճանապարհը արևոտ մասերում սայթաքուն էր, իսկ ստվերոտ տեղերում պինդ՝ ձմռան սառածությունից։ Սակայն գայլերն առանց ընթացքը դանդաղեցնելու մեծ ցատկերով դնում էին լեռներով։ Տարվա այդ եղանակին, երբ մանրիկ կենդանիները գետնի տակն են անցնում, իսկ վայրի կամ ընտանի հոտերին հասնել չի լինում, կյանքը բարդանում է նրանով, որ խոշոր կենդանիների՝ ձիերի, խոշոր եղջերավոր անասունների, ուղտերի վրա առանց զուգընկերոջ չի կարելի հարձակվել։ Ինչքան էլ ուժեղ լիներ Թաշչայնարը, նա խոշոր որսը մենակ չէր կարող մինչև որջ քարշ տալ։ Վերջին անգամ, մի երկու օր առաջ նա մի էշ էր պատառոտել, որ մոլորվելով նախալեռներ էր հասել։ Դիշերը Աքբարան որջից դուրս եկավ ու կուշտ խժռեց էշի միսը, սակայն հո ամեն օր չեն էշերն այդպես անհոդ քարշ գալիս նախալեռներում։ Սովորաբար նրանց հետ մարդիկ են լի-

նում։ Ահա թե ինչու Աբբարան ինքը դուրս եկավ որսի՝ հենց որսատեղում կուշտ ուտելու։

Սկզբում Աբբարան իրեն անվստահ էր զգում, շարունակ անհանգստանում էր, մեկ-երկու անգամ նույնիսկ ուզեց ճանապարհից ետ դառնալ, անհանգստանում էր ձագերի համար. չէ որ նրանց մշտապես տաքություն ու կաթ է պետք, սակայն իրեն հաղթահարեց, ստիպեց մոռանալ որջի մասին։ Իսկ երբ լճամերձ գոտում հետքի ընկան, որսորդական բնազդը խլացրեց ամեն ինչ։

Աբբարայի և Թաշչայնարի բախտը բերեց. թարմ հետքի նոսից գնալով նրանք մի ընդարձակ լեռնագոգ ընկան, ուր ճանապարհից հեռու միայնակ արածում էին երեք յակ, հավանաբար հոտից հետ մնացած։ Գայլերը դրանց հետ արդեն գործ ունեցել էին մի տարի առաջ, դարձյալ ծայրահեղ կարիքից դրդված։ Այն ժամանակ նրանք, եկվոր գայլեր, ուրիշ ճար չունեին, պետք է վերցնեին, ինչ պատահում էր։ Իսկ հիմա՝ ժամանակն էր շատ սուղ։ Մոտերքում մարդ չկար և գայլերը, շուրջը նայելով, բաց գրոհի դուրս եկան։ Մոտ վազող գայլերին տեսնելով, յակերը փախուստի դիմեցին, անշնորհք քացի տալով և բառաչելով, սակայն գայլերը վրա հասան և յակերը կանգ առան,— կոզերը գնում-գալիս էին սարսափից,— ու պոզերով հարձակվեցին գայլերի վրա։ Ուրիշ ելք չունեին։ Մի պահ աշխարհում տիրեց նախամարդկային հավասարակշռություն. արևը երկնքում, ամայի լեռները, կատարյալ լռությունը, մարդկանց բացակայությունը՝ հավասարապես պատկանում էին և որոճողներին, և գիշատիչներին։ Որոճողներն ուզում էին խուսափել ընդհարումից, սակայն դիշատիչները չէին կարող այդպես թողնել-գնալ, չէին կարող մոռանալ իրենց տանջող քաղցը։ Նրանք անխուսափելիորեն պետք է պայքարի մեջ մտնեին և պատռոտեին յակերից գոնե մեկին, որպեսզի կենդանի մնային իրենք և կյանք տային իրենց սերունդին։ Յակերը խոշոր չէին, ոչ էլ մանր էին, միջին բազածության, ձմռան վերջին փրչոտ բրդակալած։ Եվ ձիու պոչերով այդ ցուլերը հասկացան պայքարի անխուսափելիությունը։ Սարսափած ու չարացած, նրանք գլուխները ցած կախեցին, խուլ բառաչելով ու սմբակներով գետինը փորփրելով։ Իսկ երկնքում առաջվա

նման փայլում էր արևը, ու լեռները, ուր ձյունն արդեն սկսել էր հալվել, լուռ շրջանակում էին դեղին բաց լեռնագոգը, ուր դեմ հանդիման հանդիպել էին խոտակերներն ու գիշակերները։ Գայլերը պատվում էին յակերի կողքին, հարմար պահ ընտրելով։ Աքբարան ժամանակ չուներ՝ ձագերը նրա վերադարձին էին սպասում։ Եվ իրեն վտանգելով, նա առաջինը նետվեց այն յակի վրա, որին ավելի թույլ համարեց։ Յակի աչքերը արնակալած էին, բայց Աքբարան, այնուամենայնիվ, նրա հայացքի մեջ մի անվստահություն նկատեց, չնայած կարող էր և սխալվել։ Սակայն մտածելու համար ուշ էր արդեն։ Աքբարան նետվեց յակի վզին։ Վայրկյանների խնդիր էր։ Մինչ կատաղած յակը գլուխը թափահարելով փորձում էր ցած գցել էգ գայլին, սրպետզի հետո պոզերով գետնին գամի, Թաշչյանարը պետք է մյուս կողքից հարձակվեր, ժանիքները խրեր յակի կոկորդը, ու այնպես, որ միանգամից պոկի վզի երակները, արյունը բաց թողնի և ուղղը շարքից հանի։

Ու այդպես էլ եղավ։ Սակայն մինչ այդ յակը հասցրեց Աքբարայինն ցած գցել, սեղմել գետնին ու հիմա բառաչում ու պոզերով բարձրացնում-ցած էր նետում նրան՝ ևս մի քիչ, ու նա կջնջեր, կտրորեր գայլին, սակայն Աքբարան օձի պես դուրս պրծավ պոզերի արանքից, ու նորից թռավ յակի գլխին, ժանիքները խրեց նրա պինդ բաշին, որ ծածկված էր երախը սեզի նման կարող մազերով։ Այդ հարձակման մեջ երևաց նրա դաժան գայլային էությունը, արտահայտվեց նրա գայլային դաժան կոչումը՝ սպանել, սրպետզի ապրել։ Բայց հիմա զոհն այնքան էլ խեղճ ու անվնաս չէր, սայթակ կամ նապաստակ չէր, որ հնազանդ ենթարկվեր բռնությանը։ Կատաղի յակը, թեև արյունաքամ էր լինում, կարող էր դեռ դիմադրել, իսկ գուցեև հաղթել։ Սակայն, այնուամենայնիվ, փայլեց աստղը՝ Աքբարայի պահպանիչը. գրեթե նույն պահին Թաշչյանարը հարձակվեց կողքից ու կառչեց յակի կոկորդից, որն զբաղված էր էգ գայլի հետ գոռեմարտով։ Մահացու ցատկ, մահացու ուժ ուներ Թաշչյանարը։ Այդ ցատկի մեջ էր դրել նա իր ողջ ուժը։ Յակը հրերաց, խռխռացրեց, սեփական արյունից

խեղդվելով, և գետին տապալվեց պատռված կոկորդով, շարունակելով բառաչել ու ցնցվել։ Աչքերը ապակիացան։ Մինչ այս կռիվն էր գնում, կենդանի մնացած մյուս երկու յակերը սկսեցին փախչել, մի պատկառելի տարածություն վազելով, անցան բայլքի և առանց շտապելու շարունակեցին իրենց ճանապարհը լեռնագոգում, ասես ոչինչ չէր եղել։

Իսկ գայլերը վրա ընկան քրքրելու դեռ կիսակենդան յուլին։ Նրանք չէին կարող սպասել, մինչև որսը շունչը փչի։ Ժամանակ չունեին մտածելու, թե որ ծայրից սկսեն նրան խժռել։ Աքբարան յակի աճուկն էր պատառոտում, օգնելով իրեն թաթերով ու մագիլներով, և անմիջապես կուլ էր տալիս դեռ տաք, կենդանի մսակտորները։ Նա գիտեր է որքան կարելի է շատ այդպիսի մսակտորներ կուլ տար ու շտապով վերադառնար իր որջը, որտեղ նրան էին սպասում փոքրիկ գայլաձագերը։ Թաշչայնարը նրանից հետ չէր մնում։ Կատաղի մռնչալով, նա իր հզոր ծնոտներով ջարդոտում էր հողամիացուքյունները, մարմինը պատառոտում ձև մասերի, բարբարոս մսագործի նման։

Ամեն ինչ ընթանում էր իր կարգով։ Սկզբում գազանները կուշտ միս կխժռեն, հետո ճամփա կընկնեն, որ շուտ իրենց որջը հասնեն, իսկ դիշերը նորից կգան, որպեսզի մի անգամ էլ կուշտ ուտեն և մնացած միսը քարշ տան մի տեղ ու պահեն, բայց դա հետո։ Իսկ առայժմ գայլերը խեղդվելով մսակտորներ էին կուլ տալիս...

Իսկ ժայռի տակի այն ծերպում, որտեղ որջն էր, սովածացած գայլաձագերն ակամա վնգստում էին, իրար կպչում, որ տաքանան, հետևում էին իրարից ու նորից կծիկ դառած իրար սեղմվում, երբ հանկարծ դրսից խշխշոց լսվեց,— դա երջ էր ներս սողում Բազարբայը,— և նրանք ավելի ուժեղ սկսեցին վնդվնգալ, ծուլ, երերուն ոտիկներով շարժվեցին դեպի ելքը, որով շատ հիշատացրին մարդու գործը։ Բազարբայը լարումից քրտնել էր ոտքից գլուխ։ Նա շշաշփելով ներս սողաց անցքից միայն բաճկոնով, կիսամուշտակը հանել էր, բռնեց գայլաձագերին, երեքին իրար ետևից ծոցը դրեց, և չորրորդի, վերջինի վզից բռնած դուրս սողաց անցքից։ Իսկ երբ դուրս եկավ, աչքերը կկոցեց, այնպես որ

փայլփլում էին բարձր լեռները։ Ամբողջ կրծքով շունչ առավ, շուրջը խլացուցիչ լռություն էր։ Նա միայն իր շնչառությունն էր լսում։ Գայլաձագերը ծոցում խլրտացին, իսկ նա, որին բռնել էր վզից, փորձեց ազատվել։ Բազարբայը շտապեց։ Շարունակելով ծանր շնչել, նա վերցրեց կիսամուշտակը, վազեց դեպի առուն։ Իսկ հետո ամեն ինչ շատ լավ ստացվեց։ Ջորս գայլաձագերին, որոնց նա վճռեց փախցնել և վաճառել, շատ հարմար կարելի էր տեղավորել խուրջինի մեջ։ Այն բանում, որ դրանց շատ շահեկան կվաճառի, նա կասկած չուներ, անցյալ տարի մի չորան կենդանաբանական այգուն վաճառել էր գայլերի մի ձագախումբ, և ամեն մեկի համար հիսուն ռուբլի էր ստացել։

Բազարբայը վարսակով խուրջինը հանեց խոխոխացնող ձիու մռութի տակից, վարսակն շտապով թափեց գետնին, երկուական ձագ մտցրեց յուրաքանչյուր տոպրակի մեջ, խուրջինը գցեց թամբին, կապեց թամբափոկերով, որպեսզի չշարժվի, սանձը ձիու բերանը դրեց ու առանց հաղապելու ոտքը մտցրեց ասպանդակին։ Հարկավոր էր շտապ հեռանալ, քանի դեռ ուշ չէր։ Ա՛յ սա իսկական հաջողություն էր... Բայց հարկավոր էր գլուխն ազատել, քանի գայլերը չէին վերադարձել. այդ մեկը Բազարբայը լավ էր հասկանում։ Օղու կիսատ շշի մասին, որ թողել էր քարին հենած, նա հիշեց, երբ արդեն թամբի վրա էր։ Բայց օղու վրա էլ թքած ուներ։ Թող մնա, նա այնքան կստանա գայլաձագերի համար, որ մի քանի տասնյակ կեսլիտրանոցներ կառնի։ Ու այդպես էլ շտապեցնում էր ձիուն։ Պետք էր որքան կարելի է շուտ, քանի դեռ արևը մայր չէր մտել, հեռանալ կիրճից։

Հետո Բազարբայն ինքն էլ պիտի ղարմանա, թե ինչպես չմտածեց, չզգուշացավ, չէ որ մոտը զենք չուներ, ինչպես համարձակվեց մտնել որջ։ Իսկ եթե մայր գայլը, իսկ գուցեև մեծ գայլը մոտերքում լինեին.. .Ախր նույնիսկ մայր եղջերուն, որ այնքան հեզ է, նա էլ է պաշտպանում իր ձագերին, հարձակվում է թշնամու վրա...

Բայց այդ ամենը նա կմտածի ավելի ուշ։ Ու ինքն էլ կսարսափի, երբ պատկերացնի հատուցումը արածի համար։ Իսկ այս պահին նա խթանում էր աշխատ-թխագորշ ձիուն, որպեսզի սա ավելի արագ վազի Բաշատի կիրճի քարքարոտ

հատակով, ու շարունակ աչքը արևին էր, որ թիկունքում մայր էր մտնում լեռների հետև, որտեղից, ասես արևի հետից հառնելով, իջնում էր վաղ մթնշաղը։ Այո, պետք էր շտապել, արագ հեռանալ լեռնալանջից, լճամերձ տարածությունն դուրս գալ, այնտեղ բաց տեղեր են, որ կողմ ուզում ես սլացի, ուր ուզում ես քշի ձիդ, ոչ թե այս նեղ կիրճի նման...

Եվ որքան մոտենում էր Բազարբայը լճամերձ տարածությանը, սովոր վայրերին, այնքան ավելի ինքնավստահ ու նույնիսկ անպատկառ էր դառնում։ Նա արդեն ուզում էր պարծենալ հաջողությամբ, ու մտածում էր, թե չարժե՞ որ ճամփին մտնի իր բաժակակից չոբաններից մեկնումեկի մոտ, ցույց տա ավարը ու նշի այդ հաջողությունը, ասենք թեկուզ մի հարյուրական գրամ չորսից յուրաքանչյուրի համար. ինքը, պարզ է, պարտքի տակ չի մնա, հենց որ կենդանի ապրանքը ծախի։ Նա սկսել էր ափսոսալ, որ շտապելուց վտակի մոտ էր թողել համարյա երկու երրորդի չափով լիքը կհսլիտրանոցը. ա՜խ, ոնց կխմեր ճամփին, հենց շշից... Ինչքա՜ն էր ուզում իրեն հաճույք պատճառել։ Սակայն գիտակցությունն, այնուամենայնիվ, հուշում էր, որ դա դեռ կհասցնի, նախ պետք է գայլաձագերին անվնաս տեղ հասցնի ու կերակրի, որոնք թեև դիմացկուն են, բայց ինչքան չլինի ծծկեր են, նոր-նոր են աչքերը բացվել, հրեն երևում է, ինչքան անմիտ են նայում... Տեսնես ոնց են մնացել խուրջինի մեջ, հանկարծ չսատկե՞ն։ Բազարբայի մտքով էլ չէր անցնում, որ զարհուրելի հետապնդությունն արդեն սկսվել է և որ ասուլած միայն գիտե, թե դա ինչով է վերջանալու...

Սպանված յակի միսը կուշա ուտելով, գայլերը կածանով վերադառնում էին տուն։ Աոջևից Աքբարան, նրա հետից Թաշչայնարը։ Եվ ամենից ավելի նրանք ուզում էին հասնել ժայռի տակի իրենց բունը, ձագերի մոտ, պառկել նրանց կողքին, հանդարտվել, իսկ հետո լավ հանգստանալով, վերադառնալ հովտում յակի կիսատ թողնված մարմնի մոտ։

Այս է կյանքը՝ այստեղ հասի, այնտեղ հասի, որա համար է, որ ասում են՝ գայլին ոտներն են կերակրում... Եթե միայն ոտները լինեին... Չէ որ յակի մարմնի վրա կարող

են ալք դնել և ուրիշ գայլեր. կան այդպիսիները, որոնց համար ուրիշինը ձեռք գցելը ոչինչ չարժե, և այդ ժամանակ արդեն առանց կռվի չի սուացվի, ու այն էլ կատաղի, արյունահեղ կռիվ: Սակայն իրավունքը մնում է իրավունք, և ուժը իրավունքի կողմն է...

Դեռ հեռվից, որջի մոտերքում Աքբարան ինչ-որ վատ բան զգաց: Կարծես մի թուշուն էր իր կողքից սլանում սուվերի նման, մի սարսափելի բան էր նա զգում այդ մայրամուտի լույսի տակ: Տագնապալի արնագույն ցոլքը ձյունածածկ կատարներին գնալով մթնում էր ու մռայլվում: Եվ որջին մոտենալով, նա արագացրեց վազքը՝ ետ չնայելով նույնիսկ Թաշչայնարին, ու վերջապես սկսեց ուղղակի սլանալ անբացատրելի նախազգացումով համակված: Եվ այդ պահին տագնապն ավելի սուր նրա սիրտը թափանցեց, օդի մեջ օտար հոտ զգաց. ձիու ուժեղ քրտնահոտ էր գալիս և էլի ինչ-որ մի զզվելի թմրեցնող հոտ: Ի՞նչ է սա: Ինչի՞ց կլինի: Մայր գայլը վտակի, թփերի միջի կածանով նետվեց դեպի ժայռի տակի ծերպը, մտավ որջ, սկզբում քարացավ, հետո փնչացրեց երսաշան նման, հոտոտելով դատարկված և անտեր մնացած բնի բոլոր անկյունները, դուրս ցատկեց և մուտքի մոտ ընդհարվելով Թաշչայնարին, կատաղի հարվածեց նրան, ասես նա էր մեղավոր, ասես նա թշնամի էր, և ոչ հայր, ոչ գայլ-ամուսինը: Ոչ մի մեղք չունեցող Թաշչայնարն իր հերթին ցատկեց որջ և հետո հասավ մայր գայլին արդեն վտակի մոտ: Աքբարան հետքերը հոտոտելով իրեն կորցրած ետ ու առաջ էր վազվզում, դրանցով հասկանալով կատարվածը: Մեկը եղել էր այստեղ, թարմ հետքերը նրան ասում էին, որ նոր հենց այստեղ մարդ է եղել, ահա թափթփած վարսակի կույտ, որից ձիան թքի հոտ է գալիս, ահա ձիու թրիք, սա էլ ինչ-որ բան է շշի մեջ, թմրեցնող, զզվելի հոտով, և գայլը ցնցվեց՝ սպիրտի հոտը քաշելով, ահա և մարդու հետքեր ձյան վրա: Կիրզայե կոշիկների հետքեր: Այդպիսի կոշիկներ չոբաններն են հագնում: Սարսափելի թշնամին, որ այստեղ է եկել ձիով ու շշի այդ զզվելի հեղուկով, դատարկել է որջը, փախցրել ձագուկներին: Իսկ եթե ուղղակի խժռե՞լ է: Ու նորից Աքբարան հարձակվեց ոչ

մի մեղք չունեցող Թաշչայնարի վրա, կատաղաբար նմանը կծոտեց նրան, հետո խուլ մռնչալով վազեց այն կողմ, ուր հետքերն էին տանում։ Թաշչայնարը հետևեց նրան։

Գայլերն անսխալ գնում էին հետքով՝ շարունակ առաջ և առաջ, կիրճից դուրս, նորից առաջ և առաջ, այնտեղ, մարդկանց մոտ, դեպի լճամերձ տարածությունն էին տանում հետքերը...

Իսկ Բազարբայը, կիրճից դուրս գալով, մանրավարտ գնում էր բաց տարածությամբ, թեքավուն բլրակներով, ուր փռված էին ամառային արոտավայրերը, և ահա հետևում նշմարվեց լճի մթնող եզրը։ Եվս մի ժամ, ու նա տանը կլինի։ Արևն արդեն իջել էր երկրի ամենածայրը, լեռնակատարների միջև ու թեքվանում էր մարելով։ Իսսիկ-Կուլի կողմից սառը քամի փչեց։ «Հանկարծ էս գայլածագերը չսառե՞ն»,— մտածեց Բազարբայը, սակայն փաթաթելու բան չուներ, ու վճռեց նայել, թե ինչ օրի են դրանք խուրջինի մեջ, կենդանի են, թե ոչ։ Թե չէ սատկած ձագերը բերես՝ ո՞ւմ են պետք։ Նա ձիուց ցած իջավ, ուզում էր թամբի փոկերն արձակել, որ խուրջինը հանի ու նայի, տեսնի ինչն-ինչոց է, բայց ձին սկսեց միզել ոտքերը չոռած, մեզն այս ու այն կողմ ցայտեցնելով։ Ու հանկարծ, կտրուկ կանգնեցնելով առատ միզահոսքը, զարհուրած խոխոտացնելով, մի կողմ նահավեց այնպես, որ քիչ մնաց սանձափոկը Բազարբայի ձեռքից պոկի։

— Կանգնի՛,— բղավեց Բազարբայը ձիու վրա։— Ջարտություն չանես։

Սակայն ձին, ոնց որ կրակից, վախեցած մի կողմ նետվեց։ Եվ այդ ժամանակ Բազարբայն առանց նայելու հասկացավ, թե բանն ինչ է։ Թիկունքով, որ մի վայրկյանում սառեց, նա զգաց մոտեցող գայլերին։ Բազարբայը նետվեց դեպի ձին ու հազիվ կարողացավ բռնել ձիու բաշից, ու ձին փռնչացնելով ու դիմադրելով կատաղի սլացավ։ Քամուց կոացած, Բազարբայը նայեց շուրջը։ Ջույգ գայլերը վազում էին շատ մոտ։ Պարզվում է ձին քիչ առաջ վախեցել էր, երբ գազանները թափով թմբի վրա էին ելել։ Եվ հիմա գայլերն աշխատում էին նրա ճամփան կտրել։ Բազարբայն սկսեց աղերսել, հիշել աստվածներին, որոնց երեսին շատ

անգամ ուղղակի թքում էր։ Հայհոյում էր երկրաբաններին, որ պատուհաս եղան իր գլխին. «Այ, սատկեք դուք ձեր էդ ոսկով»։ Մեղա էր գալիս, ներողություն խնդրում կնոջից. «Խոսք եմ տալիս քեզ, հասատատ, թե ողջ մնամ, էլ երբեք մատով չեմ դիպչի քեզ»։ Ափսոսում էր, որ աչք դրեց գայլաձագերին։ «Ախր ինչիս էր պետք դրանց ձեռք տալ, ինչի՞ մտա էդ փոսը։ Պիտի իրար հետևից գլուխները քարին տայի սատկացնեի, պրծավ-գնաց, իսկ հիմի ի՞նչ անեմ սրանց, ի՞նչ անեմ»։ Պայուսակը պինդ կապված էր թամբին, այդպես ընթացքից չէր լինի դուրս գցել։ Հակառակի պես էլ սկսեց արագ մթնել, խավարը տարածվեց, ծածկեց անմարդաբնակ տարածությունները. ոչ մեկի պետքը չէր, թե նա ինչ զարհուրելի վիճակում էր։ Միայն հավատարիմ ձին էր ամբողջ ուժով սլանում, սարսափից խելացնոր։

Բայց Բազարբայն ամենից ավելի ափսոսում էր նրա համար, որ մոտը հրացան չուներ. ինքը գիտեր, թե ոնց մեկական գնդակ կմեխեր դրանց, ինքը չէր վրիպի։ Ի՞նչ մի մեծ բան է հրացանը, ամեն չոբան էլ տանն ունի, բայց ով է մշտապես հետը ման տալիս։ Ա՛յ թե իմանար։ Բազարբայը բղավում էր, ինչքան ուժ ուներ, որ սարսափեցնի գազաններին։ Ամբողջ հույսը ձիու վրա էր, լավ էր, որ ձիաբուծարանից էր ձին...

Դա կենաց ու մահու հետապնդում էր...

Այդպես նրանք սլանում էին մթնած բլուրներով՝ ձյալվորը հափշտակած գայլաձագերը խուրջինի մեջ, իսկ նրանց ետևից Աքբարան ու Թաշչայնարը։ Իսկ գայլերը, գողացված ձագերի հոտն առնելով, իրենց աղերսն էին անում, իրենց վիշտը ողբում։ Եթե ձին սայթաքեր գոնե մի անգամ, գոնե մի պահ, եթե դրանից առաջ նրանք այդքան միս խժռած չլինեին, այդպե՞ս կվազեին, մի՞թե չէին հասնի հափշտակողին ու միանգամից պատառ-պատառ չէին անի, որպեսզի արյունահեղ հատուցումով հաստատեին արդարությունը սերնդապահության դարավոր դաժան պայքարի։ Բա այդպե՞ս էին գայլերը Մոլընկումի տափաստանում սայգակների շուրջկալի ժամանակ, երբ արագ վազքով ավելի ու ավելի նեղում էին, որպեսզի հարկավոր կողմը շրջեն փախչող որ-

սը։ Սակայն գայլերը շուրջկալի էին դուրս գալիս քաղցած, նախապես պատրաստվելով կայծակնային ցատկերի։

Վազելը դժվար էր հատկապես Աքբարայի համար, որն ավելին էր կերել ձագերին կերակրելու համար։ Սակայն նա էլ չէր նահանջում, վազում էր, ինչքան ուժ ուներ, ու եթե հաջողվեր հասնել ձիավորին, ոչ մի վայրկյան չկասկածելով պիտի նետվեր վրան, ինչով էլ դա վերջանալու լիներ։ Անշուշտ, նրա կողքին էր Թաշչայնարը՝ անխորտակելի ուժն ու հենարանը, բայց դե ամեն մեկն իր տեղն է մահանում... Եվ նա պատրաստ էր ընդունելու, ինչ մահ էլ լիներ, միայն թե ձեռքն ընկներ, միայն թե հասներ արագավազ ձիով այդ մարդուն... միայն թե...

Ու թեև արագավազ էր Բազարբայի ձին, նա սարսափով նկատեց, որ գայլազույգը դանդաղ, բայց հաստատ հասնում է իրեն կողքից, աջ կողմից, փակելով ճանապարհը դեպի լճամերձ տարածություն։ Նենգ գազանները մտադիր էին հնձյալին քշել դեպի լեռները, և այդ դեպքում արդեն՝ վազ թե ուշ, անխուսափելիորեն հանդիպել նրան դեմ առ դեմ։ Այդպես էլ ստացվում էր, ձին սարսափից իրեն կորցրած շարունակ ջանում էր աջից վրա հասնող գայլերից փախչել լեռների կողմը։ Սակայն ձիուն մարդն էր կառավարում, մտածող արարած, ընդունակ հասկանալու նրանց քայլը, և հենց այդ էր գազանների սխալը։

Ու մի հանգամանք էլ փրկեց Բազարբային։ Երբ ճակատագրի ողորմածությամբ առջևում երևացին մոտակա փառախի կրակները, դա,— որ բախտը բերում է՝ բերում է,— պարզվեց Բոստոն Ուրկունչիևի փարախն էր։ Այո, այո, հենց այն Բոստոնի, առաջավորի, կուլակի, որին ինքն այնքան չէր սիրում։ Բայց հիմա նրա պետքը չէր, թե ով ում սիրում է, կամ չի սիրում, ինչ տարբերություն, ամեն կենդանի շունչ հիմա նրան սիրելի էր, ինչպես իր սեփական կյանքը։ Կարևորը՝ ճամփին մարդու բնակավայր է հանդիպել, դա է ուրախությունը, դա է փրկությունը։ Եվ նա հրճվեց, ձին իրունկներով խթանեց, ու ձին նոր ուժով սլացավ այնտեղ, ուր մարդիկ էին, հոտեր։ Սակայն Բազարբային թվաց ամբողջ մի հավիտենություն անցավ, մինչև համարձակվեց ասել ինքն իրեն, որ կարող է բարեհաջող վախճանի հույս ունե-

նալ, բայց ահա գնդացրի նման տկտկաց Բոստոնի էլեկտրաշարժիչը, ահա իրար անցան չոբանների շները և անհանգիստ հաչոցով ընդառաջ վազեցին նրան։ Ասենք, գայլերն էլ հետ չէին մնում, մոտենում էին ավելի ու ավելի, ձին հալից ընկել էր, և Բազարբայն արդեն զգում էր գազանների տաքացած շունչը։ «Օ՜, Բաուբեդին աստված, փրկիր ինձ,— աղաչում էր Բազարբայը,— միայն փրկիր, ես յոթ գլուխ անասուն քեզ զոհ կմատուցեմ»։

«Փրկվեցի ես։ Փրկվեցի»,— հրճվում էր Բազարբայը։

Իհարկե, մի ժամ էլ չանցած, նա կմոռանա իր խոստումները, այդպես է մարդն իր բնույթով...

Սակայն այն պահին, երբ չոբանները մոտ վազեցին, նա ուղղակի ընկավ նրանց ձեռքերի վրա, շարունակ կրկնելով.

— Գայլերը, գայլեր էին հետևից ես ընկել։ Ջուր, ջուր տվեք։

Իսկ գայլերը, երևում է, պատվում էին մոտերքում, չէին հեռանում, սպասում էին, համառում։ Բոստոնի ամեհնացում իրարանցում սկսվեց. հովիվները վազվզում էին, փակում անասնոցների դռները, իրար ձայն էին տալիս մթության մեջ, մեկը բարձրացավ տանիք ու մի քանի անգամ կրակից հրացանից։ Շները բարձր, անդադար հաչոց էին գցել, բայց բակից դուրս չէին գալիս։ Մնում էին լուսին մոտ։ Շների վախկոտությունը ջղայնացնում էր տերերին։

— Քը՜ս, քը՜ս։ Բռնի՛ էհ, սրանք գայլախեղդ չեն, ը... խեղդ են,— քսի էր տալիս մեկը խոպոտ ձայնով։— Առա՛ջ, շո՛ւտ։ Աքսա՛շ, Ջուլբա՛րս, Ջա՛յս, Բարպալան։, Առա՛ջ։ Քըսի՛, քըսի՛, բռնի՛։ Վայ ձեզ, պոչներդ քաշել եք, վախենում եք գայլերի հետ կռիվ բռնել։

— Շունը մնում է շուն,— առարկեց նրան ուրիշ ձայն։— Ինչի ես ձենդ գլուխդ գցել։ Ջիավորին կարող են կոշիկից բռնած ձիուց ցած քաշել, իսկ գայլի հախից չեն գա։ Ինչ ես ուզում։ Ոչ մի շուն գայլի դեմ դուրս չի գա։ Թող դրանց, թող իրենց համար հաչեն։

Սակայն ոչ անմիջապես, բնավ ոչ անմիջապես հիշեց Բազարբայը, թե ինչու էին իր հետևից ընկել գայլերը։ Միայն երբ այն տղան, որին ասված էր հանգստացնելու համար

մի քիչ ման տալ Բազարբայի ձիուն, հարցրեց հանկարծ. «Բազարբայ-բայկե, էս ի՞նչ է ձեր խուրջինի մեջ։ Կարծես մի բան շարժվում է»,— այդ ժամանակ նա հանկարծ հիշեց։

— Խուրջինի մե՞ջ։ Ախր գայլաձագերն են։ Գրողը դրանց տանի, չորս լակոտ-բոլտյուրուկ*։ Դրանց հենց որջից եմ հանել Բաշատում։ Դրա համար էին գայլերը հետևիցս ընկել։

— Ա՜յ թե ինչ։ Այ դա բան է։ Ավար եմ ասել, հա՞։ Հենց որջի՞ց։ Լավ է դեռ կենդանի ես մնացել...

— Տեսնես խուրջնի մեջ չե՞ն սատկել։ Չե՞ն խեղդվել, չե՞ն ճղմվել էդ արագ վազքից։

— Բան ասացիր։ Չի՞ր են, ինչ են։ Ախպերս, դրանք շան նման դիմացկուն են։

— Արի նայենք։ Ի՞նչ տեսակ են։

Գայլաձագերով խուրջինը վերջապես հանեցին թամբից ու տարան Բոստոնի տուն։ Այդ կարևոր գործը պետք է տեղի ունենար Բոստոնի, այստեղի գլխավոր մարդու, բնակատեղի տիրոջ տանը, թեև Բոստոնն ինքն այդ երեկո տանը չէր. շրջանում հերթական ժողով էր և ամեն անգամվա նման առաջավոր Բոստոն Ուրկունչիևը պետք է նստեր նախագահության։

Բազարբային Բոստոնի տուն տարան ոնց որ հերոսի և նա ստիպված էր ենթարկվել։ Վերջիվերջո, չնայած ինքը պատահական այստեղ ընկավ, բայց դե հյուր էր։

Չի կարելի ասել, թե Բազարբայն առաջ ոտք չէր դրել այս տուն։ Երկար տարիներ Բոստոնի հարևանությամբ, այստեղից մի յոթ կիլոմետրի վրա, չորանոցություն անելով, Բազարբայը մի երեք անգամ եղել էր այստեղ. առաջին անգամ հովիվ էրնազարի հոգեհացին, նրա, որ սառցաճեղքն էր ընկել Ալա-Մոնգոլու լեռնանցքում, երկրորդ անգամ նորից ևիև էր թաղման՝ էրնազարի մահվանից կես տարի հետո մահացավ Բոստոնի նախկին կինը (և, ասում են, լավ կին էր հանգուցյալ Արղիգուլը), ահա այդ ժամանակ Բազար-

---

* Բոլտյուրուկ — ծծկեր գայլաձագ։

բայը եկել էր թաղման, ինչպես շրջակայքի բոլոր լոբաններն ու բնակիչները, ժողովուրդը շատ-շատ էր, հապա ինչքան ձիեր, տրակտորներ, բեռնատարներ էին բերվել՝ թիվ ու հաշիվ չկար։ Իսկ երրորդ անգամ նա այստեղ եկել էր, ճիշտ է, ոչ իր կամքով, երբ մարզային պետերը որոշել էին արտադրական սեմինար անցկացնել, որպեսզի Բոստոն Ուրկուհիլը իր փորձը հաղորդի հովիվներին. նա չէր ուզում գնալ, բայց ինչ կարող էր անել, ստիպեցին ու, խնդրեմ, համարյա կես օր ստիպված եղավ դասախոսություն լսել, թե ինչպես ու ինչ պետք է անել, որ գառները չսատկեն, և բուրդ ու միս շատ տան։ Մի խոսքով, ինչպես պիտի պլան կատարեն՝ Ո՞նց կլիներ, մեծ բան է, առանց դրանց ասելու էլ շատ լավ գիտի. ձմռանը կերը ժամանակին տուր, ամռանը լեռներում ինչքան կարող ես շուտ վեր կաց և ոչ պառկիր, մի խոսքով, լավ աշխատի, աչքդ անասունի վրա պահի։ Հոգատար եղիր։ Ինչպես Բոստոնը, ասենք, ոչ միայն նա։ Բայց մեկի մոտ լավ է ստացվում, մյուսի մոտ էնքան էլ լավ չի ստացվում։ Ախր մեկի բախտը բերում է, մյուսինը կարող է չբերել։ Ասենք, օրինակ, Բոստոնի բազայում էլեկտրաշարժիչ է աշխատում՝ ամբողջ գիշեր լույս է, էլեկտրականություն կա տներում, գոմերում, և տան շուրջը։ Իսկ ինչի՞։ Որովհետև կարողացել է երկու ագրեգատ ձեռք գցել. մեկը շարքից դուրս է գալիս կամ կանգնեցվում է վերանորոգման, մյուսն է միացվում։ Իսկ մյուս լոբանները, այդ թվում և Բազարբայը, մեկական շարժիչ ունեն կլոր տարին։ Իսկ մի շարժիչը գլխացավանք է. մեկ աշխատում է, մեկ չի աշխատում, վառելիքը մեկ բերում են, մեկ չեն բերում, կամ էլ մի բան կոտրվում է, իսկ էն տղան, որ գլուխ է հանում էդ գործից, խելքին փչեց՝ կթքի ու կգնա քաղաք. էնտեղ ջահելները հազար անգամ ավելի լավ են ապրում, ու աշխատանքն էլ լավ է։ Ահա այդպես էլ ստացվում է. ըստ հաշվեհավության հովվական բոլոր բրիգադներում էլեկտրականություն կա, իսկ փաստացի ոչինչ էլ չկա...

Եվ, իհարկե, ո՞վ է լավը։ Բոստոնն է լավը, համ էլ խմող չի։ Իսկ ո՞վ է վատը։ Բազարբայն ու նրա նմանները, ու համ էլ խմող են։ Բայց թե դու վատն ես, թող վկակոթիդ տան ու քշեն, բայց չէ, մի փորձի ասա, որ գնում ես, քիչ

մսա միլիցիա կբերեն, անձնագիրդ կվերցնեն, ոչ մի փաստաթուղթ չեն տա, գնա աշխատի, սիրելիս, աշխատանքը մի թող, հիմա ոչ ոք չի ուզում չոբանություն անել, էդ տեսակ հիմարները քիչ են, բոլորն ուզում են քաղաքներում ապրել, էնտեղ քո ժամերն աշխատեցիր՝ գնա մանր արի քեզ համար քաղաքավարի, թե չես ուզում՝ տանդ, քո բնակարանում հանգստացիր, ամեն ինչ պատրաստ, վառարան վառել չկա, ամբողջ օրը լույս ունես, գիշեր-ցերեկ ջուրը կողքիդ է, արտաքնոցը, դա էլ է մոտիկ, միջանցքում... Իսկ հոտի հետ ի՞նչ կյանք կարող ես ունենալ: Մինի ժամանակ ամենաքիչը մեկուկես հազար անասունից պիտի գլուխ հանես, ոչ ցերեկ, ոչ գիշեր մի րոպե հանգիստ չունես, բոլոր մեկուկես հազարն էլ տնքում են, բառաչում, ոնց կարող ես թրիքի մեջ չմտնել, դե արի ու մի գազանացի, կնոջդ մի ծեծի, օգնականներիդ մի ծեծի, մի խմի... Իսկ հետո՝ ո՞վ է վատը: Բազարբայն ու նրա նմանները...

Իսկ մի բան լինի, թե չէ՝ աչքդ են կոխում, մի տես Բոստոն Ուրկունչիևին, առաջավոր է, օրինակ վերցրու... Ո՞նց կհասցնեի ես էդ առաջավորի մոթին: Բայց Բոստոնի բախտը բերում է, նրա մոտ և լավ աշխատողներ են գնում, լավ մարդիկ, ու չեն հեռանում նրա մոտից, աշխատում են մի ընտանիքի պես: Բազարբայն ու նրա նման շատ ուրիշ չոբաններ վազուց ձեռք են քաշել իրենց փչացած շարժիչներից, ապրում են հին ձևով, նավթավառներով ու ձեռքի լապտերներով, իսկ Բոստոնի ՄՒ—1157 էլեկտրագեներատորային ագրեգատը աշխատում, տակտացնում է ժամացույցի նման բնակատեղում այնպես, որ լսելի է շուրջը հեռվից ու լույսն էլ երևում է հեռվից: Դրանով էլ վախեցրին գայլերին, որ քիչ առաջ այնպես էին հետևից ընկել, ուր որ է պիտի հասնեին, բայց հենց լույսը տեսան ու լսեցին շարժիչի թխկթխկոցը, իսկույն կանգ առան...

Շները շարունակում էին հաչել: Երևում է գայլերը դեռ մոտերքում են, բայց վախենում են ավելի մոտենալ...

Այո, իսկապես որ Բոստոնի բախտը բերում է. հրեն ինչ կարգուկանոն է նրա տնատեղում, տանն էլ պայծառ լույս կա, մաքրություն է, չնայած ոչխարի հոտատեղում են ապ-

րում։ Սարսափած էր միջանցքում հանել կիրզայե կոշիկները, ոտնափաթաթանները և միայն գուրծած գուլպայով մրտել սենյակ։

Մարդու բախտը որ բերում է, ամեն ինչում է բերում։ Առաջ ոնց չէր նկատել Բազարբայը, որ լեռնանցքում զոհված էրնազարի կինը այդքան սիրուն կնիկ է, ու մեծ էլ չի։ Իսկ հիմա նա, Գուլյումկանը, Բոստոնի կինն է ու չնայած վիշտ է ունեցել, բայց, երևում է, երջանիկ է։ Նա մի քառասունին մոտ կլինի, իսկ գուցե այդքան էլ չի, էրնազարից ունեցած երկու աղջիկները սովորում են դիշերօթիկում, իսկ սա, խնդրեմ, վերջերս Բոստոնի համար, էլի բախտի բան է, տղա է բերել, իսկ Բոստոնի երկու աղջիկները առաջվա կնոջից, դրանք ոնց որ արդեն մարդու են գնացել։ Ինչքան էլ սիրալիր է Գուլյումկանը, հիմար էլ չի, չէ, բոլորովին հիմար չի, գիտի, որ ինքն ու Բոստոնն իրար տանել չեն կարողանում, բայց ցույց չտվեց, ընդունեց նրան ուրախությամբ, անհանգստացավ, կարեկցեց։ Ներս եկ, իբր, մեր հարևանների հարևան, ներս եկ, նստիր գորգին, վայ, ինչ փորձանք բան է, որ գայլեր էդպես մարդու հետևից ընկնեն, փառք աստծուն ու մեր նախնիների՝ արբակների հոգուն, որ քեզ փրկեցին փորձանքից, իսկ տանտերն էլի տանը չի, էլի մի ժողով է շրջանում, երևի շուտով կգա, խոստացել են դիրեկտորի «գազիկով» բերել, նստիր, նստիր, թեյ պետք է խմել այս տեսակ բանից հետո, որ մի քիչ սպասես, տաք ճաշ էլ կտամ։

Իսկ Բազարբայը, քանի որ այսպես էր դասավորվել, որոշեց, համենայն դեպս, փորձել տանտիկնոջը, թե ինչքանով անկեղծ էր նա հյուրի հետ, և հետո, շատ էր ուզում խմել, մի քիչ ուշքի գալ պատահածից հետո, և որոշեց ամոթը մի կողմ թողնել։

— Թեյը կնկա խմիչ է,— ասաց առանց այլևայլության։— Դու ներող եղիր, բայց ավելի թունդ մի բան չի՞ գտնվի հարուստ Բոստոնի տանը։ Նրա փառքը հրեն ո՞ւր է հասել։

Այդքան նողկալի էր Բազարբայի բնավորությունը. եթե անգամ նրան խմիչք չտային, միևնույն է, գոհ էր լինելու արդեն այնքանով, որ տեսավ, թե ինչպես այլայլվեց Բոս-

տոնի կինը։ Իսկ ինչի պիտի անհարմար զգար. հո խան ու բեկ չէին սրանք, իրա նման սովխոզի անասնապահներ էին։

— Ներոզ եղիր,— պատասխանեց կինը մոայլվելով։— Բոստոնը ինքը, հասկանում ես, այդ բանն այնքան էլ չի սիրում...

— Գիտեմ, գիտեմ, չի խմում քո Բոստոնը,— անփույթ ընդհատեց նրան Բազարբայը։— Ես դա հենց էնպես, խոսքի համար ասացի։ Շնորհակալ եմ թեյի համար։ Կարծում չի, թեկուզ ինքը չի խմում, բայց դե հյուրի համար...

— Ոչ, ինչու,— անհարմար զգաց Գուլյումկանը և նայեց Ռըսկուլին, որ նստել էր Բազարբայի կողքին. նրա ծընկներին էր գայլաձագերով չարաբաստիկ խուրջինը։

Ռըսկուլն ուզում էր վեր կենալ,— պատրաստվում էր գնալ օղի բերելու,— բայց հենց այդ պահին դռանը երևաց Բոստոնի մյուս օգնականը, մանկավարժական ինստիտուտը կիսատ թողած ուսանող Մարատը, մի ճարպիկ տղա, որ մարզում բավական անկարգություններ անելուց հետո, հիմա կարգի էր եկել ու հիմնավորվել էր Բոստոնի մոտ։

— Լսիր, Մարատ,— դարձավ նրան Ռըսկուլը։— Դու մի տեղ կհալիտրանոց ունես պահած։ Գիտեմ։ Մի վախենա, թե մի բան լինի, ես եմ Բոստոնին պատասխան տալու։ Շիշդ շուտ բեր խմիչքով շնորհավորենք Բազարբայի որսը։

— Շնորհավորե՛նք։ Էս րոպեիս կբերեմ,— գոհ հռհռաց Մարատը։

Եվ ահա հենց առաջին կես բաժակից հետո, որ ցրեց սրտնեղությունը, Բազարբայը, որի վախն անցել էր տեղի տալով սովորական ինքնավստահությանն ու անքաղաքավարությանը, մեկնվեց գորգի վրա, ինչպես իր տանը և սկսեց պատմել, թե ինչն ինչպես եղավ, ցույց տվեց գայլաձագերին։ Բայց խուրջինի երկու տոպրակն էլ, հանեց գայլաձագերին ու նոր միայն ինքն էլ դրանց լավ տեսավ։ Սկզբում գայլաձագերը անտարբեր էին, թուլացած, ոչ մի բանի չէին արձագանքում, աշխատում էին թաքնվել, ասես պաշտպանություն էին ման գալիս, բայց հետո աշխուժացան, սկսեցին շարժվել սենյակում, վնգստալ, մռութները դիպցնել

մարդկանց, նայելով նրանց ոչինչ չհասկացող, չհամաստատվող աչքերով՝ որոնում էին մորը, որոնում էին նրա պատուկները։ Տանտիրուհին խղճահարությամբ գլուխը տարուբերեց.

— Ախր սրանք, էս խեղճերը քաղցած են։ Ջագը ձագ է, թեկուզ գայլի ձագ լինի։ Հիմի ինչ է, սրանք քեզ մոտ սովից պիտի մեռնե՞ն։ Ինչի՞ համար։

— Ինչի՞ պիտի մեռնեն,— վիրավորվեց Բազարբայը։— Էս գազանները դիմացկուն են։ Երկու օր մի կերպ կկերակրեմ, իսկ հետո կհասցնեմ շրջանին։ Կենդանաբանական այգում գիտեն, թե դրանց ինչպես պահեն, կերակրեն։ Պետերը որ ուզում են, ամեն ինչ կարողանում են՝ գայլին էլ կարող են վարժեցնել ու ստիպել կրկեսում պար գա, իսկ կրկես գնալու համար մարդիկ փող են տալիս։ Դուցե սրանք էլ կրկես ընկնեն։

Այս խոսքերի վրա բոլորը, թեև տանտիրուհին փոխել էր նրանց տրամադրությունը իր խղճահարությամբ, ժպտացին։ Սակայն կանայք, որ վազ էին տվել տեսնելու կենդանի գայլաձագերին, սկսեցին փսփսալ։

— Բազարբայ,— ասաց Գուլյումկանը,— մենք էստեղ գառներ ունենք, որը ծծկերներ, դրանց կաթ են տալիս, իսկ ինչ կլինի, եթե գայլաձագերին էլ տանք այդ գառների շշիկները։

— Շատ լավ,— չկարողացավ ծիծաղը պահել Բազարբայը։— Ոչխարները կկերակրեն գայլերին։ Ի՞նչ եմ ասել։ Բերեք փորձենք։

Եվ եկավ այն ժամը, որը հիշելով հետագայում նրանցից յուրաքանչյուրը սարսափահար է լինելու։ Մարդկանց գվարճացնում էր և այն, որ վայրի գազաններին կերակրում են ոչխարի կաթով, և այն, որ գայլաձագերը միամիտ էին ու գվարճալի, և այն, որ ձագերից մեկը՝ էդ գայլաձագը, կապտաչյա էր, ոչ ոք երբեք լսած չկար, որ գայլը կապույտ աչքեր ունենա, այդպիսի բան հեքիաթի մեջ էլ չես լսի։ Եվ այն, թե ինչպես էր ուրախանում դեռ շատ փոքրիկ տղան, Բոստոնի վերջնեկ որդին՝ Քենջեշը։ Այ թե ուրախություն էր Քենջեշի համար՝ միանգամից չորս փոքրիկ գազաններ իրենց տանը։ Մեծերը հիանում էին, սրտաշարժվում, թե ինչպես

այդ մեկուկես տարեկան փոքրիկը թոթովում է իր, միայն իրեն հասկանալի լեզվով, ինչպես են վառվում նրա աչուկները, ինչ հափշտակությամբ է նա խաղում գայլաձագերի հետ։ Եվ չորս գայլաձագերն էլ չգիտես ինչու ձգվում էին դեպի տղան, ասես զգալով, որ այստեղ է իրենց ամենից մոտ արարածը։ Մեծերը խոսում էին. տես, իբր, երեխան զգում է, ձագուկներ են, աշխատում էին Գուլյումկանից իմանալ, թե ինչ է ասում տղան գայլաձագերին։ Իսկ Գուլյումկանը երջանիկ ժպտալով իրեն էր սեղմում տղային, քնքուշ ասում.

— Գուլյուկ, Գուլյուկ, իմ պստիկ շնիկ։ Տեսնում ես, քեզ մոտ են վազ տալիս փոքրիկ գայլիկները։ Տես ինչքան փափուկ են, գորշուկ։ Դու նրանց բարեկամ կլինես, հա՞։

Այստեղ Բազարբայն ասաց մի խոսք, որը նույնպես հետո պիտի հիշեն։

— Մի գայլաձագ էր տանը, հիմի հինգը դարձան։ Ուզո՞ւմ ես գայլաձագ լինես։ Թե ուզում ես, տանեմ քեզ, Բոստոնի վերջնեկ, գցեմ որջը, էնտեղ կմեծանաս սրանց հետ...

Բոլորը սրտանց ծիծաղում էին կատակների վրա, թեյ էին խմում։ Բազարբայն ու Մարատը խմածից կարմրատակած, կևսլիտրանոցը դատարկել էին, ճարպ ու տապակած միս էին ուտում, ավելի ու ավելի աշխուժանալով խմածի ազդեցության տակ։ Իսկ դրսում լռություն էր տիրել, շները դադարել էին հաչել, իսկ ամենամեծ շունը՝ Ջայսանը, շիկավուն փրչոտ մի հսկա, հանկարծ հայտնվեց բաց դռան շեմքին։ Շունը կանգնած մնաց դռան մեջ, պոչը խաղացնում էր, չհամաձակվելով ներս մտնել։ Նրան մի կտոր հաց գցեցին, հացը օդում բռնեց ատամները չխկացնելով։ Այն ժամանակ խմած Մարատը կատակի համար վերցրեց գայլաձագերից մեկին ու մոտեցրեց շանը։

— Բռնի, Ջայսան, բռնի դրան։ Բռնի՛, ասում եմ,— ու դողդողացող շան առաջ դրեց պստիկ գազանիկին։

Ի զարմանս ներկաների, Ջայսանը չարությամբ գոռաց, պոչը կծկեց, գլուխը ներս քաշեց ու փախավ։ Ու հետո միայն, արդեն բակում, պատուհանի տակ հաչաց վախկոտ ու խղճալի։ Բոլորը հռհռացին, և ամենից բարձր Բազարբայը։

— Ձուր ես չարչարվում, Մարատ։ Էդպես շուն չկա, որ հենց մենակ գայլի հոտից տակը չանի։ Դու ինչ ես ուզում, որ ձեր Ջայսանը առյուծ կարի։ Էդպես բան չի լինում։

Բոլորը դադարեցին ծիծաղել, երբ փոքրիկ Քենջեշը լաց եղավ. նա խղճաց գայլաձագին ու վախենալով նրա համար, օրորվելով գնաց հասավ նրան, որ պաշտպանի մեծերի անհասկանալի արարքներից։

Իսկ Բագարբայը, խուրջինը գցելով չորս չարաբաստիկ գայլաձագերին, շուտով գնաց։ Ձին այդ ընթացքում հանդըստացել էր, թամբը կարգի էին բերել, նորից էին թամբել, և ձին ժիր վարգով հեռացավ Բոստոնի ձմեռոցից։ Բազարբայի կողքից ձի հեծած ու հրացաններն ուսերին գնում էին Մարատն ու Ռըսկուլը, երկուսն էլ խմած, սակայն Մարատն ավելի էր հարբել և այդ պատճառով չափից ավելի էր շատախոսում։ Այս պինդ տղերքը հանձն առան ուղեկցել Բազարբային, որպեսզի մի կերպ հարթեն այն տհաճ միջադեպը, որ տեղի ունեցավ Բոստոնի անից անկոչ հյուրի հեռանալուց անմիջապես առաջ։

Արդեն պատրաստվելով դուրս գալ, Բազարբայը, գոհ, որ ուշադրության կենտրոնում էր գտնվել Բոստոնի տանը, գայլաձագերով խուրջինը ավեց Մարատին։ Իբր վերցրու, գցի թամբին, իսկ ինքը պատից հանեց հրացանը, որ կախված էր մի հսկայական գայլի փոստի կողքին։ Ուշադիր նայեց հրացանը, հավանեց, ամուր, արջնած պողպատափայլով, գեղեցիկ փորակավոր բազմալիցք հրացան էր խոշոր գազաններ խփելու համար։ Պատին կախած գայլի փոստը Բոստոնը ձեռք էր բերել այս հրացանի դիպուկ կրակոցով։ Բոլորն այդ գիտեին։

— Լսիր, Գուլյումկան,— դանդաղ ասաց Բազարբայը հարբած հայացքը հրացանից դարձնելով տանտիրուհուն։ Թե ձեռքը կընկներ էս Գուլյումկանը մի հարմար տեղ, անցավ մաքով... Նա սովոր էր կանանց զոռով տիրանալ, երբեմն հենց դաշտում կամ ճամփի մոտ, մեկ հաջողվում էր, մեկ՝ չէր հաջողվում, բայց նա չէր ափսոսում ոչ մեկ, ոչ էլ մյուս դեպքում, և աչքի պոչով համեմատելով Գուլյումկանին իր ծեծ ու ջարդ կերած կոկ Թուրսունի հետ, նա լավ

պատկերացրեց, թե ոնց հիմա կհասցներ իր կնկան, նրա համար ուր նա, և ոչ Գուլյումկանն է իրեն բաժին ընկել, նրա համար, ուր գովացրել է վաղուց, և մի կերպ իրեն հաղթահարելով, ասաց.— Ձեր տանը շատ լավ է, դու լավ տանտիկին ես։ Հա, ի՞նչ էի ուզում ասել։ Հասկանում ես, Գուլյումկան, վախենում եմ, որ հանկարծ գայլերը նորից հետևիցս ընկնեն։ Ինչ կլինի, էս հրացանը հետս վերցնեմ, իսկ վաղը կուղարկեմ մերոնցից մեկնումեկի հետ...

— Ի սերն աստծո, կախ տուր տեղը,— խիստ ասաց Գուլյումկանը։— Բոստոնը ոչ մեկին չի թողնում ձեռք տալ այս հրացանին։ Նա չի սիրում, որ իր հրացանին ձեռք տան։

— Իսկ դու ինքդ առանց նրա չե՞ս կարող հրացանը տալ,— մռայլ քմծիծաղեց Բազարբայը, լավ պատկերացնելով, թե ոնց էր հուպ տալու էս կնկան, թե հարմար տեղ ձեռքն ընկներ։

— Ինչ ես ասում։ Բոստոնը կգա, կտեսնի հրացանը չկա, ինչի պիտի էդպես բան անեմ... Համ էլ ես չգիտեմ, թե փամփուշտներն ուր են։ Բոստոնն ինքն է ինչ-որ տեղ պահում։ Ոչ մի փամփուշտ ոչ մեկին չի տալիս։

Բազարբայը մտքում պինդ հայհոյեց Բոստոնին, իրեն էլ չխնայեց. ախր գիտեր չէ, ինչ կծծի, ժլատ մարդ է էդ Բոստոնը, ու նրա կինն էլ, երևում է, իրենից լավը չի, քիչ էր մնում ասեր նրան, դեհ, գրողը տանի քեզ քո էդ հրացանով, բայց էդ ժամանակ Ռըսկուլը փրկեց նրան, ոնց որ ասում են, վերացրեց մթնոլորտի լարվածությունը.

— Ձուր ես անհանգստանում, Բազակե։ Ես ու Մարատը ձիով քեզ կճանապարհենք, թե կուզես, հրացաններս առած քեզ մինչև տուն կհասցնենք,— խոստացավ նա, ծիծաղելով։— Ժամանակ շատ կա, դեմներս մի ամբողջ գիշեր կա, իսկ էս հրացանին դու իսկապես էլ ձեռք մի տուր, տեղը կախի։ Դու հո գիտես Բոստոնին, Բոստոնը կարգուկանոն է սիրում։

Նրանք արդեն պատրաստվում էին դուրս գալ, սակայն Ռըսկուլը ստիպված եղավ մի երկու րոպե ուշանալ՝ հանդստացնել Բոստոնի փոքրիկին։ Քնջռիշը լացը գցել էր, թե ինչու է բևեռին գայլիկներին տոպրակը գցել, ուր է տանում։ Փոքրիկը շուռումուռ էր գալիս, պոկվում մոր գրկից, պա-

հանջում էր վերադարձնել իրեն դուր եկած գազանիկներին...

Իսկ երբ բակ դուրս եկան, թերուս ուսանող Մարատը մի պատմություն սկսեց ինչ-որ ծիծաղելի դեպքի մասին, որն իր կարծիքով պիտի զվարճացներ ուղեկիցներին.

— Վերջերս մեր շրջանում մի խայտառակ պատմություն եղավ, ուշք գնալու բան։ Չե՞ս լսել, Բազակե։

— Չէ, չեմ լսել,— խոստովանեց Բազարբայը։

— Պատմի, պատմի, ուսանող,— տոն տվեց նրան Ռըսկուլը, կրունկներով ձին իթխանելով։

— Ուրեմն, զանգ է տալիս մեր շրջանային թերթի խմբագրին մարզի պետերից մեկը։ Ասում է, ձեր «Սոցիալիզմի արշալույս» թերթում ինչո՞ւ եք կապիտալիստական Ամերիկայի պրոպագանդա անում։ Իսկ խմբագիրը,— մի ժամանակ սովորել ենք իրար հետ։ Դրա նման վախկոտ ու քծնող քիչ կգտնես,— էս խոսքերից սկսում է նույնիսկ կակազել. «Մ-մենք Ամերիկայի մ-մասին ո-ոչինչ չ-չենք գ-գրել։ Ն-ներեցեք, ի-ինչ պ-պրոպագանդա եք ա-ասում»։ Իսկ նա թե. «Ինչպե՞ս չեք գրել։ Իսկ սա ինչ վերնագիր է սևով սպիտակին գրած. «Բոստոնը մեզ կոչ է անում գնալ իր հետևից»,— «բայց դա մեր առաջավոր չոբան Բոստոն Ուրկունչիևն է, նրա մասին, նրա աշխատանքի մասին է գրված»։ — «Պարզ է, որ նրա մասին է գրված, բայց շատերը լրագրերում միայն վերնագրերն են կարդում»։ Հա՜-հա՜-հա՜։ Ա՛յ թե օյին էր։ Լավ չի՞։ «Բայց ի՞նչ անենք»,— հարցնում է խմբագիրը։ Իսկ պետը նրան, թե. «Կարգադրեք ձեր առաջավորին անունը փոխի»։

— Սպասիր,— ընդհատեց նրան Բազարբայը,— էդ ինչ է, Ամերիկա՞ն էլ իր Բոստոնն ունի։

— Չէ, ինչ հա ասում,— զվարճանում էր Մարատը։— Բոստոնը քաղաք է Ամերիկայում, գլխավոր քաղաքներից մեկը, Նյու Յորքից երևի քիչ փոքր, իսկ մեզ մոտ Բոստոնը՝ գորշ մուշտակ է։ Բոս՝ գորշ, տոն՝ մուշտակ։ Հիմի հասկացա՞ր։

— Ո՛ւհ, գրողը տանի։ Իսկապես էլ,— համաձայնեց Բազարբայը, ափսոսալով, որ այդ ամբողջ պատմությունը

դատարկ բան է և ոչ մի վնաս չի կարող հասցնել Բոստոնին։— Էդպես է, որ կաւ Բոստոն՝ դորշ մուշտակ...

Եվ այդ ժամին գիշերը իր աստղալից ծածկով փակեց ամեն ինչ՝ և՛ լեռները, և՛ երկինքը, և՛ լիճը հեռում, որի հզոր սապատաձև կոնակը հազիվ էր նշմարվում մթության մեջ։ Եվ երեք ձիավորները զվարճախոսելով գնում էին դեպի Թաման, ու չէին կասկածում, որ այդ գիշեր սինդ, անքակտելի հանգույցով իրար կապվեցին ծանր ճակատագրեր... Եվ ահա արդեն ավելի կամաց ու ավելի անպարզ էին լսվում և նրանց խոսքերը, և ձիերի սմբակների դոփյունը քարերին... Ետևում մնաց Բոստոնի շարժիչի սովորական չխկչխկոցը, նրա լույսը լեռնային կողմը պարուրած մթության միջից դուրս էր կորզում հովվական բնակատեղի և նախաբակի մի փոքր շրջան։

Իսկ մոտերքում մի տեղ թաքնվել էին գայլերը...

2

Գուլյումկանը մեծ դժվարությամբ, համոզելով ու փաղաքշելով մի կերպ կարողացավ երեխային պառկեցնել քնելու, իսկ ինքը չէր պառկում, սպասում էր ամուսնուն։ Նա ուր որ է պիտի վերադառնար։ Եվ երբ բակում շները համբրաշի հաչեցին, նա, տաք շալն ուսերին գցելով, մոտեցավ պատուհանին։ Վառվող լապտերներով մթությունը կտրելով, դիրեկտորի «գալիկը» պտույտ տվեց մեծ փարախի մոտ, որտեղ պահում էին մաքիներին։ Գուլյումկանը տեսավ, ինչպես խցիկից դուրս եկավ Բոստոնը, ինչպես հրաժեշտ տալով չիկացրեց գոնակը և ինչպես մեքենան կտրուկ շրջվելով ետ վերադարձավ։ Գուլյումկանը գիտեր, որ ամուսինը անմիջապես չի գա տուն։ Այդպիսի դեպքերում նա նախ շրջում էր ոչխարների փարախներում ու անասնոցներում,

մտնում խստածածկի տակ, հարցուփորձ էր անում գիշերային պահակ Դուդուրմատին՝ ինչ կա, չկա, օրը ոնց է անցել, հո անկում, վիժում չի՞ եղել, գառներ ծնվել են, թե չէ...

Վառարանը վառելով նախապես պատրաստված փայտով, որպեսզի ամուսնուն դիմավորի հենց կրակի վրայից հանած ուտելիքով ու լավ թեյով, առանց որի Բոստոնը կյանք չուներ, Գուլյումկանը ականջ էր դնում, թե երբ շեմքին կլսվեն ամուսնու քայլերը, և առաջուց ուրախանում էր, թե ինչպես է փոքրիկ Քենջեշը տաք անկողնու մեջ շուռումուռ գալու, շրթունքները չպպացնելու հոր սառնամանիքից սառած բեղերի հպումից։ Սովորաբար Բոստոնն ինքն էր փոքրիկին պառկեցնում քնելու, դրանից առաջ երկար խաղալով նրա հետ, ինքն էլ լողացնում էր տաշտի մեջ, նախապես ոտները լավ տաքացնելով և բոլոր դռներն ու պատուհանները փակելով։ Հարևանները գտնում էին, որ Բոստոնը ծերանալով շատ մանկասեր է դարձել. առաջ նա այդպիսին չէր, առաջ նա իր աշխատանքը երեխաներից շատ էր սիրում, նրանք, նրա մեծ երեխաներն արդեն իրենք էին ծնողներ, իրենց կյանքն ունեին։ Նրանք դեպքից դեպք էին գալիս, իսկ վերջնակը միշտ ամենաքաղցրն է, ու ամենից շատ են սիրում նրան։ Այդ ամենն այդպես էր, սակայն ով, եթե ոչ Գուլյումկանը գիտեր ու հասկանում էր փոքրիկ Քենջեշին Բոստոնի այդ կապվածության իսկական և տխուր պատճառը։ Չէ որ նրանք երբեք չէին մտածում՝ ոչ ինքը, ոչ նա, որ երբևէ ամուսիններ են դառնալու և որ որդի պիտի ունենան. եթե նրա նախկին ամուսին էրնաղարը չզոհվեր լեռնանցքում ու եթե դրանից հետո էլ չմահանար Բոստոնի կին Արզիգուլը, դա երբեք չէր լինի։ Նրանք աշխատում էին չհիշել եղածը, թեև գիտեին. մենակ մնալով նրանցից ամեն մեկը մտածում է անցյալի մասին... Իսկ փոքրիկը այն ընդհանուրն էր, որ կապում էր նրանց, որը շատ թանկ գնով էր նրանց տրվել։ Չէ որ լեռնանցքում ճանապարհը Բոստոնն էր բացում և նրա օգնական էրնաղարը զոհվեց իր աչքի առաջ, մնաց այնտեղ, նեղ ու խոր կիրճի հատակին... Միայն մանկիկը կարող էր լցնել այդ ճեղքն իր հոգում, քանզի հենուց ասված է՝ ծնունդը միայն կարող է մահվան տեղը փոխհատուցել։

Բայց ահա լսվեցին քայլերը, և Գուլյումկանը շտապով դուրս եկավ ամուսնուն ընդառաջ, օգնելով նրան հանել կոշիկները, ջուր բերեց, օճառ, սրբիչ։ Լուռ ջուր էր լցնում ամուսնու ձեռքերին, բայց դեռ չէին խոսում, խոսել կսկսեն հետո, թեյի ժամանակ, երբ Բոստոնը կսկսի խոսակցությունն իր սիրած խոսքերով. «Դեհ, իսկ հիմի լսիր, թե ինչեր են լինում աշխարհում», մանրամասն կպատմի, թե ինչ է տեսել, ինչ նոր բան է իմացել, և այդ պահերին, հատկապես երբ մենակ էին լինում, երկուսն էլ իրենց լավ էին զգում։ Մոտ մարդու հետ խոսելը, երկու հարազատների խոսակցությունը ոնց որ ծանոթ նավահանգիստ, առաջուց գիտես որտեղ է ծանծաղուտ, որտեղ խորը։ Հիշում է, հոգեհացերից հետո, երբ արդեն տարի էր անցել Արղիգովի մահվանից, և նրանք վերջապես վճռեցին ամուսնանալ, ահա այդ ժամանակ Բոստոնը լեռներից եկավ նրա մոտ, նրա որբևայրու տուն լճամերձ բնակավայրի ծայրամասում, և նրանք թողնելով Բոստոնի ձին ձիապարանով կապված ու, քաշվելով մարդկանց մեջ առաջին անգամ միասին լինելուց, նստեցին տեղի ավտոբուսը և գնացին շրջանային զագս, ու աշխատելով որքան կարելի է շտապ ստորագրել անհրաժեշտ թղթերը, շտապով հեռացան այդտեղից, իսկ հետո չցանկանալով այլևս ավտոբուս նստել և չուզենալով փողոցում ծանոթների հանդիպել, քայլեցին դեպի լիճ ու հետո լճափով դեպի իր որբևայրու տունը։ Ջոր, անքամի աշնանային օրով իսսիկկուլի պայծառ կապույտը վճիտ ու խաղաղ էր, ինչպես միշտ։ Եվ ահա այդ ժամանակ սաղարթավոր ծառերով ծածկված ափամերձ կածանով անցնելիս Բոստոնը կառանատեղին կապված երկու նավակ տեսավ ու կանգ առավ։ Թեթև մակընթացությունը ճոճում էր նավակները, նրանց տակ երևում էր ավազոտ հատակը։

«Նայիր, շուրջը ջուր է, լեռներ, երկիր՝ սա կյանքն է։ Իսկ այս զույգ նավակները, ինչպես ես և դու։ Թե ուր կքշի մեզ ալիքը՝ հետո կերևա։ Ինչ մեզ հետ պատահից, ինչ մենք կրեցինք, քանի դեռ կենդանի ենք, դա մեզ հետ է լինելու։ Արի, ուրեմն, միշտ միասին լինենք։ Ես, կարելի է ասել, ծեր եմ։ Ձմռանը քառասուն իննս կլրանա։ Իսկ քո երեխաները դեռ փոքր են, պետք է դրանց ուսումի տալ, տեղա-

վորել... Գնանք, հավաքվենք ճամփա ընկնենք։ Նորից կգրնաս լեռներ, ձկնորսի աղջիկ, բայց այս անգամ ինձ հետ... Անկարող եմ մենակ ապրել...»։

Գուլյումկանը, ինքն էլ չիմանալով ինչու, լաց եղավ և նա երկար չէր կարողանում հանգստացնել կնոջը... Եվ հետո, երբ նրանք մենակ էին մնում ու սկսում էին կյանքի հարցերից խոսել, Գուլյումկանը հաճախ էր հիշում այն զույգ նավակները լճի վրա։ Դրա համար էլ թվում էր նրան, որ մոտ մարդու հետ խոսելը ծանոթ նավահանգստի է նման։ Այս անգամ, սակայն, նրա աչքից չվրիպեց, որ ամուսինը սովորականից ավելի մտահոգ է։ Նախասենյակի թարթող լամպիկի լույսի տակ Բոստոնը, հաղթանդամ, կնոջից մի գլուխ բարձր, սրբիչը տրորելով դիտավորյալ դանդաղ շրացնում էր մեծ կոշտացած ձեռքերը։ Մռայլ էր նրա կկոցած կանաչավուն աչքերի հայացքը, արևայրված, քամահարված դեմքը ծանր խոշոր կղակով մուգ կարմիր էր, մգացած պղնձի գույնի։ Սա ի՞նչ կարող էր նշանակել։ Ձեռքերը սրբելով, Բոստոնն առաջին հերթին մոտեցավ մանկիկին, չոքեց իր ձեռքով սարքած փայտե փոքրիկ մահճակալի մոտ, համբուրեց որդուն քամուց չորացած շրթունքներով, շշնջալով քնքուշ խոսքեր, ու ակամա ժպտաց, երբ Քենջիշը համբույրն դգալով, քնի մեջ շարժվեց։

— Ղուդուրմատն ասաց, որ իմ այստեղ չեղած ժամանակ Բազարրա՞յն է եկել,— ասաց, սեղան նստելով։— Դա լավ բան չի։

Գուլյումկանը նրան այլ կերպ հասկանալով, շիկնեց ու քիչ մնաց բորբոքվեր վիրավորանքից։

— Ես ի՞նչ անեի։ Տուն լցվեցին խմբով։ Իրը գայլաձագեր ենք ուզում ցույց տալ։ Քենջեշն էլ ոնց որ դրան սպասեր, իրա համար ուրախություն էր...

— Ես դրա մասին չեմ ասում։ Ասածդ իր հետ, եկավ էլ, գնաց էլ։ Բայց, վախենում եմ, թե վատ բան է եղել...

— Ի՞նչ վատ բան,— չհասկանալով, թե նա ինչ նկատի ունի, ասաց Գուլյումկանը։— Դու ինքդ էլ ես գայլեր սպանել։ Հրեն անցյալ տարվա փոստը կախված է, ու լավ էլ մշակել են,— գլխով ցույց տվեց նա պատին կախված գայլի փոստը։

— Հա, կախված է,— պատասխանեց Բոստոնը, կնոջը մեկնելով փիալան։— Ճիշտ ես ասում, ես էլ եմ գայլ խփել, քանի որ էդպես է կարգն աշխարհի, որ կա գայլ ու կա մարդ։ Սակայն գայլի որջ ես երբեք չեմ թալանել։ Իսկ Բազարբայը, գարշելի արարածը, ձագերին գողացել է, իսկ գայլերին, կատաղի գազաններին թողել է ազատության մեջ։ Ախր նա ստոր բան է արել մեր նկատմամբ։ Գայլերն ապրում են այստեղ, գնալու տեղ չունեն, ու հիմա, հասկանում ես, նրանք կատաղած են սարսափելի...

Նրա խոսքերը սարսափ գցեցին Գուլյումկանի սիրտը։ Նա սկսեց կնկավարի ախուվախ անել, ուղղեց ուսին ընկած ծամը։

— Ա՜յ քեզ փորձանք։ Էդ անամոթին ինչը մեր կողմերը քշեց։ Ինչի՞ էր դա որջին ձեռք տալիս։ Ախր մեղք էլ են խեղճերը՝ ամեն կենդանի արարած սիրում է իր ձագերին, ով դա չգիտի։ Ես ոնց իսկույն չհասկացա։

— Իսկ ես ինչ եմ մտածում,— մտահոգ շարունակեց Բոստոնը։— Տեսնես դրանք ի՞նչ գայլեր են։ Հա հենց այն գայլերը չեն։— Բոստոնը լռեց և ավելացրեց.— Ղուդուրմատի ասելով էնպես է ստացվում, որ գայլերը Բազարբայի հետևից էին ընկել Բաշաոի կիրճի կողմից։

— Հետո ի՞նչ։

— Այն, որ դրանք հանկարծ իմ ասած, հենց էն եկվոր գայլերը չլիննեն՝ Թաշչայնարն ու Աքբարան։ Էդպես մի զույգ կա։

— Լավ, կատակ մի անի,— սկսեց ծիծաղել Գուլյումկանը։— Ինչ է, գայլերը անո՞ւն ունեն մարդկանց նման։ Բա՜ն ասացիր։

— Ինչ կատակ։ Ես կատակի սիրտ չունեմ։ Էդ գայլերին մենք գիտենք։ Էստեղի գայլերին նման չեն։ Եղել են մարդիկ, որ տեսել են դրանց։ Կատաղի, ուժեղ զույգ է, թակարդ չեն ընկնում, խփել չի հաջողվում։ Բա պետք էր, որ էդ սրիկա, հարբեցող Բազարբայը դրանց որջը գտներ, հաներ ու տաներ բոլոր ձագերին։ Իսկ դու էլ զարմանում ես, որ դրանք անուններ ունեն։ Արու գայլը՝ Թաշչայնարը, այնքան ուժեղ է, որ կարող է ձի տապալել։ Իսկ էդ գայլը՝ Աքբարան՝ անա-

բաշան*, խելացի գազան է, ի՞նչ խելացի է։ Դրա համար էլ չափազանց վտանգավոր է։

— Վերջ տուր, որդուս հայր, կատակ մի արա։ Ես հո երեխա չեմ քեզ համար,— թերահավատ քմծիծաղեց Գուլյումկանը։— Նրանց մասին էնպես ես պատմում, կարծես ամբողջ կյանքդ դրանց հետ ես ապրել... Այդպես բան ո՞նց կլինի։

Բոստոնը զիջողամտորեն քմծիծաղեց, սակայն մի փոքր մտածելով, վճռեց հանգստացնել կնոջը։

— Լավ, ոչինչ,— ասաց, քիչ լռելուց հետո,— գլխիցդ հան ասածներս։ Ուզում էի քեզ մի քիչ զբաղեցնել։ Անկողին գցի քնենք։ Արդեն շատ ուշ է։ Առավոտը պիտի շուտ վեր կենամ, դու էլ գիտես, մինչև մեծ ծին մի երկու օր է մնացել։ Իսկ էնպեսները կան, որ կարող է գիշերը կամ լուսադեմին ծնեն, մանավանդ նրանք, որ զույգ կամ երեքն են բերելու։

Երբ արդեն լույսը մարելով պառկել էին անկողնում, Բոստոնը քունն մտնելով, իսկ քնում էր նա շատ շուտ, մի քիչ պատմեց շրջանի խորհրդակցության մասին, ուր արդեն շատ ու շատ անգամների նման քննարկվել էր այն հարցը, թե ինչու ժամանակակից երիտասարդությունը չի զբաղվում ոչխարաբուծությամբ և ինչ կարելի է մտածել, ինչ անել այդ ուղղությամբ, և հենց այդ պահին դրսում ձիու սմբակների դոփյուն լսվեց։ Գուլյումկանը վեր թռավ անկողնուց, մոտեցավ պատուհանին առանց հագնվելու, միայն շալն ուսերին գցած, և տեսավ, որ մեծ փարախի մոտ ձիուց իջնում են երկու մարդ հրացաններով։

— Մերոնք վերադարձան, Իբսկուլն ու Մարատը,— ասաց նա։— Գնացել էին Բազարբայիի ճանապարհելու։

— Հիմարի գլուխներ,— շշնջաց Բոստոնն ու քնեց։

Իսկ Գուլյումկանը չկարողացավ անմիջապես քնել։ Որդուն ավելի տաք ծածկեց ինքնաշեն փոքրիկ մահճակալի մեջ. նա քնած ժամանակ շարունակ բացվում էր, շորերը վրայից գցում։ Տանջանք է, հո երեխա չի, չի թողնում հանգիստ քնես, մանավանդ երբ քունդ տանում է։ Իսկ այսօր

---

* Անաբաշա — մայր-առաջնորդ։

նրա քունը չէր տանում։ Շատ խառնակ, մի տեսակ վատ օր ստացվեց։ Եվ ամբողջը Բազարբայի պատճառով։ Ոնց որ փորձանք մարդու գլխին պայթի։ Բոստոնի համար դա, ոնց որ դանակով խփես։ Էդպես մարդ է Բոստոնը, ազմուկ, իրարանցում չի սիրում, Բազարբայի նման անպատկառներին չի սիրում, թեկուզ այդ մարդն իրեն ոչ մի վատ բան արած չլինի։ Իհարկե, Բազարբայը նրան բարեկամ չի, նախանձում է, որ Բոստոնի գործերը լավ են... Իսկ թե դրա համար ինչքան պիտի չարչարվեն, դա Բազարբայը չգիտի։ Ահա վաղը առավոտ շուտ կլծվի գործի ու էդպես մինչև ուշ դիշեր, և ամեն տեղ ինքը պիտի լինի, ամեն տեղ հոգատար աչք է պետք։

Գուլյումկանը մոտենում էր պատուհանին, նայում գիշերվա ալյումինե խավարին, լուսինը պայծառ փայլում էր սապատավոր լեռների գլխին և աստղերը,— բոլորն անխոտիր,— շողշողում էին ուժգին։ Լուսադեմին լուսինը կծածկվի ու աստղերը կմարեն, սակայն այդ ուշ ժամին գիշերը թվում էր անվերջանալի, անհատնում։ Նախալեռների խոր լուծյան մեջ լսվում էր միայն էլեկտրաշարժիչի սովորական չխկչխկոցը բնակատեղից քիչ հեռու։

Դժվար է ասել, շատ քնեց Գուլյումկանը, թե քիչ, գուցե մի փոքր նինջ եկավ վրան, սակայն այդ պահին քնի մեջ հանկարծ շների բարձրացրած հաչոցի մեջ ինչ-որ երկարաձիգ ոռնոց լսեց։ Գուլյումկանը ակամա արթնացավ քունը հաղթահարելով, և հիմա արդեն պարզորոշ լսեց գայլի այդ ճնշող, տառապալից, երկինք ելնող ոռնոցը։ Ոռնոցը սարսափ էր տարածում։ Գուլյումկանը վախեցավ, ավելի մոտեցավ ամուսնուն, սեղմվեց նրան։ Սակայն այդ ժամանակ արդեն ոռնոցը փոխվեց դառնագին լացի՝ նրա մեջ լսվում էին չհանդարտվող ցավը, հառաչանքն ու ողբը տառապող գազանի։

— Նա է, Աքբարան,— քնից խռպոտած ձայնով ասաց Բոստոնը, գլուխը միանգամից բարձից կտրելով։

— Ի՞նչ Աքբարա,— Գուլյումկանը նույնիսկ չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը։

— Մայր գայլը,— ասաց Բոստոնը և ականջ դնելով գայլի ոռնոցին, ավելացրեց.— Եվ Թաշչայնարն է, նա էլ է հետը

ոռնում։ Լսո՞ւմ ես, բառաչում է մոբիի տարած ցուլի պես։

Նրանք լռեցին, շունչները պահած։

Օու-օու-ու-ուա-ա-ա-ա՜— և նորից զարհուրելի, տանջալից հեկեկանքները հեռու տարածվեցին անծայրածիր գիշերվա մեջ։

— Ինչ է ուզում նա, ինչի՞ համար է ոռնում,— վախեցած շշնջաց Գուլյումկանը։

— Ոնց թե ինչ։ Դարդ է անում։

Նրանք լռեցին։

— Փորձանք էր,— Բոստոնը չղայնացած հայհոյեց։— Դու պառկած մնա ու նայի, որ երեխան չզարթնի։ Ոչինչ, մի վախենա, հո երեխա չես։ Դեհ, ոռնում է մայր գայլը մի տեղ մոտերքում, լաց է լինում իր ձագերի համար, հիմա էլ ի՞նչ կարող ենք անել։ Ես մի գնամ տեսնեմ փարախներում ինչ է կատարվում։

Այս ասելով, նա շտապ հագնվեց, առանց լույսը հանգցնելու դուրս եկավ նախասենյակ կոշիկները հագնելու, ապա հետ եկավ սենյակ, լույսը հանգցրեց և գնաց, ետևից փակելով նախասենյակի դուռը։ Գուլյումկանը լսեց, ինչպես նա անցավ պատուհանների տակից ինչ-որ հայհոյանքներ փնթփնթալով, ինչպես ձայն տվեց շանը. «Ջայսան, Ջայսան։ Մոտ եկ»— և ինչպես կամաց-կամաց լռեցին նրա քայլերը։ Եվ այդ պահին նորից լսվեց մայր գայլի երկարաձիգ ոռնոցը, բայց որովայնաձայն նրան ձայնակցում էր հայր գայլը։ Նրանց ոռնոցի մեջ եփ եկող կատաղությունը, սպառնալիքը փոխվում էին լացի, իսկ հետո նորից ահագնանում խելահեղ հուսահատությունն ու կատաղությունը, և նորից դրանց հաջորդում էր աղերսանքը...

Անտանելի, անհնարին էր լսել այդ ոռնոցը։ Գուլյումկանը փակել էր ականջները, հետո գնաց դռան կեռիկը գցեց, կարծես գայլերը կարող էին տուն ներխուժել և դողալով, բրդյա շալի մեջ փաթաթվելով վերադարձավ անկողնու մոտ, չիմանալով ինչ անել, վախենալով, թե գայլերը նորից կսկսեն ոռնալ ու կարթնացնեն փոքրիկին։ Ամենից ավելի նա վախենում էր, որ Քենջեյը կարող է արթնանալ ու վախենալ։

Իսկ գայլերը շարունակում էին ոռնալ, ու թվում էր, թե նրանք պտտվում են մոտերքում, որ նրանք տեղից տեղ են շարժվում, թափառում են շրջակայքում։ Նրանց ի պատասխան կատաղի ու ճղճղան հաչում էին շները, սակայն բակի սահմաններից դուրս գալ չէին կարողանում։ Եվ հանկարծ լսվեց մի խլացուցիչ կրակոց, հետևից՝ ևս մեկը։ Գուլլումկանը հասկացավ, որ Բոստոնն ու Ղուդուրմատն են կրակում վախեցնելու համար։

Դրանից հետո լռեց ամեն ինչ։ Լռեցին շները։ Լռեցին և գայլերը։ «Դեհ, փառք աստծո, թե չէ իսկական փորձանք էր»,— թեթևացած մտածեց Գուլլումկանը։ Նա վերցրեց քնած Քենջեշին, տարավ իր մոտ մեծ անկողին, դրեց մեջտեղը, որ երեխան ծնողների մեջտեղում լինի։ Այդ միջոցին վերադարձավ և Բոստոնը։

— Մարդու քուն հարամ արեցին, գրողը դրանց տանի,— զայրացած փնթփնթում էր նա, նկատի ունենալով հավանաբար և գայլերին, և շներին, և նրանց հետ կապված ամեն ինչ։— Ինչ անասուն է էդ Բազարբայը, իսկական անասուն,— բարկանում էր նա, նորից անկողին մտնելով։

Գուլլումկանը ամուսնուն հարցուփորձ չարեց, որ չխանգարի, առանց այդ էլ գայլերը նրան չէին թողել, որ քունն առնի։ Ախր վաղ առավոտից նա պիտի անասնոցում լինի. նա այն չոբաններից չի, որ թուլլ տա իրեն ուշ վեր կենալ։

Իսկ Գուլլումկանի սիրտը հանգստացավ, երբ տեսավ, որ ամուսինը խաղաղվել է, տեսավ, ինչպես է ուրախանում երեխային իրեն սեղմելով, նրան անուշ խոսքեր շշնջալով։ Բոստոնը շատ էր սիրում իր Քենջեշին, դրա համար էր անունը դրել էր Քենջեբեկ, այսինքն՝ կրտսեր բեկ, տոհմի կրտսեր իշխան։ Բոլոր ժամանակներում էլ հովիվները երազել են իշխան դառնալ, սակայն ճակատագրի ծաղրն էլ այն է, որ բոլոր ժամանակներում էլ հովիվը հովիվ է մնացել։ Եվ Բոստոնն էլ այդ իմաստով բացառություն չէր։

Նրանք նորից քնեցին, այս անգամ երեխան մեջտեղները, սակայն շուտով նորից արթնացան դայլի թախծոտ ոռնոցից։ Եվ նորից բակում սկսեցին հաչել անհանգստացած շները։

— Ախր էս ինչ բան է։ Սա ինչ կյանք է,— սրանեղած տրտնջաց Գուլյումկանը և ինքն էլ ղղջաց իր խոսքերի համար, Բոստոնը լուռ վեր կացավ ու սկսեց հագնվել մթության մեջ։ Մի գնա,— խնդրեց կինը։— Թող ինչքան ուզում են ոռնան։ Ես վախենում եմ։ Պետք չի, մի գնա։

Բոստոնը կնոջը չհակառակվեց։ Ու պառկել էին նրանք այդպես մութ տան մեջ լեռնային մութ գիշերով, ակամա ականջ դնելով գայլերի ոռնոցին։ Կեսգիշերն արդեն վաղուց անցել էր, արդեն մոտենում էր լուսաբացը, իսկ գայլերը դեռ ողբում էին, հանգիստ չէին տալիս մարդկանց իրենց վշտալի, կատաղի ոռնոցով։

— Մարդու հոգի հանեցին, ախր ի՞նչ են ուզում սրանք,— չդիմացավ Գուլյումկանը։

— Ի՞նչ են ուզում։ Պարզ բան է, իրենց ձագերն են պահանջում,— պատասխանեց Բոստոնը։

— Ախր էստեղ չեն էդ ձագերը։ Վաղուց տարել են նրանց։

— Իսկ նրանք ի՞նչ իմանան,— պատասխանեց Բոստոնը։— Նրանք գազաններ են, նրանք մի բան գիտեն. հետքը նրանց այստեղ է բերել և այստեղ վերջանում է նրանց համար ամեն ինչ, աշխարհում էլ ուրիշ տեղ չկա նրանց համար։ Ափսոս, ես էն ժամանակ տանը չեմ եղել։ Այդ տեսակ բանի համար, ես էդ անասուն Բազարբայի գլուխը կպոկեի։ Ինքը որս ձեռք գցի, իսկ մենք պատասխան տանք...

Եվ ի հաստատումն նրա խոսքերի, բնակատեղի վրա տարածվում էր ոռնոցը մեկ աղիողորմ ու տառապալից, մեկ չար ու կատաղի՝ գայլերն էին վշտից գլուխները կորցրած թափառում, պտտվում շրջակայքում։ Սրտաճմլիկ էր մորմոքում Աքբարան։ Ողբում էր գերեզմանին ընկած կնկա նման, և Գուլյումկանը հիշեց, թե ինչպես էր ինքը ձայնով մեկ լալիս, գլուխը պատերով տալիս, երբ լեռնանցքում զոհվեց էրնազարը. անասելի տխրություն համակեց նրա հոգուն, և նա մեծ ջանք գործադրեց, որպեսզի իրեն զսպի և չպատմի Բոստոնին, թե ինչ էր մտածում ու ինչ էր զգում ինքն այդ պահերին։

Եվ այդպես պառկել էին նրանք առանց աչք փակելու, փոքրիկ Քենջեշը, անմեղ մանկիկն էր միայն քնած խոր քնով։ Ու լսելով Աքբարայի անդադար ողբն իր փախցված

ձագերի համար, մայրն ավելի սաստիկ էր անհանգստանում իր մանկան համար, թեև նրան ոչ մի վտանգ չէր սպառնում։

Լեռների գլխին երևաց վաղ լուսաբացը։ Հեռանում, հալվում էր խավարը երկնքում, գիշերային իրենց ծառայությունն ավարտելով, մարում էին աստղերը, ավելի պարզորոշ էին երևում հեռավոր ու մոտակա լեռները, և երկիրը նմանվում էր երկրի...

Այդ ժամին գայլերը, Աքբարան ու Թաշչայնարը, հեռանում էին դեպի լեռներ, Բաշաոի կիրճի կողմերը։ Նրանց ուրվապատկերները մերթ երևում էին բարձունքներում, մերթ չքվում խավարի մեջ։ Գայլերը գլխահակ վազում էին անգանգալով. ծանր էր նստել նրանց վրա ձագերի կորուստն ու ողջ գիշեր մինչև լույս անդադար ոռնալը։ Այստեղից նրանց հարմար կլիներ ճամփին մտնել այն հովիտը, ուր մնացել էր նախորդ օրը սպանած յուղի մարմնի մեծ մասը։ Ուրիշ անգամ նրանք անպայմանն կդնային նորից թարմ որսով մի լավ կշտանալու, սակայն այս անգամ Աքբարան չուզեց վերադառնալ իր օրհնական ավարն առնելու, իսկ Թաշչայնարը չհամարձակվեց այդ անել առանց նրա, առանց անաբաշայի։

Սակայն արևածագն արդեն երջին մոտ Աքբարան սկսեց վազել այնպես արագ, սակս ծծկերները սպասում էին նրան։ Այդ ինքնախաբեությունն ու ինքնամխիթարումը հազորդվեցին և Թաշչայնարին, և հիմա երկուսով սլանում էին կիրճով. նրանց առաջ էր մղում շտապով իրենց ձագերին տեսնելու հույսը։

Եվ ամեն ինչ կրկնվեց. մայրասուների միջի նեղ կածանը մտնելով, Աքբարան նկատ վազեց ժայռի տակի ծերպը, նորից հոտոտեց բոլոր դատարկ անկյունները, սառը խոտի փոցը, նորից համոզվեց, որ իր ծծկեր ձագերը չկան, և չցանկանալով դրան համակերպվել, դուրս թռավ որջից, վշտից խելակորույս նորից գլխով խփեց Թաշչայնարին, որ անշնորհք բախվել էր նրան ներս մտնելիս, և նորից սկսեց վտակի մոտ այս ու այն կողմ նետվել, հոտոտելով Բազարբայի նախորդ օրվա այստեղ գտնվելու հետքերը։ Այս-

տեղ ամեն ինչ նոդիալի էր և ըշնամական, հատկապես քարին հենած օղու բաց շիշը։ Սուր ու կծու հոտը մայր գայլին բոլորովին գժվացրեց, նա մռնչում էր, կրծռտում իրեն, հողն էր կրծում, իսկ հետո վնգստաց երկար ու ձիգ, մռութը վեր տնկած, բարձր լաց եղավ, ասես նրան սոսկալի վիրավորել էին, ու նրա զարմանալի կապույտ աչքերից հեղեղի պես պղտոր արտասուքներ թաիվեցին։

Եվ ոչ ոք չէր կարող նրան մխիթարել իր այդ վշտի մեջ, ոչ ոք չէր կարող լայով պատասխանել նրա լացին։ Ասոն էին բարձր լեռները...

3

Հաջորդ օրը առավոտյան, ժամը մոտավորապես տասի մոտերք, Բազարբայ Նոյգուտովը պատրաստվում էր ձին թամբել, որ շրջկենտրոն գնա, երբ այդ պահին տեսավ իր կողմը եկող ձիավորին։ Հետաքրքիր է, սա ի՞նչ գործ ունի Թամանի ձմեռոցում։ Ձիավորը դեղին աղաղած կաշուց մուշտակով և աղվեսամորթուց գլխարկով գալիս էր ճամփորդի կիսավարգով արևմտյան կողմից, փոքր լանջի ստորոտով։ Լավ, գեղեցիկ էր նստած նա թամբին։ Բազարբայն անմիջապես ճանաչեց ձիավորին, իսկ ուշադիր նայելով ձիուն, հասկացավ, որ չի սխալվել՝ դա ինքը Բոստոն Ուրկունչիևն էր Դոնկուլյուկին նստած։ Բոստոնի անսպասելի հայտնվելը մեծ զարմանք պատճառեց Բազարբային, այնքան մեծ, որ նա թամբը մի կողմ դրեց ու վճռեց սպասել իր հարևան թշնամուն։ Իսկ որպեսզի Բոստոնը չմտածի, թե ինքը դիմավորում է նրան, սկսեց ձին մաքրել ծղոտե խրձով։ Ձևացնում էր, թե իր գործով է զբաղված։ Բազարբայն այնպիսի տարօրինակ ղգացողություն ուներ, կարծես Բոստոնը իրեն հանկարծակի բռնացրած լինի։ Հայացք գցեց իր բակին ու շինություններին, փարախներին, նայեց հովիվներին, որ առավոտ վաղ իրենց գործերով էին զբաղված, ստուգեց, արդյոք ամեն ինչ կարգի՞ն է։ Իհարկե, Բոստոնի ձմեռոցում ավելի կարգուկանոն կա։ Բոստոնը գործի մեջ իսկական գազան է, էդպես էլ պիտի բանի, քանի որ առա-

ջավոր է (չար լեզուներն ասում են՝ էն լավ տարիներին դա պիտի Սիբիր քշված լիներ որպես կուլակ), իսկ Բազարբաչին ինչ՝ սովորական, շարքային ասիական չոբան է։ Իրա նմաններն ինչքան ասես կան լեռներում ու տափաստաններում, դրանք էլ հենց արածացնում են այն միլիոնավոր հոտերը, որոնց կճղակները չեն թողնում, որ խոտն աճի, հողից բարձրանա, կոխկրճելով դրանք հողի մեջ։ Եվ հետո, ամեն մեկից իր չափով էլ պիտի պահանջեն։ Բոստոնն ուրիշ, ինքն՝ ուրիշ։ Մինչ Բոստոնը մոտենում էր, նրա գլխով ինչ միտք ասես չանցավ։ «Տեսնես մեր կուլակն ինչի՞ է առավոտ կանուխ էս կողմերը եկել։ Երբեք էսպես բան չէր արել,— չէր հասկանում Բազարբայը։— Սա ի՞նչ կնշանակի։ Ինչի՞ համար է»։ Մտածեց Բոստոնին տուն հրավիրել, քանի որ էդպես է, բայց հիշելով տան վիճակը, բրիգադայի անտեր, կիսավեր տունը ու մանավանդ իր կնոջը, թշվառ, չորացած Կոկ Թուրսունին (բա սրան Գուլչումկանի հետ կհամեմատե՞ս), ձեռ քաշեց այդ մտադրությունից։

Թամանի ձմեռոցին մոտենալով, Բոստոնը բակի ծայրին կանգնեցրեց ձին, նայեց շուրջը և ծածկի մոտ տեսնելով տանտիրոջը, մոտեցավ նրան։ Նրանք զուսպ բարևեցին՝ Բոստոնը նույնիսկ չիջավ ձիուց։ Բազարբայը շարունակեց իր գործը։ Ընդ որում, նրանցից ոչ մեկն իր համար վիրավորական բան չտեսավ դրանում։

— Լավ էր քեզ տեղում գտա,— ասաց Բոստոնը, ձեռքով բեղերը սղալելով։

— Ոնց որ տեսնում ես, ես իմ տեղում եմ։ Ի՞նչ է պատահել, կթե գաղտնիք չի։

— Ի՞նչ գաղտնիք, գործ կա։

— Դեհ, քեզ նման մարդը դատարկ գործի համար էստեղ չի գա,— գոռոզ ասաց Բազարբայը։— Ճիշտ չե՞մ ասում։

— Ճիշտ ես։

— Ուրեմն ձիուց իջիր, թե գործով ես եկել։

Բոստոնը լուռ իջավ ձիուց, Դոնկուլչուկին կապեց ձիապարանով։ Ինչպես միշտ, այս անգամ էլ չմոռացավ, թուլացրեց թամբակալը, որ ձին կուրծքը սեղմող փոկերից հանգստանա, ավելի ազատ շարժվի։ Հետո նայեց շուրջը, ասես ուզում էր տեսնել տնտեսության վիճակը։

— Ի՞նչ ես կանգնել։ Ի՞նչ ես նայում,— վատ թաքցված ջղայնությամբ ձայն տվեց նրան Բազարբայը։— Հրեն նստի կոճղին,— առաջարկեց նա, ինքն էլ նստելով ոտքերի մոտ ընկած տրակտորի ակին։

Նրանք նայեցին իրար նույն խուլ հակակրանքով։ Բոստոնի ամեն ինչը դուր չէր գալիս Բազարբային. ոչ այն, որ հագին լավ, սև գառան մորթիով եզերված մուշտակ էր և որ մուշտակը բացված էր նրա լայն կրծքին, ոչ այն, որ նա առողջ էր, աչքերը պայծառ, և որ դեմքը մուգ պղնձագույն էր, իսկ չէ որ Բոստոնը իրենից՝ Բազարբայից, հինգ տարով մեծ էր, դուր չէր գալիս նրան և այն, որ երեկ Բոստոնը անպայման անկողին է մտել Դուլյումկանի հետ, թեև թվում է, դա նրա ինչ գործն էր։

— Դե ասա, լսում եմ քեզ,— գլխով արեց Բազարբայը։

— Հասկանում ես, ինչ գործի համար եմ եկել,— սկսեց Բոստոնը,— տես, հետս էլ խուրջին եմ բերել, կապել եմ թամբին։ Դու էդ գայլաձագերին տուր ինձ, Բազարբայ։ Հարկավոր է դրանց տեղը դնել։

— Ի՞նչ տեղ։

— Դնել որջը։

— Այ թե ինչ,—չար ծամածռվեց Բազարբայը։— Ես էլ մտածում էի, թե էս առաջավորն ինչի է առավոտ կանուխ բարեհաճել։ Իր գործերը թողել ու վազ տվել։ Դու, Բոստոն, երևի մոռանում ես, որ ես քո ննթական չեմ։ Ես էլ չորան եմ, ոնց որ դու։ Դու ինձ կարգադրող չես։

— Ինչ կարգադրել, էստեղ ինչ կարգադրելու բան կա։ Դու, ինչ է, չե՞ս կարող խոսքս հանգիստ լսել։ Եթե կարծում ես, թե գայլերը կմոռանան երեկվա պատահածը, շատ ես սխալվում, Բազարբայ։

— Ինձ ինչ։ Թող չմոռանան, իմ ինչ գործն է, ու քո էլ ինչ դործն է։

— Այն, որ երեկ ամբողջ գիշեր մենք աչք չենք փակել, գայլերը երկուսն էլ ամբողջ գիշեր ոռնացել են, ինչքան ուժ ունեն։ Այդ գազանները չեն հանգստանա, մինչև իրենց ձագերին իրենց չտանք։ Գայլի բնավորությունը ես լավ գիտեմ։

Բոստոնը նրա դուռն էր եկել որպես խնդրող։ Եվ դա Բազարբայի մեջ ցանկություն էր առաջ բերում հոխորտալ, ծաղրել, ցույց տալ իրեն։ Բոստոնը իրա ոտքով գա նրանից բան խնդրելու՝ էդ մեկը երազում էլ չէր տեսնի։ Ու Բազարբայը վճռեց, քանի որ էդպես է, իր արածն անել։ Ու նաև մտքում չարախնդաց. լավ է, որ գիշերը հանգիստ չեն ունեցել, լավ է, որ Բոստոնը Գուլյումկանին չի կարողացել սիրել։ Երանի միշտ էդպես լիներ։ Եվ ասաց, մի խեթ հայացք նետելով Բոստոնին.

— Ինչ ես խոսում, այ Բոստոն։ Ո՛նց չէ, հիմար ես գտել։ Նրա համար չեմ ձագերին որջից հանել, որ հիմի վերադարձնեմ, քիչ մնաց ներողություն էլ խնդրելով։ Շատ ես քեզ երևակայում։ Եվ հետո, դու քո հաշիվն ունես, ես էլ իմ հաշիվն ունեմ։ Ու իմ հեչ պետքը չի դու ու քո կնիկը քնել եք էս գիշեր, թե չեք քնել, ինձ համար դա մեկ է։

— Մտածի, Բազարբայ, միանգամից չէ մի ասա։

— Իսկ մտածելու ի՞նչ կա։

— Ջուր ես էդպես խոսում,— հազիվ իրեն զսպելով, ասաց Բոստոնը։ Նա հասկացավ, որ մեծ սխալ է արել։ Հիմա մնում էր դիմել վերջին միջոցին։— Այդ դեպքում, ասաց նա, ամեն կերպ չանալով չկորցնել ինքնատիրապետումը,— արի ազնվորեն համաձայնության գանք՝ դու ծախում ես, ես առնում եմ։ Դու մեկ է պիտի ծախես գայլաձագերին, դե ինձ ծախի։ Գինդ ասա՝ պրծավ գնաց։

— Չեմ ծախի,— Բազարբայը նույնիսկ վեր թռավ տեղից։— Քեզ ոչ մի գնով չեմ ծախի։ Սրան տեսնե՞ք՝ ծախի։ Դու փող ունես, իսկ ես չունե՞մ։ Թքել եմ ես քո փողի վրա։ Ես էդ գայլաձագերին օղու կտամ, բայց քեզ չեմ ծախի, հասկացա՞ր։ Ես թքած ունեմ, թե դու ով ես, ինչ ես։ Լսիր, շուտ ձիդ նստի ու գնա էստեղից, քանի կռիվ չենք արել։

— Հիմար բաներ ես խոսում, Բազարբայ։ Սրի խոսանք տղամարդավարի։ Քեզ համար ինչ տարբերություն, թե ում ես ծախում գայլաձագերիդ։

— Էդ ես գիտեմ։ Դու չպիտի ինձ սովորեցնես։ Առանց քեզ էլ եմ հասկանում։ Իսկ թե կուզես, քո գլխին էնպես օյին կդնեմ քո կուսակցական ժողովում, ուր մի գլուխ երևակայում ես քեզ, թե տեսնեք, ես առաջավորներից առա-

ջալորն եմ, ուր բոլորին խելք ես սովորեցնում, ես քո գըլխին էնպես պատմություն սարքեմ, որ եկածդ ճամփան չգոնես էնպես անեմ, որ կյանքումդ չմոռանաս։

— Այ քեզ բան,— անկեղծորեն զարմացավ Բոստոնը, ակամա ձեռքով իրեն պաշտպանելով Բազարբայից։— Դու ինձ մի վախեցրու, ավելի լավ է ասա տեսնեմ ինչի ես էդպես փրփրել։

— Ինչի եմ փրփրե՞լ։ Ինչի՞։ Դու իշխանությանը դեմ ես գնում։ Պարզ բան է։ Մենակ դու ես խելոք։ Պետությունը պահանջում են ամեն տեղ ոչնչացնել գիշատիչներին, իսկ դու որոշել ես գայլերին խղճալ, բազմացնել՝ բա էդպես չի՞ ստացվում։ Մի լավ մտածի քո էդ կուլակի գլխով։ Ես մի ամբողջ ձագախումբ եմ հանել, ուրեմն մեծ օգուտ եմ տվել պետությանը, իսկ դու ուզում ես դրանց որջը դնել։ Թող մեծանան, թող բազմանան, էդպես չի՞ ստացվում։ Ու դեռ ինձ էլ ուզում ես կաշառել։

— Քեզ չեմ ուզում կաշառել, ես քո երեսին նայողը չէի, գայլաձագերին եմ ուզում առնել։ Ու դու ինձ իզուր ես վախեցնում, քիչ մնաց գաժի տաս։ Դու նախ մտածիր, խելքիդ տուր, թե ինչ ես անում, ու ով ես դու դրանից հետո։ Դու առաջ մեծ գայլերին սպանի, թե էդքան քաջ ես։ Ու ամենից առաջ մայր գայլին, քանի որ որջ ես գտել։ Իսկ թե դա քո ուժի բանը չի, ուրիշներին ասա, որ էսպես, էսպես, ու թող դա անի նա, ում ուժը պատում է։

— Իսկ դա ո՞վ է, չլինի դո՞ւ ես։

— Թեկուզ հենց ես։ Իսկ հիմա փորձի դռնել էդ գայլերին՝ էլ գռնել չի լինի։ Որ նրանց որջն ավերել ես, հիմա գայլին էլ, մայր գայլին էլ ոչ դռնել կլինի, ոչ սպանել։ Հիմա նրանք մեր շրջապատում ոչնչացնելու են կենդանի ինչ կա-չկա, բոլոր անասուններին, ամեն ժամ վրեժ են լուծելու մարդուց՝ դեհ փորձի դրանց հարից գալ։ Այդ մասին մտածե՞լ ես։

— Պատմի, պատմի, սրան տեսեք, գայլի փաստաբան է դարձել։ Գնա ապացույցի՝ քեզ ո՞վ կհավատա։ Գայլերի մասին էնպես ես խոսում, ոնց որ մարդիկ լինեն, սովորել ես մարդկանց ուզածիդ պես ֆռռացնել։ Բայց ինձ չես խա-

բէ։ Հիմի ուրիշ բան քեզ կասեմ։ Թե էստեղ ես եկել, որ ինձ նեղես...— Բազարբայը խոսքը չավարտած գլխարկը քաշեց հանեց ճաղատ գլխից, մոտ թռավ Բոստոնին. իսկ ու իսկը ոչնգաճակատ ցուլի նման, և նրանք կիպ մոտեցան իրար, երես երեսի, երկուսն էլ շնչում էին ծանր, ատելությունից խեղդվելով։

— Հը, ի՞նչ ես ուզում ասել,— լարումից խռպոտած ձայնով ասաց Բոստոնը։— Թե չէ ժամանակ չունեմ։

— Միշտ էլ գիտեի, որ դու ժլատ ես, խորամանկ, մենակ քո օգուտը գիտես, դրա համար ես ժողովներում քարշ գալիս՝ առանց քեզ, հովիվի, էնտեղ գլուխ չեն հանի։ Մենակ թե ոչ ոք չգիտի, որ դու նախանձից սատկում ես շան նման, թե մեկին մի հաջողություն է լինում։ Պարզ բան է, դու չես որսը ձեռքդ դցել, դու չես գայլաձագերին վերցրել, դրա համար էլ հանգիստ կորցրել ես, գիշերը քուն չունես, որ ուրիշին է հաջողություն եղել։

— Ո՛ւհ,— չդիմացավ Բոստոնը։— Ես էլ դեռ կանգնել խոսում եմ քեզ նման գարշանքի հետ։ Ես եմ հիմարը։ Թե իմանայի, չէի գա։ Վերջացրինք էս խոսակցությունը։ Վե՛րջ։ Հիմի էդ գայլերին տաս էլ, չեմ վերցնի։ Դնա ինչ ուզում ես արա։

Բոստոնը լրջորեն ջղայնացած մոտեցավ ձիակապին, ուժեղ թափով ձգեց թամբակալն այնպես, որ ձին երերաց, ոտքից ոտքի փոխվելով, ու միանգամից իրեն գցեց թամբին։ Նա այնքան ջղայնացած էր, որ չլսեց, ինչպես իրեն ձայն տվեց Բազարբայի կինը։ Խեղճ կինը մի փոքր ուշացել էր։ Տնից դուրս գալով, նկատել էր, որ ամուսինը ինչ-որ մեկի հետ բարձր-բարձր խոսում է, ձեռքերը թափահարում։ «Տեսնես ո՞ւմ հետ է էսպես,— մտածեց նա։— Վահ, ոնց որ Բոստոնն է եկել, բայց սա ինչի՞ պիտի մեզ մոտ գար»։ Եվ իսկույն էլ հասկացավ, որ տղամարդիկ վեճի մեջ են, ու անմիջապես վազ տվեց նրանց մոտ։ Սակայն հասնել չկարողացավ՝ Բոստոնն արդեն հեռացել էր իր ոսկեգույն ձիով և շատ զայրացած տեսք ուներ։ Աղվեսամորթուց փափախը գլխին դնելով, նա մարակեց ձիուն ու սլացավ դնաց, մուշտակի փեշերը թափահարվում էին թռչունի թևերի նման։

— Բոստո՜ն, Բոստո՜ն։ Սպասի։ Ի՜նձ լսի,— բղավեց Կոկ Թուրսունը, բայց Բոստոնը հետ չնայեց. ով գիտի, կամ չլսեց, կամ էլ չուզեց պատասխանել։

— Դու ինչի՞ մարդուն վիրավորեցիր։ Ինչի՞ համար էիք վիճում,— մոտեցավ Կոկ Թուրսունը Բազարբայինն։

— Քո գործը չի։ Ու մի գոռա, ինչի՞ էիր նրան կանչում։ Նա քո ի՞նչն է։

— Ախր էսքան տարվա գլուխ մարդը մի անգամ մոտդ է եկել, իսկ դու ի՞նչ արիր։ Ախր ով քեզ էս տեսակ աշխարհ բերեց։ Գազան ես դու, մարդ չես։

Կնոջ խոսքերը միայն ավելի կատաղեցրին Բազարբայինին, նա ձգվեց, վեր թռավ կոճղից ու բղավեց Բոստոնի ետևից.

— Ես քո մերը։ Քո իմացածներից չեմ, հա՜։ Սովորել ես, որ բոլորը դեմդ գլուխները կախ գցեն։ Ես քո...

— Վերջ տուր։ Հերիք,— Կոկ Թուրսունը համարձակ ամուսնու վրա նետվեց, քաշեց նրան կոճղից։— Ավելի լավ է ինձ ծեծի, ինչի՞ ես մարդուն հայհոյում։ Ինչի՞ համար։

— Դեն քաշվի, դրոզի տարած,— հրեց նրան Բազարբայը։— Քո ի՞նչ գործն է։ Մի դրան տեսակ, կարծում էր Բազարբայը պատույտ է գալու չորս կողմը, խնդրի, աղաչի։ Առ, տար, աստծու սիրուն, տար գայլածագերին, թող քո ասածը լինի։ Չէ, ես քո իմացածներից չեմ։

— Էդ գայլերի համա՞ր եք կռվել,— ղարմացավ Կոկ Թուրսունը։— Բա դրա համար կկռվեն։ Կարծես աշխարհի վերջն է եկել։ Աշխարհի վերջը։ Ամոթ-խայտառակություն...

4

Այդ օրը գայլերն իրենց տեղից դուրս եկան ու ճամփա ընկան։ Ոչ թե գնացին սովորականի նման, այլ թողեցին իրենց որջը, գիշերն էլ չվերադարձան ու սկսեցին թափառել դրսում. մեկ տխուր պառկում էին ուր պատահի, մեկ նորից թափառում շրջակայքում, առանձնապես չթաքնվելով, իրենց շատ համարձակ էին պահում, ասես դադարել էին զգուշանալ մարդկանցից։ Այդ օրերին շրջակայքի շատ չո-

բաններ տեսնում էին նրանց ամենաանպատեհ տեղերում։ Նվ միշտ էգ գայլը գլուխը կախ գցած դնում էր առջևից, ասես խելակորույս, իսկ գայլը հետևում էր նրան։ Այնպիսի տպավորություն էր, կարծես այդ զույգն իր կործանումն էր որոնում, այնքան ակներև էին նրանք արհամարհում վտանգը։ Մի քանի անգամ, շների մեջ սոսկալի իրարանցում առաջացնելով, նրանք անցել էին տների և փարախների մոտով։ Շները կատաղի հաչոց էին բարձրացնում, կաշվից դուրս էին գալիս, ձևացնում, թե ահա-ահա գրոհի կնետվեն, սակայն գայլերը նրանց վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում, ու նույնիսկ երբ կրակում էին նրանց ետևից, առանց քայլերն արագացնելու շարունակում էին իրենց ճամփան, կարծես կրակոցները չէին լսում։ Այս տարօրինակ գայլերի մոլեգնությունը ասելիք էր դարձել։ Նվ ավելի շատ սկսեցին խոսել նրանց մասին այն բանից հետո, երբ Աքբարան ու Թաշչայնարը խախտեցին գայլային արգելքն ու սկսեցին հարձակվել մարդկանց վրա։ Մի անգամ նրանք օրը ցերեկով վրա էին հասել տրակտորիստին հենց ճանապարհի մեջտեղում։ Նա խոտ էր տանում կցասայլով։ Ղեկը լավում է, և տրակտորիստը, ջահել տղա, ցած է իջնում, որ տեսնի ինչ է եղել։ Նա երկար գործ էր անում ցածում գործիքներով, երբ մեկ էլ քիչ հեռու տեսավ երկու գայլ, որ գալիս էին հալվող ձյան վրայով, նրանք գալիս էին իր կողմը։ Նրան ամենից ավելի զարմացրին գայլերի աչքերը։ Կատաղի, ինչպես պատմում էր նա հետո, քարացած հայացքով նրանք մոտենում էին իրեն, ընդ որում էգ գայլի հետնաբաշը մի քիչ ավելի ցածր էր, ու նա կապտաչյա էր։ Նրա աչքերը խոնավ էին ու լարված։ Լավ է, տղան իրեն չի կորցնում, հասցնում է խցիկ մտնել ու դռնակը փակել։ Լավ է շարժիչը ընթացքի է ընկնում ներսից, թե չէ միշտ ստիպված էին լինում ընթացքի գցել ձեռքով, բռնատեղից։ Իսկ հիմա ուղղակի բախտը բերեց։ Տրակտորը դոդոաց, և գայլերը հետ քաշվեցին, բայց դե չգնացին, շարունակ փորձում էին մոտենալ մեկ այս, մեկ մյուս կողմից։

Մի ուրիշ անգամ հրաշքով փրկվել էր մի տղեկ տավարած։ Ու նորից օրը ցերեկով։ Նա էշ նստած գնացել էր վա-

ռելիք բերելու, տնից շատ չէր հեռացել՝ պետք է մի քիչ ցախ ու խոիվ բերեր վառելու համար։ Մինչ թփուտների մեջ մանգաղով ցցաչոր ճյուղեր էր կտրատում, ինչ-որ տեղից երկու գայլ դուրս թռան։ Իշուկը չհասցրեց ձայն էլ հանել։ Հարձակվեցին վայրկենապես, լուռ ու արյունարբու։ Տղան փախչում էր մանգաղը ձեռքից ցած չձգելով, և հասնելով մինչև փարախ, փովեց դեռնին ու սկսեց բղավել զարհուրելի ձայնով։ Երբ մարդիկ հրացաններն առած նետվեցին դեպի թփուտը, գայլերն անշտապ վարգով անցան ու թաքնվեցին բլրի եռևում։ Նույնիսկ կրակոցները չսոիսպեցին նրանց քայլերն արագացնել...

Իսկ որոշ ժամանակ անց գայլերը իսկական սպանդ սարքեցին ծանրած ոչխարների դիմին, որոնց դուրս էին բերել արածելու փարախի մոտերքը։ Ոչ ոք չէր տեսել, թե ինչպես և ինչ կատարվեց։ Իմացան միայն այն ժամանակ, երբ կենդանի մնացած ոչխարները սարսափահար բակ վազեցին։ Մի տասնհինգ ծանրած ոչխար պատառոտված ընկած էին արոտատեղում։ Բոլորին սպանել էին գաղանաբար, կրծել կոկորդները, սպանել էին աննպատակ, ոչ կշտանալու, այլ սպանած լինելու համար։

Եվ ծայր առան Աքբարայի ու Թաշչայնարի չարագործությունները։ Ու տարածվեց նրանց զարհուրելի համբավը։ Սակայն մարդիկ տեսնում էին դրա միայն արտաքին կողմը, չգիտեին բանի էությունը, վրեժի իսկական պատճառը, չգիտեին, թե մայր գայլն ինչ անսահման կարոտ, ինչ վիշտ է ապրում որջից գողացված իր ձագերի համար...

Բազարբայը խմում էր, հոխորտում, վատ ձևով ձեռք դցած փողերը տալիս խմելու, անկարգություններ էր սարքում այդ օրերին մերձափնյա կուրորտային ռեստորաններում, որ ամայի ու մռայլ էին տարվա այդ ժամանակ, բայց փոխարենը օղին լիքն էր ամեն տեղ։ Եվ Բազարբայը ուր նստեր, խմելով այնքան, որ ճաղատն էլ էր կարմրատակում, միշտ նույնն էր պատմում, թե ինչպես էր իրեն երևակայող դուռը Բոստի հախից եկել, էդ ժլատի, օձի, էդ քոզարկված, չմերկացված կուլակի, որին առաջվա ժամանակներում կգնդակահարեին որպես ժողովրդի թշնամու, ու վերջ։ Ափսոս, որ այդ ժամանակներն անցան։ Դրա նմանին

Վերջ տալը սուրբ գործ էր։ Բա՞ ինչո՞ Քահանայի, երեսնակաի քվականներին ուշածդ միլիցիոները տեղնուտեղը, հենց իր բակում կարող էր խփել կուլակին, հարուստին։ Էդ մասին գրքեր են գրված, ռադիոյով էլ են կարդացել, ոնց մի կուլակ նեղել, խաբել, փողը պակաս է տվել բատրակին ու դրա համար նրան խփել են հենց օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, որ էլ չհամարձակվեն նեղել աղքատներին։ Բայց ամենից ավելի Բազարբայը սիրում էր պատմել, թե ոնց է գրունից ճամփել Բոստոնին, ոնց է խայտառակել ու հայհոյել, երբ սա եկել էր մոտը Թամանո։ Բազարբայի հետ խմողները, որ մեծ մասամբ ձմռանը պարապ դոմոստրոևշուներ* էին, հոհոում էին այնպես, որ ասլակիները զնգզնգում էին հասարակական սննդի խոնավ ու նեխած, ծխախոտի ծխից գարշահոտ սենյակներում, ոտն էին տալիս, ոգևորում հարբած Բազարբային էլ ավելի սաստկացնելով նրա զազրախոսությունը։ Այս խոսակցությունները Բոստոնի ականջին էլ էին հասնում։ Ահա թե ինչու մեծ կռիվ տեղի ունեցավ սովխոզի դիրեկտորի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ։

Նախորդ ամբողջ գիշեր Բոստոնն անկողնում անհանգիստ շուռումուռ էր եկել անքնությունից, հանկարծ իրեն տիրած ծանր մտքերից։ Իսկ այդ բոլորն սկսվեց նրանից, որ նորից ձմեռոցի մոտերքում սկսեցին պտտվել գայլերը և նորից սկսեցին այն անատանելի, հոգի քրքրող երգը, և նորից վախից դողալով Գուլյումկանը սեղմվում էր ամուսնուն, իսկ հետո չդիմանալով նորից քնած Քինջեշին իրենց անկողին բերեց ու շոյում էր նրան, ծածկում մարմնով, ասես տղային վտանգ էր սպառնում։ Բոստոնը դրանից իրեն վատ էր զգում, թեև հասկանում էր, որ կնոջը ներելի է վախենալ մթությունից և օտարոտի ձայներից։

Մի քանի անգամ Բոստոնը փորձեց դնալ և համազարկ տալ հրացանից, սակայն կինը չէր թողնում, չէր ուզում ոչ մի րոպե մենակ մնալ։ Հետո կինն, այնուամենայնիվ, քնից տագնապալի, ոչ խոր քնով, սակայն Բոստոնն այդպես էլ չկարողացավ քնել։ Ինչ ասես չէր անցնում մտքով։ Այնպես

---

* Դոմոստրոևշու — հանգստյան տների սեզոնային բանվորներ։

էր ստացվում, որ ինչքան շատ էր ապրում աշխարհում, այնքան դժվարին ու բարդ էր դառնում կյանքը, և նույնիսկ ոչ այնքան կյանքը, որքան կյանքի իմաստը հասկանալը։ Այն, ինչ առաջ չէր մտածում կամ մտածում էր ոչ այնքան հստակ, մի տեսակ հոգու խորքում, հիմա ըզաղեցնում էր միտքը պարտադրական անհրաժեշտությամբ պարզելու իր համար, թե ինչն ինչ է։

Ինքն ահա մանկուց ապրել է իր աշխատանքով։ Ծանր ճակատագիր է ունեցել. հայրը զոհվել է ռազմաճակատում, երբ նա դեռ երկրորդ դասարանում էր սովորում, հետո մահացավ մայրը, ավագ եղբայրներն ու քույրերն ապրում էին ամենքն իրենց համար, ոմանք արդեն կենդանի էլ չէին, և ամեն ինչով ինքն իրեն է միայն պարտական, միայն իր աշխատանքին, նա, ինչպես հիմա հասկանում էր, գնացել է ինքն իր առջև դրած մի նպատակի, գնացել է օրեցօր, համառորեն, անշեղ կերպով, աշխատել է անդադար և մտածել, որ դա միայն կարող է կյանքի իմաստ դառնալ։ Նույնպիսի եռանդով նա ստիպել է աշխատել մյուս բոլորին, ով աշխատել է նրա ձեռքի տակ։ Իր դպրոցն անցած շատերին նա մարդ է դարձրել, սովորեցրել է աշխատել և այդ կերպ գնահատել կյանքը աշխատանքով։ Իսկ նրանց, ով չէր ձըգտում այդ նպատակին, Բոստոնը բացահայտորեն չէր սիրում և չէր հասկանում։ Այդպիսիներին անպետք մարդիկ էր համարում։ Նրանց հետ չոր է և ոչ սիրալիր։ Գիտեր, որ շատերն այդ պատճառով հայհոյում էին իրեն ետևից, համարում էին ժլատ, կուլակ, ափսոսում էին, որ Բոստոնը մի քիչ ուշ է ծնվել, թե չէ ոսկորները կփտեին Սիբիրի ձյուների մեջ։ Ոչ մի վատաբանության Բոստոնը, որպես կանոն, չէր պատասխանում, որովհետև կասկած չուներ, որ ճշմարտությունն իր կողմն է, այլ կերպ չի էլ կարող լինել, այլապես աշխարհը գլխի վրա շուռ կգա։ Դրանում նա համոզված էր այնպես, ինչպես այն բանում, որ արևը ծագում է արևելքում։ Եվ մի անգամ միայն կույր ճակատագիրը նրան ծնկի բերեց ու ստիպեց դառնորեն ղջալ, և այն ժամանակից իմացավ նա ծանրությունն ու դառնությունը կասկածի...

Էրնազարի, Գուլյումկանի հանգուցյալ ամուսնու հետ, մինչ այն ողբերգական դեպքը նրանք աշխատել էին երեք տարի։ Լավ աշխատող էր, խոսք չկա, ու վստահելի մարդ էր՝ հենց այնպիսին, ինչպիսին պետք էր Բոստոնին իր բրիգադում։ Էրնազարն ինքն էր եկել նրա մոտ, ու այդպես էլ սկսվել էր նրանց համատեղ աշխատանքը։ Մի անգամ աշնանը նա եկել էր Բոստոնի մոտ Բեշկունգեյ, որտեղ այն ժամանակ գտնվում էր հոտը ձմեռոցից առաջ։ Ասաց, եկել է խոսելու։ Թեյի ժամանակ հենց խոսացին։ Հոգնել եմ, դանդաղվեց Էրնազարը, ում հետ պատահի աշխատելուց. ինչ ուզում ես արա, եթե ավագ չոբանը գործին տեր չի, քո չարչարանքից օգուտ չկա։ Հրեն տարիներն անցնում են, Լրկու աղջիկներս մեծանում են, նայում ես՝ շուտով ամուսնացնելու ժամանակն է, ժամանակը հո արագ է անցնում, ես էլ աշխատում եմ, չարչարվում, բայց պարտքից դուրս չեմ գալիս, տուն շինեցի, ով չգիտի, թե ինչ է նստում, իսկ քեզ մոտ, Բոսկե, նա նրան այդպես էր կոչում հարդալից, թաքցնելու բան չկա, կարելի է և աշխատել, և վաստակել։ Բրդի համար, աճի համար, քաշի ավելացման համար քեզ մոտ, Բոսկե, միշտ պարգևատրություններ են լինում, ու բավական։ Ես էլ մտածեցի, քեզ խնդրեմ, եթե դեմ չես, խոսի դիրեկտորի հետ ինձ քեզ մոտ նշանակի առաջին չոբան, քո աջ ձեռքը լինեմ։ Դոհ կմնաս, հավատա, թե չէ ես խնդիրքով չէի գա...

Բոստոնն էրնազարին ճանաչում էր դրանից առաջ, ինչքան չլինի մի սովխոզում էին ապրում, ու նաև Գուլյումկանը իր կնոջ՝ Արզիգուլի հեռավոր ազգականուհին էր։ Այսպես թե այնպես յուրայիններ էին։ Բայց գլխավորը, Բոստոնն անմիջապես հավատաց էրնազարին և հետագայում երբեք առիթ չունեցավ դրա համար զղջալու։

Ահա հենց դրանից էլ սկսվեց ամեն ինչ, այդ պարզ, սովորական պատմությունից։ Միասին աշխատելը նրանց համար դժվար չէր, որովհետև էրնազարն էլ Բոստոնի նման գործի տեր էր իր էությամբ, այլոց կարծիքով՝ հիմարի մեկը. սովխոզի անասուններին նայում էր ոնց որ իրենը լինեին,

իր սեփականը։ Խելառ է, ինչ է։ Այստեղից էլ բխում էր և մնացածը. և աշխատում էր, ինչպես իր համար կաշխատեր, և հոգ տանում տնտեսությանը, ինչպես իր սեփական տրնտեսությանը։ Աշխատասիրությունը էրնաղարի համար բնաւորություն էր։ Նա ի բնե օժտված էր աշխատասիրությամբ, և զարգացրել էր դա իր մեջ կյանքի ընթացքում, մի հատկություն, որ ընդհանրական է, դրանով, այդ հատկությամբ պետք է օժտված լինեն բոլոր մարդիկ, միայն թե ոմանք այն զարգացնում են իրենց մեջ, իսկ ուրիշները՝ ոչ։ Որ մտածում ես, ինչքան շատ են այդ անբաններն ամեն տեղ, բոլորի մեջ՝ և մեծերի, և չահելների, և տղամարդկանց, և կանանց։ Կարծես մարդիկ չեն հասկանում, թե ինչքան դրժբախտություններ և խեղճություն է առաջանում իրենց կյանքում, և առաջացել է բոլոր ժամանակներում ծուլության պատճառով։ Սակայն Բոստոնն ու էրնաղարը իսկական աշխատավորներ էին, ուստի և հոգեհարազատ էին իրար։ Դրա համար էլ աշխատում էին համերաշխ և միաբան, ու կես խոսքից հասկանում էին իրար։ Սակայն այնպես պատահեց, որ, թերևս, հենց այդ հանգամանքն էլ ճակատագրական դեր խաղաց նրանց կյանքում...

Ասենք, այդպես էր, թե ոչ, ինչ իմանաս... Բանն այն է, որ բրիգադային և ընտանեկան արտադրական կապալների երևան գալուց դեռ շատ առաջ Բոստոն Ուրկունչիևը հավանաբար իր բնազդային ինչ-որ մղումով ամեն հարմար առիթով պնդում էր, որ իրեն, այսինքն իր բրիգադին հատկացվի հող մշտական օգտագործման համար։ Այդ պարզ նպատակը, ասված իսկապես պարզասրտորեն, սակայն որոշ օրթոդոքսների տեսակետից հանդուգն համարվող, ըստ էության նշանակում էր հետևյալը. թող ես իմ արոտատեղն ունենամ, այսինքն իմ հողը, թող ունենամ իմ փարախները ու դրանց համար ես լինեմ պատասխանատու, ոչ թե տնտեսը պարետը, որի պետքը չի, թե տանիքից կկաթա, թող լեռներում ունենամ իմ ամառային արոտավայրերը, որպեսզի հոտի հետ ինձ չքշեն ուր պատահի, և թող բոլորն իմանան, որ այդ արոտավայրերը տրված են ինձ, Բոստոնին, ոչ թե ուրիշին, և որ այդ ամենին տիրություն անեմ ես որպես տեր, որպես բանվոր, ու այն ժամանակ ես հարյուր անգամ ավելի

շատ կանեմ և պլանից ավելի շատ արտադրանք կտամ, քան դիմազուրկ հողի վրա, որտեղ ես աշխատում եմ բատրակ-ջալղամայի* նման, որը հաջորդ աշնանը հայտնի չէ ուր կգնա աշխատելու։

Ոչ, Բոստոնի այս գաղափարը չանցավ։ Սկզբում բոլորը համաձայն էին, այո, դա, իհարկե, ճիշտ է, խելացի, բոլորին պետք է հողամասեր տալ, թող մարդիկ իրենց տեր զգան և զավակները, ընտանիքը իմանան, որ այդպես է ու բոլորով աշխատեն իրենց հողի վրա, սակայն բավական էր տեղի զգոն քաղտնտեսագետներից մեկը կասկած հայտներ. իսկ դա ոտնձգություն չի՞ լինի սոցիալիզմի սրբազան սկզբունքներին, և բոլորն անմիջապես հետ էին քաշվում, սկսում էին հակառակն ասել, ապացուցում էին այն, ինչ հարկ չկար ապացուցելու։ Ոչ ոք չէր ուզում, որ իրեն կասկածեին մոլորության մեջ։ Եվ միայն Բոստոն Ուրկունչիևը, անգետ հովիվը, համառորեն շարունակում էր իրենը պնդել սովխոզի կամ շրջանային գրեթե ամեն ժողովում։ Նրան լսում էին, հիանում և ծիծաղում. էհ, Բոստոնին ինչ կա որ, ինչ մտածում է, այն էլ ասում է, նա կորցնելու բան չունի, գործից չեն հանի, կարիերան չեն փչացնի։ Երջանիկ մարդ։ Եվ ամեն անգամ նրան հակահարված էին տալիս տեսական դիրքերից, որում հատկապես մեծ եռանդ էր ցուցաբերում սովխոզի կուսկազմակերպիչ Կոչկորբաևը, մարզային կուսդպրոցի դիպլոմավոր ուսյալը։ Բոստոնի և այդ Կոչկորբաևի հարաբերությունները գրեթե անեկդոտային էին։ Այդքան տարի նա սովխոզի կուսկազմակերպիչն էր, բայց Բոստոնն այդպես էլ չկարողացավ հասկանալ, նա իրեն ձևացնո՞ւմ է միամիտ տատակեր (հավանաբար դա նրան որոշ առավելություններ է տալիս), թե իսկապես այդպիսին է։ Արտաքինից ոնց որ մի կարմրաթուշ ներքինի՝ ձվի պես կոկլիկ, միշտ փողկապ կապած, միշտ մի թղթապանակ թևի տակ, միշտ մտահոգ՝ գործը շատ է, շատ, արագ քայլում է, արագ խոսում, կարծես թերթ կարդա։ Երբեմն Բոստոնը մտածում էր. միգուցե սա քնի մեջ էլ է էսպես վարժ խոսում։

— Ընկեր Ուրկունչիև,— կշտամբում էր Բոստոնին ամ-

---

* Ջալղամա — վարձակալ։

բիոնից կուսակազմակերպիչ Կոչկորքաևը,— վաղուց ժամանակն է, որ դուք հասկանաք. հողը մեզ մոտ համաժողովրդական սեփականություն է։ Այդպես գրված է Սահմանադրության մեջ։ Հողը մեր երկրում պատկանում է ժողովրդին, միայն ժողովրդին, և ուրիշ ոչ մեկի։ Իսկ դուք ձեզ համար պահանջում եք, կարելի է ասել, գրեթե որպես մասնավոր սեփականություն և ձմեռային, և ամառային արոտավայրեր, փարախներ, կեր և այլ դույք։ Մենք չենք կարող այդ թույլ տալ, մենք իրավունք չունենք աղավաղելու սոցիալիզմի սկզբունքները։ Դուք հասկացա՞ք, թե ձեր առաջարկն ինչ է նշանակում և դեպի ուր եք ուզում դուք մեզ տանել։

— Ես ոչ մեկին ոչ մի տեղ չեմ ուզում տանել,— չէր նահանջում Բոստոնը։— Եթե տերը ես չեմ, այլ ժողովուրդն է, թող ժողովուրդը գնա ու աշխատի իմ փոխարեն փարախում, իսկ ես կնայեմ, թե դրանից ինչ կստացվի։ Եթե ես չեմ իմ գործի տերը, վերջիվերջո որևէ մեկը տեր պիտի լինի՞, թե ոչ։

— Ժողովուրդը, ընկեր Ուրկունչիև, ներից եմ կրկնում՝ սովետական ժողովուրդը, պետությունը։

— Ժողովո՞ւրդը։ Իսկ ե՞ս ով եմ, ձեր կարծիքով։ Բան չեմ հասկանում ձեր ասածից։ Ինչո՞ւ ես պետություն չեմ։ Դու, կուսակազմակերպիչ, ոնց որ ջահել գիտուն ես, բայց ձեզ էնտեղ ի՞նչ են սովորեցրել, եթե ես քո ասածը չեմ հասկանում։

— Ես, ընկեր Ուրկունչիև, ձեր ուզածով չեմ շարժվի, որովհետև դուք կուլակային դեմագոգիա եք անում, բայց իմացած լինեք, ձեր ժամանակն անցել է և մենք ոչ մեկին թույլ չենք տա ոտնձգություն անել սոցիալիզմի հիմքերին։

— Դուք գիտեք, դուք եք պետ, ձեր իմանալու բանն է,— կոպիտ պատասխանեց Բոստոնը,— մենակ թե ես ասածիցս հետ չեմ կանգնի, աշխատողը ես եմ, ուրիշը չսիրտի գա իմ տեղն աշխատի։ Հենց մի բան ասենք, իսկույն բերան եք փակում՝ ժողովուրդը, ժողովուրդը։ Ժողովուրդն է տերը։ Էհ, լավ, դե թող ժողովուրդն էլ որոշի. անասունը տարին տարու վրա ավելանում է, քառասուն հազար գլուխ մենակ մանր անասուն կա սովխոզում. էդ տեսակ բան առաջ ոչ մեկը երազում էլ չէր տեսնի, իսկ ազատ հողը պակասում ու պա-

կասում է, պլաններն էլ մեծանում են։ Դե հիմի տեսնք. առաջ ես բուրդ էի խուզում ամեն գլուխ անասունից երեք կիլո յոթ հարյուր գրամ, իսկ մի քանի տարի առաջ սկսել էի, բոլորը գիտեն, երկու կիլոգրամից, այսինքն քսան տարում հազիվ ավելացրել եմ մի կիլո յոթ հարյուր գրամ։ Իսկ հիմա մի տարում պլանն ավելացրել են կես կիլոգրամով։ Այդ կես կիլոգրամը ո՞նց պիտի տամ։ Ինչ է, սուտ գո՞րծ անեմ։ Իսկ որ պլանը չկատարեմ, բրիգադը ոչինչ չի ստանա։ Նրանք էլ բնտանիքի տեր են։ Մարդիկ էլ ինչի՞ պիտի ամբողջ տարին աշխատեն, ոչխար պահեն։ Իսկ էդպես պլանը ոնց կկատարես, երբ ամեն չոբան գիշատիչի նման մեն է գալիս, որ ուրիշի ձեռքից ավելի լավ արոտատեղ խլի, քանի որ հողը բոլորինն է, ոչ ոք տերը չի։ Ու ինչքան կռիվներ են լինում չոբանների մեջ էդ արոտատեղերի համար, իսկ դու, կուսակազմակերպիչ, ինքդ բան չես անում ու դիրեկտորի ձեռքերն էլ կապում ես։ Ինչ է, կարծում ես, չե՞մ տեսնում։

— Թե ես ինչ եմ անում, ինչ չեմ անում, դա շրջկոմի գործն է։ Բայց իմացիր, որ շրջկոմն էլ քո վտանգավոր ավանդապաշտական չի գնա, ընկեր Ուրկունչիև։

Եվ ամեն անգամ խոսակցությունը մնում էր անհետևանք...

Իսկ հիմա դարձյալ ճակատագիրը հավվական բրիգադ բերեց էրնազարին, և Բոստոնը մոտ համախոհ ու դաշնակից ունեցավ։ Նրանց կանայք, Արշիգուլն ու Գուլյումկանը, հաճախ ծիծաղում էին նրանց վրա. երկու ընկեր, ոնց որ զույգ կոշկի թայեր, իրար են ընկել ու ոչ քուն ունեն, ոչ հանգիստ, մենակ թե աշխատեն։ Ահա հենց այդ ժամանակ էլ նրանց գլխում միաք ծագեց ամառները անասուններին տանեն արածացնելու Ալա-Մոնգոլու լեռնանցքում։ Այդ գաղափարը էրնազարինն էր։ Ինչի, ասում էր, ամբողջ ամառ մի կերպ տեղ գտնենք նախալեռներում, խոտի համար կռիվ տանք հարևանների հետ, ավելի լավ չի ամռանը շարժվենք դեպի լեռնանցք, Կիչիբելի արոտավայրերը։ Մերուկներն ասում են, իբր առաջվա ժամանակներում անասնապահ բեկերն էնտեղ են տարել իրենց երամակներն ու հոտերը։ Հենց էն ժամանակներում էլ հորինվել է «Կիչիբել» երգը։ Նրանք գիտեին, որ չնայած Կիչիբելի արոտատեղը շատ մեծ չի,

բայց խոտերն, ասում են, հյութալի են, սողունավոր։ Հինգ օրում անասունն էնքան է քաշն ավելացնում, ինչքան մի ամիս բտելով կավելացնի։

Բոստոնն առաջ էլ մտածում էր այդ մասին, բայց կա՛չ չիբրել տանելու համար շատ բան կար պարզելու։ Կոլտնտեսային անասնապահները դեռ պատերազմից առաջ ամռանը գնում էին կիչիբել միակ հնարավոր լեռնանցքային ճանապարհով՝ սառցային Ալա-Մոնգյուով։ Պատերազմի ժամանակ, երբ աուլներում միայն ծերունիներ ու երեխաներ էին մնացել, արդեն ոչ ոք չէր համարձակվում այդ ճանապարհը կարել։ Իսկ հետո աղքատացած կոլտնտեսությունները միացան ու մի մեծ սովխոզ դարձան անհեթեթ մի անվանումով վեց բառից բաղկացած ինչ-որ հերթական ... ամյակի, որը տեղացիները հետո վերանվանեցին «Բերիկ» Բերիկ-սուու գետակի անունով, և այդ միավորումների ու վերափոխումների իրարանցման մեջ կամաց-կամաց մոռացան, որ ամռանը ամբողջ երկու ամիս, իսկ գուցեև ավելի կարելի է անասուններին արածացնել մեծ Ալա-Մոնգյուի սառցային լեռնանցքի մյուս կողմում։ Իսկ գուցե ոչ մեկը չէր ուզում այդպիսի բարձրություն հաղթահարել. չէ որ անասուններին այդպիսի դժվար լեռնանցքով տանելու համար տերը մեծ ջանք, մեծ եռանդ պետք է գործադրի, չափազանց մեծ ցանկություն ունեն հնարավորին չափ լավ պահել իր անասուններին։ Այդ պատճառով չէր, որ հին ժամանակներում կիրգիզներն իրար հանդիպելիս հարցնում էին միմյանց. «Մալ ժան ամանբի, այսինքն անասունդ ու տնեցիներդ ողջ առո՞ղջ են։ Առաջին հերթին անասունն էին հարցնում։ Ինչ արած, այդպես է կյանքը...

Հինավուրց այդ զգաստարով ոգևորված, Բոստոնն ու էրնազարը մատիտը ձեռքներին սկսեցին մշակել կիչիբելյան զանազան ուղիներ. նույնիսկ ամենանվազագույն հաշվումներով, նկատի ունենալով, որ անասունները լեռնանցքն անցնելով՝ և այս և այն կողմից, քաշ պիտի պակասեցնեն, միևնույն է, տանելը ձեռնտու էր։ Դա կարող էր և շատ շահավետ լինել. ուղղակի ծախսեր, եթե չհաշվենք լզելու ավի տեղափոխությունը, աշխատավարձից բացի փաստորեն

չկային։ Ճիշտ է, առայժմ դրանք դեռ միայն գայթակղիչ հաշվարկներ էին։

Բոստոնը վճռեց դիմել նախ բաժանմունքի կառավարչին, հետո սովխոզի դիրեկտորին, իսկ կուսակազմակերպիչին չդիմեց։ Չէր սիրում նա կուսակազմակերպիչին, շատ անգամ էր համոզվել՝ պատարկախոսի մեկն էր, հենց մի գլուխ զգուշացներ՝ էս բանը չի կարելի, էն բանը չի կարելի, հենց մենակ ժողովներում խոսեր ու լրագրերում գրածը կրկներ, մեկ էլ փողկապը կապած ման գար։ Իսկ դիրեկտորին, սովխոզի գլխավորին, Բոստոնը ասել էր իրենց մտադրությունը, ահա այսպես, այսպես, Իբրահիմ Ջոտբաևիչ, ես ու էրնազարն ուզում ենք գործի օգուտի համար օգտագործել Ալա-Մոնգոյու լեռնանցքի մյուս կողմն ընկած հին արոտավայրերը։ Սկզբում մենք երկուսով կդնանք ճանապարհը հետազոտելու, կտեսնենք, թե ինչ տեղեր կան կիչիբելում և ինչ խոսեր են, իսկ հետո կվերադառնանք ու բոլորով կգնանք այն կողմերը ամբողջ ամառ։ Ու եթե ամեն բան մեր ուզածի պես ստացվի, թող Կիչիբելի այդ արոտավայրը մեզ հատկացնեն, Բոստոնին, իսկ եթե չորաններից մեկնումեկը ուզի մեր ետևից անցնել լեռնանցքը, խնդրեմ, նրա համար էլ տեղ կլինի, գլխավորը, որ ինքը, Բոստոնն, իմանա, թե ինչ արոտատեղեր են իրեն հատկացնելու և ինչի վրա կարող է հույս դնել ամռան ամբողջ ընթացքում։ Դրա համար եմ ևկել ձեզ մոտ, երկու օրից ես ու էրնազարը որոշել ենք ճամփա ընկնել Ալա-Մոնդյու լեռնանցք, իսկ գործերն առայժմ կթողնենք կանանց ու օդնականների վրա։

— Ի դեպ, Բոսկե, իսկ կանայք ինչ են ասում ձեր այդ մտադրության մասին,— հետաքրքրվեց դիրեկտորը։— Չէ որ դա հեշտ բան չի։

— Կարծես հասկանում են։ Ինչու հոգուս մեղք վերցնեմ, իմ Արզիգուլը խելոք կնիկ է, ու Գուլչումկանն էլ, էրնազարի կինը, չնայած ավելի ջահել է, բայց նա էլ, երևում է, խելքը գլխին է։ Իրար հետ էլ, տեսնում եմ, շատ լավ լեզու են գտել։ Այ դրա համար էլ եմ շատ ուրախ։ Թե չէ կնիկները որ կռվում են, դրանից վատ բան չկա։ Էն ժամանակ կյանքդ էլ կյանք չի... Պատահել է առաջներում...

Ու էլի որոշ բաների մասին խոսեցին դիրեկտորի հետ։

պարզվեց, որ աշնանը Մոսկվայում դժվար արտասանելի վԴՆՆ կամ ԺՏՆՆ* յուցահանդեսին պետք է մեկնեին շրջանի առաջավորները և որ, իբր, Բոստոնն այդ յուցակում համարյա թե առաջինն էր։

— Իսկ չի կարելի, Իբրահիմ Ջոտբաևիչ, որ ես կնոջս հետ մեկնեմ։ Իմ Արզիգուլը վաղուց երազում է Մոսկվան տեսնել,— խոստովանեց Բոստոնը։

— Ես քեզ հասկանում եմ, Բոսկե,— ժպտաց դիրեկտորը,— ապրենք՝ կտեսնենք, ինչպես ասում են։ Իսկ ինչո՞ւ չէ։ Հարկավոր է միայն կուսկազմակերպիչի համաձայնությունն ստանալ։ Ես նրա հետ կխոսեմ։

— Կուսկազմակերպիչի հե՞տ,— մտածեց Բոստոնը։

— Այո, դու ղուր ես կասկածում, Բոսկե։ Նա քո պատճառով հո կնոջդ չի՞ խանդարելու։ Դա տղամարդկություն չի։

— Դա չէ կարևորը։ Ինչ նշանակություն ունի՝ կգնանք, թե չենք գնա։ Մեծ բան չի։ Ես ուրիշ բան էի ուզում խոսել քեզ հետ, դիրեկտոր։ Ասա, այդ տեսակ կուսկազմակերպիչը քեզ շա՞տ է պետք անտեսության մեջ։ Առանց նրա ոչ մի կերպ չե՞ս կարող։

— Ի՞նչ է որ։

— Ոչինչ, ուզում եմ իմանալ։ Այ, ասենք, ոայլը չորս անիվ ունի, և բոլորը տեղում են, իսկ եթե վերցնենք ու ավելացնենք, հինգերորդ անիվը, դա չի գլորվի, և մյուսներին էլ կխանգարի։ Հիմի էդ անիվը պե՞տք է, թե չէ։

— Գիտես ինչ...— Դիրեկտորը, հաղթանդամ, խոշոր տղամարդ, շեղ աչքերով լայն կոշտավուն դեմքին, սկսեց սեղանի վրա թղթերը դասավորել, աչքերը կիսափակեց հոգնած կոպերով։ «Քունը չի առնում, հանգիստ չունի»,— մտածեց Բոստոնը։— Ագնվորեն ասած, խելացի կուսկազմակերպիչ պետք է,— ասաց նա մի փոքր լռելուց հետո։

— Իսկ սա՞։

Դիրեկտորը հայացքը սահեցրեց նրա դեմքով։

— Հիմա ես ու դու դա ինչո՞ւ քննարկենք։ Քանի որ նրան շրջկոմն է ուղարկել, ոչինչ չենք կարող անել։

---

* Առաջին դեպքում ռուսերեն հապավումն է — ժողովրդական տնտեսության համամիութենական նվաճումները (Խթ.)։

— Շրջկոմը՝ Տեսնում ես,— բացականչեց Բոստոնը՝— երբեմն ինձ թվում է, թե նա ուղղակի ձևացնում է, իբր ինչ-որ պատճառով պետք է իրեն այդպես պահի։ Նրա ինչի՞ն է պետք շարունակ մարդկանց վախեցնել, կարծես ես ուզում եմ սոցիալիզմը պայթեցնել։ Ախր դա սուտ է։ Ախր ես թե մի բան ուզում եմ, միայն գործի համար եմ ուզում։ Ես այդ հողը չեմ ծախելու, ուրիշին չեմ տալու, հողը ոնց կա, էնպես էլ սովխոզին է մնում։ Բայց մեկ է, ես քանի ապրում եմ, քանի աշխատում եմ, իմ խելքով եմ ապրելու։

— Դու այդ բոլորն ինձ ինչո՞ւ ես բացատրում, Բոսկե։ Այն, ինչ դու առաջարկում ես, չի կարելի անել։

— Բայց ինչի՞ չի կարելի։

— Որովհետև չի կարելի։

— Դա պատասխա՞ն է։

— Ուրիշ ի՞նչ կարող եմ քեզ պատասխանել։

— Ես քեզ հասկանում եմ, Իբրահիմ Ջոտրաևիչ։ Դու մի անգամ վառվել ես, ուզում էիր անել այնպես, որ լավ լինի, ու դրա համար գլխիդ տվիցին, պաշտոնդ իջեցրին՝ շրջկոմից սովխոզ բերեցին։

— Ճիշտ է, այլևս չեմ ուզում, որ գլխիս տան. արդեն խելոքացել եմ։

— Տեսնում ես, ամեն մեկը նախ և առաջ իր մասին է մտածում։ Դեմ չեմ, մարդն իր մասին պիտի մտածի, մենակ թե խելքով պիտի մտածի։ Պետք է պատժեն ոչ թե նրան, ով մի նոր բան է արել, այլ նրան, ով կարող էր անել ու չի արել։ Իսկ մեզ մոտ ամեն ինչ հակառակն է։

— Քեզ համար հեշտ է դատողություններ անել,— քմծիծաղեց դիրեկտորը։

— Բոլորին է այդպես թվում։ Իսկ ես հոգնել եմ հյուրի ձևով ապրելուց։ Հյուրից ի՞նչ աշխատող դուրս կգա։ Ինքդ էլ լավ գիտես։ Դեհ, մեկ-երկու օր սկզբում մի քիչ կաշխատի, հետո կձանձրանա... Իսկ մեզ մոտ ինչ է ստացվում. աշխատում, չարչարվում ես, իսկ Կոչկորբաևը շարունակ ականջդ քաշում է՝ դու հյուր ես, դու տեր չես։

— Դիտես ինչ, Բոսկե, արի պայմանավորվենք. դու իմ անունը մի տուր, բայց արա, ինչպես անհրաժեշտ կհամարես...

Այդ պայմանավորվածությամբ էլ իրարից բաժանվեցին...

Երեք օր հետո լուսաբացին նա և էրնազարը Համփա բնական դեպի Կիշիբել։ Բոլորը դեռ քնած էին, երբ նրանք իրենց ձիերը նստեցին։ Բոստոնը գնում էր դեղնաշեխետ կրտած ձիով։ Նրա Դոնկուլյուկը,— այն ժամանակ երկու տարեկան,— դեռ շատ ջահել էր, և լեռներ լավ էր գնալ դանդաղաշարժ ձիով, չէ որ լեռնանցքը քառարշավ չես անցնի։ Էրնազարն էլ էր լավ ձի թամբել։ Ձիերը տարվա այդ եղանակին արդեն քաշ հավաքած էին, գնում էին արագ։ Ամեն մեկը հետը մի խուրջին վարսակ էր վերցրել, եթե պատահեր գիշերելու լինեին ձյունների մեջ։ Նույն նպատակով հետները տանում էին նաև ոչխարենու մուշտակներ։

Լինում է, որ հենց Համփան արդեն ուրախություն է։ Հատկապես եթե քո սրտով ուղեկից ունես ու գնում ես հանգիստ, առանց շտապելու, զրուցելով։ Իսկ այդ օրը զարմանալի պայծառ եղանակ էր՝ առջևում բարձրանում էին լեռները, ձյունածածկ լեռնաշղթա լեռնաշղթայի հետևից, մեկը մյուսից ժայռոտ ու ավելի ձյունածածկ, իսկ երբ հետ էիր նայում՝ ցածրավայրում, որքան աչքդ կտրեր փռված էր մեծ լիճը։ Եվ շարունակ ուզում էիր դառնալ նայել Իսսիկ-Կուլի մգացրած հայելու նման սառած կապույտին։

— Ախ, մարդ Իսսիկ-Կուլի կապույտից գոնե մի քիչ տաներ խուրջինի մեջ,— կատակեց էրնազարը։

— Իսկ ձիդ վարսակի փոխարեն ինչով պիտի կերակրես՝ կապույտո՞վ,— պատասխանը տվեց Բոստոնը։

Եվ երկուսն էլ ծիծաղեցին։ Նրանց քիչ էր հաջողվում հովվի ծանր ամենօրյա հոգսերից ազատ ժամանակ գտնել, ու թեև գնում էին պարզելու լեռնանցքով հոտերը քշելու հնարավորությունը, և առջևում նրանց ավելի ծանր ու տառապալից գործ էր սպասվում, երկուսն էլ այդ ժամին իրենց լավ էին զգում, ու նախնիների արահետն էլ առայժմ բարեգութ էր նրանց հանդեպ։ Էրնազարը գնում էր հիանալի տրամադրությամբ, նրա գաղափարն, այնուամենայնիվ, գործի է դրվել։ Պատերազմի ժամանակից, ամբողջ քառա-

սուն տարի ոչ ոք չի անցել այս լեռնանցքը, իսկ ինքն ու Բոստոնը համարձակվեցին։

Էրնազարը, ասենք, որ սիրում էր խոսել, հարցուփորձ անել, մտքեր հայտնել։ Ու արտաքինով էլ տեսքով տղամարդ էր, բանակում էլ, պարզվում է, ծառայել է վերջին հեծյալ զորամասերում պատերազմից հետո։ Կեցվածքը դեռ սահպանված էր, չնայած այդքան տարի էր անցել։ Գուլյամկանը ծիծաղելով պատմում էր, որ նրա էրնազարը մի անգամ քիչ մնաց դերասան դառնար։ Եկել էր ինչ-որ կինոռեժիսոր ու սկսել էր համոզել էրնազարին, որ նկարահանվի կինոյում։ Եթե քո էրնազարն Ամերիկայում ապրեր, անպայման կդառնար խաղալու կինոյում։ Իսկ Գուլյամկանը պատասխանել էր. «Ես ձեր կինոն լավ դիտեմ, լսել եմ, մի նախորապահի տարել եք կինոյում նկարելու, հետո նա չքվել է՝ ինչ-որ դերասանուհի տարել է նրան։ Իսկ ես իմ էրնազարին բաց չեմ թողնի»։ Ծիծաղից կոտորվելու բան էր։

Իսկ Բոստոնը մտածում էր, թե աշնանը, երբ վերադառնան կիչիբելից, այնպես անի, որ կարողանա օգնել ու էրնազարին բրիգադ տանի։ Թող մարդը մշտական աշխատանք ունենա, վաղուց ժամանակն է նրան հովիվությունն վստահել, չի կարելի այդքան երկար ժամանակ հովվի օգնական պահել, եթե ինքը, Բոստոնը, սովխոզի դիրեկտոր լիներ կամ կուսկազմակերպիչ, կիմանար, թե ինչ մարդկանց երբ ու ուր պետք է գործի դնել, բայց ոնց որ ժողովուրդն է ասում «բիրի քեմ դունիե»— աշխարհում միշտ մի բան այնպես չէ։

Լեռներում արդեն տրակտորներ և ձիավորներ չէին հանդիպում, ավելի ու ավելի քիչ էին ճամփին ձմեռոցներն ու փարախները, փոխվում էր և լանդշաֆտը. այստեղ բնությունն ուրիշ էր, ավելի խստաշունչ, դաժան։ Իրիկվա գեմ, արևի մայր մտնելուց առաջ, Բոստոնն ու էրնազարը քարքարոտ կիրճով հասան մինչև Ալա-Մոնգյու լեռնանցքի սառրոտը։ Քանի դեռ մութը չէր ընկել, կարելի էր մի քիչ էլ դնալ, բայց մտածեցին, որ անասունը քշելու ժամանակ, եթե նույնիսկ լուսաբացից առաջ դուրս գան, աստղերի լույսով, միևնույն է ամբողջ օրվա մեջ լեռներում ավելի երկար ճանապարհ անցնել չի հաջողվի, իսկ եթե այդպես է, ուրեմն

հենց այստեղ, կիրճում, լեռնանցքի հենց սկզբում պետք է կանգ առնեն գիշերը։ Անասնապահներն այդպիսի գիշերը կոչում են շրկամա՝ գիշեր լեռնանցքը գրոհելուց առաջ։ Ու նաև տեղը շատ հարմար էր շրկամայի համար՝ գետակը հոսում էր սառցասարերից, այստեղ նրա ակունքն էր, կարելի էր տեղ ընտրել թեքության տակ, որ քամին չթափանցի սառցասարերից։ Հովիվները լավ գիտեին, որ սառցասարերից փչող սուր և վտանգավոր քամին միշտ սկսվում է կեսգիշերին մոտ և պահպանվում է մինչև արևածագ։ Մեծ հոտը գիշերը պատսպարել սառցաքամուց ու առավոտյան թարմ ուժերով սկսել լեռնանցքի գրոհը՝ սա է շրկամայի նպատակը։

Ձիուց իջնելով և թամբը հանելով հոգնած ձիերից, ճամփորդներն սկսեցին պատրաստվել գիշերելուն։ Հարմար տեղ ընտրեցին ժայռի տակ, մի քիչ վառելիք հավաքեցին՝ էրնազարը չզլացավ իջնելու կիրճով բավական ցած, այնտեղ, ուր ցածրիկ լեռնային թփածառեր էին աճում։ Հետո կրակի մոտ ընթրեցին տնից հետները բերած ուտելիքով, նույնիսկ թեյ եփեցին թիթեղյա թեյամանով ու գոհ, սկսեցին պատրաստվել հանգստի երկար ճանապարհից հետո։

Լեռնանցքի տակ բարձունքներում արագ մթնեց, և անմիջապես սկսեց ցրտել, կարծես ձմեռ վրա տվեց։ Ամռանից ձմեռ ճանապարհը տևեց ընդամենը ձիով անցնելու մի օր։ Սառնամանիք փչեց Ալա-Մոնգուլի սառցասարերից, չէ որ նրանք շատ մոտ էին, այդ հավերժական սառույցները, ինչպես ասում են, մի քայլի վրա։ Բոստոնն ինչ-որ թերթում կարդացել էր, որ այդ սառույցները բարձունքներում ընկած են արդեն միլիոնավոր տարիներ և որ դրանց շնորհիվ է այստեղ, հովիտներում, պահպանվում կենդանի կյանքը. սառույցներն աստիճանաբար հալվում են և սկիզբ տալիս գետերի, որոնք իրենց ջրերը տանում են դեպի շոգ ցածրավայրերն ու դաշտերը,— ահա թե ինչ իմաստուն է ստեղծված ամեն բան բնության մեջ։

— Էրնազար,— ասաց քնելուց առաջ Բոստոնը,— բայց ինչ ցուրտ է։ Զգո՞ւմ ես, ոնց է մարդու մարմին թափանցում։ Լավ է մուշտակներ վերցրինք։

— Մուշտակներն ինչ են որ,— պատասխանեց էրնազարը,— առաջներում գոնե փրկվում էին աղոթքով, և այդպես էլ կոչվում էր՝ լեռնանցքային։ Հիշո՞ւմ ես։

— Չէ, ոնց որ չեմ հիշում։

— Իսկ ես հիշում եմ, ինչպես էր պապս կարդում։

— Դե կարդա։

— Բայց գիտես ոնց եմ հիշում՝ մեկ ու մեջ։

— Էլի չհիշելուց լավ է։ Դեհ, սկսիր։

— Լավ, սկսեմ։ Ես կասեմ, իսկ դու կրկնիր։ Լսո՞ւմ ես, Բոստոն, կրկնիր. «Ո, տիրակալ, սառը երկնքի, կապույտ Թննգրի, մի դժվարացրու ճամփան մեր սառցապատ լեռնանցքով։ Թե քեզ պետք է որ անասունը խեղդվի բքից, տեղը սգռավ սար երկնքից։ Թե քեզ պետք է մեր երեխաները ցրտից սառչեն, տեղը կկու սար երկնքից։ Իսկ մենք կձգենք մեր ձիերի թամբակալները, սինդ կկապենք պարկերը եղների մեջքերին ու քեզ կդարձնենք մեր երեսը, միայն թե դու, Թենգրի, մի կանգնի մեր ճամփին, բաց թող մեզ լեռնանցքից դեպի կանաչ խոտերն ու սառն աղբյուրները, ու առ դրա տեղը խոսքերն այս...» Կարծեմ, այսպես է, մնացածը չեմ հիշում...

— Ափսոս...

— Ի՞նչ ափսոս։ Հիմա այս տեսակ աղոթքները ոչ մեկին պետք չեն, հիմա դպրոցներում սովորեցնում են, որ էդ բոլորը հետամնացություն է ու տգիտություն։ Հրեն, տեսնք, մարդիկ տիեզերք են թռչում։

— Տիեզերքն ինչ կապ ունի։ Ինչ է, որ տիեզերք են թռչում, ուրեմն պիտի մոռանա՞նք առաջվա աղոթքները։ Տիեզերք թռնողներին մատների վրա կարելի է հաշվել, իսկ մեզ նման ինչքաննե՞րն են երկրի վրա ապրում։ Մեր հայրերը, մեր պապերը հողով են սպրել, ի՞նչ գործ ունենք մենք տիեզերքում։ Թող իրենց համար թռչեն՝ նրանք իրենց գործն ունեն, մենք՝ մերը։

— Ասելը հեշտ է, Բոսկե, իսկ մեր կուսակցմակերպիչ Կոչկոբաևի նմանները ամեն ժողովում հայհոյում են հինը, ասում է՝ հարսանիքները սխալ եք անում, ինչի չեք համբուրվում հարսանիքներում, ինչի հարսը սկեսրայրի հետ

գրկված չի պարում։ Երեխաքի անուններն էլ եք սխալ դնում. կա, ասում է, վերևից հաստատված ցուցակ նոր անուններով և բոլոր հները պետք է փոխել։ Մեկ էլ տեսար կկպնի՝ հանգուցյալին էնպես չեք թաղում, ոնց պետք է, էնպես չեք ողբում։ Մարդիկ ոնց լաց լինեն, դա էլ է կարգադրում. հին ձևով չի կարելի, ասում է, նոր ձևով պիտի լաց լինեք։

— Դիտեմ, էրնազար, էնպես ես ասում, կարծես ես չգիտեմ։ Այ թե ոտքս Մոսկվա ընկնի, իսկ ինձ ոնց որ պատրաստվում են աշնանը ցուցահանդեսի ուղարկել, այ էն ժամանակ, աղնիվ խոսք, կգնամ Կենտակոմ, ուզում եմ իմանալ, կասեմ՝ մեզ իսկապես ալ՞ոտ են Կոչկորբաևի նմանները, թե դա մեր ցավն է։ Ախր մի բան չասած, իսկույն կոկորդիդ բռնում է, թե դու կուսակցության դեմ ես, ասում է։ Հենց մենակ ինքն է, հասկացար, կուսակցությունը։ Ու ոչ մեկը դրան չի հակաճառում։ Այ թե ոնց է մեզ մոտ։ Դրեկտորն աշխատում է նրանից հեռու մնալ։ Դեհ, ասածած իր հետ։ Վատն այն է, որ Կոչկորբաևի նմաններն ուրիշ տեղերում էլ շատ կան... Լավ, արի քննենք, էրնազար։ Վաղը մեր ամենադժվար օրն է...

Այսպես դեսից դենից խոսելով քուն մտան նրանք, երկու հովիվ, Ալա-Մոնդյուի մեծ սառցային լեռնանցքի կիրճում։ Աստղերն արդեն փայլում էին լեռների գլխին մութ, անիրական թվացող բարձունքում, բոլորին, ինչքան որ կային, դուրս էին ավել երկնքում, և Բոստոնի համար զարմանալի էր, որ այդքան խոշոր ու ծանր, ամեն մեկն իր բռունցքի չափ, այդ աստղերը վայր չէին ընկնում, այլ կախված էին երկնքում ու առկայծում էին անդադար, ու սառը քամին կատաղի սուլում էր քարերի մեջ... Դրա համար միշտ քիչ է տեղը, քամիների աստված Շամալի համար... Միշտ նա դժգոհ է ու միշտ ինչ-որ բան է իր մեջ թաքցնում...

* * *

Նույնպիսի պոռթկուն սառը քամի կամացուկ սուլոցով ներս թափանցեց պատուհանների ճեղքերից այն խուլ գիշերաժամին, երբ գայլերի երկարաձիգ ոռնոցի տակ Բոստոնը նորից հիշեց իր ապրածը։ Ու նա նորից հիշում, վերապ-

րում էր հինը, անցածը, ու հոգին նորից քրքրվում էր անպետք մարդկանց պատճառած վիրավորանքներից, որոնք նույնիսկ ուրիշի դժբախտությունն են օգտագործում ծաղրանքի ու զրպարտության համար։ Ո, որքան ուժեղ են նրանք իրենց այդ զազրելի հին գործերում։ Ում ասես կստիպեն տառապել, ում ասես քնից կզրկեն՝ թագավորից մինչև հովիվ։ Եվ այնքան էր վատանում Բոստոնն այդ վերջ չունեցող մտքերից, որ երբեմն գայլերի ոռնոցը, որոնք նորից հայտնվել էին այդ դիշեր, նրան թվում էր իր տառապյալ հոգու ճիչն էր։ Նրան թվում էր, թե իր հիվանդ հոգին է թափառում մթնում փարախների եռև, գա իր հոգին, վշտից կուրացած իր հոգին էր լալիս ու ոռնում մայր գայլ Աքբարայի հետ։ Եվ ոչ մի ուժ չուներ դիմանալու գայլի ոռնոցին, ուզում էր նրա ձայնը կարել։ «Ախր ես ինչ համառն եմ։ Ես ինչ անեմ քեզ, ի՞նչ կարող եմ անել։ Ի՞նչ ես ուզում ինձնից,— չդայնանում էր Բոստոնը։— Ոչնչով չկարողացա քեզ օգնել։ Ուզում էի, աշխատեցի, բայց չստացվեց։ Աքբարա, հավատա ինձ, չստացվեց։ Ու մի ոռնա այլևս։ Չկան, էստեղ չեն քո ձագերը, ինչքան ուզում ես վազվզի, խմելու են տվել քո ձագերին, ծախել են ամեն մեկին մի տեղ։ Ու հիմա էլ չես գտնի նրանց։ Բավական է, հանգստացի։ Ինչքա՞ն պիտի մեզ պատժես։ Հեռացի, հեռացի, Աքբարա։ Մոռացիր վերջապես։ Հասկանում եմ, ծանր է քեզ համար, բայց հեռացի, չքվի, ու աստված չանի աչքիս երևաս, կսպանեմ քեզ, խեղճ, ոչ մի բանի չեմ նայի, կսպանեմ, որովհետև մեզ հանդիստ չես տալիս, ու հոգիս մի հանի, առանց այն էլ դժվար եմ ապրում, քեզ կարող եմ սպանել, բայց ինչ անեմ նրանց, ովքեր ծաղրում են իմ դժբախտությունը, գոնե դու հեռացի, չքվի, որ այլևս երբեք ոռնոցդ չլսեմ։ Ու էլի մի քանիսին կսպանեի ես, և երդվում եմ մորս անունով, որ ձեռքս չէր դողա։ Իմ ու քո թշնամին, Աքբարա, նույնն է. քո ձագերին է նա գողացել, Աքբարա, իսկ ինձ էդ հարբեցող անասունը հայհոյում, խայտառակում է իր կեղտոտ բերանով։ Ու երբ մտածում եմ, թե ինչպես այն ժամանակ, եղունգներս պլոկելով ուզում էի մտնել այն սառցապատ անդունդը և ինչպես էի ձայն տալիս էրնազարին ու լաց լինում մեն-մենակ անողորմ լեռների մեջ, ապրելս չի գալիս,

չեմ ուզում ապրել։ Ու չէի էլ ապրի, կթքեի ամեն ինչի վրա, եթե այս փոքրիկս չլիներ։ Հրես, պառկած է կողքիս, կուչ է եկել, քնել է, մայրը ինձ ավելի մոտ է դրել։ Պարզ բան է, կինը վախենում է գայլի ոռնոցից, իսկ փոքրիկը քնած է, որովհետև մաքուր է, որովհետև անմեղ մանուկ է, որովհետև նա ինձ տրված է իմ տառապանքների դիմաց, այն բանի համար, ինչ ինձ վիճակվեց կրել, նա իմ միս ու արյունն է, նա իմ վերջին հետքն է։ Բայց ես հո ինձ համար այդպիսի ճակատագիր չեմ խնդրել, այն ինքն է ինձ համար եղել, ինչպես գալիս է օրը, ինչպես վրա է հասնում գիշերը, ճիշտ են ասում, որ ճակատագրից չես խուսափի, իսկ այդ սրիկա Բազարբայն ինձ վրա այնպիսի գարշելի սուտ է բարդում, որ տեղնուտեղը շան նման կստահակացնեի, որովհետև նրա համար դատաստան չկա։ Իսկ ով է նրան միանում՝ առաջինը մեր կոսկազմակերպիչը, կարծես էլ բան ու գործ չունի, կրկնում է բոլորն, ինչ դուրս է տալիս էդ հարբեցողը, ուզում է երեխուս անբախտացնել... Բա ես ոնց քո վիշտը չհասկանամ, Աքբարա»։ Մտածում էր այդպես Բոստոնը անքնությունից տառապելով այն գիշեր, սակայն նույնիսկ նա իր խելքով ու նրբազգացությամբ չէր կարող պատկերացնել Աքբարայի տառապանքի չափը։ Խոսքեր նա չուներ, բայց տառապում էր, թեկուզ չէր կարող այդ բառերով արտահայտել։ Ու ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել իրեն այրող այդ տառապանքից։ Հո չէ՞ր կարող իր կաշվից դուրս գալ։ Նա չէ՞ր անդադար, աննպատակ դեսուդեն նետվում լեռներում ու մարգագետիններում Թաշչայնարի հետ, որը կրնկակոխ հետևում էր նրան ամենուրեք և միշտ, այն հույսով, որ ինքն իրեն հալից գցի, փովի գետնին ու մեռնի, շունչը փչի հոգնածությունից։ Մի՞թե չէր փորձել նա մեղմել, խլացնել կորստի չմարող ցավը Թաշչայնարի հետ կատաղի, հանդգնաբար հարձակվելով բոլորի վրա, ով հանդիպում էր նրանց ճամփին։ Մի՞թե չէր փորձել նա վերադառնալ ժայռի տակի իրենց որջը, որպեսզի մի անգամ էլ համոզվի, որ այն դատարկ է, որպեսզի վերջնականապես իր մեջ սպանի ամեն հույս, որպեսզի այլևս չխաբվի երազներով...

Օ, ծանր էր անտանելի։ Այդ երեկո Աքբարան, շրջակայ-

քում աննպատակ թափառելով, հանկարծ կարուկ շրջվեց Բաշատի կիրճի կողմ և սլացավ, շարունակ արագացնելով վազքը, ասես ինչ-որ գործ պահանջում էր նրա անհապաղ ներկայությունը։ Թաշչյանարն, ինչպես միշտ, գնում էր մայր գայլի հետևից, նրանից ոչ մի քայլ հետ չմնալով։ Իսկ Աքբարան շարունակ արագացնում էր վազքն ու խելագարի նման վազում քարերի, ձյունաթմբերի, թփերի վրայով... Եվ ծանոթ կածանով հին սողանցքով, կծոխուրի մացառուտով մտավ իր բունը և քանիցս արդեն համոզվեց, որ որջը դատարկ է, որ վաղուց արդեն ամայացած է, ու նորից ոռնաց, վնգստաց խղճալի, հուսահատով ու շոշափելով այն ամենն, ինչի վրա կարող էր պահպանված լինել իր ծծկերների հոտը. «Ո՞ւր են նրանք, ի՞նչ եղավ նրանց։ Ո՞ւր եք դուք հիմա, իմ ձագուկներ, չորս գնդիկ-ծծկերներս։ Ինչպես դուք կմեծանայիք, ինչպես կամրանայիք ձեր ժանիքները, երբ կողքիցս գնայիք, ինչքան ամուր կլինեին իմ կողերը, հոգնություն չէին իմանա իմ ոտքերը»։

Աքբարան դեսուդեն էր նետվում, վազվզում վտակի կողքին, որտեղ դեռ անուանելի գարշահոտ էր տարածված շշի բերանից և գետնի մեջ սառել էին թռչունների կտցահարած վարսակի մնացորդները...

Հետո նա կրկին վերադարձավ որջ, պառկեց՝ մոուխը աճուկի մեջ խրած։ Թաշչյանարը պառկեց կողքին, տաքացնելով նրան իր խիտ, պինդ մորթիով։

Արդեն գիշեր էր։ Երազում Աքբարան տեսնում էր, որ ձագերն իր կողքին են, այստեղ, որջում։ Նրանք անշնորհք շարժվում էին պտուկներից կպած։ Եվ այնքան ագահորեն էին ծծում ձագերը չփչփացնելով ու կաթի առատությունից խեղդվելով, և այնքան քաղցր տարածվում էր մայր գայլի մարմնով մայրական երանության տանջալից զգացումը, միայն թե կաթը չգիտես ինչու չէր պակասում... Եվ մայր գայլն անհանգստանում էր. ինչու այսպես ստացվեց, ինչու իր պտուկները չեն թեթևանում, իսկ ձագերը չեն կշտանում։ Բայց դե չորս ձագն էլ այստեղ են, իր կողքին, ահա նրանք, և այն մեկը՝ որ բոլորից ժիրն է, պոչի ծայրը սպիտակ, և մյուսը, որ բոլորից ավել էր ուտում ու քնում էր պտուկը բերնին, և երրորդը, կռվարարն ու լացկանը, ու դրանց մեջ

նաև էգ պատկիկ գայլիկը կապույտ աչքերով։ Դա նա էր՝ ապագա նոր Աբբարան։ Իսկ հետո մայր գայլի երազում իբր ինքը ոչ թե վազում է, այլ թռնում, գետնին չկպչելով, նորից Մոյրնկումում, մեծ տափաստանում, ու նրա կողքին են չորս ձագերը, ու նրանք էլ ոչ թե վազում են, այլ թռնում, հետներն էլ իրենց հայրը, Թաշչայնարը, որ սլանում է հսկայական թռիչքներով։ Արևը պայծառ լուսավորում է երկիրը, և զով օդը հոսում, կոհակում է, ինչպես ինքը կյանքը...

Եվ այդտեղ Աբբարան արթնացավ ու երկար պառկել էր անշարժ՝ դաժան իրականությունից ճմլված։ Հետո զգուշորեն վեր կացավ, այնքան զգույշ, որ նույնիսկ Թաշչայնարը չլսեց, և զգույշ քայլերով դուրս եկավ որջից։ Առաջինը, ինչ տեսավ դուրս գալով՝ լուսինն էր ձյունածածկ լեռների գլխին։ Լուսինն այդ պարզ գիշերին երևում էր այնքան մոտ և այնքան խիստ էր ընդգծված աստղալից երկնքում, որ թվում էր դժվար չէ վազ տալով հասնել նրան։ Մայր գայլը մոտենալով խոխոջուն կկլկլացող վտակին, վհատ, գլխահակ գնացել ափին, հետո նստեց պոչը տակը ծալած և երկար նայում էր կլոր լուսնին։ Այդ գիշեր Աբբարայի աչքին, պարզ, ինչպես երբեք, երևաց գայլերի աստվածուհի Բյուրի-Անան, որ գտնվում էր լուսնի վրա։ Նրա ծուռտիկ ուրվապատկերը լուսնի վրա շատ նման էր իրեն՝ Աբբարայինին. աստվածուհի Բյուրի-Անան նստել էր այնտեղ, կարծես կենդանի լիներ, պոչը ետ դցած ու երախը բաց։ Աբբարայինն թվաց, թե լուսնային գայլը տեսնում ու լսում է իրեն։ Եվ, մռութը վեր տնկած, նա դիմից աստվածուհուն լաց ու գանգատով, և դորշու քուլաներ էին ելնում նրա երախից. «Նայիր ինձ, գայլերի աստվածուհի Բյուրի-Անա, ես եմ, Աբբարան, այստեղ, այս ցուրտ լեռներում, դժբախտ ու միայնակ։ Օ, ինչպես եմ տառապում։ Լսո՞ւմ ես, ինչպես եմ լալիս։ Դու լսո՞ւմ ես ինչպես եմ ոռնում ու հևկեկում, և արգանդս այրվում է ցավից, իսկ պոռկներս ուռել են կաթից, ու չկա մեկը, որ կուրծք տամ, կերակրեմ, զրկվել եմ ես իմ ձագերից։ Օ, որտեղ են նրանք, ի՞նչ պատահեց նրանց։ Ցած իջիր, Բյուրի-Անա, իջիր ինձ մոտ ու կնստենք կողք-կողքի,

կողբանք, կհեկեկանք միասին։ Յած իջիր, գայլի աստվածուհի, ու քեզ կտանեմ այն երկրներ, ուր ծնվել եմ ես, տափաստաններ, ուր տեղ չմնաց գայլերի համար։ Իջիր այստեղ, այս քարե լեռներին, ուր նույնպես տեղ չկա մեզ համար, երևում է տեղ չկա գայլերի համար ոչ մի տեղ... Իսկ եթե չիջնես, Բյուրի-Անա, տար ինձ, որքացած գայլին, մայր Աբբարային, քեզ մոտ... Ու ես կապրեմ լուսնի վրա, կապրեմ քեզ հետ ու լաց կլինեմ երկրի համար։ Օ, Բյուրի-Անա-ա-ա, դու լսո՞ւմ ես ինձ։ Լսիր, լսիր, լսիր ինձ, Բյուրի-Անա, լսիր իմ լացը»։

Այսպես լալիս, ոռնում էր Աբբարան այդ գիշեր դարձած լուսնին սառը լեռների մեջ...

* * *

Երբ լեռնանցքում շրկամա՛ գիշերն անցավ, առաջինը վեր կացավ էրնազարը, և մուշտակի մեջ փաթաթվելով, գնաց նայելու ոտնակապ դցած ձիերին։

— Յո՞ւրտ է,— հարցրեց Բոստոնը, անհանգստացած նայելով մուշտակի տակից, երբ էրնազարը վերադարձավ։

— Էստեղ միշտ էլ էսպես է,— պատասխանեց էրնազարը։— Հիմա ցուրտ է, իսկ հենց աբևը դուրս գա, կտաքանա։— Եվ պառկեց սթարին։

Վաղ էր, և այդ ժամին դեռ կիսամութ էր լեռներում։

— Մեր ձիերը ի՞նչ հալի են։

— Լավ։

— Ես էսպես եմ մտածում, որ անասունը բերելու լինենք, արժի գիշերվա համար էստեղ մի վրան խփենք, ավելի տաք կլինի։

— Իսկ ինչի չդնենք,— համաձայնվեց էրնազարը։— Շատ հեշտ կդնենք։ Կարևորը ճամփա բացենք, մնացածը մեզանից է կախված։

Արևածագի հետ լեռներում եղանակը իսկապես էլ մեղմացավ։ Օդն արագ տաքացավ, և լույսը բացվելուն պես նրանք թամբեցին ձիերը։

Զի նստելուց առաջ, Բոստոնը մի անգամ էլ նայեց շուրջը, հայացքը պատեցրեց ամեն կողմից իրենց շրջապատող դարիվերներին և ժայռերին։ Վայրի ու բարձր էին լեռները, և մարդը փոքր, չնչին էր դրանց կողքին։ Իսկ նրանք մարտահրավեր էին նետում այդ լեռներին։ «Լեռնանցքը մեզ չի վախեցնի,— մտածեց Բոստոնը,— կյանքի խնդիր է։ Իսկ երբ կյանքի խնդիր է, մարդուն ոչինչ չի կարող վախեցնել, նա ամեն տեղ իր համար ճանապարհ կբացի՝ ծովում, դեռնի տակ, երկնքում։ Կանցնենք և մենք»։

Սկզբում նրանք գտան հին արահետը, որի վրայից քարերը մի կողմ էին տարված և մտովի պատկերացրին, թե այն ինչպես է անցնելու լեռնանցքով։ Ըստ ամենայնի ճանապարհն անցնում էր երկու կատարների միջև ընկած ձյունածածկ թամբով։ Այդ ճանապարհով էլ շարժվեցին։ Այնտեղ, այդ թամբի մյուս կողմից, երևում է, սկսվում է վայրէջքը դեպի Ալա-Մոնգյու լեռնաշղթայի մյուս կողմը, հենց այնտեղ էլ գտնվում էր Կիչիբելը, ուր, ծերունիների պատմածով, կեչու անտառ էր աճում։ Հաճախ ահա այսպես բնությունը իր նվիրական վայրերը թաքցնում է հեռավոր անկյուններում, դարձնում անմատչելի։ Սակայն երբ բանը գալիս է հացին հանապազօրյա, մարդն ստիպված է հասնել իր նպատակին, նա պետք է ապրի երկրի վրա...

Արահետը գնալով ավելի զառիվեր էր դառնում։ Երբ ոտքերի տակ արդեն սառած ձյունաշերտն սկսվեց, ձիերի շարժվելը դժվարացավ. ինչքան առաջանում էին, այնքան ավելի խորն էր ձյունը։ Արևը փայլում էր, քամին հանդարտվել էր, և լիակատար լռության մեջ ձիերի արագացած շնչառությունն այնքան լավ էր լսվում, ինչպես սեփական շնչառությունը։

— Հը, ո՞նց է,— շրջվելով, հարցնում էր Բոստոնը էրնազարին։— Եթե ձյունը ոչխարների փորից վերև լինի, գործը շատ կդժվարանա։ Ի՞նչ կասես։

— Էդպես է, ճիշտ ես ասում, Բոսկե, ախր տես թե ուր ենք գնում։ Բայց գլխավորը, որ երկար ժամանակ էդպես դժվար չլինի։ Թե բան է, էդպես եղավ, պիտի ոչխարների համար ճամփա բացենք, տեղ-տեր էլ ձյունը տրորենք։

— Ես էլ էի էդ մտածում։ Պետք է հետևերս բահեր վերցնենք։ Միգդ պահի, էրնազար, որ էն ժամանակ հետևերս պիտի բահեր վերցնենք։

Երբ ձյունը ձիերի ծնկներից վերև հասավ, չոբանները իջան ձիերից ու տարան սանձից բռնած։ Այդ ժամանակ օդն սկսեց չբավականացնել, ստիպված էին բերանով շընչել։ Ձյան սպիտակությունը կուրացնում էր աչքերը. պետք եղան մուգ ակնոցներ, որ հիմա բոլորը դրած ման են գալիս փողոցներում։ Ստիպված եղան հանել և մուշտակները, դցել թամբերին։ Ձիերը ծանր էին շնչում, քրտնել էին, կողերը գնում-գալիս էին։ Բարեբախտաբար, մինչև այն կրիտիկական թամբը, փաստորեն այնքան էլ շատ չէր մնացել...

Արևն արդեն զենիթում էր այդ ձյունածածկ քարացած լեռների մշտնջենական կուտակի գլխին։ Եղանակը փոխվելու ոչ մի նշան չկար, եթե չհաշվենք իրենց ճամփին ընկած մի քանի ամպիկները։ Դրանց միջով, կամ, ավելի ճիշտ, դրանց վրայով կարելի էր անցնել, ինչպես բամբակի վրայով։ Դժվար էր նույնիսկ պատկերացնել, որ այդ ժամին Մերձ.ասիկուլյան ցածրավայրերում այնքան շոգ էր, որ հանգստացողները արևի լոգանք էին ընդունում լճի լողափերին։

Նրանց մնում էր ևս մի հինգ հարյուր մետր, և հիմա արդեն մտածում էին, որ երանի լեռնանցքի մյուս կողմն էլ էսպես անցնեն, ավելի վատ չլինի...

Վերջապես անցումը կատարեցին, բարձունքին հասան, և Բոստոնն ու էրնազարը կանգ առան շունչ քաշելու։ Երկուսն էլ քրտինքի մեջ կորել էին։ Շունչները կտրվում էր։ Եվ ձիերն էլ էին շատ հոգնել։ Երջանիկ և գոհ, նրանք նայում էին ցած՝ իրենց անցած ճանապարհին։

— Դեհ, վերջ, Բոսկե,— ժպտալով ասաց էրնազարը։ Նրա աչքերը փայլում էին ուրախությունից։— Հոտը կարելի է այստեղով անցկացնել։ Իհարկե, եթե եղանակը լավ լինի։

— Բանն էլ հենց այդ է։ Լավ եղանակին, իհարկե։

— Ես ու դու երկուս ու կես ժամում բարձրացանք,— ասաց էրնազարը նայելով ժամացույցին։— Եվ ոնց որ ոչինչ, չէ՞։

— Իսկ ուխարների հետ մի երեք ժամ կտևի,— ասաց Բոստոնը,— գուցեև ավելի։ Բայց գլխավորը, համոզվեցինք, որ լեռնանցքով կարելի է գնալ։ Իսկ հիմա շարունակենք ճամփան։ Հրեն այ էնտեղից, ինձ թվում է, արդեն սկսվում է վայրէջքը, իսկ գուցե Կիչիբելն էլ երևա։ Հիմի էնտեղ պետք է որ ամբողջը կանաչի մեջ կորած լինի...

Եվ նրանք շարունակեցին ճամփան։ Շուրջը մաքուր ձյուն էր, տեղ-տեղ հարթ ծածկոցով, տեղ-տեղ քամիներից փոր-փրրված, փայլուն ձյունաթմբեր դարձած։ Սակայն զգացվում էր, որ առջևում ինչ-որ տեղ ձյունի տարերքը վերջանում է և սկսվում է ուրիշ աշխարհ։ Նրանք ուզում էին շուտ հասնել այնտեղ ու սեփական աչքերով տեսնել Կիչիբելը՝ իրենց գալու նպատակը։ Այդպես շարժվում էին նրանք երկու լեռների, ինչպես երկու ուղտասապատների մեջ ընկած թամբի վրայով և ցանկալի տեսիլը թվում էր արդեն շատ մոտ։ Բոստոնը, ոտքով ձյան մեջ ճանապարհ բացելով, գնում էր առջևից, ձիու սանձից բռնած, երբ հանկարծ ինչ-որ բան երերաց նրա ոտքերի տակ։ Նա հետևից ճիչ լսեց։ Բոստոնը կարուկ շրջվեց ու մնաց սպշած. էրնազարը չկար, անհետացել էր չգիտես ուր՝ ոչ ինքն էր երևում, ոչ իր ձին։ Միայն ձյունն էր քուլա տալիս այնտեղ, որտեղով հենց նոր գնում էր նա։

— Էրնազա՛ր,— զարհուրելի բղավեց Բոստոնն ու ինքն էլ վախեցավ իր աղաղակից, որ թնդաձայն արձագանքեց մեռելային լռության մեջ։

Բոստոնը նետվեց դեպի այն տեղն, ուր ձյունը շարժվում էր, և հրաշքով միայն կանգ առավ, հետ ցատկեց՝ նրա առջև անդունդ էր բացվել։ Սև խավար ու թաց սառնաշունչ էր փչում այդ հորից։ Այն ժամանակ Բոստոնը պառկեց ձյան վրա և փորսող տալով մոտեցավ ամենաեզրին, չհասկանալով, ավելի ճիշտ, չուզենալով հասկանալ կատարվածը։ Եվ նա ամբողջությամբ, իր բոլոր զգացողություններով ու մտքերով վերածվեց սարսափի, ու սարսափն այդ կաշկանդեց նրա մարմինը։ Ու չնայած դրան, Բոստոնը շարունակում էր սողալ, ինչ-որ ուժ օգնում էր նրան շարժվել, ստիպում շնչել։ Բոստոնը սողում էր արմունկներին հենված, սրբելով դեմքին կպչող ձյունը։ Նա հասկացավ, որ իր տակ սառույց

է, և հիշեց ձյան տակ ծածկված ջարդվածքների, ճեղքվածքների մասին լսած պատմությունները, ուր պատահում էր ամբողջ հուսեր, երամակներ էին ընկնում, հիշեց անեծքը՝ «Ջարակագա կետ»— անհատակ ճեղքվածքն ընկնես։ Բայց ինչի համար այդ անեծքը էրնազարի գլխին թափվեց, և արդյո՞ք միայն էրնազարի, ու ոչ նաև իր։

Երևի հենց նրա համար, որ ինքն անկուշտ է, ամեն ինչ նրան քիչ է թվում, ամեն ինչից դժգոհ է... Թե իմանար, որ այս տեսակ փորձանք կգա...

Բոստոնը սողաց մինչև փլվածքի եզրը, և նրա առջև բացվեց պատռված սև զառիթափ, որ ցած էր իջնում պոկպոկված պատի նման։ Նա սարսափից դողաց։

— էրնազար,— շշնջաց կամացուկ Բոստոնը՝ շունչը միանգամից կտրվել էր, հետո բղավեց զարհուրելի, խեղդվող ձայնով.— էրնազար, որտե՞ղ ես։ էրնազա՛ր, էրնազա՛ր, էրնազա՛ր։

Եվ երբ լռեց, նրան թվաց, որ ցածից տնքոց լսվեց ու հազիվ հասկանալի բառեր. «Ջմոտենաս»։ Ու բղավեց Բոստոնը.

— էրնազար։ Եղբայր իմ։ Ես հիմա։ Հիմա։ Դիմացիր։ Հիմա քեզ դուրս կքաշեմ։

Նա վեր թռավ, ցած գլորվելու վտանգի ենթարկվելով, ձյունը ետ տալով վազեց դեպի ձին, սկսեց վրայից լծասարքը պոկել. պարանի կծիկն ու կացինը, որ համենայն դեպս վերցրել էին հետները, էրնազարի թամբին էին կապված և նրա հետ անդունդն էին ընկել։ Բոստոնը պատյանից հանեց դանակը, կտրեց կաշվեփոկերի ծայրերը՝ պոչակալի կրծքակալի, ասպանդակների, թամբակալի, սանձերի, իլար կապեց ու մի փոկ սարքեց։ Մատները կարատել, արյունոտել էր, ձեռքերը դողում էին լարումից։ Եվ նորից վազեց դեպի փլվածքը, նորից սողաց մինչև ամենաեզրը, առաջանում էր առանց ճամփան սուուգելու, շունչը կտրվելով, ասես հոգեվարքի մեջ, ասես վախենում էր, թե հիմա կմեռնի ու չի հասցնի էրնազարին փրկել։

— էրնազա՛ր, էրնազա՛ր,— կանչում էր նա։— Հրես պարանը, պարան կա։ Լսո՞ւմ ես, պարան կա։ Դու լսո՞ւմ ես։ էրնազա՛ր։ Եղբայրս, ձայն տուր։

լծասարքից հյուսած պարանի մի ծայրը ձեռքին կապելով, նա մյուսն իջեցրեց անդունդ։ Սակայն ոչ ոք պարանը չբռնեց, ոչ ոք չպատասխանեց նրա կանչին։ Ու չգիտեր նա, թե ինչքան ցած իջավ պարանը և ինչ խորության է անդունդը։

— Ձայն տուր, էրնազա՛ր։ Պատասխանի՛ր։ Գոնե մի խոսք ասա, էրնազար։ Եղբայր իմ,— կանչում ու կանչում էր նրան Բոստոնը, սակայն արձագանքն անդունդից միայն նրա սեփական ձայնն էր ետ բերում, և դրանից Բոստոնն ավելի էր սարսափում։— Ո՞ւր ես, էրնազար,— կանչում էր Բոստոնը։— Լսո՞ւմ ես ինձ, էրնազար։ Ես ի՞նչ անեմ, ինչ։— Եվ այլևս ուժ չունենալով իրեն տիրապետելու, նա հեկեկաց, սկսեց բարձր անկապ խոսքեր աղաղակել։ Նա բողոքում էր վաղուց ռազմաճակատում ղոհված հորը, վաղուց մահացած մորը, երեխաներին, եղբայրներին ու քույրերին, ու մանավանդ բորբոքված գանգատվում իր կնոջը, Արզիգուլին... Ոչ, նա չէր կարողանում ըմբռնել այդ դժբախտությունը... Կարծանվեց, կործանվեց էրնազարը։ Եվ ոչ ոք չէր կարող փարատել նրա վիշտը... Այսուհետև այդ վիշտը միշտ իր մեջ է լինելու, ողջ կյանքում... Եվ այդժամ Բոստոնը բղավեց. «Դու մի՞թե մեր աղոթքը չլսեցիր։ Էս ի՞նչ արեցիր դու, և ո՞վ ես դու, եթե այդպես է»,— ինքն էլ չհասկանալով, թե ում է դիմում։

Վեր կացավ երերալով, հասկացավ, որ արդեն իրիկնանում է և զգաց, որ լեռնանցքում եղանակը փոխվում է։ Ձգիտես որտեղից ամպեր էին հավաքվել, սառը քամի էր փչում։ Բայց ի՞նչ աներ։ Ո՞ւր գնար։ Արահետին թողած ձին արդեն հետ էր գնացել, նա տեսավ, ինչպես ձին իջնում է, բայց հասնել չէր կարող։ Ասենք, ձիուց օգուտ էլ չկար, քանի որ կտրատել էր ամբողջ լծասարքը, մինչև իսկ թամբակալն ու սանձափոկերը։ Բոստոնը ջղայնությունից ոտքով խփեց անպետքացած թամբին։ Այսպես մնացել էր կանգնած, ուտած, սևացած, առանց գլխարկի (գլխարկը քիչ առաջ ցած ընկավ ճաքվածքի մեջ) շվարած շուրջը նայելով, բոլորովին միայնակ Ալա-Մոնդյու լեռնանցքի ժայռերի և հավերժական սառնության մեջ։ Լեռնանցքի. ծակող քամին հուսահատական տխրություն էր բերում նրա առանց այդ

էլ ցնցված հոգուն։ Ո՞ւր գնար հիմա և ի՞նչ աներ։ Ինչքան հաջող էր ամեն ինչ սկսվել, ախր ինչի, ինչի՞ նրանց ճամփին ելավ այդ զարհուրելի ճեղքը։ Սեփական հետքերի շղթայիկին նայելով, հասկացավ, որ էրնազարը փլվածքն էր ընկել զուտ պատահականությամբ. ինքն անցել էր ջարդվածքի եզրից ուղղակիորեն մեկ ու կես մետր հեռավորությամբ, իսկ էրնազարը, դժբախտաբար, մի փոքր ավելի աջով էր անցել և ձիու հետ գլորվել ձյան տակ թաքնված ճեղքի մեջ։

Ընկերոջն օգնել նա ոչնչով չէր կարող։ Սակայն համակերպվել նույնպես չէր կարողանում։ Բոստոնը հանկարծ մտածեց. իսկ եթե էրնազարը դեռ կենդանի է, իսկ եթե նա միայն դիտակցությունն է կորցրել, ուրեմն անհրաժեշտ է նրան շտապ դուրս բերել անդունդից, քանի դեռ այնտեղ վերջնականապես չի սառել։ Այդ դեպքում գուցե հաջողվի նրան փրկել։ Եվ մուշտակը ձյան վրա նետելով, նա սկսեց ցած վազել, թեև դժվար էր վազել այդ տեղերով։ Հարկավոր էր մի միջոց գտնել ու շտապ հայտնել սովխոզ պատահած փորձանքի մասին, մտածում էր նա, այն ժամանակ նրանք մարդիկ կուղարկեն օգնության՝ պարաններով, բահերով, լապտերներով, այն ժամանակ նա ինքն էլ պարանով կիջնի փլվածքի հատակն ու կգտնի էրնազարին, կփրկի նրան։

Նա մի քանի անգամ ընկավ, և սարսափով մտածում էր. «Միայն թե ոտքս չջարդեմ», ու նորից վեր կենալով արագացնում էր քայլերը։

Բոստոնը վազում էր հույսով, որ կհասնի ձիուն, թեև ձիու վրա հիմա մի սանձակատոր էլ չկար։ Եղանակը րոպե առ րոպե վատանում էր։ Օդի մեջ արդեն ձյունափաթիլներ էին պտտվում։ Սակայն դա Բոստոնին չէր անհանգստացնում, նա գիտեր, որ ցածում ուժեղ ձյուն չի տեղա, եթե անգամ լեռնանցքում ձնամրրիկ սկսվի։ Նրան սարսափեցնում էր էրնազարի վիճակը։ Կդիմանա՞, մինչև փրկարարների հասնելը, եթե դեռ կենդանի է։ Շո՜ւտ, շո՜ւտ, թխկթխկում էր նրա ուղեղում։ Նրան անհանգստացնում էր, որ մթնշաղը թանձրանում է, իսկ մթության մեջ արագ վազել չի լինի։

Բոստոնին այդպես էլ չհաջողվեց ձիուն հասնել։ Ազատություն զգալով, ձին սլացավ իր հարազատ վայրերը։

Բոստոնն իրեն լավ ծանոթ նախալեռներն անցավ ուղիղ ճամփով, մեծ չափով կրճատելով ճանապարհը։ Նա հալից ընկել էր ոչ այնքան անվերջանալի ձորակներ ու վարած դաշտեր կտրելուց, որքան ծանր, ոչ մի րոպե դադար չտվող մտքերից, պատահածի մասին մտածելուց։ Գլուխը տրաքվում էր էրնազարին փրկելու հազարումի պլաններից։ Մեկ նրան թվում էր, որ լեռնանցքից չպիտի հեռանար ու էրնազարին մենակ թողներ, թեկուզ բուքն իրեն խեղդեր։ Մեկ թվում էր, որ սառցատակի ականակույր մթության մեջ հառաչում է մահամերձ էրնազարը, իսկ վերևում լեռների գլխին ոռնում է կատաղի բուքը։ Իսկ երբ մտածում էր, թե ինչ է ասելու էրնազարի ընտանիքին, նրա երեխաներին, նրա կնոջը՝ Գուլյումկանին, քիչ էր մնում խելագարվեր։

Եվ սակայն, միայն անհաջողություն չէր նրան հետապնդում, հաջողություն էլ եղավ։ Այդ օրը հովիվներից մեկը հարսանիք էր անում նախալեռնային շրջանում։ Ամուսնացնում էր արձակուրդ եկած ուսանող որդուն։ Հյուրերը ուշ ցրվեցին, վերջինները ճամփա ընկան կեսգիշերից շատ անց բեռնատարով։ Լուսինը պայծառ լուսավորում էր։ Լճից զով էր փչում նախալեռներ։ Հեռու ցածրավայրում հազիվ երևում էր Իսսիկ-Կուլի թույլ փայլփլուղ հայելին։ Մարդիկ ուզում էին երգել ու երգում էին՝ երգ երգի ետևից։

Երգը լսելով, Բոստոնը թռավ ճամփի մեջտեղ ու ամբողջ ուժով սկսեց ձեռքերը թափահարել։ Հենց այդ բեռնատարով էլ գիշերվա ժամը երկուսին նա հասավ «Բերիկ» սովխոզ։ Բեռնատարը կանգ առավ սովխոզի դիրեկտորի տան առջև։ Շունը հաչեց, փորձելով բռնել Բոստոնի ոտքից։ Շան վրա ուշադրություն չդարձնելով, Բոստոնը բախեց պատուհանը։

— Ո՞վ է,— լսվեց անհանգստացած ձայն։

— Ես եմ, Բոստոն Ուրկունչիևը։

— Ի՞նչ է պատահել, Բոսկե։

— Դժբախտություն։

* * *

Հաջորդ օրը կեսօրին մոտ արդեն փրկարարները մեկը մյուսի ետևից շարք կազմած գնում էին դեպի Ալա-Մոնգյու լեռնանցքը։ Բոստոնին էլ հաշված, վեց հոգի էին։ Մինչև այն սահմանը, ուր դեռ կարող էր մեքենա գնալ, մարդկանց

տարան ամենագնացով։ Հիմա նրանք վերելքն էին կատարում պարաններով և գործիքներով բեռնված։ Լուռ, հատատակամ նրանք գնում էին Բոստոնի ետևից, շնչառությունը խնայելով։ Ուր որ է քաղաքից պետք է ուղղաթիռ թռչեր դեպի լեռնանցք, բերեր երեք փորձված ալպինիստներին։

Բոստոնը մտածում էր, որ երեկ այս նույն ժամանակ ինքը և էրնազարը այս նույն արահետով լեռնանցք էին բարձրանում և չգիտեին, թե ինչ է սպասվում իրենց...

Նա հասկանում էր, որ եթե անգամ էրնազարն ընկնելուց հետո առաջին ժամերին կենդանի է եղել, մի ամբողջ օր սառցե անդունդի հատակում դժվար թե դիմանար։ Սակայն, հակառակ ամեն ինչի, ուզում էր հավատալ հրաշքի։

Անցյալ գիշեր մոլեգնած բքից հետո լեռնանցքը խաղաղ էր, ձյունածածկ։ Ձյունը փայլում էր աչք ցավեցնելու չափ։ Դժբախտաբար, հոսքը մաքրել-տարել էր երեկվա բոլոր հետքերը, և հիմա Բոստոնը չէր կարող ճիշտ որոշել, թե որտեղ է այն սառցափլվածքը։ Սակայն, ինչպես միշտ, չիք չարիք առանց բարյաց, փրկարարներից մեկը ձյան մեջ գտավ նախորդ օրը գնալուց առաջ Բոստոնի գցած մուշտակը, իսկ մուշտակից մի քանի քայլի վրա գտնվեց և թամբը։ Այդ իրերով կողմնորոշվելով, հաջողվեց բավական ստույգ որոշել ճեղքի տեղը, որ գիշերը ծածկվել էր ձյունով։ Ա՛յս ընթացքում հասան և ալպինիստները։ Հենց նրանք էլ իջան ճեղքի հատակ, որը գրեթե վեցհարկանի տան խորություն էր...

Վեր բարձրանալով՝ ալպինիստներն ասացին, որ էրնազարին հանել չեն կարող։ Նրա մարմինը սառել է, խրվել սառույցի մեջ, ինչպես և ձիու դիակը, ուժեղ հարվածներից սառույցը կարող է տեղաշարժվել, փլվածք կառաջանա, և այդ ժամանակ փրկարարներն իրենք զոհ կդառնան, կճզմվեն սառույցների մեջ... Ալպինիստներն ասացին, որ Բոստոնին միայն մի բան է մնում՝ իջնել ճեղքի մեջ և հրաժեշտ տալ էրնազարին։ Ուրիշ ոչինչ հնարավոր չէ անել...

Ու դեռ երկար ժամանակ, տարիներ, տարիներ շարունակ Բոստոնը տեսնում էր միևնույն, ընդմիշտ իր հիշողության մեջ մնացած զարհուրելի երազը։ Նա տեսնում էր, որ պարաններով իջնում է այն անդունդը, ձեռքի լապտերով լուսավորելով սառցե պատերը։ Հետը մի լապտեր էլ է

վերցրել, այն դեպքի համար, եթե հանկարծ առաջինը ձեռքից ընկնի։ Հանկարծ տեսնում է, որ այն մյուս լապտերն անհետացել է, կորել է, ու դրանից իրեն վատ է զգում։ Տագնապում է ու սարսափում։ Ուզում է բղավել... Սակայն շարունակում է դանդաղ իջնել ավելի ու ավելի ցած, զարհուրելի սառցե գետնատակը, ու հանկարծ լապտերի լույսը մթության միջից լուսավորում է սառցի մեջ խրված էրնազարին. էրնազարը (այդպես էլ եղել էր) ծնկաչոք է, մուշտակը բարձրացել է գլխին, դեմքը արյունաշաղախ է, շրթունքները պինդ սեղմված են, աչքերը փակ։ «Էրնազար,— ձայն է տալիս նրան Բոստոնը.— Ես եմ։ Լսո՞ւմ ես, ուզում էի մի լապտերը քեզ թողնեմ, այստեղ այնքան սարսափելի է ու մութ, բայց կորցրի։ Հասկանում ես, էրնազար, կորցրի։ Բայց մեկ է, իմս քեզ կտամ։ Ահա վերցրու իմ լապտերը։ Վերցրու, էրնազար, խնդրում եմ քեզ»։ Սակայն էրնազարը նրա լապտերը չի վերցնում ու պատասխան չի տալիս։ Բոստոնը լալիս է, ցնցվում հեկեկանքներից ու արթնանում։

Եվ հետո ամբողջ օրն իրեն վատ է զգում. այդպիսի օրերին Բոստոնը մռայլ է ու խոժոռ։ Այս երազի մասին նա երբեք և ոչ մեկին չէր պատմում, ոչ մեկին, մանավանդ Գուլյումկանին, նույնիսկ այն բանից հետո, երբ սա իր կինը դարձավ։ Էրնազարի ընտանիքից ոչ մեկին չէր պատմել նաև, որ իջել էր անդունդ էրնազարին հրաժեշտ տալու։

Երբ լեռնանցքից վերադարձավ տուն, բրիգադում բոլորը գիտեին պատահած դժբախտության մասին։ Եվ վշտից սպանված, լացող Գուլյումկանին տեսնելուց սարսափելի բան չկար Բոստոնի համար, նրան թվում էր, որ ավելի լավ էր ինքն էլ մեռներ այնտեղ, լեռնանցքում, ավելի լավ էր մի հազար անգամ նորից իջներ այն անդունդն ու նորից վերապրեր այն սարսափը։ Գուլյումկանը ծանր էր ապրում ամուսնու մահը։ Վախենում էին, թե կարող է խելագարվել։ Նա շարունակ փորձում էր ինչ-որ տեղ փախչել. «Չեմ հավատում, չեմ հավատում, որ նա մահացել է։ Թողեք ինձ։ Ես նրան կգտնեմ։ Ես կգնամ նրա մոտ»։

Ու մի գիշեր նա իսկապես փախավ։ Ամբողջ օրվա չարչարանքից հետո Բոստոնը պատրաստվում էր հանգստանալ, արդեն քանի օր էր նրան չէր հաջողվում շորերը հա-

նել ու անկողին մտնել, պետք է ընդուներ ցավակցություն հայտնողներին. մարդիկ գալիս էին շրջանի տարբեր տեղերից, շատերը հին սովորությամբ դեռ հեռվից սկսում էին ողբ ասել էրնազարի համար. «էրնազար, հարազատս, իմ սիրտ ու թոք, քեզ որտե՞ղ եմ տեսնելու»,— և նա օգնում էր ձիուց իջնել, հանգստացնում էր նրանց... Իսկ այդ օրը երեկոյան կարծես համեմատաբար աղատ էր, ու Բոստոնը մինչև գոտկատեղը մերկացած լվացվում էր իր բակում, սափորով վրան ջուր լցնելով։ Արզիգուլը Գուլյումկանի մոտ էր. այս օրերին գրեթե ամբողջ ժամանակ հարևանուհու մոտ էր լինում։

— Բոստոն, Բոստոն, ո՞ւր ես,— հանկարծ լսվեց Արզիգուլի ձիչը։

— Ի՞նչ է պատահել։

— Վազ տուր շուտ, հասի Գուլյումկանին։ Նա տնից փախավ։ Աղջիկները լաց են լինում, չկարողացա նրան պահել։

Բոստոնը հազիվ հասցրեց շապիկը վրան քաշել, ու հենց այդպես, սրբիչը վզին իրեն չորացնելով վազեց Գուլյումկանի եռևից։

Գուլյումկանը արագ գնում էր առջևից թևք զառիվայրով, գնում լեռների կողմը։

— Գուլյումկան, կանգնի, ո՞ւր ես գնում,— ձայն տվեց Բոստոնը։

Կինը շարունակում էր գնալ, առանց հետ նայելու։ Բոստոնը քայլերն արագացրեց, նա մտածեց, որ Գուլյումկանն այս վիճակում հիմա կարող է իր երեսին մեղադրանքներ շպրտել, ինչից նա վախենում էր ամենից ավելի, կասի, որ ինքը, Բոստոնն է պատճառ դարձել էրնազարի մահվան, և այդ միտքը նման չրի նման այրեց նրան, չէ որ նա ինքն էլ իրեն տանջում էր, քրքրվում այդ մտքից, ու հանգիստ չուներ նրա հոգին։ Եվ ի՞նչ կարող է նա պատասխանել։

Մի՞թե պիտի սկսի արդարանալ։ Եվ կնոջ ի՞նչ պետքն են նրա բացատրությունները։ Ինչպես ապացույցի, որ լինում են ճակատագրական հանգամանքներ, որոնց դեմ անզոր է մարդը։ Սակայն այդ խոսքերն էլ չէին մխիթարում, և բնության մեջ չի եղել, չկան այնպիսի խոսքեր, որ կարողանան հանգստացնել, հաշտեցնել կատարվածի հետ։ Ու չկային, չկային այնպիսի բառեր, որ կարողանար բացատրել Գուլ-

յումկանին, թե ինչու ինքը դեռ ողջ է այդ ամենից հետո։

— Գուլյումկան, ո՞ւր ես գնում։— Վազքից շնչահեղձ Բոստոնը հավասարվեց նրան։— Կանգ առ, գնանք տուն...

Դեռ բավական լույս էր այդ իրիկնաժամին, լեռները դեռ երևում էին դանդաղ մարող օրվա մեղմ աղջամուղջում, ու երբ Գուլյումկանը հետ նայեց, Բոստոնին թվաց, թե նրանից, անիրական ճառաքման նման, վիշտ էր ելնում, նրա դիմագծերն աղավաղված էին, ասես նայում էր ջրի հաստ շերտի միջից։ Բոստոնն անկարող էր տեսնել նրա տառապանքները, ցավ էր զգում նրա խեղճացած տեսքից, չէ որ դեռ երեկ նա գեղեցիկ, կենսուրախ կին էր, ցավ էր զգում այն բանի համար, որ կինը վազում էր գլուխը կորցրած, նրա համար, որ ճմրթված մետաքսե զգեստը, որ հագցրել էին նրան, բացվել էր կրծքի վրա, նրա համար, որ նոր, գնդեցիկ սև կոշիկները նրա հագին սգո կոշիկներ էին երևում, իսկ հյուսքը քանդված էր որպես սգի նշան։

— Ո՞ւր ես գնում, Գուլյումկան։ Ո՞ւր ես գնում,— ասաց Բոստոնն ու ակամա բռնեց նրա ձեռքը։

— Էնտեղ, նրա մոտ լեռնանցք եմ գնում,— ասաց կինը՝ մի տեսակ օտարացած ձայնով։

Եվ փոխանակ ասելու. «Ախր մտածո՞ւմ ես ինչ ես ասում։ Դու ե՞րբ էնտեղ կհասնես։ Ախր էնտեղ իսկույն կսառեսկվերջանաս հագիդ բարակ շորով»— նա սկսեց խնդրել։

— Հիմա պետք չի։ Շուտով գիշերը վրա կհասնի, Գուլյումկան։ Ուրիշ անգամ կգնաս։ Ինքս քեզ էդ տեղը ցույց կտամ։ Իսկ հիմա պետք չի։ Գնանք տուն։ Էնտեղ աղջիկները լաց են լինում, Արզիգուլն անհանգիստ է։ Շուտով գիշեր կլինի։ Գնանք, խնդրում եմ քեզ, Գուլյումկան։

Գուլյումկանը լռում էր, վշտից ճմռված։

— Ո՞նց պիտի ապրեմ ես առանց նրա,— վշտագին շշնջաց նա, գլուխն օրորելով։— Ախր ոնց նա մնաց բոլորովին մենակ, չթաղված, վրան սուգ չարած, անգերեզման։

Բոստոնը չգիտեր ինչպես նրան մխիթարի։ Կանգնել էր նրա առջև գլխահակ, մեղավոր, շալվարից դուրս եկած, նիհար ուսերին կախ ընկած մայկայով, սրբիչը վզին գցած, կիրզայե կոշիկներով, որ չորանը հագնում է ձմեռ թե ամառ։ Դժբախտ, մեղավոր, վշտաբեկ։ Նա հասկանում էր,

որ ոչնչով և ոչ մի կերպ չի կարող փոխհատուցել այս կնոջը իր կորուստը։ Եվ եթե կարողանար կենդանացնել նրա ամուսնուն, իրենց տեղերը փոխելով, առանց մտածելու կաներ այդ։

Նրանք լռում էին, ամեն մեկն իր մտքերի հետ։

— Գնանք։— Բոստոնը բռնեց Գուլյումկանի ձեռքը։— Մենք պետք է լինենք այնտեղ, ուր մարդիկ գալիս են հիշելու էրնազարին։ Պետք է տանը լինենք։

Գուլյումկանը հենվեց նրա ուսին, և ինչպես հարազատ հորը իր վիշտը պատմելով ինչ-որ բան էր մրմնջում անհասկանալի, խեղդվելով, ցնցվելով հեկեկանքից։ Նա բռնել էր Գուլյումկանի ձեռքից ու այդպես միասին տանջվելով ու լալով, նրանք վերադարձան տուն։ Մարում էր ամառային երեկոն, ծաղկող լեռնային խոտերի տոիպ բույրով հագեցած։ Էրնազարի աղջիկների ձեռքերից բռնած նրանց ընդառաջ էր գալիս Արզիգուլը։ Կանայք իրար տեսնելով գրկախառնվեցին և նոր ուժով սկսեցին լալ...

Կես տարի հետո, երբ Արզիգուլն արդեն շրջանային հիվանդանոցում պառկած էր, իսկ Գուլյումկանը վաղուց տեղափոխվել էր լճափնյա ձկնորսական ավան, Բոստոնը հիշեց այդ երեկոն, և աչքերը մշուշվեցին սիրտը հորդած զգացմունքներից։

Բոստոնը նստած էր կնոջ հիվանդասենյակում, նրա մահճակալի մոտ և սրտի ցավով նայում էր կնոջ տանջահար, անարյուն դեմքին։ Աշնանային տաք օր էր, հիվանդասենյակի հարևանուհիները մեծ մասամբ ման էին գալիս բակում, դրա համար էլ տեղի ունեցավ այն խոսակցությունը, որ սկսեց ինքն Արզիգուլը։

— Ես ուզում եմ քեզ մի բան ասել։— Բառերը դանդաղ արտասանելով, Արզիգուլը դժվարությամբ աչքերը դարձրեց ամուսնուն, և Բոստոնը նկատեց, որ այս գիշերվա մեջ նա ավելի ուժեղ է դեղնել ու նիհարել։

— Լսում եմ քեզ։ Ի՞նչ ես ուզում ասել, Արզիգուլ,— քնքշորեն հարցրեց Բոստոնը։

— Դու բժշկին տեսե՞լ ես։

— Տեսել եմ։ Նա ասաց...

— Սպասիր։ Կարևոր չի, թե նա ինչ ասաց, դա հետո։ Հասկացիր, Բոստոն, ես ու դու լուրջ խոսելու բան ունենք։

Այս խոսքերից Բոստոնի սիրտը կուչ եկավ։ Նա գրպանից հանեց թաշկինակը ու սրբեց ճակատի քրտինքը։

— Իսկ գուցե չարժի, կլավանաս հետո կխոսենք,— Բոստոնը փորձեց խուսափել հասունացող խոսակցությունից, բայց կնոջ դեմքից հասկացավ, որ չպետք է պնդել։

— Ամեն ինչ իր ժամանակն ունի,— համառորեն շարժում էր գունատ շրթունքները հիվանդը։— Ես էստեղ միշտ մտածում էի՝ հիվանդանոցում էլ ի՞նչ պիտի անես, որ չմտածես։ Մտածում էի, որ քեզ հետ լավ կյանք եմ ապրել և գոհ եմ իմ ճակատագրից։ Աստծուց ինչի դժգոհեմ՝ երեխեքիս մեծացրի, ոտքի կանգնեցրի, հիմա նրանք կարող են ինքնուրույն ապրել։ Երեխաների մասին քեզ հետ առանձին խոսակցություն ունեմ։ Բայց քեզ, Բոստոն, շատ եմ խղճում։ Ամենից շատ քեզ եմ խղճում։ Հարմարվող մարդ չես դու, մարդկանց հետ լեզու գտնել չգիտես, ոչ մեկի առաջ գլուխ չես խոնարհի։ Եվ հետո, արդեն ջահել չես։ Ինձնից հետո մարդկանցից հեռու մի մնա։ Ուզում եմ ասել, որ ինձնից հետո մենակ չմնաս, Բոստոն։ Հիշատակս կատարես, պրծնես, քո մասին մտածի, մտածի, թե հետո ինչ ես անելու, ես չեմ ուզում, որ դու մենակ մնաս։ Երեխեքն իրենց կյանքով են ապրելու։ —

— Ինչի՞ ես էդ բաներն ասում,— խուլ ասաց Բոստոնը։— Բա դրա մասի՞ն մենք պիտի խոսենք։

— Դրա մասին, Բոստոն, դրա մասին։ Էլ ինչի՞ մասին։ Հենց դրա մասին են խոսում վերջին անգամ։ Մեռնելուց հետո էլ չեն կարող ասել։ Էդպես, մտածում էի ես էստեղ քո մասին և իմ մասին։ Գուլյումկանը շուտ-շուտ մոտս է գալիս։ Դե գիտես, օտար մարդ չի։ Կյանքն էնպես եղավ, որ նա մնաց մենակ փոքրիկ երեխեքի հետ։ Լավ կին է։ Իմ խորհուրդն է քեզ՝ ամուսնացիր նրա հետ։ Իսկ մնացածը դու գիտես, արա, ինչպես կուզես։ Ամեն մարդ ինքը իր հարցը պիտի լուծի։ Երբ ես չեմ լինի, ասա նրան մեր այս խոսակցության մասին։ Հանկարծ ու ստացվի էնպես, ինչպես ես ուզում եմ։ Էրնազարի երեխեքը հայր կունենան...

Իսիկ-Կուլ եկողները հաճախ ծիծաղում են իսիկկուլ-

ցինների վրա. ապրում են լճի կողքին ու լիճը չեն տեսնում, միշտ ժամանակ չունեն։ Ահա Բոստոնն էլ վերջապես գնաց լճափ, թե չէ շարունակ հեռվից հեռու, անցողակի հիանում էր Իսիկ-Կուլի կապույտով։

Իսկ այս անգամ, հիվանդանոցից դուրս գալով, գնաց ուղիղ լճափ՝ սիրտն ուզեց մենակ մնալ լեռների մեջ ընկած այդ կապույտ հրաշքի մոտ։ Բոստոնը նայում էր, թե ինչպես է քամին քշում լճի վրայով սպիտակ փրփրակոհակները, որ վեր էին ելնում հավասար, ասես անտեսանելի դուբանով ակոսված շարքերով։ Նա ուզում էր լալ, ուզում էր վերանալ, անհետանալ Իսիկ-Կուլում՝ ուզում էր և չէր ուզում ապրել... ինչպես այս փրփրակոհակները՝ ալիքը ելնում է, անհետանում ու կրկին վերածնվում ինքն իրենից...

* * *

Գայլերն, այնուամենայնիվ, համբերությունից հանեցին Բոստոնին. նրանք այնքան երկար և այնքան անտանելի էին ոռնում բնակատեղի շուրջ, որ ստիպեցին նրան անկողնուց վեր կենալ։ Սակայն նախ արթնացրին Քենջեշին։ Փոքրիկը լացով արթնացավ, Բոստոնը տղային մոտ քաշեց, սկսեց հանգստացնել, գրկում ու սեղմում էր իրեն։

— Քենջեշ, այ Քենջեշ։ Ես էստեղ եմ։ Ինչի՞ ես լաց լինում, պստիկս։ Մաման էլ է էստեղ, հրես, տեսա՞ր։ Կիս-կիս կուզե՞ս։ Ուզո՞ւմ ես լույսը վառեմ։ Մի վախեցիր, բան չկա։ Կատուներն են էդպես բղավում։ Նրանք են էդպես ոռնում։

Գուլյումկանն արթնացավ ու նա էլ սկսեց հանգստացնել տղային, սակայն փոքրիկը չէր հանգստանում։ Ստիպված էին լույսը վառել։

— Գուլյում,— ասաց Բոստոնը կնոջը, արդեն դռան մեջ. նա գնացել էր լույսը վառելու։— Գնամ, համենայն դեպս, վախեցնեմ էդ գազաններին։ Էսպես էլ չի լինի։

— Հիմա ժամը քանի՞սն է։

Բոստոնը նայեց ժամացույցին։

— Երեքից քսան պակաս։

— Տեսնում ես,— վշտացավ Գուլյումկանը։— Իսկ վեցին պիտի վեր կենաս։ Էսպես կլինի՞։ Էդ անիծյալ Աքբարան մեզ կգժվացնի։ Սա ի՞նչ պատիժ էր մեր գլխին։

— Լավ, հանգստացիր։ Հիմի էլ ի՞նչ կարող ենք անել։ Ես իսկույն կվերադառնամ։ Դե լավ, գոնե դու մի վախեցիր։ Իսկական պատիժ էր, աստված վկա։ Ես դրսից դռան փակը կգցեմ։ Հանգիստ մնա։ Պառկի քնի։

Եվ նա անցավ պատուհանների տակով, բարձր թըխկ-թըխկացնելով կիրզայե կոշիկները, որ շտապով քաշել էր բոբիկ ոտքերին։ Բոստոնն ուզում էր վերջապես կռվի բռնվել գայլերի հետ, ու դրա համար դիտավորյալ բարձր ձայն էր տալիս շներին, հայհոյում վերջին խոսքերով։ Նա պատրաստ էր ամեն ինչի, այնքան որ հոգնեցրել էին նրան վշտից գազազած գայլերը։

Ոչնչով օգնել նրանց չէր կարող։ Մնում էր հույս դնել միայն, որ կհաջողվի գայլերին խփել, եթե տեսնի, բարեբախտաբար կիսաավտոմատ հրացան ուներ։

Սակայն գայլերին չհանդիպեց։ Եվ անիծելով ամեն բան աշխարհում, վերադարձավ տուն։ Բայց քնել էլ չկարողացավ։ Երկար պառկած էր մթության մեջ, գլխում անընդհատ պտտվում էին անհանգիստ, տագնապալի մտքեր։

Իսկ մտածելու շատ բան ուներ։ Եվ ամենից ավելի այն, որ տարեցտարի դժվարանում է բարեխիղճ աշխատելը, և որ հիմիկվա մարդիկ, մանավանդ ջահելները, բոլորովին ամոթ չունեն։ Հիմա ոչ ոք խոսքի չի հավատում։ Եվ ամեն մեկը նախ և առաջ իր օգուտին է նայում։ Չէ որ մինչև պատերազմը, երբ Ջուի նշանավոր ջրանցքն էին կառուցում, երկրի բոլոր ծայրերից մարդիկ էին եկել, աշխատում էին անվճար և կամավոր կերպով։ Իսկ հիմա ոչ ոք չի հավատում, ասում են, թե հեքիաթ եք պատմում, ինչի դա խելքի՞ մոտ բան է։ Հիմա ոչ մեկը, պարանն էլ վիզը գցես, հովվություն չի անի։ Եվ բոլորն այդ գիտեն, բայց ձևացնում են, թե իբր ժամանակավոր դժվարություն է։ Իսկ որ խոսում ես այդ մասին, մեղադրում են զրպարտության մեջ։ Իբր, դու մեր կողմից չես խոսում։ Եվ ոչ մեկը չի ուզում լրջորեն մտածել, թե հետո ինչ կլինի։ Միակ բանը, որ հանգստացնում, ուրախացնում էր նրան, այն էր, որ Գուլյումկանը նրան չէր կշտամբում, չէր տրտնջում, որ կլոր տարի նա հովվություն էր անում առանց հանգստյան օրի, առանց արձակուրդի։ Հոտը թողնել հնարավոր չէր, հոտը չես անջատի, անջատոց

քաշելու, կանգնեցնելու բան չի, հոտին պետք է հետևես ամբողջ օրը։ Ուրեմն ստացվում է, որ ինչ էլ անես, մեկ է դործը չի վերջանում։ Եվ ոչ թե նրա համար, որ մարդիկ չլան, այլ որովհետև մարդիկ չեն ուզում աշխատել։ Բայց ինչո՞ւ։ Չէ որ առանց աշխատանքի ապրել չի լինի։ Ախր սա կործանում է։ Միգուցե բանը նրանում է, որ պետք է ուրիշ կերպ ապրես ու աշխատես... Ամենամեծ հարցն այն է, թե բազմացման կետերում որտեղից աշխատող գտնես, որ նոր ծնված գառներին խնամեն։ Այնտեղ էլ ջահելները չեն գնում։ Այնտեղ պետք է ամբողջ օրը հերթապահել։ Ոչ թե որպես պարտականություն, այլ իսկապես խղճմտանքով հետևել ծնին, և դրա համար էլ ջահել տղաներին ուժի գոռով էլ չես կարող այնտեղ տանել։ Ժամանակակից երիտասարդությունը չի ուզում կեղտոտ գործ անել ու ապրել հեռու տեղում։ Եվ վճարում էլ էին այնտեղ քիչ, քաղաքում ֆաբրիկայում կամ շինարարության մեջ ութ ժամյա բանվորական օրվա համար ջահել տղան կամ աղջիկը շատ ավելի կարող էին վաստակել։ «Իսկ ինչպես է, որ մենք ամբողջ կյանքում բանել ենք այնտեղ, որտեղ բանվորական ձեռք է պահանջվել, ոչ թե այնտեղ, ուր շահավետ է։ Իսկ հիմա, երբ ջահելների աշխատելու ժամանակն է եկել, դրանցից օգուտ չկա, ոչ ամոթ ունեն, ոչ պատկառանք»,— նեղանում էին ծերունիները։ Այս անհամաձայնությունը, որ աստիճանաբար հասցրել էր սերունդների իրար չհասկանալու և օտարացման, վաղուց արդեն հուզում էր մարդկանց։ Եվ դարձյալ Բոստոնի հիշողության մեջ արթնացավ այն նույն խոսակցությունը։ Չդիմացավ նա այն ժամանակ։ Եվ զուր։ Դարձյալ նա իր ամբողջ ելույթը նվիրեց այն բանին, որ մարդը պետք է աշխատի այնպես, ինչպես իր համար կաշխատեր։ Ուրիշ ճանապարհ ինքը չի տեսնում, իսկ դրա համար հարկավոր է, որ աշխատողը անձնապես շահագրգռված լինի իր արած գործի համար։ Բոստոնը շատ անգամ արդեն ասել էր, որ վարձատրությունը պետք է կախված լինի աշխատանքի արդյունքից, իսկ գլխավորը հովիվի համար այն է, որ ունենա իր հոտը, որ սիրտը այդ հոտի համար ցավի, որ նրա օգնականներն ու նրանց ընտանիքները հոգ տանեն այդ հոտին, այլապես ոչինչ չի ստացվի...

Ինչպես միշտ, նրան հակահարված տվեց կուսկազմակերպիչ Կոչկորբաևը։ Գազետ-կիշլին, մարդ-լրագիրը, այդ անունն էին դրել Կոչկորբաևին սովխոզում, նստած էր դիրեկտորի սեղանի աջ կողմում, կողքով դեպի Բոստոնը։ Հոնքերը խոժոռ, երևում է իրեն տեղ չէր գտնում, շուռ-շուռ փողկապն ուղղելով, իրեն տեսք տալու համար, Կոչկորբաևը խեթ-խեթ նայում էր Բոստոնին, սովխոզի դիրեկտոր Ջոտբաևը շատ լավ էր պատկերացնում Կոչկորբաևի մտքերի ընթացքը։ Երկար տարիներ համատեղ աշխատանքի ընթացքում նա լավ ուսումնասիրել էր դեմագոգի նրա անխորտակելի, անջնջելի և մեկընդմիշտ սերտած տրամաբանությունը, իբր, տեսեք էլի դուրս եկավ էս Բոստոն Ուրկունչիևը, նոր տեսակի էս կուլակն ու հակահեղափոխականը։ Կյանքն էսքան սրա գլխին տալիս է, սա էլի իրա ասածից ձեռք չի քաշում։ Այ թե հնար լիներ դրան քշելու հեռուները, ոնց որ առաջվա ժամանակներում...

Այդ օրը աշխատանքային խորհրդակցությանը ներկա էր և շրջկոմի նոր հրահանգիչը, արտաքուստ համեստ մի երիտասարդ, որին «Բերիկ» սովխոզում դեռ չէին ճանաչում։ Նա ուշադիր լսում էր ելույթ ունեցողներին ու դրառումներ էր կատարում իր նոթատետրում։ Ջոտբաևը մտածում էր, որ Կոչկորբաևը առիթը բաց չի թողնի շրջկոմի նոր հրահանգիչի մոտ իրեն ցույց տալու։ Եվ չսխալվեց։ Բոստոնի ելույթից հետո Կոչկորբաևը ձայն խնդրեց, իբր ռեպլիկի համար, և խոսեց, պատրաստի գրածը կարդալու նման. նա կարողանում էր խնդիրը ճիշտ լրագրի նման շարադրել, և դա նրա ուժն էր։

— Մինչև երբ, ընկեր Ուրկունչիև,— դիմեց նա Բոստոնին, ինչպես միշտ պաշտոնական «դուք»-ով,— մինչև երբ դուք պետք է մարդկանց շփոթության մեջ գցեք ձեր այդ կասկածելի առաջարկներով։ Սոցիալիստական կոլեկտիվի մեջ արտադրական հարաբերությունների տեսակը վաղուց որոշված է պատմությամբ։ Իսկ դուք ուզում եք, որ չոբանը տիրոջ նման որոշի, թե ում հետ պիտի աշխատի, և ում հետ չպիտի աշխատի, ում ինչքան վճարի։ Սա ի՞նչ բան է։ Ոչ այլ ինչ, եթե ոչ գրոհ պատմության վրա, մեր հեղափոխական նվաճումների վրա, եթե ոչ փորձ տնտեսությունը քաղաքակա-

նութիւնից վեր դասելու։ Դուք ելնում եք սոսկ ձեր հոտի նեղ շահերից։ Ձեզ համար դա է ամենակարևոր հարցը։ Բայց չէ որ հոտի նաև կանգնած է շրջկոմը, մարզը, երկիրը։ Դուք մեզ ինչի եք ուզում հասցնել՝ տնտեսավարութեան սոցիալիստական սկզբունքների այլասերմա՞ն։

Բոստոնը բորբոքված վեր թռավ տեղից։

— Ես ոչ մեկին ոչ մի տեղ չեմ կանչում։ Հոդնել եմ արդեն այս մասին խոսելուց։ Ոչ մեկին ոչ մի տեղ չեմ կանչում, իմ չոբանի գործը չի, թէ ինչ է կատարվում մարզում, երկրում, թեկուզ աշխարհում։ Առանց ինձ էլ խելքները կհասնեն։ Իմ գործը հոտն է։ Եթե կուսկազմակերպիչը չի ուզում իմանալ, թե ես ինչ եմ մտածում, ինչպես պիտի պահեմ իմ հոտը, ինչի՞ է ինձ էս տեսակ խորհրդակցութիւնների կանչում, ինչի է ինձ գործից կտրում։ Դատարկ խոսակցութիւններն իմ բանը չեն։ Դուցե ուրիշների համար դրանք կարևոր են, բայց ես դրանցից բան չեմ հասկանում։ Ընկեր դիրեկտոր, դու ինձ սրանից հետո չկանչես։ Ինձ գործից մի կտրեք։ Էս խորհրդակցութիւնները ինձ պետք չեն։

— Ինչպես կլինի, Բոսկե,— Ջոտբաևն անհանգիստ շարժվեց տեղում։— Դու առաջավոր ես, սովխոզի լավագույն չոբանն ես, փորձված աշխատող, մենք ուզում ենք իմանալ, թե դու ինչ ես մտածում։ Դրա համար ենք քեզ կանչում։

— Դու ինձ զարմացնում ես, դիրեկտոր։— Բոստոնը շատ էր զայրացել։— Եթե ես առաջավոր եմ, քեզնից լավ էլ ով կարող է իմանալ, թե դա ինչ գնով է լինում։ Ուրեմն ինչի՞ ես լռում։ Բավական է բերանս բացեմ, Կոչկորբաևն իսկույն վրա է տալիս, չի թողնում մի խոսք ասեմ, կպչում է ամեն խոսքիցս կարծես դատախազ լինի, իսկ դու, դիրեկտոր, նստում ես ու լռում, իբր հնչ, քեզ չի վերաբերվում։

— Սպասիր, սպասիր,— ընդհատեց նրան Ջոտբաևը։

Դիրեկտորն ակնհայտ շփոթված էր։ Նա շատ դժվար դրութեան մեջ էր ընկել, այս անգամ չէր հաջողվի չեզոքութիւն պահպանել Բոստոնի և Կոչկորբաևի միջև։ Հրահանգիչի ներկայութեամբ դիրեկտորն ստիպված էր որոշակի դիրք գրավել։ Բայց ինչպես չէր ուզում Կոչկորբաևի հետ գլուխ դնել, այդ մարդ-լրագրի, որի դեմագոգիան սպառնալից ուժեր կարող էր գործի դնել. չէ որ Կոչկորբաևը ամենևին միակ

ողակը չէր տիրապետական սկզբունքներով ղեկավարվող շղթայի մեջ։ Եվ այս անգամ էլ Կոչկորբաևը դիտավորյալ սուր բնույթ տվեց քննարկմանը՝ չոբանին մեղադրելով, ոչ ավել, ոչ պակաս,— «մեր հեղափոխական նվաճումների դեմ գրոհի» մեջ, էհ, դրանից հետո ո՞վ կհամարձակվի նրան առարկել։ Սակայն պետք էր դուրս գալ այդ վիճակից։

— Սպասիր, սպասիր, Բոստոն, մի տաքացի,— ասաց դիրեկտորը և վեր կացավ սեղանի մոտից։— Ընկերներ, եկեք հասկանանք,— դիմեց ժողովին Չոտբաևը, տենդագին մտածելով, թե ինչպես հաշտեցնի կողմերին։ Բոստոնն, իհարկե, իրավացի է, բայց Կոչկորբաևի հետ էլ կատակ անել չի լինի։ Ի՞նչ անի։— Ինչի՞ մասին է խոսքը,— ասում էր դիրեկտորը։— Որքան ես հասկանում եմ, Հովիվն ուզում է իր հոտի և հողի տերը լինել, ոչ թե վարձկան աշխատող, և խոսում է նա ոչ թե իր անունից, այլ իր բրիգադի, և չոբանների ընտանիքների անունից, և այս բանը չի կարելի հաշվի չառնել։ Դրա մեջ, կարծում եմ, որոշ ճշմարտություն կա։ Չոբանական բրիգադն ինքը հենց մեր փոքրիկ տնտեսական բջիջն է։ Հենց դրանից էլ պետք է սկսել։ Ինչպես ես հասկանում եմ, Ուրկունչիևը ուզում է ամեն ինչ իր ձեռքը վերցնել՝ և անասուններին, և արոտավայրերը, և կերը, և շենքերը, մի խոսքով, այն ամենն, ինչ պետք է արտադրության համար։ Նա պատրաստվում է կիրառել բրիգադային հաշվարկ, որպեսզի ամեն մեկն իմանա, թե ինչ կարող է վաստակել, եթե աշխատի ինչպես իր համար, առանց ջանք խնայելու։ Ահա ինչպես եմ ես հասկանում Ուրկունչիևի առաջարկը, և մենք պետք է հաշվի առնենք այդ, Ջանաթայ Իշանովիչ,— դիմեց Չոտբաևը կուսկազմակերպիչին։

— Իսկ ես, որպես սովխոզի կուսկազմակերպիչ, որ ղեկավարում ենք ես և դուք, ընկեր Չոտբաև, այսպես եմ հասկանում, որ սոցիալիստական արտադրության մեջ մասնավոր սեփականատիրական հոգեբանության խրախուսելը վայել չէ ոչ մեկին, և հատկապես տնտեսության ղեկավարին,— հաղթական ձայնով կշտամբեց դիրեկտորին Կոչկորբաևը։

— Սակայն հասկացեք, դա առաջարկվում է գործի շահերից ելնելով,— սկսեց արդարանալ դիրեկտորը։— Չէ որ ջահելները հովվական բրիգադներ չեն գնում...

— Ուրեմն մեզ մոտ ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք վատ է տարվում, հարկավոր է ջահելներին հիշեցնել Պավլիկ Մորոզովի և նրա կիրգիզ եղբայրակից Կըշտա-նա Ջակըմովի օրինակը։

— Իսկ այդ արդեն ձեր անելիքն է, ընկեր Կոչկորբաև,— տեղը բերեց դիրեկտորը։— Դուք էլ զբաղվեք։ Հիշեցրեք, ագիտացիա արեք։ Ձեզ ոչ ոք չի խանգարում։

— Եվ կանենք ագիտացիա, զուր եք անհանգստանում,— կովելու պատրաստ պատասխանեց կուսկազմակերպիչը։— Մենք միջոցառումների մի ամբողջ ծրագիր ենք մշակել։ Սակայն շատ կարևոր է ժամանակին կասեցնել մասնավոր սեփականատիրական ձգտումները, որքան էլ լավ քողարկված լինեն։ Մենք թույլ չենք տա քանդել սոցիալիզմի հիմքերը։

Ամենայն լրջությամբ ընթացող այս բանավեճը լսելով, Բոստոն Ուրկունչիևը հուսահատվեց, վախից ակամա կոկորդը սեղմվեց։ Չէ որ ինքն ասաց միայն, որ ուզում է վերջապես իր հողի վրա աշխատել իր հասկացածով, ոչ թե ուրիշի թելադրանքով։

— Ոչ մեկին ոչ մի դիջում, ոչ մի ներողամտություն,— շարունակեց Կոչկորբաևը։— Արտադրության սոցիալիստական ձևերը պարտադիր են բոլորի համար։ Իմ խոսքերն ուղղված են նախ և առաջ ընկեր Ուրկունչիևին։ Նա շարունակ իր համար բացառիկ պայմաններ է պահանջում։

— Ոչ միայն ինձ համար,— ընդհատեց նրան Բոստոնը։— Այդ պայմանները պետք են բոլորին, այն ժամանակ մեր գործը լավ կգնա։

— Կասկածում եմ։ Եվ, ընդհանրապես, սա ինչ ձև է՝ սեփական պայմաններ թելադրել։ Այս արեք, այն արեք։ Այնքանն էլ բավական է, որ դուք, ընկեր Ուրկունչիև, ձեր հոտի համար անհատական արոտավայր ձեռք բերելու հետևից ընկած մարդ կործանեցիք Ալա-Մոնգոլ լեռնանցքում։ Թե՞ այդքանը քիչ է ձեզ համար։

— Շարունակի, շարունակի,— ջղայնացած ձեռքը թափ տվեց Բոստոնը։ Անտանելի վիրավորանք ու ցավ զգալով, որ էրնազարի մահվան մասին խոսում էին այսպես։

— Ի՞նչ շարունակի, շարունակի։ Ինչ է, ճիշտ չե՞մ ասում,— խոցեց նրան Կոչկորբաևը։

— Այո, ճիշտ չես ասում։

— Ինչպես ճիշտ չի, երբ էրնազարի դիակը մինչև հիմա լեռնանցքի սառույցների մեջ է։ Ու գուցե դեռ հազար տարի այնտեղ մնա։

Բոստոնը լռեց։ Նրա համար չափից ավելի տհաճ էր, որ խորհրդակցությանը խոսք բացեցին այդ մասին։ Սակայն Կոչկորբաևը չէր հանգստանում։

— Ինչո՞ւ եք լռում, ընկեր Ուրկունչիև,— կրակի վրա յուղ լցրեց նա։— Ինչ է, դուք չէի՞ք գնացել ձեզ համար նոր, անհատական արտոնավայր գտնելու։

— Այո, գնացել էի ինձ համար,— խիստ պատասխանեց Բոստոնը։— Եվ ոչ միայն ինձ համար, այլև բոլորի համար, ու նաև քեզ համար, Կոչկորբաև։ Որովհետև ես եմ քեզ ուտացնում ու խմացնում, ոչ թե դու ինձ։ Եվ հիմա դու թքում ես այն ջրհորի մեջ, որտեղից խմում ես։

— Ի՞նչ ես ուզում ասել,— վրդովվեց Կոչկորբաևը, արյունը երեսին տվեց։— Ես ամեն ինչով պարտական եմ կուսակցությանը։

— Իսկ կուսակցությունը, կարծում ես, որտեղի՞ց է վերցնում, ինչո՞վ է քեզ կերակրում,— կոպտեց Բոստոնը։— Ջլինի՞ երկնքից։

— Սա ինչ բան է, սա ինչ անպատասխանատու խոսքեր են,—վեր թռավ Կոչկորբաևը, դողացող ձեռքերով փողկապն ուղղելով։

Մեծ կռիվ էր սկսվում։ Եվ Կոչկորբաևը, և Բոստոնը կանգնել էին՝ մեկը սեղանի, մյուսը պատի մոտ, կանգնել էին մահվան դատապարտվածի պես, թվում էր ևս մի քիչ, ու նրանցից մեկնումեկը գետին կտապալվի։ Վիճակը մի փոքր մեղմացրեց շրջկոմի երիտասարդ հրահանգիչը։

— Հանգստացեք, ընկերներ,— անսպասելի խոսեց նա իր անկյունից, ուր նստած գրառումներ էր կատարում նոթատետրում։— Ինձ թվում է, Հովիվ Ուրկունչիևը սկզբունքորեն իրավացի է։ Աշխատավորը, ինչպես սիրում ենք ասել, նյութական բարիքներ ստեղծողը, իրավունք ունի իր խոսքն ասելու։ Միայն, պե՞տք է արդյոք այդքան չափազանցել։

— Դուք նրան չեք ճանաչում, ընկեր Մոմբետով,— շտապ միջամտեց Կոչկորբաևը։— Ուրկունչիևի պահանջներն ընդ-

հանրապես չափ ու սահման չունեն։ Ահա, օրինակի համար, վերջերս մի չորան, Նոյգուտովը, այո, հենց Նոյգուտով բազարբայը, լեռներում գայլի որջ է գտել։ Դեհ, որջից հանել է բոլոր ձագերին, այսպես ասած, էքսպրոպրիացիայի է ենթարկել, այսինքն չորս գայլաձագին էլ վերցրել է, որպեսզի ոհմակն արմատապես ոչնչացնի։ Վարվել է այնպես, ինչպես և պետք է վարվեր։ Եվ ի՞նչ եք կարծում։ Այս Ուրկունչիևն սկսել է ուղղակի հալածել Նոյգուտովին։ Սկզբում ուղել է կաշառել, իսկ երբ այդ չի հաջողվել, քանի որ Նոյգուտովը սկզբունքային մարդ է, Ուրկունչիևն սկսել է սպառնալ, սպահանջել է, որ Նոյգուտովը ձագերին տանի տեղը դնի, սարդ բան է, նրա համար, որ այդ գիշատիչները շրջունակեն բազմանալ։ Ախր սա ի՞նչ բան է։ Սա ինչպե՞ս հասկանանս։ Միգուցե, ընկեր Ուրկունչիև, այս բոլորից բացի, դուք ուզում եք և ձեր սեփական գայլե՞րն ունենալ։ Սեփական, այսպես ասած, անհատական։ Միգուցե սովխոզը պարտավոր է ձեզ ապահովել նաև գայլերո՞վ։ Մ՞յդ եք ուզում։ Թե չէ ձեզ ինչպե՞ս հասկանանք՝ թող գայլերը բազմանան, հոշոտեն մեր հոտերը, ապրեն համաժողովրդական սեփականության հաշվին։

Բոստոնն այդ ընթացքում հասցրել էր արդեն իրեն տիրապետել և ասաց բավական հանգիստ.

— Գայլերի մասին ամեն ինչ ճիշտ էր, բայց ախր դրժբախտությունն այն է, որ գայլերը չեն հասկանում, թե ոտնձգություն են անում համաժողովրդական սեփականության վրա։

Ներկաներն ակամա ծիծաղեցին, իսկ Բոստոնը օգտվեց այդ դադարից և շարունակեց.

— Էստեղ գայլերի մասին չէ, որ պիտի խոսենք։ Բայց որ դրա մասին խոսակցություն սկսվեց, ես էլ իմ խոսքը կասեմ։ Ամեն գործ էլ խելքով պիտի արվի, դրա համար էլ մենք մտածող արարածներ ենք ծնվել։ Իսկ մեր մեջ կան էնպիսիները, որ խելքը պակաս է, իսկ պարծենկոտությունը չափ չունի։ Ահա օրինակ հենց գայլաձագերի այս դեպքը։ Ինչպես արդեն ասվեց, Բազարբայը հանել է, ավելի պարզ ասած, պարզապես որջից փախցրել, գողացել է գայլաձագերին, և ի՞նչ աղմուկ են բարձրացրել դրա շուրջը, քիչ է

մնում հերոս սարքեն։ Իսկ էս հերոսը չի մտածել, որ նախ հարկավոր է հետևել ծնող-գայլերին ու սպանել նրանց, կատաղի գայլերին, ու հետո մտածել, թե ինչ անի նրանց ձագերին։ Իսկ նա շտապել է գայլաձագերին ծախել ու փողը խմելու տալ։ Ինչի ես խնդրեցի Բազարբային, որ գայլաձագերին ինձ տա կամ վաճառի՝ որպեսզի ձագերով խաբեմ ու գարանը գցեմ մայր ու հայր գայլերին, ոչ թե ազատության մեջ թողնեմ որջն ավերելուց ու ձագերին տանելուց զազազած գայլերին։ Ախր ոնց կարելի է չհասկանալ, որ զազազած մի գայլը տասը գայլից վտանգավոր է։ Նա չի հանգստանա, մինչև վրեժը չլուծի։ Բոլոր չոբաննները գիտեն, թե ինչ ավերածություններ է անում հիմա շրջանում այդ գայլազույգը, որոնց ձագերին տարել են, Աքբարան ու Թաշչայնարը՝ դրանց էդպես անուններ են դրել։ Եվ դրանց հիմի ոչ մի կերպ հանգստացնել չի լինի, նրանք կարող են և մարդու վրա հարձակվել, դրանցից սպասելի է։ Որոշ վատ մարդկանց ասում են պրովոկատորներ, ես դա լրագրերում ու գրքերում եմ կարդացել։ Ահա Բազարբայը հենց գայլի պրովոկատոր է, նա է գայլերին հրահրել դաժանության։ Ես նրան արդեն ասել եմ ու հիմա էլ կասեմ երեսին. նա իսկական վախկոտ պրովոկատորի արարք է կատարել։ Եվ քեզ էլ, կուսակազմակերպիչ, կասեմ երեսիդ. չեմ հասկանում, թե դու ինչ մարդ ես։ Քանի տարի է մեր սովխոզում ես, բայց մինչև օրս հենց մենակ թերթեր ես կարդում ու վախեցնում ինձ նման հովիվներին, թե իբր մենք հեղափոխության դեմ ենք և խորհրդային իշխանության դեմ, բայց ինքդ տնտեսությունից ոչինչ չես հասկանում ու ոչինչ չգիտես, թե չէ չէիր կարող մարդուն մեղադրել իբր ուզում է գայլեր բազմացնել։ Թողնենք դրանց, էդ գայլերին, քո էդ մեղադրանքից եփած հավի ծիծաղը կգա։ Բայց քո մյուս մեղադրանքն, ընկեր Կոչկորբաև, ես անպատասխան չեմ կարող թողնել։ Այո, էրնազարը զոհվեց լեռնանցքում, բայց ես ու նա ինչո՞ւ լեռնանցք գնացինք։ Լավ կյանքից չէր։ Մենք այնտեղ ի՞նչ էինք որոնում։ Իսկ դու մտածե՞լ ես, կուսակազմակերպիչ, թե ինչը մեզ ստիպեց այնտեղ գնալ, մտածե՞լ ես, որ եթե մեզ մոտ արոտավայրերի այսքան մեծ պակասություն չլիներ, մենք մեզ վտանգի չէինք ենթարկի։ Իսկ

այդ կարիքն օրեցօր ավելի է սաստկանում։ Ահա դիրեկտորն էլ է էստեղ նստած, թող նա ասի, թե երբ սկսեց իր դիրեկտորությունն, այստեղ ինչ խոտ էր, ինչ արոտավայրեր էին, ինչ հողեր էին։ Իսկ ի՞նչ է հիմա։ Փոշի ու չոր գետին չորս կողմը, ամեն խոտը հաշվի մեջ է, իսկ ամբողջը նրա համար, որ տասն անգամ ավելի ոչխար են արածայնում, քան կարելի է այսքան տարածության վրա, և ոչխարների կճղակները կործանում են հողը։ Այ դրա համար էր, որ ես ու էրնազարը որոշեցինք գնալ Կիչիբեյ։ Մենք ուզում էինք լավ բան անել, բայց դժբախտություն եկավ գլխներիս։ Մեր արշավը վատ վերջացավ։ Եվ դա ինձ ստիպեց նպատակիցս ետ կանգնել, ու այլևս չխոսել, դժբախտությունն ինձ ընկճեց, ուրիշ բան աչքիս չէր գալիս։ Իսկ թե ուրիշ կերպ ստացվեր, ես այն տարի Մոսկվա կգնայի ցուցահանդեսի, կգնայի մեր ամենագլխավոր ղեկավարների մոտ ու կպատմեի քո մասին, Կոչկորբաև։ Դու պարծենում ես նրանով, որ հենց մենակ կուսակցության մասին ես մտածում, բայց մի տեսնենք քեզ նման մարդիկ պե՞տք են կուսակցությանը, քեզ նմաններդը, որ իրենք ոչինչ չեն անում, ուրիշների ձեռներն էլ կապում են։

— Դուք չափը կորցրիք,— չդիմացավ Կոչկորբաևը։— Սա զրպարտություն է։ Եվ դուք, Ուրկունչիև, խստորեն պատասխան կտաք դրա համար կուսակցական կարգով։

— Ես ինքս էլ ուզում եմ ամեն ինչի համար պատասխան տալ կուսակցական ժողովին։ Եվ եթե ես իսկապես այնպես չեմ վարվում, այնպես չեմ մտածում, ինձ դուրս վռնդեք, ուրեմն ես արժանի չեմ կուսակցության մեջ լինելու, և պետք չէ ինձ խնայել։ Բայց Կոչկորբաև, դու էլ մտածի այդ մասին։

— Ես մտածելու բան չունեմ, ընկեր Ուրկունչիև։ Իմ խիղճը մաքուր է։ Ես միշտ կուսակցության հետ եմ։

Բոստոնը շունչը տեղը բերեց, ասես վազելով սար էր բարձրացել, և նայելով շրջկոմի հրահանգիչին, ասաց.

— Իսկ քեզ, նոր ընկեր հրահանգիչ, շատ եմ խնդրում զեկուցել շրջկոմին։ Թող մեր հարցը քննեն կուսակցական ժողովում։ Այսպես ես էլ չեմ կարող ապրել։

Շուտով Բոստոն Ուրկունչիևը նկատեց, որ Կոչկորբաևի

հետ իր ընդհարման շուրջ ինչ-որ իրադարձություններ են հասունանում։ Հենց այդ օրը նա իր գործերով գնացել էր Լճափ։ Մերձիսիկկուլյան հողերում ահա ուր որ է պետք է այգիները ծաղկեին։ Գարնան վերջին օրերն էին, իսկ Բոստոնը շարունակ ժամանակ չէր գտնում իր այգում և էրնազարի նախկին հողում խնձորենիները սրսկելու։ Բոստոնն ու Գուլյումկանը հիմա երկու տուն և երկու այգի ունեին, ու երկուսն էլ խնամք էին պահանջում։ Իսկ Բոստոնը շարունակ չէր հասցնում, որովհետև չոբանի կյանքն անցնում է լեռներում, ու նա միշտ ժամանակ չի ունենում իր տնտեսության անհրաժեշտ գործերն անելու։ Էսօր, էգուց գցելով, մեկ էլ տեսար՝ ժամանակն անցել է, բոլոր ժամկետները վերջացել են։ Բայց ինչ էլ որ լիներ, այգին պետք էր սրբսկել, թե չէ վնասատուները բազմանում են զարմանալի արագությամբ, պտղագոյացումը կփչացնեն և բերքը կոչընչացնեն։ Այս անգամ Գուլյումկանն իրեն չզսպեց և խիստ բարկացավ Բոստոնի վրա, որ նա շարունակ ձգձգում է, որ պիտի շուտ գնար ու հարևաններից մեկնումեկի հետ պայմանավորվեր, թե ինքը չի հասցնում։ Թող հարևանները վճարովի անեին այդ գործը։

— Դու տան համար ի՞նչ օգնություն ես,— չդայլացած ասաց Գուլյումկանը։— Գիշեր-ցերեկ հոտի հետ ես, մեկ էլ ժողովների ես գնում։ Եթե ինքդ չես կարող այգում տիրություն անել, մի օր մենա տանը Քենջեշի հետ,— էս չար երեխին հա աչքդ վրան պիտի պահես,— ես կիջնեմ Լճափ, ամեն ինչ կանեմ քո փոխարեն։

Իրավացի էր Գուլյումկանը, ստիպված էր լուռ լսել նրան։ Եվ այդպես առավոտ վաղ դուրս եկավ Բոստոնը, որ գնա Լճափ, իր այգով զբաղվի։ Գնում էր Դոնկուլյուկով։ Ինչպես ասում են հնուց, գարնանը խոտն էլ է ուժ հավաքում, ձին էլ։ Եվ հետո, Դոնկուլյուկն էլ իր ամենալավ ժամանակում էր. կրակոտ աչքերը փայլեցնելով, բաշը թափ տալով, նա ուժերի հորդումից շարունակ ուզում էր սլանալ։ Սակայն Բոստոնն այն տրամադրության մեջ չէր, որ խելահեղ սլանար։ Նա զսպում էր ձիր ձիուն, ուզում էր ճամփին հանգիստ մտածել այս ու այն մասին։ Անցած գիշեր նա վատ էր քնել։ Երկար շուռումուռ էր գալիս, չէր կարողանում մո-

ռանալ, թե ինչպես կուսակռմակերպիչն իրեն մեղադրեց էրնաղարի մահվան համար՝ ժողովից տուն վերադառնալով, կարճ պատմեց կնոջը տեղի ունեցածը, բայց այդ մեղադրանքի մասին չասաց։ Չէր ուզում Գուլյումկանին մի ավելորդ անգամ հիշեցնել նախկին ամուսնու մասին, մեև շատ տարիներ էին անցել նրա կորուստից հետո, որովհետև այդ դեպքում անխուսափելի կլիներ ծանր խոսակցությունը, որ վատ էր ազդելու և իր, և կնոջ վրա, չէ որ չթաղված էրնաղարը հավերժորեն սառցակալած ընկած է Ալա-Մոնգյու լեռնանցքի գիշերվա պես մութ, զարհուրելի անդունդի հատակին։ Ուրեմն, ավելի լավ է լռել այդ մեղադրանքի մասին։ Իսկ հենց Բոստոնի քունն սկսեց տանել, նորից հայտնվեցին գայլերը։ Եվ նորից մեծ փարախի եռևի բլրակում երկարաձիգ ոռնաց Աքբարան, ողբալով իր առևանգված ձագերի համար։ Եվ ցածր, բայց որովայնաձայն ոռնում էր նրա եռևից Թաշչայնարը։ Եվ եթե առաջ գայլերի ոռնոցը լսելով Բոստոնը խղճահարություն էր զգում նրանց հանդեպ, կարեկցում էր նրանց դժբախտությանը, հիմա նրա մեջ կատաղություն առաջացավ, ցանկություն սպանելու վերջապես այդ համառ գաղաններին, միայն թե այլևս չլսի նրանց ոռնոցը, որ ոնց որ անեծք լինի իր գլխին, երբ ինքն ի՞նչ մեղք ունի։ Անցյալ գիշեր նա վճռեց, որ անպայման պետք է ոչնչացնի գայլերին, ու նույնիսկ ծրագրեց, թե ինչպես է անելու։ Բացի այդ, այն օրը, երբ նա խորհրդակցության ժամանակ կռվի էր բռնվել Կոչկորբաևի հետ, Աքբարան ու Թաշչայնարը երեք ոչխար էին սպանել իր հոտից։ Հոտաղը պատմեց, որ գայլերը մոտեցել էին հոտին, ու ինքն ինչքան բղավել էր, փայտը թափահարել, բոլորովին չէին վախեցել, երեք ոչխարի պատառոտել էին ու փախել։ Այս դեպքը Բոստոնին համբերությունից հանեց։ Եթե այսպես շարունակվի, մտածեց նա, մեզ մնում է միայն այստեղից հեռանալ, խայտառակ կերպով փախչել գայլերից։ Աքբարան ու Թաշչայնարը չէին հասկանում, որ իրենց անվերջ ոռնոցով մահվան դատավճիռ են ստորագրում իրենց համար։ Հիմա Բոստոնը գիտեր որոշակի, թե ինչ պիտի անի և պատրաստ էր անմիջապես իրականացնելու իր մտադրությունը, եթե ստիպված չլիներ հաջորդ առավոտ տնտեսական գործերով լճափ

գնալու։ Բայց նա այսպես որոշեց. նախ, որպեսզի կինը չհանդիմանի, կարգի բերել այգին, ջնտո գայլերի վերջը տալ։

Ահա թե ինչ էր մտածում ճանապարհին Բոստոնը...

Խնձորենիների սրսկումն ու գարնանային բուկլիցը նա մի օրում վերջացրեց։ Հաջողվեց գյուղում մի ճարպիկ տղա գտնել, որը վճարովի այդ գործն արագ արեց։ Բոստոնը նրան մի գառ խոստացավ իր սև ոչխարներից։

Գործերն ավարտելով, Բոստոնը վճռեց նոր խաղալիք գնել Քենջեշի համար։ Ուզում էր որդուն ուրախացնել։ Էնպես անուշ տղա էր տանը վազվզում, մի ամիս ու մի քանի օրից նրա երկու տարին կլրանար։ Զվարճալի էր տղան իր արարքներով, ուրախացնում էր ծերացող Բոստոնին։ Տղայի արտասանած ամեն մի նոր բառը հրճվանք էր պատճառում հորը։ Նրա միջոցով էր Բոստոնը հասկանում կյանքի խոր, թաքուն իմաստը, որ մանկան և նրա մոր հետ իր կապվածության մեջ էր։ Դա վերջին և բարձրագույն կետն էր Բոստոնին նախասահմանված ճակատագրի. նա ուզում էր սիրել կնոջը և մանկանը, և ավելին ոչինչ չէր պահանջում, չէր ուզում կյանքից, քանզի միթե հենց այդ չէ մեզ շնորհված մեծագույն բարիքը։ Նա այդ մասին երբեք չէր խոսում, բայց իր մտքում գիտեր, որ այդպես է։ Եվ հավատում էր, որ կինը հոգու խորքում նույն զգացմունքն ունի։

Բոստոնը «Մադանիյատ» խանութի մոտ ձիուց իջավ, ներս մտավ և լարովի գորտ գնեց, դուրս պրծած աչքերով, ծիծաղելի՝ այ թե պատիկը կուրախանա։ Փողոց դուրս գալով, պատրաստվում էր ձի նստել, երբ հանկարծ զգաց, որ քաղցած է, առավոտից ոչինչ չի կերել։ Ճաշարանը խանութի հենց կողքին էր, և նա, հակառակի նման, վճռեց մտնել ճաշարան։ Հազիվ էր Բոստոնը ներս մտել կիսամութ սրահ, էժանագին կերակուրների հոտերով լցված, որով սնվում էին այստեղով անցնող վարորդները, և նստել մուտքից ոչ հեռու մի սեղանի մոտ, երբ անմիջապես հետից լսեց Բաղարբաչի ձայնը։ Բոստոնը չշրջվեց, առանց այդ էլ հասկացավ, որ նա այստեղ խմում է իր ընկեր տղերքի հետ։ «Օրը ցերեկով նստած խմում է էս ձրիակերների հետ ու հեչ պետքն էլ չի, մարդը ոչ ամոթ ունի, ոչ պատկառանք»,— տհաճությամբ

մտածեց Բոստոնը։ Ուզեց վեր կենալ գնալ դրանցից հեռու, բայց հետո մտածեց. ինչո՞ւ, ինչի՞ համար ճաշը չկերած թողնի գնա։ Պատվիրեց բորշչ, կոտլետ, իսկ այդ միջոցին երևի արդեն Բազարբային ասացին, որ անկյունում նստած է Բոստոնը։ Եվ անմիջապես հետևում ձայները թշնամական ցածրացան, իսկ հետո նորից աղմկեցին։ Ու շուտով Բոստոնի մոտ ուղարկվեց Բազարբայի ընկերներից մեկը, ոմն Կոր Սամատը, ծուռ Սամատը, Հայտնի բամբասկոտ, գեխ ու անբան մի մարդ, որի մի աչքը դեռ չահել ժամանակ կովի մեջ խփել հանել էին։

— Սալամ, Բոստոն, սալամ,— բազմանշանակալից քմծիծաղով Սամատը ձեռքը մեկնեց Բոստոնին, և, ինչ արած, նա ստիպված էր սեղմել։— Ինչի՞ ես էստեղ մենակ նստել,— դիմեց նա Բոստոնին։— Իսկ մենք էնտեղ նստած ենք Բազարբայի հետ։ Վազուց չենք հանդիպել, որոշեցինք հավաքվել։ Գնանք մեզ մոտ, ինքը Բազարբայն է կանչում։

— Ասա, որ ժամանակ չունեմ,— պատասխանեց Բոստոնը, որքան կարելի է զուսպ։— Ես հիմա վերջացնում եմ ու անմիջապես լեռներ եմ գնալու։

— Վահ, կհասցնես, ոչինչ, լեռները չեն փախչի։

— Ոչ, շնորհակալ եմ։ Գործ ունեմ։

— Դու գիտես, բայց զուր ես էդպես, զուր,— ասաց Կոր Սամատը հեռանալով։

Նրանից հետո եկավ Բազարբայն ինքը, արդեն զգալի համած, իսկ Բազարբայի հետևից շարվեցին մյուսները։

— Լսի, դու ինչի՞ ես մեզնից երես թեքում։ Քեզ մարդավարի կանչում են, իսկ դո՞ւ։ Ինչ է, քեզ մյուսներից լա՞վն ես կարծում,— մոտենալով սկսեց կովիլ Բազարբայը։

— Արդեն ասացի, ժամանակ չունեմ,— հանգիստ պատասխանեց Բոստոնը և ցուցադրաբար սկսեց ափսեից ուտել բորշչը, որը ուրիշ դեպքում մի գդալ բերանը տանելուց հետո այլևս ոչ մի պայմանով բերան չէր դնի։

— Ես քեզ հետ գործ ունեմ,— ասաց Բազարբայն ու անպատկառորեն նստեց Բոստոնի դիմաց։

Մյուսները կանգնած սպասում էին հետաքրքիր տեսարանի։

— Ես ու դու ի՞նչ գործ կարող ենք ունենալ,— պատասխանեց Բոստոնը։

— Արժի խոսել թեկուզ էն գայլածագերի մասին, Բոստոն։— Բազարբայն մռայլվեց ու գլուխն օրորեց։

— Մենք արդեն խոսել ենք նրանց մասին, արժի՞ նորից խոսել։

— Իմ կարծիքով, արժի,

— Իսկ իմ կարծիքով, չարժի։ Ինձ մի խանգարի։ Հիմա ես կուտեմ ու գնալու եմ էստեղից։

— Ո՞ւր ես շտապում, շուն,— Բազարբայը կորուկ վեր թռավ տեղից ու կռանալով Բոստոնին մոտեցրեց չարությունից ծռմռված դեմքը։— Ո՞ւր ես շտապում, սրիկա։ Մենք գայլերի մասին դեռ չենք խոսել։ Դու ինձ մարդկանց մոտ դիրեկտորի սենյակում պրովոկատոր ես ասել, ասել ես, որ իմ պատճառով են գայլերը կատաղել։ Կարծում ես, ես չգիտե՞մ պրովոկատորն ինչ է։ Կարծում ես ես ֆաշիստ եմ ու դո՞ւ ես մենակ մեզ մոտ ազնիվ։

Բոստոնը նույնպես տեղից վեր թռավ։ Հիմա նրանք կանգնել էին դեմ հանդիման։

— Լեզուդ քեզ քաշի,— Բազարբայի բերանը փակեց Բոստոնը։— Ես քեզ ֆաշիստ չեմ ասել, գլխի չընկա, թե չէ արժեր։ Իսկ որ դու պրովոկատոր ես և անխելք չարագործ, դա ճիշտ է։ Ես քեզ դա առաջ էլ եմ ասել, ու հիմա էլ եմ ասում։ Բայց լավ կանես գնաս տեղդ նստես ու ինձ մոտ չգաս։

— Դու մի կարգադրի, թե ով որտեղ գնա ու ինչ անի,— իսկապես կատաղից Բազարբայը։— Դու իմ գլխի տերը չես։ Թքել եմ ես քեզ վրա։ Թող, քո ասածի պես, ես պրովոկատոր լինեմ, բա դո՞ւ ով ես, դու ինքդ։ Կարծում ես, մարդիկ չգիտեն քո ով լինելը։ Կարծում ես էրնազարի գլուխը կերար ու էդպես պրծավ-գնա՞ց։ Ախր դու, սրիկա, կապվել էիր նրա կնկա հետ, դեռ էն ժամանակից, որ էրնազարը կենդանի էր, իսկ քո պառավը պիտի մեռներ։ Հենց էն ժամանակ էլ որոշեցիր էրնազարին անդունդը գլորել լեռնանցքում, իսկ ինքդ ամուսնանալ էդ քածի, Դուլյումկանի հետ։ Դե, կարող ես, ապուշուցի, որ էդպես չի։ Էդ ո՞նց պատահեց, որ դու չընկար անդունդ ու էրնազարն ընկավ։ Բա դուք մի ճամփով չէի՞ք գնում։ Կարծում ես ոչ ոք ոչինչ չի՞ հասկանում։

Բայց նա մեռավ, իսկ դու կենդանի մնացիր։ Էլ ո՞վ եք դուք էսքանից հետո, դու ու քո էդ քած Դուլյումկանը։ Էրնաղարը լեռնանցքում խրվել սառել է սառույցների մեջ, մնացել շան նման առանց գերեզմանի, իսկ դու, սրիկա, ճմլում ես էդ անամոթ կնկան, ծախու քածին ու ապրում ես քեֆիդ ուզածի պես։ Հլա դեռ կուսակցական ես։ Ախր քո վզին տալով պիտի վռնդել կուսակցությունից։ Մի առաջավորիս տես, ստախանովական է մեր գլխին։ Քեզ դատի պետք է տալ։

Բոստոնն իրեն հազիվ զսպեց, որ բռունցքներով չհարձակվի Բազարբայի վրա, նրա գարշելի մռութը չջարդի։ Սա բացահայտորեն նրան կովի մեջ էր ուզում քաշել, խայտառակության, դաժան գոռեմարտի։ Սակայն նա իր վրա ուժ գործադրից, ծնոտները սեղմեց և ասաց չարությունից խեղդվող Բազարբային։

— Ես քեզ հետ խոսելու բան չունեմ։ Քո խոսքերն ինձ համար ոչ մի նշանակություն չունեն։ Ու քեզ հավասարվողը չեմ։ Ինչ ուզում ես խոսի իմ մասին, ինչ ուզում ես, ոնց ուզում ես մտածի ու ասա։ Իսկ հիմի ճամփից հեռու քաշվի։ Էյ տղա,— ձայն տվեց նա մատուցողին,— ստացի ճաշի համար։— Մի հինգանոց տղայի դրպանը դրեց ու դուրս եկավ։

Բազարբայը քաշեց նրա թևքից.

— Հլա մի սպասի։ Մի վռազի քածիդ մոտ։ Միգուցե նա մի չոբանի հետ քեֆ քաշելիս լինի, դու կգնաս կխանգարես։

Բոստոնը կողքի սեղանից վերցրեց շամպայնի դատարկ շիշը։

— Ձևդ քաշի,— կամաց ֆշշացրեց ատամների արանքից, աչքերը Բազարբայից չկտրելով, որն իսկույն գույնը գցել էր։— Ջստիպես կրկնեմ, ձևդ քաշի։ Լսո՞ւմ ես,— ասաց նա ծանր մուգ շիշը թափահարելով։

Այդպես էլ փողոց դուրս եկավ Բոստոնը, շիշը ձեռքի մեջ սինդ սեղմած։ Թամբին թռնելով միայն սթափվեց, շիշը նետեց առուն, բայց թողեց Դոնկուլյուկին ու սլացավ ամբողջ թափով։ Վաղուց նա չէր սլացել այսպիսի կատաղի արագությամբ, այդ զարհուրելի արագությունը օգնեց նրան ուշքի դալ, և զգաստանալով, նա սարսափեց, չէ որ մի ակնթարթից էլ քիչ էր մնում, որ մարդասպան դառնար, փառք աստծուն, փրկեց, թե չէ մի հարվածով այդ ատելի Բազար-

բայի գանգը կփշրիր։ Նյութի տրակտորով եկած մարդիկ մնացել էին զարմացած, աչքներին չէին հավատում, երկար նայում էին նրա հետևից. էս ինչ պատահեց Բոստոնին, այդքան լուրջ մարդ է, բայց ձին բաց է թողել թեթևսոլիկ ջահել տղայի նման։ Բոստոնը երկար չէր կարողանում շունչը տեղը բերել. վերջնականապես հանգստացավ, երբ սառը ջուր խմեց աղբյուրի մոտ։ Այն ժամանակ նա ինքն իրեն հավաքեց, նստեց թամբին և այլևս չէր ուզում սլանալ Դոնկուլյուկին։ Գնում էր քայլքով և ուրախանում այն մտքից, որ խուսափեց մարդասպանությունից։

Սակայն ճանապարհին, հիշելով, թե ինչպես եղավ այդ ամենը, նորից մոայլվեց, խոժոռվեց։ Ու մանավանդ շատ փչացավ Բոստոնի տրամադրությունը, երբ հանկարծ հիշեց, որ ճաշարանի լուսամուտագոգին մոռացել էր Քենջեշի համար գնած այն փոքրիկ գորտը, այնքան զվարճալի խաղալիքը՝ դուրս պրծած աչքերով, մեծաբերան լարովի փոքրիկ գորտը։ Իհարկե դա շատ մի թանկ գնում չէր, կարող էր ուրիշ անգամ նորից տղայի համար խաղալիք գնել հենց այդ նույն շրջկոոպի «Մադանիյատ» խանութում, բայց չգիտես ինչու մտածեց, վատ նշան է։ Չէր կարելի, չէր կարելի տղայի համար գնած իրը մոռանալ։ Իսկ նա մոռացավ...

Սեփական անհավասարությունը զայրացնում էր նրան, մեջը ցանկություն առաջացնում ինչ-որ կերպ դիմադրելու դեպքերի անցանկալի ընթացքին։ Երբ մտածում էր, թե ինչպես պիտի գայլերին դարան գցի ու սպանի անծիլալ գազաններին, խեղդվում էր զայրույթից։

Սա ինչ սատանի խաղ է, մտածում էր նա, չէ որ ճաշարանում այսօրվա ընդհարումը Բազարբայի հետ, որ քիչ էր մնում մարդասպանությամբ վերջանար, նույնպես այդ դայլերի պատճառով վեճից սկսվեց...

Բոստոնն իր մտադրությունը վճռել էր իրականացնել հաջորդ օրը։ Դիշերվա ընթացքում մտածել, նախատեսել էր այդ գործողության բոլոր մանրամասները, իրենց համատեղ կյանքի ընթացքում թերևս առաջին անգամ կնոջից թաքցրել էր այդ իր համար կարևոր մտադրությունը։ Չէր ուզում Բոստոնը խոսք բացել գայլերի ու գայլաձագերի մասին, որ պատճառ դարձան Բազարբայի հետ այդ կռվի, չէր ուզում

ասել որևէ բան, որ կարող էր հիշեցնել Էրնազարի մահը լեռնանցքում։ Ուստի տանը նա ավելի շատ լուռ էր, խաղում էր տղայի հետ, կարճ պատասխանում Գուլյումկանի հարցերին։ Գիտեր, որ այդ լռությունը անհանգստացնում է կնոջը, տարակուսանքի մեջ է գցելու, սակայն այլ կերպ իրեն չէր կարող պահել։ Նա շատ լավ հասկանում էր, որ Բազարբայի հետ իր ընդհարումը ու իրենց հասցեին ասված նրա կեղտոտ հայհոյանքները վաղ թե ուշ հայտնի կդառնան կնոջը։ Սակայն առայժմ լռում էր, չէր ուզում կրկնել այն, ինչ ասել էր իրենց մասին այդ նողկալի Բազարբայը, չափազանց զզվելի, գարշելի էր այդ ամենը։

Մտածում էր նաև, թե որքան տարօրինակ, ծանր ու բարդ ստացվեց իր ու Գուլյումկանի կյանքը։ Որքան թաքցված անբարյացակամություն ու բացահայտ թշնամանք էին տեսնում նրանք մարդկանց կողմից այն օրից ի վեր, ինչ ամուսիններ դարձան, ինչ զրպարտություն ասես չէին տարածում նրանց մասին։ Եվ, սակայն, Բոստոնը չէր զղջում, որ կյանքը կապել էր Էրնազարի այրու հետ։ Նրա համար հիմա դժվար էր պատկերացնել, թե ինչպես կարող էր ապրել առանց նրա, նա պահանջ ուներ մշտապես կողքին զգալու կնոջ ներկայությունը... Ոչ, դա բոլորովին այլ կյանք կլիներ։ Իսկ իր կյանքը կարող էր ստացվել միայն այս կնոջ հետ, ու թեկուզ երբեմն էլ կինը դժգոհ է նրանից, անարդարացի է լինում, բայց նվիրված է իրեն, իսկ ամենագլխավորը դա է։ Սակայն իրար հետ նրանք երբեք այդ մասին չէին խոսում, դա հասկանալի էր ինքնին։ Ու եթե Բոստոնին հարցնեին, թե կյանքում նրա համար ինչ է այդ փոքրիկը, այդ ժպտադեմ, պայծառ աչուկներով ժիր մանկիկը թմբլիկ տոտիկներով, նրա այդ վերջնակը, Բոստոնը ոչինչ չէր կարող ասել։ Նա խոսք չէր կարող գտնել ասելու։ Այդ զգացմունքը վեր էր խոսքերից, քանզի փոքրիկի մեջ նա տեսնում էր իրեն՝ աստծու աված անմեղ, մանկական երրորդությամբ։

Սակայն հոգով նա հասկանում և գիտակցում էր ամեն ինչ, և գիշերը կնոջ ու մանկան կողքին պառկած, հանգստացավ, խաղաղվեց, մեղմացավ։ Նա ուզում էր մոռանալ ճաշարանի դեպքը։ Նույնիսկ մտածեց, որ եթե գայլերն այս

գիշեր չհայտնվեն, թերևս, նրանց դարանակալումը հետաձգի, գուցեև իր վճիռը փոխի։ Բոստոնը հանգիստ էր ուզում...

Սակայն, կարծես դիտմամբ, կեսգիշերին մոտ գայլերը նորից հայտնվեցին։ Եվ նորից մեծ փարախի եռևի բլրակում հառաչեց, երկարաձիգ ոռնաց Աքբարան, ու նրան ձայնակցեց ծանր, բամբ ոռնոցը Թաշչայնարի։ Ու նորից վախից արթնացավ ու սկսեց թնկթնկալ քենջեշը, իսկ Դուլյումկանը մրթմրթաց քնատ, անիծելով էս տեսակ կյանքը, որ հանգիստ չունես գազազած գայլերից։ Եվ Բոստոնը նորից չարացավ, ուզեց դուրս թռչել տնից ու ընկնել գայլերի հետևից թևկուզ մինչև աշխարհի ծայրը, ու նորից հիշեց, թե ինչպես էր իրեն հայհոյում, ինչպես էր վիրավորում ու ստորացնում ստոր ու ողորմելի Բազարբայը, և ափսոսաց, որ նրա գլուխը չջարդեց շշով։ Ախր բավական էր Բոստոնը ծանր շիշը նրա գլխին տար, աոեւլի Բազարբայի վերջը կգար։ Ու բոլորովին չէր զղջա, մտածում էր Բոստոնը, բոլորովին, ընդհակառակն, կուրախանար միայն, որ վերջապես ոչնչացրել է մարդկային կերպարանքով այդ գարշելի արարածին... Իսկ գայլերը ոռնում էին, ոռնում...

Սարսված էր հրացանը վերցնել ու գնալ գոնե վախեցնել նրանց։ Փոխանակ մեկ կամ երկու անգամ կրակելու, Բոստոնն իրար եռևից հինգ կրակոց արեց գիշերային մթության մեջ։ Հետո վերադարձավ տուն, սակայն այլևս չկարողացավ քնել, չգիտես ինչու սկսեց մաքրել հրացանը։ Նստել էր առջևի սենյակի մի անկյունում ու իր որսորդական «Բարս» հրացանի վրա կռացած, լարված մաքրում էր այն, կարծես շատ շտապ պետք էր իրեն։ Այդ գործն անելով, նա մի անգամ էլ մտածեց, թե ինչպես պիտի սպանի գայլերին, և վճռեց անմիջապես, հենց լույսը բացվի, գործի անցնել։

Այդ նույն ժամանակ Աքբարան ու Թաշչայնարը կրակոցներից վախեցած հետևում էին դեպի կիրճ գիշերվա մնացած մասն այնտեղ անցկացնելու։ Այդ դադար չունեցող զույգն այլևս մշտական տեղ չուներ, գիշերում էին ուր պատահի։ Աքբարան, ինչպես միշտ, գնում էր առջևից։ Մազափոխումից առաջ խիստ մազակալած, երկար, կախ ընկած փրչերով նա սարսափելի էր մթության մեջ։ Աչքերը վառվում էին ֆոսֆորափայլ, լեզուն դուրս էր ընկել, կարելի էր կարծել, թե կա-

տաղած է։ Ոչ, ձագերից զրկված մայր գայլի վիշտը չէր մեղմանում, նա չէր կարողանում մոռանալ իր կորուստը։ Բնազդը խուլ կերպով հուշում էր նրան, որ գայլաձագերը Բոստոնի տանն են, ուրիշ տեղ չէին կարող լինել, չէ որ այնտեղ թաքնըվևց հափշտակողը, որի հետից կրնկակոխ սլանում էին նրանք այն չարաբաստիկ օրը։ Ավելի հեռու գազանի միտքը չէր կարող թափանցել։ Եվ դրա համար գայլերը սոսկալի գազազած էին այն օրերին, հարձակվում հոշոտում էին անասուններին ըրջակայքում, և ոչ այնքան իրենց քաղցը հագեցնելու, որքան անասելի, անհագ պահանջից մսով ու արյունով խլացնելու, քանդելու, մեղմելու իրենց սիրտը մաշող ամայության ու չարության զգացումն աշխարհի հանդեպ։ Իսկ սպանածը խժռելով, գայլերը գնում էին այն տեղը, ուր կորցրել էին ձագերի հետքը։ Տառապում էր հատկապես Աքբարան, ոչ մի կերպ չէր կարողանում համակերպվել։ Այդ սիսի օր չկար, որ նա չգնար այդ տեղը, ու չկար օր, որ նա ու Թաշչայնարը չթափառեին Բոստոնի բնակատեղի շուրջ։ Հենց այդ հաշիվն էր արել Բոստոնը, վճռելով ոչնչացնել գայլերին։

Հաջորդ օրն առավոտից Բոստոնը կարգադրեց հոտը արոտատեղի չհանել, այլ պահել փարախներում ու անասուններին ավելի շատ հատիկավոր կեր տալ ու ջրելու հանել քակ։ Իսկ ինքը հոտից մի քանի էգ ոչխար ընտրեց իրենց փոքրիկ գառներով, մեծ մասամբ զույգերով, որ ավելի ուժեղ աղմկեն, և քշեց ամայի, ճանապարհազուրկ կողմը։

Ոչ մեկին հետ չվերցրեց։ Գնում էր մենակ, հոտը քշում երկար փայտով։ Ուսին գցել էր գիշերը մաքրած ու փայլեցրած հրացանը, փամփուշտով լրիվ լցված։ Գնում էր անշտապ, երկար։ Հարկավոր էր հեռանալ բնակատեղից։

Տաք օր էր, խսկական գարնանային օր։ Լեռներն իրենց մեջ էին առնում արևի տաքությունը, վերածելով այն թմբերի և խանդակների մեջ կանաչող խոտի։ Հատուկենտ սպիտակ-սպիտակ քուլա ամպեր անհոգ տաքանում էին երկնային կապույտում։ Արտույտները ճախրում էին, քարերի մեջ փսփսում էին լեռնային կաքավները, մի խոսքով, երանություն էր։ Միայն հորիզոնի ամբողջ երկայնությամբ վեր խոյացած ձյունածածկ լեռնաշղթան, ուր ամեն րոպե կարող

էր փոթորիկ սկսվել, ու չգիտես որտեղից կատաղի քամուց քշված բերված սև ամպերը, որ կարող էին ծածկել արևը, հիշեցնում էին, որ երանությունն այդ հավերժական չէր։

Սակայն առայժմ ոչինչ վատ փոփոխություններ չէր գուշակում։ Էգ ոչխարների ու իրենց գառնուկների փոքրիկ հոտն խառնիխուռն իրար ձայն տալով գնում էր այնտեղ, ուր քշում էր նրան մարդը։ Գառները ժիր թռչկոտում էին, նեռվում մայրերի մոտ կաթ ծծելու։ Սակայն Բոստոնը գիշերվանից մռայլ տրամադրության մեջ էր։ Եվ որքան շատ էր մտածում, այնքան ավելի էր զայրանում և գայլերի, և Բազարբայի, այս սոսկալի պատմության հանցավորի վրա։ Բազարբայի հետ գործ ունենալ չէր ուզում, իմանալով, որ կեղտին դիպար, հոտ կարձակի, իսկ գայլերին պետք էր վերացնել, սպանել, ոչնչացնել՝ ուրիշ ելք նա չէր տեսնում։ Նրա հաշիվը շատ պարզ էր. էգ ոչխարների և գառների ձայներն անպայման կգրավեին գայլերին, իսկ ինքը դարան կմտներ։ Գայլերը կհետավեին ոչխարներին և գառներին հոշոտելու, և եթե հաջողություն լիներ, կարող էր դրանց խփել։ Սակայն, ինչպես ասում են, մարդը որոշում է, աստված տնօրինում։ Եվ այդպես էլ եղավ...

Գրեթե մինչև կեսօր գազաններն իրենց ոչ մի բանով չէին մատնում։ Ոչխարներին տեղավորելով մի առանձնացած, ամեն կողմից լավ երևացող ձորակում, Բոստոնը պառկեց ձորակի եղրին ու հրացանը ձեռքին անշարժացավ քարերի ու նոսր թփուտի մեջ։ Նա դիպուկ էր կրակում, մանկուց որսի էր գնացել, իսկիկուլյան շատ գայլեր էր խփել։ Ուստի կասկած չուներ, որ կկարողանա գայլերին խփել, միայն թե հաջողվեր հոտին մոտ բերել։ Աղմկոտ էգ ոչխարներն ու զույգ գառները ձայն էին տալիս, կանչում իրար, սակայն ժամանակն անցնում էր, իսկ գազանները չէին երևում, թեև ուրիշ օրեր հաճախ էին հարձակում գործում, իրենց կատաղությունը թափում շրջակայքի հոտերի վրա, և միշտ օրը ցերեկով։

Արևն սկսեց այրել։ Թփի տակ իր շապիկի վրա պառկած, ուրիշ ժամանակ Բոստոնը հավանաբար կննջեր, սակայն հիմա չէր կարող իրեն այդ թույլ տալ։ Եվ սիրտն էլ անհանգիստ էր. ծանր էր մտածել, որ իրեն մեղադրում են էրնա-

զարի մահվան մեջ։ Նրա թշնամիները, և Կոչկորբանը, և Բազարբայը միացել էին և ամեն մեկն իր կերպ սուելով ղըրպարտում էին նրան, դժվար վիճակի մեջ դնում։ Եվ չէր կարողանում հասկանալ, թե կյանքն ինչու է այսպես. ինչո՞ւ, ինչի՞ համար բոլորովին տարբեր մարդիկ տատում էին իրենն։ Հիմա էլ էս գայլերն են կպել, հոդին հանում են։ Դրա համար տանն էլ հանդիստ չուներ։ Ու դեռ ինչեր են լինելու, երբ կնոջ ականջին հասնի Բազարբայի հետ կռվի լուրը։ Ճաշարանում լիքը մարդիկ էին, երբ Բազարբայը վերջին բառերով խայտառակում էր իր կնոջն ու իրեն, իսկ ինչքան չարակամ մարդիկ կլինեին դրանց մեջ...

Իսկ գայլերը չէին դալիս ու չէին գալիս, և Բոստոնն արդեն սկսել էր համբերությունը կորցնել։ Համենայն դեպս նա լարել էր տեսողությունն ու լսողությունը՝ սպասում էր պատրաստ։ Կարևորը, որ գազաններին ինչքան կարելի է շուտ տեսներ, որպեսզի կրակեր, հենց նրանք հարձակվեին ոչխարների վրա։ Գայլերի հայտնվելու պահը բռնացնելը հեշտ բան չէր. ընտանի ոչխարները հոտառություն չունեն, ու դրանց տեսողությունն էլ մի բան չի, մի խոսքով, դրանցից հիմար ու դանդալոշ կենդանի չկա աշխարհում։ Գայլերի համար ոչխարներն ամենահեշտ որսն են, և նրանց փրկել կարող է միայն մարդը, ուստի գայլն ստիպված է գործ ունենալ մարդու հետ։ Այդպես եղավ և այս անգամ...

Անհոգ ոչխարները հիմա էլ վտանգը չզգացին։ Նրանք արածում էին, դառնալով միայն գառների կանչին, շարունակ հլու-հնազանդ նրանց տրամադրելով իրենց պտուկները, էլ ուրիշ բան չէին հասկանում։ Վտանգը նկատեց Բոստոնը...

Ձույգ սպիտակաթև լեռնային կաչաղակները, որ թռչկոտում էին մոտերքում, հանկարծ անհանգիստ կչկչացին, սկսեցին տեղից տեղ թռչել։ Բոստոնը լարվեց, հրահանը քաշեց, սակայն գլուխը դուրս չհանեց, այլ, ընդհակառակն, ավելի լավ թաքնվեց։ Պետք էր գործել անվրեպ։ Նա պատրաստ էր մի քանի ոչխար զոհելու, միայն թե գիշատիչներին բաց տեղ դուրս բերեր։ Սակայն գայլերը, երևում է, զգացին վտանգը. բացառված չէ, որ նրանց էլ դա հասկացրին այն նույն կաչաղակները։ Մի տեղում կչկչալուց հետո նրանք շտապեցին այնտեղ, ուր զարան էր մտել Բոստոնը, և այս-

ուղղ նույնպես անամոթ, բարձր կչկչոց գցեցին, թեև Բոստոնը, թվում է, նրանց ուշադրությունը չպետք է գրավեր. նա անշարժ նստել էր թփի տակ։ Այսպես թե այնպես, գայլերն անմիջապես դուրս չվռնան, պարզվեց, որ նրանք բաժանվել էին. Աքբարան քարերի արանքով սողալով մոտենում էր հեռավոր ծայրից, իսկ Թաշչայնարը սողում էր հակառակ ծայրից (ինչպես հետո պարզվեց, շատ մոտիկ այնտեղից, ուր թփի տակ հրացանը ձեռքին պահ էր մտել Բոստոնը)։

Սակայն այդ ամենը հայտնի դարձավ ոչ միանգամից։

Գայլերի հայտնվելուն սպասելով, Բոստոնը լարված նայում էր շուրջը, և ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե գազանները որ կողմից են հայտնվելու։ Շուրջը խաղաղ էր ու լուռ. ոչխարները հանգիստ արածում էին, գառները ծռչկոտում էին, կաշազակները դադարեցին կչկչալ. լսվում էր միայն, ինչպես ոչ հեռու սարից առվակ է իջնում ու երգում են թփերի մեջ ճնճղուկները։ Բոստոնն արդեն հոգնել էր երկար սպասումից, բայց այդ պահին քարերի միջով մի գորշ ստվեր անցավ և ոչխարները մեկից ետ փախան ու անհանգիստ անշարժացան վախեցած սպասումով։ Բոստոնն ամբողջապես լարվեց, նա հասկացավ, որ գայլերը վախեցրին հոտը, որպեսզի հասկանան, թե մարդը որտեղ է թաքնվել. այդպիսի դեպքերում ամեն հովիվ բղավում է ու վազում ոչխարների մոտ։ Սակայն Բոստոնի խնդիրն այլ էր, ուստի նա իրեն ոչնչով չմատնեց։ Եվ այն ժամանակ քարաժայռերի մեջ նորից երևաց գորշ ստվերն ու գիշատիչը երկու ցատկով հասավ իրար անցած ոչխարներին։ Դա Աքբարան էր։ Բոստոնը հրացանը բարձրացրեց օդի մեջ նշահետ բռնելով ու արդեն պատրաստվում էր հրահանը ձգել, երբ հանում մի թեթև խշխշոց ստիպեց նրան հետ դառնալ։ Նույն վայրկյանին նա առանց նշան բռնելու դիմահար կրակեց հարձակվող հսկա գազանի վրա։ Ամեն ինչ կատարվեց մի ակնթարթում։ Կրակոցը Թաշչայնարին դիպավ արդեն ցատկի պահին, նա ընկավ, բայց ոչ անմիջապես, այլ առամները կատաղի բացած, աչքերը կատաղի փայլեցնելով, ճանկերով թաթերը գիտատշավարի առաջ մեկնած դեռ ինչ-որ պահ իներցիայով նետվում էր դեպի Բոստոնը, ու անշարժացած ցած ընկավ նրանից մի կես մետրի վրա։ Բոստոնն անմիջապես հրացանը

մյուս կողմ դարձրեց, սակայն պահն արդեն կորցրել էր. Աքբարան, գետին տապալած ոչխարին թողնելով, հասցրեց թաքնվել քարերի եռև։ Հրացանը ձեռքին նա նետվեց էգ գայլի հետևից, հույս ունենալով դնդակը հասցնել նրան, բայց տեսավ միայն, ինչպես Աքբարան թռավ առվակի վրայից։ Կրակեց և վրիպեց...

Բոստոնը, շունչ առնելով, շփոթված նայեց շուրջը։ Լարումից գունատվել էր և ծանր էր շնչում։ Իր հիմնական նպատակին չհասավ՝ Աքբարան փախավ։ Հիմա վիճակն ավելի բարդացավ, նրան խփելն այնքան էլ հեշտ չի լինի. էգ գայլն անորսալի կդառնա։ Ասենք, մտածում էր Բոստոնը, եթե ինքը ժամանակին հետ չնայեր ու չտեսներ Թաշչայնարին և եթե անմիջապես, հենց առաջին փամփուշտով չխփեր նրան, ամեն ինչ ավելի վատ էր լինելու։ Կատարվածի մասին մտածելով, Բոստոնը հասկացավ, որ հոտին մոտենալով գազանները վտանգի կասկած են ունեցել և երբ Թաշչայնարը տեսել է, որ հրացանով մարդը սպառնում է Աքբարային, առանց վարանելու նետվել է թշնամու վրա...

Վախից փախած ոչխարներին հավաքելով, Բոստոնը գնաց սպանված գայլին նայելու։ Թաշչայնարն ընկել էր կողքի շրջված, հսկայական դեղին ժանիքները բացած, աչքերն արդեն ապակիացել էին։ Բոստոնը շոշափեց Թաշչայնարի գլուխը. ահռելի գլուխ, ձիու գլխի չափ, ինչպես էր գազանն այս ծանրությանը դիմանում, իսկ թաթերը՝ Բոստոնը բարձրացրեց, ծանրութեթև արեց և ակամա հիացավ՝ այնպիսի ուժ էր զգացվում այդ թաթերի մեջ։ Ինչքան ճամփա են կարել սրանք, ինչքան որս են ճանկել։

Բոստոնը մի քիչ վարանելուց հետո վճռեց չմաշկել Թաշչայնարին։ Ոչինչ, փոստը թուղ չլինի, բանը փոստը չէ։ Մանավանդ, որ էգ գայլը կենդանի էր մնացել՝ ուրախանալու պատճառ չկար։

Բոստոնը մի քիչ էլ կանգնեց մտահոգ, հետո ուսին գցեց գայլի պատառոտած ոչխարին և հոտը տուն քշեց։

Իսկ հետո վերադարձավ, բահ ու քլունգ առած, և մնացած ամբողջ օրը փոս էր փորում, որ Թաշչայնարի դիակը թաղեր։ Երկար չարչարվեց, հողը քարքարոտ դուրս եկավ։ Երբեմն Բոստոնը գործը դադարեցնում էր ու սսկվում, զգու-

շորեն շուրջը նայելով, թե հանկարծ էգ գայլը չի՞ հայտնվի։ Բոստոնի հրացանը կողքին էր, բավական էր ձեռքը մեկնել...

Սակայն Աքբարան եկավ միայն ուշ գիշերին... Պառկեց թարմ հողաթմբին ու մնաց պառկած մինչև լուսաբաց, իսկ արևի առաջին շողերի դուրս գալուն պես անհետացավ...

6

Գարնանային օրեր էին, կարելի է ասել՝ ամռան սկիզբ։ Ժամանակն էր, որ ոչխարապահները քոչեին նոր արոտատեղեր։ Նրանք, ովքեր ձմեռել էին նախալեռներում, գնում էին խորքի հովիտներն ու կիրճերը, լեռնային նոր խոտածածկ կողմերը, որպեսզի աստիճանաբար մոտենան լեռնանցքին։ Նրանք, ովքեր դաշտերում էին ձմեռել, մսուրապահությամբ, դուրս էին գալիս պահեստային արոտատեղեր։ Խառը ժամանակ էր, գործը շատ. անասունը պետք էր քշել, տնային իրեր տեղափոխել, և, որ ամենադժվարն էր, ոչխարներին պետք էր խուզել. այդ ամենը միասին լարված վիճակ էր ստեղծում։ Եվ հետո, ամեն մեկն շտապում էր որքան կարելի է շուտ հասնել ամառային արոտավայրեր և լավ տեղերը գրավել։ Մի խոսքով, գործից աչք բացել չէր լինում... Եվ ամեն մեկն իր հոգսերն ուներ...

Այդ ամբողջ շրջանում միայն Աքբարան իրեն տեղ չէր գտնում։ Միայն նրա հետ ոչ մի կապ չուներ շուրջը եփ եկող կյանքը։ Եվ մարդիկ էլ, կարելի է ասել, մոռացել էին նրան. Թաշչյանարի կորստից հետո Աքբարան ոչնչով իրեն զգալ չէր տալիս, նույնիսկ Բոստոնի ձմեռոցի մոտ դադարեց գիշերները ոռնալ։

Անմխիթարական, ծանր էր Աքբարայի կյանքը։ Նա դարձել էր ալարկոտ, անտարբեր, ուտում էր պատահած մանր-մունր կենդանիներին, և մեծ մասամբ օրը մռայլ անց էր կացնում աչքից հեռու որևէ տեղում։ Նույնիսկ հոտերի այդ համատարած տեղափոխության ժամանակ, երբ լեռներով հազարավոր գլուխ անասուններ են շարժվում և այդ ամուկի մեջ դատարկ բան էր մի մոլորված գառնուկ կամ հենց մեծ ոչխար փախցնելը, նույնիսկ այդ նրան չէր հանում իր անտարբեր վիճակից։

Աքբարայի համար աշխարհը կարծես գոյություն չունենար։ Նրա համար կյանքը գոյություն ուներ միայն անցյալի հիշողություններում։ Գլուխը թաթերին դրած, Աքբարան օրեր շարունակ հիշում էր իր ապրած ուրախ ու տխուր օրերը Մոյընկումի սավաննայում և Մերձալդաշյան տափաստաններում, և այստեղ, Մերձիսիկկուլյան լեռներում։ Նորից ու նորից նրա աչքի առջև կանգնում էին անցյալ կյանքի պատկերները, որ անց էր կացրել Թաշչայնարի հետ, և ամեն անգամ, վրշտին դիմանալու ուժ չունենալով, Աքբարան վեր էր կենում, գլուխը կախ թափառում շրջակայքում, հետո նորից պառկում էր՝ ծերացած գլուխը թաթերին դրած, նորից հիշում էր իր ձագուկներին՝ մեկ չորսին, որ վերջերս փախցրել էին որջից, մեկ նրանց, որ սպանվեցին մոյընկումյան շուրջկալի ժամանակ, մեկ նրանց, որ այրվեցին լճամերձ եղեգնուտում, բայց ամենից ավելի հիշում էր նա իր գայլին, հավատարիմ ու հզոր Թաշչայնարին։ Ու երբեմն էլ հիշում էր այն տարօրինակ մարդուն, որին նրանք հանդիպեցին կանեփի մացառուտներում, հիշում էր ինչպես նա մերկմարմին, անպաշտպան խաղում էր իր ձագերի հետ, իսկ երբ ինքը նետվեց նրա վրա, պատրաստ տեղնուտեղը կոկորդը կրծելու, ինչպես վախեցած պպզեց, գլուխը ձեռքերով պահած, և ինչպես փախավ-հեռացավ, առանց ետ նայելու։ Եվ ինչպես հետո, արդեն ձմռան մոտերքը, նա լուսաբացին տեսավ այդ մարդուն Մոյընկումի սավաննայում սաքսուլի վրա խաչված։ Հիշում էր, ինչպես նայում էր ծանոթ դեմքին, ինչպես այդ մարդը աչքերը կիսաբացեց, կամացուկ ինչ-որ շշնջաց և լռեց...

Հիմա անցյալ կյանքը նրան երազ էր թվում, անդառնալի երազ։ Սակայն հակառակ այդ ամենի, հույսը չէր մահանում, դեռ մարմրում էր Աքբարայի սրտում. մեկ-մեկ նրան թվում էր, որ երբևէ իր վերջին ձագերը կհայտնվեն։ Եվ դրա համար գիշերները Աքբարան թաքուն մոտենում էր Բոստոնի ձմեռոցին, սակայն արդեն չէր ոռնում աղիողորմ, սովորական, ահարկու, այլ միայն ականջ էր դնում հեռվից. հանկարծ ու քամին իր մեծացած ձագերի հաչոցը հասցնի կամ էլ նրանց ծանոթ քաղցր հոտը... Եթե միայն այդպիսի հրաշք հնարավոր լիներ։ Ինչպես կնետվեր Աքբարան իր թանկագին ձագերի մոտ, չէր վախենա ոչ մարդկանցից, ոչ շներից, դուրս

լբերներ, կազաաներ, կփախցներ իր զավակներին գերությունից, և նրանք, ասես թևեր առած, կսլանային իր հետ այստեղից հեռու ուրիշ վայրեր, ու կապրեին այնտեղ, գայլային ժժվար կյանքով, ինչպես և վայել է գայլերին...

Իսկ Բոստոնին այդ օրերին հանգիստ չէին տալիս հաղարումի հարցեր. իբր քիչ գործ ուներ քոչի հետ կապված, դեռ գլխին էլ անհեթեթ պաշտոնական գործեր էին թափվել։ Կոշկորբաևը, ինչպես և խոստացել էր, Բոստոն Ուրկունչիևի դեմ բողոքն, իհարկե, գրել էր վերադաս մարմիններին, և այնտեղից հանձնաժողով էր եկել ստուգելու, թե ով է ճիշտ, ով է մեղավոր, սակայն հենց հանձնաժողովում էլ տարբեր կարծիքներ էին առաջացել։ Հանձնաժողովի մի մասը գտնում էր, որ հովիվ Բոստոն Ուրկունչիևին հարկավոր է հեռացնել կուսակցությունից, որովհետև նա վերաբավորանք է հասցրել կուսկաղմակերպչի անձին և դրանով իսկ բարոյական վնաս հասցրել հենց կուսակցությանը, մյուս մասը գտնում էր, որ այդ չի կարելի անել, քանի որ հովիվ Բոստոն Ուրկունչիևը հանդես է եկել գործի թելադրանքով և նրա քննադատությունն ուղղված է եղել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակին։ Հանձնաժողովը կանչել էր և Բազարբայ Նոյգուտովին։ Նրանից գրավոր բացատրություն էին վերցրել դայլաձագերի համար, որոնց Բոստոն Ուրկունչիևն, իբր, պահանջում էր հետ դնել որջը... Մի խոսքով, իսկական դործ էին բացել...

Վերջին երկու կանչերին Բոստոնը չներկայացավ։ Հայտնեց, որ պետք է անասունը քշի վերին լեռնալանջերը, ընտանիքով ամբողջ ամառ տեղափոխվի այնտեղ, որ ժամանակը սուղ է, ուստի, թող առանց իր ներկայության հարցը քննեն, ինքը համաձայն է, ինչ պատիժ որ սահմանի իր համար հանձնաժողովը, որով շատ ուրախացրեց Կոշկորբաևին, քանի որ Բոստոնի այդ վարքագիծը նրան ձեռնտու էր։

Սակայն հովիվն ուրիշ ճար չուներ։ Անասունների ամռան քոչը արոտավայրեր արդեն սկսվել էր, իսկ քոչն ուշացնել երբեք թույլ չէր տա իրեն Բոստոնը։ Վերջին տարիներին անասուններին իրենց ոտքով քշում էին օր առաջ, իսկ հետո փոխադրական կացարաններն ու տնային իրերը տեղափո-

խում էին մինչև այնտեղ, ուր մեքենաները կարող էին հասնել, մնացած ճանապարհը նորից անցնում էին պապենական ձևով, բեռնակիր կենդանիների օգնությամբ։ Բայց այդքանն էլ շատ թեթևացնում էր, ու գլխավորը, արագացնում էր անասունների քոչը։ Եվ Բոստոնն էլ նախ անասուններին քշեց ամառային արոտատեղ, հոտի մոտ թողնելով իր օգնականներին, ապա գիշերը վերադարձավ, որպեսզի հաջորդ օրը մեքենան բեռնի ընտանիքն ու տնային իրերը, և մինչև աշուն մնկնի լեռներ։

Ու եկավ այդ օրը...

Սակայն դրան նախորդեց գիշեր, երբ Աքբարան վերադարձավ իր հին որջը։ Թաշչայնարի մահից հետո առաջին անգամ։ Միայնակ գայլը խուսափում էր ժայռի ծածկի տակի հին որջից, գիտեր, որ այն դատարկ է ու որ այնտեղ իրեն ոչ ոք չի սպասում։ Եվ սակայն մի անգամ տանջահար Աքբարան հանկարծ ցանկություն ունեցավ վազելու ծանոթ ճանապարհով, անցքի միջով մտնելու իրենց որջը. հանկարծ ու այնտեղ իրեն են սպասում ձագերը։ Չդիմացավ գայթակղությանը, ենթարկվեց ինքնախաբեության։

Աքբարան վազում էր խելագարի նման, առանց ճանապարհ ընտրելու, անցնում ջրի, քարերի միջով, քոչվորների ամառային բնակատեղերում վառվող գիշերային խարույկների մոտով, կատաղի շների մոտով, իսկ նրա ետևից կրակոցներ էին թնդում...

Այդպես վազում էր նա միայնակ ու խելահեղ, վազում լեռներով, երկնքում բարձր կանգնած լուսնի ներքո... Եվ երբ հասավ որջին, այնպես ծածկված նոր բուսնած խոտի ու կարմրանի թփերով, որ դարձել էր անճանաչելի, չհամարձակվեց ներս մտնել իր վազուց որբացած, մոռացված կացարանը... Իսկ իրեն հաղթահարելու և հեռանալու ուժ չուներ... Եվ կրկին Աքբարան դիմեց գայլերի աստվածուհի Բյուրի-Անային և երկար լալիս էր վնգստալով ու ոռնալով, երկար բողոքում իր դառն ճակատագրից ու աղաչում աստվածուհուն տանել իրեն մոտը, լուսնի վրա, այնտեղ, ուր չկա մարդ...

Բոստոնն այդ գիշեր ճանապարհին էր։ Անասունը քշելուց հետո վերադառնում էր ձմեռոց։ Կարելի էր, իհարկե, սպա-

սել լույսը բացվելուն ու նոր ճամփա ընկնել։ Բայց այդ դեպքում նա տեղ կհասներ իրիկվա դեմ ու ստիպված պիտի լիներ ամբողջ օրը սպասել ու հետո միայն բարձել մեքենան ու գնալ նախիրների հետից, իսկ նա չէր կարող թույլ տալ իրեն, որ այդքան ժամանակ կորցնի։ Եվ հետո, բնակատեղում էլ գրեթե մարդ չէր մնացել, բացի Դուլյումականից ու մանկիկից, մեկ էլ մի ընտանիքից, որ սպասում էին իրենց հերթին ամառատեղ գնալու, իսկ տղամարդ չէր մնացել, բոլորը գնացել էին։

Ահա թե ինչու էր Բոստոնն այն գիշեր այդպես շտապում, դեռ լավ է, որ Դոնկուլյուկն, ինչպես միշտ, գնում էր արագ ու վստահ։ Լավ էր գնում, մարդու հոգին հրճվում էր։ Արագավազ էր Դոնկուլյուկը։ Լուսնի լույսի տակ փայլփլում էին ոսկեթույր նժույգի բաշն ու ականջները, սլինդ գավակին, ջրի վրա գիշերային ծփանքի նման շարժվում էին մկաններըե Եղանակը ոչ շոգ էր, ոչ ցուրտ։ Խոտաբույր էր շուրջը։ Բոստոնի մեջքին հրացանն էր՝ ինչ ասես կարող է պատահել գիշերը լեռներում։ Իսկ տանը Բոստոնը հրացանը տեղը կդնի ու այդպես պահունակը հինգ փամփուշտով լիքը լցված հրացանը մեխից կախ կտա պատին։

Բոստոնը հույս ուներ բնակատեղ հասնել լուսաբացից առաջ, ժամը հինգի մոտերքը, և, երևում է, այդպես էլ լինելու էր։ Այդ գիշեր նա մեկ անգամ ևս համոզվեց, թե որքան կապված է կնոջը և որդուն։ Նա մի օրվա մեջ արդեն սոսկալի կարոտել էր նրանց և հիմա տուն էր շտապում։ Եվ ճանապարհին, նրան ամենից ավելի անհանգստացնում էր այն, որ գայլ Աքբարան հանկարծ չսկսի նորից տան շուրջ պտտվել ու իր սոսկալի ոռնոցը չգցի վախեցնելով Դուլյումականին ու Քննջեչին։ Բոստոնն իրեն հանգստացնում էր նրանով միայն, որ գայլի սպանությունից հետո էգ գայլն այլևս չէր գալիս, համենայն դեպս նրա ձայնը չէր լսվում։

Բայց զուր էր անհանգստանում այդ գիշեր Բոստոնը։

Այդ գիշեր Աքբարան Բաշաոի կիրճում, իր հին որջի մոտ գանգատ էր անում Բյուրի-Անայինե Ու եթե անգամ Աքբարան Բոստոնի բնակատեղի մոտերքում լիներ, ոչ մեկին չէր անհանգստացնի։ Թաշչայնարի մահից հետո նա միայն

տխուր-տրտում ականջ էր դնում բնակատեղից լսվող ձայներին...

Եվ ահա եկավ այդ օրը...

Բոստոնն այդ առավոտ արթնացավ, երբ արեգակն արդեն փայլում էր ամբողջ ուժով. լուսաբացին տեղ հասնելով, նա քնեց մի չորս ժամ: Նա էլի կքներ, եթե որդին չարթնացներ: Ինչքան էլ այդ առավոտ Գուլյումկանը փորձեց Քենջեշին հոր մոտ չթողնել, մի ինչ-որ պահի, երբ զբաղված էր իրերը հավաքելով, տղային աչքաթող արեց: Եվ փոքրիկը ինչ-որ թոթովելով, սկսեց թփթփացնել հոր այտերին: Բոստոնն աչքերը բացեց, ժպտալով գրկեց Քենջեշին և բացառիկ քնքշությունը տղայի հանդեպ մի նոր ուժով համակեց նրան: Նրան հրճվանք էր պատճառում այն միտքը, որ Քենջեշը, իր միս ու արյունը, մեծանում է առողջ ու աշխույժ, որ դեռ երկու տարին չբոլորած, շատ հասկացող է, խելացի, սիրում է ծնողներին, որ դեմքով և բնավորությամբ նման է իրեն, միայն աչքերը, խոնավ ու փայլուն, սև հաղարջի նման, մայրականն են: Ամեն ինչով հաջող երեխա էր տղան, և նայելով նրան, Բոստոնը հպարտանում էր, որ նրա նման հրաշալի որդի ունի:

— Ի՞նչ ես անում, որդիս: Վեր կենա՞մ: Դե մի ձեռքիցս քաշի: Քաշի, քաշի, այ էդպես: Օհո, այ թե ուժեղ ես: Դե հիմա վիզս գրկի:

Գուլյումկանն այդ միջոցին հասցրեց եփել ամուսնու սիրած թանձր կալմիկական թեյը բոված ալյուրով, կաթով ու աղով, և քանի որ ոչ միայն հոտերը, այլ նույնիսկ շներն էին հետու լեռներում, Ուրկունչիևները կարող էին թույլ տալ իրենց տարվա մեջ գոնե մի անգամ թեյ խմել առանց խանգարվելու, լուռթյան ու խաղաղության մեջ: Քչերը կհասկանան, թե ինչքան հազվադեպ է այդպիսի հանգիստը հովիվի ընտանիքում: Չէ որ անասունը մշտական, անդադար ուշադրություն է պահանջում, կլոր տարի և ամբողջ օրը, իսկ երբ նախիրը համարյա հազար գլուխ է կազմում, իսկ ծինով արդեն մեկ ու կես հազար, ապա հովիվի ընտանիքը առավոտյան գործ չունենալու մասին երազել միայն կարող էր: Նրանք նստել էին՝ վայելելով այդ հանգստությունը, մինչև կսկսեին իրերը հավաքել. չէ որ գնում էին մնալու ամբողջ

ամառ։ Մեքենան կեսօրի մոտ էր գալու, և մինչ այդ անից տարվող բոլոր իրերը պետք է հավաքված լինեին։

— Օհ, մարդու հավատ չի գալիս,— շարունակ կրկնում էր Գուլյումկանը,— ինչքան լավ է, ինչ երանություն, ինչ լուսություն։ Չգիտեմ դու ոնց, բայց ես չեմ ուզում մեկնել։ Արի ոչ մի տեղ չգնանք։ Քենջեշիկ, հորդ ասա, որ ոչ մի տեղ չենք ուզում գնալ։

Քենջեշիկն ինչ-որ բան էր թոթովում, նստում մեկ մոր, մեկ հոր գիրկը, իսկ Բոսատոնը բարեհոգաբար համաձայնվում էր կնոջ հետ։

— Ի՞նչ կա որ։ Իսկ ինչո՞ւ չենք կարող ամբողջ ամառ այստեղ մնալ։

— Ասեցիր էլի,— ծիծաղում էր Գուլյումկանը,— ախր դու մի օր չանցած էնպես վազ կտաս հոտիդ մոտ, որ Դոնկուլյուկին հեծած էլ հետևիդ հասնել չի լինի։

— Ճիշտ ես ասում, Դոնկուլյուկով էլ հետևիցս չես հասնի,— հաստատեց գոհ Բոսատոնը և կոշտ բեղերը սղալեց։ Դա նշանակում էր, որ նա երջանիկ է։

Այդպես թեյ էին խմում նրանք ցածրիկ կլոր սեղանի մոտ, մեծերը նստել էին հատակին, իսկ փոքրիկը վազվզում էր նրանց շուրջ։ Մնողներն ուզում էին կերակրել նրան, սակայն փոքրիկն այդ առավոտ չարություն էր անում, վազվզում, փախչում, ոչ մի կերպ չէին կարողանում նստեցնել, որ ուտի։ Դուռը բաց էին թողել,— դուռը փակ շատ շոգ էր,— և Քենջեշը շարունակ անարգել դուրս էր փախչում, վազվզում էր բակում, նայում փոքրիկ, ժիր, փափկամազիկ ճուտիկներին, որ վազվզում էին թխսամոր շուրջը։ Դա նրանց հարևանի, գիշերապահ Ղուդուրմատի հավն էր։ Նա ինքն արդեն գնացել էր ամառանոց, իսկ նրա կին Ասըլգուլը պատրաստվում էր Ուրկունչիևների հետ մեքենայով մեկնել։ Նա արդեն մտել էր նրանց մոտ, ասել, որ իրերը հավաքել է ու մնում է միայն հավին ու ճտերին կողովի մեջ դնել, բայց դա կհասցնի անել, երբ մեքենան գա։ Իսկ մինչ այդ ուզում էր սպիտակեղենը լվանալ ու չորացնել։

Այդպես էր ընթանում այդ առավոտը։ Արևն արդեն լավ շոգացնում էր։ Բոլորն զբաղված էին իրենց գործերով։ Բոսատոնն ու կինը իրերն էին կապկպում, ամանները դասավո-

րում։ Ասըլգուլը լվացք էր անում, լսվում էր, ինչպես նա շուռ-շուռ դռնից դուրս է շփում օճառաջուրը։ Իսկ փոքրիկ Քենջեշին ազատ էին թողել, և նա մեկ դուրս էր վազում տնից, մեկ ներս գալիս ու շարունակ պտտվում էր ճաների շուրջ։

Հոգատար թխսամերը այդ ընթացքում իր ճաերին տարել էր քիչ հեռու, որ տան ետևում մի քիչ քջուջ անեն։ Մանկիկը գնաց ճաերի հետևից ու աննկատելիորեն հայտնվեց ցախատան խուլ պատի հետևում։ Այստեղ, կատուկի և թրթնջուկի մեջ, լուռ ու խաղաղ էր, ինչպես լինում է ամռանը։ Ճտերը ծվծվալով աղբն էին քջջում, իսկ Քենջեշը ծիծաղելով խոսում էր ճաերի հետ, շարունակ փորձելով շոյել նրանց։ Թխսամերը Քենջեշից չէր վախենում, բայց երբ շատ մոտ, անձայն շարժվելով հայտնվեց մեծ գորշ շունը, հավը վախեցավ, դժգոհ կչկչաց և շտապեց հեռացնել ճաերին։ Իսկ Քենջեշին զարմանալի կապույտ աչքերով մեծ գորշ շունը ամենևին չվախեցրեց։ Շունը հեզ նայում էր փոքրիկին, բարեկամաբար պոչը խաղացնելով։ Դա Աքբարան էր։ Գայլը վաղուց արդեն թափառում էր ձմեռոցի շուրջ։

Մայր գայլը համարձակվել էր այդքան մոտենալ մարդկանց տնատեղին, որովհետև անցյալ գիշերվանից բակում ու շրջակայքում դատարկություն էր, ոչ մարդկանց, ոչ շների ձայներ չէին լսվում։ Մայրական չհանդարտվող կարոտից, շմարող հույսից մղված, նա զգուշորեն ման եկավ բոլոր փառախներում, բոլոր մսուրներում, ոչ մի տեղ իր կորցրած ձագերին չգտավ և կիպ մոտեցավ մարդկանց կացարանին։ Եվ ահա Աքբարան կանգնած է մանկան մոտ։ Եվ հայտնի չէ, թե նա ինչպես հասկացավ, որ դա ձագուկ է, իր գայլաձագերի նման, միայն թե մարդու ձագ է, և երբ մանուկը ձեռքը տարավ նրա գլխին, որ շոյի բարի շանը, Աքբարայի վշտից տառապած սիրտը թրթռաց։ Նա մոտեցավ մանկանը, լիզից նրա այտը։ Մանուկն ուրախացավ նրա գգվանքից, կամացուկ ծիծաղեց, գրկեց գայլի վիզը։ Եվ այնժամ Աքբարան բոլորովին թուլացավ, պառկեց մանկան ոտքերի մոտ, սկսեց խաղալ նրա հետ՝ ուզում էր, որ երեխան ծծի իր պտուկները, սակայն նա դրա փոխարեն նստեց գայլի մեջքին։ Հետո ցած թռավ ու կանչեց նրան իր հետևից։ «Ժլ-ժլ,

ժյուր»*,— բղավում էր նա երջանիկ քրքջալով, սակայն Աքբարան չէր համարձակվում ավելի մոտենալ, գիտեր, որ այնտեղ մարդիկ կան։ Առանց տեղից շարժվելու գայլը տխուր նայում էր փոքրիկ տղային կապույտ աչքերով, և տղան նորից մոտեցավ նրան ու սկսեց շոյել նրա գլուխը, իսկ Աքբարան լիզում էր մանկիկին, ու տղային դա շատ էր դուր գալիս։ Մայր գայլը նրա վրա էր թափում մեջը կուտակված ողջ քնքշությունը, նրա մանկական հոտն էր առնում։ Ինչքան լավ կլիներ, մտածում էր նա, եթե այս մարդկային ձագն ապրեր ժայռի տակի իր որջում։ Ջգուշորեն, որ տղայի վիզը չվնասի, գայլը բռնեց նրա բաճկոնակի օձիքից և մի կըտրուկ շարժումով մանկանը գցեց իր բաշատակին. այդ ձևով գայլերը գառներ են փախցնում հոտից։

Տղան սուր, կարճ ճիչ արձակեց, վիրավոր նապաստակի նման։ Հարևան Ասըլգուլը, որ գնում էր ցախատան կողմը սպիտակեղենը կախելու, Քենջեշի ճիչը լսելով վազեց, նայեց պատի հետևը, սպիտակեղենը ցած գցեց ու նետվեց դեպի Բոստոնի դուռը.

— Գա՜յլը։ Գա՜յլը երեխային տարավ։ Շո՛ւտ, շո՛ւտ։

Բոստոնը խելակորուստ պոկեց պատից հրացանն ու դուրս վազեց տնից, Գուլյումկանը հետևից։

— Այնտե՛ղ։ Այնտե՛ղ։ Հրեն Քենջեշը։ Հրե՛ն գայլը տանում է,— բղավում էր Հարևանուհին՝ սարսափից գլուխը բռնած։

Սակայն Բոստոնն էլ արդեն տեսել էր գայլին, որ վազում էր մանրաքայլ, աղիողորմ բղավող մանկանը բաշատակին պահած։

— Սպասի՛ր։ Կանգնի՛ր, Աքբարա։ Կանգնի՛ր, ասում եմ,— բղավեց ձայնով մեկ Բոստոնն ու վազեց գայլի հետևից։

Աքբարան վազքն արագացրեց, իսկ Բոստոնը հրացանը ձեռքին վազում էր նրա հետևից ու բղավում զարհուրած։

— Թո՛ղ, Աքբարա։ Թո՛ղ, տղայիս։ Ես էլ երբեք քո ցեղին չեմ դիպչի։ Գցի երեխային։ Աքբարա։ Լսի՛ր ինձ, Աքբարա։

Նա կարծես մոռացել էր, որ գայլին իր խոսքերը ոչինչ

---

* *ժյուր* — գնանք։

չէին ասում։ Աղաղակները, հետապնդումը միայն վախեցրին նրան, և նա սկսեց ավելի արագ վազել։

Իսկ Բոստոնը, ոչ մի րոպե ձայնը չկտրելով, հետապնդում էր Աքբարային։

— Աքբարա՛։ Թո՛ղ որդուս, Աքբարա,— աղերսում էր նա։

Իսկ նրանից քիչ հետ մնալով, աղիողորմ ճիչերով ու աղ-բով վազում էին Գուլյումկանն ու Ասըլգուլը։

— Կրակի՛։ Կրակի՛, շո՛ւտ,— բղավում էր Գուլյումկանը, մոռանալով, որ Բոստոնը չի կարող կրակել, քանի դեռ երե-խան գայլի մեջքին է։

Բղավոցները, հետապնդումը միայն գրգռեցին Աքբարա-յին, շիկացրին նրա գայլային բնազդը, և նա վճռեց իր որսը ձևրքից բաց չթողնել։ Մանկան օձիքից պինդ բռնած, էգ գայ-լը համառորեն առաջ էր վազում, ավելի ու ավելի հեռանում դեպի լեռները, և նույնիսկ երբ հետևից կրակոց ճայթեց ու գնդակը սուլոցով անցավ նրա գլխավերևից, նա իր բեռը ցած չդցեց։ Իսկ մանկիկը լալիս էր, լալիս, կանչում հորը, կանչում մորը։ Եվ Բոստոնը նորից կրակեց օդի մեջ, չհամա-նալով, թե էլ ինչպես վախեցնի գայլին, սակայն այդ կրա-կոցն էլ չվախեցրեց Աքբարային։ Նա շարունակում էր հետա-նալ ժայռափլվածքների կողմը, իսկ այնտեղ արդեն նրա համար շատ հեշտ կլիներ հետքերը խճճել և փախչել։ Բոս-տոնը հուսահատվեց. ինչպե՞ս փրկի երեխային։ Ի՞նչ անի։ Այս հրեշավոր պատիժն ինչո՞ւ իր գլխին թափվեց։ Ո՞ր մեղ-քի համար։

— Թո՛ղ տղային, Աքբարա։ Թո՛ղ, խնդրում եմ քեզ, մեղ թող մեր որդուն,— ուժասպառ ձիու նման շունչը կտրվելով ու խռխռացնելով աղերսում էր նա առևանգողին։

Եվ երրորդ անգամ կրակեց Բոստոնը օդի մեջ, ու նորից գնդակը սուլոցով անցավ գազանի գլխի վրայով։ Ժայռափլվ-ածքը ավելի էր մոտենում։ Պահունակի մեջ հիմա ընդամենը երկու փամփուշտ էր մնացել։ Հասկանալով, որ ևս մի րոպե՝ ու ինքը կկորցնի վերջին հնարավորությունը, Բոստոնը վճռեց կրակել գազանի վրա։ Թափով հենվեց ծնկին ու սկսեց նշան բռնել. ոտներին, միայն ոտներին։ Բայց ոչ մի կերպ չէր կարողանում նշան բռնել, կուրծքը վեր ու վար էր անում, ձևռքերը դողում էին, չէին ենթարկվում։ Եվ, այնուամենայ-

նիվ, նա մի կերպ ուժ հավաքեց ու նշանոցի երերացող անցքի միջից տեսնելով, ինչպես է սլանում, ասես կատաղի ալիքների վրայով լողում էգ գայլը, նշան բռնեց ու հրահանը քաշեց։ Ձդիպավ։ Գնդակը, նշանակետի կողքին փոշի հանելով, անցավ գետնի վրայով։ Բոստոնը նորից լցրեց հրացանը, փամփշտանոցի մեջ մղեց վերջին փամփուշտը, նորից նշան բռնեց, ու նույնիսկ չլսեց սեփական կրակոցը, տեսավ միայն, ինչպես գայլը վեր թռավ ու ընկավ կողքի վրա։

Հրացանը գցելով ուսին՝ Բոստոնն ինչպես երազում վազում էր գետին տապալված Աքբարայի մոտ։ Նրան թվում էր, վազում է դանդաղ ու երկար, ասես լողում է ինչ-որ ամայի տարածության մեջ...

Ով ահա վերջապես, սառած, ինչպես սառնամանիքին, նա մոտ վազեց գայլին։ Ով ճկուեց, երերաց, գալարվելով համր ճիչից։ Աքբարան դեռ կենդանի էր, իսկ նրա կողքին ընկած էր անշարժացած, կուրծքը գնդակով ծակված մանուկը։

Իսկ աշխարհը լուռ էր, ամեն ձայն կորցրած։ Այն վերացել էր, չկար, նրա տեղը շառաչող հրե խավար էր միայն։ Բոստոնն, աչքերին չհավատալով, կռացել էր որդու արյունաշաղախ մարմնի վրա, դանդաղ բարձրացրեց նրան գետնից, և կրծքին սեղմած սկսեց հետ-հետ գնալ, չգիտես ինչու զարմացած շունչը փչող գայլի կապույտ աչքերից։ Հետո շրջվեց և, վշտից համրացած, գնաց ընդառաջ մոտ վազող կանանց։

Նրան թվաց, թե կինը մեծանում, բարձրանում է իր աչքի առաջ, և ահա արդեն նրա դեմ է գալիս հսկա մի կին հսկայական աղավաղված դեմքով, նրան մեկնելով հսկայական ձևափոխված ձեռքերը։

Նա շարժվում էր կույրի նման, իր սպանած մանկիկին կրծքին սեղմած։ Նրա հետևից բղավելով ու ողբալով ոտքերը քարշ էր տալիս Գուլյումկանը, որին լաց ու կոծով թևից բռնած տանում էր Հարևանուհին։

Բոստոնը, վշտից խլացած, ոչինչ չէր լսում։ Բայց հանկարծ խլացուցիչ, ջրվեժի դղրդյունի նման, նրա վրա թափվեցին իրական աշխարհի ձայները, և նա հասկացավ կատարվածը, ու, հայացքը երկինք հառելով, զարհուրելի բղավեց.

— Ինչի՞ համար, ինչի՞ համար ինձ պատժեցիր։

Տանը մանկան մարմինը դրեց նրա փոքրիկ մահճակալին, որ արդեն պատրաստել էին մեքենա բարձելու, և այդ ժամանակ Դուլյումկանն ընկավ նրա գլխավերևն ու սկսեց ոռնալ այնպես, ինչպես ոռնում էր գիշերներն Աքբարան... Նրա կողքին ծնկի էր եկել Ասըլգուլը...

Իսկ Բոստոնը, հրացանն առած, դուրս եկավ տնից։ Մի պահունակը մոցրեց պահեստատուփի մեջ, մյուսը դրեց գըրպանը, կարծես պատրաստվում էր ճակատամարտի։ Հետո թամբը գցեց Դոնկուլյուկի մեջքին, թափով թռավ ձիուն և գնաց տնից, ոչինչ չասելով ոչ կնոջը, ոչ հարևանուհի Ասըլգուլին...

Բնակատեղից մի քիչ հեռանալով, նա ազատություն տվեց Դոնկուլյուկին, և ոսկեթույր նժույգը սլացրեց նրան այն ճանապարհով, որով նա ամռան վերջին սլանում էր դեպի Թամանի ամառոցը։

Նա, ում ուզում էր գտնել, և որին անպայման կգտներ, թեկուզ գետնի տակից, տեղում էր։

Բազարբայ Նոյգուտովի տնատեղում նույնպես այդ օրը մեքենա էին բեռնում՝ տնային անհրաժեշտ իրերն ուղարկում էին ամառային արոտատեղեր։ Այդ գործով զբաղված, մարդիկ չնկատեցին, ինչպես փարախի եռևից հայտնվեց Բոստոնը, ինչպես իջավ ձիուց, ինչպես ուսից իջեցրեց հրացանը, վերալցրեց, հրահանը մարտական պատրաստության բերեց, ու նորից գցեց ուսին։

Նրան նկատեցին, երբ արդեն մոտեցավ բեռնման տեղին։ Բազարբայը ցած թռավ բեռնատարից, զարմանքով նայեց նրան։

— Ի՞նչ ես ուզում,— ասաց նա Բոստոնին, ծոծրակը քորելով ու նայելով նրա ածխացած խանձողի նման սևացած դեմքին։— Ինչի՞ ես էստեղ եկել։ Ինչի՞ ես էդպես նայում,— անհանգստացավ նա, վատ բան նախազգալով։— Էլի գայլաձագերի համար ես եկել, հա՞։ Բան ու գործ չունե՞ս։ Դեհ, խնդրեցին ինձ, ես էլ գրեցի։

— Թքած ունեմ, թե դու ինչ ես գրել էնտեղ,— մռայլ ասաց Բոստոնը, ծանր հայացքը նրանից չկտրելով։— Դա իմ

պետքս չի։ Ուզում եմ քեզ ասել, որ դու անմարդավարի ապրեցիր էս աշխարհում, ու ես ինքս քո վերջը կտամ։

Բազարբայը չհասցրեց նույնիսկ երեսը ծածկել, երբ Բոստոնը հրացանն իջեցրեց ու գրեթե առանց նշան բռնելու կրակեց նրա վրա։ Բազարբայը երերաց, փորձեց թաքնվել բեռնատարի հետևում, բայց երկրորդ կրակոցը հասավ նրան, դիպավ մեջքին, և Բազարբայը երեք անգամ պտույտ տալով գլխով զարկվեց թափքին ու, գետին տապալվելով, ձեռքերով ջղաձգորեն հողը ճանկռեց։ Այդ ամենն այնքան անսպասելի կատարվեց, որ սկզբում ոչ ոք տեղից չշարժվեց։ Ու հետո միայն, երբ դժբախտ Կոկ Թուրսունը ողբալով ընկավ ամուսնու մարմնի վրա, բոլորը միանգամից սկսեցին բղավել ու վազեցին սպանվածի մոտ։

— Տեղներիդ չշարժվեք,— բարձր հրամայեց Բոստոնը, շուրջը նայելով։— Ոչ մեկդ չհամարձակվի տեղից շարժվել,— սպառնաց նա, հրացանի փողը մեկ-մեկ յուրաքանչյուրին ուղղելով։— Ես ինքս հիմա կգնամ այնտեղ, ուր պետք է։ Դրա համար զգուշացնում եմ, ոչ մեկդ տեղից չշարժվի։ Հակառակ դեպքում, փամփուշտ ունեմ,— և նա ձեռքը խփեց գրպանին։

Բոլորը կանգ առան սարսափահար, ոչ մեկը ոչինչ չէր կարողանում հասկանալ, ոչինչ չէր կարողանում ասել, ասես զրկված լինեին խոսելու ընդունակությունից։ Միայն տարաբախտ Կոկ Թուրսունն էր շարունակում ողբալ սաեւլի ամուսնու մարմնի վրա.

— Ես միշտ գիտեի, որ կյանքդ շան նման ես վերջացնելու, որովհետև շան նման էլ ապրում էիր։ Ինձ էլ սպանի, մարդասպան,— նետվեց դեպի Բոստոնը խղճուկ ու այլանդակ Կոկ Թուրսունը։— Ինձ էլ շան նման սատկացրու։ Ես մեկ է օր չեմ տեսել էս աշխարհում, ինչիս է պետք էդ տեսակ կյանքը։— Նա փորձեց ինչ-որ բան բղավել, որ ինքը զգուշացնում էր Բազարբային, որ պետք չէր գայլածագերին գողանալ, որ դրանից լավ բան դուրս չի գա, բայց այդ գազանը ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում, նույնիսկ վայրի գազաններին էր խմելու տալիս, բայց այդ ժամանակ երկու հովիվ փակեցին նրա բերանն ու հետու քաշեցին։

Եվ այնժամ, խստահայաց նայելով շուրջը կանգնածներին, Բոստոնը ոչ բարձր, բայց խիստ ասաց.

— Բավական է, ես ինքս հիմա կգնամ ուր պետք է և կհայտնեմ արածս։ Կրկնում եմ՝ ինքս։ Իսկ դուք մնացեք ձեր տեղերում։ Լսեցի՞ք։

Ոչ մեկը ոչ մի բառ չասաց։ Կատարվածից ցնցված, բոլորը լուռ էին։ Նայելով մարդկանց դեմքերին, Բոստոնը հանկարծ հասկացավ, որ այս պահից սկսած, նա խախտեց մի սահման ու հեռացրեց իրեն մյուսներից։ Չէ որ նրա շուրջ մոտ մարդիկ էին, որոնց հետ նա տարեց-տարի, ամեն օր հաց էր հայթայթում հանապազօրյա։ Նա ճանաչում էր նրանցից յուրաքանչյուրին, և նրանք էլ ճանաչում էին իրեն, նրանցից ամեն մեկի հետ նա իր հարաբերություններն ուներ, սակայն հիմա նրանց դեմքերին օտարացում էր տեսնում, և նա հասկացավ, որ հետայսու նա բաժանված է նրանցից ընդմիշտ, այնպես, ինչպես եթե երբեք և ոչնչով կապված չլիներ այդ մարդկանց հետ, ինչպես եթե հանկարծ հարուցյուն առած լիներ մեռյալներից և ուստի սարսափելի նրանց համար։

Ջիու սանձից բռնած, Բոստոնը հեռացավ։ Նա հեռանում էր առանց ետ նայելու, հեռանում լճի կողմ տանող ճանապարհով, որպեսզի այնտեղ հանձնվի իշխանությանը։ Քայլում էր ճամփով գլուխը կախ, իսկ նրա ետևից, կաղին տալով և սանձիկը զնգզնգացնելով, գնում էր նրա հավատարիմ Դոնկուլյուկը։

Դա վախճանն էր նրա կյանքի...

Ահա և աշխարհի վերջը,— ասաց բարձրաձայն Բոստոնն, ու նրա համար պարզվեց զարհուրելի ճշմարտությունը. ողջ աշխարհը մինչև հիմա ամփոփված էր իր մեջ, և այդ աշխարհի վերջը նկավ։ Նա և երկինքն էր, և երկիրը, և լեռները, և մայր գայլ Աբբարան, մեծ մայրն ամենազոյի, և էրնազարն էր, որ հավերժորեն մնացել էր Ալա-Մոնգյուի լեռնանցքի սառույցներում, և իր վերջին երրորդությունը՝ մանուկ Քենջեշը, որին հենց ինքը սպանեց, և Բազարբայը, մերժված ու սպանված իր մեջ, և այն ամենը, ինչ նա տեսել ու ապրել էր իր կյանքում, այդ ամենը նրա աշխարհն էր, ապրում էր նրա մեջ և նրա համար, և հիմա թեև այդ ամենը կշարունակի գո-

յություն ունենալ, ինչպես գոյություն է ունեցել մշտապես, սակայն առանց նրա՝ դա կլինեի այլ աշխարհ, նրա աշխարհը, անկրկնելի, անվերականգնելի, կորսված է և չի վերածնվի, այլևս ոչ մեկի և ոչնչի մեջ։ Դա հենց նրա մեծ սղեհան էր, դա նրա աշխարհի վերջն էր...

Լճափ տանող ամայի դաշտային ճանապարհին Բոստոնը հանկարծ կտրուկ շրջվեց, գրկեց ձիու վիզը, կախվեց նրա վզից ու հեկեկաց բարձր, անմխիթար։

— Օ, Դոնկուլյուկ, միայն դու չես հասկանում, թե ես ինչ արեցի,— լալիս էր նա՝ ամբողջ մարմնով ցնցվելով հեկեկանքից։— Ի՞նչ անեմ ես։ Որդուս իմ ձեռքով սպանեցի, և չթաղած գնում եմ ու սիրածս կնոջը թողնում մենակ։

Հետո սանձափոկերը փաթաթեց Դոնկուլյուկի վզին, սպանդակներն ամրացրեց թամբատեղին, որպեսզի չհարվածեին ձիու կողերին։

— Գնա, գնա տուն, գնա ուր ուզում ես,— հրաժեշտ տվեց նա Դոնկուլյուկին։— Այլևս մենք իրար չենք տեսնի։

Ձեռքի ափով խփեց ձիու գավակին, քշեց նրան, և ձին զարմացած իր ազատությունից, բռնեց տան ճամփան։

Իսկ Բոստոնը շարունակեց իր ճանապարհը...

Իսսիկ-Կուլի կապույտ պատը մոտենում էր, մոտենում, նա ուզում էր լուծվել նրա մեջ, անհետանալ՝ ուզում էր, և չէր ուզում ապրել։ Ահա ինչպես այս փրփրակոհակները՝ ալիքը ելնում է, անհետանում ու կրկին վերածնվում ինքն իրենից...

ISBN 5—550—00325—2

Գրական-գեղարվեստական հրատարակություն
ՉԻՆԳԻԶ ԱՅԹՄԱՏՈՎ

Կատաղեարան

Վեպ

Литературно-художественное издание
ЧИНГИЗ АЙТМАТОВ
Плаха
Ереван, издательство «Хорурдаин грох»
На армянском языке

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բաբայան
Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ա. Ի. Յարալյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերատեսող սրբագրիչ՝ Մ. Գ. Սահինյան

ИБ *№ 6505*

Հանձնված է շարվածքի 6. 06. 89 թ.։ Ստորագրված է տպագրության 28.11.89 թ.։ Չափսը՝ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 21,0 պայմ. տպ. մամ., 18,6 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 30.000։ Պատվեր՝ 1401։ Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат имени Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.